

ԶՈՐԱՅՐ ՄԻՐԶԱՅԱՆ

ՊԱՐՄԻՑ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

IX–XX ԴԴ.



Գիրքը հրատարակվել է ՀՀ-ում ԻԻՀ դեսպանատան
մշակույթի կենտրոնի և «Գուրգեն Մելիքյանի Քաշաթաղի
բազմազավակ ընտանիքների հիմնադրամ»-ի
հովանավորությամբ



8U(55)
Մ 76
հղ.



(1916-1964)

Գրականություն

ԶՈՐԱՅՐ ՄԻՐԶԱՅԱՆ

ՊԱՐՍԻՑ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

IX-XX ԴԴ.

Հավաքեց և աշխատասիրեց Նիկիտ Միրզայանը

6707

Հեղինակային հրատարակություն

ԵՐԵՎԱՆ 2024



Միրզայան Զորայր
Մ 762 ՊԱՐՍԻԿ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ: IX–XX ԴԴ. / Զ. Միրզայան; Հավաքեց և աշխատասիրեց Ն. Միրզայանը. — Եր.: Հեղ. հրատ., 2024. — 368 էջ:

Գիրքը կարող է օգտակար լինել պարսից գրականության պատմությանը հետաքրքրվողների և ուսումնասիրողների համար:

ՀՏԴ 821.222.1.0
ԳՄԴ 83.3(Իրան)

ISBN 978–9939–0–5008–9

© Միրզայան Նիկիտ, 2024

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԶՈՐԱՅՐ ՄԻՐԶԱՅԱՆ. 1916–1964 (մահվան 60-ամյակի առթիվ)	7
ԿԱՐԱՊԵՏ ՄԵԼԻՔ–ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀՈՎՀ. ԻՆՃԻԿՅԱՆԻՆ	11
ՇՆՈՐՀԱԼԻ, ՀԱՅՐԵՆԱՍԵՐ ԲԱՆԱՍՏԵՂՇԸ	12
ՊԱՐՍԻԿ ՉԱՓՈՒՄ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՄԿՁԲՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ 1500 ԹՎԱԿԱՆԸ	14
ՖԵՐԴՈՎՍԻ	33
ՍԵԼՋՈՒԿՆԵՐԻ ՕՐՈՒՔ (1037 ԹՎԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԱԼԵՔՇԱՀԻ ՄԱՀԸ, 1092 ԹՎԻՆ ԸՆԴԱՄԵՆԸ 55 ՏԱՐԻ)	58
ՕՄԱՐ ԽԱՅՅԱՄ	62
ԻՐԱՆԻ 11–ՐԴ ԵՎ 12–ՐԴ ԴԱՐՈՒ ԳՐԱԿԱՆ ՈՍԿԵԴԱՐԸ	95
ՆԵՋԱՄԻ ԳԱՆՋԱՎԻ	131
ԽԱՐԱՋՄԻ ԿԱՅՄՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄՈՆՂՈՆԵՐԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ՉԻՆԳԻՋԻՑ ՄԻՆՉԵՎ ՄՈՆՂՈՆ ԻԼ–ԽԱՆՆԵՐԸ (1203–ից մինչև 1262 Ք. հ.)	138
ՄՈՆԱՆԱ ՋԱԼԱԼԵԴ–ԴԻՆ ՌՈՒՄԻ	142
ՍԱԱԴԻ ՇԻՐԱՋԻ	148
ՊԱՐՍԻԿ ԲԱՆԱՍՏԵՂՇՆԵՐԸ ՄՈՆՂՈՆ ԻԼ–ԽԱՆՆԵՐԻ ՕՐՈՒՔ (1265–1337 թվականը, Հեջրի 663–737)	162
ՊԱՐՍԻԿ ԲԱՆԱՍՏԵՂՇՆԵՐԸ ԹԵՅՄՈՒՐ ԼԱՆԳԻ ՕՐՈՒՔ (1335 թվից մինչև 1405 թիվը)	169
ՀԱՖԵՋԵ ՇԻՐԱՋԻ	185
ԹԵՅՄՈՒՐ ԼԱՆԳԻ ՄԱՀՎԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՍԱՖԱՎԻ ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄԸ (1405–1502)	199
ՊԱՐՍԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (1500–1900 ԹՎԱԿԱՆՆԵՐ)	207
1600–1700 ԹՎԱԿԱՆՆԵՐ	218
1700–1800 ԹՎԱԿԱՆՆԵՐ	243
ՂԱՋԱՐ ՇՐՋԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂՇՆԵՐԸ (1860–1896)	247
ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԱՂԱՆԴՆԵՐԸ ԻՐԱՆՈՒՄ	279
ՀՈԳՈՒ «ՀԱՄԱՐՁՄԱՆ» ԳԱՂԱՓԱՐԸ ԵՎ ԴՐԱ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ	283

ԷՔՆ ՍԻՆԱՅԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ԵՎ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ ...	286
ԱԲՈՒ ԱԼԻ ՍԻՆԱՆ ՈՐՊԵՍ ԲԱՆԱՍՏԵՂԾ	288
ԱԲՈՒԼ ԱԼԱ ԱԼ-ՄԱԱՐԻ . ԱՐԱԲ ՔԵՐԹՈՂՈՒԹՅԱՆ ՕՄԱՐ ԽԱՅՅԱՄԸ	293
ՊԱՐՍԿԵՐԵՆ ԱՌԱՋԻՆ ԲԱՌԱՐԱՆԸ	317
ՇԱՀՆԱՄԵԻ ՁԵՎԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՎՐԱ	325
ՕՄԱՐ ԽԱՅՅԱՄԻ ԱՇԽԱՐՀԱՀԱՅԱՑՔԸ (հոգեբանական վերլուծություն)	328
«ԱՇՈՒՂ» ԲԱՌԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ	350
ՆԱԽՆԱԳՈՒՅՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ ՊԱՐՍԻՑ ՉԱՓԱԾՈ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ	354
ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	356
ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ	357

ԶՈՐԱՅՐ ՄԻՐՉԱՅԱՆ
1916-1964
(մահվան 60-ամյակի առթիվ)

Բանաստեղծ, թարգմանիչ, գրականագետ Զ. Միրզայանը ծնվել է 1916 թ. Թեհրան քաղաքում: Հայրը հանրահոշակ գրականագետ, թարգմանիչ և Իրանի Ազգային խորհրդարանի հայ պատգամավոր Հովսեփ Միրզայանն էր: Ավարտել է հայկական դպրոցը, ապա սովորել է Թեհրանի Ամերիկյան քոլեջում:

Հենց պատանի հասակից նրա սերը հանդեպ գրականությունն ունեցել է փայլուն սկզբնավորում: 1932-ի գարնանը Թագորը¹ գտնվում էր Իրանում: Թեհրանի հայ համայնքը մեծ հանդիսանքով նշեց «դարի մեծագույն բանաստեղծ, Արևելքի պարծանք»-ի ծննդյան 71-ամյակը: Այստեղ Թագորը հանդիպեց իր ստեղծագործությունների՝ աշխարհում թերևս ամենաերիտասարդ թարգմանիչին՝ 16-ամյա Զորայր Միրզայանին:

Նրա առաջին գրվածքը լույս է տեսել Հայկ Գարազաշի «Վերածնունդ» շաբաթաթերթում և մշտական աշխատակիցն է եղել նույն թերթի:

Զ. Միրզայանը 1936 թվականից սկսած՝ միացավ «Նոր էջ»²-ին և դարձավ այդ գրական խմբակցության եռանդուն անդամներից մեկը:

¹ Ռաբինդրանաթ Թագոր — բանաստեղծ, փիլիսոփա, վիպասան, հրապարակախոս, լեզվաբան, երգահան ու գեղանկարիչ, գրականության Նոբելյան մրցանակի դափնեկիր (1861-1941) (Մերի Մաքսապետյան, Ռաբինդրանաթ Թագորը հայ գրական մտքի գնահատմամբ, Երևան, 1975):

² 1933 թվականից սկսած «Վերածնունդը» «Նոր էջ» վերնագրի տակ երիտասարդ բանաստեղծների համար գրական մի էջ հատկացրեց: Այսպիսով «Վերածնունդի» գրական էջի մասնակցողները, իրար շուրջ հավաքվելով, հիմքը դրին «Նոր էջ» գրական խմբակցության: Նրանք բոլորն էլ հավատում էին հավաքական գործի հաջողությանը: «Նոր էջ»-ի հիմնադիր անդամներն էին հետևյալ տարեց և երիտասարդ գրողները. Հրանդ Ֆալյան, Դև, Ա. Ասլըն (Ասյան), Գեղամ Մկրտչյան, Արա Տեր Հովհաննիսյան, Գալուստ Խանենց և Արշավիր Մկրտչյան: 1935-ին այս գրական խմբակը հրատարակեց «Նոր էջ» թիվ մեկ (1) պարբերագիրքը, ուր իր մանիֆեստ-նախարանում, առաջին անգամ լինելով, շեշտեց իրանահայ գրականությունն ունենալու անհրաժեշտությունը. «Ունենալ սեփական մի հզոր կուլտուրա, որ ամենից առաջ հպարտություն ներշնչի մեզ, իսկ այդ հպարտությունը ինքնին ամենամեծ խթանն է մեր ինքնապահպանման, և ապա, նրա շնորհիվ, պատկառանք դեպի մեր գոյության իրավունքը՝ օտարների կողմից, ահա թե ինչը պիտի ապացուցի մեր նպատակը: Գրականությունը այդ նպատակին ծառայող գործոններից մեկն է: Այդ նպատակը Դևինն է և այն

«Նոր էջ»-ի թիվ 10 և 13 հանդեսի խմբագիրը եղել է Զ. Միրզայանը: Լավ տիրապետելով անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն և պարսկերեն լեզուներին՝ կատարել է մի շարք արժեքավոր թարգմանություններ: Առանձին գրքույկներով հրատարակել է «Բաբաթահերի քառյակները», Դոստոևսկու «Հեզիկը» և Մարկ Թուեյնի «Պատմվածքները», «Աբու Ալի Սինայի կյանքը», ինչպես նաև իր հոր՝ Հովսեփ Միրզայանի վերահրատարակված «Օմար Խայյամ»-ի քառյակների թարգմանության գրքին կցել է որպես հավելված Օմար Խայյամի 30 քառյակների իր թարգմանությունները: Ունի հայերեն լեզվով գրված բազմաթիվ կարճ պատմվածքներ, որոնք մեծ մասամբ լույս են տեսել «Նոր էջ» գրական հանդեսում:

մի խումբ երիտասարդների, որոնք այսօր իրենց այս առաջին փորձով ներկայանում են մեր հասարակությանը: «Նոր էջ»-ի անդամները քաջածանոթ լինելով միջազգային արդի գրականության, տիրապետելով մի քանի օտար լեզուների, ստեղծում էին նոր երանգներով, նոր ըմբռնումներով, առաջադիմական ձգտումներով գեղեցիկ գրականություն: «Նոր էջ»-ի հրատարակած գրքերը, ոչ միայն իրանահայ, այլ հայ գրականության անդաստանում, հրապարակ հանցին՝ Նորարական և գերիրապաշտ քանաստեղծության հասկանալիությունն ու ըմբռնումը: «Նոր էջ»-ը նաև կարևոր դեր ունեցավ օտար գրականությունը հատկապես Նորարարականը, հայ ընթերցողներին ծանոթացնելու գործում: «Նոր էջ»-ի հիմնադիր անդամներին հաջորդ տարիներին, միանում են Ջորայր Միրզայանը, Ռ. Բենը և Արմեն Գեար: «Նոր էջ»-ականները մինչև 1943 թվականը կարողանում են հրատարակել հինգ պարբերագիրք: Սակայն երբ Իրանը գրավվեց դաշնակիցների կողմից, ստիպողաբար մի քանի տարի «Նոր էջ»-ի գործունեությունը խափանվեց: Դաշնակիցների երկրից հեռանալուց հետո, Թեհրանն էլ դանդաղորեն իր նորմալ կյանքին վերադարձավ: Բազմաթիվ նոր մշակութային միություններ հիմնվեցին և «Նոր էջ»-ի անդամներն էլ վերակեսցին իրենց հանդիպումները և գրական գործունեությունը: Այդ հանդիպումների արդյունքը այն եղավ, որ 1957-ի ընթացքում «Նոր էջ»-ական քանաստեղծներից չորսը՝ Գ. Խանենց, Արշավիր Մկրտիչ, Աշոտ Ասլան և Զ. Միրզայան առանձին հատորներով հրատարակվեցին, որպես մատենաշար «Նոր էջ» պարբերագրի: Իրանահայ իրականության մեջ աննախընթաց երևույթ էր մեկ տարվա ընթացքում չորս քանաստեղծական հատորների հրատարակությունը արագ հաջորդականությամբ, որպես «Նոր էջ»-ի գրական շարժման արտահայտություն: Այս չորս գրքերը, Իրանից դուրս, գրական շրջանակներում արժանի արձագանք գտան, սակայն իրանահայ մամուլը լուռ մնաց:

Շահական վարչակարգը նոր ամսագիր, կամ թերթ հրատարակելու արտոնություն հայերին չէր տալիս, ուստի «Նոր էջ»-երը որպես գիրք-գրականություն էին լույս տեսնում և ամիսներ պահվում էին գրաքննիչների սեղանների վրա: «Նոր էջ» գրքերի բովանդակությունը երեք գլխավոր մասերից էին բաղկացած: Առաջին մասը «Նոր էջականք», ուր երևան էին գալիս «Նոր էջ»-ականների ինքնուրույն ստեղծագործությունները: Երկրորդ մաս՝ «Պարսիկ գրողներ», ուր ներկայացվում էին պարսիկ առաջադեմ արդի գրողները: Երրորդ մասում տեղի էին գրավում միջազգային համաքաղի հասած արդի գրողները: ԱՄՆ մի պարբերագիրք խմբագրում էր անդամներից մեկի կողմից: Այսպես հերթաբար խմբագրության պարտականություն են կատարել Ջորայր Միրզայանը, Արշավիր Մկրտիչը, Գալուստ Խանենցը, Ռ. Բենը և Արմեն Գեար (Վարդգես Ֆրանգյան): «Նոր էջ» գրական խմբակցության շաբաթական հանդիպումների ընթացքին, որ 1960 թվականից սկսած Հայ ակումբում էր տեղի ունենում, մի եզակի և անօրինակ գրական մթնոլորտ էր ստեղծվում: Վերլուծվում, քննադատվում էին խմբակցության և կամ ուրիշ գրողների գործերը և վիճաբանության նյութ դառնում զանազան գրական հարցեր: Այս հանդիպումներին հաճախ ներկա էին գտնվում պարսիկ անվանի նորարար գրողներ, ինչպես՝ Շամլուն Վերվուր, Բարահանի, Ֆորուզ Ֆարոխզադ և ուրիշներ: Այդ հավաքույթներին հրավիրվում էին նաև Թեհրան ժամանող սփյուռքահայ և հայաստանյան գրողներ, արվեստագետներ և մտավորականներ: Անշուշտ, ըստ բնական օրենքի, «Նոր էջ»-ն էլ շուրջ կես դար գործունեությունից հետո քայքայվեց 1980 թվականին: (Գ. Խանենց, Լույս, թիվ 17, նոյ. 30, 2000 թ.):

Առանձին գրքույկով իր քանաստեղծությունների առաջին ժողովածուն՝ «Թաց մայրեր»-ը լույս է ընծայել 1957-ին, իսկ «Նոր էջ»-ի 1965 թ. նոյեմբերի 14-ին հետմահու հրատարակվել է որպես առանձին գրական հանդես Զ. Միրզայանի հատընտիրը:

Վերջերս աշխատակցել է «Ալիք» ամսագրին, Բեյրութի «Սփյուռք», «Շիրակ» և «Բագին» պարբերականներին և Բոստոնի «Պայքար» եռամսյակին, և նույնպես «Նավասարդ», «Արփի», «Արմենուի», «Անահիտ», «Զվարթնոց» թերթերին:

Անտիպ են մնացել բավական թվով թարգմանական, գրական և ուսումնասիրական աշխատություններ, Սաադիի «Բուստան և Գոլեստան» և Հաֆեզի զագելներից և քառյակներից հատվածներ, Զ. Ֆրոյդի «Տոտեմ և տաբու», Ֆ. Դոստոևսկու «Նետուշկա Նեզվանովա» (Ջութակահարը), Ֆ. Գարսիա Լորկայի «Բանաստեղծություններ», Կոկտոյի «Տարօրինակ ընտանիքը», Էրսկին Կոլդուելի «Պատմվածքների ժողովածու» և այլ բազմաթիվ թարգմանություններ և աշխատություններ:

Զ. Միրզայանի Կառլ Վիլիլմսների «Ճանաչում եք դուք արդյոք Ծիր-կաթին» կատակերգության թարգմանությունը բեմադրվել է 1991 թ. Կիտուշ Արզույանի միջոցով Թեհրանի Հ.Մ.Ա.Կ-ի «Կոմիտաս» սրահում, որ մեծ հավանության է արժանացել:

Հայաստանում նրա քանաստեղծություններից ու թարգմանությունների առանձին նմուշներ տպագրվել են 1985 թ. «Սփյուռքահայ գրականություն» ժողովածուի մեջ Ս. Թովիչյանի հեղինակությամբ:

Նրա խոշոր և կարևոր արժեք ներկայացնող ուսումնասիրական, թարգմանական հեղինակությունն է «Պարսից գրականության պատմությունը», որի վերջին մասը՝ «Իրանի ժամանակակից քանաստեղծությունը» մասամբ հրատարակել է 1968 թ. Բեյրութի «Սևան» տպարանը:

Այս խոշոր աշխատանքը նրա մահից հետո (1964 թ. հուլիսի 13, Թեհրան) հարազատները ուղարկել են Հայաստան, որը հանձնվել է Մատենադարանին և արժանացել ակադեմիկոս Կարապետ Մելիք-Օհանջանյանի և հետևաբար Բարգեն Չուգասյանի բարձր գնահատականին, սակայն ինչ-ինչ պատճառներով այս աշխատությունը մինչ օրս մնացել էր անտիպ: Ուստի ես ձեռնամուխ եղա այս հսկայածավալ աշխատանքի հրատարակմանը, ի մի բերելով արխիվային տարբեր նյութեր, որից մի մասը որպես երկրորդ հատոր հրատարակվեց 2024 թ. «Պարսից գրականություն. պոեզիա (1900-1960)» անվան տակ «Զանգակ» հրատարակչության միջոցով, իսկ առաջին հատորը, որ ընդգրկում է պարսից գրականության պատմությունը IX-XX դդ., արդեն ընթերցողների սեղանին է:

Այստեղ իմ խորին շնորհակալությունը և երախտագիտությունն եմ հայտնում իրանագետ պրոֆեսոր Արմանուշ Կոզմոյանին իր տրամադրած համապատասխան բովանդակայից գրքերով, նույնպես իմ լավ բարեկամ Ռոբերտ Բեզլարյանին ու հարգարժան Վահան Մելիք-Օհանջանյանին ինձ տարամադրած կարևոր աղբյուրների համար, և իմ լավ ընկեր, բանասեր և թարգմանիչ Գևորգ Ասատրյանին՝ իր տված գնահատելի խորհուրդներով:

Մեծապես հպարտ եմ, որ կարողացել եմ վերջապես Ջ. Միրզայանի այս խոշոր և կարևոր արժեք ներկայացնող աշխատանքը 60 տարուց հետո աշխատասիրել և հրատարակության հանձնել:

Հավերժ փառք իր անմահ հիշատակին:

Նիկիտ Միրզայան

28 մայիսի, 2024 թ.

Երևան



Հայկ. ՍՍՀ գիտությունների ակադեմիայի
Արևելագիտության սեկտորի վարիչ
ընկ. Հովհ. Ինճիկյանին

Սեկտորիդ հանձնարարությամբ ուշի ուշով կարդացի անվանի իրանագետ և քանաստեղծ Ջորայր Միրզայանի ծավալուն Իրանի գրականության «Ա և Բ» մասեր և եկա հետևյալ վերջնական եզրակացության.

1. Ջ. Միրզայանի այս աշխատությունը առաջին և կարևոր ներդրումն է հայ արևելագիտության մեջ, որով հայ ընթերցողին նպաստած կլինի ընդհանուր առմամբ ծանոթանալու մեր դարավոր հարևանի գրական մշակույթի զարգացման պատմությանը:

2. Հմուտ իրանագետ հեղինակը՝ քաջ գիտակ լինելով Իրանի գրականությանը (սկզբից մինչև մեր օրերը) և օգտագործելով համաշխարհային արևելագիտության (անգլիական, ֆրանսիական և ռուսական սովետական, ինչպես նաև հայ հին ու նոր) նվաճումներին պարսից գրականության պատմության գծով վերին աստիճանի աշխույժ ու կարճառոտ, միաժամանակ գիտական պատշաճ մակարդակով ներկայացրել է պարսից գրականության պատմությունը:

Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի

Կարսպետ Մելիք-Օհանջանյանի

ձեռագրերի արխիվ N1773 1

ՇՆՈՐՀԱԼԻ, ՀԱՅՐԵՆԱՍԵՐ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

«**Գ**ուցե դժվար լինի ձեզ համար հասկանալ այն խոր թախիծը, որ զգում են սփյուռքի մտավորականները, իրենց մեկուսացած զգալով հայրենիքի վերածնության աշխատանքից: Մեզ տրված է հեռվից հիացողի և ծափահարողի կրավորական և անօգնական դերը, մինչդեռ մեր բուռն ցանկությունն է լինել ասպարեզի վրա, մասնակցել ստեղծագործ վերելքին և գտնվել երջանիկ հաղթանակների շքերթի մեջ»:

Հոգու խորքում սուր ցավ ես զգում, երբ ստիպված ես լինում համակերպվելու այն դաժան իրողությանը, որ այս տողերի հեղինակը, բազմաշնորհ Ջորայր Միրզայանը (1916–1964), պարսկահայ մտավորականության լավագույն ներկայացուցիչներից մեկը՝ այլևս չկա, որ նրա կյանքի թելը կտրվել է անժամանակ:

Թեհրանում է իր ողջ կյանքն ապրել նա: Ծնվելով հայտնի թարգմանիչ, հայ գրականության երախտավորներից մեկի՝ Հովսեփ Միրզայանի ընտանիքում, նա հասակ է նետում գրականությամբ հազեցված միջավայրում, սնվում հայրենի ու օտար դասականների ստեղծագործություններով և ինքն էլ դառնում գրող ու թարգմանիչ:

Արևելքի ու արևմուտքի բախման կիզակետերից է Թեհրանը, հինավուրց Իրանի մայրաքաղաքը. փշրվում են դարերով սրբագործված բարձրն ու սովորությունները, կյանքի հակասությունների ծայրահեղ բևեռացում է տեղի ունենում: Պայքարի ալիքն այստեղ մերթ դեպի վեր է խոյանում, մերթ սուզվում խորխորատները:

Ահա այս պայմաններում է ապրում կյանքի սիրով արբած, լույսի ու արևի կարոտ գրողը, մարդը՝ մտահոգված մարդու և աշխարհի ճակատագրով, հոգում անթեղած իր աստանդական ժողովրդի ծանր բախտը, նրա հույսերն ու իղձերը, անսահման կարոտը նորոգ հայրենիքի նկատմամբ: Դեռևս պատանի՝ Ջորայրը հրապուրվում է Թագորով՝ թարգմանում նրանից և 1932 թվականին, երբ մեծ գրողն այցելում է Իրան, հանդիպում ունենում հետը: Երբ հասունանում է, տարվում է Արևելքի մեծ բանաստեղծներով, թարգմանում Օմար Խայյամ ու Բաբա Թահեր, սիրահարվում Տերյանին ու Չարենցին և գրում բանաստեղծություններ: Հայրենի ու համաշխարհային գրականության դասականները թևավորում են նրան, և նա փնտրում է, որոնում:

Ջորայրի սիրտը բաբախում էր հայրենասիրությամբ: «Նամակ Հայաստան գտնվող բարեկամիս՝ բանաստեղծ Դևին» բանաստեղծության մեջ նա գրում է.

*Ես չգիտեմ՝ որն ասես, ես չեմ եղել մեր երկրում,
Չի ճաճանչել աչքիս մեջ նրա լույսը անհատում,
Բայց երանի աչքերիդ, քո բիբերին երանի,
Ուր Մասիսն է ժայռացել փարթամությամբ ծիրանի:*

Բեղուն է եղել Ջորայր Միրզայանի գրիչը, նա գրել է բազմաթիվ խոհական ու սիրային բանաստեղծություններ, փորձել է արձակի միջոցով թափանցել կյանքի հատակը և ցույց տալ տնտեսական կարիքի ճիրաններում խարխափող երիտասարդներին («Եվ կիսել պատառը»), հեղձուցիչ իրականության մեջ տապալվող մարդուն («Մի մկան մասին»):

Քաջ տիրապետելով պարսկերեն ռուսերեն, անգլերեն ու ֆրանսերեն լեզուներին, նա մեծ վարպետությամբ թարգմանել է Ֆիրդուսի ու Սաադի, Ջալալ Էդրին Ռումի ու Հաֆեզ, Խաղանի ու Նիզամի, ինչպես նաև արևմտաեվրոպական ու ռուսական հանրահռչակ գրողներին: Նա քաջատեղյակ էր ժամանակակից համաշխարհային գրականությանը, որի լավագույն ներկայացուցիչներից կատարած վարպետ թարգմանությունները հաճույքով են կարդացվում «Նոր էջի» հատորներում:

Նա երկար տարիների ընթացքում գրել է պարսից գրականության պատմությունը՝ հին ժամանակներից մինչև մեր օրերը, որի առանձին հատվածներն են միայն հրատարակվել սփյուռքահայ մամուլում:

Ջորայր Միրզայանի ստեղծագործություններից ու թարգմանություններից առանձին գրքերով լույս են տեսել «Թաց մայթը» բանաստեղծությունների ժողովածուն, «Աբու Ալի Սինայի կյանքը» ուսումնասիրությունը, Բաբա Թահերի «Քառյակները», Դոստոևսկու «Հեզիկը», Մարկ Տվենի «Պատմվածքները» և այլն, իսկ որքանն է անտիպ մնացել...

Վերջերս Ջորայրի գրչակիցները սիրով ու խնամքով ի մի են հավաքել ու հրատարակել նրա բանաստեղծությունների ու պատմվածքների մի մասը՝ առանձին գրքով: Դա հարգանքի պսակ է նրա թարմ հողաթմբին:

Բարգևն Չուգասյան

«Հայրենիք ձայն» (Երևան), 1965, № 4, օգոստոսի 22

**ՊԱՐՄԻԿ ՉԱՓԱԾՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ
ՍԿԶԲՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ 1500 ԹՎԱԿԱՆԸ**

**ՖԵՐԴՈՎՍՈՒՑ ԱՌԱՋ ՊԱՐՍԿԱԿԱՆ ՉԱՓԱԾՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
(մինչև 1000 թվականը Ք. հ.)**

Միայն վերջերս է, որ պարսիկ բանասերները սկսել են հետաքրքրվել և ոգևորվել Իրանի նախաֆերդոսյան գրականությամբ, որը ընթերցողին, առաջին իսկ հայացքից շմեցնում և հիացնում է իր լեզվի պարզությամբ, դինամիկ բնույթով, պերճախոսության բացակայությամբ և այն յուրահատուկ հմայքով, որը կարելի է գտնել համարյա թե բոլոր ՍԿՍՎՈՂ գրականությունների մեջ:

Եթե նույնիսկ պարսկական չափածո գրականություն գոյություն է ունեցել Իրանի նախախալամական շրջանում, դա կորել է և այսօր չի կարելի գտնել Սասանյան շրջանից մնացած որևէ չափածո երկ կամ նույնիսկ հատված:

Իսլամական գերիշխանության առաջին օրերին բազմաթիվ պարսիկ բանաստեղծներ են եղել, որոնք գրել են արաբերեն, քանի որ արաբերենն էր միայն որ համարվում էր գրական լեզու, Հինդուրուշից մինչև Ջիբրալթար:

Այն ժամանակ միայն, երբ Խալիֆաների գործունեությունը այնքան նվազեց, որ Արաբական կայսրության սահմանակից նահանգներում տեղական իշխանություններ սկսեցին հիմնվել, սկսվեց Իրանյան բնիկ և ինքնուրույն բանաստեղծությունը թափ ստանալ և արագորեն հասավ իր հրաշալի կատարելության: Նրանում այսպիսի անկախ մի հարստություն հիմնեց Թահեր Էրեն Հոսեյնը: 820 թվականին Ք. հ. Թահերը մի գորավար էր, որին շնորհիվ էին Խորասանի նահանգապետությունը և որը իր մահվանից հետո այդ նահանգի իշխանությունը հանձնեց իր որդուն և այդպիսով հիմք դրեց Իրանի առաջին հետ-խալամական հարստության, Թասիբիդների (Թահերիան), որը 52 տարվա կյանք ունեցավ (820-872 Ք. հ.): Իշխանությունը շուտով անցավ Սաֆֆարիների ձեռքը, որոնք իշխեցին Խորասանում և Սիստանում մինչև 903 թվականը:

Թահերիների և Սաֆֆարիների շրջանում Արաբական ազդեցությունը դեռևս շատ ուժեղ էր և այս ութսուն և մի քանի տարիների ընթացքում մեզ մնացել են միայն ՀԱՆՋԱԼԱԵ ԲԵԴՂԻՍԻ և ՖԵՐՈՒԶ ԱԼ ՄԱՇՐԵՂԻԻ անունները, որոնց բանաստեղծություններից միայն մի-մի քառյակ է մնացել:

Իսկական առաջադիմությունը սկսվեց Սամանյան հարստության օրոք (874 թվից 999 թվի): Սամանյան հարստությունը զուտ պարսկական արյուն ուներ և այդ

թագավորները իրենց կապում էին Սասանյան թագավորների գերդաստանին: Դրանք ռազմաշունչ թագավորներ էին, գրավեցին Թրանսօքսիանիան (Միջին Ասիա), Խորասանը, Իրանի հյուսիսարևելյան նահանգների մեծ մասը և միաժամանակ իրենց շուրջ հավաքեցին մի խումբ փայլուն բանաստեղծներ, արվեստագետներ և գիտուններ, երգելու համար իրենց փառքը և հավերժացնելու համար իրենց պետական տոհմի պատմությունը:

Ահա այս շրջանում է, որ սկսում է Իրանի չափածո գրականությունը, որն իր նորածիլ վիճակում արդեն գլուխգործոց է տալիս: Հազիվ դեռ սկսված այնպիսի բանաստեղծներ ունի, ինչպիսիքն են ՌՈՒԴԱՔԻՆ, ԴԱՂԻՂԻՆ, ՖԵՐԴՈՎՍԻՆ և տասնյակ ուրիշները:

Միջազգային գրականության մեջ շատ քիչ կարելի է հանդիպել նման մի հրաշքի: Հետաքրքիր է անդրադառնալ, թե Իրանի բանաստեղծները, առանց նախընթաց օրինակների, առանց բանաստեղծական ավանդության, ինչ հիմքերի և չափերի վրա են գրել իրենց չափածո քերթվածները:

ԳԱԶԵԼԸ և ՂԱՍԻԴԱՆ իրենց օրինակներն ունեին Արաբական գրականության մեջ: Բայց ՌՈՒԲԱԻՆ (քառյակը) և ՄԱՍՆԱՎԻՆ (երկյակ տողերից կազմված բանաստեղծությունը) պարսիկ հանճարի ծնունդ են: Շատ յուրահատուկ մի երևույթ է, որ պարսիկ առաջնագույն բանաստեղծները գերադասել են գրել այդ իրենց գեղեցիկ և ինքնահնար ձևերով: Ռոբային, հազիվ ծնված, նրանց ամենագերադասելի չափածո կաղապարն է եղել, իսկ Դաղիղու սկսած «Շահնամե»-ն, որը շարունակեց Ֆերդոսին, կարող է առաջին պարսկերեն ՄԱՍՆԱՎԻՆ համարվել:

Այս շրջանի բանաստեղծներից մենք ստիպված ենք եղել ընտրել միայն նրանց, որոնցից հաջողվել է մեզ հատվածներ գտնել և կարդալ, և հետևաբար նրանց, որոնց հիշում ենք, ՌՈՒԴԱՔՈՒՑ և ԴԱՂԻՂՈՒՑ քացի, չեմ տվել նախընտրությամբ, այլ պարզ ստիպողականությամբ:

Պարսիկ առաջին բանաստեղծը, որի անունը մնացել է, ՀԱՆՋԱԼԱ ԲԱԴՂԻՍՆ է (820-872 Ք. հ.), որը հիշված է Մոհամադ Աուֆիի «Լուրաբ-օլ-Ալբաբ»-ում, Բաղդիսից միմիայն այս չորս տողն է մնացել:

*Սիրեկանս խունկ է ծխում,
Որ չար աչքից հեռու մնամ,
Դեմքիդ բոցին ես կմտնեմ
Թե խունկ ծխես հազար անգամ:*

يارم سيند، گرچه بر آتش همی فکند
از بهر چشم، تا نرسد مر ورا گزند
او را سيند و آتش، نايد همی به کار
با روی همچو آتش و با خال چون سيند

Նույն շրջանին է պատկանում ԱԲՈՒ ՍԱԼԻԲ ԳՈՐԳԱՆԻՆ, որից նույնպես միայն մի քանի հատվածներ են մնացել: Մենք հանդիպել ենք միայն նրա հետևյալ քառյակին.

*Ավելի լավ է արյունդ թափի,
Քան ջուրը դեմքիդ, այս հողի վրա,*

خون خود را گر بریزی بر زمین
به که آب روی ریزی در کنار

Ավելի լավ է պաշտել մի կուռքի,
Քան մարդուն պաշտել, Աստված է վկա:

بت پرستنده به از مردم پرست
پند گیر و کار بند و گوش دار

Անցնելով այս երկու առաջնագույն բանաստեղծներից, Աուֆին 28 բանաստեղծի
անուն է հիշում, որոնք ապրել և գրել են Սամանյան թագավորների օրոք: Թերևս
այս բանաստեղծների քերթվածները միջակ, անտաշ և անհետաքրքիր թվան օտա-
րազգի ընթերցողին, բայց չպետք է մոռանալ, որ Իրանի ապագա գլուխգործոցնե-
րը հիմնվել, ներշնչվել և աղբյուր են առել այս բանաստեղծություններից, որ բոլոր
գործածված նմանությունները, բառախաղերը, չափաբանությունը նոր է եղել և որ
հետագային է միայն որ այդ նմանությունները կրկնվել են զանազան փոքր ու մեծ
բանաստեղծների կողմից: Բացի այդ, ճաշակելու համար պարսկերեն լեզուն, նրա
նորածիլ առնականությունը, նրա հեթանոս գեղեցկությունը, այս բանաստեղծու-
թյունները պիտի կարդալ բնագրում: Այս լեզուն է, որ թոթափելով արաբական լուծը,
իր մաքրության և առնական զորության զագաթնակետին հասավ Ֆերդուսու
«Շահնամե»-ում:

Պարսիկ այս առաջին բանաստեղծների շարքումն է ՇԱՀՐԻԴԵ ԲԱԼԽԻՆ, որից
հանդիպել և թարգմանել ենք հետևյալ երեք քառյակները.

Ծուխ ունենար թե որ ցավը, կրակի պես,
Աշխարհը ողջ մութ կպատեր մինչ հավիտյան,
Այս աշխարհում թե ծայրից ծայր դու պտտես՝
Մեկի դեմքին ժպիտ չկա ուրախության:

اگر غم را چو آتش دود بودی
جهان تاریک ماندی جاودانه
درین گیتی سراسر گر بگردی
خردمندی نیابی شادمانه

* * *

Երեկ անցա ավերակով Թուս քաղաքի,
Տեսա փլված պատին թառած մի բու անխոս,
Ասի՜ ինչ լուր ավերակից այս քաղաքի,
Ասաց՝ ոչինչ... միայն ափսոս, միայն ափսոս...

* * *

Ժամանակի Գիրքը տեսա
Ու կարդացի գլխից մինչ ոտ,
Ոտից գլուխ կհաստ էր նա,
Սխալով լեզուն՝ գլխից ոտ:

Այս շրջանի փոքր բանաստեղծներիցն է նաև ԱԲՈՒ ՇՈՔՈՒՐ Է ԲԱԼԽԻՆ, որը
947 թվին Ք. հ. Գրել և ավարտել էր «Աֆերին-նամե» անվամբ մի գիրք, որը դժբախ-
տաբար կորել է: Նրանից մենք հանդիպել ենք միայն հետևյալ քառյակին.

Մի խղճա երբեք թշնամուդ, որ նա
Դառը պողաքեր ծառի է նման:

به دشمن برت استواری مباد
که دشمن درختی ست تلخ از نهاد

Նա դառը պտուղ կտա քեզ միայն,
Որքան քաղցր ջրով ոռոգես նրան:

درختی که تلخش بود گوهر
اگر چرب و شیرین دهی مرا
همان میوه، تلخ آرد پدید
از او چرب و شیرین نخواهی مزید

Սամանյան հարստության վերջին և Ղազնավի հարստության առաջին թագա-
վորի օրոք է ապրել ԱԲՈՒ ՄԱՆՍՈՒՐ ՕՄԱՐԱ ՄԱՐՎԱԶԻՆ (կամ Մարվեցին), որը
կատարելության էր հասցրել կարճ և պատկերավոր բանաստեղծությունները,
նվիրված գարնան, գինուն և կանանց: Աբու Մանսուրի բանաստեղծություններից
չատ քիչ օրինակներ են մնացել: «Գոլջինե Ջհանբանու» մեջ հանդիպում ենք այս
գեղեցիկ քառյակին.

Մի հպարտանա, որ սիրելին ես
Երկդիմի կյանքի,
Կյանքը շատերին զարկել է գետին
Գահի բարձունքից.
Աշխարհը օձ է ու օձ-բռնող է
Հաճույքի գերին,
Ու մի օր օձը վրեժը կառնի
Օձ հնայողից:

غره مشو بدانکه جهانت عزیز کرد
ای بس عزیزا که جهان کرد زود خوار
مار است اینجهان و جهانجوی مارگیر
از مارگیر مار برآرد شیبی مار

Մի ուրիշ գեղեցիկ հատված է հետևյալը.

Ջուր ու կրակ թե չես տեսել խառնված,
Ապա նայիր այն բաժակին ու գինուն.
Թասն է ձերմակ գրկել գինուն բոցավառ,
Կարծես ջուր է բյուրեղացել բոցի շուրջ:

Այս գեղեցիկ քառյակը միակն է, որ մնացել է ՆԱՍՐ ԷԲՆ ՄԱՆՍՈՒՐ-
ԷՍԹԵՂՆԱՅԻ ՆԵՇԱԲՈՒՐԻՅ (Ն. Մ.), որը հազվագյուտ և թարմ մի գեղեցկություն
ունի:

Նա կլինեք լուսնի նման,
Թե չունենար մազը գոռոզ
Մուշկ է բուրում խալից նրա
Ու խորովում սիրտս անհույս:
Արեզակ է դեմքը նրա,
Մի արեզակ — որ վախ չունի
Մայրամուտից երեկոյան,
Ու վտանգից խավարումի:

به ماه ماندی اگر نیستیش زلف سیاه
به زهره ماندی اگر نیستیش مشکین خال
رخانش را به یقین گفتمی که خورشید است
اگر نبودی خورشید را کسوف و زوال



Աուֆին նախաֆերդովայան բանաստեղծների շարքում նույնպես հիշում է ՄԱՆԱՎԻԻՆ, որից հանդիպել ենք միայն այս փոքր հատվածին.

*Մի հրամանեցրու օտարներին
Այն, ինչ թույն է անձիդ համար,
Թե չես օգնում, մի վնասիր,
Թույն մի ծախիր դրամի համար:*

Ռեյ քաղաքի բնիկներինցն է եղել ՄԱՆՍՈՒՐ ԷԲՆԵ ԱԼԻ ԱԼ-ՄԱՆԹԱՂԻՆ, որը Դեյլամ իշխանական տոհմի մեծահոջակ վազիր Սահեբ Էսմանլի գովաբաններինցն էր և այս քառյակը գրել է նրա համար.

*Հիվանդացել է լուսինը կարծես,
Նա նհիարում է, տառապում անվերջ,
Մեծ էր նա երեկ, արծաթե վահան,
Այսօր երկնքում դժգույն է և խեղճ:
Կարծես Սահերի նժույզը ճախրել
Ու պայտը ոսկե՝ երկինք է ձգել:*

Ալ-Մանթաղին մի ուրիշ հատված ունի, որը նույնպես հետաքրքիր և ինքնուրույն է.

*Ով սիրուհիս, տարա մի գես
Քո գանգուրից գողացած,
Ու տանջվելով, մրջյունի պես
Ես տուն տարա մազդ այս.
Երբ մեզ տեսավ հայրս, ճչաց.
«Սրանցից ո՞րն է իմ տղաս»:*

Այս շրջանի բանաստեղծներից հիշենք մի վերջին անուն ևս: Նախքան անցնել Ռուդաբուն և Դաղիդուն, որոնք նախաֆերդովայան մեծագույն բանաստեղծները և Իրանյան չափածո գրականության առաջին կլասիկներն են համարվում:

Այս վերջին բանաստեղծը ԱԲՈԼՖԱԹ-ԸԵ ԲՈՍԹԻՆ է, որը ապրում էր Հեջրի 4-5-րդ դարում: Նրանից հանդիպել ենք այս 6-տողյա բանաստեղծության.

*Լսիր ինձնից այս խրատը ու գործադրիր,
Որ խրատից գործադրողն է միայն օգտվում,
Թե ուժ ունես ու գործություն,
Պատերազմից միշտ խուսափիր,
Խաղաղությունն է իշխանին
Հերոս դարձնում:*

*یکی نصیحت من گوشدار و فرمان کن
که از نصیحت سود آن کند که فرمانکرد
همه بصلح گرای و همه مدارا کن
که از مدارا کردن ستوده گردد مرد
اگر چه قدرت داری و عدت بسیار*

*Ում որ ձեռքին թուր է դրել
Ճակատագիրը անխնս,
Նա չպիտի արյուն թափի,
Ռազմի գնա,
Ով որ ունի իմաստության
Սաղմ փոքրագույն,
Չի սեփական շրթին դնել
Բաժակը թույն:*

*بگرد صلح درای و بگرد جنگ مگرد
نه هر که دارد شمشیر حرب باید ساخت
نه هر که دارد فا زهر زهر باید خورد.*

ԱԲՈՒ ԱԲԴՈԼԼԱԸ ՌՈՒԴԱՔԻ

Ռուդաբին համարվում է Իրանի առաջին մեծ բանաստեղծը: Ժամանակագրական կարգով, Ռուդաբուն պետք է հիշել Շահիդե Բալխիից հետո, քանի որ այս մեծ հանճարը մահացել է Հեջրի 329 թվականին (940 թիվ Ք. հ.) և Սամանյան թագավոր Նասր Բ-ի արքունական երգիչն է եղել:

Ռուդաբին ծնվել է Սամարղանտ քաղաքի մերձակա մի գյուղում և ըստ պարսկական հնագույն աղբյուրների, ի ծնն կույր է եղել: Այդ քանը չեն ընդունում նորագույն բանասերները, քանի որ Ռուդաբու բանաստեղծությունների մեջ գույների և պատկերների այնպիսի հարստություն կա, որ ի ծնն մի կույրից սպասել չի կարելի:

Բանաստեղծ լինելուց բացի, Ռուդաբին հայտնի երգիչ և քնար ու շվի նվագող էր և սովորաբար նա իր բանաստեղծությունները երգում էր, նվագի ընկերակցությամբ (հայ աշուղների պես):

Նկարագրելու համար նրա բանաստեղծությունների հմայքը, պատմում են, որ Ամիր Նասեր Էրեն Ահմադը՝ Սամանյան թագավորը, չորս տարի էր, ինչ հեռացել էր իր մայրաքաղաք Բուխարայից և արքունիքը փոխադրել էր Հարաթ: Արքունական իշխանները դժգոհ էին այդ քանից և ոչ մի կերպ չէին կարողանում համոզել թագավորին, որ վերադառնար իր Բուխարան: Վերջապես նրանք մի օր խնդրում են Ռուդաբուն մի կերպ հալել թագավորի սրտի սառույցը և համոզել նրան վերադառնար իր քաղաքների թագուհու մոտ: Ռուդաբին հորինում և Նասրի համար երգում է հետևյալ քալլաղը, որն իր չքնաղ պարզությամբ և երաժշտականությամբ մեկն է պարսկական գլուխգործոցներից: Շատ հեռավոր մի գաղափար կարող է տալ այդ բանաստեղծության թարգմանությունը բնագրի երաժշտականության:

* * *

*Այն ՄՈՒԼԻԱՆ առվից մի բույր է գալիս,
Մեր ընկերներից համբույր է գալիս,
ԱՄՈՒՅՅԱ գետի ավազները կոշտ
Բնեկը բնքույշ հրապույր են տալիս:*

*بوی جوی مولیان آید همی
یاد یار مهربان آید همی
ریگ آموی و درشتی راه او
زیر پایم پرتیان آید همی
آب جیحون از نشاط روی دوست
خنگ ما را تا میان آید همی*

*ՁեՅՀՈՒՆԻ ջուրը ուրախությունից
Լիզեց նժույզիս թամբն արծաթածույլ,*

Ով իմ Բուխարա, ցնծա և հրճվիր,
Դեպքեզ է գալիս Էմիրն ոսկեխույր:

Բուխարան երկինք, Էմիրը լուսին,
Լուսինն երկինք է գալիս վերաստին,
Էմիրը նոճի, Բուխարան բուստան,
Բուստան է գալիս նոճին աննման:

Երբ Ռուղաբին երգում է վերջին տողը, Էմիրը այնպես է ազդվում այդ բանաստեղծությունից, որ թողնում է գահը, հեծնում պալատական պահակի ձին և այնպիսի շտապով է սլանում դեպի Բուխարա, որ արքունականները ստիպված են լինում երկու ֆարսանգ նրա հետևից բռնել, հասնելու և ճամփորդական կոշիկները նրան տալու համար:

Ռուղաբին իր կյանքի վերջին տարիներում արքայական աչքից ընկավ և մեռավ աղքատության մեջ, բայց իր փառքի օրերին նա երկու հարյուր ստրուկ ուներ և նրա ունեցվածքը տեղափոխելու համար 100 ուղտ էր պետք:

Ռուղաբու գրած բանաստեղծությունների թիվը և քանակը թեական է, բայց Dr. Eché-ն, որը մեծագույն հեղինակությունն է Ռուղաբու վերաբերմամբ, հավաքել է նրա բոլոր մեզ հասած քերթվածները և նրանց թիվը չի անցնում 242 երկտողից, մինչդեռ Աուֆին՝ պարսիկ հնագույն կենսագիրը, Ռուղաբուն վերագրում է 100 հազար բանաստեղծություններ, իսկ Ջամին «Բահարեստանում» գրում է, որ Ռուղաբին հորինել է մեկ միլիոն և երեք հարյուր հազար բեյթ:

Ռուս արևելագետ Ի. Բրագինսկին Ռուղաբու արվեստի մասին գրում է. «Մեզ հասած բանաստեղծությունները վկայում են, որ առաջին քերթողը Ռուղաբին էր, որ կատարելագործեց պարսկական պոեզիայի բոլոր հիմնական ձևավորումները. հանդիսավոր դասիդան, քնարական գագելը, ողբի երգը (մարսիե), սատիրը (հաջվիե), քառյակը և այլն: Ռուղաբին ունի իր հատկորոշ ոճը, որին 11-րդ դարի մեծագույն պարսիկ բանաստեղծ Օնսորին անվանում է «Ռուղաբային գրելակերպ» — **Ռուղաբիվար:** Դա նրա վաղ պատկերներն են, առանց արվեստականության, բնության կենդանի ըմբռնումը, ժողովրդական պարզությունը, երաժշտականությունը և նրա ուժեղ հակումը դեպի նախալամական շրջանի բանաստեղծական պատկերավորումները»:

Պարսկաստանը և Խորհրդային Տաճիկստանը 1957 թ. տոնեցին Ռուղաբու ծննդյան 1100-ամյակը: («Նոր էջ» 11.— Ն. Մ.)

Ռուղաբուն դր. Սաիդ Նաֆիսին իրավորեն անվանում է «Իրանի ռեալիստ բանաստեղծը»: Նրա քերթվածները անպաճույճ են, անճոռոմ, պատկերավոր և ուժեղ: Նրա լեզուն քաղցր և չաղավաղված պարսկերեն է, որը շատ գեղեցիկ է հնչում բնագրում:

Օրինակ, որքան գեղեցիկ պատկերներ կան խտացված այս երկտողում.

ای بخارا! شاد باش و دیر زی
میر زی تو شادمان آید همی
میر ماه است و بخارا آسمان
ماه سوی آسمان آید همی
میر سرو است و بخارا بوستان
سرو سوی بوستان آید همی

Բեր այն գինին, որը կարծես
Սիրտ լինի կարկեհանի,
Կամ սուրի շեղբ լինի կարծես
Յուրբերի տակ արեգակի:

Կամ գինի պատրաստելու այս նկարագրության մեջ որքան դեռ կրակ կա հեթանոս Պարսկաստանից:

Պիտի կտրել առինքը գինու
Ու բաժանել իր ուրթ մորից,
Նրան քանտարկել մի կարասում
Ու յոթը օր պահել նորից:
Օրն ութերորդ ուշքի կգա
Ու փրփրադեզ կհառաչի,
Բայց քիչ հեռո դեմքը նրա
Կնմանի մի կակաչի:
Նրա կողքին ինչ է գոհարն
ԲԱԴԱԽՇԱՆԻ կարմրաթույր,
Կարծես մուշկը, համպար ու վարդ
Պարզել են հազար մի բույր:
Կեսգիշերին թե մոտենաս
Հին կարասի կափը վերցնես,
Բյուր ցուքերով քեզ կնայի
Արեգակի աչքը կարծես:

Այս երկտողը նմանապես գեղեցիկ է.

Ով Քեշմիրի գեղեցկուհի,
Գինանձավը գնա հիմա,
Գինի խմիր, ջահել ցավը
Գինով միայն կծերանա:

Այս հետևյալ քառյակի մեջ երևում է պարսիկ հեթանոս ոգու և իսլամի պարտադրած օրենքների պայքարը գինի խմելու համար:

Գինի չիներ՝ անապատ էին սրտերը բոլոր,
Կը կենդանանամ թե գինի դնեն իմ շրթին այսօր,
Երևես մի արծիվ երկինք բարձրացնեք բաժակը գինու,
Չը հասնեք ձեռքը անարժան մարդկանց, ինչպես ես ու դու:

Այս հատվածը Ռուղաբին հավանաբար գրել է ծերության օրերին, երբ աչքաթող էր արված ու ապրում էր աղքատության մեջ:

بیار آن می که پنداری روان یاقوت نابستی
و یا چون برکشیده تیغ پیش آفتابستی

مادر می را بکرد باید قربان
بچه او را گرفت و کرد به زندان
چون بسپاری به حبس بچه او را
هفت شباروز خیره ماند و حیران
چند ازو سرخ چون عقیق یمانی
چند ازو لعل چون نگین بدخشان
ورش ببویی، گمان بری که گل سرخ
بوی بدو داد و مشک و عنبر با بان
آن گه اگر نیم شب درش بگشایی
چشمه خورشید را ببینی تابان

Այս աշխարհը սուտ մի բուն է,
Նա կհմանա՝ ով արթուն է,
Յնծությունը՝ արցունք է նրա,
Լավությունը՝ վատություն է:
Սև է հոգին, դեմքը պայծառ
Ու չարիքով նա լեցուն է:

* * *

Ապրիր, Ռուդաբի, դու ազատ հոգով,
Ուրիշների պես մի տանջվիր իզուր.
Ապրիր այս կյանքը իմաստունների
Լուսավառ ոգով և սրտով մաքուր:
Եվ մի մտածիր քո կյանքն է միայն,
Որին վշրել է աշխարհին անօրեն.
Յավերը շատ են անցողիկ կյանքի,
Դու ապրիր կյանքի երջանիկ րուպեն:

* * *

Կյանքդ երկար լինի թե՛ կարճ՝
Մի օր կգա ժամդ վերջին,
Մի օրենք է դա անձանաչ,
Կկտրվի այս թելը հին:

Կուզես ապրիր խեղճ և անոք,
Կուզես ապրիր փառքում անծիր,
Կուզես աշխարհին անցիր անհոգ,
Կուզես քիչով ուրախացիր:

Այս ամենը երազ է սին,
Երազ է զուր և վաղանցիկ,
Հավատար են մահվան ժամին
Հարուստ, իշխան և մուրացիկ:

* * *

Միրտ իմ, մինչ նրբ պիտի տանջվես սիրահար,
Մինչ նրբ իզուր զարկես պողած պողպատին.
Միրտ իմ, զարու հատիկ ես դու, սերը՝ սար,
Միթե հեշտ չէ՞ քարով վշրել հատիկին:

زندگانی چه کوته و چه دراز
نه به آخر بمرد باید باز؟
هم به چنبر گذار خواهد بود
این رسن راه، اگر چه هست دراز
خواهی اندر عنا و شدت زی
خواهی اندر امان به نعمت و ناز
خواهی اندک تر از جهان بپذیر
خواهی از ری بگیر تا به طراز
این همه باد و بود تو خواب است
خواب را حکم نی، مگر به مجاز
این همه روز مرگ یکسانند
نشاسی ز یک دگرشان باز

دلا تا کی همی جویی منی را
چه داری دوست هرزه دشمنی را
چرا جویی وفا از بی‌وفایی
چه کویی بیهوده سرد آهنی را
دل من ازنی عشق تو کوهی
چه سایی زیر کوهی ازنی را

* * *

Դու փնտրում ես բույր ու ծաղիկ, մինչդեռ՝ ալմա՛ղ
Այս պարտեզում ոտիներ են լացում մենակ.
Մտնենում է պարտիզպանը, զգուշացիր,
Փոշի՛ դարձիր, քամու նման անցիր արագ:

* * *

Ինձ Քարեից հեռացրիր, եկեղեցու դուռը տարար,
Ո՛չ, ինձ նման այլ անհավատ դու չես գտնի երկրում արար,
Երկու հազար աղոթք եմ ես իմ սիրածի դռանն արել,
Սակայն, սեր իմ, ինձ դարձրիր այլ հավատի աղոթարար:
(Թարգմ. Վ. Դավթյան)

* * *

Միրո ճանապարհն արյունով լեցուն մի անդունդ ունի,
Եվ խորությունը հասնում է հազար-հազար կանգունի,
Լեզու անաններն ինչ գիտեն, ալմա՛ղ, մեր վերք ու վշտից,
Մեջնունը գիտե վիճակը խենթի ու ցավն արքունի...
(Թարգմ. Վ. Դավթյան)

از کعبه کلیسیا نشینم کردی
آخر در کفر بی‌قرینم کردی
بعد از دو هزار سجده بر درگاه دوست
ای عشق، چه بیگانه ز دینم کردی!
جایی که گذرگاه دل محزونست
آن جا دو هزار نیزه بالا خونست
لیلی صفتان ز حال ما بی خبرند
مجنون داند که حال مجنون چونست

ՌԱԲԵԵ ԲԱԼԽԻ (ՂԱԶԴԱՐԻ)
(մոտ 943-914)

Ռաբեե Ղազարին կամ Ռաբեե Բենթ-Քաաբը ԱՌԱԶԻՆ պարսիկ բանաստեղծուհին է, որի բանաստեղծություններից դժբախտաբար միայն հատուկորր է հասել մեզ: Նա ծագումով արաբ էր, մի ցեղից, որ գաղթել էր Արաբստանից և բնակություն հաստատել Խորասանի Ղազար շրջանում: Արաբ այդ ցեղի ցեղապետն էր Քաաբը՝ Ռաբեեի հայրը, որի մահվանից հետո ցեղի ղեկավարությունը հանձնվեց նրա անդրանիկ որդուն՝ Հարեսին: Ռաբեեն (որին հիշում են Աուֆին, Դովլաթշահը և թուր հետագա կենսագիրները) հղկված էր իր օրվա գիտությունների մեջ: Նա տիրապետում էր պարսկերենին, ինչպես և արաբերենին և երկու լեզվով էլ բանաստեղծություններ էր գրում: Բանաստեղծը հարգում է զգացումները, ավելի ազատամիտ է, քան իր շրջապատը: Նույնն էր և Ռաբեն: Չնայած արաբ ցեղը, որի վրա իշխում էր նրա եղբայրը, հավատքով ֆանատիկ և իրենց սովորությունների և ավանդապահության մեջ չափազանց խիստ և չոր էին, այնուհանդերձ Ռաբենն, որին թույլատրված չէր նույնիսկ դուրս գալ ոսկեպաճույճ իր վրանից, սիրահարվեց իր նորր թուրք ստրուկի՝ Բեկթաշի վրա: Այդ սերը այնքան ուժեղ էր, որ ոտքի տակ առավ ցեղային սովորություններն ու նամուսը, պարկեշտության նեղ հասկացողությունները, և քանի որ Ռաբենն երբեք չէր կարող երազել այն օրը, երբ օրինապես կրածանի Բեկթաշ ստրուկի անկողինը, տարված իր կրակոտ սիրով, ծածուկ Բեկ-

¹ «Ռուդաբի», Ա. Կոզմոյան, Վահագն Դավթյան, «Ապոլոն», Երևան, 1995 թ.:

թաշի սիրուհին է դառնում: Բեկթաշը, վախենալով այդ համաձակ կնոջ սիրուց, որի հետևանքները նա գիտեր, թե որքան դառը կարող են լինել, երկար ժամանակ դիմադրում է Ռաբեհին, խուսափում է նրանից:

Ռաբեհն տառապում էր իշխանական մենության մեջ, գալարվում էր մարգարտակար բարձերի վրա ու աղաչում էր ստրուկին գեթ մի քիչ սիրել իրեն.

*Աղաչս Աստծուց այն է, որ մի օր
Քեզ էլ իմ նման սիրահար աներ,
Սիրելի մեկին անգութ և դաժան,
Որ հասկանայիր իմ սիրտը ավեր:
Կրակը սիրո ու բոցը վշտի
Քո սիրտը այրեր, վառեր քո հոգին,
Որ բաժանումի ցավից գալարուն՝
Ինձ հասկանայիր, սիրելան անգին:*

*دعوت من بر تو آن شد کایزدت عاشق کناد
بر یکی سنگین دل نامهربان چون خویشتن
تا بدانی درد عشق و داغ هجر و غم کشی
چون بهجر اندر بیچی پس بدانی قدر من*

Բեկթաշը՝ Խորասանի տափաստանների այդ գեղեցիկ ստրուկը, երկար չի դիմանում Ռաբեհի հմայքին և հուսահատ աղաչներին: Ու գիշերով նա սկսում է հաճախել Ռաբեհի վրանը: Վրանի կիսամութի մեջ գրկախառնվում են նրանք, ցեղապետի քույրը և ստրուկ Բեկթաշը և միայն երկու հավատարիմ հարձեր են, որ հսկում են դրսում, վրանի մոտ նստած:

Այդ կարճ և երջանիկ օրերին էր, որ Ռաբեհն, հարթած իր սիրով, դուրս էր գալիս պարտեզ, պտտում էր դաշտերը և լիացած հոգով երգում էր գարունը, կյանքը և ծաղիկները:

*Միթե արյուն է երկնքից կաթում,
Որ վարդը այրպես կարմիր է հազել,
Միթե մանուշակն կուսանոց մտավ,
Որ կապույտ բողով երեսն է ծածկել,
Միթե կարկեհան գինով են լեցրել
Բոսոր շուշանի բաժակն անարատ,
Ինչ արքայական թագ են գողացել,
Դրել նարգեսի կոկոնին հպարտ:*

Բայց կարճատև էր այդ երջանկությունը: Չար լեզուները սկսել էին շնչալ վրաններում, ՄԱՆ ՂԱՆՆԵՐԻ շուրջ, ուղտերին կթելիս: Բեկթաշի հետ սկսել էին կատակել իր ընկերները և Բեկթաշը, կատաղած հաճախ հարձակվում է նրանց վրա և իր հզոր բազուկներով, որոնք այնքան նրբորեն գրկում էին գեղեցիկ Ռաբեհի իրանը, ձգվում ու ջարդում էր իր ընկերների ոսկորները: Բայց լեզուների առաջը չէր կարելի բռնել ու լուրը հասավ Հարեսին, արաբ հպարտ ցեղապետին: Հողի մեջ քաշկոտելով Հարեսի առաջ բերին ձեռված և տանջված Բեկթաշին, որը խոստովանեց, որ Ռաբեհն երկար ժամանակ է, որ իր հոմանին է: Արյամբ լցվեցին Հարեսի աչքերը, մշուշը պա-

տեց նրա կատաղած ուղեղին: Իր սեփական քույրը համարձակվել էր արատավորել հպարտ Բեսովինի անաղարտ նամուսը:

Ամբողջ շրջապատը դողում և սպասում էր Հարեսի վճռին: Ռաբեհն նրա միակ քույրն էր, որին Հարեսը պաշտում էր նրա մտքի, գեղեցկության, կրթության և բանաստեղծական տաղանդի համար:

Հարեսը լուռ էր: Նա ոտքի կանգնեց և ծանր քայլերով մոտեցավ իր քրոջ տաղավարին: Արևի կիզիչ ճառագայթները փայլվում էին նրա գոհարազարդ դաշույնի վրա:

Եվ երբ նա դուրս եկավ իր քրոջ տաղավարից, նրա աչքերից և դաշույնից արյուն էր կաթում:

Բայց Ռաբեհն այն կանանցից էր, որ գիտեր սիրել և գիտեր սիրո համար մեռնել.

*Սերը մի ծով է, անհուն և անծայր,
Ինչպես ես կարող այդ ծովում լողալ,
Ինչ որ տգեղ է, լսվ պիտի տեսնես,
Թոյնը շրթերիդ՝ համարես շաքար:*

*عشق دریایی کرانه ناپدید
کی توان کردن شنا ای هوشمند؟
زشت باید دید و انگارید خوب
زهر باید خورد و پندارید قند*

ԱՐՈՒ ՄԱՆՍՈՒՐ ԴԱՂԻՂԻ

Դաղիղու հոշակը հիմնված է այն երևույթի վրա, որ «Շահնամե»-ն նախապես նրան էր հրահանգված գրել, և նա սկսելով «Շահնամե»-ն, գրում է մոտ 1000 (ըստ ոմանց 1100 և ըստ ոմանց 988) երկտող, նախքան այն որ նրա սիրած թուրք ստրուկը նրան դաշուններ (952-954): Դրանից հետո է, որ «Շահնամե»-ն ձեռք է առնում և ավարտում է իր դարի մեծագույն հանճար Ֆերդուսին:

Այլ տեղեկություններ Դաղիղու կյանքից չեն մնացել և մեզ հասած բանաստեղծությունների թիվը, բացի «Շահնամե»-ի 1000 երկտողից, շատ քիչ են, հազիվ 40 րեյթ: Դաղիղու ոճը «Շահնամե»-ում համարյա թե չի տարբերվում Ֆերդուսու ոճից, բայց այն մի քանի փոքրիկ հատվածները որ հաջողել են կարդալ, չեն կարող մրցել Ռուդաբու արվեստի հետ:

Դաղիղին գինու սիրահար էր և նույնիսկ ոմանք կարծում են, որ նա գրադաշտական է եղել, չնայած որ Է. Բրաունը նրա գրադաշտական հակումները վերագրում է միմիայն նրա գինարբուքի սերին: Գինու վերաբերյալ միայն մի հատվածի են հանդիպել:

*Քանված ողկույզից արեզակնաշող,
Հոգիդ վատվում է սրբազան բոցով,
Այն աստղիկն է նա, որ երբ ցած գնաց,
Կշառագունի այտերի վրա:*

Երկու ուրիշ հատվածի ևս հանդիպել ենք Դաղիղու, որոնք թարգմանաբար մեծ հետաքրքրություն չեն ներկայացնում, բայց գեղեցիկ են բնագրում իրենց լեզվի անպաճույճ պարզությամբ և անկեղծությամբ:

* * *

Խրատում են ինձ մի պահ համբերեմ,
Համբերությունը լավ պտուղ կտա:
Կյանքս վերջացավ համբերության մեջ,
Մյուս անգամ կուտեմ պտուղը նրա:

گویند صبر کن که ترا صبر بر دهد
آری دهد ولیک به عمر دگر دهد
من عمر خویش را به صبوری گذاشتم
عمری دگر بیايد تا صبر بر دهد

* * *

Երկար մնացի ես այս աշխարհում
Եվ այժմ մարդիկ փախչում են ինձնից:
Թե ջուրը երկար մի հորում մնա,
Կհոտի անշուշտ անշարժությունից:

من اینجا دیر ماندم خوار گشتم
عزیز از ماندن دایم شود خوار
چو آب اندر شَمَر بسیار ماند
ز هومت گیرد از آرام بسیار

ՖԵՐԴՈՎՍԻՆ ԵՎ ՆՐԱ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԸ (ՊԱՐՍԻԿ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1000 ՏԱՐԻ ԱՌԱՋ)

Պարսից գրականության պատմությունը սկսվեց հետիսլամական Իրանի նախնազույն բանաստեղծներով և հասավ մինչև մոտ 1000 թվականը - Բ. հ., երբ պարսից գրականությունը արձակ և չափածո, գիտությունը, փիլիսոփայությունը և պատմագրությունը հասան իրենց վերածնունդի կատարելության և Պարսկաստանը աշխարհին տվեց այնպիսի հանձարներ, ինչպիսին էին Աբու Ալի Սինան, Ալ-Բիրունին, Ֆերդովսին և տասնյակ ավելի փոքր, բայց հանձարեղ գիտնականներ և բանաստեղծներ:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԸ 1000 ՏԱՐԻ ԱՌԱՋ

Արևմուտքում, արմավենիների հովտի մեջ թաղված է Բաղդադը, Հարուն Ալ Ռաշիդի հեքիաթային մայրաքաղաքը, ուր անվանապես թագավորում է Խալիֆան Ալ Ղադիր-Բելլան, և որի պետության սահմանները տարածվում են Իսպանիայից մինչև Սամարղանդ: Բայց կառավարության ղեկը գտնվում է պարսիկ իշխանագուն տոհմի, Բովեյհեյի ձեռքին, որոնք իշխում են Իրանի հարավային և հարավարևմտյան նահանգների վրա: Նրանք իրենց ծագումը վերագրում են Սասանյան թագավոր Բահրամ Գուրին: Նրանց արքունիքը փարթամ է, արաբական փարթամությամբ, Հարուն Ալ Ռաշիդի ուրվականը դեռևս թափառում է Բաղդադի բանուկ և աղմկոտ փողոցներում, պարսիկ բանաստեղծները, փիլիսոփաները և պատմաբանները դեռևս գրում են արաբերեն լեզվով և արդեն խալիֆաների անկումը ազդել է նրանց ոճի վրա, որի մեջ մտել է դեքադանսին հատուկ ճոխությունը և սրբությունը, փտած փայտի գիշերային լույսը:

Անցնելով Միջագետքի, Խուզեստանի, Արաղի և Ռեյի վրայով, մենք հանդիպում ենք Կասայան կանաչ և սաղարթախիտ նահանգներում Պարսից մի այլ իշխանագուն գերդաստանի, Ջիյար հարստության, Թաբարեստանը (Գորգանը և Մազանդերանը) համարյա թե միշտ հաջողել է պահպանել իր անկախությունը,

նախ գրադաշտական սեփահրողների և հետո պարսիկ նախնազույն շիաների, Ջեյդի Իմամների կամ Ջիարիների իշխանության ներքո: Այս հարստությունը նույնպես իր ծագումը կապում էր Սասանյան հաստատության՝ Ղորադ թագավորին: Նրանց արքունիքում նույնպես ծաղկել ու բարգավաճել է գիտությունն ու գրականությունը, նրանց արքունիքում նույնպես վիստում են բժիշկներ, աստղագետներ, փիլիսոփաներ և բանաստեղծներ: Թաբարեստանի փառքը իր գագաթնակետին հասավ Ղարուս Էրեն Վոշմգիրի օրոք, որն ինքը բանաստեղծ, աստղաբաշխ և առատաձեռն և արդար մի թագավոր էր:

Այժմ կտրելով Իրանի կենտրոնական անապատը, մենք հասնում ենք զուտ պարսկական նախնազույն և մեծ հարստության սահմաններին, Խորասանին, որը հազար տարի առաջ ընդգրկում էր այժմյան Թուրքմենստանի մեծ մասը:

Այնտեղ Բուխարան իր մայրաքաղաքը շինած, ապրում և իշխում է Պարսից Սամանյան հարստությանը, որոնք ծագում էին առել Սասանյան թագավոր Խոսրով Փարվիզի հոջակավոր սպարապետ՝ Բահրամ Չուբինից: Սասանյան իշխանների հոջակավոր երգիչն էր Ռուդաֆին, պարսիկ առաջին հանձարեղ բանաստեղծը:

Այս բոլորից շատ ավելի փառավոր և շքեղ էր Սուլթան Մահմուդի արքունիքը, Ղազնա քաղաքում, որը գտնվում է աֆղանական լեռնաշխարհի սրտում, այժմյան Քարուլից քիչ հեռու:

Փառահեղ Ղազնայում իշխում է Սուլթան Մահմուդ Ղազնավին, Հնդկաստանի ահն ու զարգանդը, կուռքերի փշրողը, Ղազնայի արեգակը, Սասանյան իշխանների՝ թուրք ստրուկ Ալիթափինի՝ Սարոքթափինի որդին: Նա իր իշխանությունը սրով և հրով տարածեց Աֆղանստանի, Խորասանի, Թաբարեստանի, Սիստանի, Քաշմիրի, Հյուսիս Արևմտյան Հնդկաստանի և այժմյան Թուրքմենստանի վրա: Նրա արքունիքում էին գտնվում ժամանակի մեծագույն բանաստեղծները, պատմաբանները, բժիշկները, աստղագետները, թվաբանները և փիլիսոփաները (բացառությամբ Աբու Ալի Սինայից, որը անհատական պատճառներով փախավ Սուլթան Մահմուդի ձեռքից Սպահան):

Սուլթան Մահմուդի արքունիքը վիստում էր բանաստեղծներով, բայց նրանց մեջ լեռնագագաթների պես փայլում էին ՕՆՍՈՐԻՆ, ՖԱՐՐՈՒԽԻՆ և ԱՍԱԴԻՆ, մինչդեռ ՖԵՐԴՈՎՍԻՆ, նրանցից մեծագույնը, Սուլթան Մահմուդի ապերախտ վերաբերմունքի պատճառով, անջնջելի խարան է թողել այդ թագավորի անվան վրա: Ինչպես դա գրել է Ջամին դարեր հետո.

*Անցավ փառքը Մահմուդի, ու աշխարհում չմնաց,
Թե ոչ մի հուշ, «Ֆերդովսու արժեքը նա չիմացավ»:*

Անցնելով այս հսկաներից, այս շրջանում պիտի ներփակել նաև ՄԱՆՈՒՉԵՀՐԻԵ ԴԱՄՂԱՆՈՒՆ, որը իր բանաստեղծական տաղանդով չի զիջում ոչ Օնսորուն և ոչ Ֆարրոխուն, առաջին պարսիկ բանաստեղծուհուն, ՌԱԲԵԻՆ, ՓԵՆԴԱԲԵ, ՌԵՅՈՒՆ և ՔԱՍԱԻ ՄԱՐՎԱՋՈՒՆ: Նույնպես չի կարելի չհիշել մեծ գիտնական ԱԲՈՒ ԱԼԻ

ՄԻՆԱՅԻՆ, որի բազմաթիվ քառյակները վերագրվում են Օմար Խայյամին, բայց որոնցից մի քանիսը դեռ մնացել են նրա սեփական անվան տակ:

ՕՆՍՈՐԻ

Չնայած Օնսորին Սուլթան Մահմուդի արքունիքում մեծագույն դիրքն ուներ և համարվում էր իր օրվա վարպետ-բանաստեղծը, բայց քանի որ նա մեծ մասամբ գովաբանական բանաստեղծություններ է գրել, հնարավոր չի եղել նրանից գտնել կտորներ, որոնք հետաքրքիր լինեին հայ ընթերցողի համար:

Օնսորու կյանքի մասին շատ քիչ տեղեկություններ կան: Նույնիսկ նրա մահվան թվականը 1040-ի և 1050-ի մեջ տատանվում է: Օնսորու մասին գրելիս, Դովլաթշահը հետևյալն է գրում նրա մասին⁴.

«Նրա արժանիքները և տաղանդը ավելի պայծառ են, քան արեգակը: Նա Սուլթան Մահմուդի ժամանակվա բանաստեղծների գլուխն էր, և երգելուց բացի, այլ շատ առավելություններ ուներ, այնպես որ ոմանք նրան «իմաստուն» են կոչում (Հաքիմ): Ասում են, որ 400 բանաստեղծ ծառայում էին Սուլթան Մահմուդին և որ նրանց գլխավորը և վարպետը Օնսորին էր, որին աշակերտում էին բոլոր մյուսները: Սուլթանի պալատում նա միաժամանակ բանաստեղծի և ընտրյալ արքունականի դիրք էր վայելում և անդադար գովաբանում էր իր քերթվածներում Սուլթանի քաջությունն ու պատերազմները»:

Օնսորուց դժվարանում ենք որևէ օրինակներ բերել, քանի որ նրա բանաստեղծությունների մեծամասնությունը ՂԱՄԻԴԱՆԵՐ են: Նրա մի դասիդայից է, որը «Հարց ու պատասխանի»-ի ձևով է գրված, և այս երկտողով թարգմանել ենք.

Երեկ գիշեր գեղեցկուհուն հարցրի.

گفتمش جز شبت نشاید دید

«Ինձ գայիս ես այցի միայն գիշերով»:

گفت پیدا بشب بود مهتاب

Պատասխանեց մի ժպտով կանացի.

«Միթե լուսնին դու տեսել ես ցերեկով»:

Ասում են, որ Սուլթան Մահմուդը մի գինեխումի ժամանակ հրամայում է, որ իր սիրած ստրուկ ԱՅԱԶԻ գանգուրները կտրեն: Մյուս առավոտյան Սուլթանը անցյալ գիշերվա գինարբուքից հոգնած՝ իր արածի վրա գղջաց. այնպիսի կատաղի տրամադրության մեջ էր, որ ոչ ոք չէր համարձակվում նրան մոտենալ: Պատում են, որ Օնսորին հետևյալ քառյակով նրան հանգստացրել և տրամադրությունը փոխել է:

Ինչ հոգ թե որ մազն են կտրել քո կուռքի,

کی عیب سر زلف بت از کاستن است

Ինչի՞նչ է պետք լացը հիմա ու գղջում,

چه جای بغم نشستن و خاستن است

Պետք է գնալ, ուրախանալ ու խմել,

روز طرب و نشاط و می خواستن است

Նոճու ճյուղերն կտրելով են զարդարում:

کاراستن سرو ز پیراستن است

⁴ Այս հոդվածը թարգմանել ենք ալգերենից, քանի որ պարսկերեն բնագիրը չունի: (E. G. Brown «Litt. Hist. of Persia», երկրորդ հատոր, էջ 120):

Բայց այս քառյակից ավելի գեղեցիկ է մի ուրիշը, որը նույնպես կտրված գանգուրների մասին է և հավանաբար Օնսորին այս մեկը գրել է խեղճ Այազին մխիթարելու համար:

Դեմքը քո պայծառ, գանգուրների կարճ,

Իմ մեջ վառում են հուշերը զարնան,

Մազերդ գիշեր ու դեմքդ զարուն —

Միշտ կարճ է լինում գիշերը զարնան:

ՖԱՐՐՈՍԻ

Ֆարրոխին (մահ. մոտ 1038 թ.), որը նույնպես մեկն էր Սուլթան Մահմուդի արքունիքի գոհարներից, մեզ թողել է «Իմ դիվանը» և նրա բանաստեղծություններին հաճախ կարելի է հանդիպել այսօրվա ժողովածուներում: Ֆարրոխու դասիդաները կարդալիս չի կարելի չհիանալ նրա պատկերների աննախընթաց փարթամությամբ: Նրա դասիդաները կարդալուց թվում է, որ պարսկական մետաքսե փարթամ մի գորգի նայեք, այնքան առատ և խճողված են հարուստ գույներ, իրար հաջորդող պատկերներ և սրամիտ նմանություններ:

Ֆարրոխու կյանքի մասին շատ քիչ տեղեկություններ կան: Դրա փոխարեն «Չահար-Մաղալա»-ում երկար մի անեկդոտ կա Ֆարրոխու մասին, որը հետաքրքիր լույս է ձգում 1000 տարի առաջվա Իրանի կենցաղի վրա: Ստորև այդ անեկդոտը թարգմանված է որոշ հապավումներով, ձեռքի տակ ունենալով Անգլիայում տպագրված «Չահար-Մաղալա»-ի բնագիրը, Միրզա Մոհամմադ Ղազվինիի խմբագրությամբ (1927, Լոնդոն):

Ֆարրոխին սիստանցի էր և որոշ մի ժամանակ ծառայում էր բնիկ մի իշխանագունի (կալվածատիրոջ) մոտ որպես բանաստեղծ և քնարերգակ (քնար նվագող), բայց քիչ հետո չքավականանալով իր ոռճիկով, և լսելով Թուրքման-Սահրայում բնակվող Ամիր Աբու Մոզաֆֆար անվամբ մի իշխանի փառքն ու առատաձեռնությունը, որոշում է այնտեղ իր բախտը փորձել: Հասնելով Ամիրի մայրաքաղաքը, նա լսում է, որ Ամիրը քաղաքից դուրս է գնացել և տափաստանում գրադված է ձիեր խարանելով՝ խարանատեղում (դաղ-գահ): Նրա բացակայությամբ բանաստեղծին ընդունում է նրա գործակալը (քքեադխոդա) Ամիրն Ասադը, որն ինքը բանաստեղծության սիրահար էր: Ֆարրոխին կարդում է իր մի դասիդան, որ հորինել էր ճանապարհին և որը սկսում է.

Ես Սիստանից քարավանով ճամփա ընկա,

با کاروان حله برفتم ز سیستان

Մորումս հյուսած հազարավոր քեհեզներով:

باحله تنیده ز دل یافته ز جان

Բայց թագավորի գործակալը չէր կարողանում հավատալ, որ Սիստանից հասած այս վայրենին, բրդոտ, վատ հագնված, գլխին հսկայական մի փաթոց, կա-

րող է հեղինակը լինել այդ գեղեցիկ բանաստեղծության: Հետևաբար, փորձելու համար Ֆարրոխուն, նա ասում է.

— Ես այժմ գնում եմ Էմիրի մոտ, այնտեղ ուր նա խարանում է իր ձիերին, և կտանեմ քեզ ինձ հետ, քանի որ դա շատ գեղեցիկ մի վայր է.

Կանաչության աշխարհի, կանաչության աշխարհի մեջ դու կտեսնես այնտեղ...

Լեցուն վրաններ և աստղանման լամպարներ, և յուրաքանչյուր վրանից թափվում է քնարի նվազը և ընկերները նստած են իրար շուրջ, խմում են ու ցնծում, մինչդեռ Էմիրի վրանի առաջ հսկա մի խարույկ է վառված, լեռան պես բարձր, ուր խարանում են մտրուկներին (քուռակ): Եվ Էմիրը, գավաթը մի ձեռքում և օղակածայր պարանը (քյամանդ) մյուս ձեռքում, գինի է խմում և նվիրում է իր նծույզներն իր սիրելիներին: Այժմ գրիր մի դասիդա, նկարագրելով այդ տեսարանը, և ես քեզ կտանեմ Էմիրի մոտ:

Եվ այսպիսով Ֆարրոխին գրեց այդ գիշեր իր ամենագեղեցիկ դասիդաներից մեկը, որը սկսվում է այսպես.

Ջարդարվում են երբ մարգերը բեռեզներով գմրուխտե, چون پرند نیلگون بر روی پوشد مرغزار
Ու լեռները յոթը գույնե քող են ձգում արծաթե — پر نیان هفت رنگ اندر سر آرد کوهسار
Հողից մուշկի բույր է բուրում և ուռենին անաղարտ خاک را چون ناف آهو مشک زاید بقیاس
Ջարդարվում է թութակների փետուրներով պճնագարդ: بید را چون پر طوطی برگ روید بیشمار

Այս դասիդան չափազանց գեղեցիկ է և հեռավոր գաղափար տալու համար, թարգմանաբար նրանից մի քանի հատված ենք տալիս:

Բնության կանաչագարդ նկարագրությունից հետո, Ֆարրոխին սկսում է մոտենալ Էմիրի վրաններին.

Ու հնչում են քնարները վրաններում Էմիրի,
Գուսանները գուլքն են երգում գեղեցկուհու Քեշմիրի,
Բաժակների ձայնն է հնչում, թափում գինին մուշկարույր,
Եվ լավում է վրաններից հառաչ, ծիծաղ ու համբույր:

Հետո մոտենալով խարույկներին, ուր խարանում են ձիերին, նա շարունակում է.

Բոցավառված նիզակի պես կրակ է ցայտում մարգերում, بر کشیده آتشی چون مطرد دبیای زرد
Կարծես ոսկի լինի հալած կամ կրքերի մի պոռթկում, گرم چون طبع جوان و زرد چون زرعبار
Խարանելու երկաթը թե՛՛՛՛՛ բոցերի մեջ ցիրուցան — داغها چون شاخهای بسد یاقوت رنگ
Կարծես կոտրած նռան սրտում հատիկ լինի կարկեհան: هر یکی چون نار دانه گشته اندر زیر نار

Այս վերջին մի կտորով էլ նկարագրում է հենց իրեն Էմիրին.

Իշխանը մեր, նծույգ հեծած, ցած է իջնում հրապարակ,
Ձեռքին պարան օղակածայր, ոտքին ոսկե ասպանդակ,

Ու պարանը, զանգուրի պես գեղեցկուհու սիրահար
Ոլորվում է ու խաղում է ու պարում է անդադար:

Երբ Էմիրի գործակալը լսում է այս դասիդան, ապշում է, քանի որ այդպիսի գեղեցիկ մի բանաստեղծություն դեռ չէր լսել իր կյանքում: Նա մի կողմ է դնում բոլոր իր գործերը, Ֆարրոխուն նստեցնում է մի ձիան վրա և արշավում է դեպի Էմիրի վրանները, ուր նրանք հասնում են մայրամուտին: Ամիր Ասադը մտնում է Էմիրի վրանը բացականչելով.

— Ո՛վ տեր, ես քեզ բերել եմ մի բանաստեղծ, որի նմանը ժամանակի աչքը չի տեսել այն օրվանից, երբ մահը քողածածկեց Դադիդու դեմքը:

Էմիրը լսելով այս բառերը, հրամայում է ներս բերեն Ֆարրոխուն, որը խոնարհվում է Էմիրի առաջ և Էմիրը տալիս է նրան իր ձեռքը և բազմեցնում է նրան պատվո բազմոցում, հարցնելով նրա առողջությունը և քաղցր վերաբերմունք ցույց տալիս նրան:

Երբ գինին մի անգամ շրջում է ձեռքից ձեռք, Ֆարրոխին ոտքի է կանգնում և արտասանում է իր դասիդան, որը սկսվում է այսպես.

Ես Սիստանից քարավանով ճամփա ընկա,
Մեղրունս հյուսած հազարավոր բեռեզներով:

Երբ Ֆարրոխին վերջացնում է դասիդան, Էմիրը, որ ինքն էլ բանաստեղծ էր, մնում է ապշած:

— Սպասիր, ով տեր, մինչև մնացորդը դեռ տեսնես,— ասում է նրան Ամիր Ասադը:

Ֆարրոխին լուռ էր, մինչև որ գինին իր կատարյալ ազդեցությունը թողեց Էմիրի վրա: Հետո նա ոտքի կանգնեց և արտասանեց իր երկրորդ դասիդան, Դադ-գահի մասին:

Էմիրը չէր հավատում իր ականջներին և իր հիացմունքի մեջ բացականչում է.

— Ինձ համար բերել են հազար մտրուկ, ճերմակ ճակատով, ճերմակ բաշով և ճերմակ ոտքերով: Բռնիր քանիսին որ կարող ես, և նրանք քոնը կլինեն:

Ֆարրոխին, որի վրա ազդել էր գինին, բացեց իր գլխի փաթոցը, ընկավ երամակի մեջ ու սկսեց քշել ձիերին, բայց նրան չհաջողվեց որևէ մեկին բռնել: Վերջապես տափաստանի մի անկյունում կիսավեր մի պանդոկ երևաց և մտրուկները վազեցին դեպի այդ ավերակը: Ֆարրոխին, որը հոգնած էր, փաթոցը դրեց գլխի տակ և պանդոկի դռան առաջ քնեց: Երբ պանդոկում գտնվող մտրուկներին հաշվեցին, նրանց թիվը 42 էր: Էմիրը եղելությունը տեղեկանալով՝ ծիծաղեց և մյուս օրը մտրուկները նվիրեց Ֆարրոխուն, նրան նույնպես շնորհելով մի վրան, երեք ուղտ, հինգ ստրուկ, գորգեր և այլն:

Սուլթան Մահմուդի օրոք Ֆարրոխու փառքն ու հարստությունը մի աստիճանի էր հասել, որ նրան ամենուրեք հետևում էին քսան արծաթագոտի ծառաներ:

Ֆարրոխու դասիդաները, ինչպես արդեն մի քանի անգամ կրկնել ենք, օժտված են հարուստ և պատկերավոր ոճով, բնության ճոխ նկարագրությամբ և ընդհանրապես երկար և դժվար թարգմանելի են:

Բայց սխալ գաղափար չկազմելու համար նրա մասին, ավելորդ չի լինի ընթերցողին ծանոթացնել նաև նրա պարզ և գեղեցիկ մի բանաստեղծության հետ:

*Ես մի սիրտ ունեմ, գրավ է սիրտ,
Զանազան տեղեր,
Այս սրտի նման չի ստեղծել Աստված
Այլ մի սիրտ ավեր,
Իմ սիրտը մի հատ — ու նրա մեջ կա
Հազար սիրեկան,
Այս մեծ աշխարհում ցույց տուր ինձ մի սիրտ՝
Իմ սրտի նման:
Մնացել եմ ապշած, փոքրիկ մի սրտում
Միթե քանի՞ սեր
Կարող է ապրել, սնվել, մեծանալ
Ու տեղավորվել:
Սերդ անգութ է, բայց չի հասկանում
Սիրտս հյուրընկալ,
Որ լեռ պողպատե չի կարող բոցին
Սիրո դիմանալ:*

Նախքան Ֆերդովսուն հասնելը, պիտի հիշել Ասադուն, Արու Նասր Ահմադ Էրեն Մանսուր Թուսին, որը Ֆերդովսու ուսուցիչը, ընկերը և համաքաղաքացին էր: Ասադին համարվում էր Սուլթան Մահմուդի բանաստեղծների պանթոնի երրորդ գոհարը: Օնսարու և Ֆարրոխու հետ միասին:

Ասադու կյանքի մասին համարյա թե ոչինչ չգիտենք, բացի մի քանի անեկդոտներից, որոնք պատմական հիմքից զուրկ և որպես ժամանակակից կյանքի պատկերացում՝ որևէ հետաքրքրություն չեն ներկայացնում:

Միակ բանաստեղծությունները, որոնք մեզ մնացել են Ասադուց, դա նրա հինգ «վիճաբանական պոեմաներն» են, որոնց նա առաջին անգամ հնարեց և որոնք հետագայում բազմաթիվ ընդօրինակողներ ունեցան: Այդ հինգ «վիճաբանությունները» (մոնազերաթ) կայանում են.

- 1.— Արաբի և պարսիկի միջև
- 2.— Երկնքի և երկրի միջև
- 3.— Նիզակի և աղեղի միջև
- 4.— Գիշերվա և ցերեկվա միջև
- 5.— Մուսուլմանի և գրադաշտականի միջև

Այդ դասիդաները ընդհանրապես հետաքրքիր են, բայց քանի որ մեծամասնաբար պտտում են իսլամի զանազան ծեսերի և արարողությունների շուրջ, նրանց բովանդակությունը չի արդարացնում թարգմանչական աշխատանքը:

Խոսելով հոր մասին, այստեղ ավելորդ չէր լինել հիշել նաև նրա որդու Ալի Էրեն Ահմադ ալ-Ասադիին, որի գրչին է պատկանում պարսկերեն առաջին բառարանը, որի մի օրինակը, հեղինակի ձեռագրով, գտնվում է Վիեննայի թանգարանում և համարվում է պարսկերեն ամենահին ձեռագիր մատյանը, գրված 1055-56 թ. -Ք. հ.: Այդ բառարանը տպագրվել է Եվրոպայում և լեզվաբանական հսկա մի արժեք է ներկայացնում:

Կրտսեր Ասադու գրչին է պատկանում նաև «Գարշասպ-Նամե» արձակ գրվածքը: Կրտսեր Ասադուց բանաստեղծական հատվածներ կան նաև «Գուչինե Ջհանբանու» մեջ: Բայց նրանցից և ոչ մեկը բանաստեղծական մեծ արժեք չեն ներկայացնում:

ՖԵՐԴՈՎՍԻ

Այժմ մենք հասնում ենք իր ժամանակի մեծագույն և թերևս բոլոր ժամանակների մեծ բանաստեղծ Արու Ղասեմ ՖԵՐԴՈՎՍԻ ԹՈՒՍԻՆ:

Ֆերդովսու կյանքը գրելու համար կարելի է մի քանի աղբյուրներից օգտվել:

1 — Ամենաստույգ փաստերը կարելի է գտնել նրա «Ռահնամե»-ի, «Յուսեֆ և Ջոկեյխայի» և այլ բանաստեղծությունների մեջ: Այդ տեղեկությունները շատ քիչ են, բայց պատմական մեծ արժեք են ներկայացնում:

2 — Պարսկերեն գրված երկու ամենահին կենսագրական հատորներից, որոնցից առաջինը Աուֆիի «Հոբաբ-օլ-Ալբաբ»-ն է և մյուսը Արուզիի «Չահար-Մաղալեն»: Այդ տեղեկությունները նույնպես պատմական մեծ արժեք ունեն:

3 — Հետագայում գրված կենսագրական հատորներից, ինչպիսին է Դովլաթշահու «Հուշեր բանաստեղծներից» հատորը, ուր բազմաթիվ մանրամասնություններ կան, որոնց մեծ մասը առասպելներ են, առանց որևէ պատմական հիմքի:

Այն, ինչ կարելի է Ֆերդովսու գրվածքներից նրա կյանքի մասին տեղեկանալ, հետևյալ փաստերն են:

Ֆերդովսին Թուս քաղաքի ԴԵՀԱՆ, փոքր կալվածատերերից էր, որը հանգիստ կյանք էր վարում և հարգված էր բոլորից: Նա ծնվել է 920 թվին -Ք. հ. կամ քիչ ավելի ուշ: Նա երկար ժամանակ ուսումնասիրել է «Թագավորների Գիրքը», որը խմբագրել էր Արու Մանսուր ԱԼ-ՄԱՄՈՒՐԻՆ, օգտվելով հնագույն աղբյուրներից: Այդ ուսումնասիրությունը, ինչպես և ժողովրդական բանահյուսության պրպտումները նրան ստիպում են վերջապես «Թագավորների Գիրքը» չափածոյի վերածել: Նա սկսում է «Շահնամե»-ն գրել 974 թվին -Ք. հ.: 25 տարվա աշխատանքից հետո նա ավարտում է այդ հոյակապ գործը 999 թվին: Բայց հետագայում նա քարեփոխում և լրացնում է «Շահնամե»-ն և նորից դրա վրա աշխատում է մոտ 10 տարի և վերջացնում է այս «երկրորդ հրատարակությունը 1010 թվականից քիչ առաջ և ձուլում է իր գիրքը Սուլթան Մահմուդ Ղազնավուն: Դրանից անմիջապես հետո նա նեղանում է թագավորից և փախչում է Ղազնայից, կարճ մի ժամանակ ապրում է

ԲՈՎԵՅՇԷ իշխանների հովանավորության տակ և վերջապես 90 տարեկան հասակում, 1020 կամ 1025 թվին վերադառնում է իր հայրենի Թուս քաղաքը, ուր մեռնում է և թաղվում է:

Սրանք պատմական փաստերն են Ֆերդովսու կյանքի մասին: Սրանց կարելի է ավելացնել նաև մի քանի մանրամասնություններ «Չահար Մաղալե»-ից, որը պարսկերեն ամենահին և ամենակարևոր կենսագրական աղբյուրն է:

Ըստ այս աղբյուրի, Ֆերդովսին բարօր կյանք էր վարում և մի հատիկ աղջիկ ուներ, որին լավ օժիտ ապահովելու համար էր, որ նա գրեց այդ դյուցազներգությունը: Դյուցազներգությունը ավարտելուց հետո, 999 թվին, Ֆերդովսին Ալի Դեյլամ գեղազրոդին է տալիս նրան մաքրագրել և յոթը հատորի մեջ ամփոփված, իր գեղազրոդի և «արտասանողի» (ռավի) Աբու ԴՈՒԼԱՖԻ հետ ճանապարհ է ընկնում Ղազնա, Սուլթան Մահմուդի արքունիքը:

Ղազնայում այդ դյուցազներգությամբ հետաքրքրվում է Սուլթանի Մեծ վագիրը, Ալ-Մեյմանդին, որը և ներկայացնում է այդ գործը իր տիրոջը: Սուլթան Մահմուդը իր հիացմունքն է արտահայտում և հրամայում է, որ Ֆերդովսուն 20 հազար (ըստ ոմանց 60 հազար) ոսկի դինար վճարեն:

Այլ նախանձոտ վագիրներ այդ ընթացքում Սուլթանի ականջին են հասցնում, որ Ֆերդովսին հերետիկ է, շիա է և Սուլթանը, որը չափազանց մոլեռանդ էր, հրամայում է, որ 20 հազար ոսկի դինարի փոխարեն 20 հազար արծաթ դերհամ նվիրեն Հաքիմ Ֆերդովսուն: Հաքիմ Ֆերդովսին չափազանց հիասթափվում է այդ պարզևից, գնում է բաղնիք և բաղնիքից դուրս գալիս գարեջուր է գնում (ֆոդա) և բաժանում է այդ դրամը բաղնիսպանի և գարեջուր վաճառողի միջև: Բայց իմանալով Սուլթան Մահմուդի կատաղի բնավորությունը, նա գիշերով փախչում է Ղազնայից և թաքնվում է Հարաթում, գրավաճառ Էսմաիլի տունը, ուր նա թաքնված է մնում 6 ամիս, մինչև որ Սուլթանի մունետիկները գնում են Թուս և չգտնելով Ֆերդովսուն, վերադառնում են:

Ֆերդովսին Հարաթից հեռանում է, որոշ մի ժամանակ ապրում է Թարարեստանում, հետո ԲՈՎԵՅՇԷ իշխանների հովանավորության տակ և վերջապես խոր ծերության մեջ վերադառնում է Թուս:

Այս ընթացքում է նույնպես, որ Ֆերդովսին գրում է իր հոչակավոր սատիրը, ուղղված Սուլթան Մահմուդի դեմ:

Տարիներ հետո Սուլթան Մահմուդը զղջում է իր արածի վրա և հրամայում է, որ 60 հազար ոսկի դինար քարձեն ուղտերի վրա և տանեն Ֆերդովսու համար: Բայց երբ ուղտերի քարավանը մտնում էր Թուս, Ֆերդովսու մարմինը դուրս էր տարվում Ռազանի դարպասից, թաղվելու համար նրա սեփական պարտեզում, քաղաքից դուրս:

Այս է ընդհանուր գծերի մեջ այն ամենը, ինչ մենք գիտենք Ֆերդովսու կյանքի մասին:

Նախքան «Չահնամե»-ի մասին խոսելը, այստեղ տեղն է տալ մի հատված Ֆերդովսու հոչակավոր սատիրից, հանգուցյալ հորս՝ Հովսեփ Միրզայանի անգերազանցելի թարգմանությամբ:

*Ով Ղազնավիդ Մահմուդ Շահ
Աշխարհակալ թագակիր,
Թե ոչ որից ահ չունիս՝
Աստվածանից ունեցիր:
Քանզի կային նախքան քեզ
Փաղիշահներ բազմաթիվ,
Թագ ունեին ու հոչակ,
Փառք ունեին և պատիվ:
Քեզնից նոքա բարձր էին
Իրենց դիրքով, բանակով,
Իրենց գանձով, զորությամբ,
Իրենց գահով ու թագով:
Չարին նոքա եթե ոչ
Ինչ ուղիղ էր և բարի
Չգրաղվեցին արժեքով
Պակաս գին ու գումարի:
Արդար եղան նոքա հետ,
Որ տկար էր իրենցից,
Չէին նոքա, եթե ոչ՝
Աստվածապաշտ և անբիծ:
Չձգտեցին աշխարհում
Թե ոչ բարի մի անվան՝
Եվ այդ բարի անունով՝
Դեպի բարի մի վախճան:
Յուրաքանչյուր թագավոր
Որ դրամն ուներ սիրելի
Մարդկանց առաջ իմաստուն
Դարձավ իսպառ նողկալի:
Եվ արդ, որ այս աշխարհի
Դու ես արքան ու տերը,
Կգարմանա թե ինչ են
Այս անվայել խոսքերը:
Բայց դու դեռ չես ճանաչում
Իմ սուր հանձարն երկաայրի
Չես երկնչում նախճիրից
Արյունահեղ իմ սրի:
Դու ինձ անխիղճ, չարամիտ
Եվ անհավատ կոչեցիր,
Ես առյուծ եմ մոնչոդ,
Դու ինձ մաքի՛ կարծեցիր:*

Պարսկական գրականության մեջ սատիրներ, հայիոյական կտորներ, ծաղրեր շատ կան, բայց նրանցից և ոչ մեկը իր գապված կատաղության և կծու ծաղրի մեջ չի գերազանցում Ֆերդուսու այս սատիրը:

Ֆերդուսու «Շահնամ»-ն, որը կազմված է մոտ 60 հազար տունից, թերևս համաշխարհային գրականության մեջ միակն է, որ գրված լինելով մի հատիկ հեղինակի կողմից՝ անմիջապես իր անմրցակից տեղն է գրավել որպես ազգային մի դյուցազներգություն:

Ֆերդուսին իր «Շահնամ»-ն գրելու համար օգտվել է «Խոդաֆինամ» կոչվող առասպելների ժողովածուից: Այդ ժողովածուն սկսվեց կազմվել Մոհամադ մարգարեի ժամանակից, Սասանյան խոսքով Ա-ի օրոք: Սասանյան հաստատության վերջին օրերումն էր, որ այդ ժողովածուն լրացվեց և իր կատարյալ տեսքը ստացավ մի քանի իմաստուն քուրմերի և հատկապես Դեհղան Դանեշվարի կողմից:

Արաբական արշավանքից հետո, Իրանի ազգային վերածնունդի օրերին, «Թագավորների Գիրքը» արդեն մշակված և կոկված տեսքի տակ էր, երբ նրան չափածոյի վերածելու միտքը հղացավ Դադիդին, որը հազար տուն գրելուց հետո, սպանվեց իր սիրած ստրուկի ձեռքով: Դրանից հետո էր, որ մեծ գործը գտավ իր մեծ հանձարին և Ֆերդուսին 25 տարվա մեջ ավարտեց Պարսից գրականության մեծագույն գլուխգործոցը:

Մենք՝ պարսկահայերս, քիչ ի շատն ծանոթ ենք «Շահնամ»-ին: Ֆերդուսու հազարամյակի տոների առթիվ հանգուցյալ հայրս՝ Հ. Միրզայանը թարգմանեց և հրատարակեց մի գրքույկ, որը պարունակում է հատվածներ «Ռոստամ և Սոհրաբ»-ից, «Ռոստամ և Աշքարուս»-ից և «Ռոստամ և Էսֆանդիար»⁵-ից: Այս երեքից առաջինը և երրորդը համարվում են «Շահնամ»-ի ամենաուժեղ, հուզիչ և գեղեցիկ բաժինները:

Այդ գրքույկից բացի, գոյություն ունի նաև Սովետական Հայաստանում կատարված, մի քանի փոքրիկ թարգմանություններ, տպագրված փոքրիկ գրքույկի ձևով: Դրանցից և ոչ մեկը այժմ ձեռքի տակ չունենք, ծանոթացնելու համար ընթերցողներին նրանց մի քանի հատվածների հետ:

Բացի այդ, այստեղ չի կարելի չհիշել երիտասարդ Տեր-Վարդանյանի մի քանի թարգմանած հատվածները, որոնք տարիներ առաջ լույս տեսան «Վերածնունդ»-ում: Դրանք նույնպես շատ հաջող թարգմանություններ էին, բայց դժբախտաբար այդ խոստումնալից երիտասարդը տարիներ է ինչ ընդհատել է այդ աշխատանքը, հավանաբար ուսումնական պատճառներով: Վերջերս նույնպես հրատարակվել է Թիրյաքյանի մի թարգմանական աշխատանքը, որին դժբախտաբար անծանոթ ենք⁶:

⁵ «Շահնամ» (հատվածներ) թարգմանեց Հովսեփ Միրզայանը, տպարան «Մոդերն», Թեհրան, 1934 թ.: (Ն. Մ.)

⁶ Ֆիրդուսի, «Շահնամ», «Ջալ և Ռուդաբե», 1964, «Ռոստամ և Սոհրաբ», 1967, «Հայաստան» հրատարակչություն: (Թարգմ.՝ Սերգեյ Ումառյանի): «Շահնամ» (գրաբար թարգմանությամբ), Մարտիրոս Ջոհրաբյան, 1886, Նոր Ջուղա, «Հոնար վա մարդոմ» ամսագրի համար 169-170 էջեր, 1976: (Լ. Մինասյան):

Պարսիկ ժողովրդի համար «Շահնամ»-ն փառքի, մեծության, սխրանքի, ճշմարտության, վեհանձնության մի հիմն է: Նրա արժեքը պարզ գրական կամ բանաստեղծական չափանիշով չի կարելի գնահատել, մի բան, որ անուժ են համարյա թե բոլոր եվրոպացի արևելագետները:

Մոտ հազար տարի առաջ, քաղաքակիրթ և հոգեպես հասուն մի ազգ, ենթարկվում է արաբական հրոսակների նախճիրին: Այդ աղետը նա, մինչ այդ, իր պատմության մեջ չի տեսել: Մինչ այդ միայն մի անգամ Ալեքսանդր Մակեդոնացին էր ընկճել այդ հպարտ և հզոր ազգի ոգին: Բայց Ալեքսանդր Մակեդոնացին հույն էր, ծագումով բարձր, քաղաքակիրթ, իսկ էությամբ՝ կիսաստված:

Արաբները, որոնք գետնամած էին արել նոր մի հավատքի խանդավառությամբ, ժամանակի հսկա Գողիաթին, բոքիկ էին, մարմնով և մտքով: Պարսիկները ներեցին, նույնիսկ պարսկացրին և աստվածացրին Ալեքսանդրին, իրենց առասպելների և դիցաբանության մեջ, բայց նրանք մինչև այսօր չեն ներել աշխարհակալ Խալիֆա Օմարին, որը նվաճեց Իրանը ի փառս Մոհամադի:

Ահա նման մի հոգեկան ընկճման, պատմական ստորացման ժամանակ է, որ գրվում է «Շահնամ»-ն, Իրանի անցած փառքի և հերոսական անցյալի կոթողը: Հազար տարի անցել է այդ օրվանից, բայց մինչև այսօր պարսիկ փահլևանները, գոտեմարտի ժամանակ, թմբուկի գեղեցիկ ռիթմի տակ, ականջ են դնում իրենց ազգի, իրենց արյան փառահեղ երգին ու լարում են իրենց մկանները: Ռամիկը և քանվորը լսում են դահվախաններում դարվիշի երգը Ռոստամի մասին ու կրակ է վառվում նրանց ստրկացած հոգում: «Շահնամ»-ն Իրանի ոգին է, նրա ավանդական առաքինությունների կոթողը: Այդ պատճառով է, որ արևմուտքի արևելագետներից ոմանք շատ հաճախ չեն կարողանում ըմբռնել այդ դյուցազներգության արժեքը և

Ֆիրդուսի, «Շահնամ»-ից «Երգիծանք» (թարգմ.՝ Միրզայանի), «Անահիտ» հանդես (№№ 5, 6), 1934:

Ֆերդուսի, «Շահնամ», «Բահրամ Գուր և Ազադե» (թարգմ.՝ Ռուբեն Աբրահամյանի), Թեհրան, 1934: Ֆիրդուսի, «Ռոստամի և Ջոհրաբի վերջին մենամարտը» (թարգմ.՝ Սողոմոն Տարոնցիի), «Գրական թերթ», 1934:

Ֆերդուսի, «Ծաղր սուլթան Մահմուդի մասին» (թարգմ.՝ Սողոմոն Տարոնցիի), 218 տող, «Սորհրոդային Հայաստան» թերթ, 1934:

Ֆիրդուսի, «Շահնամ», «Բեժան և Մանիժա», 72 տող (թարգմ.՝ Գևորգ Ասատուրի), «Նորք», Երևան, 1924:

«Շահնամակ Ֆերդուսի դրվագ Արտաշիր Բաբականի» (թարգմ.՝ Հ. Թիրյաքյանի), Նյու Յորք, 1909:

Ֆիրդուսի, Սիավաշ, «Քեյ-խոսրով»-ից հատվածներ, «Շահնամ»-ից ամբողջ վեպ (թարգմ.՝ Սամուել Գյուլգադյանցի), Շուշի, 1835:

Ֆիրդուսի, «Ջոհրակ Բյուրասայի Աժդահակ» (թարգմ.՝ քնագիր պարսկերենից Սամուել Գյուլգադյանցի), Շուշի, 1894:

Ֆիրդուսի, «Ռոստամ և Սոհրաբ» (թարգմ.՝ Սամուել Գյուլգադյանցի), Շուշի, 1893, 150 երես: «Ֆիրդուսի», Երևանի պետական համալսարան, «Ֆիրդուսին Հայոց մասին», 1942 (բառացի հայերեն թարգմանություն):

«Շահնամ»-ի ամբողջական արձակ (թարգմ.՝ Գևորգ Ասատուրյանի, դեռևս անտիպ), Երևան, 2024: (Ն. Մ.)

այդ բանը փնտրում են նրա բանաստեղծական արժանիքների մեջ, որոնք նույնպես անգերազանցելի են, երբ «Շահնամե»-ն ուսումնասիրենք իր բնագրի մեջ:

Այսպես օրինակ, ավելորդ չէր լինի այստեղ բառացի թարգմանությունը տալ մեծ արևելագետ Է. Բրաունի կարծիքի, «Շահնամե»-ի և նրա արժանիքների մասին, եվրոպական հայեցակետով: Է. Բրաունը գրում է⁷.

«Այս վիթխարի դյուցազներգության գրական բարձր արժանիքի վերաբերյալ Արևելյան և Արևմտյան քննադատները համարյա թե միաձայն են և հետևաբար ես մեծ տարակուսանք եմ զգում, խոստովանելով, որ ես երբևիցե չեմ հաջողել այդ խանդավառությանը մասնակից լինել: Բնականաբար համարյա թե անկարելի է վիճել ճաշակից կախված խնդիրների շուրջ, հատկապես գրականության մեջ. և «Շահնամե»-ն արժեքավորելու իմ անկարողությունը մասամբ ծագում է այն պարագայից, որ ես հոգեպես չեմ կարողանում գնահատել որևէ դյուցազներգություն: Բոլորս ունենք նման պակասություններ, հատկապես երաժշտության մեջ, որ մի Վագներ գմայլեցնում է ոմանց և ոմանց անտարբեր է թողնում, կամ նույնիսկ անհանգստացնում է: Բայց դրանով հանդերձ ես չեմ կարող չզգալ, որ «Շահնամե»-ն մի քանի քնորոշ և դրական պակասություններ ունի: Նրա հսկա ծավալը բնականաբար արդյունքն է այն հսկայական նյութի, որը ոչ պակաս՝ Իրանի առասպելական պատմությունն է աշխարհի սկզբից մինչև արարների նվաճումը, 7-րդ դարում Ք. հ.: «Շահնամե»-ի չափաբանական միօրինակությունը գտնում ենք նմանապես բոլոր այլ դյուցազներգությունների մեջ: Բայց, իմ կարծիքով, գործածված նմանությունները նույնպես իզուր կերպով միօրինակ են. Յուրաքանչյուր հերոս նմանում է. «մի կատաղի, կովարար առյուծի». մի «կրոկոդիլոսի», «կատաղած փղի» և նմանօրինակ պատկերներ: Որևէ գրական քերթվածի արտաքին գեղեցկությունը անպայման կորչում է թարգմանության մեջ և «Շահնամե»-ն չի կարելի հաջողությամբ թարգմանել, քանի որ բնագրի հնչեղ վայելչությունը (որը ժխտել չի կարող, ով որ լսած լինի պարսիկ հատուկ արտասանողներին՝ Շահնամե-հաններին) թարգմանության մեջ կորչում է և հիմնական գաղափարների մերկությունը աչքի է զարկում...

...Եթե որևէ ճշմարտություն լինի այս իմ կարծիքների մեջ (որոնք հակամետ և ուղղափառ չեն, ինչպես ես ազատորեն ընդունում եմ), ապա ինչին է «Շահնամե»-ն պարտական իր հսկա և իրականում անգերազանց ժողովրդականությունը, ոչ միայն Իրանում, այլև բոլոր այն երկրներում, ուր ծանոթ են պարսկերենին: Ինչ վերաբերում է Իրանին, ազգային հպարտությունը հանդեպ ազգային մեծությունը փառաբանող այսպիսի մի կոթող — հեռավոր դարերի մեծությունը, որն այժմ, դժբախտաբար երկար ժամանակ է ինչ անկման շրջան է ապրում — բնականաբար ուժեղ ազդակ է ներկայացնում:

...Ինչ վերաբերում է Եվրոպայի արևելագետներին, նրանց հետաքրքրում է՝

1 — Համեմատաբար այսքան հին մի գործի լեզվաբանական երևույթը, որը այնքան հազվագյուտ արաբական բառեր ունի իր մեջ:

2 — Դասական կամ հունական զգացումը, որը աշխատում է փառաբանել Արիական ազգերի հանձարը, սեմիտ ժողովուրդների համեմատությամբ:

⁷ Brown E. G., Litt. Hist. of Persia, երկրորդ հատոր, էջ 142-143:

3 — Այն կարևորությունը, որ ներկայացնում է «Շահնամե»-ն դիցաբանության և ֆոլկլորի տեսակետից:

Եվ այնուհանդերձ, այս բոլոր ասելուց հետո, փաստը մնում է այն, որ իր սեփական ժողովրդի համար (որի կարծիքը այս խնդրում անկասկած ամենահարգին է) Ֆերդուսին իր «Շահնամե»-ի հիման վրա (քանի որ նրա մյուս գրվածները քիչ ծանոթ և ավելի քիչ կարդացված են) առաջին իսկ օրից մինչև այսօր վայելում է անփոփոխ և անմրցակից ժողովրդականություն, որի դեմ ես չեմ հանդգնել ծառայել իմ անձնական կարծիքը»:

Քանի որ ոչ միայն հայ և օտար, այլ նույնիսկ պարսիկ ընթերցող հասարակության մեծամասնությունը ծանոթ չէ «Շահնամե»-ի ամբողջ պատմության, օգտվելով էր. Բրաունի տված ամփոփումից, կաշխատենք ներկայացնել այստեղ այս դյուցազներգության հակիրճ հատակագիծը:

«Շահնամե»-ն ընդունում է նախխլամական իրանյան թագավորների չորս հարստություն միայն, Փիշղադի, Բիյանի, Աշկանի և Սասանի: Այս չորսից առաջին երկուսը կատարելապես առասպելական են և պատկանում են Ավեստայի դիցաբանության և Ինդո-Իրանյան առասպելաբանության: Երրորդը վերաբերում է Արշակունիներին, որը շատ թեթև ձևով է հիշված «Շահնամե»-ում: Իսկ չորրորդը ամբողջովին պատմական է, իր կառուցվածքի մեջ, բայց զարդարված է բազմաթիվ առասպելական դրվագներով:

Փիշղադի հարստության առաջին առասպելական թագավորը Բյումարսն է. Ավեստայի առաջին մարդը, զրադաշտական Ադամը: Նա ապրում է լեռներում, ընտելացնում է դաշտերի վայրի կենդանիներին և 30 տարվա թագավորությունից հետո մեռնում է: Նրան հաջորդում է Հուշանգը, որը պատահաբար գտնում է կրակ գոյացնելու արվեստը և հիմնում է Սեղեի տոնը, ի հիշատակ կրակի (մինչև այսօր էլ այդ տոնը տոնվում է Պարսկաստանում): Նրան հաջորդում է Թահմուրասը, որը պարտության է մատնում դևերին և ոգիներին, բայց նրանց ներում է, պայմանավոր իրեն սովորեցնեն գրել-կարդալու արվեստը: 40 տարի թագավորելուց հետո, նրան հաջորդեց Ջամշիդը, որը Իրանյան լեզենդայի մեծագույն դեմքերից մեկն է:

Ջամշիդի անունը պարսկական առասպելաբանության մեջ տարօրինակ կերպով զուգորդում է Սողոմոն Իմաստունի անվան հետ: Աքեմենիդյան համարյա թե բոլոր կոթողները և ավերակները Իրանում ձանաչված են Ջամշիդի կամ Սողոմոնի անվամբ: Պերսեպոլիսի ավերակները ձանաչված են Թադթե-Ջամշիդ անվամբ (Ջամշիդի գահը), Կյուրոսի դամբարանը՝ Մասջեղե Մադարե Սոլեյման (Սոլեյմանի մոր տաճարը), Մորդաբ դաշտում գտնվող Աքեմենիդյան ավերակների մի մասը ձանաչված է Թախտե Սոլեյման (Սողոմոնի գահը) անվամբ: Այժմ ապացուցվել է, որ Ջամը (-շիդը) լինելով մի տիտղոս միայն, որը ծագում է Ավեստական Khshaeta-ից, որից և մեր հայերենի իշխանը, Բդեաշխը և պարսկերենի (հնդերեն փաղիշահը) Ավեստայի դիցաբանական ԵԻՄԱ-ն է, «Խարտյաշ աստվածը գեղեցիկ գանգուրներով»: «Շահնամե»-ի մեջ Ջամշիդը թագավորում է 700 տարի, ոչ միայն մարդկանց, այլև թռչունների, սողունների, դևերի և պայիկների վրա: Ջամշիդն է, որ հիմքն է դնում պարսկական Նորուզ-ին (ամանորին): Նա իր թագավորության վեր-

ջին օրերին աստվածային պատիվներ է պահանջում իր հպատակներից և հետևաբար սպանվում է Դահակ անվամբ հափշտակիչ-քոնակալի ձեռքով:

Դահակը, կամ ըստ նրա արաբացրած անվան, Ջահհաբը, Ավեստայի օձը, Aji Dahaka (հայերեն Աժդահակն) է, որի ուներին երկու օձեր էին բուսել, որոնց նա պիտի կերակրեր մարդկային ուղեղներով: Դա արիական հեքիաթների «Երեք գլխանի աժդահան» է: Ֆերդուսին Դահակին ներկայացնում է որպես մի արաբի, Ջահհաբ անվամբ, և իր ամբողջ ազգային ատելությունը կենտրոնացնում է նրա վրա, նրան ներկայացնելով որպես հայրասպան, քոնակալ, սատանայի ստրուկ և մարդակեր: Ջահհաբը թագավորում է մոտ 1000 տարի, մինչև որ ժողովուրդը, ղեկավարությամբ դարբին Քավեյի, ապստամբվում է նրա դեմ, «Շահնամե»-ի այս մասը կատարյալ մի պատկերն է բանվոր և չարքաշ դասակարգի ըմբոստության քոնակալների դեմ, առաջնորդությամբ մի հասարակ դարբինի և այդ դարբինի կաշվե գոգնոցը այդ ապստամբ ամբոխի ազգային դրոշն է: Որքան գեղեցիկ և հմայիչ է դառնում այդ առասպելը, երբ մտածում ենք, որ դա մոտ երեք հազար տարվա կյանք ունի և որ մոտ հազար տարի առաջ Ֆերդուսու հանձարը այդքան կրակ և ավյուն է դրել Քավեյի բերնի մեջ:

Վերջապես ապստամբ ժողովուրդը գտնում է «Քեանի սերմից» սերած Ֆերեյդունին, որը հաղթում է Ջոհաքին և նրան կենդանի շղթայում է Դամավանդ լեռան (որպես արիական առասպել դրա զուգընթացը գտնում ենք հունական Պրոմեթեոսի և հայկական Արտավազդի մեջ, Պրոմեթեոսի անունը կապված է կրակին և գայթակղություն է առաջացնում Թիրյաթյանի «Արիահայ բառարան»-ում մեր հանդիպած Arvasta — Պահլավերեն բառը, որը արևի նշանակություն ունի, կապել Արտավազդի հետ):

Ֆերեյդունը 500 տարի թագավորում է և իր կենդանության օրոք իր լայնատարած երկիրը բաժանում է երեք որդիների մեջ, ամենակրտսեր Իրաջին տալով Իրանը (Էրան-Շահը): Նրա երկու մյուս տղաները՝ Սալմը և Թուրը, գտնելով, որ լավագույն մասը Իրաջն է ստացել, սպանում են իրենց կրտսեր եղբորը: Իրաջի մահվանից հետո, նրա կինը ծնում է մի տղա, որին անվանում է Մանուչեհր, որը մեծանալով վրեժ է առնում իր հորեղբայրներից և նրանց կտրված գլուխները ուղարկում է իր պապին՝ Ֆերեյդունին: Դրանից հետո Ֆերեյդունը մեռնում և գահը թողնում է Մանուչեհրին:

Ֆերեյդունի և իր երեք զավակների առասպելը իր զուգընթացը ունի երբայական առասպելաբանության Շեմ, Համ և Հարեթի մեջ: Եվ այս եղբայրասպան կոիվներից է ծագում Թուրանցիների կամ Թուրքերի և Իրանցիների երկարատև արյունահեղ պայքարը:

Այստեղից արդեն Ֆերդուսու դյուցազներգության մեջ սկսում են նոր էլեմենտներ մտնել ժողովրդական ֆոլկլորից, որոնք հիշված չեն Ավեստայում: Այդ դրվագները վերաբերում են Սիստանցի և Ջարոլստանցի ազնվական մի ընտանիքի անդամներին, այն է՝ Նարիմանը, Սամը, Ջալը, Ռոստամը և Սոհրաբը: Սրանցից ամենակարևորը Ռոստամն է, որը դարերի ընթացքում պաշտպան և սպարապետն է

նղել Քիանի թագավորների: Ռոստամի անունը Ավեստայի մեջ չի հիշվում և Փահլավի գրությունների մեջ միայն մեկ կամ երկու անգամ է նա հիշատակված:

Հին պատմաբաններից միմիայն Մովսես Խորենացին է, որ հիշատակում է Ռոստամի անունը և հիշում նրա հերոսամարտերից մի քանիսը:

Ռոստամի մահվամբ վերջանում է «Շահնամե»-ի գլուխ առասպելական շրջանը և սկսում է Սասանյան հարստության պատմությունը: Տարօրինակ է, որ Աշքանիան (Արշակունի) հարստությունը շատ փոքրիկ մի տեղ է գրավում «Շահնամե»-ում: Դրա փոխարեն Ֆերդուսին, որպես միջանկյալ Քիանյան և Սասանյան հարստությունների, գրում է Ալեքսանդր Մեծի պատմությունը, նրան ներկայացնելով որպես Պարսիկ թագավոր: Այդ բանը շատ սրամիտ կերպով է արված, քայց երկար պատմություն է:

Ծանոթանալու համար Ֆերդուսու հարուստ ոճաբանության հետ, խորհուրդ ենք տալիս հայ ընթերցողին կարդալ հանգուցյալ հորս՝ Հովսեփ Միրզայանի 1934 թվին լույս տեսած «Շահնամե» (կտորներ) գիրքը, ուր նա մեծ հմտությամբ թարգմանել է Ռոստամ և Սոհրաբի, Ռոստամ և Աշքարուսի, Ռոստամ և Էսֆանդիարի դրվագներից կտորներ, քայց նրանց դժբախտաբար ժամանակ չի ունեցել ավարտել:

Օգտվելով առիթից ներկայացնում ենք այստեղ Հովսեփ Միրզայանի մի քանի անտիպ հատվածները «Շահնամե»-ից:

ԲԱՇՐԱՄԵ ԳՈՒՌԸ, ՀԱՃՈՅԱՍԵՐ ԵՎ ՈՐՍՈՐԴ ԹԱԳԱՎՈՐԸ ՄԻ ԴԱՇՏՈՒՄ ՏԵՍՆՈՒՄ Է.

*Գյուղի առաջ նա տեսավ
Մի մեկուսի ջրաղաց
Եվ դրա մոտ ցիրուցան
Գյուղի մեծերը նստած:*

یکی آسیا دید در پیش ده
نشسته پراگنده مردان مه
وزان سوی آتش همه دختران
یکی جشنگه ساخته بر کران
ز گل هر یکی بر سرش افسری
نشسته به هر جای رامشگری

*Իսկ մի կողմում բազմաթիվ
Գեղուհիներ գեղջկական,
Առանձնացած՝ մի հանդես
Սարքել էին տոնակալն:*

*Գլխին ամեն մի կույսի
Ծաղիկներից կար մի թագ,
Եվ զանազան կողմերից
Լսվում էր երգ ու նվագ:*

*Բոլոր նրանք լեզվանուշ,
Բոլոր նրանք զանգրազես,*

همه ماه روی و همه جعد موی
همه جامه گوهر مه مشک موی

Բոլոր նրանք մշկարույր,
Բոլոր նրանք լուսներեա:

Աղջիկների այդ փունջից
Որոնք էին մեծարգի,
Խմբի միջից դուրս եկան,
Չքնադազույն՝ չորս հոգի:

Մեկը նրանցից մշկանագ,
Մյուսը նրանցից կաքավիկ,
Մեկը նրանցից նազենի,
Մյուսը նրանցից շուշանիկ:

Մոտ ձեռնացին բոլորն էլ
Օրհներգելով ու խոնարհ,
Փաղիշահին խնաստուն,
Շահինշահին կամարար:

Նա հրամայեց իր ներկա
Ծառաներին արքունի,
Առաջնորդել կանանց
Աղջիկներին գեղանի:

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԽՈՍՐՈՎԸ ԵՎ ՇԻՐԻՆԸ ՀԱՆԴԻՊԵՑԻՆ ԻՐԱՐ

Մինչև Խոսրով մոտեցավ
Նստեց սրտով նա անձով
Ապա ցողվեց երեսին
Նրա աչերից արտասուք:

Իսկ դեմքն երբոր արքայի
Տեսավ, իսկույն բարձրացավ
Եվ ցույց տվեց Փարվիզին
Հասակն այնքան սրտագրավ:

ازان دختران آنک بد نامدار
برون آمدند از میانه چهار
یکی مشک نام و دگر سیسنگ
یکی نام نار و دگر سوسنگ
بر شاه رفتند با دست بند
به رخ چون بهار و به بالا بلند

بدو گفت بهرام کاین هر چهار
به من ده وزین بیش دختر مکار

همی بود تا خسرو آنجا رسید
سرشکش ز مژگان برخ برچکید
چو روی ورا دید برپای خاست
به پرویز بنمود بالای راست

Իր աչքերի նարգիսով
Վարդն այտերի նա լվաց,
Քանի հիվանդ էր Նարգեսն՝
Ու թարմ՝ վարդն իր կիսարաց:

Ասաց նրան «Ով արքա,
Ով զորավոր փառիկան,
Ով դու օրհնյալ ռազմավար
Ով դու առյուծ որոտան,

«Որտեղ արդյոք գնացին
Բոլոր մեր սերն ու խոստում,
Որտեղ արդյոք չքացան
Բոլոր մեր ուխտն ու երդում»:

ՇԻՐԻՆԸ ԽՈՍՐՈՎԻ ԴԻԱԿԻ ՄՈՏ

Ու իր երեսը կպցրեց
Նա Խոսրովի երեսին,
Բոլոր իրենց սիրազեղ
Խոսքերն հիշեց նա նախկին:

* * *

Դրեց մի թույն մահացու
Շրթունքներին իր սիրած,
Այսպես անուշ իր կյանքի
Փոշին հանձնեց նա քամուն:

**ԲԱՀՐԱՄ ՉՈՒԲԻՆ ԵՎ ՔՈՒՅՐ ԳԵՐԴԻԵՆ ԳՆՈՒՄ Է
ԽՈՍՐՈՎ ՓԱՐՎԻԶԻ ՄՈՏ**

Տեսավ Խոսրով այդ կեցվածքն
Իրրն նոճի մի ձկուն,
Քայլվածքն իրրև փասխանի,
Երեսն իրրև մի գարուն:

.....
به نرگس گل و ارغوان را بشست
که بیمار بد نرگس و گل درست

.....
که تهما هژیرا سپهبد تنا
خجسته کیا گرد شیروازنا

.....
کجا آن همه بند و پیوندا
کجا آن همه عهد و سوگند ما

* * *

Դեմքով ցերեկ լուսատու
Հերքով խավար մի գիշեր,
Կարծես նրա շրթունքից
Թափվում էին գոհարներ:

* * *

Արքան նրան ուղարկեց
Գիշերանոցն արքունի
Դիրք ու պատվով դարձավ նա
Իշխանուհին ամենի:

Վերջացնելուց առաջ, այստեղ տալիս եմ հանգուցյալ հորս Հ. Միրզայանի վերջին գործը, նրա թարգմանությունը «Ռոստամ և Սոհրաբ» դրվագի, որի սկզբնական մասը նա սկսել և չի վերջացրել: Այս հատվածը նույնպես անտիպ է մնացել մինչև օրս:

* * *

Այժմ լսիր Սոհրաբի
Եվ Ռոստամի առասպել,
Շատ ես լսել հեքիաթներ
Հիննա լսիր այս մեկն էլ:

Տխուր է այդ պատմությունն
Եվ արցունքով շաղախված.
Դառնում է խիստ Ռոստամից
Սիրտը մարդու դյուրագգաց:

Թե գա հանկարծ մի մրրիկ
Որ փշրելով ամեն ինչ,
Խլել ճյուղից ու գետին
Ձգե տհաս մի թուրինջ,

Ես նրա գործն ինչ կոչեմ.
Անագորույն թե բարի,
Սխրանք ասեմ ես դրան,
Թե անվանեմ վատարի:

Թե մահն արդար մի բան է
Անգթությունն ո՞ւմ մնաց.
Արդարագործ մի դեպքից
Ինչո՞ւ այսբան կոծ ու լաց:

Իմանալու զաղտնիքն այս
Ձկա միջոց քեզ համար,
Վարագույրի հետևում
Քնավ չունես ճանապարհ:

Հասնում է մարդ աշխարհում
Իր ցանկության դուռը լոկ,
Սակայն այդ դուռն իր դիմաց
Բաց չի տեսել դեռ ոչ ոք:

Թո անդադար վազելով
Միթե լավ տեղ քեզ կտան,
Երբ հանդերձյալ աշխարհում
Դադար առնես վերջնական:

Եթե երբեք մահն անհագ
Ուզեր մարդկանց խնայել,
Չէին մոռնի հողի տակ
Այսբան ծերուկ ու ջահել:

Թե կրակ վառես ու տեսնես
Մի բան այրեց այդ կրակ,
Էլ ինչ զարմանք թե լինի
Հուրն այրելու ընդունակ:

Նա այրում է, քանի որ
Իր գոյության փառքն է լոկ.
Ինչպես որ հին արմատից
Ծիլ է բուսնում մի նորոգ:

Մահվան շունչն էլ ահավոր
Ինչպես մի բոց համավեր,
Չի խնայում, չի զատում
Ոչ դեռատի և ոչ ծեր:

Երիտասարդն ինչո՞ւ միշտ
Լինի ուրախ ու պայծառ,
Զստամությունը՝ մահվան
Անբացադիկ չէ պատճառ:

.....
.....
اگر تنبیدی براید ز کنج
بخاک افگند نارسیده ترنج
ستمکاره خوانیمش ار دادگر
هنرمند دانیمش ار بی هنر
اگر مرگ دادست بیداد چیست
ز داد این همه بانگ و فریاد چیست
ازین راز جان تو آگاه نیست
بدین پرده اندر ترا راه نیست
همه تا در آرزو رفته فراز
به کس بر نشد این در راز باز
برفتن مگر بهتر آیدش جای
چو آرام یابد به دیگر سرای
دم مرگ چون آتش هولناک
ندارد ز برنا و فوتوت پاک

Մնայու վայր չէ այստեղ
Այլ վայր է սա թողնելու,
Երբ մահն, հեծած ձին բախտի՝
Քեզ գիրկն առնն ահարկու:

Արդար է մահն, իմացիր,
Նա անարդար չէ բնավ.
Ինչո՞ւ այդքան վայնասուն
Թե մահը չէ անիրավ:

Սեպիր մանուկ ու ծերուկ
Մահվան առաջ հավասար
Եթե ուզես որ հավատք՝
Անխախտ մնա քեզ համար:

Սիրտդ եթե հավատքի
Շողով լինի լուսավառ
Որպես հնազանդ մի ստրուկ
Լավ է լռես դու իսպառ:

Թող պաշտամունք և աղոթք
Գործը լինի քո խոնարհ
Այս օրվանից ամբարիտ՝
Վերջին օրվա քո պաշար:

Դու մի փորձիր պրպտել
Աստվածային խորհուրդներ
Թե չես ուզում որ հանկարծ
Դևը դառնա քեզ ընկեր:

Կյանքում այնքան աշխատիր
Որ երբ գնաս աշխարհից
Ճակատագրին Իսլամի
Լինես վերջում մասնակից:

Եվ Սոհրաբի մենամարտ
Այժմ ես քեզ կպատմեմ,
Թե թշնամու նա սուսեր
Ինչպես քաշեց իր հոր դեմ:

درین جای رفتن نه جای درنگ
بر اسپ فنا گر کشد مرگ تنگ
چنان دان که دادست و بیداد نیست
چو داد آمدش جای فریاد نیست
جوانی و پیری به نزدیک مرگ
یکی دان چو اندر بدن نیست برگ
دل از نور ایمان گر آگندهای
ترا خامشی به که تو بندهای

.....

Գրված է 1910 թ. Երևանում

Գրված է 1910 թ. Երևանում

Գրված է 1910 թ. Երևանում

Գրված է 1910 թ. Երևանում

Գրված է 1910 թ. Երևանում

Գրված է 1910 թ. Երևանում

برین کار یزدان ترا راز نیست
اگر جانت با دیو آنباز نیست
به گیتی دران کوش چون بگذری
سرانجام نیکی بر خود بری
کنون رزم سهراب رانم نخست
ازان کین که او با پدر چون بجست

Գրված է 1910 թ. Երևանում

Գրված է 1910 թ. Երևանում

Գրված է 1910 թ. Երևանում

Այստեղ վերջանում է Ռոստամ և Սոհրաբի պատմության նախաբանը, որից հետո Հ. Միրզայանը թարգմանել է առաջին 13 տունը միայն և հասարակական ինչ-որ գործերի հետևանք, որոնց ոչ ոք չի հիշում և սրանց պատճառով աններելի կերպով տուժել է հայ թարգմանական գրականությունը, նա կիսատ է թողել պարսկական դյուցազներգության ամենագեղեցիկ և հուզիչ դրվագներից մեկը:

ՖԱՆՍԻ ԷԴ-ԴԻՆ ԳՈՐԳԱՆԻ

Տալար Էդ-Դին Գորգանին իրենից թողել է միայն մի հատիկ պոեմա, որով և անմահացրել է իր անունը պարսկական գրականության մեջ: Այս պոեման, նախական կարճատև հաջողությունից հետո, դիտմամբ անուշադրության մատնվեց պարսիկ մտավորականության կողմից: Դա մի քանի պատճառներ ուներ, որոնցից գլխավորներն էին Գորգանու ազատամիտ, իսլամական դոգմաները արհամարհող, ժամանակի բարոյական անկումը ցուցադրող բնույթը և այն իրապաշտ ոգին, որ նա մտցրել էր իր տիպարների ներկայացման, նրանց պակասությունների ցուցադրության և սիրային միջադեպերի նկարագրության մեջ: Այդ բոլոր երևույթները հակառակ էին ժամանակի կրոնական ուսուցման և ազնվականության շահերին:

Առաջին անգամ Դր. Հ. Էթեն էր, որ 1872 թվին թարգմանեց և ուսումնասիրեց այդ պոեման, Բոմբեյյան աղճատ մի օրինակի վրայով: Նա «Վիս և Ռամին»-ի բովանդակությունը համեմատության դրեց եվրոպական դյուցազներգություն «Տրիստան և Իզոլդ»-ի հետ և բազմաթիվ զուգահեռներ գտավ այդ երկու սիրավեպերի միջև: Ռ. Յենկերը հատուկ մի ուսումնասիրություն նվիրեց այդ նյութին: «Տրիստանի առասպելը և պարսկական Վիս և Ռամին դյուցազնավեպը» խորագրով և կարծիք հայտնեց, որ այդ երկու սիրավեպերը բխում են միևնույն ակունքից, որ նա անվանեց «Նախա-Տրիստանյան» աղբյուր: Դանիացի հոշակավոր իրանագետ Ա. Քրիստենսենը, իր «Արարք Թագավորաց՝ Իրանի Հնագույն Ավանդությունների մեջ» գրքում, անդրադառնալով այս պոեմային, ժխտում է այն մեծ կարևորությունը, որ տրվում է պոեմայի կենցաղային հանգամանքին, ասելով. «Այս ստեղծագործությունը ունի իր ուրույն բնույթը. դա չի ցուցադրում իրական պատմությունը, կամ այն՝ ինչ մենք պատմություն ենք համարում: Դա կատարելապես մտացածին մի դյուցազներգություն է»: Այդ կարծիքին հիմնորեն դեմ է նույնքան հայտնի իրանագետ Վ. Ֆ. Մինորսկին, որ մանրամասն մի ուսումնասիրություն է նվիրել «Վիս և Ռամին»-ին — «Վիս և Ռամին Պարթևական մի վիպագրություն» խորագրով: Վլադիմիր Մինորսկին կարողանում է ապացուցել, որ «Վիս և Ռամինը» հին պարթևական ավանդություն է, որ ճշտորեն արտացոլում է պարթևական շրջանի արքունական բարքերը: Այդ կարծիքը այժմ հիմնավորված և ապացուցված է պարսիկ բանասերների հետախուզական աշխատանքների շնորհիվ, որոնք հիմնված են հեղինակի հիշատակությունների, լեզվական հատկորոշ տվյալների և կրոնական բնութագրերի վրա: Այդ պարսիկ բանասերներից հատկապես պիտի հիշել Բադի՝ ոգ-Ջաման Ֆորուզանֆարին, և Մոջթաբա Մինովին. վերջինս 1935 թ., Թեհրանում հրատարակեց «Վիս և Ռամին»-ի ստուգարանված բնագիրը:

ԳՈՐԳԱՆԻԻ ԿՅԱՆՔԸ.— Այս հետաքրքրական հեղինակի կյանքից շատ քիչ բան գիտենք: Վերակազմելու համար նրա կյանքի մի քանի շրջանները, պիտի դիմենք պոեմայում գտնվող հիշատակություններին: Ըստ դրանց, Գորգանին ապրել, գրել և մեռել է Սելջուկ Սուլթան Տուղրիլ բեկի օրոք: Ինչպես ցույց է տալիս նրա «ՆԵՍԲԱ»-ն, նա ծնվել է Գորգան նահանգում և կարճ ժամանակ ծառայել է մի ինչ-որ տեղական իշխանի արքունիքում, ուր հաջողություն չի գտել և հեռացել է իր ծննդավայրից, բթամիտ իշխանին նվիրելով կծու մի երգիծանք, որի մեջ առատորեն շոայել է անտպագրելի ածականներ:

Դրանից հետո կարդում ենք, որ նա Սելջուկ Սուլթան Տուղրիլ Բեկի շքախմբի հետ, մեկնել է Սպահան և երբ Սուլթանը շարունակել է իր աշխարհակալությունը դեպի հյուսիս, բանաստեղծը գերադասել է մնալ Սպահանում և ծառայել այդ քաղաքի քաղաքակիրթ նահանգապետին, Արուֆաթի Մոհամմադե Նեշարուրուն: Այստեղ է, որ նա ծանոթանում է «Վիս և Ռամին»-ի պահլավերեն բնագրի կամ դրա պարսկերեն արձակ մի թարգմանության հետ և նահանգապետի հորդորանքով, չափածոյի է վերածում հռչակավոր պոեման, որ իր ամբողջության մեջ պարունակում է 8904 տուն ոտանավոր: Քանի որ ժամանակակից կարևոր դեպքերից «Վիս և Ռամին»-ում հիշատակված է Սպահանի առումը (Հեջրի 434 Ք. հ. 1042 թվին), բայց չի հիշվել Բաղդադի անկումը, որ տեղի է ունեցել Հեջրի 447 (Ք. հ. 1055) թվին, պիտի եզրակացնել, որ պոեման գրվել է այդ երկու թվականների միջև: Նման տվյալների հիման վրա, Գորգանին պիտի մեռած լինի շուրջ Հեջրի 455 (Ք. հ. 1063) թվին, որ և Տուղրիլ Բեկի մահվան թվականն է: Նկատի առնելով, որ պոեմայի վերջում Գորգանին խոսում է «իր երիտասարդ հասակի» մասին, պիտի հետևեցնել, որ նա ծնած պիտի լինի 11-րդ դարի սկզբնական շրջանում:

«ՎԻՍ ԵՎ ՌԱՄԻՆ» ՊՈԵՄԱՆ.— Այս վիպագրության սկզբնագիրը, ըստ Վ. Մի-նորսկու և պարսիկ բանասերների, պիտի գրված լինի Արշակունյաց շրջանում: Դեպքերը տեղի են ունենում մի մեծ կայսրության սահմաններում, որի կենտրոնն էր Մարվ քաղաքը, Միջին Ասիայում (ուր գտնվում էր Արշակունյաց նախնական մայրաքաղաք Նիսան): Պատմության ընթացքից երևում է, որ այդ կայսրության գործությունը դեռ կենտրոնացած չէր մի կետում և զանազան հեռակա նահանգներ դեռ վայելում էին լայն ինքնիշխանություն: Պոեմայի գլխավոր հերոսները ապրում են Մարվում և Մագում (Մարաստան, Համադան). դեպքերի մեծ մասը տեղի է ունենում հյուսիսային Իրանում: Պոեմայի ընթերցմամբ՝ հանդիպում ենք բազմաթիվ երևույթների, որոնք ընդգծում են նախախլամական Իրանի ժողովրդական բարքերը, սովորությունները և ավանդությունները: Ջրադաշտականության մասին հիշատակություններ շատ կան, մինչդեռ մահմեդականության մասին շատ քիչ է խոսվում: Հերոսների մեծամասնությունը պատկանում է ազնվական դասակարգին և այստեղ է, որ Գորգանին, օգտվելով այն հանգամանքից, որ իր հերոսները Արշակունիներ են և պատկանում են Իրանի նախախլամական շրջանին ու կատարյալ ազատություն է տալիս իր գրչին, նկարագրելու համար այդ վերնախավի ծայրահեղ անբարոյականությունը, կեղծիքը, անառակությունը, հեշտասիրությունը և գեղծարարությունը:

Դա իրականում պիտի համարել Սելջուկյան շրջանի արքունական բարքերի «դիմակագրերում»: Գորգանին իր վիպագրության մեջ դուրս է բերել իշխող դասակարգին իր բարքերի կատարյալ անկման մեջ: Պարզ երևում է, որ Գորգանին «ժողովրդի երգիչ» է եղել, որ չէր համակրում ազնվազարմ իշխաններին, բայց չէր համարձակվում ուղղակիորեն նրանց դիմակագրել, այլ այդ արել է «հեթանոս» Արշակունիների անվան տակ: Ինչպես այդ նկատում է Հ. Ա. Օրբելին. «Վիս և Ռամին»-ի մեջ մենք հանդիպում ենք այն արժեքավորման, որ ընդհանրապես տալիս էին «շուկայի մարդիկ» (քաղաքի բնակիչները, արհեստավորները և նորահարուստ առևտրականները) ավատական ամրոցների ազնվազարմ տերերին: Այստեղ տիրապետում է նույն ոգին, ինչ Վարդան Այգեկցու առակների մեջ:

Բարքերի այս հարազատ պատկերացմանը օգնում են երկու ազգականեր. նախ՝ Գորգանու ոճը, որ չնայած մաքուր, սահուն և գեղեցիկ պարսկերեն է, բայց լեցուն է ոսմկաբանություններով, «կոպիտ» բառերով, որոնց գործածությունը նրա շրջանում անթույլատրելի էր գեղարվեստական գրականության մեջ: Բերտեզը այս պոեմայի երգիծանքը և ցինիկ թոնը իրավամբ համեմատում է Բոկասչիոյի «Դեկամերոնի» հետ: Երկրորդ պարագան՝ նրա ստեղծած տիպարներն են, նրա «հերոսները», որոնց մեջ բացակայում է հերոսական կամ ասպետական որևէ դիմագիծ:

Վիպագրության գլխավոր հերոսը, Իշխան Ռամինն է, գեղադեմ, վայելչակազմ, «մրցությունների և խաղերի» մեջ առաջնագույն և կնամոլ: Առաքինությունները կազմում են միայն նրա ոսկեգօծված վերնամաշկը: Իրականում բանաստեղծը ցույց չի տալիս Ռամինի որևէ սխրագործությունը: Ընդհակառակն, Ռամինը ամեն կերպ խուսափում է ռազմադաշտից, նեղն ընկած՝ հիվանդանում է, ընկրկում է վտանգներից, ճարպիկ է միայն պատեր մազցելու և աշտարակներ բարձրանալու մեջ, փախուստի մեջ ձապուկ է և դավաճանության մեջ՝ հաստատակամ: Նա մարմնացում է անհավատարմության, հակապատկերը «ասպետական սիրահարի», թշնամին պլատոնական սիրո և «ցկյանս նվիրման»:

Առաքինությունների պակասի մեջ Ռամինին չի գիշում Վիսը, պոեմայի հերոսուհին: Դավաճանելով իր ամուսնուն, նա դիմում է ամեն խաբեության գոհացնելու համար իր մեղավոր կիրքը, լիորեն օգտվում է ամուսնու թույլ բնավորությունից և միամտությունից և երբեմն խղճալու աստիճան հիմարացնում է նրան: Նա երբևիցե չի զղջում իր դավաճանությունների համար, միայն երբեմն վախենում է իրեն սպառնացող «աշխարհիկ» և «երկնային» պատիժներից:

Խղճահարության աստիճանի եղկելի տիպար է դավաճանված ամուսինը, Մորադ Թագավորը, Ռամինի եղբայրը: Դա նախատիպն է բոլոր «հավերժական» ամուսինների: Այդ ծերացած կոտորակիրը չի նկատում իր քթի տակ կատարվող և բոլորի համար բացահայտ դավաճանությունները և նկատելու դեպքում էլ՝ շատ շուտ է համոզվում իր սխալականության մեջ: Սկզբից մինչև վերջ նա խաղում է թուլամորթ, անվստահ, տխմար և ծիծաղելի ամուսնու դերը:

Մենք այստեղ մի քանի կարճ նմուշներ կտանք այդ պոեմայից, որոնք թերևս կարողանան հեռավոր մի գաղափար տալ Գորգանու արվեստի վերաբերմամբ: Գուցե այս մի քանի հատվածները կարողանան ներկայացնել Գորգանու գրելա-

կերպի իրապաշտությունը, մարդկային խառնվածքի ճշգրիտ պատկերացումը, նրա համակրանքը դեպի ռամիկ արտահայտական ձևերը: Բայց միաժամանակ չպիտի մոռանալ որ «Վիս և Ռամին»-ի մեջ կան նաև չափազանց հուզիչ և գեղեցիկ սիրային հատվածներ, կրակոտ մենախոսություններ, սիրային քնքույշ նամակներ և վերջապես սիրաբանական գողտրիկ տեսարաններ, որոնք հաճախ նկարագրված են վրանբաց և իրապաշտ մանրամասնություններով: Հատկապես թարմ և անկեղծ շնչով են գրված Վիսի թվով տաս նամակները, որոնց մեջ Գորգանին նրբորեն մշակել է 9-րդ և 10-րդ դարերում սկիզբ առած նամակագրական արվեստը: Այս պոեման մի անկյունադարձ հանդիսացավ պարսկական չափածո վիպագրության մեջ, հիմք դնելով սիրային վեպերին և այն ռոմանտիկ ժանրին, որ կատարելագործեց հանձարեղ Նեզամի Գանջավին:

Ահա մի քանի օրինակներ:

Իշխան Ռամինը, բարկացած մի ընկերին ասում է Վիսին.

Կանանց սերը ավանակի պոչի պես է,

Որքան ձգես՝ չի երկարի մի թգաչափ.

Հազար անգամ չափել եմ ես պոչն այդ իշի,

Բայց դե-կանայք ինձ գտել են միշտ սիրախար:

بود مهر زنان همچون دم خر

نگردد آن ز پیمودن فزوتتر

بیمودم دم خر چند گاهی

گرفتم بر هوای دیو راهی

Իշխան Ռամինը դավաճանում է Վիսին և ամուսնանում է մի ուրիշ գեղեցկուհու հետ: Այդ առթիվ նա գրում է Վիսին. «Օհ, չգիտես թե որքան ես երջանիկ եմ կնոջս գրկում»: Վիսը բնականաբար հիվանդանում է և իր մոտ կանչելով դպիր Մուշկինին, հետևյալն է թելադրում նրան գրել. «Դու գիտես, որ մեր մասին ապագա սերունդները առասպելներ կիյունեն և քո անունը կխայտառակվի նրանց մոտ: Դու երդվել էիր խզել քո հարաբերությունները ինձ հետ, դա ճիշտ է: Բայց չէ՛ որ միաժամանակ դու խոստացել էիր հավատարիմ մնալ ինձ: Ապա դա ինչ եղավ»:

Երդում քեզ համար քամի է սահող,

Սերդ՝ գետակի ջուրն է տարափոխ,

Գույնդ՝ փոփոխուն սնդուսի նման,

Ոսկի դրամ ես՝ — ձեռքից ձեռք անցնող:

Երբ Իշխան Ռամինը, իր եղբոր, դավաճանված թագավորի վախից ուզում է հեռանալ Մարվից, Վիսը աշխատում է նրան իր մոտ պահել և կշտամբում է վախկոտության համար: Ռամինը, արդարացնելու համար իր արարքը, հետևյալ կերպով է նրան բացատրում իր «կենդանի մնալու» անհրաժեշտությունը.

Վախենում եմ, որ ինձ մորթեն

Մութ ու խավար մի անկյունում,

Մինչ պետք ունեն ես իմ հոգուն.

Չէ՛ որ սերդ է այնտեղ ապրում:

Ամուսնական վիճաբանություններից մեկի ժամանակ, Թագավորը ծաղրում է Վիսի մորենական տան տաղտուկ կյանքը, և սպառնում է նրան ուղարկել այնտեղ: Վիսը, որ մինչ այդ աշխատում էր թաքցնել այն հաճելի պահերը, որ նա անց է կացրել իր մոր տանը՝ Ռամինի գրկում, զայրանում է և կանացի թեթևամտությամբ քիչ է մնում մատնի ինքն իրեն.

Յուրտ չէ դժոխքը՞, որքան ասում են,

Ո՛չ էլ աստանան տգեղ է այնքան.

Չեսլած գողը գողանում է միշտ,

Բայց զրպարտում են նրան շատ անգամ:

Մի ուրիշ տեղ Վիսը, չդիմանալով իր զառամած ամուսնու զգվանքներին, արհամարհանքով ասում է նրան.

Ծերությունից խելքը քո այծյամի պես խենթացել,

Երիտասարդ տարիներդ չքացել են ու անցել,

Եթե գանգունդ լինեիր խելք կոչվածից մի պտղունց՝

Պիտի խոսքերն այս զառամ մոռանայիր շատ վաղուց:

Յուրահատուկ է նաև Գորգանու կյանքի վերաբերմամբ ունեցած փիլիսոփայությունը, որ գերազանցապես իրատես է, նյութապաշտ, և կարծես նախատիպը լինի հետո եկած բազմաթիվ փիլիսոփա-բանաստեղծների, հատկապես Օմար Խայյամի փիլիսոփայության: Հետևյալ հատվածներից առաջինը ակամա հիշեցնում է «Ինձ-նից հետո ջրհեղեղ» հայտնի արտահայտությունը.

Քանի ապրում ենք՝ լավն է աշխարհը,

Այս կյանքում փնտրիր հաճույքդ ներկա.

Թե որ ես պիտի մեռնեմ ծարավից՝

Աշխարհում կաթիլ անձրև թող չգա:

جهان چندان که داری بیش باید

ولیک از بهر جان خویش باید

چو بسپردم من اندر تشنگی جان

مبادا در جهان یک قطره باران

* * *

Միշտ պնդում ենք, որ խելքը ենք և գիտուն,

Մինչ ապրում ենք կասկածներով անձկալից.

Դեռ չգիտենք, որտեղից էր գալը մեր,

Դեռ չգիտենք, թե ո՞ր կերթանք այստեղից:

* * *

Մինչ զնացածներից, այսօր մոտահոգ, լուր ենք սպասում,

Որքան օտարներ դեռ պիտ սպասեն վաղը մեր լուրին.

* Ըստ Զրադաշտական հասկացության՝ դժոխքը սառցապատ մի տափարակ է:

Մենք հուշ կդառնանք, մինչդեռ պատմում ենք հուշը ուրիշի,
Հեքիաթ կդառնանք, մինչ հեքիաթներ ենք պատմում ուրիշին:

Այս չորս տողն էլ մի նախաբան է, որով սկսվում է Վիսի նամակներից մեկը.

Ես օր ու գիշեր պահակ եմ ճամփիդ,
Հարկահավաք եմ կարծես դժնադեմ,
Մտտովս չի անցնում ոչ մի քարավան,
Որից քո անուշ լուրը չհարցնեմ:

Հետևյալ քիչ ավելի երկար հատվածը նկարագրությունն է Վիսի և Ռամինի սիրաբանական մի տեսարանի: Ռամինը դրսում, տանիքի վրա, ձյունի և անձրևի տակ նստած, ողբում է իր վիճակը և թախանձում է Վիսին թողնել տաքուկ անկողինը և գալ ու միանալ իրեն: Վիսը, որ պառկած է թագավորի կողքին, երկար դիմադրել չի կարողանում իր կրքին, և հարբած թագավորի ձեռքը դնելով իր դայակի ձեռքի մեջ, գաղտնորեն դուրս է գալիս պալատից ու միանում իր սիրելեկին:

Երբ Վիս լսեց պաղատանքը Ռամինի,
Սիրտը եռաց, ինչպես մի հյութ մրգենի:
«Ինչ ճար կանես» հարցրեց իր ծեր դայակից,
«Որ ես հասնեմ սիրելեկանիս սրտակից.
Քուն է արքան, քայց թե հանկարծ արթնանա՝
Նա կպատժի երկուսիս էլ անխնա.
Դու պիտ պառկես և նրան գրկես անպայման՝
Ինչպես գրկի սիրելեկանին՝ սիրելեկանն.
Նրան դարձրու մեջքդ, իսկ դեմքդ՝ պատին.
Զի արթնանայ, նա հարբած է տակավին»:
Հետո վերցրեց Վիսը լամպարն սենյակից,
(Դայակն դարձավ արքայական կողակից):
Տանիքի վրա Վիսն միացավ Ռամինին,
Որ հարբել էր կարծես սիրով մոլեգին:
Զգեց ուսից վերնոցը իր մորթեկար,
Սփռեց ձյունին, ընկավ վրան շնչապատ:
Տակը ձգեց սև աղվեսի մի մորթի
Եվ գրկվեցին երկու մարմին անոթի:
Ինչպես գրկեր լուսնթաղը իր լուսնին,
Ինչպես գրկեր վարդը մի շող լուսածին,
Ինչպես ձուլվեր հարդին բոցը հրալեզ
Այդպես գրկեց Վիսն՝ Ռամինին սիրակեզ:
Նրանց դեմքը բուրաստան էր լուսաշող,
Նրանք ծաղիկ՝ շրջապատը ձյուն ու հող:

چو ویس دلبر این پیغام بشنید
دلش چون شیره بی آتش بجوشید
به دایه گفت چار من تو دانی
مرا از دست موبد چون رهانی
که اوذ خفتهست اگر بیدار گردد
سراسر کار ما دشخوار گردد
.....
ترا با وی بیاید جفت ناچار
بر آیینی که خسپد یار با یار
بدو کن پشت و رو از وی بگردان
که او مستست و باشد مست نادان
.....
بگفت این و چراغ از خانه برداشت
به چاره دایه را با شوی بگذاشت
به پیش دوست شد سرمست و خرم
به بوسه ریش او را ساخت مرهم
بر آهخت از بر سیمینش سنجاب
بگستردش میان آن گل و آب
سیه رو باهی از بالا برافگند
ز تن جامه ز دل آندوه بر کند

Գիշերն ասքին քաշեց թավշե մի սնգույր,
Օղը դարձավ նրանց շնչից մշկաբույր:
Մեզը քաշվեց, մի աստղ փայլեց երկնքում,
Որը եկել, տեղ էր փնտրում խնջույքում:
Քամին տեսավ մարգարիտներն այս երկու,
Երկու գոհար, երկու աստղիկ լուսատու,
Քշեց երկնից ամպերը գորշ և հղի
Ծանրակուտակ կաթիլներով անձրևի:
Նրանք՝ նման կաթ ու զինուն խառնված,
Բեհեզակար երկու դիպակ գետնամած,
Ջերթ լինեին երկու օձեր զալարուն,
Իրար փարված երկու առվակ կարկաշուն:
Օհ, երջանիկ պահ ցնծության անմեկին,
Երբ զգվում են սիրելեկանն ու սիրուհին,
Շուրթը շրթի ու դեմ առ դեմ, մեղալից
Մի մազ անգամ անց չէր կենա նրանց միջից:
Եվ այսպիսով, մինչ այգերաց վարդաշուրթ՝
Բոցավառվեց նրանց սերը անհագուրդ:

گل و نرگس به هم دیدی به نوروز
چنان بودند آن هر دو دل افروز
به سان مشتری پیوسته با ماه
و یا چون دانشی پیوسته با جاه
زمین پر لاله بود از روی ایشان
هوا پر مشک بود از بوی ایشان
برفت ابر و پدید آمد ستاره
همانا شد به بازی شان نظاره
هوا چون آن دو گوهر دید شهوار
ببرد از شرمشان ابر گهربار
دو عاشق در خوشی همراز گشته
به خوشی هر دوان انباز گشته
گهی بودی ز دست ویسه بالین
گهی از دست مهرافزای رامین
تو گفتی شیر و می بودند در هم
و یا بر هم فگنده خز و ملحم
بپیچیده به هم چون مار بر مار
چه خوش باشد که پیچید یار با یار
لب اندر لب نهاده روی بر روی
نگنجیدی میان هر دوان موی
همه شب هر دوان در راز بودند
گهی در راز و گه در ناز بودند
هم از بوسه شکر بسیار خوردند
هم از بازی خوشی بسیار کردند

«Վիս և Ռամինը» չնայած շատ շուտ է կորցրել իր լայն ժողովրդականությունը Իրանում, քայց նրա ազդեցությունը զգալի է Իրանի և հարևան երկրների հետագա վիպերգակների վրա: Նրանից հատկապես ուժեղ է ազդվել Նեզամի Գանջավին, իր «Խոսրով և Շիրին» պոեման գրելիս, ուր ամբողջական հատվածներ են մեջբերված «Վիս և Ռամին»-ից:

12-րդ դարում այս պոեման ժողովրդականացավ Վրաստանում և Սարգիս Տնոզվելին այդ թարգմանեց վրացերենի: Այս վրացական փոփոխակն է, որ թարգմանեց անգլերենի Սըր Օլիվըր Վարդրոփը: Ն. Յ. Մառը այն կարծիքին է, որ Շոթա Ռուսթավելին ծանոթ է եղել այս պոեմային և ոմանք նույնիսկ այն տեսակետն են արտահայտել, որ վրացի դյուցազներգակը իր հոչակավոր պոեման գրել է հատկապես արգելելու համար այս «անբարոյական» սիրավեպի տարածումը վրաց ազնվականության մեջ: Հայ մատենագրության մեջ մենք չենք հանդիպել որևէ երկի, որ կրած լինի «Վիս և Ռամինի» ազդեցությունը և հավանաբար այս պոեման անծա-

նոթ է եղել հայերին, կամ ավելի շատ՝ անհարիր է եղել հայերի բարոյական հասկացողության:

ՄԱՆՈՒՉԵՏՐԻ ԴԱՄՂԱՆԻ

Մանուչեհրին աշակերտն էր ավելի քիչ ճանաչված, բայց իր ժամանակին հայտնի Արոլ-Ֆարաջ Սիստանիի և Ֆերդովսու կրտսեր ժամանակակիցն էր: Մանուչեհրին մահացել է 1041 թվին (432 Հեջրի) և միակ բանը, որ հայտնի է նրա կյանքից, դա նրա կանխահաս տաղանդը և երիտասարդ հասակում մեռնելն է:

Մանուչեհրու ԴԻՎԱՆԸ շատ հազվագյուտ է, չնայած մի անգամ տպագրվել է Պարսկաստանում, շուրջ 1880 թվականին: (2014 թ. Մանուչեհրու դիվանը վերջին անգամ վերանայվել և հրատարակվել է Հաբիբ Յաղմայու միջոցով. — Ն. Մ.):

Մանուչեհրու բանաստեղծությունները օժտված են հազվագյուտ պատկերավորումներով, սրամիտ նմանություններով և հարուստ ոճով: Ոչ նրանից առաջ և ոչ նրանից հետո ոչ ոք չի գերազանցել Մանուչեհրուն նմանությունների մեջ: Հայտնի իր դասիկաների մեջ՝ նմանությունը հետևում է նմանության ստեղծելով պատկերների հարուստ մի օրինակ:

*Գլուխ բարձրացրեց արեգակի
Սկավառակը Դամավանդից
Ինչպես հաներ մի գլուխ արնոտ
Ավազակը իր մութ որջից:*

Կամ՝

*Գլորվում են Մագանդրանից
Անպերը դեպ մարզը կանաչ,
Կարծես լինի խափշիկ մի կին,
Հղի փորը ցցված առաջ:*

برآمد ز کوه ابر مازندران
چو مار شکنجی و ماز اندر آن
بسان یکی زنگی حامله
شکم کرده هنگام زادن گران

Մանուչեհրին մի տասնյակ հոչակավոր դասիկաներ ունի, որոնք կատարյալ են համարվում գեղարվեստական, ինչպես և տեխնիկայի կողմից: Այդ հոչակավոր դասիկաներից մեկն այսպես է սկսվում.

*Ով վրանապան զարկիր գետին վրանը քո,
Քարավանի առաջնորդը արդեն գնաց,*

الا يا خیمگی! خیمه فروهل
که پیشاهنگ بیرون شد ز منزل

.....

*Աղոթելու ժամանակ է, կանգնել են, տես
Արեգակը և լուսինը իրար դիմաց:
Բարձրանում է լուսնի շեղբը, իսկ արևը*

نماز شام نزدیکست و امشب
مه و خورشید را بینم مقابل
ولیکن ماه دارد قصد بالا
فروشد آفتاب از کوه بابل

*Բարեկ լեռան լանջը բռնած՝ իջնում է ցած
Ինչպես արծաթ մի կշեռքի թաթը երկու,
Որից մեկը դատարկ լինի, մյուսը լեցված:*

چنان دو کفه زرین ترازو
که این کفه شود زان کفه مایل

Բայց այդ հայտնի դասիկաներից բացի, Մանուչեհրին ունի նաև փոքրիկ և պարզ հատվածներ, հնչեղ և իմաստալից, ինչպես օրինակ.

*Այս աշխարհը շատ եմ փորձել,
Վատ ու կեղծի պատկերն է ճիշտ:
Եթե հազար անգամ փորձես
Նույնն է նա միշտ, նույնն է նա միշտ:*

Կամ՝

*Սիրտ իմ, իզուր կյանքի համար մի տանջվիր,
Կյանքն ունայն է, հիմարների մի կրկես,
Հացի համար ափռոցի պես մի փովիր
Եվ մի վառվիր փորի համար փուռի պես:*

ای دل چو هست حاصل کار جهان عدم
بر دل منه ز بهر جهان هیچ بار غم
افکنده همچو سفره میاش از برای نان
همچون تنور گرم مشو از پی شکم

Մանուչեհրին մի շատ գեղեցիկ բանաստեղծություն ունի նվիրած «Ուրթի աղջիկներին», որը երկար լինելու պատճառով չենք ուզում ամբողջությամբ տալ: Այդ բանաստեղծությունը այսպես է սկսվում.

*Լուսադեմին պարտիզպանը կիսարուն
Ոտք դրեց իր տնից դուրս ու թաքուն
Գնաց բացեց այգու դուռը, որ տեսնի
Ինչ են անում աղջիկները իր ուրթի
Ու ինչ տեսավ, բոլորն հիվանդ ու հղի
Մի կույս աղջիկ չի մնացել գեղանի:*

دهقان به سحرگاهان کز خانه بیاید
نه هیچ بیارآمد و نه هیچ بیاید
نزدیک رز آید، در رز را بگشاید
تا دختر رز را چه به کارست و چه باید
یک دختر دوشیزه بدو رخ ننماید
الا همه آبستن و الا همه بیمار

*Ասաց. «Ինչ է ձեզ կույսերիդ պատահել,
Ձեր կուսական ո՞վ է դեմքը փայփայել,
Ո՞վ է տունից ձեզ դուրս տարել չարահուշ,
Ո՞վ է քողը դեմքի պատռել ձեր անուշ:
Ձեզ կպատմեն, ո՞վ է այսպես ձեզ խաբել,
Զարմանում եմ այդ արարքից անվայել»:*

گوید که شما دخترکان را چه رسیده‌ست؟
رخسار شما پردگیان را که بدیده‌ست؟
وز خانه شما پردگیان را که کشیده‌ست؟
وین پرده ایزد به شما بر که دریده‌ست؟

Եվ այսպես պարտիզպանը զայրացած որոշում է պատմել հղի կույսերին, պոկում է նրանց ծառից, ձգում է փոքրիկ մի ավազանի մեջ ու այնքան է նրանց կոխտում, որ նրանց «միսը բաժանվում է ոսկորներից» և հետո դրանով չքավականացած, նրանց բանտում է կարասների մեջ ու յոթը կնիքով կնքում:

Անցնում է երեք ամիս.

*Մի օր ելավ ուրախ-զվարթ ու գնաց
Բանտի կնքած դուռը բացեց նա կամաց.
Նայեց բանտին ու բանտվածին ապշահար,
Հազար ճրագ տեսավ բանտում լուսավառ:
Բյուր վարդերի տեսավ մի մարդ մեղմօրոր,
Որ իր կյանքում դեռ չէր տեսել ոչ մի օր:*

یک روز سبک خیزد، شاد و خوش و خندان
پیش آید و بردارد مهر از در و بندان
چون در نگرد باز به زندانی و زندان
صد شمع و چراغ اوفتدش بر لب و دندان

Պարտիզպանը տեսնելով այդ աղջիկներին այդպես այլափոխված, փերիացած, ներում է նրանց ու թրջում է իր շրթերը անմահության այդ աղբյուրում:

Մանուչեհրի Դամղանին «Ֆերդովայան» այս շրջանի վերջին հանձարեղ բանաստեղծն է, չնայած կարելի է դեռ հիշել բազմաթիվ այլ անուններ: Դրանց մեջ հատուկ տեղ են զբաղում ՌԱԲԵՆՆ առաջին պարսիկ բանաստեղծուհին, ՔԱՍԱԻ ՄԱՐՎԱԳԻՆ և ՓԵՆԴԱՐԵ ՌԱԶԻՆ:

Այս երկուսին այստեղ հատկապես հիշատակում ենք, քանի որ Փենդարե Ռեյը կարծում ենք առաջին պարսիկ բանաստեղծն է, որ ժողովրդական բանաստեղծություններ է գրել, գործածելով «Դեյլամի» կոչված բարբառը: Իսկ Քասաի Մարվագին գրել է մի քառյակ, որը թվում է, որ օրինակ է ծառայել Օմար Խայյամին գրելու համար իր հայտնի քառյակներից մեկը:

Փենդարե Ռազիի կյանքի մասին որևէ տեղեկություն չի մնացել, բացի այն, որ նա մահացել է մոտ 1010 թվին: Նրա ժողովրդական բանաստեղծություններին չենք հանդիպել, բայց նա հայտնի մի քառյակ ունի, որը կարդացել ենք «Գուչինե Ջհանբանիի» մեջ:

*Մահից երկու օր չես կարող փախչել.
Մի օր՝ երբ օրհաս է և մի օր՝ երբ չի:
Օրհասի ժամին փախչել չես կարող,
Իսկ երբ օրհաս չի՝ մահը կփախչի:*

از مرگ حذر کردن دو روز روا نیست
روزی که قضا باشد و روزی که قضا نیست
روزی که قضا باشد کوشی نکند سود
روزی که قضا نیست در او مرگ روا نیست

Քասաի Մարվագին 953 թվին Ք. հ. չորեքշաբթի, մարտի 16-ին 50 տարեկան է եղել: Դա միակ բանն է, որ գիտենք: Նա իր օրոք շատ մեծ բանաստեղծ էր համարվում, բայց նրանից շատ քիչ կտորներ են մնացել: Նա խիստ շիա էր, բայց դա չէր խանգարում, որ նա մեծ գովասանքով գրեր Սուլթան Մահմուդի մասին, որը շիաների մեծագույն թշնամին էր կամ նույնիսկ կը երգեր գինին, ինչպես օրինակ այս երկտողի մեջ.

*Մի գավաթ լեցուն ուրթի աղջկա
Արյունը տուր նրան,
Որ մշկաբույր է և կարմրաթշիկ
Ինչպես կարկեհան:*

یک جام خون بجه تا کم فرست از آنک
هم بوی مشک دارد وهم گونه عقیق

Բայց Քասաու ամենահայտնի քառյակը, որին ընդօրինակել է Օմար Խայյամը, հետևյալն է.

*Վարդը պարզն է, նախրված մարդուն
Դրախտի կողմից,
Աչքերը մարդու գեղեցկությունը
Շոյում է նրա.
Ով ծաղկելաճառ, ինչո՞ւ ես փոխում
Ծաղիկը դրամին,
Ինչ ես գնելու դրամով, որ վարդի
Արժեք ունենա:*

گل نعمتی ست هدیه فرستاده از بهشت
مردم کریم تر شود اندر نعیم گل
ای کلفروش، گل چه فروشی برای سیم
وز گل عزیزتر، چه ستانی به سیم گل؟



ՍԵԼՋՈՒԿՆԵՐԻ ՕՐՈՔՑ (1037 ԹՎԻՅ ՄԻՆՉԵՎ ՄԱԼԵՔՇԱԿԻ ՄԱՀԸ, 1092 ԹՎԻՆ ԸՆԴԱՄԵՆԸ 55 ՏԱՐԻ)

Սուլթան Մահմուդի մահվամբ Ղազնավի հարստության ոսկեդարը միանգամից վերջ գտավ և ներքին պատերազմներ սկսվեցին, որոնցից հաղթական դուրս եկավ Մասուդ Ղազնավին: Բայց երեք տարվա թագավորությունից հետո, Սելջուկները պարտության մատնեցին նրան Բալխի մոտ:

Սելջուկները Ղազ թուրքերի մի ճյուղն էին, որոնք Թուրքմենստանից գաղթել էին Թրանսոքսանիա և տարիների ընթացքում այնքան էին ուժեղացել, որ Սուլթան Մահմուդը նրանց գաղթեցրեց իրենց բնակավայրից և բնակեցրեց Նիսայի (Աշխաբադ) և Արիվարդի շրջանում:

1037 թվին էր, որ սելջուկները ծառանալով իրենց նախկին տերերի՝ Ղազնավիների դեմ, Թողրոլի գլխավորությամբ հարձակվեցին Խորասանի վրա և գրավեցին Նեշաբուրը: Թողրոլը շուտով գրավեց Խորասանը և արագորեն սկսեց տարածել իր իշխանության սահմանները և իր մահվան ժամանակ արդեն գրավել էր Պարսկաստանի մեծագույն մասը, ամուսնության էր տվել իր աղջկան Խալիֆային, և նույնիսկ կնության էր պահանջել Խալիֆայի աղջկան:

Թողրոլը, Ալի-Արսալանը և Մալեքշահը 55 տարվա ընթացքում հաջորդեցին միմյանց և նրանց հաջողվեց վերացնել փոքրիկ իշխանների թագավորությունը Իրանից և վերականգնել միացած և հզոր մի պետություն, որի կենտրոնն էր Իրանը: Մալեքշահի օրոք Իրանի կայսրությունը տարածվում էր Չինաստանից մինչև Սուրիայի սահմանները և իսլամական ամենահյուսիսային երկրներից մինչև Արաբիա Սաուդին, Բյուզանդիոնի կայսրերը նրան տուրք էին վճարում:

Ամբողջ այս 55 տարվա ընթացքում այս հսկա կայսրության ղեկը գտնվում էր պատմության ամենախելոք վեզիրներից մեկի, պարսիկ Նեզամ-օլ-Մոլքի ձեռքին: Այնպես որ սելջուկների այս շրջանը (որը չի ընդգրկում միայն Սուլթան Սանջարին) կարող է կոչվել Նեզամ-օլ-Մոլքի կիսադարը:

Այս շրջանին է պատկանում նաև Ասասինների¹⁰ կամ հաշաշիների¹¹ աղանդի ծավալումը Հասան Սաբրաի ղեկավարությամբ, որը մեծ դեր է խաղացել Իրանի

⁹ Սուլթան Սանջարի թագավորությունը այս շրջանին, հետևել ենք Է. Բաունի օրինակին, ինչպես արված են բոլոր մյուս գլուխների բաժանումները: Զուտ պատմական մասի համար մեզ աղբյուր են ծառայել Sir P. Sykes-ի «A. History of Persia»-ն և «Encyclopedia Britannica»-ն ինչպես և Է. Բաունը:

¹⁰ «Assassination», որը անգլերենից թարգմանաբար նշանակում է ահաբեկչություն, հենց այդ ժամանակաշրջանից է կիրառվել անգլերենում: (Ն. Մ.)

¹¹ Հաշաշին (Assassin) հին պարսկերենում նշանակում էր բուսական դեղավաճառներ: (Ն. Մ.)

պատմության մեջ, որպես աշխարհի առաջին և ամենահզոր ահաբեկչական կազմակերպությունը:

Այս շրջանին են պատկանում նմանապես հայտնի բանաստեղծ, ճամփորդ և իմաստուն Նասեր Խոսրովը, Պարսկաստանի չորս մեծագույն քառյակագիրներ Օմար Խայյամը, Բաբա Թահերը, Աբու Սաիդ Աբել-Խեյրը և Շեյխ Աբդոլլահ Անսարին, իրանյան մեծագույն կլասիկներից Անվարին, Նեզամին, Խաղանին, Զահիր Ֆարյաբին:

Արի-Արսալանի, Մալեքշահի և Սանջարի օրոք Իրանը հասավ իր կորցրած փառքի գագաթնակետին, որին հետևեց մոնղոլների աննախընթաց նախճիրը, որը հիմնահատակ կործանեց այդ հսկա կայսրությունը:

Ընթունելու համար, թե որքան մեծ էր Իրանը սելջուկների օրոք, բավական է հիշել մի անեկդոտ: Մալեքշահը իր գործով անցնում էր Թուրքմենստանի Օքսուս գետից և այդ գործը փոխադրող նավաստիներին Նեզամ-օլ-Մոլքը վճարեց Անտիոքի վրա քաշված փոխադրով, որպեսզի նրանք հասկանան, թե որքան մեծ է իրենց արքայի պետության սահմանները: Սուրիայի ծովափին գտնվող Լաթակիա քաղաքում Մալեքշահը իր նժույզը քեց Միջերկրականի ջրերի մեջ: Նա իր արքունականներին կալվածքներ էր նվիրում Սուրիայում և փոքր Ասիայում, մինչդեռ նրա բանակները հասել էին Չինական Թաթարեստանի սահմաններին և մյուս կողմից գրավել էին Կարմիր ծովի ափին գտնվող Ադենը:

Նեզամ-օլ-Մոլքը, այդ հսկա կայսրության կախարդ վեզիրը սպանվեց հաշաշիների ձեռքով Հեջրի 485 թվի Ռամազան 10-ին (1092 Ք. հ. հոկտ. 14-ին) և Մալեքշահը մեռավ դրանից մի ամիս հետո: Իրանը, ներքին պատերազմների կարճ մի շրջանից հետո, հասավ Սուլթան Սանջարին, որի մասին կխոսենք հաջորդ գլխում: Սուլթան Սանջարին բաժանել իր նախորդներից՝ որոշ չափով արվեստական է թվում, բայց մենք չենք ցանկանում շեղվել Էդվարդ Բրաունի որդեգրած բաժանումների ուղեգծից, որը այդ բանը արել է նյութը շատ չխճողելու համար:

Սելջուկյան գրական հարուստ ավանդը սկսում ենք Նասեր Խոսրովով, որը ինչպես այս շրջանի բազմաթիվ ուրիշ հանճարներ, բազմապիսի ընդունակությունների խճողումն էր:

ՆԱՍԵՐԵ-ԽՈՍՐՈՎ

Նասեր Խոսրովը ծնվել է Հեջրի 394 թվականին (1003-4 Ք. հ.) և ինքնակենսագրական բազմաթիվ մանրամասնություններ կարելի է գտնել նրա արձակ «ՍԱՖԱՐ-ՆԱՄԵ»-ի մեջ: Ըստ այդ ինքնակենսագրական տվյալների, Նասեր Խոսրովը Մարվեցի էր և որոշ մի ժամանակ քարտուղարի պաշտոն է վարել Խորասանում: Մոտ 40 տարեկան հասակում, նրա մեջ որոշ միստիկ հակումներ են ծնվում, որոնց պատճառով նա թողնում է գինին, որը սիրում էր խմել և որոշում է ճամփորդել Մաքքա: Նա հրաժարվում է կառավարական պաշտոնից, Մարվից ճանապարհվում է Նիշաբուր, Դամղան և Ղազվինի ճամապարհով հասնում է Թավրիզ: Թավրիզից նա շարունակում է իր ճանապարհը Վանի, Ախլաթի, Բիթլիսի, Արզանի, Հալապի, Տրիպոլիի, Բեյրութի, Սիտոնի, Թիրի, Ակրայի և Հայֆայի վրայով: Երուսաղեմ

և Բեթլեհեմը այցելելուց հետո, նա առջին անգամ ուխտի է գնում Մաքքա: Հատկապես մանրամասն հիշեցինք նրա այցելած քաղաքները, ընթերցողին մի գաղափար տալու համար, թե մոտ 1000 տարի առաջ ինչ քաղաքներ կային Միջին և Մերձավոր Արևելքում, որոնք հիշատակության արժանի են:

Մաքքայից Նասերն Խոսրովը ճամփորդում է Գահիրե, ուր և մնում է մոտ 3 տարի: Նասերն Խոսրովը մի չափազանց գեղեցիկ նկարագրություն է տալիս Գահիրեի, որը Ֆաթիմեդ Խալիֆ ալ-Մոսթանսեր-Բելլահի օրոք իր փառքի և փարթամության զագաթնակետին էր հասել: Այստեղ Նասերն Խոսրովը խանդավառ հետևողն է դառնում ԻՍՄԱԻԼԻ աղանդի, որին նույնպես պատկանում էին Հասան Սաբահի ՀԱՇՎՇԻՆԵՐԸ: Այստեղ նա կարգվում է Իսմայիլիների պրոպագանդիստը Խորասանի համար, նրանց «Ապացույցը» (ՀՈՋԱԹԸ) (նշանակում է կրոնականների առաջնորդը.— Ն. Մ.):

Նասերն Խոսրովը վերադառնում է իր հայրենի Խորասանը, 7 տարվա բացակայությունից հետո:

Նասերն Խոսրովը բացի վերևում հիշած արձակ «ՍԱՖԱԼ-ՆԱՄԵ»-ից, որը բանասիրական մեծ արժեք ունի, թողել է նույնպես մի «Դիվան» (տպագրված Թեհրանում 1864 թվին), «ՌՈՇԵՆԱԻ ՆԱՄԵ»-ն (Լույսերի գիրքը) և «ՍԱԱԴԱԹ ՆԱՄԵ»-ն (Երջանկության գիրքը): Այսօր Նասերն Խոսրովը շատ քիչ է կարդացվում Իրանում և չնայած որ Բրաունը մոտ 28 էջ նվիրել է այս ճամփորդ բանաստեղծ հոգևորականին իր «Litt. Hist. of Persia»-ում և մեծ գովասանքով է խոսում նրա ԴԻՎԱՆԻ մասին, մենք արդարացի պատճառ չենք գտնում ավելի երկարացնելու այս հատվածը, քանի որ Նասերն Խոսրովի էական հետաքրքրությունը ոչ թե բանաստեղծական է, այլ բանասիրական: Նա շատ ավելի մեծ արժեք ունի պատմաբանների, աշխարհագրողների և Իսմայիլի աղանդը ուսումնասիրողների համար, քան գրականագետի:

Նասերն Խոսրովի ամենագեղեցիկ կտորներից մեկն է հետևյալը, որը թարգմանել է հանգուցյալ հայրս՝ Հ. Միրզայանը.

*Նասերն Խոսրով մի ճանապարհով անցնում էր մի օր.
Հարբած էր կարծես, բայց ոչ գինիով, և մտամոլոր:
Տեսավ աղբանոց և հանգատարան երես առ երես,
Գոչեց բարձրաձայն և ասաց. «Նայիր, ո՛վ հանդիսատես,
Դիտիր աշխարհի վայելողներին և բարիքն համայն
Այս կողմում ահա բարիքն է թափված վայելողն էլ՝ այն»:*

Մի քիչ Խայրամական հոտ է գալիս նրա հետևյալ երկու հատվածներից, որոնց հանդիպել ենք «Գուլիեն Ջհանբանի»-ում:

*Աստված իմ, վախից չեմ ուզում ասել,
Բայց մեղքը բոլոր բոնն է վերջապես,*

*Ինչո՞ւ ես առեղծել չար Սատանային,
Թե կոշիկիդ մեջ դու ավագ չունես:*

*Ինչո՞ւ ես առեղծել թաթար կույսերի
Շուրթն ու ատամը այդքան գեղեցիկ,
Որ նրանց ձեռքից պարտավոր լինեն
Ճրթունքներ խածել խենթացած մարդիկ:*

* * *

*Աստված իմ, եթե տեսքիդ համաձայն առեղծել ես մարդուն,
Ինչո՞ւ է Ռումին ձերմակ ու Հաբեշն ածուխի պես սև,
Ինչո՞ւ Հնդկը հիշեցնում է մեզ դժոխքի հոգին
Ու Թաթարուհու դեմքը պայծառ է ինչպես մի արև:*

بار خدايا اگر ز روی خدایى گوهر انسان ز آخشیج سرشتى
طلعت رومى و طينت حبشى را آلت خوبى چه بود و علت زشتى
چهره هندو و روى ترك چرا شد همچو دل دوزخى و جان بهشتى

Սաադիական հակասություններ են նմանապես նրա երկու գեղեցիկ հատվածները:

*Նոճու պես ուղիղ մեջքը իմ կտորեց անիվը կյանքի,
Դու մի հավատա նրա խոստումին, թշնամիդ է նա,
Նա դավաճան է խոստումների մեջ, կեղծ ու վատոգի,
Վայրկյան է փնտրում, որ անյուր լինես՝ զարկի՛ անխնա:*

بگویشان که جهان سرو من چو چنبر کرد
به مکر خویش و، خود این است کار، گیهان را
نگر که تان نکنند غره عهد و پیمانش
که او وفا نکنند هیچ عهد و پیمان را

* * *

*Եվ հետո՝
Պետք չէ մեղադրես գմբեթը կապույտ
Որպես պատճառը քո դժբախտության:*

نکوهش مکن چرخ نیلوفرى را
برون کن ز سر باد و خیره سرى را

.....

*Երբ ինքդ լինես չար օրիդ պատճառ՝
Չի օգնի Աստծո բարիքը համայն:*

چو تو خود کنى اختر خویش را بد
مدار از فلک چشم نیک اخترى را

Այս գրույթը վերջացնում ենք երկու փոքրիկ խրատական րեյթերով.

Հոգին բո գիրքն է ու արարքներդ գրվածքն է դրա.
Մի՛ գրիր մի քան, որ հետո ասես «էլ ուշ է հիմա»:

* * *

Մատուղ նույնիսկ չզարկես երբեք օտարի դուան, انگشت مکن رنجه به در کوفتن کس
Որ նա բռունցքով չջարդի մի օր դարպասը քո տան: تا کس نکند رنجه به در کوفتن مشت

ՕՄԱՐ ԽԱՅՅԱՄ

Օմար Խայյամի կյանքի մասին ստույգ տեղեկություններ շատ քիչ կան: Նույնիսկ նրա ծննդյան թվականը ենթադրական է: Գիտենք, որ նա ծնվել է Նեշաբուրում, մի վրանագործի ընտանիքում (որտեղից և նրա ԽԱՅՅԱՄ «Վրանագործ» մականի-րը), որից և կարելի է վստահորեն եզրակացնել, որ Օմարը իր գիտական քարձր ձիրքը պարտական է իր բնատուր տաղանդին և ոչ թե «ազնվական» կրթության:

Փորձել են Խայյամի ծննդյան ճշգրիտ թվականը որոշել ալ-Բեյհադիի հիշատա-կած ժամադետով (հորոսկոպ): Ըստ այդ տվյալների, Խայյամի հնդիկ թարգմանիչ և ստուգաբան Սվամի Գովինդա Թիրթան եզրակացնում է, որ Խայյամը ծնվել է 1048 թ. մայիսի 18-ին: Այդ թվականը վերաբննել և հաստատել է Խորհրդային Մի-ության Գիտական Կաճառի ավագ աշխատակից Շաֆիզ Շարաֆը:

Իր հանրահաշվական շարադրության առաջաբանում Խայյամը հիշատակում է, որ պայմանների ճնշման տակ ստիպված է եղել հեռանալ Նեշաբուրից, ճամփորդել Սամարղանդ, ուր նա վայելում էր ժամանակի մեծ հոգևորական-դատավորի (ՂԱԶԻ) «Անվանի և անզերազանցելի, Դատավորների-Դատավոր Էմամ Աբու Թա-հերի հովանավորությունը»: Աբու Թահերի մահվանից հետո, Խայյամին հովանա-վորում է Բուխարայի Խաղան Շամս ալ-Մոլուքը, իսկ 1074 թվականից հետո՝ նա արդեն պաշտոնապես ծառայության է մտնում Սելջուկ Սուլթան Մալեք Շահի մոտ և իր ժամանակը նվիրում է «Մալեք Շահյան Տոմարացույցի» պատրաստության: Դրա համար Խայյամը ուղևորվում է Սպահան, ուր գտնվում էր Մալեք Շահի արքունիքը: Պատմագիր Էրն ալ-Ասիրը գրում է, որ «467 Հեջրի թվին (Ք. հ. 1074) Նեզամ-օլ-Մոլքը և Սուլթան Մալեք Շահը ի մի հավաքեցին լավագույն աստղագետներին: Այդ աստղագետները զբաղվեցին նոր տոմարացույցի պատրաստությամբ: Սուլթան Մալեք Շահի համար կառուցեցին մի աստղադիտարան, որի կառուցմանը մաս-նակցեցին մեծագույն աստղագետները, Օմար Էրնե Էբրահիմ ալ-Խայյամին, Աբու Մոզաֆֆար ալ-Էսֆազարին, Մամուն Էրնե Նաջիբ ալ-Վասեթին և այլք: Մեծ գու-մարներ ծախսվեցին աստղադիտարանի կառուցման համար»:

Այդ դիտարանը, որը ղեկավարում էր Խայյամը, գտնվում էր Սպահանում: Այդ-տեղ տարված աշխատանքների արդյունքն էր նոր տոմարացույցը (ՋԻՋԷ ՄԱԼԷՔԻ):

1077 թվին Խայյամը ավարտում է «Մեկնաբանությունը ի ներածություն Եվլիի-դոսի» աշխատանքը: Այս շարադրության վերջում Խայյամը հիշատակել է. «Այս ձեր-մակ թղթի խճրճումը ավարտվեց ի քաղաքն... (պակասում է. հավանաբար՝ Սպա-

հան) այնտեղի գրադարանում, 470 թվի Ջամադի ալ-Օուլա ամսի վերջին (1077 թվի դեկտեմբերի կեսին):

Նույն շրջանին է պատկանում Էրնե Սինայի «Քարոզի» (ԽՈԹԲԵ) թարգմանու-թյունը, որը Խայյամը կատարել է արաբերենից պարսկերենի: Այս թարգմանության նախաբանում հիշատակված է. «Այսպես ասաց Տիեզերքում միակ՝ Օմար Էրնե Էբ-րահիմ ան-Նեշաբուրի Խայյամը. Սպահանում մի քանի ընկերներ խնդրեցին ինձ-նից 472 թվին (Ք. հ. 1079) թարգմանել ԽՈԹԲԵՆ, որը հորինել է Շեյխ ար-Բեխ Աբու Ալի Էրնե Սինան: Ես հաճությամբ ընդունեցի այդ առաջարկը»:

1080 թվին Խայյամը, արդարացնելու համար իր հակակղերական դիրքը, Ֆարս նահանգի դատավոր Աբու Նասր ան-Նասավիի նամակին պատասխանում է իր «Հաղագս Գորության և Կրոնական Պարտականությունների» շարադրությամբ: Շուտով նա լրացնում է իր այդ չքմեղականը «Ի պատասխան եռյակ հարցերի» հոդ-վածով, որը, ըստ երևույթին, բավարարում է կղերականներին, և նրանք ժամանա-կավորապես հանգիստ են թողնում Խայյամին:

Նեզամ-օլ Մոլքի և Մալեք Շահի մահվանից հետո (1092 թվին) Խայյամը դեռ շա-րունակում է կապված մնալ Սելջուկյան արքունիքին: Մալեք Շահի մահվամբ աստ-ղադիտարանը զրկվում է տնտեսական նպաստից և քիչ հետո փակվում է: Այդ ժա-մանակ է, որ Խայյամը գրում է իր հայտնի «ՆՈՐՈՒԶ ՆԱՄԵ»-ն: Դա պատմական մի շարադրություն է, որով Խայյամը ցանկանում է հրավիրել Սելջուկ արքայազների ուշադրությունը՝ հին Իրանի ավանդական Ամանորին: Այս գրքում Խայյամը ման-րամասնորեն բացատրում է արեզակնային տոմարացույցի առավելությունները, Նորուզի տոնակատարության հետ կապված հին ծեսերը և նկարագրում է բազմա-թիվ ավանդություններ զանազան իրերի և կենդանիների կապակցությամբ: Այս պատմությունների մեջ, պատմական փաստերի, բժշկական խորհուրդների և լուրջ դիտողությունների կողքին՝ գտնվում են բազմաթիվ առասպելներ, հեքիաթներ և սխալ բացատրություններ: Առասպելների և մտացածին պատմությունների գոյու-թյունը «Նորուզ Նամե»-ում շատերին հանգեցրել է այն եզրակացության, որ այդ աշխատությունը չէր կարող արգասիքը լինել Խայյամի պես լուրջ մի գիտնականի և փիլիսոփայի մտքի: Բայց չպիտի մոռանալ, որ Միջնադարյան գիտական գրակա-նության մեջ այդ երևույթը եզակի չէ, որոշակի մի սահման գոյություն չունի գիտա-կան փաստի և ավանդական ասմունքի մեջ. այդ քանին հաճախ հանդիպում ենք ինչպես արևելյան, նույնպես և արևմտյան միջնադարյան գիտական գրականու-թյան մեջ: Դա հավանաբար արվում էր համեմելու համար գրվածքի չոր բովանդա-կությունը և այդ մարսելի դարձնելու համար օրվա ազնվականների համար, որոնք մեծամասնաբար անզբաղեցնում էին:

Մալեք Շահի հաջորդներ Թորթան Խաթունի (Մալեք Շահի կնոջ), Սուլթան Բար-դոյրուդի և Մոհամմադի թագավորության շրջանները նպաստավոր չեն եղել Խայյամի համար: Նա վերադառնում է Խորասան և հաստատվում է Մարվում:

Ըստ ան-Նեզամի աս-Սամարղանդիի մի պատմության, Օմար Խայյամը, 1114 թվին (Հեջրի 508) գտնվում էր Մարվում, ուր ծառայում էր Սուլթան Մահմուդի և նրա համար աստղաբաշխական և օդերևութաբանական գուշակություններ էր անում...

Սելջուկ վերջին հզոր Սուլթան Սանջարը նույնպես չէր սիրում Խայյամին: Հոգևորական դասը, բնականաբար, հետևում էր ժամանակի պայմաններին. քանի դեռ Խայյամը գտնվում էր այս կամ այն հզոր անձնավորության կամ թագավորի հովանավորության ներքո՝ չէր համարձակվում բացահայտ կերպով մեղադրել նրան հակակղերականության մեջ: Բայց հենց որ փոխվում էր արքունիքի դիրքը Խայյամի հանդեպ՝ կղերականները քինախնդիր կերպով թափվում էին հրապարակ և սկսում էին հալածել մեծ փիլիսոփային: Խայյամի կյանքի վերջին տարիներում այդ հալածանքները մի աստիճանի էին հասել, որ նա, ինքնարդարացման համար, ստիպված է լինում ուխտի գնալ Մեքքե: Դրա մասին Ջամալ էդ-Դին էրն ալ-Ղեֆթին իր «Գիտնականների Պատմագրության» մեջ գրում է. «Երբ ժամանակակիցները այսպանեցին նրա հավատքը և բացահայտեցին այն գաղտնիքները, որոնց նա թաքցնում էր, նա վախեցավ իր արյան հեղումից և սանձեց իր լեզուն և գրիչը և ուխտի ուղևորվեց իր սեփական կյանքի վախից և ոչ թե աստվածաբախությունից... Երբ նա հասավ Բաղդադ, նրա մոտ շտապեցին գաղափարակիցները հին գիտության մեջ, բայց նա փակեց իր դուռը նրանց առաջ փականքով մեղանշման... և նա վերադարձավ իր քաղաքը, առավոտ ու գիշեր հաճախելով աղոթքի և երկրպագության վայրերը և թաքցնելով իր գաղտնիքները, որոնք անխուսափելիորեն կհայտնագործվեին մի օր: Նրան հավասարը չկար աստղագիտության և փիլիսոփայության մեջ և այդ մարզում նա օրինակ էր հանդիսանում օտարներին: Օհ, իցն շնորհված լինեք նրան ունակություն՝ խուսափելու մեղանշումներից և գայթակղություններից...»:

* * *

Տարբեր թվականներ են բերված Խայյամի մահվան համար: Այդ տեսակետից ամենավստահելի սկզբնաղբյուրը Նեզամի Արուգի Սամարղանդիի «Չահար Մահալե»-ն է. ուր հեղինակը նրա մահվան թիվը նշանակում է 1131-ը (Հեջրի 526): Չնայած այս թվականը դեռևս վերջնականապես չի ընդունվել բոլոր իրանագետների կողմից, բայց դա ամենից ավելի հավանականն է թվում: 1961 թվին հրատարակված ռուսերեն «Օմար Խայյամի Շարադրությունները» գրքի նախաբանում, որը պատկանում է Բ. Ա. Ռոզենֆելդի և Ա. Պ. Յուշկևիչի պես մեծ հեղինակությունների գրչին, Խայյամի մահվան թվականը, տոմարագիտական վերլուծումների հիման վրա, տրված է 1131 թվի դեկտեմբերի 4-ը, մի քան, որ համապատասխանում է Հեջրի 526 թվի Մոհարրամ ամսի 12-ին: Պարսիկ բանասերներ, տարբեր աղբյուրների դիմելով, այդ թվականը 10 տարի հետ են գցում:

Խայյամի մահվան մասին հետևյալն է գրում ալ-Բեյհադին, պատմելով Խայյամի քրոջ ամուսնու, Մոհամմադ ալ-Բադղադիի բերնից. «Մի օր, նա մաքրում էր ատամները ոսկյա փորիչով և ուշադրությամբ կարդում էր էրեն Սինայի «Հաղազս Բուժման» (Աշ-Շաֆա) գիրքը: Երբ նա հասավ այն բաժնին, ուր խոսվում է միակ և բազում էակների մասին, դրեց ատամփորիչը երկու էջերի միջև և ասաց. «Կանչիր վկաներին, որպեսզի կտակս պատրաստեն»: Հետո նա ոտքի կանգնեց, աղոթեց և դրանից հետո չկերավ և չխմեց: Երբ նա ավարտեց երեկոյան վերջին աղոթքը, խո-

նարիվեց մինչև գետին և դեմքը հողին դարձրած՝ ասաց. «Ո՛վ Տե՛ր, ԴՈՒ ԳԻՏԵՍ, ՈՐ ԵՍ ՔԵԶ ԱՇԽԱՏԵՑԻ ԸԱՆԱԶԵԼ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆՍ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ: ՆԵՐԻՐ ԻՆՁ, ՔԱՆՁԻ ԱՅՆ՝ ԻՆՁ ՔՈ ՄԱՍԻՆ ԳԻՏԵՄ, ԴԱ ԻՄ ՄԻԱԿ ՈՒՂԻՆ Է ԴԵՊԻ ՔԵԶ»:

Ըստ սկզբնաղբյուրների տված տեղեկությունների, Խայյամը երբևիցե հակված չէ եղել ընտանեկան կյանքի և իրենից գավակ չի թողել:

Խայյամը մեռել և թաղվել է Նեշաբուրում և նրա գերեզմանը, որի վրա կառուցվեց հոյակապ մի դամբարան, գտնվում է Էմամ Մահրոխ կոչված մեկի գերեզմանի կողքին, սաղարթախիտ և գեղեցիկ մի պարտեզում:

Նախնագույն հիշատակություններ Խայյամի մասին

Պարսկերեն կենսագրական հնագույն աղբյուրը, «ՉԱՀԱՐ ՄԱՀԱԼԵ»-ն (ՉՈՐՍ ՃԱՌ-Բ) երկու առանձին պատմություններ նվիրել է Օմար Խայյամին, որին նա դասել է անվանի աստղագետների շարքը, առանց որևէ ակնարկ անելու նրա բանաստեղծություններին:

Դրանք հետևյալ երկու պատմություններն են.

Ա. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ (հեքիաթ)

«Հեջրի 506 թվին (1112-13) Խաջե Էմամ Օմար Խայյամին և Խաջե Էմամ Մոգաֆֆար Ասֆարազին իջևանել էին Բալխ քաղաքի ստրկավաճառների թաղում, Ամիր Աբու Ասադի հարկի տակ և ես միացա նրանց ի ծառայություն: Ընկերական այդ հավաքություն լսեցի, որ Ճշմարտության Ապացույց Օմարը ասաց. «Իմ շիրիմը մի տեղ կլինի, որ ամեն գարուն հյուսիսի քամին իմ վրա երկու անգամ ծաղիկ կցանի»: Այդ խոսքը ինձ անկարելի թվաց և գիտեի, թե Օմարի պես մեկը ի գուր չէր հոխորտա: Երբ սուլեյն թվականին (Հեջրի 530, Ք. հ. 1135-36) Նեշաբուր ժամանեցի, չորս տարի էր արդեն, որ այդ մեծ մարդը թաքցրել էր դեմքը փոշու քողի տակ և որը էր մնացել անցողիկ աշխարհը, և քանի որ նա Վարպետի դիրք ուներ իմ հանդեպ, մի ուրբաթ գնացի նրա դամբանին ուխտի և ինձ հետ տարա մեկին, որպես ուղեցույց: Նա ինձ դուրս տարավ Հերեյի գերեզմանատունը և երբ ձախ դարձա՝ տեսա նրա շիրիմը մի պարտեզի պատի տակ և տանձնիններն ու դեղձնինները գլուխ էին պարզել այդ պարտեզից և այնքան ծաղկեկոկոն թերթիկներ էին թափել նրա հողի վրա, որ նրա շիրիմը ծածկվել էր ծաղիկների տակ և ես հիշեցի այն խոսքը, որ Բալխում լսել էի նրա բերնից: Սկսեցի լացել, քանի որ աշխարհիս երեսին և մարդկային այս բնակարանում դեռ չէի տեսել նրա պես մեկին: Թող Բարձրագույն և Օրինյալ Արարիչը ողորմի նրան իր Թոպոթամբ և Շնորհով»:

«Եվ չնայած ես վկա եղա այդ նախագուշակության, որ արել էր Ճշմարտության Ապացույց Օմարը, ես չէի նկատել նրա մեջ որևէ հավատք դեպի աստղագիտական գուշակությունները. ոչ էլ ես տեսել կամ լսել եմ այլ մեծ գիտնականների մասին, որոնք հավատային այդ բանին»:

Բ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

508 թվի ձմրան (Ք. հ. 1114–15) Թագավորը (հավանաբար Սուլթան Մոհամմադ կամ Սուլթան Սանջարը) ուղարկեց իր մանկավիհիկներից մեկին Մարվ, նախարարապետ Սադրոդ Դին Մոհամմադ Էբնե ալ-Մոզաֆֆարի մոտ — Աստուծոյ Ողորմությունը եղիցի նրա վրա —, հրամայելով նրան ասել իսաջն Էմամ Օմարին որ ընտրի բարեպատեհ մի ժամ որսի ելնելու համար, այնպես որ անձրևոտ կամ ձյունոտ եղանակ չլինի: Քանզի իսաջն Էմամ Օմարը գտնվում էր նախարարի մոտ և քնակվում էր նրա հարկի տակ:

Ուրեմն նախարարը պատգամ հղեց և կանչեց նրան և պատմեց եղելությունը: Իսաջնն հեռացավ և երկու օր քննեց այդ խնդիրը և ուշադիր ընտրություն կատարեց, և նա ինքը գնաց և հսկողության տակ առավ Արքայի պատրաստությունները, իր որոշած բարեպատեհ ժամին: Երբ Արքան հեծավ իր ձին և քիչ ճանապարհ էր կտրել, երկինքը ծածկվեց ամպերով, բարձրացավ ուժեղ մի քամի և դրան հետևից ձյուն և մառախուղ: Բոլոր ներկաները սկսեցին ծիծաղել և Արքան ցանկանում էր վերադառնալ. բայց իսաջն Էմամ Օմարը ասաց. «Մի անհանգստացիր, քանզի քիչ հետո կփարատվեն այս ամպերը և հետագա հինգ օրերի ընթացքում կաթիլ իսկ անձրև չի տեղա»: Հետևաբար Թագավորը շարունակեց ճամփան և ամպերը ցրվեցին և հետագա հինգ օրերի ընթացքում կաթիլ իսկ անձրև չտեղաց և ամպ իսկ չերևաց երկնքում:

Բայց նախագուշակությանը աստղերի միջոցով, չնայած ընդունված գիտություն է, չի կարելի է վստահել և ինչ—որ աստղագետները կանխագուշակեն՝ դրա լրումը պիտի թողնեն ճակատագրին»:

Արուզին սրան հաջորդող Պատմության մեջ նորից հիշում է Օմարի անունը, երբ պատմում է, թե ինչպես Մալեք Շահի աստղագետները, ապացուցելու համար իրենց կանխագուշակության ճշմարտությունը, Թագավորից խնդրում են, որ իրենց հայտարարությունները գրի առնելով՝ ուղարկի Խորասան և հարցնի իսաջն Էմամ Օմարի կարծիքը դրանց վերաբերմամբ. դա բավական է լինում, որ Մալեք Շահը համոզվի իր աստղագետների գուշակությունների ճշմարտության մեջ:

Սա իսայլամի միակ ժամանակակից վկայությունն է, ուր խոսվում է նրա մասին միմիայն որպես հոշակավոր մի աստղաբաշխի և բոլորովին չեն հիշվում նրա բանաստեղծությունները:

Սրանից հետո, մոտ 100 տարի, սկզբնաղբյուրները լուռ են Օմար իսայլամի վերաբերյալ: «Չահար Մադալե»-ից հետո առաջին անգամ հանդիպում ենք իսայլամի անվան 1223 թվին գրված «Մերսալ ու Էբադ»-ում, որը պատկանում է Սուֆի գրող Նաջմոդ Դին Ռազվի գրչին: Այս Սուֆի խորհրդապաշտը Օմարին անվանում է «ղժբախտ մի փիլիսոփա, անկրոն և նյութապաշտ» և այդ ապացուցելու համար օրինակ է բերում նրա երկու քառյակները (առաջին հիշատակություն իսայլամի քառյակների), որոնք «ապացուցում են շփոթության և սխալականության ծայրահեղությունը»: Այս մատյանում հետևյալ երկու քառյակներն են հիշված, որոնք պատկա-

նում են այն հազվագյուտ քառյակների թիվին, որոնց պատկանելիությունը իսայլամին անուրանալի է:

*Ժամանակն ուր լինում է գալն ու երթալն ամենի —
Այդ թավալի ոչ սկիզբն ու ոչ վախճանն է հայտնի:
Ոչ որ դեռես աշխարհում մեզ չպատմեց անսխալ,
Թե որտեղից է մեր գալն, և դեպի ուր՝ մեր երթալն:*

*Նա, որ քնության պատկերը գծեց,
Ինչո՞ն է ջնջում դրան ամեն օր.
Եթե լավ է դա, ինչո՞ն կործանեց,
Իսկ եթե վատ է, ո՞վ է մեղավոր:
(Թարգմ.՝ Հ. Միրզայանի)*

Հետագա հիշատակության հանդիպում ենք ալ-Ղեֆթիի «Գիտունների Պատմության» մեջ, որը գրվել է 13-րդ դարու երկրորդ քառորդում: Օմարն այստեղ ներկայացված է որպես հույն փիլիսոփայության հետևորդ, որը հակադրվում է իսլամական փիլիսոփայության: Այստեղ ևս իսայլամը ներկայացված է որպես «բացառիկ գիտուն աստղագիտության և փիլիսոփայության մեջ», բայց չափազանց ազատամիտ մեկը, որը իր լեզուն և գրիչը սանձում էր մի միայն իր կաշվի վախից: Ալ-Ղեֆթին ավելացնում է, որ հետագայում Սուֆիները իսայլամի քերթվածների արտաքին քնույթի մեջ որոշ նմանություններ գտան իրենց վարդապետության հետ և վերլուծում էին այդ քերթվածները իրենց գաղտնի հավաքությունում «մինչդեռ այդ քառյակների ներքին միտքը խայթող օձեր էին Կրոնական Օրենքների համար»: Այս հիշատակությունը վերջանում է Օմարի արաբերեն չորս քերթվածների մեջբերումով, որոնք մասն են կազմում ընդարձակ մի բանաստեղծության:

Աշ-Շահրազուրիի «Նոհգաթուլ Արվահ»-ը նույնպես գրվել է 13-րդ դարում և այդ մատյանում 3 էջ նվիրված է Օմարին: Օմարը այստեղ նկարագրված է որպես Էբնե Սինայի հետևորդ, ջղային, անհյուրընկալ և խստաբարո մարդ: Իսայլամի հիշողությունը այնքան ուժեղ է եղել, որ Սպահանում կարդալով մի գիրք յոթ անգամ, Նեշարուրում նա վերարտադրում է այդ գիրքը բառ առ բառ: Նա ուսումնասիրել էր Ղորանը և տիրապետում էր արաբերենի: Ալ-Շահրազուրին էլ, իր գրքի պարսկերենն քնագրում, երկու օրինակ է բերում իսայլամի քառյակներից, որոնցից մեկն է.

*Պատմում եմ քեզ, որ չիցե մնաս սրտիս անձանթ,
Եվ որ ձանձրույթ չունենաս՝ ահա իմ խոսքն համառոտ.
Սերդ կապված սրտիս հետ ես հողի տակ կտանեմ,
Եվ սիրուդ հետ միատեղ՝ գլուխս հողից կհանեմ:
(Թարգմ.՝ Հ. Միրզայանի)*

Ժամանակագրական կարգով, հետագա մատյանը ուր հիշված է իսայլամը, դա ալ-Ղազվինիի «Ասարուլ Բելադ»-ումն է (Աշխարհի Կոթողները): Այստեղ նմանա-

պես Օմարը հիշվում է որպես «վարպետ ամենայն փիլիսոփայությանց և հատկապես թվաբանագիտության մեջ»:

14-րդ դարու կարևոր աղբյուրներից մեկն է Ռաշիդուդ Դին Ֆազլուլլահի «Ջամի՝ որթ Թաարիխը», որը Մոնղոլների պատմագրությունը և Իրանի արձակագրական կոթողներից մեկն է: Այստեղ է, որ առաջին անգամ հիշվում է Երեք Ընկերների հոշակավոր պատմությունը, որը Օմար Խայյամին վերաբերող ամենահետաքրքիր ավանդությունն է: Պատմությունը հետևյալն է.

«Նեզամուլ Մուլքի¹² և Հասան Սաքրահի¹³ միջև գոյություն ունեցող թշնամության և անվստահության պատճառը նրանումն էր, որ երբ նրանք Օմար Խայյամի հետ միասին հաճախում էին Նեշաբուրի դպրոցներից մեկը, պատանեկան ոգևորությամբ, մտերիմ ընկերության հիմքեր դրեցին, որը սրբագործեցին իրենց սեփական արյամբ և հանդիսավոր երդումով, ըստ որի եթե երբևիցե նրանցից մեկն ու մեկը հասնեն բարձր դիրքի, պաշտպանեն և օգնեն միմյանց:

«Արդ, այնպես եղավ, որ պարագաների քերամբ, որը մանրամասնորեն նկարագրված է «Սելջուկ Հարստության Պատմության» մեջ, Նեզամուլ Մուլքը հասավ նախարարապետի պաշտոնին: Օմար Խայյամը ներկայացավ նրան և հիշեցրեց իրենց պատանեկան շրջանի երդումը: Նեզամուլ Մուլքը, ընդունելով այդ հնամյա երդման առկայությունը, ասաց. «Ես տալիս եմ քեզ Նեշաբուրի և նրա շրջակայքի նահանգապետությունը»: Բայց Օմարը, որը մեծ մարդ էր, և առավել դրան՝ փիլիսոփա և իմաստուն, պատասխանեց. «Ես չեմ ցանկանում կառավարել մի նահանգ կամ քանեցնել իմ հեղինակությունը օտար մարդկանց վրա: Ավելի լավ կլիներ եթե ինձ համար մի թոշակ նշանակեիր»: Հետևաբար Նեզամուլ Մուլքը նշանակեց նրան վճարել տաս հազար դինար Նեշաբուրի գանձարանից, որ պիտի տրվեր նրան ամեն տարի, առանց տուրքի կամ հարկի պակսեցման»:

Պատմությունը շարունակվում է Հասան Սաքրահի այցելությամբ Նեզամուլ Մուլքին: Հասան Սաքրահը (Էսմաիլիների «Լեռների ծերունին», որին վիճակված էր դառնալ այս շրջանի քաղաքական ամենաազդեցիկ դեմքերից մեկը) փառատենչ մեկը լինելով, չի ընդունում Ռեյի կամ Սպահանի նահանգապետությունը, այլ բարձր պաշտոն է պահանջում արքունիքում: Ապա նա չարաշահում է իր դիրքը, աշխատելով գրավել իր բարերարի «Լեռների ծերունին», որին վիճակված բայց ձախողելով իր ծրագիրների մեջ, ստիպված է լինում փախչել Խորասանից և ապավինել Գահիրե, ուր նա ընդունվում է Էսմաիլի աղանդի շարքերը և վերադառնալով Իրան, գրավում է Ալամուլթը և բազմաթիվ այլ ամրացված դոլաններ: Նրա ահաբեկիչների ձեռքով է, որ սպանվում է Նեզամուլ Մուլքը և դրանով վերջ է գտնում Սելջուկյան հարստության ոսկեդարը:

¹² Նեզամուլ Մուլքը Սելջուկ հարստության մեծագույն նախարարապետն էր, որը 50 տարի պաշտոնավարեց և փաստորեն մենակ կառավարեց այդ հսկա կայսրությունը: Նա սպանվեց Էսմաիլի աղանդավորների ձեռքով 1092 թվին:

¹³ Հասան Սաքրահը Էսմաիլի աղանդի գերագույն պետն էր և ղեկավարն էր Արևելքի Միջնադարյան ամենահայտնի ահաբեկչական կազմակերպության: Արևմուտքին նա ծանոթ է «Լեռների ծերունի» անվան տակ և նրա ահաբեկիչ հետևորդները ճանաչված են «հաշաշի» կամ լատինացված (assassin) անվամբ:

Պատմական ճշմարտությունից հեռու է այս առասպելը, քանի որ գործող անձանց ծննդյան թվականները չեն համապատասխանում իրար: Բայց դրա մեջ կա նաև իրականության մի սաղմ, որը դեռ լիովին չի ուսումնասիրվել: Դա այն է, որ Օմար Խայյամը և Հասան Սաքրահը համարյա թե հասակակից են եղել և հավանական է, որ դասընկերներ եղած լինեն մի այլ նախարարի՝ Անուշիրվան Էրնե Խալիդի հետ, որը ՀԱՇԱՇՆԵՐԻ մասին գրած իր գրքում, հիշատակում է իր դասընկերներից մեկին, որը «եկել էր Ռեյից, և ճամփորդելուց հետո ամբողջ աշխարհում, դարձել է Էսմաիլիների ղեավար»: Չափազանց հավանական է, որ դա Հասան Սաքրահը լինի:

Հանդիպում ենք մի ուրիշ հետաքրքիր պատմության «Թարիխե Ալֆի» (Պատմագրություն Հազարյակի) մեջ, որի հիման վրա կարելի է եզրակացնել, որ Խայյամը հավատում էր հոգեփոխության (մի բան, որ անդադար կրկնվում է նրա քանաստեղծությունների մեջ տարբեր ձևերի տակ):

«Բազմաթիվ հիշատակություններից հայտնվում է, որ նա (Խայյամը) հետևորդն էր հոգեփոխության վարդապետության: Պատմում են, որ Նեշաբուրում կար հին մի Դպրոց, որի նորոգության համար էշերի վրա բարձած աղյուսներ էին քերում: Մի օր, երբ Իմաստունը (ՀԱՔԻՄԼ) քայլում էր մի խումբ ուսանողների հետ, ասանակներից մեկը ոչ մի պայմանով չէր համաձայնվում մտնել Դպրոց: Երբ Օմարը այդ տեսավ, ժպտաց, մոտեցավ ավանակին և հանապաղատից հետևյալ քառյակը արտասանեց.

*Ով ոգի, գնացած և վերադարձած և դեռ անձարակ,
Ջնջված անունդ չի պարունակում և ոչ մի տետրակ,
Հետույքիդ բուսել ու պոչ է դարձել մորուսդ ահա,
Իսկ եղունգներդ միացել իրար, դարձել են սմբակ:*

Ապա ավանակը մտավ դպրոց և ուսանողները Օմարից հարցրին դրա պատճառը: Նա պատասխանեց. «Այն ոգին, որ այժմ մտել է այս ավանակի կաղապարի մեջ, նախապես բնակվում էր այս դպրոցի ուսուցիչներից մեկի մարմնում, հետևաբար նա մերժում էր մտնել դպրոց, բայց երբ իմացավ, որ գործակիցները ճանաչել են իրեն, ստիպված եղավ համաձայնվել և ներս գնալ»:

Այս փոքրիկ անեկդոտը գեղեցիկ կերպով արտահայտում է Օմարի տածած արհամարհանքը իր ժամանակի իմաստականների վերաբերմամբ:

Խայյամի գիտական աշխատությունները

Մենք այստեղ երկար կանգ առնել չենք կարող Խայյամի գիտական աշխատանքների վրա: Բայց քանի որ դրանց թիվը և բովանդակությունը անձանոթ է հայ ընթերցողների մեծամասնության, օգտվելով Բ. Ա. Ռոզենֆելդի և Ա. Պ. Յուլկևիչի վերում հիշած ուսումնասիրությունից, այստեղ տալիս ենք այդ աշխատությունների կրճատ ցուցակը, առանց մանրամասնանալու նրանց բովանդակության վրա: Այդ

գիտական-փիլիսոփայական երկերի լրիվ թիվը շուրջ 15-ի է հասնում: Դրանցից կարևոր տեղ են գրառում.

1. Շարադրություն հաղագս հանրահաշվական և ալ՝ մոդարալա խնդիրների ապացուցման (արաբերեն):
2. Բացատրություններ հաղագս դժվարությանց Եվկլիդյան գրքի (երկրաչափական երկ, արաբերեն):
3. Կշեռք իմաստության (միզան ալ հեքամ) ֆիզիկայի մասին:
4. Շարադրություն հաղագս Գոյության և Պարտականությունների (փիլիսոփայական, արաբերեն):
5. Պատասխան եռյակ հարցերի (փիլիսոփայական, արաբերեն):
6. Իմացականության լույսը Ընդհանուր գիտության վերաբերմամբ (փիլիսոփայական, արաբերեն):
7. Շարադրություն հաղագս Գոյության (փիլիսոփայական, արաբերեն):
8. Մալեքշահյան աստղագիտական ցուցատախտակներ (Զիջե Մալեքշահի):
9. Շարադրություն հաղագս գոյության ընդհանրության (փիլիսոփայական, արաբերեն):
10. Նորուզ-Նամե, պատմական շարադրություն, պարսկերեն:

Բացի վերի տասը աշխատանքներից, գոյություն ունի նաև հանրահաշվական անվերնագիր մի ձեռագիր և չորս տարբեր թվաբանագիտական, երաժշտական, աշխարհագրական և ֆիզիկական շարադրություններ, որոնք հիշվել են սկզբնաղբյուրներում, բայց որոնց ձեռագրերը չեն գտնվել դեռևս:

Այս արձակ երկերից մեզ հետաքրքրում է միայն խայրամի «ՆՈՐՈՒԶ ՆԱՄԵ»-ն, «Գիրք Ամանորի», որը պատմագրական, բժշկական, ազդագրական և առասպելաբանական գիտելիքների մի ժողովածու է, գրված գեղեցիկ և հղկված պարսկերենով: Այս գրքից թարգմանաբար տալիս ենք երկու հատված¹⁴, առաջինը նվիրված գինուն և երկրորդը «գեղեցիկներին»: Սրանով ավելի ևս պարզվում է խայրամի քառյակների մեջ արտահայտված գինու, հաճույքի և գեղեցկության վերաբերմամբ արված հիշատակությունները, որոնց մեծ մասամբ պիտի ընդունել բառացիորեն: Այս արձակ մտքերը շեշտում են այն հանգամանքը, որ խայրամը «գինու» կամ «գեղեցկուհու» մասին գրելիս՝ հասկացել է պարզապես ըմպելի գինին և շոշափելի գեղեցկությունը, առանց խորանալու որևէ խորհրդապաշտական նկատառումների մեջ:

1. «Խոսք գինու օգուտների մասին»

«...Խորաթափանց մարդիկ գինին անվանում են խիզախ մարդու փորձաբար: Այլք՝ այդ անվանում են իմացականության քննադատ, ոմանք — գիտության չափանիշ, ոմանք — կշիռ տաղանդի: Մեծ մարդիկ գինին կոչում են ցավերի ամոքիչ, իսկ ոմանք — ապաքինություն վշտերի: Ով որ խմի մաքուր գինուց հինգ բաժակ,

¹⁴ Թարգմանությունը կատարվել է Մոջթաբա Մինովիի հրատարակած «Նորուզ Նամե»-ից, որը պարունակում է ընդարձակ և հետաքրքիր ծանոթագրություններ (Թեհրան, 1933):

կցուցադրի իր ներսում թաքնված չարն ու բարին, ամբողջ իր էությունը: Գինին անծանոթին դարձնում է ընկեր ու ընկերներին բոլորակում է իրար շուրջ: Գինին շատ հաճելի մի ըմպելի է. աշխարհի բոլոր ուտելիքները, լինեն դրանք ճարպոտ, քաղցր. թթվաշ՝ հղփացնում են մարդու, իսկ հղփացումից հետո կերածը դառնում է զզվելի: Մինչդեռ որքան էլ որ խմես գինի՝ կցանկանաս ավելին: Մարդը չի հագնում գինով, քանզի դա արքան է ըմպելիների: Դրախտում շատ կան բարիքներ, բայց դրանցից մեծագույնը գինին է և եթե այդպես չլիներ՝ Աստված չէր ընտրի գինին որպես իր դրախտի ըմպելին, քանզի Աստծուն են պատկանում զույգ աշխարհների համայն բարիքները: Ինչպես դա հիշված է Գրքում. «Տերը նրանց տվեց հստակ և մաքուր գինի» և մի այլ տեղ ասված է. «Դա օգտակար է մարդկանց համար, բայց նրա մեղքը գերազանցում է օգուտներին»: Մարդկության համար օգտակար է գինին, բայց մեղքը խմելու՝ գերազանցում է օգուտներին: Արդ, Իմաստունը խմում է այնպես, որ դրա հաճույքը առավել է լինում մեղքից և որպեսզի չտանջվի՝ կրկնվող փորձերով նա իր հոգին հասցնում է մի կատարելության, որ գինեխումի առաջին վայրկյանից մինչև վերջին վայրկյանը նա ինքնագուստ է, չարիք չի պատճառում ուրիշներին, նրանից ծայր չի տալիս որևէ կոպիտ խոսք կամ ամբարիշտ արարք, այլ նրա շուրջ տարածվում է միայն բարություն և ուրախություն: Երբ մեկը հասնի այդ աստիճանին՝ նա իրավունք կունենա խմելու»:

2. «Խոսք գեղեցկության մասին»

«... Իմաստունները գեղեցիկ դեմքը համարում են գերագույն երջանկություն և այդ տեսնելը՝ լավ նշանակ... Դա նման է մի հագուստի, փակված անուշահոտություններով լեցուն պահարանում և երբ դա երևան է գալիս, անուշ է բոլորի համար: Դա նմանում է արևի ցուլին, ընկած ջրի վրա... Գեղեցկությունը երգել են բոլոր լեզուներով և դա հաճելի է ամենքին:

«Աշխարհում շատ կան գեղեցկություններ, որոնց տեսքը զվարճացնում է սրտերը և թարմացնում է բնությունը. բայց ոչինչ չի կարող գերազանցել գեղեցիկ դեմքին. գեղեցիկ դեմքը ծնունդ է տալիս այնպիսի մի ցնծության, ո՛չ մի ուրախություն դրան հավասարվել չի կարող: Ասում են, որ գեղեցիկ դեմքը պատճառն է աշխարհի երջանկության: Իսկ երբ գեղեցիկ արտաքինը զուգորդվում է բարի բնավորության՝ երջանկությունը հասնում է ծայրագույն աստիճանի: Երբ մարդը գեղեցիկ է արտաքինով և ներքինով՝ նա սիրեկանն է Աստծու և մարդկանց... Երբ նստում ես գեղեցիկ մեկի մոտ, կյանքը լցվում է ցնծությամբ, ամոքվում են վշտերը և ամեն գործ բարի ընթացք է ստանում: Երբ տեսնում ես գեղադեմ մեկին, դիտում ես նրան ակնածանքով, քանզի գեղեցիկը՝ լրումն է կենաց բոլոր հաճույքների: Ասում են, որ գեղեցիկ դեմքը երիտասարդացնում է ձերունուն, մանկացնում է երիտասարդին ու մանուկին փոխում է հրեշտակի: Մարգարեն — Խաղաղություն և Փառք նրա անվան — ասել է. «Պահանջեցեք գեղեցիկներից այն ամենը՝ — ինչ որ պետք է ձեզ»: Յուրաքանչյուր էակ հատկանշական մի անուն է դրել գեղեցիկ դեմքի վրա. ոմանք դա կոչում են «սիրո հրապարակ», ոմանք՝ «ցնծության մարգ» կամ պարտեզ ոգեկոչման, արարչության գեղուն և նախանշան դրախտի... Դա դրոշմն է Արարչի և ապա-

ցույցը նրա մեծության... Արարիչը սփռել է իր լույսը գեղեցիկ դեմքի վրա: Խորհրդապաշտները դա անվանում են մոմի ցույցը, որ լուսավորում է Մոմը: Ոմանք դա կոչում են ստեղծագործության դափնեպսակ, գթության անձրև, որը թարմացնում է մտքի պարտեզը և ծաղկեցնում է ծառը ծերության: Ոմանք ասում են, որ դա նշանն է ճշմարտության, ուղեցույցը ճշմարիտի, որը առաջնորդում է մարդկությունը դեպի գերագույն Արդարություն:

«Այս գիրքը ավարտվում է լավ նշանակով — գեղեցիկ դեմքով, և թող որ դա օրհնված լինի և հեղինակի և ընթերցողի համար»:

Օմար Խայյամի քառյակները

Օմար Խայյամի քառյակների Ողիսականը սկսվում է Էդուարդ Ֆիթզ Ջերալդի առաջին անգլերեն թարգմանությամբ, որը տարիներ անհայտության մեջ մնալուց հետո, հանկարծ, շնորհիվ Վիկտորյան շրջանի մի քանի անվանի քանաստեղծ-քննադատների, հատկապես Ռոզետտի և Սվինբորնի, և օրվա մեծագույն քննադատ Ջորջ Մերեդիթի, միջազգային հռչակ ստացավ: Ֆիթզ Ջերալդի թարգմանությունը առաջին անգամ հրատարակվեց 1859 թվին, 200 օրինակով և ծախվում էր հատորը մի ՓԵՆՆԻ: Նախ քան 1900 թվականը այդ հատորը վերահրատարակվեց 25 անգամ: Վերջին հարյուրամյակում Օմար Խայյամի քառյակների ժողովածուները, միայն անգլերեն լեզվով, ծախվել են ավելի քան 1 միլիոն օրինակ: Միայն Միացյալ Նահանգներում, 1940 թվից ի վեր, հրատարակվել և սպառվել են 513 հազար օրինակ և դեռևս պահանջը բավարարված չէ և անդադար լույս են տեսնում նորանոր հրատարակություններ:

Ֆիթզ Ջերալդը իր թարգմանությունը կատարել է Բողեյան Գրադարանում գտնվող մի ձեռագրից, գրի առնված Հեջրի 865 թվին (Ք. հ. 1460–61), բայց ի նկատի առնելով այն ազատ և քննադատ մտնեցումը, որ ցուցաբերել էր Ֆիթզ Ջերալդը իր թարգմանության մեջ, հետագայում արևելագետներ ստիպվեցին ավելի լրջորեն հետաքրքրվել Օմարի գրական ավանդով և փնտրել **նոր քննազեր:**

Առաջին անգամ 1897 թվին էր, որ ռուս արևելագետ Վ. Ա. Ժուկովսկին հրատարակեց իր հռչակավոր ուսումնասիրությունը, «Օմար Խայյամի թափառող քառյակները» խորագրի տակ և դրանով հիմք դրեց ներկա խայյամագիտության: Այդ հոդվածով Ժուկովսկին ապացուցեց, որ Փարիզում լույս տեսած Նիկոլայի 464 քառյակներից 82-ը պատկանում են Խայյամից հետո ապրող քանաստեղծներին: Հետագայում այդ «թափառող» քառյակների թիվը հասավ 108-ի: Բայց քննական քննասիրությունը չբավականացավ դրանով: Նույն ինքը, Ժուկովսկին, խուսափելու համար որևէ ենթադրական տեսություններից, առաջարկեց Խայյամին **վստահորեն** վերագրել միայն 6 քառյակ, որոնք հիշված են պարսկական հնագույն սկզբնաղբյուրներում:

1904 թվին դանիացի իրանագետ Ա. Քրիստենսենը առաջարկեց ընդունել որպես Խայյամի հարազատ քառյակներ միայն այն 12-ը, որոնց մեջ հիշատակվում է Խայյամի անունը:

1925 թվին գերմանացի իրանագետ Ֆ. Ռոզենը հրատարակեց Բեռլինի ձեռագիրը, որը պարունակում էր 329 քառյակ: Ձեռագիրը կրում է 1321 թվականը, բայց շատ շուտով ապացուցեց, որ այդ թվականը կեղծված է և որ ձեռագիրը պատկանում է 16 կամ նույնիսկ 17-րդ դարու և գրչագրի: Ռոզենը, իր հերթին, քննադատելով Ժուկովսկու և Քրիստենսենի կատարած ընտրությունները, առաջարկում է ընդունել որպես հարազատ թերթվածներ 13 քառյակ ևս, որոնց նա գտել էր «Մունեսալ Աիրարում» (գրված 1840 թվին):

1927 թվին Ա. Քրիստենսենը, իր նոր աշխատանքի մեջ, «Օմար Խայյամի Քառյակների Քննական Ուսումնասիրությունը» խորագրով, հրաժարվում է իր նախկին տեսակետից և ավելի մանրակրկիտ ստուգաբանությունից հետո, հանգում է այն եզրակացության, որ բոլոր հնագույն սկզբնաղբյուրների և ձեռագիր օրինակների միջից կարելի է վստահորեն 121 քառյակ վերագրել Խայյամին:

Պարսիկ քանասերներին էր վերապահված ասել վերջին խոսքը Խայյամի քառյակների հարազատության վերաբերյալ:

Անվանի քանասեր Միրզա Մոհամմադ Ղազվինին առաջինն էր, որ հայտնագործեց 14-րդ դարու պատկանող ձեռագիր մի ժողովածու, որի թվագրությունն էր Հեջրի 741 (Ք. հ. 1340), որի մեջ Խայյամից հիշված էին 13 քառյակներ:

1942 թվին Թեիրանում լույս տեսավ պարսիկ մեծ դիվանագետ և քանասեր Մոհամմադ Ալի Ֆորուդիի «Օմար Խայյամի Քառյակները» ժողովածուն, որը ի մի հավաքելով գոյություն ունեցող բոլոր ենթադրական տեսությունները և դրանց ենթարկելով մանրազննիչ քննարկության, միաժամանակ քրքրելով Իրանում գտնվող պետական և անձնական հարուստ գրադարանները, որպես հիմք՝ ընտրեց 66 քառյակ: Այդ 66 քառյակներին նա ավելացրեց «անձնական ընտրությամբ և քանասիրական հոտառությամբ» 112 քառյակ ևս, նրանց ընդհանուր գումարը հասցնելով 178-ի:

Ահա այստեղ էր, որ կանգ առավ խայյամագիտությունը և թվում էր, որ Խայյամի քառյակների Ողիսականը պիտի հասած լիներ իր վախճանին:

Բայց 1950 թվին, անգլիացի հայտնի իրանագետ Արթուր Ջ. Արբերին, մատենահավաք Չեստեր Բիթիի հավաքածուի մեջ գտավ Խայյամի քառյակների ձեռագիր մի օրինակ, որը մինչ այդ անհայտ էր մնացել: Դա փոքրիկ մի հատոր էր, որ պարունակում էր 172 քառյակ և գրված էր Հեջրի 658 թվին (Ք. հ. 1259–60): Ըստ այդ ձեռագրի հիշատակության, դա միայն մի **ծաղկաբաղ** էր, որ գրչագիրը կատարել էր Խայյամի գոյություն ունեցող քառյակներից: Այս օրինակը հրատարակվեց Անգլիայում 1950 թվին: Բայց խայյամագետներին սպասում էր ավելի ցնցիչ մի անակնկալ:

Այս հնագույն ձեռագրի հրատարակությունից առաջ, 1946 թվին, պարսկերեն «ՅԱԴԵԳԱԼ» հանդեսի 363 համարում լույս էր տեսել անստորագիր մի հոդված, որ ենթադրվում էր, որ պատկանում է պրոֆ. Աբբաս Էդրալի գրչին: Անանուն հեղինակը հայտարարում է, որ անձնական մի գրադարանում հայտնագործել է Հեջրի 604 (Ք. հ. 1207) թվագրված ձեռագիր մի օրինակ: Նշանակում է, գտնվել էր մի ձեռագիր, որը գրվել է Խայյամի մահվանից ՄԻԱՅՆ 75 ՏԱՐԻ ՀԵՏՈ:

Այդ ժողովածուն, ըստ նույն հեղինակի, պարունակում էր 252 քառյակ, որոնցից նա իր հոդվածում օրինակ էր բերել 15-ը:

«Թեհրանյան» այդ ձեռագիրը երևան է գալիս Լոնդոնում 1950 թվի ամռանը և գտնվում է Քեմբրիջի համալսարանի կողմից: Ա. Արքերրին, որը ներկա էր աճուրդին և առաջին մասնագետն էր, որ մոտից քննության է ենթարկում ձեռագիրը, ահա թե ինչ է գրում այդ մասին. «Դա երկրորդ անգամն էր, որ ես պատեհություն ունեցա առաջին վկան լինել նման մի զգայացունց առթի: Նորից մի հատիկ հայացք բավական էր ինձ համոզվելու համար, որ 604 թվագրությունը կեղծված չէր: Քեմբրիջի այդ օրինակը պարունակում էր 252 քառյակ, և դա գրի էր առնված միայն 75 տարի հայյամի մահվանից հետո: Հատորը պարսիկ բանաստեղծների մի ժողովածու է, գրված ոմն Ղիաս էդ-ԴինՄոհամմադ էրնե Յուսեֆ էրնե Ալիի ձեռքով: Ձեռագիրը կատարելապես բնորոշ էր իր շրջանի համար և կազմը համարյա թե ժամանակակից էր թվում: Ինչպես Չեսթեր Բիթիի ձեռագրում, այստեղ ևս թվականը նշանակված էր բառերով, ոչ թվանշաններով, և որևէ արտաքին նշան գոյություն չունեի, ցույց տալու համար, որ ձեռք է տարվել գրության մեջ...»:

«Քեմբրիջի ձեռագիրը լիովին հաստատեց այն գաղափարը, ըստ որի պիտի հիմնական վերաքննության ենթարկվեր Օմարի դիրքը գրականության ասպարեզում: Նախ շատ կարևոր էր այն երևույթը, որ այդ ժողովածուն ներկայացված էր որպես բանաստեղծությունների մի «ծաղկաբաղ»: 252 քառյակ պարունակող «ծաղկաբաղը» ցուցանիշն էր գոնե 750 քառյակ պարունակող մի հատորի գոյության: Երկրորդ, Քեմբրիջի ձեռագիրը Օմարին դասում էր մեծ բանաստեղծների շարքը, ինչպիսիքն են Սանաին և ուրիշներ, որոնց երևակայության որևէ ճիգով չի կարելի երկրորդ դասի բանաստեղծների համարել: Հետևաբար, ընդօրինակողը, լավատեղյակ մի անձնավորություն, որը կազմել էր իր ծաղկաբաղը Օմարի մահվանից շուրջ 75 տարի հետո, նրան դասում էր առաջնագույն բանաստեղծների մեջ: Երրորդ — 75 տարվա ընթացքում, հազիվ թե ժամանակը ներեր, որ համարյա առասպելական մի անձնավորության վերածին մեծ մի բանաստեղծի: Այդպիսի զուգահեռ գոյություն չունի պարսիկ գրականության մեջ... Ի նկատի առնելով այդ բոլորը, պիտի հանգել այն անխուսափելի եզրակացության, որ Օմարը իսկապես մեծ թվով քառյակներ է գրել»:

Որքան զգայացունց և անսպասելի լինեի այդ հայտնագործությունը, որքան էլ որ մեծ լինեի Ա. Արքերրիի հեղինակությունը, այնուհանդերձ պարսիկ որոշ լուրջ բանասերների մեջ դեռ կենդանի են կասկածի սաղմեր այդ ձեռագրի հարազատության վերաբերյալ: Ձեռագրի ոուսերեն հրատարակության նախաբանում (Մոսկվա 1959) երկու տեղ մենք հանդիպում ենք զգույշ արտահայտությունների. մի տեղ խմբագիր-հրատարակիչները գրում են. «Պիտի հիշատակել, որ «Ա» ձեռագրի հարազատության մասին խոսելով, մենք ստիպված ենք մեծ մասամբ հիմնվել այլ հետախույզների դատողության վրա, քանի որ այս հատորի խմբագիրները իրենց տրամադրության տակ են ունեցել միայն ձեռագրի լուսանկարը (ֆոտոկոպիան) և զրկված են եղել անկախաբար քննության առնել դրա հնագրական (պալեոգրաֆիկ) տվյալները»:

Օմար հայյամի փիլիսոփայական աշխարհայացքը

Բազմաթիվ հատորներ են գրվել, նախաբաններ և ներածականներ են հորինվել հայյամի քառյակների մեջ արտահայտված փիլիսոփայական մտքերի, նրա աշխարհայացքի և գրական արժանիքների մասին:

Նախ քան անցնելու արդի խայյամագետների կարծիքների ուսումնասիրության, բանասիրական տեսակետից ավելի ճիշտ կլինեի քննել հայյամի իր իսկ արտահայտած փիլիսոփայական մտքերը, որը կարող է հիմնաբար դառնալ հետագա դատողությունների և միաժամանակ փորձնաբար՝ ուրիշների արտահայտած անձնական կարծիքների ճշտության համար:

Հայյամից մեզ հասել է փիլիսոփայական հետաքրքիր մի երկ «շարադրություն հաղագս Գոյության և Մարդկային Պարտականությունների», որը նա գրել է 1080 թվին, ի պատասխան Դատավոր ան-Նասավիի, որը հայյամից պահանջել էր պարզաբանել իր տեսակետները «Արարչի Իմաստության վերաբերմամբ, որն արտահայտվել է նրա Արարչության մեջ, մարդու հատկությունների և աղոթելու պարտականության մասին»: Այս շարադրությանը հետևում է Օմարի մի այլ գրությունը, որը կոչվում է «Պատասխան Եոյակ Հարցերի», որոնք են՝ հակամետությունների անհրաժեշտությունը աշխարհում, ձակատագրապաշտությունը և երկարակեցությունը:

Բնական է, որ Դատավորի հարցերը չէին տրվել զուտ հետաքրքրության համար և պիտի հետևեցնել, որ կղերականությունը Օմարին մեղադրում էր հերձվածային հակումների մեջ: Նույնքան բնական է, որ հայյամը չէր կարող անկեղծորեն պատասխանել այդ հարցերին և այդպիսով վտանգել իր կյանքը: Բայց հայյամի պատասխանների ուղղափառ և կրոնահավատ արտաքինի տակ մենք արդեն հանդիպում ենք ժամանակի ազատամիտ բանաստեղծ-փիլիսոփային, որը իր գաղափարները բոլորովին ծածկել չի կարողանում:

Հայյամի պատասխանի հիմնական կետերը հետևյալ կերպով կարելի է սղել. նա անվիճելի է համարում Աստծու գոյության անհրաժեշտությունը, որպես սկզբնապատճառ բոլոր պատճառների և այդ խնդրին մոտենում է իմացականորեն, Արիստոտելյան տրամաբանությամբ. եթե չընդունենք Աստծու գոյությունը, ապա արարչությունը կդառնար մի շղթա, առանց սկզբի և առանց վերջի, կախարդված մի օղակ, անհեթեթություն: Հայտարարելով իրեն էրեն Սինայի աշակերտ, նա հավատում է արարչության շղթայի աստիճանական վայրէջքին. ըստ այդ վարդապետության, որը զարգացրին Նեո-պլատոնիստները, արարչությունը ստեղծում է **զուտ միտքը**, որը իր հերթին ստեղծում է ՀՈԳԻՆ, հոգին՝ երկինքը և այդպես շարունակաբար, մինչև հետնագույն արարածը: Դրա վրա է հիմնավորվում նաև ՉԱԲԻՔԻ անհրաժեշտությունը: Արարիչը չէր կարող անտեսել բյուրավոր բարիքների ստեղծագործությունը, հանուն մի հատիկ չարիքի գոյության, քանի որ դա ինքը կլինեի չարիք, մինչդեռ Արարիչը Ամենաողորմած և Բարեգութ է:

Անցնելով պարտականությունների խնդրին, հայյամը շեշտում է նախ աշխատանքի բաժանման և օրենքների արդարադատության անհրաժեշտությունը: Այդպիսի բաժանում և արդարություն կարելի է ստեղծել միայն ուժեղ իմացականու-

թամբ և մաքուր հոգով: Հետևաբար, աղոթքն էլ մի անհրաժեշտություն է, քանի որ Մարգարեն մահկանացու էր և նրա գրած օրենքները կմոռացվեն, եթե մարդիկ անդադար չհիշեն օրենքները և այդ օրենքները պարտադրող Արարչին և նրա միջնորդ՝ Մարգարեին: Դետերմինիզմի վերաբերմամբ Խայրամը այն կարծիքին է, որ ճակատագրապաշտությունը «շատ հեռու է ճշմարտությունից» և հակառակ է պատճառների և հետևանքների տրամաբանական շղթային:

Այսպիսով, իր փիլիսոփայական շարադրությունների մեջ, Խայրամը հանդես է գալիս որպես արևելյան Արիստոտելիզմի հետևորդ, Նեո-պլատոնական ուժեղ հակումներով:

Ինչպես ասացինք, Խայրամը չէր կարող անկեղծորեն արտահայտել իր ճշմարիտ գաղափարները իր փիլիսոփայական երկերում և նրա քառյակները շատ հաճախ հակասում են նրա փիլիսոփայական ուսուցման: Այդուհանդերձ, Խայրամի աշխարհահայացքի էական ատաղձը արտահայտվում է նրա վարդապետության մեջ:

Խայրամի փիլիսոփայության այս պրոգնոզիկ մոտեցումից հետո, հետաքրքիր է ծանոթանալ մի քանի գրական կարծիքների հետ:

* * *

Այդ կարծիքներից որպես առաջինը մենք ընտրել ենք պարսիկ հայտնի արձակագիր Սադեղ Հեդայաթի արտահայտած մտքերը, որի մոտեցումը Խայրամի փիլիսոփայության արդիական է և շեշտվածորեն հոռետես:

«Խայրամի քառյակներում փիլիսոփայական մի մոտեցում կա, որը այսօր հրապուրում է իրապաշտ դպրոցի հետևորդներին: Խայրամի խոսքի դառը գինին որքան հնանում՝ այնքան ավելի հարբեցնող է դառնում: Դրա համար է, որ Խայրամի քերթվածները ամբողջ աշխարհում, բոլոր ազգերի մեջ, ամեն շրջանում, իր հետևորդներն ու հավատարիմ երկրպագուները ունեն:

«...Խայրամը իր փորձառությամբ և մտքով հասել է այն եզրակացության, որ մարդկային ըմբռնումը սահմանափակ է: Որտեղից ենք եկել և ո՞ր ենք գնում: Ոչ ոք գիտե դա, և ով դրա մասին խոսում կամ ճառում է, բարբաջում է միայն և խաբում ուրիշներին: Ոչ ոք ստեղծագործության գաղտնիքը չի հասկացել և չի հասկանալու. կամ գուցե և նման մի գաղտնիք գոյություն իսկ չունի և կամ եթե նույնիսկ կա ու որևէ ազդեցություն չունի մեր կյանքի ընթացքի վրա... Այս երկրագնդից, այս հողից անդին՝ ոչ երջանկություն կա և ոչ տառապանք, ոչ հատուցում և ոչ պատիժ: Անցյալը և ապագան երկու ոչնչություններ են և այդ երկու ոչնչությունների միջև, երկու աշխարհների սահմանագծի վրա — պիտի վայելենք մեզ տրված ակնթարթը: Հաճույքը միակ ճշմարտությունն է կյանքի, որը անցնում է զարհուրելի մղձավանջի պես»:

Քանի որ ոչ ոք վաղը չգիտե,

Ուրախ պահիր այժմ սիրտդ վշտակեղ.

Խմիր, ով Լուսին, քանզի լուսինը

Շատ պիտի դառնա ու չգտնե մեզ:

(Թարգմ.՝ Հ. Միրզայանի)

«... Պարսիկ բանաստեղծների մեծ մասը հոռետես է եղել, բայց նրանց հոռետեսությունը ուղղակիորեն բխել է հեշտասիրությունից և հեշտանքի առարկային չհասնելու տանջանքից: Մինչդեռ Խայրամի մոտ հոռետեսությունը վեհ և փիլիսոփայական մի կերպարանք է ստանում... նրան ամոքում է միայն գեղեցկությունը — կինը և գինին — և այդ երկուսից նա միայն վայրկյանական մի հաճույք է ակնկալում: Նա երկրպագու էր գեղեցկության... նրա մեջ իմացական մի ցավ կա, որը նա անեծքի պես շարտում է արարչագործության դեմքին: Այդ ըմբռստությունը հետևանքն է նրա ցավատանջ մտքի և կուռ տրամաբանության: Այդ հոռետեսությունը հանգում է իրապաշտ փիլիսոփայության և կամքը, շարժումը, միտքը նրա համար դառնում են անմիտ երևույթներ:

«...Մի ուրիշ հատկորոշ կետ Խայրամի փիլիսոփայության մեջ, դա նրա կենտրոնացումն է մահվան հանելուկի վրա... Մահը նա վերածում է հյուլեական մասնիկների կերպարանափոխության և հավերժական շարժման: Խայրամի համար նյութից անդին՝ այլ քան գոյություն չունի: Աշխարհը ստեղծվել է հյուլեական մասնիկների համախմբմամբ, որոնք պատահական և աննպատակ սուրանքի մեջ են: Այդ շարժումը հավերժական է և նյութի մասնիկները անդադար բաժանման և համախմբման պրոցեսի մեջ են գտնվում: Մարդկային էակը ոչ պիտի վախենա մահվանից և ոչ էլ հույս կապի հանդերձյալ կյանքին:

Մի օր այս մարմնից կերթա քո և իմ անարատ հոգին,

Կղնեն երկու աղյուս իմ և քո դամբանի գլխին.

Եվ այլոց համար երբ հեռո շինեն աղյուսից շիրիմ՝

Կաղապարի մեջ կլեցնեն մարդիկ հողը քո և իմ:

«... Գինու կուծի մեջ նա գեղեցիկների մարմնի հյուլեններն է տեսնում, որ հող են դարձել և ապրում են այժմ մի օտար, տարօրինակ կյանքով: Նրանց կավե կաղապարում ետում է գինու հրաշագործ ոգին: Խայրամի համար գինին, նման դեպքերում, խորհրդավոր միտք է ստանում: Գինին, որը հարբեցում և մոռացում է տալիս, կուծի մեջ վերածվում է անէական մի ոգու, որ ապրում է մարմնի կավե կաղապարում: Այդպիսով կուծը մի անկախ գոյություն է ստանում և գինին դառնում է նրա հոգին:

Այս կուծն էլ ինձ պես սիրող է եղած,

Կապված ու գերի մի կույսի մագին.

Կանթը որ նրա վզին ես տեսնում

Մի թև է եղած սիրուհու վզին:

این کوزه چو من عاشق زاری بوده است

در بند سر زلف نگاری بوده است

این دسته که بر گردن او می‌بینی

دستی است که بر گردن یاری بوده است

Կամ

Գինի վճիտ ու անուշ ուզում է սիրոս անդադար,

Ուզում է միշտ ականջն իմ լսել սրինգ ու քնար.

*Թե մի բրուտ իմ հողից մի ժամանակ կուժ շինի,
Լավ է որ այդ կուժի մեջ լեցուն պահեն միշտ գինի¹⁵:*

«... Խայրամի համար անցյալը շփոթ մի հուշ է և երագ, ապագան՝ անորոշ: Ապա ապրենք այս վայրկյանը, ապրենք այս մի շունչ կյանքը, որից հետո մեզ այլևս ոչինչ չի մնալու... Բայց եթե Խայրամը սրտի խորքից ջատագովն էր ցնծության և հաճույքի, նրա ուրախությունը անբաժան է միշտ անէացման և մահվան մտքի հետ. և հետևաբար, շատ հաճախ, նրա ուրախությունը խառն է խորը մի թախիծի հետ: Ուրախ լինենք, ցնծանք, որպեսզի մոռանանք և չտեսնենք, թե ինչպես մեր արյունը, կյանքի անվերադարձ ավիշը, հոսում է մեր հազարավոր վերքերից...»:

* * *

Ավելի զուսպ, զուտ բանասիրական մոտեցում ունի Ա. Արբերիին Խայրամի վերաբերմամբ. «Նախ և առաջ պիտի ձերբազատվել այն թյուր հասկացողությունից, ըստ որի Խայրամը խորհրդապաշտ բանաստեղծ է և որ նրա ակնարկները գինու և հարբեցման վերաբերմամբ՝ այլաբանություններ են: Այդ տեսությունը Արևմուտքում առաջին անգամ պաշտպանեց Խայրամի ֆրանսերեն թարգմանիչ Նիկոլասը և բազմաթիվ հետևորդներ գտավ խայրամասերների մեջ, որոնք չէին խորացել նրա ստեղծագործության բնույթի մեջ: Այդ թյուրիմացությունը հիմնավորված է պարսիկ խորհրդապաշտ բանաստեղծների յուրացրած անսքող և պատկերավոր ոճով, որը պարսիկ քնարական բանաստեղծության մեջ ավանդական մի բառապաշար է ստեղծել, (ուր ամեն մի պատկեր, վարդը, գինին, գեղեցկուհին, պարտեզը, մոմը, փարվանան և նման հարյուրավոր այլ առարկաներ գործածվել են այլաբանորեն):

«Գերազանց սխալ կլիներ կարդալ Խայրամին մեկուսացման մեջ, առանց նրան համեմատելու պարսիկ այլ բանաստեղծների և մահմեդական փիլիսոփայական ուղղությունների հետ: Նա իր գործածած պատկերներից և ոչ մեկը անկախորեն չի ստեղծել և նրա աշխարհահայացքն էլ դուրս չափով ինքնուրույն չէ: Արվեստականությունը և ավանդապաշտությունը այնպիսի գերակա երևույթներ են պարսիկ (ինչպես և արաբ և թուրք) բանաստեղծության մեջ, որ ուսումնասիրելով որևէ դասական բանաստեղծի քերթվածները, վստահորեն կարելի է հետևյալն, որ նա աշխատել է պարզապես նրբացնել և ընտրություն կատարել այն հարուստ մթերանոցից, որ անցյալ սերունդները դիզել և որոշ չափով կոկել են արդեն:

«...Օմարի վերաբերմամբ մենք կատարելապես վստահ ենք, որ նա իր փիլիսոփայական ասմունքների մեջ ունեցել է իրեն նախորդող օրինակներ և նույնիսկ երբեմն նա օգտվել է նրանց ասելակերպից և ոճաբանությունից: Մենք նրան ճշմարտորեն գնահատել կարող ենք միայն այն դեպքում, երբ ի նկատի առնենք վերոհիշյալ ազդեցությունները և դրա հիման վրա արժեքավորենք նրա անհատականությունը և հանճարը:

¹⁵ Օմար Խայրամ, Բաբա Թահեր և Զանազան, քնագրից թարգմանեց Հովսեփ Զ. Միրզայանցը, «Մողերն», Թեհրան, 1923:

«Օմարը, ամեն ինչից առաջ, ԻՄԱՑԱԿԱՆ ՀՈՌԵՏԵՍՈՒԹՅԱՆ երգիչն է. բայց, հակառակ հոռետես բանաստեղծների մեծամասնության, նա կյանքին և իր տեսակետներին չի մոտենում ողբերգական լրջությամբ. հետևաբար նրա գրիչը թեթև է և նրա քառյակների հոռետեսության մեջ կայծկլտում է կատակարան քամահրանքը: Նա մահմեդականության առաջին Իմացական Փիլիսոփան չէր. ընդհակառակը, նրան կարելի է վերջինը համարել: Մենք շատ հեռուները կերթայինք, եթե նույնիսկ թողցիկ կերպով փորձեինք այստեղ ուրվագիծը ներկայացնել մահմեդական ազատամիտ փիլիսոփաների պատմության: Իմացական կամ բանական փիլիսոփայությունը մի պայքար էր, երբեմն թաքուն և երբեմն բացահայտ, ուղղված պարսիկների կողմից արաբների գերակայության և նրանց ներկայացրած մահմեդական ուղղափառության դեմ: Խորանալով Հունական փիլիսոփայության մեջ, ոմանք ազնվորեն հավատացել և հետևել են դրան և ոմանք օգտագործել են այդ՝ իրենց քաղաքական նպատակների համար: Այս վերջիններն են, որ ծառայել են մահմեդականության Գերագույն Հեղինակության և նրա անսխալականության դեմ: Հատկապես պարսիկ մտավորականները, որոնք ընդվզում էին իրենց երբեմնի հզոր և հպարտ երկրի նվաճման գաղափարի դեմ, տեղին ու անտեղին աշխատում էին հիշեցնել իրենց արաբ տերերին, որ մահմեդականությունը դրսից ներմուծված և շատ էլ կատարյալ մի կրոն չի. այսպիսով գինին, որը թույլատրված էր Զրադաշտի և արգելված Մոհամմադի օրենքով, ըմբոստ զգացումների արտահայտության հրաշալի մի սիմվոլ էր, մանավանդ, որ դա «ուրախացնում էր մարդկային հոգիները»: Իսլամի տարածման առաջին իսկ տարիներին, պարսիկները արաբներին սովորեցրեցին գինի խմել և շուտով ապացուցվեց, որ արաբները գերընդունակ աշակերտներ են: Խալիֆ Յազիդը, որը մեռավ Հեջրի 64 թվին, Մարգարեի մահվանից դեռ 50 տարի չանցած, համոզված և հաստատակամ հարբեցող էր: Հարուն ալ-Ռաշիդի սիրած բանաստեղծ և բաժակակից, Արու Նովվասը, որը արաբ քերթվածության անգերազանցելի քաբոսարանն է, ծնվել էր պարսիկ մորից. նրան է պատկանում հետևյալ կարճ հատվածը, որը փոքրիկ փոփոխություններով կարելի է Խայրամին վերագրել.

Կյանքը չորս բան շնորհեց

Հոգուն, մարմնին և սրտին.

Ծաղկած մի դաշտ, հստակ ջուր,

Գինու սափոր ու մի կին:

«...Իմացական կասկածի ստոյիկ հաճույքները, ներկայացված գեղարվեստական գեղեցիկ և հմայիչ կաղապարում, գրավում և միաժամանակ հուսահատության դուռն էր հասցնում մեծաչալմա կղերականներին, որոնց մտքի նեղ հորիզոնը չափազանց աղքատիկ գենք էր կովելու համար պարսիկ իմաստասեր փիլիսոփաների և ազնոստիկների հատու շեղքերի դեմ: Դեռ 10-րդ դարում հռչակավոր գիտնական Ռազին (մ. 313 925 թ.) ներկայացնում էր Արարչին ոչ թե որպես ուղղափառների պատկերացրած դաժան և ամենազոր բռնակալի, այլ որպես իմացական և հանդուրժող մի էակի, որը պատրաստ էր ներել նույնիսկ Իրեն չհավատացողներին:

«Եթե մեկը ձախողի հասնել ճշմարիտ նպատակին, Ամենակարողը անշուշտ կների նրան, քանզի նա չի պահանջում մեզնից մի բան՝ որ վեր է մեր կարողությունից»։ Աբու Ալի Սինան, պարսիկ մեծագույն փիլիսոփան, որի մահը հազիվ մի սերունդ նախորդում է Օմարի ծնունդին, չափազանց նվիրված էր գինուն և մարմնային այլ հաճույքների. նա չէր ընդունում մարմնական հարության գաղափարը, այլ դրախտը (կամ երանությունը) ներկայացնում էր Նեո-պլատոնիստների հասկացողությամբ, այն է միաձուլումն նախնական Իմացականության հետ»։

«Եթե Օմարը իսկապես այնքան մեծ գիտնական և փիլիսոփա էր, որքան աշխատում են նրան ներկայացնել պարսիկ սկզբնաղբյուրները, ապա պիտի հետևեցնենք, որ նա իր մտքերը շատ հազվագյուտ դեպքերում էր արտահայտում փիլիսոփայական երկերի մեջ. մինչդեռ թվաբանագիտության վերաբերյալ նա բազմաթիվ շարադրություններ ունի։ Հավանական է, որ նա մեկն էր այն գիտնականներից, որոնք հակված չեն շատ գրելու և Օմարը երևի խուսափում էր դասավանդության և գործնական արարքներով ուշադրություն գրավել և բարձր դիրքերի արժանանալ։ Մյուս կողմից հավանական է, որ նա վախենում էր գրի առնել իր տեսակետները մետաֆիզիկայի վերաբերմամբ, չնայած նա ճանաչված էր որպես էրեն Սինայի հետևորդ։ Այսպիսի պարագաներում է, որ նա ստիպվել է բավարարություն տալ ինքն իրեն, արտահայտելով իր վտանգավոր մտքերը միակ գոյություն ունեցող միջոցով, փոքրիկ բանաստեղծություններով (քառյակներով), որոնց նա հավանաբար արտասանում էր իր մտերիմներին և հավատարիմ աշակերտներին զվարճացնելու համար։ Այդ հոգեվիճակի լավագույն ապացույցն է նրա հետևյալ քառյակը.

*Աշխարհի գաղտնիքն, ինչպես կա դա մեր տեսրակում գրված,
Չեմ կարող ասել, քանզի դա գինն է գուցե իմ կենսոց։
Այնինչ այս տգետ մարդկանց մեջ չկա մեկը հասկացող,
Ինչ որ կա թաքուն իմ սրտի խորքում՝ ասել չեմ կարող։*

«Միայն այն ժամանակ, երբ սրամտության այս փայլուն փորձերը տարածվեցին ժողովրդի մեջ — ականջալուր փսփսուքով և այն վարակիչ զվարճությամբ և հիացմունքով որ դրանք առթում էին լսողներին — միայն այդ ժամանակ էր, որ Օմարը իրեն գտավ թերահավատության վտանգավոր մեղադրանքի առաջ և իր կաշին փրկելու համար, ապաստանեց կեղծ մեղայականների։

«Օմարի կասկածամտությունը և թերահավատությունը, մերկացնելով բանաստեղծական պճնանքներից, կարելի է ընդհանուր հայտարարի բերել մի քանի պարադոքսներով.

1. Եթե Աստված ստեղծել է աշխարհը և չարիքը նրա մեջ — ապա ո՞ւմ մեղքն է դա։
2. Եթե Աստված ամենագութ է, ինչպես է նա կարող պատժել մեղավորներին։
3. Եթե գինին արգելված հաճույք է, ապա ինչո՞ւ Աստված ստեղծեց այդ։
4. Ինչո՞ւ է Աստված ստեղծում Գեղեցիկը և ապա, առանց որևէ տրամաբանական պատճառի՝ ոչնչացնում այդ։

«Դրանք բոլորը, բնականաբար շատ հին առեղծվածներ են և Օմարը առաջին մարդը կամ նույնիսկ առաջին մահամեղականը չէր, որ դրեց այդ հարցերը Արարչի առաջ։ Դարեր շարունակ այդ հարցերը կատաղի հակաճառությունների պատճառ են եղել։ Պարսիկ համարյա բոլոր մեծ բանաստեղծները մոտեցել են այդ հարցերին և բավարար պատասխան չեն գտել... Բայց Օմարի բանաստեղծության ամենացայտուն, բայց թերևս ամենաչնկատված երևույթը՝ դա նրա մտքի կատարյալ պայծառությունը և կատակախառն արհամարհանքն է։ Երբեմն միայն զգում ենք նրա հոգու ամբողջ դառնությունը այդ փայլուն կեղևի տակ»։

* * *

Մանրամասն և բազմակողմանի մոտեցումով ուսումնասիրել է Օմար Խայյամի հոգեբանությունը հանգուցյալ հայրս, Հովսեփ Զ. Միրզայանը, Օմար Խայյամի քառյակների իր թարգմանության ներածականում։ Այդ ուսումնասիրությունը ջերմ ընդունելություն գտավ պարսիկ, ինչպես և անգլիացի խայյամագետների մոտ և թարգմանվեց այդ երկու լեզուներով։ Հանգուցյալ Մ. Ֆորուդին մեծապես օգտագործել է այդ ուսումնասիրությունը և Խայյամի քառյակների ընտրության մեջ — նրանց՝ որոնք նա «ճաշակով և հոտառությամբ» ընտրված է համարել — առաջնորդվել է Հ. Միրզայանի ընտրած չափանիշերով։ Այդ ուսումնասիրության ընթերցումը անհրաժեշտ է Խայյամով հետաքրքրվողների համար։

* * *

Հայրս Խայյամից ընտրել և թարգմանել է շուրջ 190 քառյակ և իր ընտրության մեջ հայտնաբերած հմտությամբ, հազվագյուտ քառյակներ է անտեսել, որոնք, նույն ննթադրական մոտեցմամբ, հավանաբար պատկանում են Խայյամին և տեղ են գտել նրա համարյա բոլոր ժողովածուներում։ Լրացնելու համար այդ փոքրիկ բացը, ստորև թարգմանաբար տալիս եմ մի քանի ընտրված քառյակներ, որոնք չեն գտնվում հորս թարգմանական հատորի մեջ և որոնց թարգմանել եմ, աշխատելով պահպանել քառյակի տաղաչափական ձևը։

1

*Դժվարանում ենք կոտրել կամովին, ձեռքով մեր հարբած,
Մի բաժակ՝ որի կանթը քնքշորեն մեջքին է փարված։
Բայց որքան ձեռքեր, շրթեր ու մարմին, այս կյանքը դաժան
Իրար շողկապել՝ հետո կոպտորեն գառել է հանկարծ։*

2

*Մինչև նրբ խոսես մզկիթի լույսից, ծուխից տաճարի,
Մինչև նրբ վիճես դժոխքի ցավից, օգտից դրախտի։
Քո սկիզբը, վերջը և կյանքդ ամբողջ, դամբանիդ վրա
Ծնվելուդ օրից գրել է արդեն անփվը բախտի։*

تا کی ز چراغ مسجد و دود کُشت؟
تا کی ز زیانِ دوزخ و سودِ بهشت؟
رو بر سر لوح بین که استادِ قضا
اندر ازل آن چه بودنی بود ، نوشت.

3

Երբ լուրջ եմ, դառն է պատկերը կյանքի, հաճույք՝ բացակա,
Նույնպես հաճույք չէ, թե շատ խմելուց ընկնեմ անզգա.
Մի պահ կա միայն լրջության միջև և հարբեցումի,
Ահա այդ պահը ցնծությունն է իմ, քանզի կյանքս է դա:

4

Տուր ինձ բաժակը, դաշտում բացվել է շուշանը բուսող, *چون لاله به نوروز قدح گیر به دست*
Մոռացիր այսօր սիրուիտդ գրկում ցավերդ բուրդ. *با لاله رخی اگر تو را فرصت هست*
Խմիր դու գինի փանդիռի ձայնով, քանզի բուրդիս *می نوش به خرمی که این چرخ کهن*
Հողին հավասար փոշի կդարձնի աշխարհը մի օր: *ناگاه تو راز چو خاک گرداند پست*

5

Դատարկիր գինիդ, դեռ շատ պիտ քնես ծաղիկների տակ,
Առանց սիրուիտ, առանց ընկերոջ, լքված ու մենակ.
Զգույշ, ոչ որի չասես այս գաղտնիքն հավերժ բողբոջված.
Չեն կարող նորից ծաղկել թառամած վարդ ու մանուշակ:

6

Մի կաթիլ գինին ավելի արժե քան թագ ու վեղար,
Քան գահն արքայի և քան թե գանձը աշխարհի արար.
Մի գինեւոյի վաղ առավոտվա հառաչը հարբած
Ավելի արժե կեղծ կրոնավորի աղոթքից հազար:

7

Քարավանը մեր կյանքի որքան արագ հեռացավ, *این قافله عمر عجب می گذرد*
Ուրախության այս բուպեն ճաշակեցինք ու անցավ. *دریاب دمی که با طرب می گذرد*
Սաղի, որքան դու հոգաս ցավը վաղվա արթնացման, *ساقی غم فردای حریفان چه خوری*
Մոտ բեր գինին, շուրթդ տուր, մեր գիշերը վերջացավ: *بیش آر پیاله را که شب می گذرد*

8

Երբ ճակատագիրն անունս գրեց տեսրակում իր մեծ,
Դասս առաջին «հաղագս սիրո» էջին նա գրեց.
Ու հետո փոքրիկ հյուլեի առաջ իմ ճղճիմ սրտի
Տիեզերական մտքի գանձերի դարպասը բացեց:

9

Ասում են թե այն երջանիկները, որ ճգնում են միշտ
Հարության օրը կվերածնվեն նույն վիճակում ճիշտ.
Մենք չենք բաժանվում սիրուիտուց և մեր գինուց, որ գուցե՝
Հարության օրը թողնեն հենց այդպես մասնք մենք ընդմիշտ:

10

Մեր ընկերները հեռացան մեզնից անխոս, անհառաչ,
Տես ինչպես տարավ նրանց մեկ առ մեկ մահը ինքնահաճ:
Կյանքի հանդեսում մենք նույն բաժակից խմեցինք գինին,
Ոմանք մնացին, ոմանք հարբեցին մեզնից շատ առաջ:

11

Արեգակը լուսե օդակ ձգեց կարին,
Օրվա Արքան թասը պարպեց հորիզոնին.
Գինի՛ խմիր, Մունետիկը Արշալույսի
Մինարեից ձայն է տալիս — «Բերեք գինին»:

12

Օրն է պայծառ, մարգն է կանաչ սնդուս հազել, *روزى ست خوش و هوا نه گرم است و نه سرد*
Ամպն է մարբել փոշին ծաղկի դեմքից ջահել. *ابر از رخ گلزار همی شوید گرد*
Մի խենթ տիսակ, նատած թուփին դեղին վարդի
Ճշում է արդ — «Գինի՛ բերեք, պիտի խմել»:
لبیل به زبان حال خود با گل زرد
فرباد همی کند که می باید خورد

13

Քնել են ընդմիշտ գերեզմաններում մարդիկ բազմազան,
Տարբալուծվել են և դարձել մի բուռ փոշի ցիրուցան.
Կյանքի բաժակում ինչ գինի էր դա, որ այսպես անհուշ
Նրանց հարբեցրել ու քնացրել է մինչ օրն Հարության:

14

Որքան բույրի ու գույնի գերին լինես խելագար, *تا چند اسیر رنگ و بو خواهی شد*
Որքան հոգաս լավն ու վատն այս աշխարհի ապիկար. *چند از بی هر زشت و نکو خواهی شد*
Հավերժության թե գուրալ աղբյուր լինես հորդառատ՝ *گر چشمه زمزمی و گر آب حیات*
Վերջը հողում կփորեն մի գերեզման քեզ համար: *آخر به دل خاک فرو خواهی شد*

15

Շուրթս դրի մի սափորի շրթունքներին ես ազահ,
Գուցե այդպես հասկնայի գաղտնիքն կյանքի հարակա.
Շուրթը հպեց շրթունքներին ու մեղմորեն ինձ ասաց.
«Ես էլ քո պես մեկն եմ եղել, սազվիր ինձ հետ դու մի պահ»:

16

Արի, բարեկամ, մոռանանք վաղվա հոգսը անմեկին, *ای دوست بیا تا غم فردا نخوریم*
Վայելենք այսօր մեզ տրված այս կարճ շունչը ցնծագին. *وین یک دم عمر را غنیمت شمیریم*
Վաղը երբ մեռնենք և այս աշխարհից գնանք անցողիկ՝ *فردا که ازین دیر فنا درگذریم*
Պիտի կողակցենք մենք յոթը հազար տարեկաններին: *با هفت هزار سالگان سربه سریم*

17

Մենք աղաչավոր եկել ենք ահա դուռը մզկիթի
(Բայց իրականում չենք եկել այստեղ փասն պաշտամունքի).
Գողացել էինք աղոթքի մի գորգ — մաշվել է հիմա,
Եկել ենք, գուցե մի մեծահոգի գորգը նորոգի:

18

Նպատակը արարչություն — մենք ենք միայն,
Իմաստության աչքը համայն — մենք ենք միայն.
Այս բոլորակ տիեզերքը մի մատանի՝
Այս մատանու ակը սակայն — մենք ենք միայն:

19

Ով գեղադեմ գեղեցկուհի, տուր ինձ գինի հնամենի,
Լարիր փանդիտը մեղմալար և ինչ լինում է, թող լինի:
Հողի գրկում կյանքը ճզմեց հազարավոր արքաների,
Խմիր ընկեր, զարունը մեր տարավ աշնան հողմը դժնի:

20

Չսայած որ պճնված ենք գույն ու բույրով հրաշակերտ,
Մեր հասակը ճոճենման ու մեր դեմքը ծաղկավետ,
Չհասկացանք, զինանձավի զինով թրծված այս հողից
Ինչո՞ւ կերտեց պատկերը մեր ճակատագիրն անհեթեթ:

21

Գարնան մարզում հոգեպարար թե որ մի կուռք սիգաճեմ
Շրթունքներին իմ մոտեցնի զինու մի թաս ծպտադեմ,
Երդվում եմ ես — և չնայած գոեհիկ է խոսքը այս —
Վատթարագույն լինեմ շնից, թե որ դրախտը հիշեմ:

در فصل بهار اگر بتی حور سرشت
یک ساغر می دهد مرا بر لب کشت
هر چند به نزد عامه این باشد زشت
سگ به ز من است اگر برم نام بهشت

22

Ինչո՞ւ երկչել եկող կյանքից, լինել մռայլ ու մտախոհ,
Հավերժական ու մշտական ոչինչ չկա երկնի ներքո:
Կարճ մի շունչ է կյանքը ունայն, քեզ այդ շունչն են տվել միայն,
Մի վախենա ապագայից ու մի ողբա անցյալը քո:

23

Անիվն այս կապույտ, երկինքն այս պայծառ,
Յուրն են մտածին մեր գանգում խելառ.
Արևը ճրագ, աշխարհը լապտեր,
Իսկ մենք շուքեր ենք, շիտթ ու շվար:

این چرخ فلک که ما در او حیرانیم
فانوس خیال از او مثالی دانیم
خورشید چراغ دان و عالم فانوس
ما چون صوریم کاندرا او شوار:

24

Եթե չեմ հղկել հնազանդությանդ զոհարը երբեք,
Եթե չեմ մաքրել փոշին մեղքերի երեսից իմ հեզ,
Բոլորից հեռո, գիտեմ կգթաս ու ինձ կներես,
Քանզի ես երբեք Երկու չեմ կոչել էությունդ Մեկ:

25

«Դրախտն, — ասին, — հուրիներով է անուշ».
Ես ասի. «Լոկ խաղողի հյութն է անուշ».
Առ Կանխիկն ու Ապառիկից ձեռ քաշիր —
Հեռվից է լոկ դիտի ձայնը անուշ...
(Թարգմ.՝ Գևորգ Էմինի¹⁶)

گویند کسان بهشت با حور خوش است
من می گویم که آب انگور خوش است
این نقد بگیر و دست از آن نسیه بدار
که آواز دهل شنیدن از دور خوش است

26

Այս աշխարհում խելոք ու լուրջ պիտի լինես,
Խելքը՝ գլխիդ և լուռումունջ պիտի լինես,
Քանի ականջ, աչք ու լեզու տեղում են դեռ,
Է՛ն գլխից կույր և համր ու խուլ պիտի լինես:
(Թարգմ.՝ Գևորգ Էմինի)

27

Աշխարհ եկա, քայց իմ գալուց այս աշխարհին ինչ օգուտ,
Անփառունակ իմ գնալուց այս աշխարհին ինչ օգուտ,
Ու ոչ ոքից չլսեցի խելքը գլխին պատասխան,
Թե իմ գալուց ու գնալուց այս աշխարհին ինչ օգուտ:
(Թարգմ.՝ Ազատ Մաթթանի¹⁷)

از آمدنم نبود گردون را سود
وز رفتن من جلال و جاهش نفزود
وز هیچ کسی نیز دو گوشم نشنود
کاین آمدن و رفتنم از بهر چه بود

28

Խորհում է մի ցեղ, թե ո՞րն է կրոն, և ո՞րն է Աստված,
Մի խումբ մտմտում, թե ինչ է հավատք և ինչ է կասկած,
Երբ, զարմանք, հանկարծ անհայտ դարանից բարձրացավ մի ձայն, —
«Ո՞վ անտեղյակներ, ճշմարիտ ուղին ո՞չ այս է, ո՞չ այն»:
(Թարգմ.՝ Հովսեփ Միրզաբանի)

قومی متفکرند اندرز ره دین
قومی به گمان فتاده در راه یقین
می ترسم از آن که بانگ آید روزی
کای بی خبران راه نه آنست و نه این

¹⁶ Օմար Խայյամ, Քաոյակներ (Գևորգ Էմինի թարգմանությամբ): Պարսկերենից տողացի թարգմանեց Արմանուշ Կոզմոյանը, 1993: (Ն. Մ.)

¹⁷ Օմար Խայյամ, Քաոյակներ, Թահդիղաթն Նազարիի հրատարակչություն, Իրան-Սպահան, րնագրից թարգմանեց Ազատ Մաթթան, 2007: (Ն. Մ.)

Օմար Խայրամի քառյակների երեք թե չորս օրինակներ ևս շուրջ 20 տարի առաջ ծախվել են Ազգային գրադարանին, որոնց նույնպես պիտի ավելացնել այս ցուցակի վրա: ԱՅՆ ԳՐԶԱԳԻՐԸ ՈՐԸ ԳՐԻ Է ԱՌԵԼ ԲՈԼՈՐ ԿԱՄ ՀԱՄԱՐՅԱ ԹԵ ԲՈԼՈՐ ԱՅՍ ԲՆԱԳՐԵՐԸ ՀԵՋՐԻ 485 ԹՎԻՑ ՄԻՆՉԵՎ 658 ԹՎԸ, ՄԻՄԻԱԿ ՀՈԳԻ Է ԵՎ ԴԵՌԵՎՍ ԿԵՆԴԱՆԻ Է:

Ճեռագիր բոլոր այս օրինակները դուրս են եկել միևնույն աշխատանոցից, որը շուրջ 20 տարի է, որ Թեհրանում հիմնվել է և ղեկավարվում է մեկ թե երկու գրչագիրների, թուղթ պատրաստողների, հնավաճառների ու միջնորդների գլխավորությամբ: Նրանք մեկ անգամ 70 հազար դոլար մի ամերիկացուց և մեկ անգամ էլ 350 հազար թուման Թեհրանի համալսարանից դրամ են կորզել և եթե նրանց գաղտնիքը չպարզվեր, դեռ շատ այդպիսի դրամներ կկորզեին միամիտներից:

Այսպիսի գրքերի կեղծարարության առաջն առնող օրենքներից ես տեղեկություն չունեմ և չգիտեմ, թե արդյո՞ք կարող են երկրի Դատախազը կամ խաբված անհատները նման գրքերի ծախողներին, գրողներին և կեղծարարներին դատի հրավիրել թե ոչ. գիտեմ միայն այն՝ որ նման զեղծումներ հսկայական վնասներ պատճառել և պատճառում են Իրանի գրականության: Երկրի մշակութային պաշտոնական հաստատությունները պարտավոր են այդ ձեռագրերի կեղծությունը պաշտոնապես և առանց այլևայլության հայտարարել և պիտի զգույշ լինեն, որ այսպիսի կեղծված ձեռագիրներ այլևս հրապարակ դուրս չգան և վաճառքի չդրվեն»:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ — «ՌԱՀՆԵՄԱՅԵ ՔԵԹԱԲ» պարբերականի («Գրքի Ուղեցույց») 1342 թվի 3-րդ համարում (1963 հունիս-հուլիս) պարսիկ նշանավոր քանասեր **Պրոֆ. Մոջթաբա Մինոպին** մի հոդված է լույս ընծայել, որից թարգմանաբար տալիս ենք հատվածներ, խնդրի վերջնական վճիռը թողնելով ապագային, երբ արևմուտքի իրանագետներն ևս իրենց վճռական կարծիքը կհայտնեն դրա վերաբերմամբ:

«Այս վերջին քսանամյակում որոշ թվով ձեռագիր մատյաններ աճուրդի են դրվել և ծախվել են հանրային գրադարաններին կամ հատուկ անձնավորությունների, հսկա արժեքով, որպես հին քնագրեր, իրենց գրառման հին թվարկությամբ, որոնք իրականում կեղծված են եղել և պատճառ են դարձել մասնագետների մոլորեցման: Այդ մատյանների շարքին են պատկանում.

1. «Քեյքաուսի Խրատագրքի» մի ձեռագիր օրինակը:
2. «Ղաթրանի Դիվանը» որ իբր թե գրվել է Անվարու ձեռքով:
3. Սահեր Էբնե Էրադի մի շարադրությունը:
4. ՕՄԱՐ ԽԱՅՅԱՄԻ ՔԱՌՅԱԿՆԵՐԻ ՄԻ ՕՐԻՆԱԿԸ, ԹՎԱԳՐՎԱԾ 658 ՀԵՋՐԻ, որ գտնվում էր Չեստեր Բիթթիի գրադարանում և որը հրատարակել է Պրոֆ. Արքերին:
5. ՕՄԱՐ ԽԱՅՅԱՄԻ ՔԱՌՅԱԿՆԵՐԻ ՄԻ ՕՐԻՆԱԿԸ, ՈՐ ԿՐՈՒՄ Է ՀԵՋՐԻ 604 ԹՎԱԿԱՆԸ ԵՎ ԳՏՆՎՈՒՄ Է ՔԵՄԲՐԻՋԻ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ. ԴԱ ՆԱԽԱՊԵՍ ՊԱՏԿԱՆՈՒՄ ԷՐ ՀԱՆԳՈՒՑՅԱԼ ԱԲԲԱՍ ԷՂԲԱԼԻՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ ԷՐ «ՅԱԴԵԳԱՐ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ԷՋԵՐՈՒՄ: ԴՐԱ ՎՐԱՅԻՑ ՆԿԱՐԱՀԱՆՎԱԾ ՄԻ

ՕՐԻՆԱԿ ՏՊԱԳՐՎԵԼ Է ՖՐԱՆՍԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՄԲ ՓԻԵՌ ՓԱՍԿԱԼԻ ՄԻՋՈՑՈՎ ԵՎ ՆՈՒՅՆՊԵՍ ԴՐԱ ԼՈՒՍԱՆԿԱՐԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ Է ՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ, ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄԻԱՄԻՆ: ՎԵՐՋԵՐՍ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳԵՐՄԱՆՈՒՅՈՒՄ ԵՎՍ ԴԱ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ԵՎ ԹԱՐԳՄԱՆՎԵԼ Է ԳԵՐՄԱՆԵՐԵՆԻ:

6. ՕՄԱՐ ԽԱՅՅԱՄԻ ՔԱՌՅԱԿՆԵՐԻ մի ուրիշ օրինակը, որ գտնվում է Պր. Արքաս Մագդալի գրադարանում, Հեջրի 654 թվագրությամբ, որի լուսանկարը տեսել եմ:

7. ՕՄԱՐ ԽԱՅՅԱՄԻ ՔԱՌՅԱԿՆԵՐԻ մի ուրիշ ձեռագիր օրինակը, որը գտնվում է Ամերիկացի մի հնավաճառի մոտ և որի մեկ էջի լուսանկարը պատեհություն էմ ունեցել տեսնելու:

8. «Մեզգի Դիվանի» մի օրինակը, որը ներկայացված էր որպես «քանաստեղծի ժամանակակից» գրչագրություն և որը գնվելուց և Ամերիկա տարվելուց հետո՝ պարզվեց, որ կեղծված է:

9. Էբնե Սինայի «ՄԵՐԱՋ ՆԱՄԵ» մի օրինակը, Էմամ Ֆախր Ռազիի ձեռագրով և Հեջրի 584 թվագրությամբ, որ գտնվում էր Դր. Մեհդի Բայահիի գրքերի մեջ և որի լուսանկարը ես տեսել եմ:

10. Ամիր ալ-Մոմենինի (Հագրաթե Ալիի) «Մոնաջաթը»¹⁸:

ԲԱԲԱ ԹԱՀԵՐ

Բաբա Թահեր ՕՐՅԱՆԸ (Մերկը)՝ ՂԱԼԱՆԴԱՐ՝ Դարվիշների սեկտին էր պատկանում, որոնք բոլորովին հրաժարվել են աշխարհից և նրա վայելքներից, կես-խենթի և կես-սուրբի դիրք ունեն արևելյան ժողովուրդների մեջ: Այդպես էր նույնպես Համադանի Բաբա Թահեր Օրյանը, որի մասին քննադատող մի դեպք է նկարագրված Սելջուկների պատմագրության «ՌԱՀԱԹՈՒՆ-ՍՈՂՈՒՐ»-ում գրված 1202-3 թվին Ք. հ.

«Լսել եմ, երբ Սուլթան Թողրիլ քեզը հասավ Համադան, այնտեղ երեք սուրբեր կային՝ Բաբա Թահերը, Բաբա Ջաֆարը և Շեյխ Համշան: Համադանի դարպասների մոտ մի բլրակ կա, որը կոչվում է Խեզը և այդ բլրակի վրա նրանք կանգնած էին: Սուլթանի աչքը ընկավ նրանց վրա: Նա կանգնեցրեց իր զորքի առաջապահներին, իջավ ձիուց, մոտեցավ և համբուրեց նրանց ձեռքը:

Բաբա Թահերը, որ մի քիչ խենթ էր իր շարժումների մեջ, ասաց նրան. «Ով թուրք, ինչ ես ցանկանում անել Աստծո ժողովրդի հետ»: «Ինչ որ դու ինձ հրամայես», — պատասխանեց Սուլթանը: «Ավելի լավ է այն անես, ինչ հրամայում է քեզ Աստված», — պատասխանեց նրան Բաբան. «ՃՇՄԱՐՏԱԲԱՐ ԱՍՏՎԱԾ ՋՈՒԳՈՐԴԵՑ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ» (Ղորանից): Սուլթանը լացեց և ասաց. «Ես կանեմ այդ»: Բաբան բռնեց նրա ձեռքը և ասաց. «Դու կըն-

¹⁸ Օմար Խայրամի հայերեն թարգմանությունները (Ն. Մ.): Օմար Խայրամ, կյանքը և գործը և իր քառյակները, պարսկերեն քնագրերից թարգմ.՝ Լևոն Մեսրոպի, Փարիզ, տպարան Ներսես, 1923: Օմար Խայրամ, քառյակներ, թարգմ.՝ Արշակ Աթայանի, Հայպետ հրատ., Երևան, 1959:

դունեն այս նվերը ինձանից»: «Այո», — պատասխանեց նրան Սուլթանը: Բարան իր մատին ուներ կոտրված մի ԻԲԲԵՂԻ օղակ (իբրեղը նույնն է, ինչ այժմյան ԱՅՏԱԲԵՆ, ԼՈՒԼԵԻՆԸ), որով նա երկար տարիներ իր վագումներն էր կատարել: Նա վերցրեց այդ և դրեց Սուլթանի մատին, ասելով. «Եվ այսպիսով դնում եմ մատիդ վրա աշխարհի կայսրությունը: Եղի՛ր արդար»: Սուլթանը պահում էր այդ օղակը իր հուուութենների մեջ և միշտ պատերազմից առաջ մատին էր դնում:

Այսպիսի մերկ և խենթ բանաստեղծի կյանքի մասին քնականաբար մենք ոչինչ չգիտենք: Նույնիսկ նրա մահվան թվականը անհայտ է: Վերևի նկարագրված դեպքը պիտի պատահած լինի Հեջրի 447 կամ 450 թվականներին (1055-58 Ք. հ.), մինչդեռ այլ պարսիկ կենսագիրներ նրա մահվան թվականը տալիս են Հեջրի 410-ը (1019-20 Ք. հ.): Մի բան պարզ է մեզ, որ նա ապրում էր Հեջրի հինգերորդ դարում:

* * *

Բարա Թահերի քառյակները եզակի մի երևույթ են պարսկական գրականության մեջ: Նրանք գրված են «Համադանի» կամ «Լոռի» բարբառով և իրենց լեզվի պարզության, հնչեղ երաժշտության և անկեղծ զգացումների շնորհիվ մեծ ժողովրդականություն են վայելում պարսիկների մեջ: Գեղջուկների երգերում հաճախ լսվում են Բարա Թահերի քառյակները: Չնայած այդ քառյակները գրված են Լոռի բարբառով, բայց շատ մոտ լինելով խոսակցական պարսկերենին, բոլորի համար հասկանալի և մատչելի են: Բայց դժբախտաբար թարգմանության մեջ նրանց ինքնորոշ գեղեցկությունը պահպանել անկարելի է: Հայրս հավանաբար զգալով այդ դժվարությունը, նրանից միայն 16 քառյակ է թարգմանել:

Բարա Թահերի հայտնի քառյակներից թարգմանված հորս՝ Հովսեփի Միրզայանի կողմից՝

*Ով սիրտ, ով սիրտ, միթե դու
Վագր ու առյուծ ես հզոր,
Վագր ու առյուծ որ իմ դեմ
Կովի մեջ ես ամեն օր:
Թե ձեռքս ընկնես կթափեմ
Արյունը քո կենսատու,
Սիրտ իմ, սիրտ իմ, որպեսզի
Տեսնեմ ինչ գույն ունես դու:*

* * *

*Դարվիչ եմ ես ընչազորկ
Անունս է իմ դալանդար,
Ոչ տուն ունեմ և ոչ տեղ,
Եվ ոչ խարխուս, ոչ դադար:
Երբ որ ցերեկ է գալիս՝
Ընկնում եմ դաշտ ու լեռներ,*

مگر شیر و پلنگی ای دل ای دل
بمو دایم به جنگی ای دل ای دل
اگر دستم فتی خونت بریجم
بوینم تا چه رنگی ای دل ای دل

مو آن رنڈم که نامم بی قلندر
نه خان دیرم نه مان دیرم نه لنگر
چو روج آیو بگردم گرد گیتی
چو شو آیو به خشتی وانهم سر

*Գլուխս դնում մի քարի՝
Երբ որ գալիս է գիշեր:*

* * *

*Մի սիրտ ունեմ, ես մի սիրտ
Բնավ խելքի չի գալիս,
Գլխին խրատ եմ կարողում,
Ոչ մի օգուտ չի տալիս:
Տանում, տալիս եմ քամուն,
Քամին տանում չէ նրան,
Կրակի վրա եմ դնում,
Չկա ծուխի մի նշան:*

* * *

*Սրտի կակիճ, սրտի ցավ,
Ո՛հ, ինչ անկուր տառապանք,
Աչքերը հանցանք են գործում,
Սիրտն է կրում հեռուանք:
Եթե դեմքեր հրապուրիչ
Աչքը բնավ չը տեսներ,
Խեղճ սիրտն ինչպես կիմանար
Թե կան արդյոք չքնադներ:
(Թարգմ.՝ Հ. Միրզայանի)*

* * *

*Լարն իմ տխուր քնարի, գիսակն է քո բուրալից,
Ինչ ես արդյոք պահանջում, իմ տառապյալ վիճակից:
Դու որ ինձ հեռ, սիրուիս, ընկեր լինել չես ուզում,
Ամեն գիշեր էլ ինչո՞ւ գալիս ես ինձ երազում:
(Թարգմ.՝ Հ. Միրզայանի)¹⁹*

* * *

*Աչքս ու սիրտս մեղքի մեջ են զգում ինձ,
Աչքս տեսնում, սիրտս տանջվում է թախծից,*

دلی دیرم که بهبودش نمی‌بو
سختها می‌کرم سودش نمی‌بو
به بادش می‌دهم نه‌ش می‌برد باد
در آتش می‌نهم دودش نمی‌بو

الهی دل بلا بی دل بلا بی
گنه چشمان کره دل مبتلا بی
اگر چشمان نکردی دیده بانی
چه داند دل که خوبان در کجایی

دو زلفانت بود تار ربایم
چه می‌خواهی ازین حال خرابم
تو که با مو سر یاری نداری
چرا هر نیمه شو آیی بخوابم

ز دست دیده و دل هر دو فریاد
که هر چه دیده بیند دل کند یاد

¹⁹ ՕՄԱՐ ԽԱՅՅԱՄ, ԲԱԲԱ ԹԱՎԵՐ ԵՎ ՋԱՆԱՋԱՆ, Թարգմ.՝ բնագրից ՀՈՎՍԵՓ Զ. ՄԻՐԶԱՅԱՆՑ, Տպ. ընկ. «ՄՈՂԵՐՆ», Թեհրան, 1923: Հրատարակություն Մ. ՄԱՐԹԻՆ: (Ն. Մ.)

Բարա Թահերն Օրյանի Համադանի քառյակների և գազելների թարգմանությունները՝ Ռուբեն Արրահամյանի, Թեհրան, 1930: (Ն. Մ.)

Բարա Թահերի «Դիվան»-ի ամբողջական թարգմանություն՝ Սիմեոն Բարումյանի, Թեհրան, 1945, հրատարակություն Չարմահալ գավառի Հայ ուսումնասիրաց միության, Թեհրանի մասնաճյուղի: (Ն. Մ.)

*Մի սուր սարքեմ, խրեմ անկուշտ աչքիս մեջ,
Սիրտս ազատվի նրա նսալած-տեսածից:
(Թարգմ.՝ Սիրվա Կապուտիկյանի)*

* * *

*Ա՛խ, առանց քեզ բարձր օձ է իմ աչքին,
Օրը՝ գիշեր, խինդը խոց է իմ աչքին.
Թե առանց քեզ պարտեզ ելնեմ շրջելու՝
Վարդանոցը փշանոց է իմ աչքին:
(Թարգմ.՝ Սիրվա Կապուտիկյանի)²⁰*

Բարա Թահերի երկու գեղեցիկ քառյակների թարգմանությունը ես չեմ գտել հորս ժողովածուի մեջ և այստեղ տալիս եմ այդ քառյակների թարգմանությունը, աշխատելով պահել Բարա Թահերի չափը, հանգը և ոգին:

*Սիրտս զար է, սիրտս զար է, սիրտս զար,
Բժիշկ քերեք այս իմ սրտին անի ճար,
Երբ բժիշկը տեսնի խենթին ցավազար,
Դարման կանի այրված սրտիս անպատճառ:*

* * *

*Ելնեմ, երթամ ու աշխարհից այս հեռանամ,
Ելնեմ, երթամ, Չին-մաչինից հեռու երթամ,
Երբ Չին հասնեմ, սիրելիանիս նամակ գրեմ,
Թե էս հեռուն բանկ է, թե էլ հեռու երթամ²¹:*

ԱՐՈՒ ՍԱԻԴԵ ԱԲԵԼ ԽԵՅԲ

Արու Սաիդե Աբել Խեյրը երրորդն է իր ժամանակի մեծագույն քառյակագիրներից: Նրա անունը Խայյամի և Բարա Թահերի պես հանրաճանաչ չէ, քանի որ նրան նյութ են ծառայել միայն միստիկ, Սուֆիական բովանդակությամբ մտքեր, որոնց հաճախ շատ գեղեցիկ կերպով արտահայտել է քառյակների մեջ:

Արու Սաիդը ծնվել է Խավարան շրջանի Մահնա գյուղում 967 թվին և մահացել է 1049 թվին, 82 տարեկան հասակում: Նա իր օրվա մեծագույն միստիկներից է և Սուրբի հոչակ է վայելել:

Ասում են, որ Արու Սաիդը կենդանության ժամանակ հանդիպել է հոչակավոր Արու-Ալի Սինային, և երբ նրանք բաժանվել են, Արու Սաիդը ասել է. «Ինչ ես տեսնում եմ՝ նա գիտի», մինչդեռ Արու-Ալի Սինան ասել է. «Ինչ ես գիտեմ՝ նա տեսնում է»:

²⁰ Կոզմոյան Ա., «Մարգարտաշար», թարգմ.՝ Սիրվա Կապուտիկյանի, Երևան, 1990:
²¹ ԲԱԲԱ ԹԱՇԵՐ ՕՐՑԱՆԵ ՀԱՄԱԴԱՆԻ, Թարգմանություն՝ ԶՈՐԻԿ ՄԻՐՋԱՅԱՆԻ, Տպարան «ՉԱՓՔԱՐ», Թեհրան, 1954:

*بسازم خنجرى نيشش ز يولا
زمن بر ديده تا دل گردد آزاد*

*بيته بالين سيه مار به چشمم
روح روشن شو تار به چشمم
بيته اى نو گل باغ اميدم
گلستان سربسر خار به چشمم*

*دلیم زار و دلیم زار و دلیم زار
طبییم آورید دردم کیرید چار
طبییم چون پوینه بزموى زار
کزہ درمون دردم را به ناچار*

*بشم واشم ازین عالم بدر شم
بشم از چین و ما چین دورتر شم
بشم از حاجیان حج بیرسم
که این دورى بسه یا دورتر شم*

Արու Սաիդի կյանքում մեծ դեպքեր չեն պատահել և նա իր 80 տարիները անց է կացրել կատարյալ խաղաղության մեջ, քանի որ նա ապրում էր «Հոգիների Աշխարհում» և ոչ թե «Հորիզոնների Աշխարհում» — ինչպես այդ ասում են Սուֆիները:

Շատ առասպելներ, առակներ և ասացվածքներ են մնացել Արու Սաիդից, որոնք հետագայում հավաքել են նրա հետևորդները և առանձին հատոր կազմել նրանցից:

Հատկապես գեղեցիկ է հետևյալ պատմությունը: Մի օր մարդիկ պատմում են Արու Սաիդին, թե ինչպես մի արաբ մարդ քայլել է ջրի վրա, ինչպես մի ուրիշը թռել է օդում և թե ինչպես մի երրորդը կարողացել է մի ակնթարթում մի քաղաքից տեղափոխվել մի այլ քաղաք: Արու Սաիդը լսում է այդ հրաշքների պատմությունը և պատասխանում.

— Գորտը կարող է լողալ ջրում և ծիծեռնակը սահել ջրի վրա, ագռավը կարող է ձևոքել օդը և Սատանան կարող է մի ակնթարթում Արևելքից ձախրել Արևմուտք: Դրանք կարևոր չեն: Նա է մարդը, որը ապրում է իր նմանների մեջ, առնում և ծախում է, ամուսնանում է, ընկերակցում է ուրիշներին, բայց ոչ մի վայրկյան չի մոռանում Տիրոջը:

Մի անգամ նրանից խնդրում են, որ բացատրի Սուֆիզմը: Նա ասում է.

— Հանիր ինչ որ ունես քո գլխից (ցանկությունները), տուր ուրիշներին ինչ որ ունես ձեռքիդ մեջ և մի վախենա ոչինչից:

Արու Սաիդից շատ դժվար է ընտրություն կատարել, թարգմանության համար: Հաճախ նա շատ գեղեցիկ քառյակներ ունի, որոնց գեղեցկությունը նրանց կառուցվածքի մեջ է, մինչդեռ միտքը սուֆիական, կրոնական և միստիկ է, որը չի կարող հետաքրքրել ներկա ընթերցողին:

Ես կարողացել եմ միայն մի քանի քառյակ նրանից ընտրել, բայց նախ և առաջ ուզում եմ ներկայացնել այն մի հատիկ քառյակը, որը թարգմանել է հայրս.

*Մի տանջիր մի սիրտ, որի մեջ դու ես հոգի կենսատու,
Եվ որի համար հայտնի ու թաքուն՝ պաշտելին ես դու,
Քո անզուր Վարքից, շատ եմ վախենում, անվախ գեղանիս,
Որ սիրտս հանկարծ արյան ծով դառնա և մեջը լինիս:*

Պարսկերեն քառյակի ձևը պահպանելու դժվարությունը միայն նա կհասկանա, ով մի անգամ գոնե փորձած լինի թարգմանել: Ես շատ եմ փորձել այդ բանը անել և հազվագյուտ դեպքերում է միայն ինձ հաջողվել: Բանաստեղծության միտքը և գեղեցկությունը պահպանելու համար շատ պարագաներում ստիպված եմ եղել հրաժարվել պարսկերեն քառյակի հարազատ ձևը պահպանել և անցել եմ հորս որդեգրած ազատ ձևին:

Քառյակի կառուցվածքը աշխատել եմ պահել այս մի քանիսի մեջ:

*Այս իմ սիրտը ծնվել է, որ քո վշտին բուն լինի, ըստ ցանկության քո ցավերին տուն լինի,
Այս հողեղեն մարմինը քո ցավերին տուն լինի,* دل کیست که گویم از برای غم تست
یا آنکه حریم تن سزای غم تست

Շնորհ է արել վիշտը քո փոքրիկ սրտիս անկասկած,
Թե չէ վիշտդ պարփակող սիրտը՝ պիտ անհուն լինի:

لطيفست که ميکند غمت با دل من
ورنه دل تنگ من چه جای غم تست

* * *

Ասի՝ աչքս — ասաց ճամփով նրան պահիր,
Զիգարն ասի — ասաց բոցով նրան դադիր,
Ասի՝ սիրտս — ասաց սրտում դու հնչ ունես,
Ասի՝ վիշտդ — ասաց նազով նրան պահիր:

گفتم: چشمم، گفت: به راهش می دار
گفتم: جگر م ، گفت: پُر آهش می دار
گفتم که: دلم، گفت: چه داری در دل؟
گفتم: غم تو ، گفت: نگاهش می دار

* * *

Սրտումս ես — թե չէ նրան կտանջեի,
Աչքումս ես — թե չէ նրան կարյունեի,
Հոգումս ես — թե չէ հոգիս հազար ճիգով
Մարմնիս միջից ես անվարան կաքսորեի:

* * *

Մենք քո ցավից մի սիրտ կոտրած ունենք հիմա,
Արնոտ մի աչք դեմքիդ կարած ունենք հիմա,
Ասիր՝ կոտրած սրտով մարդուն մոտ ես դու միշտ,
Մենք էլ մի սիրտ նոր — կոտրված ունենք հիմա:

* * *

Վշտիցը քո կտրվել է սիրտը մեր,
Մենք քո ցավից դարձանք անտուն և անտեր,
Ասիր, որ սիրտ կոտրվածին մոտ ես դու,
Այս մեր սիրտը կոտրվել է, ո՞ր ես Տեր:

Հաջորդ չորս քառյակները ազատ թարգմանություններ են:

* * *

Մարդու հողը սիրո ցողով թրծեցին,
Սիրտն աշխարհի սիրո դադով այրեցին,
Սիրո դանակ զարկին հոգու երակին՝
Արյուն կաթեց — անունը ՄԻՐՏ դրեցին:

از شبنم عشق خاک آدم گل شد
شوری برخواست فتنه ای حاصل شد
سر نشتر عشق بر رگ روح زدند
یک قطره خون چکید و نامش دل شد

* * *

Այսօր ես եմ ու սիրուհիս նոճեկազմ,
Շաքար մի շուրթ, գինի մի լուրթ ու մի սագ,
Թո՛ղ հնձ Մուրը, ես չեմ ուզում բոցը քո,
Ո՛վ Առավոտ, հազար ժպիտ թե հնձ տաս:

* * *

Սիրո ճամփան միայն գիտե սիրտը այս խեղճ
Ու քո սիրո ցավն է վառել հոգիս անմեղ,
Սերդ հոգուս անապատում աղ է շաղել,
Որ ուրիշի սեր չծլի երբեք այնտեղ:

دل جز ره عشق تو نیوید هرگز
جان جز سخن عشق نگوید هرگز
صحرای دلم عشق تو شورستان کرد
تا مهر کسی در آن نروید هرگز

* * *

Կհառաչեմ, բայց շրթերիս կնիք-կողպեք կկախեմ,
Օտարների շրթունքները քո անունով կդաղեմ,
Սիրով այրված սրտիցը իմ կզողանամ վիշտը քո,
Եվ արցունքը արյուն աչքիս՝ թեղանիքում կդաղեմ:

ՇԵՅԽ ԽԱՋԵՇ ԱԲԴՈԼԼԱՇ ԱՆՍԱՐԻ

Շեյխ Անսարին այս շրջանի չորրորդ մեծ քառյակագիրն է, որի նյութը շատ կրոնական և սուֆիական է, հետևաբար նրա քառյակների ընտրությունն ավելի ևս սահմանափակ է, քան Արու Սաիդինը:

Շեյխ Անսարին ծնվել է Հարաթում, 1006 թվին Ք. հ. և մահացել է 1088 թվականին: Նրա սուֆիական գրվածքները շատ են, բայց նա հայտնի է իր ՌՈՒԲԱՅԱԹՈՎ (քառյակներով) և ՄՈՆԱՋԱԹՈՎ (աղերսներով): Այս վերջինը իր կառուցվածքով և նյութով հիշեցնում է մեր Նարեկացուն, բայց Նարեկացին ավելի ուժ և խորք ունի, քան Շեյխ Անսարին: Այդ «Աղերսները» շատ ու քիչ միանման են և բավական է մի փոքրիկ օրինակ տալ, ընդհանուրի պատկերը ստանալու համար²²:

«Ո՛վ Աստված: Երկու կտոր երկաթ վերցնում են միևնույն տեղից, մեկը դառնում է պայտ և մյուսը Արքայական հայելի: Ո՛վ Աստված: Քանի որ դու ունեիր Բաժանման Բոցը, ինչո՞ւ ստեղծեցիր Բոցը Գեհենի: Ո՛վ Աստված: Ես կարծում էի, որ ճանաչում եմ քեզ, բայց այժմ ես ջուրն եմ նետել ցնորամտությունը: Ո՛վ Աստված, ես անօգնական եմ և շվարած: Ոչ ունեցածս գիտեմ և ոչ գիտցածս ունեմ»:

Ինչ վերաբերում է Շեյխ Անսարու քառյակներին, ես միայն երկու հատին եմ հանդիպել, որ կարելի է թարգմանել և սրանցից մեկը հայտնի է և գտնվում է պարսկերեն քանաստեղծությունների համարյա թե բոլոր ժողովածուներում:

Ամոթ է, որ քեզ դու մեծ համարես
Ու բարձր դասես քեզ օտարներից,
Եղիր քիբիդ պես՝ աչքերիդ համեստ,
Տեսնես բոլորին բացի քեզանից:

Մի ուրիշ քառյակն էլ հետևյալն է.

²² Նարեկացու «Մատյան ողբերգություն»-ը պարսկերենով. թարգմ.՝ Ազատ Մաթյանի, «Նաշր Ֆարդա», Սպահան, 2001: (Ն. Մ.)

Պետր չէ գինի, ես հարբած եմ Քեզանով,
Քեզ փնտրում են ճամփաներով անհամար,
Փնտրում եմ քեզ Տաճարներում Հերթանու,
Բնջ է Քարան կամ Տաճարը ինձ համար:

مست تو ام از جُرعه و جام آزادم
مُرغ توام از دانه و دام آزادم
مقصود من از کعبه و بتخانه تویی
ورنه من ازین هر دو مقام آزادم

ՍՈՒԼԹԱՆ ՍԱՆՋԱՐԻ ՇՐՋԱՆԸ
1092-1157 ԹԻՎԸ Ք. Խ. ԸՆԴԱՄԵՆԸ 65 ՏԱՐԻ

Այս 65 տարվա շրջանը սկսվում է Սուլթան Մալեքշահի մահվամբ և վերջանում է Անրա տղայի՝ Սուլթան Սանջարիի մահվամբ: Իրականում սա շարունակությունն է նախորդ գլխի և ներկայացնում է Սելջուկների թագավորության վերջին կիսադարը, որին հետևեց Մոնղոլների սուկայի նախճիրը:

Այս կարճ ժամանակում էր, որ ծնվեցին Շեյխ Ֆարիդ օղ Դին Աթթարը (1120 թ.) և Նիզամին Գանջավին (1140 թ.): Մեռան Օմար Խայյամը (1121-22 Ք. Խ.), Ազրադին (1130 թ.), Մասուդ Սաադը (1131 թ.), Ադիբե Սաբերը (1142-44 թ.), Մոեզզին (1147-48 թ.) և Ամադե Բոխարային (1148-49 թ.): Ապրեցին Սանաին, Նեզամի Արուզի Սամարղանդին, Անվարին, Ռաշիդ-օղ-Դին Վաթվաթը, Սուզանին և բազմաթիվ այլ ավելի փոքր բանաստեղծներ:

Այս շրջանը կարելի է (Չրչիլյան արտահայտությամբ) համարել «սկիզբը վերջի», քանի որ Սանջարի մահվանից և մոնղոլների արշավանքից հետո այլևս ոտքի չկանգնեց Արևելյան Իրանը, Բոխարան, Սամարղանդը, Ղազնան, Խորասանը իր փառահեղ քաղաքներով: Արվեստը և բանաստեղծությունը հատկապես դեպի հարավ և հարավարևմտյան Պարսկաստանը քաշվեց և սրանից հետո այլևս Շիրազն էր, որ գոհարի հանքը դարձավ Իրանյան բանաստեղծության և մեծ մարդիկ ծնվեցին և ապրեցին Սֆահանում, Շիրազում, Քերմանում:

Արևելյան Իրանի ահա այս վերջին և ամենահարուստ շրջաններից մեկն է, որ սկսում ենք, քիչ ի շատն պահպանելով Բրաունի ժամանակագրական դասավորումը:

ԻՐԱՆԻ 11-ՐԴ ԵՎ 12-ՐԴ ԴԱՐՈՒ ԳՐԱԿԱՆ ՈՍԿԵԴԱՐԸ

ՍԱՆԱԻ ՂԱԶՆԱՎԻ

Տաքիմ Աբուլմաջոհ-Մաջոուդ Էրնե Ադնամ ՍԱՆԱԻՆ ծնվել է Ղազնայում Հեջրի 5-րդ դարի առաջին կեսում, հավանաբար շուրջ 463 (Ք. Խ. 1071) թվին, եթե միայն նրա մահվան թվականը ընդունելու լինենք Հեջրի 525 (Ք. Խ. 1131) թիվը, որը վերջնականապես փաստված չէ դեռևս:

Երիտասարդ հասակում Սանաին գովերգու մի բանաստեղծ էր նախ՝ Սուլթան Մասուդ Ղազնավու և ապա Բահրամշահի (1117-1157) արքունիքներում և այդ շրջանից մեզ հասել են բազմաթիվ քերթվածներ, որոնք գրված են Օնսորու և Ֆարրոխու անմիջական ազդեցության տակ: Բայց շուտով Սանաին հեռանում է Ղազնայից, թափառում է Խորասանի գանազան շրջաններում և մոտից ծանոթանում է ժամանակի խորհրդապաշտ և պանթեիստ դարվիշների վարդապետության: Խորապես ազդվելով նրանց ուսուցմունքներից, Սանաին հոգեպես վերափոխվում և այս շրջանից սկսվում է նրա ճշմարիտ վերելքը գրական մարզում, որը անջնջելի հետքեր է թողել Իրանի հետագա ամբողջ գրականության վրա: Իր բանաստեղծությունների սովոր ժողովածուից (դիվանից) բացի, նա գրում է 7 խորհրդապաշտ — աստվածաբանական — այլեգորիկ պոեմաներ, որոնք ներշնչման անսպառ աղբյուր հանդիսացան պարսիկ բազմաթիվ բանաստեղծների, որոնց թվում տեսնում ենք այնպիսի մեծություններ, ինչպիսիքն էին Աթթարը, Ջալալեդդին Ռումին, Խաղանին և Նեզամի Գանջավին:

Սանաին մեռել է Ղազնայում շուրջ 62 տարեկան հասակում: Նրա մահվան ճշգրիտ թվականը հայտնի չէ: Նրա ամենամոտ աշակերտը, Ալի էրն ար-Ռոքքան այդ թիվը արձանագրել է Կիրակի, 11 Շաբան 525 (Հուլիս 9, 1131), մինչդեռ տարբեր սկզբնաղբյուրներում հիշված են բազմաթիվ այլ թվականներ, որոնց մեջ 68 տարվա տարբերություն կարելի է գտնել: Այդ թվականների մեջ ուշադրության արժանի են միայն 525, 535 և 545 թվականները, որոնցից յուրաքանչյուրը իր համոզված պաշտպաններն ունի:

Սանաու կյանքի մանրամասնություններից քիչ բան է մեզ հայտնի: Նրա սեփական հիշատակություններից կարելի է հետևցնել, որ շուրջ 1105 թվին նա ճամփորդել է Բալխ, Սարախս, Հարաթ և Նեշաբուր: Բալխում նա գրել է իր երգիծական «Քարնամեյե Բալխ» կամ «Հերոսերգություն Բալխի» պոեման: Այստեղ է սկսվում նաև նրա հոգեկան քեկումը և նա վերջնականապես հրաժարվելով արքունական շվայտ կյանքից՝ նվիրվում է խորհրդապաշտության և իր ստեղծագործություններ-

րին: Բայիսից Սանաին ուխտի է գնում Մաքքե, որից հետո նա վերադառնում և հաստատվում է իր հայրենի Ղազնա քաղաքում: Այդ ժամանակ Սանաին արդեն մեծ հռչակ էր վայելում որպես առաջնակարգ բանաստեղծ և Բահրամշահը քանիցս անգամներ հրավիրում է նրան իր արքունիքը և խնդրում է նրան ծառայության մտնել որպես արքունական բանաստեղծների առաջնորդ: Բայց Սանաին հպարտորեն մերժում է ընդունել բոլոր այդ առաջարկները, չցանկանալով ծախել իր ազատությունը:

Ապրելով համեմատական մեկուսացման մեջ, շրջապատված իր աշակերտներով, Սանաին ապրում է մինչև 1131 թվականը և մեռնում է Ղազնայում, ուր նրա դամբարանը մինչև այսօր էլ ուխտավայրն է դարվիշների և միստիկների: Սանաու վերջին խոսքերը խայրամական են. մեռնելիս, նա իբր թե ասել է. «**Ով Տեր, Քո գուրջը թող լինի մեղքերիս չափանիշը**»:

Սանաին կենդանության օրոք աննախընթաց ժողովրդականություն էր վայելու ամբողջ Իրանում և հատկապես նրա ժողովրդականությունը մեծ է եղել Ադրբեյջանի և Անդր-Կովկասի բանաստեղծների մոտ: Ինչպես ասացինք, Նեզամի Գանջավին, իր իսկ խոստովանությամբ, խորապես ազդված է եղել Սանաուց: Նրա մասին սքանչացումով են գրում Անդր-Կովկասյան բանաստեղծներ Արոյ-Ալան և Մոջիբը: Խաղանին, որը հայտնի է իր դժվարահաճ ճաշակով և իր անձնական մեծության գիտակցությամբ՝ բացառիկ ակնածանք է ցուցաբերում Սանաու վերաբերմամբ և գտնվում է նրա ակնհայտ ազդեցության տակ: Պարսիկ մեծագույն միստիկ-բանաստեղծ Ջալալեդդին Ռումին, Սանաուն համարում է իր վարպետը:

Սանաու արվեստը մեծապես ազդել է պարսիկ չափածո գրականության հետագա ընթացքի վրա և զգալիորեն փոխել է նրա սովորական հունը: Իր ստեղծագործական առաջին շրջանում Սանաին հետևում էր Ղազնավյան մեծ բանաստեղծներ Օնսորուն և Ֆարրոխուն, ապա ազդվում է Մասուդ Սաադ Սավանից, որի ցրիվ բանաստեղծությունները նա առաջինն էր, որ հավաքեց մի ժողովածուի մեջ: Իր ստեղծագործության երկրորդ շրջանում, որը նրա մոտ հավանաբար սկսվել է շուրջ 60 տարեկան հասակից, նա խորանում է ինչպես պարսկերեն լեզվի, նույնպես և սուֆիական պանթեիստ վարդապետության մեջ: Այս շրջանում նրա լեզուն չափազանց բարդանում է, քանի որ արտահայտելու համար իր բազմակողմանի մտքերը, նաև չի խնայում ընթերցողին և պարսկերեն հնագույն բառերի կողքին՝ դնում է արաբերեն ամբողջ դարձվածքներ: Նրա բանաստեղծական ակնարկները, զանազան հոգեբանական և աստվածաբանական մութ կետերի արտահայտության ժամանակ, այնքան խրթին և բարդ են, որ առանց որևէ կողմնակի բացատրության՝ կը մնային անհասկանալի: Սովորական ընթերցողի համար Սանաու հասուն ոճը, բառերի ընտրովի գործածությունը, նոր բառակազմությունները, արխաիզմները և պատկերավոր արտահայտությունները՝ նրան դարձնում են դժվարհասկանալի մի բանաստեղծ, նրան դասելով միաժամանակ պարսիկ ամենամեծ բանաստեղծների շարքում: Գրականության մեջ Սանաին ունեցել է հետևորդների և ընդօրինակողների ստվար մի խմբակ, բայց ոչ ոք, ոչ նույնիսկ շատ հմուտ քերթողներ՝ կարողացել են ընդօրինակել նրան հարազատորեն կամ դույզն հաջողությամբ:

Սանաու թողած ազդեցության հոռի կողմը կայանում է նրանում, որ պարսիկ խորհրդապաշտ բանաստեղծների բազմությունը — բացառությամբ մի քանի ակնհայտ մեծությունների — հետագան մինչ այդ ընդունված պարզունակ գրելակերպից և խրթին ոճաբանություն մտցրեցին քերթողության մեջ, որը երբեմն հասավ արտառոց չափազանցությունների:

ՍԱՆԱՌԻ ԴԻՎԱՆԸ — Սանաու «Դիվանի» վերջին և ստուգված հրատարակությունը մենք պարտական ենք պարսիկ բանասեր Մոդարրես Ռազավուն, որը այդ լույս ընծայեց 1320 թվին (1941) Թեհրանում, համեմատության դնելով յոթ հին ձեռագիր մատյաններ: Հնագույն ձեռագիր մատյանը գտնվում է այժմ Թեհրանի Ազգային Գրադարանում. դա գրվել է կամ Սանաու կենդանության օրոք, կամ նրա մահվանից անմիջապես հետո: Այս Դիվանը բաժանված է յոթ գլուխների, որոնց մեջ կարող ենք հանդիպել այնպիսի վերտառությունների, ինչպես՝ ճգնավորական, դարվիշական, գովասանական, սիրային, երգիծական և այլն: Նա գրել է նաև քառյակներ, որոնց մեջ գործածել է ժողովրդական լեզու, ինչպես դա ընդունված էր ժամանակին:

Նրա «Դիվանից» պատահական օրինակներ են հետևյալ հատվածները.

*Ով Մուսուլմաններ, սիրելու համար ցավ պիտի քաշել,
Տղամարդ է պետք, որ կարողանա դիմանալ ցավին.
Ասում եք որ կան գինետան խորշում այդպիսի մարդիկ,
Ո՛ր են այդ մարդիկ, որ ցավս պատմեն իմ Սիրեկանին:*

* * *

*Սիրահարված եմ, գինով լվացեք վշտերս անհուն,
Հոգին իմ այսօր պայթում է, Սադի, ցավից անհատնում.
Այս մեր օրերում արգիլված է մեզ մոտենալ գինուն
Որպեսզի ամեն մի ձեռք անմաքուր՝ բաժակ չվերցնի:*

* * *

*Ոչ մի տառապանք սիրո ցավի պես չկա աշխարհում, چون درد عاشقی به جهان هیچ درد نیست
Թե որ չես սիրել՝ հոգիդ չի թրծվել աշխարհի բովում. تا درد عاشقی نجشد مرد مرد نیست
Սերը ծնվում է ինչպես նազաշատ ժպիտ ու գորով آغاز عشق یک نظرش با حلاوتست
Ու վերջանում է մի բուռ մոխրացած սրտերի փոշով: انجام عشق جز غم و جز آه سرد نیست*

* * *

*Այս փոքր սրտին, մարդու կրծքում
Սերն է պահում կենդանի
Մեռած սիրտ է այն սիրտը որ
Սիրահարված չլինի:*

* * *

Ոչ փող ունենք, ոչ սիրտ ունենք,
Ոչ սիրուհի գեղեցիկ,
Ասեք խնդրեմ, ինչ գործ ունենք
Այս աշխարհում անցողիկ:

نه سيم نه دل نه يار داريم
پس ما بجهان چكار داريم

* * *

Ինչ սրտի մեջ որ բուն դնես՝ կը քանդես,
Դու չես թողնում որ քո տունը շեն մնա.
Հորդ տունը թող շեն լինի, սիրուհիս,
Այս սրտիս պես, որ քանդել ես անխնայ:

ويران کنی آن دل که در او سازی منزل
هرگز نگذاری که بود منزلت آباد
آن منزل تو گشته ز آشوب تو ویران
آن شهر کز و خواستی آباد همی باد

Գինու և հարբեցողության դեմ Սանաին բազմաթիվ քերթվածներ ունի, որոնցից ամենաընդհանրացածը հետևյալն է.

Ասա ինձ ինչո՞ւ խմում ես մի քան՝ որ այդ խմելով
Նոճին քեզ եղեզ և թույլ եղեզը՝ նոճի երևա.
Թե փող շռայլես ու ժպտաս մարդկանց — «Գինին է» — կասեն,
Թե որ հայհոյես՝ կասեն — «Գինին չէ, դա մեղքն է իրա»:

Հետևյալ հատվածը թարգմանել և հրատարակել է հանգուցյալ հայրս «Օմար Խայյամի» հատորին հավելված «Ջանազան» բաժնում.

Ոչ այն քախտն ունեմ, որ ինձ սիրուհիս դառնա կարեկից,
Ոչ այն խելքն ունեմ, որ հեռու կենամ սիրո փտանգից,
Ոչ այն ձեռքն ունեմ, որ մղեմ կոխվ ճակատագրի դեմ,
Եվ ոչ ոտք ունեմ, որ ինձ փրկելով մեջտեղից փախչեմ:

Սանաու Դիվանում գտնվող գեղեցիկ գազելներից մեկն է հետևյալը, որ տալիս ենք ստորև աշխատելով պահպանել բնագրի հանգավորումը.

Առ սիրտս այս, ով Սիրեկան, բարի գիշեր, գնում եմ ես,
Քոնն է սրտիս սերն անասանան, բարի գիշեր, գնում եմ ես,
Եթե նորից քեզ չտեսնեմ, պատիժն է դա մուրացիկիս,
Թող համբուրեմ շուրթդ շուշան, բարի գիշեր, գնում եմ ես:

Ով իմ չքնաղ գեղեցկուհի, սև վարսերով ու լուսերես,
Մթազնեցիր դու կյանքը իմ, բարի գիշեր, գնում եմ ես,
Դեմքդ լույսն է իմ բազմահույս, վարսդ՝ ցավը հուսալքման,
Այդ երկուսն էլ տանջում են մեզ, բարի գիշեր, գնում եմ ես:

Բոց ու ջրի եզրին շվար, մոլորվել եմ ես հողեպես,
Աչքիս արցունք, սրտիս կրակ՝ բարի գիշեր, գնում եմ ես:

ترا دل دادم ای دلبر شبت خوش باد من رفتم
تو دانی با دل غمخور شبت خوش باد من رفتم
اگر وصلت بگشت از من روا دارم روا دارم
گرفتم هجرت اندر بر شبت خوش باد من رفتم
بیردی نور روز و شب بدان زلف و رخ زیبا
زهی جادو زهی دلبر شبت خوش باد من رفتم
به چهره اصل ایمانی به زلفین مایه کفری
ز جور هر دو آفتگر شبت خوش باد من رفتم
میان آتش و آبم ازین معنی مرا بینی
لبان خشک و چشم تر شبت خوش باد من رفتم

Սանաին չի թաքցնում իր արհամարհանքը դեպի թուրք ցեղը, որից և սերվում էր իշխանական տոհմը.

Դժոխք գնալը գիտունի համար դժվար է նույնքան՝
Որքան որ թուրքին տանեն մի հանդես երաժշտական:

Կամ՝

Չենք սպասում քեզնից որ գաս մեզ այցի,
Չքնաղ սիրեկան,
Այդ գեղեցկությամբ ու շնորհքով հանդերձ՝
Թ՛ուրք ես դավաճան:

Սանաին հորինել է նաև հաճախ, հանպատրաստից քայակներ, որոնք երբեմն տարբեր փոփոխակներով կրկնվում են նրա Դիվանի մեջ: Այդպիսի հաջողած մի հատված է հետևյալը.

Կիսաբաց դրան ձողերի միջից խոսում է ինձ հետ
Չքնաղ սիրուհիս և ես փողոցում կանգնել եմ շվար.
Այնպես է շողում մի հատիկ կուրքիս դեմքը լուսավառ՝
Կասես մի հատիկ լուսնից ցայտում են գիսատողներ հազար:

Սանաին ունի նաև խայյամական մի քանի քայակներ և չնայած դրանց միտքը և պատկերները համարյա նույնն են ինչ խայյամինը, բայց Սանաուն պակասում է խայյամին հատուկ արտահայտության նրբությունը և լեզվի ճկունությունը:

Ամեն մի հյուլնն որ հողի վրա տեսնում ես հիմա
Դա դեմքն է եղել չքնաղ մի կույսի արևանման.
Այդքան անտարբեր մի թափահարիք փոշին քո փեշի,
Քանզի չքացած մի գեղեցկուհու դեմքն է անպայման:

Կամ՝

Ծննդյան օրից բազմապատկվեցին ցավերը մարմնիս,
Իմ կյանքը եղավ հարատևորեն տանջանք ու թախիծ.
Գնալու վախից սարսափի մեջ եմ ես օր ու գիշեր,
Ինչ տեսանք գալուց և ինչ կը տեսնենք այժմ՝ զնայիս:

Այս վերջին հատվածն էլ զուտ սուֆիական բնույթ ունի.

Քանի ոտքի ես՝ ընկած հարբածին դու չես հասկանա,
Քանի գերին ես մարմնիդ՝ ասողերին չես հասնի բնավ,
Քանի կյանք չտաս դու սիրո ճամփին բոց ու ջրի պես
Եվ չանձանաս՝ չես հասնի երբեք էությանն Անբավ:

ՍԱՆԱՌԻ ՊՈԵՄԱՆԵՐԸ. Սանահն 7 պոեմա ունի, որոնցից երկուսը հատկապես մեծ համբավ են վայելում և խորը ազդեցություն են թողել Արևելքի գրականության վրա: Այդ երկու պոեմաներից գատ, այստեղ պիտի հիշենք Սանաու երգիծական մի երկը, «Բալխ-Քաղաքի Հերոսերգությունը», որը իր տեսակի մեջ եզակի է և ուր Սանահն ազատորեն ծաղրում է Բալխի մեծատուններին և կառավարական պաշտոնեությունը: Այդ խավը նա ծաղրական ձևով անվանում է «Գործիչների Դասակարգը», որը ժողովրդի բերնում համարյա միշտ արհամարհական արտահայտություն է եղել: Այս պոեման կարճ է, պարունակում է շուրջ 500 տուն ոտանավոր և հատկապես գրված է դիմակազերծելու համար իրեն շատ կարևոր համարող «գործիչների» այդ զեղծարար, բարոյապես ընկած և պնակալեզ խավին:

Սանաու երկրորդական պոեմաների շարքում պիտի հիշատակել «ԹԱՐԻՂ ԱԹ-ԹԱՀՂԻՂ» կամ «Ստուգման ուղին», «ԷՇՂ ՆԱՄԵ» կամ «Սիրո Գիրքը», «ԱՂ-ՆԱՄԵ» կամ «Գիրք Բանականության», «ՂԱՐԻԲ ՆԱՄԵ» կամ «Գիրք Օտարականի»-ն:

Նրա երկու հայտնի պոեմաներն են «ՍԵՅՐ ԱԼ-ԷԲԱԴ ԷԼԱԼ ՄԱԱԴ» կամ «Աստծո Ստրուկների Ուխտագնացությունը դեպի Տարաշխարհ» և «ՀԱԴԻՂԱԹ ԱԼ-ՀԱՂԱԵՂ» կամ «Պարտեզ Ճշմարտությանց»-ը:

Մենք այստեղ երկար կանգ առնել չենք կարող այդ երկու պոեմաների վրա, որոնք մեծ հետաքրքրություն են ներկայացնում ինչպես գրական՝ նույնպես և հոգեբանական տեսակետից:

Քեմբրիջի Արաբերենի լեզվի և գրականության Պրոֆեսոր Ռ. Նիկոլսոնը «Սեյր ալ-Էբադի» արած իր մասնակի թարգմանության առաջաբանում (1944) գրում է.

«Անկարելի է կարդալ «Սեյր ալ-Էբադը» առանց հիշելու Դանտեի «Աստվածային Կատակերգությունը» հատկապես նրա Դժոխքը: Այն զուգահեռը, որ այքի է զարկում երկուսի մտքերի, սթիլի և կառուցվածքի մեջ չէր կարող պատահական լինել: Դրա մեջ կան հետաքրքիր մանրամասնություններ, որոնց նույնությունը մտածել են տալիս ընդհանուր մի աղբյուրի մասին և շեշտում են այսօրվա տարածված այն կարծիքը, ըստ որի, Դանտեն, զանազան միջոցներով և ուղիներով լայնորեն օգտվել է մահմեդական ավանդությունների մեջ պահպանված նյութերից»:

Նույն այս նմանության վրա կանգ է առնում նաև ռուս արևելագետ Ե. Է. Բերտելսը իր մի հոդվածում, որ նվիրել է այս պոեմայի քննության («Տեղեկատու Ռուսական Գիտական Կաճառի», շարք Բ. 1925, էջ 39, ռուերեն): Պրոֆ. Է.դ. Բրաունը, այս և հաջորդ պոեմայի հպանցիկ ընթերցանությունից հետո հայտարարում է. «...Իրանի քերթողության մեջ հազվագյուտ են այսպիսի չհետազոտված հանքեր, որոնք կը վարձատրեն ժրաջան հետախույզին գոհարների հարուստ մի գանձով»:

Նկատի ունենալով «Սեյր ալ-Էբադ»-ի սերտ կապը Դանտեի «Աստվածային Կատակերգության» հետ, ավելորդ չէր լինի մի քանի բառով տալ դրա բովանդակության ընդհանուր գծերը:

Նախ բանաստեղծը նկարագրում է մի քաղաք, որը պեզորիկ ձևով ներկայացնում է մարդկային մարմինը.— դրսից գեղեցիկ ու փայլուն, իսկ ներսից նեխած և ժանտահոտ — և ապա պատմում է թե ինչպես այնտեղ նա հանդիպում է «Լուսնեբլես մի ծերունու», որը «Իմացական Հոգին» է (Նաֆսե Աղիլե): Ծերունին դառնում է բանաստեղծի առաջնորդը և այստեղից սկսվում է նրանց արկածային թափառումների պատմությունը:

Ճամփորդությունը սկսվում է ցածրագույն տարրից — հողից (երկրից): Այստեղ Սանահն, իր զարհուրելի նկարագրությունների մեջ, հասնում է Դանտեի երևակայական բարձրության և թռիչքին: Խավարի և մթության մեջ սողոսկում են իծեր, հսկա ճիճուներ, կարիճներ, վայրի զագաններ: Բոլորի վրա թագավորում է Վարագր: Բանաստեղծը տեսնում է մի գլխանի, յոթ-դիմի և քառա-երախ Վիշապին. դա Ազահությունն է, որը կրծում և քրքրում է կենդանական աշխարհը: Հետո ճամփորդները հասնում են նախանձի թագավորության սահմաններին: Դա մի երկիր է, րնակված դներով, որոնց աչքը պարանոցի վրա և լեզուն սրտի մեջն է: Տափարակում, որը պարուրված է թանձր մառախուղով, վխտում են գալարվող և շփոթ էակներ: Այդ էակները, գլխի փոխարեն մի հատիկ աչք ունեն, իսկ մարմնի փոխարեն՝ միայն ձեռքեր: Տափարակի եզրին գտնվում է փրփրահոս մի գետ, որից պիտի անցնեն ճամփորդները, մաքրագործվելուց հետո: Գետից այն կողմ՝ սկսվում է Քամու թագավորությունը: Սանահն նկարագրում է, թե ինչպես կատաղի քամիների ոլորապտույտի մեջ ցաքուցրիվ ձախրում են խենթացած ոգիներ. այդ պատկերը անմիջապես հիշեցնում է Դանտեի հանդիպումը Պաոլո և Ֆրանչեսկային: Այդ հողմահալած ոգիները կապված են իրար անտեսանելի շղթաներով: Ապա ճամփորդների առաջ ցցվում է բարձրաբերձ մի բերդ, կառուցված բոցերից ու ջրերից: Նրա մեջ րնակվում են կախարդներ, ջաղուկներ, որոնց զլուխները արագորեն պատում են պարանոցի շուրջ և որոնց ոտքերը թույլ են մրջյունների ոտքերի պես: Նրանք երկր-

պագում են ոսկին և արծաթը: Այստեղ ճանապարհը պատնեշված է բոցեղեն մի սարով. դա Զայրոյթն է: Կարելի է անցնել այդ սարից միայն կլանելով այդ:

Բայց ահա սկսվում է բացվել լույսը և ճամփորդները տեսնում են երկնապաղ մի ամրոց, որի դարպասը զարդարված է գունազեղ քանդակներով: Այստեղ վերջանում է Ժամանակը և սկսվում է Հավիտենականությունը: Մտնելով դարպասից ներս՝ ճամփորդները տեսնում են մարդկանց, որոնք հավատում են տարբեր վարդապետությունների: Դրանք բոլորը չափազանց գեղադեմ պատանիներ են, կուրացած աչքերով: Հետո քանաստեղծը հանդիպում է մարդկանց, որոնք հավատում են իրենց անարատության և դրանք էակներ են, որ նայում են միմյանց, ինչպես կը նայեին հայելու մեջ. նրանց թվում է, որ գեղեցիկ են չափազանց, որ մի-մի սուլթաններ են իրենք. մինչդեռ նրանք ապրում են նեղ ու նեխված մի քանտի մեջ: Վերջապես, անցնելով մի քանի տարբեր վայրերից ևս, նրանք հասնում են Կատարյալ Լույսի աշխարհը, ուր ապրում են աշխարհի «Ճշմարիտ մուրացիկները». դա արևելյան միստիցիզմի «սրբազան խենթերն» են, դարվիչները, ճգնավորները, հոգեկան կատարելության հասած միստիկները: Սանահին ցանկանում է այստեղ կանգ առնել, բայց ծերունին հրամայում է նրան շարունակել ճամփան, հասնելու համար Ընդհանուր և Համայնապարփակ Իմացականության: Եվ վերջապես, պոեմայի վերջում, Սանահին հանդիպում է Մարգարեին, որով և վերջանում են նրա թափառումները:

Վերոհիշյալ նյութը շատ հազվագյուտ դեպքերում է օգտագործվել Արևելյան գրականության մեջ: Դրա առաջին և հնագույն օրինակը «Արտավիրապ Նամակն» է, որից հետո նորից այդ նյութի մշակման հանդիպում ենք Աբու Ալի Սինայի երևակայական պատմվածքի «Հայ Էրեն Յաղզանի» մեջ: Այդ ուղղությամբ արաբական գրականության մեջ ևս ընդօրինակություններ գոյություն ունեցել են: Դրանցից ամենահայտնին Մարգարեի Համբարձումն է: Ըստ իսպանացի արևելագետ Ասին Պալասիոսի և բազմաթիվ այլ արևելագետների, Դանտեն իր «Աստվածային Կատակերգությունը» գրելու համար մեծապես օգտվել է արևելյան այդ աղբյուրներից: Սանաու մշակած նյութը բոլոր մյուս փոփոխակներից ավելի է մոտենում Դանտեի ստեղծագործության և ունի այն առավելությունները՝ որ գրված է չափածո պոեմայի տեսքով, որի քանաստեղծական արվեստը շատ բարձր է, լեզուն կլասիկ և լաբգորիան կետ առ կետ հետևում է Արևելյան Փիլիսոփայության հասկացողություններին (Էշրադին):

Բայց Սանաու քանաստեղծական գլուխգործոցը համարվում է «Հադիդաթ Ալ-Հադաները», որը արևելագետները համարում են «սուֆիզմի հանրագիտարան»: Այս պոեման հայտնի է նույնպես «Էլյահի Նամե» կամ «Աստվածային Գիրք» անվան տակ: Սա քանաստեղծի ամենաստվար պոեման է, բաղկացած շուրջ 10 հազար տունից: Պոեմայի խրթին ոճաբանությունը և դժվարահաս ակնարկները պատճառ են դարձել որ բացատրական երկեր գրվեն դրա մասին և կցվեն բնագրին: Պոեման բաղկացած է տասը բաժիններից, որոնցից յուրաքանչյուրը հատկացված է բարոյագիտական, խորհրդապաշտական կամ աստվածաբանական տարբեր մի խնդրի բացատրության և դուրսբերված են բազմաթիվ «պատմություններ»

ժողովրդական բնույթ տալու համար բովանդակությանը: Այս պոեմայի մեջ արտահայտված մտքերը ժամանակի բարբերի, տիրող իրավակարգի, անարդարության, իշխանների ընչաքաղցության, հեշտասիրության, մարդկային էգոիզմի և նման խնդիրների շուրջ չափազանց համարձակ են, անողորմ կերպով ծաղրական և շատ ազատամիտ:

ԱԶՐԱՂԻ ՀԱՐԱՎԻ

ԱԶՐԱՂԻ Հարավին համարվում է այս շրջանի (11-րդ դարու երկրորդ կեսի) մեծ քանաստեղծներից մեկը, որի անունը կապված է Հարաթի նահանգապետ Սելջուկ Իշխան Թողան Շահի արքունիքի հետ: Իր թողած Դիվանից բացի, նա չափածոյի է վերածած եղել նաև Միջնադարյան հայտնի հեքիաթ «Սինդբադ նամեն» և պոռնոգրաֆիկ հոջակավոր մի պատմություն՝ «Ալֆին վա Շալֆին»-ն, որը, ըստ Աուֆիի վկայության, գրել է հատկապես բուժելու համար Թողան Շահի սեռային թուլությունը: Այն՝ ինչ ոչ մի թժիշկ չկարողացավ անել, քանաստեղծը արեց իր գրչով և արժանացավ մեծ փառքի և հարգանքի:

Ազրադի Հարավին որդին էր Հարաթի գրավաճառ (ՎԱՐՐԱՂ) Էսմաիլի, որի տանը, ըստ ավանդության, թաքնվել էր Ֆերդուսին, խուսափելու համար Սուլթան Մահմուդի գայրոյթից: Նրա թողած ներբողական դասիդաններից կարելի է հետևցնել, որ նա մեռել է շուրջ Հերջի 465 թվին (Ք. հ. 1072) և ոչ թե 526 կամ 537 թվին, ինչպես դա հիշատակված է սկզբնաղբյուրներում:

Ազրադիի Դիվանը տպագրվել է Թեհրանում 1956 թվին, Սաիդ Նաֆիսիի ուղղումներով և առաջաբանով:

Ինչպես ասացինք, Ազրադին մեկ հարզ էր վայելում Թողան Շահի արքունիքում, ուր նա հայտնի էր հատկապես իր անպատրաստից սրամիտ և ճաշակավոր քերթվածներով: Ահա այդպիսի մի քերթվածի կապակցությամբ է, որ Արուզի Սամարղանդին համով մի պատմություն է հիշատակում, «Չահար Մաղալեյում», որը հատկապես կը հետաքրքրի ՆԱՐՏ խաղացողներին:

Արուզին պատմում է. «Սելջուկ արքայական տոհմի բոլոր անդամները քանաստեղծության սիրահար էին, բայց նրանցից ոչ մեկը այնքան տարված չէր քանաստեղծությամբ, որքան Թողան Շահ Էրեն Ալփարսլանը և նրա կենակցությունը միշտ քանաստեղծների հետ էր... և բազմաթիվ քանաստեղծներ գտնվում էին միշտ նրա ներկայությամբ, և հաճախում էին արքունիքը և կերակրվում էին և զվարճանում: Մի օր էլ Ամիրը ՆԱՐՏ էր խաղում Ահմադ Բադիհու հետ և Ամիրը երկու ոսկր ուներ վերջին տան մեջ. ամիրը ձեռքում երկար խաղացրեց ԶԱՌԵՐԸ և հետո նետեց, որպեսզի ԶՈՖՏ-ՇԵՇ (գույգ-վեց) բերի, բայց ԶՈՖՏ-ԽԱԼ (գույգ-մեկ) բերեց: Ամիրը հույժ զայրացավ և մոայլվեց և նրա զայրոյթը այնքան խիստ էր, որ ամեն թույլ ձեռքը դաշույնին էր տանում և ներկաները դողում էին չորացած սաղարթների պես, քանի որ նա թագավոր էր և զայրացած էր և երիտասարդ էր ու տաքարյուն: Այդ ժամանակ էր, որ ԱԶՐԱՂԻՆ ոտքի ելավ, մոտեցավ նվագիչներին և նրանց ընկերակցությամբ հետևյալ երկու բեյթը արտասանեց.

ՉԿԱՐԾԵՔ ԶԱՌԸ հրամանը չանսաց մեր թագավորի
Եվ ԽԱԼ-ԽԱԼԼԵՐԸ տվեց ԶՈՅԹ-ՇԵՇԻ փոխարեն նրան.
ԶՈՅԹ-ՇԵՇԸ եկավ դեմքն հողին դարձրած, երկրպագելով,
Այդպես է կարող ծառան մոտենալ Արքային միայն:

گر شاه سه شش خواست سه یک زخم افتاد
زنهار مگو که کعبتین داد نداد
کان نقش که کرد رای شاهنشاه یاد
در خدمت شاه روی بر خاک نهاد

«...Թողան Շահը այս երկու բեյթից այնքան ուրախացավ, որ համբուրեց Ագրա-
դու աչքերը և հինգ հարյուր ոսկի դինար պահանջեց և նրա բերանը լցրեց ոսկով և
խմեց, հարբեց և ուրախացավ և այդ բոլորի պատճառը միայն այդ երկու ԲԵՅԹՆ էր,
Երկնային Բարձրալը ողորմի Երկուսի հոգիներն էլ»:

Ագրադին մեծ մասամբ ներքողական դասիդաներ է գրել և դժվար է նրանից քա-
նաստեղծական նմուշներ ընտրել թարգմանության համար: Նա ունի նաև քառյակ-
ներ և հատվածներ իր Դիվանում, որոնք բովանդակությամբ որևէ նորություն չեն
ներկայացնում և մեծ մասամբ գրված են հանպատրաստից, որևէ մի դեպքի առթիվ,
որի նշանակությունը այժմ կորել է մեզ համար:

Ահա երկու փոքրիկ հատված Ագրադու Դիվանից.

* * *

Իմ Լուսներեսը, որ իր նազանքով մրցակից չունի,
Ճակատը կնճռեց ու ինձ հրամայեց չոքել իր առաջ.
Ու կամաց-կամաց այնքան շատացան պաշտողներն կոտրբիս,
Որ կոտրք պաշտելը մեր երկրում դարձավ կրոն կամահաճ:

مهر وی من ، آن یافته از خوبی بهر
فرمود مرا پرستش خویش بقهر
خوش خوش ز بی مراد آن فتنه دهر
رسم آوردیم بت پرستی در شهر

* * *

Կարճ մի ժամանակ ազատվել էի սիրո տանջանքից,
Բայց սիրտս ցավին վատ էր սովորել, սեր ուզեց նորից.
Այս սիրա-փեռչակ և շաղակրատող սրտիս պատճառով՝
Տանջալից սիրո հաճույքը այրող մնացել է ինձ:

* * *

Տղամարդը նա է, ով իր ուղին ունի,
Ոչ թե կնոջ նման՝ գաղտնի ուղի ունի,
Իսկական տղամարդը չի ապրի հույսերով,
Հույսը կնոջ պես է, որ անկողին ունի:
(Թարգմ.՝ Ա. Սահակյան)
(«Մարգարտուշար». — Ն. Մ.)

مرد آنکه شدن را بشتاب آرآید
نه همچو زنان رخ بخضاب آرآید
گر مرد رهی امید را جفت مگیر
کامید چو زن بستر خواب آرآید

Մասուդ Էբնե Սաադ Էբնե Սալման Լահուրին, որի նախնիքները սերում էին
Համադանից, ծնվել է Հնդկաստանի Լահուր քաղաքում Հեջրի 438 կամ 440
(Ք. հ. 1046 կամ 1048) թվին և անշուշտ մեկն է Իրանի մեծագույն բանաստեղծնե-
րից, որը մինչև շուրջ 50 տարի առաջ համարյա թե մոռացվել էր և նրա դիվանի վի-
մատիպ օրինակները շատ հազվագյուտ էին: Նա ազնվական ընտանիքի գավակ,
հարուստ, առատաձեռն և տաղանդավոր մի բանաստեղծ էր, որին վիճակված էր
ապրել 18 տարի բանտարկության և ծանր տառապանքների մեջ: Մասուդ Սաադ
Սալմանը Ղազնավյան Սուլթան Էբրահիմի արքունականներիցն էր, որի բարձր
դիրքը, տաղանդը և ինքնավստահությունը պատճառ դարձան, որ թշնամիների հե-
րյուրանքներին պատճառով զոհվելով, գրկվի իր ամբողջ ունեցվածքից և արքայի
փոքրիկ մի ավան, Դահաբ: Այդ ավանում, կարճ մի շրջան հսկողության տակ մնա-
լուց հետո, նրա թշնամիները չեն բավականանում նրա համեմատական ազատու-
թյամբ և համոզում են Սուլթանին նրան կալանքի տակ առնել և ուղարկել Հնդկաս-
տանից դուրս գտնվող Սու Ամրոցը: Այստեղ նրան արդեն շրթայում են և փակում են
նեղ մի խուցի մեջ, ուր նա նույնիսկ հանգիստ պառկել չէր կարող: Այս պատիժն ևս
քիչ համարելով, նրան կալանավորում են ժամանակի ամենադաժան ամրոցներից
մեկում, **Նայ-ում**: Դժոխային այս պայմաններում նա մնում է մինչև 1115 թվականը,
երբ նախարար Աբու Նասր Ֆարիսիի միջամտությամբ արձակվում և անմիջապես
նահանգապետ է կարգվում Լահուրի շրջակայքում գտնվող մի ավանում: Նա այդ-
տեղ ապրում է մեկ տարի, իր նախկին փառքի, շռայլության և նրբաճաշակ հաճույք-
ների մեջ, որից հետո, ճակատագրորեն հետապնդված իր թշնամիների կողմից
(որոնց շարքում չափիտի մոռանալ ժամանակի հայտնի բանաստեղծներից գոնե եր-
կուսին, Աբուֆարաջ Ռունիին և Ռաշիդին) նա նորից ձերբակալվում և կալանա-
վորվում է **Մարանջ** ամրոցում: Այս երկրորդ բանտարկության ժամանակ, Մասուդ
Սաադը բազմաթիվ բանաստեղծություններ է գրել, որոնք բարձր գրական ար-
ժեք են ներկայացնում: Նա անդադար աշխատում է հասկանալ իր դժբախտություն-
ների բուն պատճառը և հաճախ գալիս է այն եզրակացության, որ թերևս ինքը չա-
փազանց ինքնավստահ և ինքնասեր է եղել և բավականաչափ չի խոնարհվել
օտարների առաջ և չի զբաղվել բժնությամբ և պնակալիզությամբ: Իր դժբախտու-
թյունների մի երկրորդ պատճառը նա իրավամբ համարում է իր մրցակիցների նա-
խանձը, բայց նորից մեղադրում է ինքն իրեն, իր գոռոզության և մեծամտության
համար: Բայց Մասուդ Սաադը չի հուսահատվում երբեք, հակառակ իր կրած բոլոր
տառապանքներին և նրա հոգեկան արիությունը հաճախ հիացմունք է առաջաց-
նում մեր մեջ: Ամենաթախծոտ և ողբերգական տողերի կողքին մենք հանկարծ
հանդիպում ենք երբեմնի խրոխտ, չընկճվող, ինքնասեր մարդուն, որը վստահ է, որ
մի օր արդարությունը կը հաղթանակի և նա կը փշրի իր հակառակորդներին:

Բանաստեղծում եմ ու սրտիս վիշտը
Երգերն են միայն ամբողջում հիմա.

Մի աաղմ աննշան, հոգուս պարտեզում,
Ճյուղեր է ձգել, ծառ դարձել հսկա:

Պետք չէ գանգատվես բախտիցդ, Մասուղ,
Թե որ չարչարի նա քեզ հավիտյան,
Մի հուսալքվիր մոսյլ մտքերից,
Ճակատդ պահիր վեր, նսճու նման:

Թո՛ղ աշխարհն ամբողջ փուլ գա քո գլխին,
Ճշմարտությունը չի՛ մեռնիլ երբևր.
Կը տեսնես մի օր, հաղթական ու վեհ՝
Քեզ կը բարձրացնեն մինչ լեռները սեզ:

Նա իր հոգու խրոխտությունը հետևյալ տողերով է արտահայտում.

Եղիր պացքով բազե ամպաճախը
Եվ հպարտությամբ՝ կատաղի հովազ.
Աչք փակիր վարդից ու սիրամարգից,
Պճնանք են դրանք, լոկ գույն ու երազ:

مسعود سعد گردش و پیچش چرا کنی
در گردش حوادث و در پیچش عنا
خودرو چو خس میاش و به هر سرد و گرم دهر
آزاده سرو باش به هر شدت و رخا

با همت باز باش و با کبر پلنگ
زیبا به گه شکار و پیروز بجنگ
کم کن بر عندهایب و طاوس در نگ
کانتجا همه آواز ست اینجا همه رنگ

Սաաղ Սալմանը 8 տարի ևս մնաց Մարանջի ամրոցում և շուրջ 62 տարեկան հասակում, վերջնականապես ազատվելով իր համառ թշնամիների հետապնդումներից, դուրս եկավ բանտից և նշանակվեց Ղազնայի արքայական գրադարանի կառավարիչ: Նա մնաց իր այդ պաշտոնում, ապրելով արքունական շուքից հեռու, տարված իր գրքերով և իր ստեղծագործությամբ, մինչև խորը ծերություն և մեռավ Հեջրի 515 (Ք. հ. 1121) թվին:

Մասուղ Սաաղ Սալմանի բանաստեղծությունները առաջին անգամ հավաքեց և Դիվանի (ժողովածուի) տեսք տվեց նրա ժամանակակից հայտնի բանաստեղծ Սա- նահին: Ինչպես ասացինք, այդ Դիվանը մինչև 1318 (1939) թիվը շատ հազվա- գյուտ էր: Այդ թվին էր, որ պարսիկ արդի բանաստեղծ և բանասեր՝ հանգուցյալ Ռաշիդե Յասամին հրատարակեց Մասուղ Սաաղ Սալմանի լրիվ Դիվանը, որը պարունակում է 16 000 բեյթ (տուն):

Հետաքրքիր է նշել, որ հակառակ վերջին հարյուրամյակի ընթացքում հայտնա- բերված անտարբերության դեպի Մասուղ Սաաղի բանաստեղծությունները, նա իր կյանքի վերջին տարիներին և մահվանից անմիջապես հետո մինչև մի քանի դար՝ նախանձելի հոչակ էր վայելում Իրանի բանաստեղծների մեջ: Նա իր կարգի մի կլասիկ էր համարվում, որի բանաստեղծությունները չափանիշ էին քերթողական ճաշակի, ըմբռնողության և արվեստի:

Մասուղ Սաաղը, ինչպես նրա ժամանակակից բոլոր բանաստեղծները, խորա- պես ազդված էր Ղազնավյան շրջանի դասական դարձած բանաստեղծներ՝ Օնտ- րուց և Ֆարրախուց: Բայց մինչդեռ նվազ տաղանդի տեր բանաստեղծները աշխա-

տում էին հարազատորեն ընդօրինակել Օնտրուն, Մասուղ Սաաղը իր քերթվածնե- րի մեջ մտցրել էր ուրույն մի ոճ, որը պարզ է բայց կուռ, **Ռուդաքիի** ոճի նման:

Մասուղ Սաաղը հայտնի է իր «Հաբսիաթ» կամ «Բանտի երգեր» կոչվող քերթ- վածներով, որոնք իրոնք իրենց անկեղծ, ողբերգական և երբեմն խրոխտ ոգով եզակի տեղ են գրավում պարսից չափածո գրականության մեջ:

Թերթելով Մասուղ Սաաղի Դիվանը, մենք չենք հանդիպում միայն աղիողորմ ողբերի և անօգնական հառաչների: Ընդհակառակը, շատ հաճախ նրա բանաս- տեղծությունները զարմացնում են ընթերցողին իրենց լավատեսությամբ:

Մասուղ Սաաղի ստեղծագործությունը մի այլ տեսակետից ևս կարևոր դեր է խաղացել Իրանի գրականության մեջ: Այսպիսի մեծ մի բանաստեղծի ողբերգական ճակատագիրը, որը խաղալիքն էր դարձել քմահաճ իշխանների, մտածել տվեց և դաս դարձավ բազմաթիվ այլ ստեղծագործ տաղանդների համար: Նրանք աստի- ճանաբար սկսեցին քաշվել արքունական կյանքից և ցոփություններից, իրենց ավելի ապահով զգալով դարվիշական քուրճի և սուֆիական միստիցիզմի մեջ: Դա վճռական մի անկյունադարձ էր Իրանի գրականության համար:

Մասուղ Սաաղի բանաստեղծություններից շատ օրինակներ չենք կարող բերել այստեղ, քանի որ դրանք երկարաշունչ **դասիդաներ** (ներբողականներ) են. այդպի- սի դասիդաներից հատվածաբար տալիս ենք մի քանի նմուշ.

«ԲԱՆՏԻ ԵՐԳԵՐ»-ԻՑ

Ինչ է ցանկանում այս իմ խեղճ մարմնից
Ճակատագիրը անգութ և դաժան.
Ինչ է պահանջում աշխարհը ինձնից,
Ես, որ անտք եմ, խեղճ ու մուրացկան:

Կուրացիր մի պահ, ով Աչք Աշխարհի,
Ով Մայր Հույսերի, ամբացիր այսօր,
Սիրոս ծամեցնք բախտի հրեշներ,
Բանտում փշրեցնք մարմինս անզոր:

Մորթս այլևս ծանր է մարմնիս վրա,
Ինչպե՛ս եմ կարող ես շապիկ հագնել,
Կյանքը ինձ այրեց ցավի հնոցում,
Որքան համբերել, որքան համբերել...

Այնքան եմ հավիլ անհատնում ցավից,
Որ թափանցիկ եմ ապակու հանգույն.
Այժմ վախենում եմ թշնամիս տեսնի
Սրտիս մեջ պահած գաղտնիքս թաքուն:

بار گشته ست پوست بر تن من
چون توانم کشید پیرهنم
روزگارم نشانند بر آتش
صبر تا کی کنم نه برهنم

*Որքան վատն ես, ով ծերություն,
Դու անընկեր, անօգնական
Մտերն բոլոր քեզնով արյուն՝
Երազների դու գերեզման:*

Հետևյալ գանգատը ուղղել է քանաստեղծը Ղազնավի Սուլթան Մասուդ 3-ին:

*Ով Թագավոր, քեզ կը պատմեմ հեքիաթն կյանքիս,
Գիտեմ որ դու ճշմարտության կը հավատաս:
Ոչ մի ականջ դեռ չի լսել այս աշխարհում
Տառապանքներ՝ որ տեսել են աչքերս այս:*

*Ես տարիներ անց եմ կացրել մենության մեջ,
Ինչպես մորից գրկված մանուկը կաթնակեր,
Աղիողորմ լաց եմ եղել մի անկյունում
Խորշակաշունչ քանտի մի գորշ խորշում ավեր:*

*Դժվարությամբ ու տանջանքով քարշ եմ տվել
Ջույգ խարխախից ավելի ծանր՝ ոտքիս շղթան:
Ու մտքերս, մտայլածին, վերք են թողել
Մրտիս թառի լարերի վրա անօգնական:*

*Մտքերը իմ, տանջանքներից հարատևող,
Խունկի նման ճարձատել են բուրվառի մեջ:
Էլ ինչ պատմեմ, հողն անկողին ու բոցը՝ բարձ
Ես այդ բոցում տապակվել եմ օրեր անվերջ:*

ԱՄԻՐ ՄՈՆԶԶԻ

Ամիր աշ-Շոարա Աբու Աբդուլլահ Մոհամմադ Էբնե Աբդուլ Մալեք Մեդզզի Նեշաբուրին մեկն էր Սելջուկյան շրջանի արքունական մեծագույն գովերգուներից, որը ՂԱՍԻԴԱՆ հասցրեց մինչ այդ չգերազանցված կատարելության: Այդ արվեստի մեջ նա արժանավոր հետևորդ է ժառանգել Ղազնավյան կլասիկ շրջանի մեծ ներբողագիրներ՝ Օնսորու, Ֆարրոխու և Մանուչեհրու և չնայած նրա արվեստը և գունագեղ ոճը երբեմն գերազանցում է իր նախորդներին, այդուհանդերձ նրան պակասում է իր նախորդների հանճարեղ շունչը, թոփչքը և անկեղծությունը:

Ինչպես իրավամբ նկատում է Բերտելսը, Ֆարրոխին իր ՂԱՍԻԴԱՆԵՐԻ ՆԱՍԻԲՈՒՄ (նախերգանքում) ուղղակիորեն ոգեշնչվում է բնությունից, մինչդեռ Ամիր Մոնզզին, արվեստի ամբողջ նրբությամբ հանդերձ, մտածող, կերտող և հղկող է, սալոնային քանաստեղծ է, այժմյան հասկացողությամբ:

Ամիր Մոնզզին մեծ հոշակ է վայելում Իրանում որպես նորաստեղծ քանաստեղծ: Արուզի Սամարղանդին «Չահար Մաղալեյում» նրան անվանում է «Պարսկաստանի

կրթագույն երգիչներից և գերագույն արվեստագետներից մեկը, որի քերթվածները իրենց թարմությամբ և երածշտականությամբ հասնում են անգերազանցելի բարձրության և կատարյալ են իրենց սահունության և հմայքի մեջ»: Աուֆին «Լորաբ ոլ-Ակրաբում» նրա մասին գրելիս՝ ասում է, որ միայն երեք քանաստեղծներ կարող են միմյանց հետ համեմատվել փառքի և հարստության տեսակետից. Ռուդաֆին՝ Մամանյան, Օնսորին՝ Ղազնավիների և Ամիր Մոնզզին՝ Սելջուկների օրոք:

Այսօր Ամիր Մոնզզիի քանաստեղծությունները մեզ համար կորցրել են իրենց հմայքի և թարմության մեծագույն մասը, շնորհիվ այն հանգամանքի, որ նրա գործածած հակադրությունները, համադրությունները, պատկերները և նմանությունները, որոնք նրա օրոք բոլորովին կամ մասամբ նորություններ էին, նրանից հետո եկող քանաստեղծների միջոցով անընդհատ կրկնվելով դարձան ընդհանրացած, սովորական և արդեն ձանձրացնող շաբլոններ: Օրինակ՝ Ամիր Մոնզզիի քերթվածներում է, որ առաջին անգամ հանդիպում ենք ապագայում առատորեն գործածված հետևյալ նմանություններին. արտասվաթոր աչքը՝ մարգարտաբեռ խեցիի, սիրուհու շրթերը՝ շաքարահամ կարկեհանների, սիրուհու աչքը՝ սիրեկանի արյամբ լեցված նարգիսի, և այլն: Հետևյալ հատվածում բերված նմանությունները նորություն էին 12-րդ դարու քանաստեղծության համար, բայց նրանց կրկնությունը, զանազան փոփոխակներով և զանազան ձևերի տակ, դա վերածեց սովորական և նույնիսկ հոգնեցնող մի պատկերի.

*Այն օրից ի վեր, երբ շաքարահամ շրթերդ տեսա,
Երկու աչքերս խեցիներ դարձան, մարգարտով լեցուն:
Խեղճ սիրեկանի հոգին բոցալիզ հնոց է ազահ,
Իսկ նրա աչքերն՝ ծովային խեցի — բոցերի ծոցում:*

Հետևյալ հատվածն էլ մի այլ թարմ նմանություն է, որը հետագայում, զանազան ձևերի տակ, անդադար կրկնվել է և կորցրել իր թարմությունը.

*Թե մազերդ մշկաբույր չեն մեղանչել դեմքիդ դեմ,
Ապա ինչո՞ւ գլխիկոր ցած են թափել ոտքիդ մոտ:
Մեղավոր են թե նրանք, ինչո՞ւ Աստված անպատիժ
Թույլ է տվել որ ապրեն այդ դրախտում մշկահոտ:*

Կամ՝

*Թե դու ես լուսնի լույսը գեղանի,
Թե դու ես մոմի բոցը ծիրանի,
Ապա ինչո՞ւ է իմ սիրտը վառվում,
Ինչո՞ւ լուսնի պես մաշվում են, հալվում:*

گر نور مه و روشنی شمع تراست
این کاهش و سوزش من از بهر چراست؟
گر شمع تویی مرا چرا باید سوخت؟
ور ماه تویی چرا مرا باید کاست؟

Այդուհանդերձ Ամիր Մոեզզին դեռ ունի հատվածներ, որոնց չեն կարողացել հետագա բանաստեղծները կրկնել և դրանցից մեկն է հետևյալը, որը նա գրել է իր սիրուհու աչքերի և շրթերի համար.

*Շուշանն է անփուշ ու վարդն է փշոտ,
Ասում են մարդիկ, բայց փուշ խոսք է դա,
Քանզի փշեր կան շուշաններիդ շուրջ,
Մինչ քո վարդի շուրջ ես փուշ չտեսա:*

Գողտրիկ մի պատմություն է նվիրել Արուզի Սամարղանդին Ամիր Մոեզզին իր «ՉՈՐՄ ՃԱՌ-ՔՈՒՄ»: Այդտեղ Արուզին նկարագրում է իր մի տեղակցությունը Ամիր Մոեզզիի հետ, վերջինիս փառքի և մեծության օրերին. Ամիր Մոեզզին նրան պատմում է իր կյանքից մի դրվագ, որի շնորհիվ նա արժանացել էր Սուլթան Մալեք Շահի ուշադրության և դարձել նրա գերընտրած բանաստեղծը: Այս պատմությունը երկար լինելով, մենք կը տանք միայն այն բաժինը, որը վերաբերում է բուն միջադեպին: Դրանից առաջ Ամիր Մոեզզին պատմում է, թե ինչպես իր հայրը, որը Ալփարալանի արքունական բանաստեղծ էր, մեռնելիս՝ նրան հանձնարարում է Սուլթան Մալեք Շահին: Ամիր Մոեզզին երկար ժամանակ պատեհություն չի գտնում ներկայանալ թագավորին, մնում է առանց դրամի և ընկնում է ծանր պարտքերի տակ: Վերջապես հասնում է Ռամազան ամիսը (ծոմապահության շրջանը) և Մոեզզին, հուսահատված իր անել վիճակից, ներկայանում է Մալեք Շահի նախարար, Ալա էդ-Դովլեին և գանգատվում է իր դրությունից: Նա իրավունք է հայցում հեռանալ իր հայրենի Նեշաբուրը, և այնտեղ, դիմելով այլ միջոցների, վճարել իր պարտքերը:

«— Դու ճշմարիտ ես խոսում,— պատասխանում է նրան նախարարը,— մենք բոլորս մեղավոր ենք եղել քո նկատմամբ և ես այժմ կաշխատեմ ուղղել այդ սխալը: Սուլթանը երեկոյան աղոթքի պահին դուրս կը գա պալատից տեսնելու համար Ռամազանի նորալուսինը. դու այնտեղ եղիր, տեսնենք թե ճակատագիրը ինչ կը տնօրինի քեզ համար:

Նա հրամայեց առայժմ ինձ հարյուր դինար վճարեն, որպեսզի կարողանամ ծածկել Ռամազանի ծախսերը: Անմիջապես բերեցին մի քսակ, մեջը հարյուր Նեշաբուրի դինար և դրեցին կողքիս: Մեծ ուրախությամբ վերադարձա տուն և Ռամազանի ծախսերի համար կարգադրություններ անելուց հետո, աղոթքի ժամին ներկայացա պալատ: Պատահաբար հենց այդ ժամանակ էլ Ալա էդ-Դովլեն հասավ: Խոնարհվեցի նրա առաջ. նա ասաց.

— Շատ լավ ես արել որ ժամանակին ես ներկայացել:

Հետո իջավ ձիուց և մտավ Սուլթանի հարկաբաժինը: Երբ արևը գունատվեց հորիզոնի վրա, Սուլթանը դուրս եկավ տաղավարից, մի ձեռքում աղեղ և մյուս ձեռքը դրած նախարարի ուսին: Ես առաջ վազեցի և երկրպագեցի: Ամիր Ալին ինձ քաղցրորեն ընդունեց և հետո նրանք զբաղվեցին նորալուսինը տեսնելով: Առաջինը, որ լուսինը տեսավ՝ Սուլթանն էր: Նա շատ ուրախացավ: Ալա էդ-Դովլեն ինձ ասաց.

— Որդիդ Բորհանի, այս նորալուսնի առթիվ մի բան ասա:

Ես անմիջապես այս հատվածը հորինեցի.

*Այս մահիկը հոնքն է կարծես իմ յարի,
Նա նման է արքայական աղեղի,
Ոսկուց կոփած պայտ է կարծես նրբագիծ,
Գինդ է կախված հորիզոնի սկանջից:*

ای ماه کمان شهریارى گویى
یا ابروی آن طرفه نگاری گویى
نعلى زده از زر عیاری گویى
درگوش سپهر گوشواری گویى

Երբ արտասանեցի այս հատվածը, Ամիր Ալին (նախարարը), ինձ շատ գովեց: Սուլթանը հրամայեց.

— Գնա և ախոռից բացիր որ նժույզը որ ցանկանաս:

Եվ այսպես, մենք մոտեցանք ախոռին և Ամիր Ալին ինձ համար ընտրեց մի նժույզ, որը բերեցին և տվեցին իմ սպասավորներին. արժեք 300 Նեշաբուրի դինար: Սուլթանը մտավ աղոթարան և երեկոյան աղոթքից հետո, ընթրիքի սփռոցը փռեցին: Ընթրիքի ժամանակ Ամիր Ալին ասաց.

— Ով որդիդ Բորհանի, այն շնորհի մասին, որ ստացար Աշխարհի Տիրոջից, ոչինչ չասացիր: Այժմ ասա մի երկ-բեյթ:

Ես ոտքի կանգնեցի և հանպատրաստից հետևյալ հատվածը արտասանեցի.

*Երբ տեսավ արքան կրակը սրտիս,
Հողից բարձրացրեց ինձ մինչև լուսին.
Երբ լսեց ԲեՅԹՍ ջրի պես ասհուն,
Ձի տվեց ինչպես սլացիկ քամին:*

چون آتش خاطر مرا شاه بدید
از خاک مرا بر زیر ماه کشید
چون آب یکی ترانه از من بشنید
چون باد یکی مرکب خاصم بخشید

(Այս հատվածում Ամիր Մոեզզին տիեզերքի չորս տարրերն է հիշում, արտահայտելու համար Սուլթան Մալեք Շահի տիտղոսը, որն էր՝ Տիեզերքի Տերը):

Երբ Ամիր Ալին լսեց այդ քառյակը, ինձ շատ գովեց և նրա գովասանքի շնորհիվ Սուլթանը ինձ պարգևեց հազար դինար²³:

Հետո, Ալա էդ-Դովլեն դառնալով Արքային, ասաց.

— Այս ծառադ դեռ չի ստացել իր ռոճիկները և վարձատրությունը: Վաղը ես կը կատեմ **Խաջեի** (նախարարապետ **Նեզամուլ Մուլքի** մասին է խոսքը, որը ժլատ էր բանաստեղծների և արվեստագետների հանդեպ) կողքին, մինչև նա հրամայի որ գանձարանից վճարեն այս ծառայիդ ռոճիկը, իսկ վարձատրությունը գրի Սպահանի վրա:

Սուլթանը ասաց.

— Գուցե դու կարողանաս այդ բանը անել, քանի որ ուրիշները այդ համարձակությունը չեն ունենալ: Սրան էլ անվանեցեք իմ տիտղոսով:

Սուլթանի տիտղոսը Մոեզզ ող-Դոնիա վաղ-Դին էր (Աշխարհի և Հավատքի Փառքը): Հետևաբար Ամիր Ալին ինձ անվանեց **Խաջե Մոեզզի**: Սուլթանն ասաց.

²³ Այստեղ մի անգամ ևս աչքի է զարկում այն երևույթը, որ Սելջուկ Սուլթանները անգրագետ լինելով, իրենք չէին որ ըմբռնում էին բանաստեղծությունների գեղեցկությունը, այլ դրա համար հենվում էին իրենց նախարարների կարծիքի վրա:

— Ամիր Մոեզզի անվանեցեք նրան:

Այն Մեծ և Մեծերից Սերվածը այնպես կարգադրեց, որ հաջորդ օրվա աղոթքի պահին ինձ արդեն հասել էր հազար դինարի պարգևը, հազար երկու հարյուր դինար վարձատրություն և հազար լիդր հացահատիկի փոխագիր Սպահանի վրա և երբ լուսինը Ռամազանից դուրս եկավ, նա ինձ հրավիրեց խնջույքի և մտերմացրեց Սուլթանի հետ և դրանից հետո միշտ ինձ հոգ էր տանում և այսօր ինչ որ ունեմ այդ Ազնվագարմի շնորհիվ է: Օրինված և Բարեգութ Տերը իր Ողորմության Լույսով լուսավորի նրա շիրիմը, իր Ողորմածությամբ և Աստվածային Շնորհով, Ամեն»:

Ամիր Մոեզզիի ծննդյան թվականը վստահորեն հայտնի չէ: Գիտենք, որ նա երիտասարդ էր, երբ հայրը, բանաստեղծ Բորհանին վախճանվեց Սուլթան Մալեք Շահի թագավորության առաջին տարիներին, շուրջ 1072 թվին: Ամիր Մոեզզին ամենայն հավանականությամբ մեռել է Հեջրի 518 և 521 թվականների միջև (Ք. հ. 1124–ից 1127–ը):

Ինչպես այդ տեսանք Արուզիի պատմությունից, նա նախ նշանակվում է Սուլթան Մալեք Շահի արքունական բանաստեղծ և վերջինիս մահվանից հետո, Իրանի խառնակ շրջանում, թափառում է պալատից պալատ և լինում է Հարաթում, Նեշարուրում և Սպահանում: Նա իր փառքի գագաթնակետին է հասնում Սուլթան Սանջարի օրոք, որը նրան անչափ հարգում էր, խրախճանքների ժամանակ միշտ իր կողքին էր նստեցնում և «հայր» էր անվանում: Ամիր Մոեզզիի հոչակը այնքան տարածված էր, որ երբ Աթսիզ էրեն Մոհամմադ Խարազմշահը լսում է նրա ճամփորդության լուրը դեպի Խարազ, մի ֆարսանգ (մոտ 7 կիլոմետր) նրան ընդառաջ է գալիս:

Ամիր Մոեզզին մեռնում է դժբախտ մի արկածի պատճառով: Ինչպես գրում է Աուֆին. «Ասում են, որ նրա մահվան պատճառը այն եղավ, որ մի օր, երբ երջանկահիշատակ Սուլթանը (Սանջարը) որսի էր գնացել, պատահաբար արձակում է մի նետ, որը դիպչում է Ամիր Մոեզզիի կրծքին և նա տապալվում է գետին և հոգին ավանդում»: Բայց Աուֆիի այդ կարծիքը, որ Ամիր Մոեզզին մեռնում է նետահար՝ ճիշտ չէ, քանի որ Մոեզզին ինքը իր Դիվանում մի քանի անգամ ակնարկներ է անում այդ դեպքի մասին: Բայց հավանական է, որ մի քանի տարի տառապելուց հետո, Ամիր Մոեզզին մեռած լինի այդ դեպքի թողած հետևանքներից:

Սուլթան Սանջարի բանտարգելության շրջանում, երբ թուրքմեն և թաթար հրոսակները անպատիժ ասպատակում էին Խորասանում, ավերում, այրում և սպանում՝ Ամիր Մոեզզին գրած է գեղեցիկ մի դասիդա, որից տալիս ենք հետևյալ հատվածը.

*Ով ուղտապան, զարկիր վրան
Յարիս երկրում անզուգական
Որ ես մի պահ ողբամ նրան,
Ողբամ կյանքը այս անցողիկ:*

*Արնի սիրտս ծովի նեման,
Արյամբ ջրեմ հողը խոպան,
Աշխարհն դառնա ցավի օվկիան
Ինձ հետ լացեն դաշտ ու ծաղիկ:*

*Դարձել եմ ես վտարական,
Սիրեկանս՝ օտարական,
Ու դիտում եմ դաշտ ու կածան,
Ո՛ր է նոճին իմ սլացիկ:*

*Ծափից, երգից ու բաժակից,
Այս աշխարհում անկարեկից
Մնացել է ինձ վշտակից
Սարդի ոստայնը հուսալիք:*

*Ճեմավայրում սիրեկանիս,
Որ ծաղկում էր վարդ ու նարգիս
Շրջում է արդ մի մկնաքիս,
Թեաժում են բուն ու չղջիկ:*

* * *

*Աչքս առատ արցունքներից սիրո մի գավ է դարձել,
Հոգիս վշտից՝ սիրո թիթեռ ու փարվանս է դարձել,
Տեր եմ դարձել սիրո տան մեջ ու մշտական բնակիչ,
Աշխարհն՝ սթափ, ես քո սիրուց խենթ–դիվանս եմ դարձել:
(Թարգմ.՝ Գևորգ Էմին)
(«Մարգարտաշար», էջ 53.— Ն. Մ.)*

چشمی دارم ز اشک بيمانه عشق
جانی دارم ز سوز پروانه عشق
هر روز منم مقیم درخانه عشق
هشیار همه جهان و دیوانه عشق

ՍՈՒՋԱՆԻ ՍԱՄԱՐՂԱԴԻ

Շամսեդ Դին Մոհամմադ էրեն Ալի Սուզանի Սամարղանդին իր ժամանակի մեծագույն սատիրիստ և լրբաբանն էր, որը հայտնի էր իր պոռոնոգրաֆիկ և ծաղրական բանաստեղծություններով. այդ ոտանավորները ոչ միայն անթարգմանելի են, այլ և պարսիկ մեծ կենսագիրները (որոնք գնահատում էին պոռոնոգրաֆիան որոշ սահմաններում) քաշվել են օրինակներ քերել նրանից: Աուֆին, չնայած Սուզանուն համարել է տաղանդավոր բանաստեղծ, գերադասել է մեջբերումներ չանել նրա ՀԱՋՎԻԱԹԻԿ և «գսպել իր արտահայտության սանձը»: Նա հույս է հայտնում որ Աստված կը ների Սուզանու մեղքերը, ի նկատի առնելով նրա գրած մի քանի կասկածելի «մեղայականները»: «Կասկածելի» ենք ասում, քանի որ այդ մեղայականներն էլ գրված են երկսայրի լեզվով և երգիծանքը նրանց մեջ էլ ակնհայտ է:

Սուզանին ապրել և գրել է Սամարղանդում և նրա հովանավորների մեջ կարևոր տեղ է զբաղում Արսալան Խան Մոհամմադը, որը իշխում էր 1101–ից 1129 թվական-

ների ընթացքում: Բայց ընդհանուր առմամբ, ինչպես դա երևում է նրա բանաստեղծություններից, Սուգանին իր ներբողականները գրում և ուղարկում էր զանազան մեծամեծների, Սամարղանդում ինչպես և շրջակա քաղաքներում, որոնցից ստանում էր աննշան «նպաստներ» ապրելու համար: Նա ծաղրել և հայհոյել է իր ժամանակի համարյա բոլոր բանաստեղծներին, բայց հատկապես Ռաշիդին, որին նա անվանում է «գինանձավի ավանակը» (խարե խոմ-խանե), որը ընդունված հայհոյական ածականն էր ժամանակի քրիստոնյաների: Ինչպես գիտենք, Միջին Ասիայում, մինչև Չինաստանի սահմանները, գոյություն են ունեցել նեստորական քրիստոնյաների բազմաթիվ գաղութներ, որոնց աղանդին էր պատկանում հավանաբար բանաստեղծ Ռաշիդին: Իր հայհոյական բանաստեղծություններից դուրս՝ Սուգանին մի քանի ինքնատիպ գծեր ունի, որոնք նրան հետաքրքիր են դարձնում, որպես բանաստեղծի: Դրանցից մեկը այն է, որ նա, կարծես դիտմամբ, խուսափում է ժամանակի քերթողության մեջ ընդունված նրբաձաշակ նմանություններից և շարժում պատկերներից և այդպիսով, շատ հաճախ, մոտենում է բանաստեղծների այժմեական ձաշակին և արտահայտության ձևերին: Օրինակ, նկարագրելու համար թագավորի գայրույթի հետևանքները, փոխարեն դիմելու հերոսական պատկերների նա հետևյալ համեմատությանն է դիմում.

*Բո գայրույթը այն է անում քո թշնամուն,
Ինչ հրեղեն արեզակը՝ իմ տազ գլխին:*

Նկարագրելով երկինքն ու մահիկը, նա գրում է.

*Երկինքն նման է ժանգոտած տաշտի,
Մահիկը՝ նրա եզերքն է փայլուն:*

فلک نموده چو زنگار یافته لگتی
بر او هلال چو یک گوشه تا زده زنگار

Ծաղրելով «արագիլի» նվիրված հայտնի մի դասիդա, նա ավելի ևս բարդացնում է այդ դասիդայի տաղաչափությունը, «արագիլ» վերջնաբառը փոխարինելով «արագիլաձագ» վերջնաբառով և սկսում է դասիդան հետևյալ տունով.

*Արագիլի ձագն երբ հանեց գլուխը ձվից,
Իր ծնողի ձվանման գլուխը տեսալ:*

Ծաղրն ու լրջությունը խառնելով իրար, նա գրում է.

*Այս աշխարհը ծով է սուգի, ցավի, վշտի,
Իսկ մենք նման մի ջրածուփ դատարկ տաշտի:*

Սուգանու իբր թե մեղայական հատվածներից են հետևյալ երկուսը, որ մաս են կազմում երկարաշունչ դասիդաների.

*Ես հազար անգամ ավելի վատ եմ քան կարծում ես դու,
Ոչ որ ինձ այնպես դեռ չի ճանաչում,— ինչ ծառայից հլու:
Արտաքինով վատ ու ներքինով ես վատթարագույնն եմ.
Ցածում ես գիտեմ այդ բանը միայն, իսկ Աստված՝ վերում:*

* * *

*Բերում եմ ինձ հետ երեք բան քո մոտ
Որոնց չես գտնիլ ամբողջ դրախտում,
Կարիք ու կեղծիք ու սուտն եմ բերում
Ու իմ սեպհական մեղքերն անհատնում:*

Սուգանին մեռել է Հեջրի 562 (1166) կամ 569 (1173) թվին Սամարղանդում:

Է. Ե. Բերտելսը, որը 14 էջ իր «Իր.–Տաջ. Գրակ. Պատմ.» գրքից նվիրել է Սուգանու ուսումնասիրության, հետևյալ կերպով է գնահատում այս բանաստեղծին. «Սուգանին անկասկած իր ժամանակի ամենակրթված մարդկանցից մեկն էր և ի գուր չէր, որ նրան «Հաքիմ» էին կոչում: Բարձր կրթության հետ, նա միաժամանակ և օժտված էր բանաստեղծական եզակի տաղանդով և կատարելապես տիրապետում էր բանաստեղծական արվեստի նրբություններին, որի շնորհիվ նա հեշտությամբ կարողանում էր հանպատրաստից ամենաբարդ ոտանավորները հորինել: Դրանով հանդերձ, նրա Դիվանի ուսումնասիրությունը մեզ թույլ չի տալիս նրան մեծ բանաստեղծ անվանել: Սուգանին շատ հետաքրքիր է որպես ուրույն ներկայացուցիչը իր դարաշրջանի... Ցանկանում ենք մտածել, որ որոշ հանգամանքներ, որոնք թույլ չտվեցին այդ ինքնատիպ բանաստեղծին անցնել սովորական ներբողականների սահմանից, պիտի փնտրել ժամանակի կենցաղային պայմանների մեջ: Դեռ Նեգամի Արուգին ասում էր, որ բանաստեղծի համար ավելի հեշտ է ստեղծել իր համար մի գիրք և ապրել տնտեսական բավարար պայմաններում ոչ այնքան գեղարվեստական ստեղծագործության՝ որքան ժամանակին ասված սրամտության կամ քծնանքի և ստորաբարշտության շնորհիվ: Թվում է, որ Սուգանու քերթվածների պոռնոգրաֆիկ բնույթն էլ հենց դրանով է պայմանավորված եղել: Դա մի խնդկատակություն էր: Իր հայհոյական լեզվով Սուգանին ծիծաղեցնում էր, զվարճացնում էր մեծամեծներին, որի համար էլ արժանանում էր ողորմության: Պալատականները արդեն սկսել էին ըմբռնել ներբողականների կեղծիքը և ստությունը և դա այլևս չէր ոգևորում նրանց: Բանաստեղծը այլ ճանապարհներով պիտի ապահովեր իր ապրուստը և Սուգանին, ըստ երևույթին, ընտրել էր իր ժամանակի ամենահասութաբեր միջոցը, խեղկատակությունը»:

ՌԱՇԻԴԵ ՎԱԹՎԱԹ

Ռաշիդեդ Դին Մոհամմադ Օմարի Բալխին, որ ճանաչված է Խաջե Ռաշիդ Վաթվաթ անվամբ, ծնվել է Բալխում, բայց ամբողջ կյանքը ապրել է Խարազում, Աբսիդ Խարազշահի (1128–1156) հովանավորության տակ, որպես նրա Սահեթ

Դիվանը, Գլխավոր Դիվանապետը և մեռել է Հեջրի 573 (1177) թվին, խորը ծերության մեջ:

Ռաշիդե Վաթվաթը իր կենդանության օրոք շատ մեծ համբավ էր վայելում որպես բանաստեղծ, «քերթողական տեսարան» և հմուտ արաբագետ: Նա նամակագրություն էր պահպանում իր ժամանակակից մեծագույն բանաստեղծ Խադանիի, ինչպես և Ադիբ Սաբերի և երկրորդական բազմաթիվ այլ քերթողների հետ: Բանաստեղծությունների ժողովածուից բացի, նրանից մեզ հասել են նաև մի քանի արձակ երկեր, որոնցից մեծ հռչակ է դեռևս վայելում նրա բանասիրական և տեսաբանական «Հադանեղ Աս-Սահարը», ուր նա մանրագնին ուսումնասիրության է ենթարկել բանաստեղծական զանազան ընդունված ձևեր, տաղաչափական արվեստը (արուզ), քերթողական ուղղությունները, և այլն: Այդ հատորը հրատարակվել է Թեհրանում 1930 թվին, հանգուցյալ Աբբաս Էդրալի քննարկությամբ:

Զանազան սկզբնաղբյուրներ բազմաթիվ անեկդոտներ են արձանագրել Վաթվաթի մասին, որոնցից մի քանիսը հետաքրքիր են, որպես հայելի ժամանակի ավատական կարգերի, նիստ ու կացի և բարոյական արժեքների:

Ռաշիդը մարմնով այնքան փոքր էր և նիհար, որ նրան **Վաթվաթ** էին անվանում, որը ծիծեռնակի փոքր մի տեսակն է: Վաթվաթը իր այդ փոքր մարմնի մեջ շատ երկար ու սուր լեզու ուներ: Մի օր, երբ նա ոգևորված խոսում էր մի հավաքություն, Սուլթան Աթսիզը, որի առաջ թանաքաման էր դրված, հանկարծ բացականշում է սև դանի մյուս ծայրից.

— Վերցրեցեք այս թանաքամանը, որ տեսնենք ղվ է դրա հետևից այդպես բոռբոռում:

Ռաշիդը անմիջապես հուզված ոտքի է կանգնում և կրկնում է արաբ հայտնի մի սասցվածք.

— Մարդը մարդ է իր մարմնի երկու փոքրագույն մասնիկներով — սրտով և լեզվով:

Մի ուրիշ անգամ, երբ Սուլթան Սանջարը իր գործով շրջապատել էր Աթսիզին Հազարասպ կոչվող ամրոցում, հրամայում է իր արքունական բանաստեղծ Անվարին պատշաճ մի բանաստեղծություն գրել: Անվարին գրում է.

Ո՛վ Շահը, աշխարհը քոնն է սեպհական,

Բախտն ու արևը քոնն են հավիտյան.

Այսօր դու գրավիր բերդը Հազարասպ,

Խարազմը քոնն է ու տանս հազար — ասպ:

ای شاه همه ملک زمین حسب تراست

وز دولت و اقبال جهان کسب تراست

امروز به یک حمله هزار سف بگیر

فردا خوارزم و صد هزار اسب تراست

(Բառախաղը Հազարասպ անվան և հազար-ասպ, — հազար ձի — բառի մեջ է):

Այս բանաստեղծությունը դնում են նետի ծայրին ու գցում են պաշարված բերդից ներս:

Վաթվաթը, որը գտնվում էր պաշարվածների մեջ, հետևյալ երկտողով է պատասխանում Սուլթան Սանջարին.

Ո՛վ Շահ, Ռաստամը թե ոտխոյ լիներ՝

Մի էշ էր տանի քո Հազար-ասպից:

گر خصم تو ای شاه شود رستم گُرد

یک خر ز هزاراسب تو نتواند برد

Դրանից հետո Սուլթան Սանջարը ամեն կերպ աշխատում է ձեռք ձգել Վաթվաթին: Վերջապես նրան հաջողվում է այդ բանը և հրամայում է Ռաշիդին յոթը կտոր անեն: Արքունականները, որ հարգում ու սիրում էին Վաթվաթին, միջամտում են, ասելով.

— Ով Թագավոր, մենք մի աղերս ունենք: Ծիծեռնակը փոքր ու վտիտ մի թռչուն է և նրան չի կարելի յոթը մասի բաժանել: Հրամայիր նրան գոնե երկու մասի բաժանեն:

Այդ խոսքի վրա Սուլթան Սանջարը մեղմանում է և ներում է Վաթվաթին:

Մի այլ անեկդոտ որ գոյություն ունի Վաթվաթի սուր լեզվի մասին, հետևյալն է.

Մի օր, Սուլթան Սանջարը մեծ մի խնջույք է կազմակերպում պալատում զայրացնելու համար Վաթվաթին, հրամայում է նրա համար վերապահեն ամենացածր տեղը սեղանի շուրջ: Երբ Վաթվաթը գալիս է պալատ և գտնում է իր տեղը, լուռ նստում է: Սուլթան Սանջարը քիչ հետո դառնում է նրան և ասում.

— Դիրքիդ հարմար մի բան արտասանիր, Վաթվաթ:

Վաթվաթը, որ սպասում էր դրան, ոտքի է ելնում և արտասանում է.

Թե որ բոլոր ներկաներից ցածր եմ նստել՝

Բնական է և իմ պատվին չէ անվայել.

Այս խնջույքը ծով է կարծես ու միշտ ծովում

Մարգարիտը հատակին է՝ ցախը վերում:

Ռաշիդ Վաթվաթը մեծ հարգ էր վայելում Սուլթան Աթսիզի և Սանջարի արքունիքներում: Ասում են, որ Սուլթան Աթսիզը, ոգևորված մի թուպին, հետևյալ քառյակն է գրել ու նվիրել Վաթվաթին.

Իմաստությունից՝ երկնաքերուկ է գլուխը քո տագ,

Այդ է որ գլխիդ մնացել է արդ բարակ աղվամագ.

Թանկ է մեզ համար գլուխդ ինչպես բիրը մեր աչքի,

Եվ ղվ է տեսել որ մի մագ բունսի աչքին մշտանագ:

Երբ Ռաշիդ Վաթվաթը հասել էր խորը ծերության, Սուլթան Աթսիզի թողը, Ալանդդին Թաքեշը, հրամայում է արքունիք բերեն ծերունի բանաստեղծին, ցանկանալով իմանալ, թե արդյո՞ք բթացել է նրա երբեմնի սրամտությունը: Ծերունի Վաթվաթին բերում են արքունիք պատգարակով: Սուլթանը, մեծ պատիվներից հետո, առաջարկում է Վաթվաթին ընտրել իր համար արքունի հարձերից ամենագեղեցիկին, որին և բերում են բանաստեղծի մոտ: Վաթվաթը տեսնելով գեղեցկուհուն, նստում է պատգարակում և դողդոջուն ձայնով ասում է.

Ծերացել եմ, բայց թե որ ինձ բախտը ժպտա,
 Գինին, սազը, այս թո հարձի մազը վկա,
 Օղ կը շինեն պարանակերպ այդ վարսերից
 Հետ կը բերեն ջահելությունս անցած նորից:

مرم ولی چو بخت دمساز آید
 هنگام نشاط و طرب و ناز آید
 از زلف دراز تو کمندی فکنیم
 بر گردن عمر رفته تا باز آید

ԱԴԻԲԵ ՍԱԲԵՐ

ՀԱՎԱԲԵԴ-ԴԻՆ (Հավատքի Գիսաստղ) Սաբեր էրն էսմաիլ Թարմազին, որ ճանաչված է Ադիբե Սաբեր անվան տակ, Սուլթան Սանջարի արքունական սիրված բանաստեղծներից մեկն էր: Բանաստեղծի հանգամանքից բացի, նա հավանաբար եղել է նաև պալատական պաշտոնյա, դպիր, և հաճախ ճամփորդում էր երկրի զանազան կողմերը «դիվանագիտական» առաքելություններով: Այդպիսի մի առաքելության կապակցությամբ էր, որ Սուլթան Սանջարը նրան ուղարկեց Խարազմ, Սուլթան Աթսիզ Խարազմշահի մոտ, երբ այդ երկուսի հարաբերությունները լարված էին, բայց դեռ բացահայտ թշնամություններ չէին սկսվել Խարազմշահիների և Սելջուկների միջև: Խարազմում Սաբերը տեղեկանում է, որ Սուլթան Աթսիզը երկու ահաբեկիչներ է ուղարկել Մարվ սպանելու համար Սուլթան Սանջարին: Սաբերը ձեռք է բերում այդ երկու ահաբեկիչների նկարագրությունը և գաղտնորեն, ծեր մի կնոջ միջոցով, նախագուշակում է Սուլթան Սանջարին: Մարվում ահաբեկիչներին ձերբակալում և սպանում են: Սուլթան Աթսիզը, այդ լուրը ստանալով, հրամայում է տարաբախտ Սաբերին նետել Ջեյհունի ալիքների մեջ և խեղդամահ անել: Այդ դեպքը պատահում է Հեջրի 542 (Ք. հ. 1147) թվի հոկտեմբերին:

Ադիբե Սաբերը կենդանության ժամանակ մեծ հռչակ էր վայելում որպես կատարելագործված բայց և միաժամանակ պարզունակ բանաստեղծ, որը աշխատել է գրել սահուն և հասկանալի ոճով և հատուկ երաժշտականություն է մտցրել իր քերթվածների մեջ: Միաժամանակ նա հայտնի էր իր սուր և կծու երգիծանքներով, որոնց նա շոայլում էր իր ժամանակակից բանաստեղծների և հատկապես Ռաշիդ Վաթվաթի (Ծիծեռնակի) վերաբերմամբ:

Պարսիկ կլասիկ մեծ բանաստեղծներ Անուարին և Խաղանին շատ բարձր են դասում Սաբերի արվեստը և նույնիսկ Անուարին չի համարձակվում համեմատել իր բանաստեղծությունները Սաբերի քերթվածների հետ:

Սաբերը ծնվել է Թերմեզում, բայց կյանքի մեծ մասը անց է կացրել Մարվում: Այդուհանդերձ, նրա կծու գրչից պաշտպանված չեն եղել իր հարազատ քաղաքի իշխանները և փոքր արքունականները: Այդպիսի մի իշխանի (Ախտի) մահվան առթիվ է որ նա գրել է հետևյալ հատվածը.

Ով Ախտի, այն օրն, երբ դու խմեցիր՝
 Դատապարտվեցիր դժոխքի բոցին:
 Օրհնված լինի այն օրն երջանիկ
 Երբ դատարկեցիր բաժակդ վերջին:
 Դու ի Տեր գնացիր ու մենք մնացինք.

Ամեն ինչ հանգիստ, խաղաղ է կրկին.
 Օրհնվի գինին այն մաքրամաքուր
 Որ մեզնից տարավ թո կեղտոտ հոգին:

Մի քանի փոքրիկ հատվածներ ենք բերում Սաբերի Դիվանից, որը հրատարակվել է Թեհրանում, 1955 թվին:

Սիրոս շարունակ սիրով է տարված
 Ու գերված մազին գեղեցիկների.
 Սիրոս՝ իմ ցավն է, սերը՝ սրտիս ցավն,
 Երբ եք ցավ տեսել, որ ցավում ապրի:

* * *

Ասին՝ — ամեն ինչ իր ժամանակին
 Ախորժելի է, լինի խինդ թե վիշտ.
 Լինի դա ոսկի, թե երջանկություն.
 Ինչ ես դու, ով Սեր, որ անուշ ես միշտ:

* * *

Ուրբաթամուտ է և մտածում եմ,
 Թող սրտումս սեր, ափիս թաս լինի.
 Հարբած եմ այսօր և սիրահարված,
 Թող սիրահարը միշտ հարբած լինի:

Ուրբաթ ու Շաբաթ մեկ են ինձ համար,
 Միայն թե, սաղի, տուր ինձ մի գինի՝
 Աբլորի աչից ավելի կարմիր,
 Սեաթույր, ինչպես թևը ազոսով:
 Ինձ միք վահեցնիլ դժոխքի կրակից,
 Դժոխք է արդեն սերը խաբուսիկ:

Աշխարհի ցավը գինով մոռացեք,
 Աշխարհը ամպի շուքն է անցողիկ:

* * *

Ճամփորդության մեջ կիսանսա միայն արժեքը մարդու.
 Ինչ արժեք ունի գոհարը, քանի թաքուն է հանքում:

شب آدینه و من مست و خراب
 عاشقی در دل و در دست شراب

 عاشق و مست و خرابم چه کنم
 عاشق آن به که بود مست و خراب
 مرا شنبه و آدینه یکی است
 که چنین دیده ام از عشق صواب

 می خورم لعل تر از چشم خروس
 در شب تیره تر از پر غراب

 هیچ تهدید عذابم نکند
 که مرا عشق بسنده ست عذاب

 نتوان خورد غم کار جهان
 که جهان سایه ابراست و سراب

Մահասաթին գեղեցիկ մի պարուհի էր, օծոված բանաստեղծական հազվագյուտ տաղանդով և ապրում էր Կովկասի Գանձակ քաղաքում: Նա ազատ մտքի և բարքերի մի կին էր, որի համար սիրել Սուլթան Սանջարին թե գեղեցիկ մի ճորտի՝ նույն բանն էր: Նրա քառյակները, ամեն մեկը գրված հստակ մի դեպքի և հատուկ մի սիրո համար՝ գեղեցիկ են, թարմ և թրծված կանացի քնքշությամբ:

Տասերորդ դարու սկզբներում հզոր Սուլթան Սանջարի օրոք, Խոջանդ քաղաքի շրջակայքում, համեստ մի ընտանիքի մեջ ծնվեց մի աղջիկ, որին վիճակված էր արքայական սրտեր գրավել, իր օրվա ամենամեծ պերճադիճը լինել և քառյակներ գրել իր սիրականների համար, որոնք մինչև այսօր դեռ գրավում են սիրով բոցավառ սրտերը:

Փոքրիկ աղջիկը իր հայրենի քաղաքում մաքթաք գնաց գրել կարող սովորեց, բայց նրա կրծքերը դեռ փոքրիկներ էին, երբ նրա կրակոտ բնավորությունը, բոցավառ հայացքները, որ ձգում էր արայի մեջ փաթաթված համեստ ուսանողներին և վարդաշուրթ ծպիտը ստիպեց ընտանիքին գաղթել հայրենի քաղաքից և հաստատվել Կովկասում, մեր սեփական Գանձակ քաղաքում: Այդ ընթացքում հայրը մահացավ և մայր ու աղջիկ եկան Գանձակ:

Բայց աղջիկը այլևս փոքր չէր իր մորը լսելու համար և իր երգելու, նվագելու և պարելու բնածին տաղանդով իր անհոգ և կրակոտ բնավորությամբ գրավեց Գանձակի ավագանիի ուշադրությունը, որոնք մրցում էին իրար հետ տեսնելու, լսելու և սիրելու համար արևելքից եկած այս հազվագյուտ վարդին, որը կոչվում էր **Մահասաթի** և որն այսօր պարսկական գրականության մեջ ճանաչված **Մահասաթի Գանջավի** անվամբ:

Ծավալվում էր հոչակը Մահասաթիի ու բազմանում էր թիվը նրա երկրպագուների: Նա բնակարան էր ընտրել Խարաբաթի թաղում, ուր մարդիկ քիչ էին աղոթում, ծով չէին պահում և չէին ծախում իրենց «երկու օրվա կյանքը հավիտենական դրախտի խոստումին»:

Այդ թաղում ապրում, զվարճանում, երգում ու պարում էր Մահասաթին և հեռու քաղաքներից, Բուխարայից ու Սամարղանդից, Թուսից ու Շիրազից, Բաղդադից ու Դամասկոսից գալիս էին երկրպագուները իրենց հարստությունը, փառքը, սրամտությունը և բանաստեղծական տաղանդը դնելու Մահասաթիի վարդագույն և մուշկով օծված կրունկների տակ:

Մի օր Սուլթան Սանջարն էր որ ծպտված եկավ իր աչքով տեսնելու համար իր հսկա թագավորության սահմաններում ապրող այդ հազվագյուտ **պերճադիճին**, որի հոչակը տարածվել էր Միջերկրականից մինչև Հնդկական օվկիանոսը, Կովկասյան լեռներից մինչև Հինդուքուշ:

Ծպտված Սուլթան Սանջարը, իր արքունական հետևորդներով այցելեց Մահասաթին, տեսավ նրա քողազերծ պարը, նրա աչքերի բոցը, մարմնի ճկունությունը, լսեց նրա գրած քառյակները, որոնց Մահասաթին երգում էր ուղի ընկերակցությամբ:

— Ալլահը վկա է ես դեռ այսպիսի աղախին չէի տեսել իմ կյանքում: Իմ ամբողջ հարեմը չարժի այս կնոջ կուրծքի մի դողին:

Եվ Սուլթան Սանջարը մեկ սիրտ չէ հազար սիրտ՝ սիրահարվեց Մահասաթիի վրա:

Նա հրամայեց իր հետևորդներին պատրաստել իր ամենագեղեցիկ վրանը Մահասաթիի համար, խունկ վառել վրանում, բացել Խորասանից բերված լավագույն գինու կարասները, միայն ներքինի ստրուկներ նշանակել իրեն ծառայելու համար:

Բայց ուրիշ մի լուսնի էր նայում Մահասաթին, ուրիշ մի վարդի էր տարվել իր սիրտը, ուրիշ մի դուռ էր թակում նրա ցանկությունը:

Մահասաթին սիրահարվել էր Սուլթան Սանջարի ստրուկներից մեկի վրա, գեղեցիկ մի կենդանու, գեղակազմ ու այրված մարմնով, գալարուն մկաններով և սև աղամանդի պես փայլող աչքերով:

Բայց Մահասաթին պերճադիճ էր և նրա համար պատիվ ու հաճույք էր Սուլթան Սանջարու սերը, իր մարմինը լքել նրա նուրբ շոյանքին, զգալ կայսրության շփացած ու բռնակալ Տիրոջը իր ոտքերի մոտ:

Սուլթան Սանջարը սիրահարվել էր ու նրան բավական էր Մահասաթիի մարմինը: Եվ գիշերվա լռության մեջ, ուր լսվում էր միայն մեղմ նվագի ձայնը ու բուրում էր խունկը և գինին թրջել էր Մահասաթիի պատված շապիկը, Սուլթան Սանջարը լսեց, որ Մահասաթին մեղմորեն երգում է, հայացքը կորած անուշ մի երազանքի մեջ, մարմինը հլու՝ բայց հոգին բացակա:

*Վեր կաց և եկ, զարդարել եմ բեհեզներով
Անկողինը իմ կուսության շուշանաշուրթ,
Եկ, որ գինին փրփրել է սափորի մեջ
Եվ հսկում է սրտիս վրա գիշերը մութ:*

*برخیز و بیا که حجره برداخته ام
وز بهر تو پرده خوش انداخته ام
با من به شرابی و کبابی در ساز
کین هر دو ز دیده و ز دل ساخته ام*

Սուլթան Սանջարը դեմքը մոտեցրեց Մահասաթիի շուրթերին և հասկացավ, որ այս կինը մարմնով անձնատուր է եղել իրեն, բայց հոգով ուրիշի հետ է:

Եվ երբ Սուլթան Սանջարը հարցրեց նրանից, թե ո՞ւմ է նվիրել իր սիրտը, Մահասաթին, որը շատ սեր էր տեսել, բայց քիչ էր սիրել, որի համար այդ նորավառ բոցը ավելի ուժ էր, քան արքայական առագաստը, նրան ասեց, որ սիրում է մի ստրուկի, որը մի քանի գիշեր առաջ եկել է գինետուն ու նստել աստիճանների վրա: Եվ հոչակավոր Մահասաթին, տեսնելով այդ սքանչելի կենդանուն, մոտեցել է նրան ու ասել.

*Իջել ես այսօր դու մեր գինետուն,
Բարի՛ ես եկել,
Դեմքով լուսավառ, մազերով գոռոգ,
Բարի՛ ես եկել,*

²⁴ Ըստ մեծ լեզվաբան Ռաշիդ Յասեմիի «Մահասաթի»-ին քաղկացած է «մահ»՝ այսինքն «մեծ» և «սաթի»՝ «տիկին», որը նշանակում է «մեծապատիվ կին»: (Ն. Մ.)

Ես կնվիրեմ սիրտս քեզ որպես
Միրո ռոջակեզ,
Ով թագավորդ գեղեցիկների,
Բարի՛ ես եկել:

Սուլթան Սանջարը կատաղում է, քանտարկել է տալիս Մահաաթին և գլխատում է գեղեցիկ ստրուկին:

Բայց մի քանի ամսից հետո, իր ավագանիի և արքունական բանաստեղծների բարեխոսություններից ազդված՝ Սուլթան Սանջարը բանտից արձակում է Մահաաթին և աշխատում է մոռանալ նրան:

Անցնում է կարճ մի ժամանակ և Մահաաթին, մոռացած իր գլխատված ստրուկին, սիրահարվում է Ամիր Ահմադ անունով մի երիտասարդի վրա, որը տղան էր Գանձակ քաղաքի Խաթիրի:

Սուլթան Սանջարը, որի վերքը դեռ չէր սպիացել, որը չէր կարողանում դեռ հաշտվել իր ստորացման մտքով, հրամայեց Միր Ահմադին աքսորել Կովկասից դեպի Խորասան:

Բայց Մահաաթին մի կին էր, որ քիչ էր սիրում և երբ սիրում էր՝ ամեն ինչ գոհում էր իր նպատակին հասնելու համար:

Միր Ահմադի աքսորից հետո, մի կարճ ժամանակ ոչ ոք չէր լսում Մահաաթիի ծիծաղն ու նրա կիսահարբած շրթերից երբեմն միայն լսվում էին հուսահատ ուրախներ:

Այն գիշերները որ հազար նագն՛վ պատկել եմ կողիդ,
Անհո՛ւշ հեռացան,
Մարգարիտները որ համբուրել եմ թարթիչիդ վրա
Անհո՛ւշ հեռացան,
Դու իմ կյանքն էիր, հոգուս հանգիստը,
Մրտիս բանալին,
Դու որ հեռացար — սեր, կյանք ու հոգի
Անհո՛ւշ հեռացան:

Կամ նա հանկարծ վռնդում է բոլորին իր սենյակից, մենակ էր մնում, ու փանդի-որ վերցրած երգում էր.

Երազում եմ շուրթը ծծել քո կարկեհան,
Բայց դու չկաս,
Երազում եմ գինի խմել քո՛ հետ միայն,
Բայց դու չկաս,
Լինեմ հարբած, լինեմ ուշքի,
Լինեմ թե խենթ

Երազում եմ ձայնդ լսել, իմ սիրեկան,
Բայց դու չկաս:

Բայց Մահաաթին այն կանանցից չէր, որ երկար ժամանակ մենության դառ պտուղ ուտեր և տխրության գինին խմեր ու մի օր, մանկավիհի պես ծալված, նա վերցրեց ինչ որ թանկագին էր իր հետ ու ձամփորդեց Խորասան Միր Ահմադի մոտ:

Նա գտավ Միր Ահմադին ու հավատարմորեն նրա հետ ապրեց իր կյանքի մնացորդ տարիները, երջանիկ՝ իր միակ ընտրյալի կողքին:

Ու Մահաաթին, չձերացող ոգով իր կյանքի վերջին տարիներում այնպես էր խրատում իր սիրականին, որ ոմանք ասում են նրա ամուսինն էր:

Կին եմ ես թույլ, բայց ինձանից
Խրա՛տ լսիր,
Ձեռք առ թասդ, ուրախության
Գահին նստիր.
Կուշտ է անշուշտ Ալլահը մեր
Աղոթքներից,
Թիթեռի պես մուրազը քո
Այսօր քաղիր:

Մահաաթիի ծննդյան և մահվան թվականները, ըստ աղբյուրների, հակասական են (12-րդ դար): Իր գերեզմանը գտնվում է Աղրբեջանի Գանջա (Գանձակ) քաղաքում: (Ն. Մ.)

ԱԴԻԲ ՍԱՄԱԲՂԱՆԴԻ (ԶԱՇԻՐ-ՕԼ-ԴԻՆ) (11-12-րդ դարի բանաստեղծ.— Ն. Մ.)

* * *

«Ի՛նչ է աշխարհն», — ես հարցրեցի ինաստունից,
Ասաց. «Հեքիաթ, ցնորք է դա ու մի երագ»:
«Ի՛նչ է իմաստը այս կյանքի, ասա խնդրեմ»,
Ասաց. «Մոմ է ու փարվանս, թե հասկանաս»:
«Ի՛նչն՛վ պիտի կյանքը անցնի այս հինգ օրվա»,
Ասաց. «Գինով և սիրուհով մի դեռահաս».
«Ի՛նչն՛ կյանքին ուշադիր են այսքան»,
Ասաց. «Կույր են, խելագար են կամ թե հարբած»:

حال دنیا را بپرسیدم من از فرزانه ای
گفت: یا خوابی است یا وهمی است یا افسانه ای
گفتمش: احوال عمر ای دل بگو با ما که چیست؟
گفت: یا برقی است یا شمعی است یا پروانه ای
گفتمش این پنج روز عمر چون باید گذشت؟
گفت: در حلقی و یا دلقی و یا ویرانه ای
گفتمش: اینان که می بینیم, چون دل دلبسته اند؟
گفت: یا کورند یا مستند یا دیوانه اند!

Սելջուկների նախնական շրջանում, որը վերջանում է Սուլթան Սանջարի մահվամբ, բանաստեղծների թիվը շատ մեծ է եղել և այդպիսիներից Սուֆին իր «Լոբաբ-օլ-Ալբաբ»-ում 52 հոգու հիշում է, ի բաց առյալ բոլոր այն իշխաններից, վազիրներից, բժիշկներից, որոնք նույնպես իրենց հերթին բանաստեղծներ են եղել: Բրաունը նրանցից հիշում է ընդամենը 16-ի անունը: Դժբախտաբար որևէ տեղեկություն նրանց կյանքի և գործերի մասին գոյություն չունի, բացի ցաքուցրիվ տեղեկություններ, իսկ բանաստեղծության տեսակետից, հաջողվել է մեզ գտնել միայն հատուկորր քառյակներ կամ դաթաներ Ֆարիդե Քաթերից, Ջոհարի Հարաթուց, Ջեննաթի Գազուց, Սեյյեդ Հասան Ղազնավիից և Էմադե Շահրիարուց:

ՖԱՐԻԴԵ ՔԱԹԵԲ

Հիվանդ սիրտ ունեմ, որ էլ ճար չունի,
Թաքցնում է ինձնից ցավերը իրա.
Այրվում է սիրտս ու չեմ հառաչում,
Բոցը որ բռնկի՝ ծուխ չի ունենա:

دل سوخت تمام از غم و آهی نکشیدم
آتش جو برافروخته شد دود ندارد

ՍԵՅՅԵԴ ՀԱՍԱՆ ՂԱԶՆԱՎԻ (1140-1170 Ք. հ.)

Որքան այս խեղճ մարմնիդ համար դու վախենաս,
Որքան անմիտ այս աշխարհում վախով դողաս,
Այն՝ ինչ քեզնից կառնեն մի օր, հոգիդ է փուշ,
Ապրիր, ցնծա, որ այս կյանքից հետ չմնաս:

Ոսկու, արծաթի և գոհարների ախտին մի՛ կապվիր,
Թուլամորթ հոգով՝ անմիտ աշխարհի բախտին մի՛ կապվիր,
Աշխարհն հանգստի տեղ է, մի՛ տանջիր հոգին քո իզուր,
Մարմինդ կերթա չորս տախտակի մեջ, թախտին²⁵ մի՛ կապվիր:

ԷՄԱԴԻ ՇԱՀՐԻԱՐԻ

Ես ինչ անեմ որ ամենը վաճ տեսնում,
Իմ մի մեղքը հազար անգամ շատ են տեսնում,
Հայելի եմ և երբ նայեն դեմքիս մարդիկ՝
Վատը վատթար ու քիչ լավն էլ՝ վաճ տեսնում:

²⁵ «Գահին» բառախաղ է «թախթի» և «թախտի» մեջ, որից բարեբախտաբար կարելի է հայերենում օգտվել:

Դու հող էիր, քեզ խոտանի մո՛ւշկ կարծեցի,
Դու փուշ էիր, բուրաստանի նո՛ւշ կարծեցի,
Նույն մարդն եմ ես, դո՛ւ ես փոխվել, ով սիրելիսն,
Դու ինձ մի ճորտ, ես քեզ անուշ հո՛ւշ կարծեցի:

خاکي و ترا مشک ختن دانستم
خاري و ترا گل چمن دانستم
دردا که من آمم که تو می دانستی
افسوس تو آن نه ای که من دانستم

ՋԵՆՆԱԹԻ ԳԱԶԻ

Ասաց մի գիշեր, բազեն՝ բազեին.
«Մինչ նրբ մենք ապրենք լեռ և անտառում,
Արի, որ թռնենք քաղաքը դեպի
Եվ իշխանների ապրենք պալատում:
Գիշերը խնջույք, պար ու սազանդար,
Յերեկը ելնենք մեծ որսի համար»:
Ու պատասխանեց բազեն իմաստուն.
«Ո՛վ դու իմաստակ, տգետ ու նկուն,
Թե կյանքդ ամբողջ այս տափաստանում
Տանջվես ու տեսնես մրրիկ, բուք ու ձյուն
Եվ ամեն մի շունչ լինի քեզ պայքար
Ոստիներիդ դեմ, անգութ, անարդար,
Ավելի՛ լավ է, քան ոսկե գահին
Ստրուկը լինես մեծ Փաղիշահին»:

Վերջացնելով այս մասը, այժմ անցնում ենք Սելջուկյան շրջանի չորս մեծագույն բանաստեղծներին՝ ԱՆՎԱՐԻՆ, ԽԱՂԱՆԻՆ, ՆԵԶԱՄԻԵ ԳԱՆԶԱՎԻՆ և ԶԱՀԻՐԵ ՖԱՐՅԱԲԻՆ:

Այս չորս մեծ բանաստեղծները ժամանակակիցներ չեն եղել և ապրել են 12-րդ դարի վերջի և 13-րդ դարի սկզբներին, բայց քանի որ պատմականորեն նրանց որևէ ցայտուն մի շրջանի հետ չի կարելի կապել (բացի Անվարուց, որը Սուլթան Սանջարի արքունական բանաստեղծն էր), հետևաբար նրանց կարելի է իրար կողքի դնել որպես ժամանակակիցներ, որոնք ապրում էին Իրանի լայնատարած սահմաններում, բոլորովին տարբեր պայմանների և մթնոլորտի մեջ:

ԱՆՎԱՐԻ ԱԲԻՎԱՐԴԻ

Անվարին ծնվել է Խավարան դաշտի Աբիվարդ գյուղում: Նա սկսել է սովորել Թուս քաղաքի Մանսուրիին դպրոցում, ուր նա աղքատ մի աշակերտ է եղել: Անվարին իր երիտասարդ հասակում մտադիր չի եղել բանաստեղծի կյանք վարել և հետագա կյանքում նա հաճախ դառնությամբ է հիշում, որ թողել է գիտությունները՝ բանաստեղծության համար: Մանսուրիին դպրոցում չնայած աղքատ, բայց փայլուն ուսանող էր նա և կարճ ժամանակում տիրապետում էր աստղաբաշխության, երկրա-

չափության, տրամաբանության, բնական գիտությունների, մետաֆիզիկայի և նույնիսկ երաժշտության:

Ավանդությունը պատմում է, թե ինչպես մի օր դպրոցի դարպասի առջև անցնում է փարթամորեն հագնված մի ձիավոր, շրջապատված մանկլավիկներով: Անվարին, զարմացած այդ շքեղության վրա, հարցնում է անծանոթի ինքնությունը, և երբ նրան ասում են, որ մի բանաստեղծ է (հավանաբար Ամիր Մոեզզին), նա բացականչում է.

— Գիտությունը այնքան բարձր է և ես այսքան աղքատ, մինչդեռ բանաստեղծությունը այնքան ցածր է և այս մարդը այսքան հարուստ. Օրինյալ Աստծո փառքով և փարթամությամբ երդվում եմ, որ այսօրվանից զբաղվելու եմ բանաստեղծելով, որը մեկն է իմ շնորհքներից փոքրագույնը:

Եվ ասում են, որ նույն այդ գիշեր նա հորինել է իր հոշակավոր դասիդան, որը սկսվում է.

Թե ձեռքն ու սիրտը ծով ու հանք լինեն,

Այդ ձեռքն ու սիրտը Արքայական են:

Հաջորդ առավոտյան նա ներկայանում է Սուլթան Սանջարին և կարդում է դասիդան, որը հիացնում է Սուլթանին և այդ օրվանից Անվարին մտնում է պալատ:

Չնայած Անվարին համարվում է Իրանի կլասիկ մեծագույն բանաստեղծներից մեկը, հատկապես զազելի կամ գովարանական բանաստեղծության մեջ, այնուհանդերձ նրանից բազմաթիվ օրինակներ բերել չի կարելի:

Ռուս արևելագետ Ժուկովսկին²⁶, որի գրչին է պատկանում Անվարու ամենախորը ուսումնասիրությունը, ճշտորեն նկատել է տալիս, որ այս շրջանի բանաստեղծները, եթե ցանկանային դրամ շահել և հանգիստ ապրել, ստիպված էին իրենց ժամանակի մեծ մասը նվիրել քաղաքական կամ գովարանական քերթվածների: Այս արքունական բանաստեղծները, ճշմարիտ բանաստեղծության փոխարեն, պիտի ճարտասանեին: Նրանք գրում էին դրամի համար և այդ բանը չէին թաքցնում իրենց հովանավորողներից: Նրանք ամեն դեպքում պիտի սրամիտ լինեին: Պիտի դժբախտությունը գեղեցիկ կերպով փոխեին բարեբախտության, վատը՝ լավի, լացը՝ ծիծաղի և նույնիսկ բանաստեղծեին ընկած մի ատամի կամ կերած մի աքացու մասին:

Անվարին չնայած իր շրջապատի բանաստեղծներից ավելի բարձր էր, բայց բացառություն չէր այս ընդհանուր օրենքի: Հետևաբար նրա դասիդաները, որոնցից մի քանիսը նմանը չունեն պարսկական գրականության մեջ — հատկապես նրա «Խորասանի արցունքները», «Գարունը», քիչ վերում հիշված «Թե ձեռքն ու սիրտը» և մի քանի ուրիշները — օտար ընթերցողի համար գրական հետաքրքրության չեն ներկայացնում, իսկ նրա զազելները և ոտբահները թույլ են:

²⁶ Ժուկովսկին նախահեղափոխական արևելագետ էր և նրա այս աշխատանքը շատ հազվագյուտ է: Ժուկովսկու մասին մանրամասն գրել է Բրաունը:

Բայց հետաքրքիր է հետևել Անվարու բանաստեղծությունների մեջ նրա հոգու մեծ կոնֆլիկտին, այն ուժեղ պայքարը, որ մղվում է «Պալատական բանաստեղծի» և «Ծարավ գիտնականի» մեջ: Անվարին ամբողջ իր կյանքում ցանկացել է քաշված և հանդարտ մի կյանք վարել, զրքերի և գիտական զբաղմունքների մեջ թաղված: Նա հավանաբար թույլ կամքի տեր է եղել և չի կարողացել դիմադրել արքունական փարթամ, բայց փուչ կյանքի գայթակղությանը: Նա ատում է պալատական կյանքը և գայրանում է իր ժամանակի բարբերի դեմ: «Մուրալը բանաստեղծների օրենքն է», — ասում է նա, բայց ինքն էլ մուրում է և երբ իրեն չեն վճարում, խայտառակում է: Եվ այսպիսով Անվարին, կոչումով գիտուն և փեշակով բանաստեղծ, ոչ կարողանում է գիտունի աղքատ կյանքը տանել, և ոչ էլ կարողանում է հաշտվել արքունական կյանքի կեղծությունների հետ:

Բայց իր կյանքի վերջին տարիներում, ՀԱԿԱՌԱԿ ԻՐ ԿԱՄՔԻ, մի քանի դժբախտ դեպքերի բերմամբ, նա հրաժարվում է արքայական ծառայությունից և վերադառնում է իր սիրած, խաղաղ և քաշված իր գիտունի կյանքին: Դրանից հետո նա իր մի քանի բանաստեղծությունների մեջ իր անսահման հաճույքն է արտահայտում իր խղճով հյուղակի, մի կտոր հացի և թանաքամանի համար, որոնք այժմ գրավում են արքայական սեղանի ու գինու զավաթի տեղը:

Անվարին մեռնում է Հեջրի 585–587 թվականների շրջանում (1189–91 թ. հ.):

Անվարուց տիպիկ նմուշներ քիչ է կարելի տալ, քանի որ դրանք ընդհանրապես գտնվում են նրա դասիդանների մեջ՝ խառնված և ձուլված այլ նյութերի:

Նախ և առաջ ահա չորս կտոր, որոնք գտնվում են հանգուցյալ հորս՝ Հ. Միզալանի «Ջանազան»-ում:

*Ո՛վ դու, որից հազեցան օտարների տենչանքներ,
Ես միշտ ընկեր քո ցավին, իսկ դու այլոց միշտ ընկեր:
Ջույգ աչքերիս արցունքով գիրկս լեցուն քեզ համար,
Եվ դու, անգո՛ւթ, թույլ տվիր քեզ գիրկն առնել մի օտար:*

* * *

*Երբ որ նկան ծաղիկներն ու պճնեցին ծաղկանոց,
Դեռևս իրենց կոկոնում նազեր արին մի միջոց.
Բայց երբոր աչք բանալով տեսան քո դեմքն աննման,
Թառամեցին ամոթից ու ոտքերիդ տակ թափվեցան:*

* * *

*Մինչ երբ երեսը արյունով լվա
Քո անգթությամբ սիրտս վիրալից,
Արյունն երկնքից չի՛ տեղում, գթա՛,
Ողորմիր, սիրտը չի բուսնում գետնից:*

Քեզնից բացի սիրոսս ուրիշի
 Չեմ տա ես դյուրին.
 Արժան չեմ ծախի ինչ որ ինձ այսբան
 Արժեք թանկագին:
 Հարյուր կյանք սրտիս մեկ տենչի համար
 Կսեպեմ սակավ,
 Եվ հարյուր տենչով չեմ փոխի մի սիրտ,
 Որ քեզ ցանկացավ:

Հետևյալ մի կտորը թարգմանել ենք Անվարու դասիդաների ձեռագիր մի հատորից, որը ժամանակավորապես մեր տրամադրության տակ էր դրել պարսիկ մի բարեկամ:

Լսել ես ինչպես խելոքը մի օր ասաց հիմարին,
 Որ «Մուրացկան է, ցածր և անամոթ, քաղաքի Վալին»:
 Ասաց. «Թե ինչպե՞ս կարող է լինել մեկը մուրացկան,
 Որ մի կոճակը նրա գլխարկի մեր հացն է տարվան»:
 Ասաց. «Ո՛վ թշվառ, փոքր է քո միտքը և խոսքդ հիմար,
 Գիտե՞ս՝ որտեղից հասավ այս մարդուն ոսկի և գոհար,
 Վզի մարգարտե մանյակի հատը արցունքն է որբի,
 Կաթի՛լ է արյան ամեն շափյուղան նրա բբուկի,
 Մուրացիկ է նա, ով ձեռք է մեկնում ինչքին ուրիշի,
 Լինի դա իշխան, թե մի երեխա ձեռք պարզած նուշի»:

آن شنیدستی که روزی زیرکی با ابلهی
 گفت کین والی شهر ما گدایی بی‌حیاست
 گفت چون باشد گدا آن کز کلاهش تکمهای
 صد چو ما را روزها بل سالها برگ و نواست
 گفتش ای مسکین غلط اینک از اینجا کرده‌ای
 آن همه برگ و نوا دانی که آنجا از کجاست
 در و مروارید طوقش آشک اطفال منست
 لعل و یاقوت ستامش خون ایتم شمامست

.....
 خواستن کدیه است خواهی عشر خوان خواهی خراج
 زانکه گر ده نام باشد یک حقیقت را رواست
 چون گدایی چیز دیگر نیست جز خواهندگی
 هرکه خواهد گر سلیمانست و گر قارون گداست

Խաղանին մեկն է Իրանի ամենախրթին, անհասկանալի և արվեստական բանաստեղծներից, բայց դրանով հանդերձ մեծ հռչակ է վայելում իր դասիդաների շնորհիվ, որոնք, չնայած խորքով և գեղեցկությամբ չեն հասնում Անվարիի հայտնի դասիդաներին, բայց ճոխ են և արվեստի մեծ հմտություն կա նրանց մեջ:

Խաղանի Շիրվանին ծնվել է Ք. հ. 1120 թ. Գանձակում, կամ Շիրվան քաղաքում (երկուսն էլ Կովկասում են գտնվում): Նրա հայրը ատաղձագործ էր, իսկ մայրը մահմեդականացած քրիստոնյա (հավանաբար վրացի կամ հայ): Պատանի հասակից նա գրկվում է հորից և նրան մեծացնում և ուսում է տալիս նրա հորեղբայրը, որը բժիշկ էր: Հորեղբոր մոտ նա սովորում է արաբերեն, բժշկություն: Աստղաբաշխություն և մետաֆիզիկ, հաճախ ճաշակելով ուսուցչական գավազանի հարվածները: Երբ Խաղանին 25 տարեկան էր, նրա հորեղբայրը մահանում է:

Բանաստեղծական տաղանդի զարգացումը Խաղանին պարտական է ծերունի մի բանաստեղծի՝ Արոլ Ալա Գանջավուն, որը Մանուչեհր Շիրվանշահի պալատական բանաստեղծներից մեկն էր: Արոլ Ալան մեծ նեղություններ է քաշում Խաղանու վրա և նրան պալատ ներկայացնելուց հետո, նրան կնության է տալիս իր աղջկան: Այդ բանը զայրացնում է Արոլ Ալայի մի ուրիշ աշակերտին, որին հանգստացնելու համար Արոլ Ալան նվիրում է 20 հազար դերհամ, որով նա կարող էր «գնել հիսուն թուրք կոյսերի, ամեն մեկը շատ ավելի գեղեցիկ, քան Խաղանու կինը»: Բայց այս ամուսնությունից քիչ հետո Խաղանին կովում է իր բարերարի հետ և երկու բանաստեղծների մեջ սկսվում է խայտառակ բանաստեղծությունների այնպիսի մի շարան, որը հազվագյուտ է պարսկական գրականության մեջ: «Էլ հին ու նոր, էլ հերն ու մեր», բանը հասավ այնտեղ, որ Խաղանին թողեց հայրենի քաղաքը և ծառայության մտավ Շիրվանշահ Ախսեթանի մոտ, որի արքունիքը գտնվում էր Բագվում:

Մի քանի տարուց հետո Խաղանին ուխտի է գնում Մեքքա և նա բանաստեղծություններ է գրել, նկարագրելով իր հեռանալը Շիրվանից, Սեֆիդ Ռուսից անցնելը և Սավլան լեռան ձյունածածկ տեսքը: Այդ ճամփորդության ընթացքում է գրել նաև իր հռչակավոր դասիդան՝ «Էլվանե Մադանե»-ը, ուր նա նկարագրում է Թիսֆունի (Տիզբոն) ավերակները և ողբում է Սասանյան թագավորների անցած փառքը:

Դրանից հետո նա ճամփորդում է Սֆահան, որին նույնպես նվիրել է փառահեղ դասիդա: Վերադառնալով Շիրվան, անհայտ պատճառներով նա իր վրա է հրավիրում Շիրվանշահի զայրույթը և բանտարկվում է Շաբերան ամրոցում: Դրանից հետո նրա կյանքի մասին մանրամասնություններ չկան, հայտնի է միայն, որ նա բանտից արձակվելով Թավրիզ է ճամփորդում, ուր և մեռնում է 582 Հեջրի թվականին (1185 Ք. հ.) և թաղվում է Թավրիզի Սորխաբի գերեզմանատանը, «բանաստեղծների անկյունում»: Զահեր էդ-Դին Ֆարյաբու և Աշհարու միջև: Այդ գերեզմանները, դժբախտաբար, երկրաշարժի պատճառով անհայտացել են:

Խաղանու բանաստեղծությունները շատ երկար են, ճոռոմ և դժվար հասկանալի: Նրա դիվանը 1500-ից ավելի էջ ունի և նրա ամեն մի դասիդան միջին հաշվով 40-ից 50 երկտողից է բաղկացած, որը ոչ միայն թարգմանել, այլ երբեմն կարդալն

էլ ձանձրալի է: Բայց այդ դասիդաների մեջ հաճախ կարելի է հանդիպել հատվածների, ուր բանաստեղծի ճշմարիտ տաղանդը, բոլոր արվեստականությունների տակից, աչքի է զարկում:

Հանգուցյալ հայրս միայն մի երկտող է թարգմանել խաղանուց, որը հետևյալն է.

*Կյանքս կտամ եթե դու
Շրթունքդ տաս մի անգամ,
Քանզի գիտեմ, որ նոր կյանք
Քո շրթունքից կտտանամ:*

Շատ դժվար է օրինակներ բերել խաղանու բանաստեղծություններից: Չնայած նա դեռ պահել է իր մեծ անունը պարսկական գրականության մեջ, բայց նա մեռած մի հոգի է մեր ժամանակների համար: Խաղանու «Էլվանե Մաղանե»-ից, որը նրա ամենահայտնի գազելն է, օրինակի համար տալիս ենք մի քանի բեյթ.

*Հարթած հողը: Գինու փոխարեն,
Ճորտը ներքինի՝
Հորմոզի գանգով արյունն է խմել
Անուշիրվանի:*

مست است زمین زیرا خوردهست به جای می
در کاس سر هَرْمُز ، خون دل نُوْشِروان
.....
گفتی که کجا رفتند آن تاجوران اینک؟
ز ایشان شکمِ خاک است آبتنِ جاویدان
.....

*Հարցնում են՝ ո՞ր են թագակիրները
Արդար և արի,
Հոյ է նրանցով հավիտենապես
Արգանդը հողի:*

خون دل شیرین است آن می که دهد رَزُوبُن
ز آب و گِلِ پرویز است آن خُم که نهَد دهقان

*Շիրինի արյամբ գինեվաճառը
Ծարավ է կտրել
Փարվիզի հողից գյուղացին անձար՝
Գավաթ է շինել:*

Սա էլ մի երկտող է նրա գազելներից.

*Նագով ու խաղով, ժպիտ ու շաղով
Սիրտս կտորեցիր աչքերով այդ ծով,
Գոհար ես կտորել, պիտի վճարես
Արնագույն շրթիդ վառ կարկեհանով:*

* * *

*Քաղցր շուրթերդ երկերեսանի դինարի պես են,
Ջրապարտիչ մարդու ու դավաճանի հնարի պես են,
Օտար շուրթերից պղծված շուրթերով անունս չտաս,
Քո այդ շուրթերը ահեղ արատի ու չարի պես են:
(Թարգմ.՝ Վահագն Դավթյանի)
(«Մարգարտաշար».— Ն. Մ.)*

طوطی دم دینار نشان است آن لب
غماز و دو روی از بی آن است آن لب
ز نهار میلای در آن لب نامم
کالوده لبهای کسان است آن لب

ՆԵՉԱՄԻ ԳԱՆՉԱՎԻ

Նեզամի Գանջավին մեկն է Իրանի ամենամեծ բանաստեղծներից, որին կարելի է դասել Ֆերդոսու, Հաֆեզի և Սադու պես հանձարների շարքում: Նա մեծ ժողովրդականություն է վայելում Իրանում, ինչպես և արտասահմանում, հատկապես Ադրբեջանում, ուր գտնվում է նրա ծննդավայրը՝ Գանձակը:

Որպես պոեմաների հեղինակ, կարելի է ասել, որ Նեզամի Գանջավին անգերազանցելի է մնացել և նրա հինգ պոեմաները (խամսան) բավական են նրա անունը անմահացնելու համար:

Ահա թե ինչ է գրում Բրաունը Հաքիմ Նեզամու մասին.

«Նեզամիի բարձր դիրքը, որպես ինքնուրույն և բեղուն, ինչպես և հազվագյուտ և ազնիվ մի հանձար, ընդունված է բոլոր քննադատների կողմից, պարսիկ կամ ոչ պարսիկ, լինի դա Աուֆին, Ղազվինին, Դովլաթշահը և Լոթֆ Ալի Բեզը (կենսագիրներ) թե Սադին, Հաֆեզը, Ջամին և Էսմաթը՝ բանաստեղծների մեջ: Եվ եթե նրա հանձարը քիչ մրցակիցներ ունի պարսիկ բանաստեղծների մեջ, առավել ևս քիչ են նրա մրցակիցները նրա քնավորության և կենցաղի տեսակետից: Նա անկեղծ հավատացյալ էր, բայց եզակիորեն զուրկ էր ֆանատիզմից կամ անհանդուրժումից: Ինքնասեր և անկախ, բայց միաժամանակ բարեհամբույր և անսնափառ, սիրող հայր և ամուսին, գինուց բոլորովին հրաժարված և չնայած գինին օրենքով արգելված էր, բազմաթիվ բանաստեղծների (հատկապես միստիկ բանաստեղծների) ծառայում էր որպես ներշնչման աղբյուր: Մի խոսքով, նրան կարելի է իրավացիորեն նկարագրել որպես մարմնացումը այնպիսի բարձր հանձարի և անբիծ քնավորության, որը անգերազանցելի է որևէ այլ պարսիկ բանաստեղծի կողմից»:

Անցյալում Ֆրանսիայում լույս է տեսել Իրանին նվիրված հոդվածների մի ժողովածու՝ «Իրանի ոգին» խորագրի տակ (L'âme de l'Iran), ուր Պրազայի հոչակավոր արևելագետ պրոֆ. Ռիբկան ընդարձակ մի հոդված է նվիրել Նեզամի Գանջավուն, նրան անվանելով «Իրանի բանաստեղծական մեծագույն հանձարներից մեկը»:

Վերջին տարիների ընթացքում Պարսկաստանում նույնպես բացառիկ ուշադրություն է դարձվել այս մեծ բանաստեղծի վերաբերմամբ, կազմվել է հատուկ մի միություն, ուսումնասիրելու և տպագրելու համար նրա քերթվածները, որոնց մի մասը Վահիդե Դասթգերդու խմբագրությամբ, տպագրվել են:

Ըստ Dr. Wilhelm Bacher-ի Նեզամի Գանջավին ծնվել է Գանձակ քաղաքում 535 Հեջրի թվին (1140-41 Ք. հ.): Իր հինգ մեծ պոեմաներից առաջինը «Մախզանուլ-Ասրար»-ը (Գաղտնիքներ գանձարանը)՝ 1165 թվին, երկրորդը՝ «խոսքով և Շիրինը»՝

1175 թվին, երրորդը՝ «Լեյլի և Մաջնունը»՝ 1188 թվին, չորրորդը՝ «Ալեքսանդր Մեծը»՝ 1191 թվին, հինգերորդ և վերջինը՝ «Հաֆթ Փեյքար»-ը (Յոթը կերպարները)՝ 1198 թվին:

Նա մեռել է 63 տարեկան հասակում, Հեջրի 599 թվին (1202-3 Ք. հ.):

Նեզամու փոքր անունը հավանաբար Ելիաս (Եղիա) է եղել: Նրա մայրը քուրդ էր: Նրա եղբայրը՝ Ղավամին, նույնպես իր օրոք մեծ բանաստեղծ էր համարվում: Նեզամին երեք անգամ ամուսնացել է: Դովլաթշահը գրում է, որ այս հինգ պոեմաներից բացի, Նեզամին 20 հազար բեյթ բանաստեղծություններ է գրել: Դժբախտաբար նրա դիվանը մեզ չի հասել, չնայած գոյություն ունեն նրանից բազմաթիվ դասիկաներ և գազելներ, որոնք կազմում են Վահիդե Դասթգերդու հրատարակած ժողովածուի վերջին հատորը:

Նեզամի Գանջավիի «Լեյլի և Մաջնունը» Հայաստանում թարգմանվել է հայերենի²⁷:

Այստեղ խուսափում եմ մանրամասնանալ Նեզամիի պոեմաների շուրջ և կրավականանամ տալով միայն մի քանի օրինակներ այս մեծ բանաստեղծից, որոնք դժբախտաբար հազիվ թե բավարար գաղափար տան ընթերցողին այս մեծ հանձարից:

Սիրոս տարար զեղեցկուհիս
Շաղակրատանք պետք չէ այդքան,
Քո աչերից լեզուս լավեց,
Զուր աշխատանք պետք չէ այդքան,
Թող որ մի պահ նայեմ դեմքիդ,
Ոչ ես գող եմ, ոչ դու պահակ:
Թասը լեցրու գինով զուլալ,
Ապաշխարանք պետք չէ այդքան:

* * *

Դու զարկեցիր սրտիս դանակ
Ինչո՞ւ աչքս արյամբ լեցվեց,
Դու թաքնված սրտիս խորքում՝
Ապա ինչո՞ւ տեսնում եմ քեզ:
Մենք մեկ էինք սիրո կշռում,
Բայց քո սերը պակսել է շատ,
Ապա ինչո՞ւ, ասա խնդրեմ,

زخم چو بر دل رسید دیده پر از خون چراست
چون تو درون دلی نقش تو بیرون چراست
چون بترازی عشق هر دو برابر شدیم
هر تو کم میشود عشق من افزون چراست
بیشترک مر مرا دوسترک داشتی
من نه همان دوستم دشمنی اکنون چراست

²⁷ Հայտնի են ամերիկահայ կոմպոզիտոր Ալան Հովհաննեսի կողմից 1973 թ. գրված 24-րդ սիմֆոնիան («Մաջնուն») և խորհրդային արտիստ Կասյան Գոլեյզովսկու «Լեյլի և Մաջնուն» բալետը (1964 թ.)՝ Սերգեյ Բալասանյանի երաժշտությամբ: 1918 թ. թատերական գործիչ Հովսեփ Ոսկանյանը Թբիլիսիում բեմադրել է «Լեյլի և Մաջնուն» դրաման, որի համար երաժշտություն է գրել Արմեն Տիգրանյանը: Այդ թեման ներշնչանքի աղբյուր է հանդիսացել նաև բրիտանացի «ոռք» երաժիշտ Էրիկ Կլեպտոնի «Layla» երգի համար, որն ընդգրկվել է «Layla and Other Assorted Love Songs» երաժշտական ալբոմում: Լեյլու և Մաջնունու սիրո մասին նկարահանվել են նաև բազմաթիվ կինոնկարներ:— Ն. Մ.):

Յաֆն է հոգուս այսպես աստու:
Առաջները քիչ ավելի
Սիրում էիր դու ինձ կարծես,
Ես նույն մարդն եմ, ապա ինչո՞ւ
Թշնամացար ինձ հետ այսպես:

* * *

Կոկոնի պես արյամբ լեցուն
Մի սիրտ ունեմ,
Աչքը ճանփիդ, խեղճ և անտուն
Մի սիրտ ունեմ,
Ինչ որ վիշտ կա այս աշխարհում՝
Ինձ ես տալիս,
Բայց ես անկուշտ, վշտի ազահ
Մի սիրտ ունեմ:

* * *

Օգտվիր այսօր կյանքից ջահել,
Տարիները քոնչ են անում,
Քարավանի ճանփորդի պես
Կմոռացվես հայրենիքում:
Թե դու ուրախ ապրես հիմա
Ինչ կպակսի վշտից անհուն,
Ինչ կպակսի ցնծությունից՝
Թե քեզ խեղդես վշտի ծովում:

* * *

Մազից ճերմակ՝ ձյուն է նստել
Գլխիս վրա,
Վախենում եմ կյանքիս տանիքն
Շուտով փուլ գա:

نشست برف گران بر سرم ز موی سپید
زیست گشتن بام وجود در خنجرم

* * *

Մի պահարակիր խեղճ սիրելիանիդ,
Ինքդ կհավվես,
Թե որ պատահեմք հայելում տեսնես
Դեմքդ լուսերես:

* * *

Ոչ մի ցավ չկա սիրո պես անուշ
Առանց սեր՝ ծաղիկ չի գգի հասակ,

ز سوز عشق بهتر در جهان چیست؟
که بی او گل نخندید، ابر نگریست

Չի լացի անպը, ծառը չի պտղի,
Վտանգ չի ապառնում սիրո հարկի տակ:

* * *

Մի երիտասարդ հարցրեց ծերուկից
Թե «Ինչ պիտ անեմ
Որ երբ ծերացա՝ յարս չթողնի
Ու փախչի ինձնից»:
Եվ պատասխանեց ծերը իմաստուն
Ժպիտով մի մեղմ,
Որ «Երբ ծերանաս՝ ինքդ թո կամբով
Կփախչես նրանից»:

«Լեյլի ու Մաջնունից» մի երկու բեյթ.

Քո անունը ամենայնի է սկիզբ,
Քո անվամբ եմ ես բաց անում ամեն գիրք,
Քո անունն է սրտիս, հոգուս հարազատ,
Լեզվիս չունեմ ոչ մի անուն քեզնից զատ:
(Թարգմ. Ազատ Մասթյանի, 2024 թ.— Ն. Մ.)

چوانی گفت پیری را چه تدبیر؟
که یار از من گریزد چون شوم پیر
چوایش داد پیر نغز گفتار
که در پیری تو خود بگریزی از یار

ای نام تو بهترین سرآغاز
بی نام تو نامه کی کنم باز
ای یاد تو مونس روانم
جز نام تو نیست بر زبانم

ԶԱՏԻՐԵ ՖԱՐՅԱԲԻ

Այս շրջանի չորս մեծ բանաստեղծներից վերջինը Զահիրե Ֆարյաբի Բալխին է, որի դիվանը այսօր դժվարությամբ է գտնվում և վերջին հարյուրամյակի ընթացքում միայն մի անգամ է տպագրվել Հնդկաստանում: Անցյալում Զահիրե Ֆարյաբին մեծ ժողովրդականություն էր վայելում և նույնիսկ անհայտ մի բանաստեղծ գրել է.

«Գողացիր, նույնիսկ գտնես Զահիրի դիվանը Քասբում»:

Զահիրը հավանաբար ծնվել է 1156 թվին -Ք. հ. և կյանքը անց է կացրել Նիշաբուրում, Մազանդրանում և Ադրբեյջանում, որպես գովաբանող բանաստեղծ Թողանշահի, Աթաբեկ Իլդգազի, Ղեզել Արսալանի և մի քանի տասնյակ սելջուկ իշխանների: Նա երկար տարիներ ապրել է Սպահանում, Ղեզել Արսալանի և նրա հաջորդ Աբու Բեքրի արքունիքում և կյանքի մի քանի վերջին տարիներն է, որ անց է կացրել Թավրիզ, քաշվածի ու «զղջացողի» դերում, ուր և մեռել է Հեջրի 598 (1201 Ք. հ.) և թաղվել է Սորխաբի գերեզմանատանը, իսաղանու կողքին:

Չնայած Զահիրե Ֆարյաբու դիվանը, ըստ Բրաունի, որը իր ձեռքի տակ ձեռագիր մի հատոր է ունեցել, պարունակում է 185 դասիղա և 97 քառյակ, մի քանի գազելների հետ, երկար փնտրությունից հետո կարողացել ենք միայն մի քանի գեղեցիկ կտորներ գտնել նրանից:

Զահիրե Ֆարյաբին պանեգիրիստ (ներբողագիր) է եղել բառի բուն և լայն իմաստով: Նրա բանաստեղծությունները բոլորը գրված են դրամ խնդրելու, մուրալու, իր դժվարությունները արտահայտելու դիտավորությամբ և նրա մի քանի դասիղաներն են միայն, որ մինչև այսօր կարդացվում են: Դա բնականաբար արդյունքն է եղել ժամանակի բարբերի և պայմանների, որ թույլ չի տվել, որ բանաստեղծը կարողանա համեստ մի կյանք վարել և ստեղծագործել, այլ ստիպված է եղել տունը մեջքի վրա առնել և հետևել այս կամ այն բարերարի քմահաճույքին: Ինքը՝ Զահիրե Ֆարյաբին, գեղեցիկ կերպով նկարագրում է իր օրվա բանաստեղծին.

Ինձ ինչ, բոցաշուրթ գեղեցկուհիներ
Ապրեն Քեշմիրում,
Եվ ինձ ինչ օգուտ, թե որ Նովշահում
Հուրիներ կան շատ,
Պիտի ես միայն բավականանամ
Կյանքով այս խղճուկ,
Քանի որ զուր է, թե նկարագրեմ
Ցավերս առատ:
Այն, ինչ մնում է այս քերթվածներից
Թշվառիս համար,
Այն է, որ ասեմ «ես ճորտ եմ, իսկ դու՝
Փերի՛ կիսատված»,
Այն, որ անվանեմ խափշիկին ապուշ
«Դրախտի հուրի»
Եվ «ազնվական, անթերի» կոչեմ
Սրիկային հարբած:

مرا از آن چه که شیرین لیبی است در کشمیر؟
مرا از آن چه که سیمین بری است در نوشاد ؟
برین بسنده کن از حال مدح هیچ مگوی
که شرح درد دل آن نمی توانم داد
بهین گلی که از او بشکفتد مرا این است
که بنده خوانم خود را و سرو را آزاد
گهی لقب نهم آشفته زنگیی را حور
گهی خطاب کنم مست سفله ای را راد

Նման պայմաններում է, որ Զահիրե Ֆարյաբին ապրել և գրել է և նրա բանաստեղծություններից կարելի է գուշակել, որ նա շատ հաճախ նման աննախանձելի դրության մեջ է եղել: Դրանով հանդերձ նա կարողացել է երբեմն շատ գեղեցիկ տողեր արտադրել, որի շնորհիվ նրա անունը անմահացել է, և նա դատվել է Իրանի մեծ բանաստեղծների շարքում:

Այս մի քանի հատվածները կարողացել ենք գտնել «ԲԵՀԹԱՐԻՆ ԱՇԱՐ» ժողովածուի և զանազան այլ տեղերում:

Իզուր խոսեցինք ժուժկալությունից,
Գարուն է այսօր,
Ջարկեցինք քարով սաղաֆե թասին
Չղջումով անզոր:

موسم گل بود و از تقوی دم بیجا زدم
باز سنگ توبه بر پیشانی مینا زدم

* * *

Դուրս եկար դռնից ու կրծքիցս իմ
Դուրս եկավ հոգիս,
Այս դավաճանը հետ կգա ինձ մոտ,
Երբ գաս անարիս,
Ես հազար աղբյուր աչքերից հոսուն
Ունեմ քեզ համար,
Այդ հսկա ջրով բոցերն եմ հոգուս
Շիջում անդադար:

* * *

Խաղով ու նագով, գիտակները քո
Խաբում, տանում են սրտերը խախտտ,
Խաբելուց հետո հանձնում են նրանց
Աչքի և հոնքի դահիճին անգութ:

* * *

Թե որ շաքարոտ համբույրը շրթիդ
Ծախես անարժան իմ կյանքի գնով,
Երդվում եմ ահա, քո հոգով անուշ՝
Ձրի՛ ես ծախել շուրթը քո գինով:

بجان فروشی اگر بوسه زان لب شکرینم
قسم بجان عزیزت که رایگان بخرم

* * *

Կուրծքը տեսա շապկի ծայքից,
Ու խնդրեցի սրտիս՝ նայել,
Ինչպես նձուց դալարագետ
Որպես պտուղ՝ նոն է կախվել:

* * *

Նա անկողնում մերկ էր պտկած այս գիշեր,
Ուր նայեցի՝ բուրաստան էր այս գիշեր,
Սիրտս կոտրեց, կոտրած մագով զանգրահեր,
Տեր իմ, խղճս, կոտրելոնց է այս գիշեր:

* * *

Մագիդ ծայքի բույրը անուշ
Բադախշանի մուշկից առար,
Բոց-արևի ոսկե հայլին
Նազ ու շաղով՝ ձեռքից առար

Եվ երբ կոտրած, զանգուրդ սև
Ընկավ լուսե դեմքիդ վրա
Ժողովուրդը ճշաց. «Տեսնք,
Խախարեղ է արևը վառ»:



**ԽԱՐԱԶՄԻ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՄՈՆՂՈՆԵՐԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ
ՉԻՆԳԻԳԻՑ ՄԻՆՉԵՎ ՄՈՆՂՈՒ ԻԼ-ԽԱՆՆԵՐԸ
(1203-ից մինչև 1262 Ք. հ.)**

«Թարիխե Ջահան Գոշա»-ում հետևյալ տողերը կան Մոնղոլների մասին. «Երանք եկան, արմատախիլ արեցին, այրեցին, կոտորեցին, կողոպտեցին և հեռացան»: Մի այլ տեղ նույն այդ պատմության մեջ գրված է. «Եթե այսօրվանից մինչև Դատաստանի Օրը ոչինչ չխանգարի ժողովրդի աճմանը, նրանց թիվը մեկ տասերորդը չի դառնա մոնղոլների արշավանքից առաջվա բազմության»: Իսկ հետևյալ խոսքերը վերագրում են իրեն՝ Չինգիզին. «Ամենամեծ ուրախությունը՝ թշնամիներին հաղթելը, նրանց հետապնդելը, նրանց ունեցվածքը գրավել, նրանց ընտանիքը արցունքի մեջ տեսնել, նրանց ձին հեծնել և նրանց կանանց ու աղջիկներին բռնաբարելն է»:

Ոչ միայն դժվար է նկարագրել, այլև դժվար է երևակայել այն աղետը, որ վիճակվեց Պարսկաստանին Մոնղոլների արշավանքով: Քանի որ մենք մտադիր չենք Իրանի պատմությունը գրել և մանրամասնանալ այս խնդրում, բավական է մոտավոր մի գաղափար տալու համար մի քանի փաստեր հիշել այստեղ:

Մոհամմադ Խարազմշահը, մեկը Պարսկաստանի ամենաթույլ, երկչու և դավաճան թագավորներից, Չինգիզին դիտմամբ մարտի հրավիրեց, Օթրարի առաջին ճակատամարտից հետո, պարտության մատնվելով, նա այլևս չդիմադրեց Մոնղոլներին: Այն հույսով, որ այդ «վայրենիները» կբավականանան սահմանափակ կողոպուտով, և կվերադառնան իրենց երկիրը, նա իր ուժերը բաժանեց գանազան քաղաքների պաշտպանության համար և երկիրը հանձնեց մոնղոլներին: Դրանից հետո ահա թե ինչ պատահեց, եթե միայն հիշենք Պարսկաստանի մեծ քաղաքների ճակատագիրը: Առաջ ընկավ Բոխարան, արևելքի գոհարը: Հինգ օր և հինգ գիշեր տևեց կոտորածը, որից հետո մոնղոլները հրդեհեցին քաղաքը: Հերթը հասավ Սամարղանդին, որի բնակիչներից միայն 30 հազար հոգի արհեստավորների կյանքը խնայվեց և մնացորդին կոտորեցին: Խիվան՝ Խարազմի կայսրության մայրաքաղաքը, գետնին հավասարվեց, Բալխը, Թուսը, Սաբզավարը, Մարվը (որի կես միլիոն բնակիչներից 5000 հոգի մնացին, որոնց մոնղոլների մի այլ խմբակ կոտորեց), Նիշաբուրը (որի ոչ միայն բնակիչներին, այլև կենդանիներին էլ կոտորեցին և տեղը գարի ցանեցին): Բամիանը ջնջեցին քարտեզի վրայից, Հարաթը, որը ըստ ժամանակակից պատմիչների մեկուկես միլիոն ժողովուրդ ուներ, բնաջինջ արեցին: Այդ

հսկա թվից մինչև 2000 հոգի կենդանի էին մնացել: Այդ աներևակայելի աղետից միայն մոտ 700 տարի է անցել և մոնղոլների դաժան, գազանային այս հարվածից դեռ չի ուղղվել Պարսկաստանի կոտրված ողնաշարը: Միայն Ֆարսը և Խուզեստանն էին, որ չենթարկվեցին հյուսիս և հյուսիսարևելյան Պարսկաստանի ճակատագրին: Քաղաքակրթությունը, արվեստը, գրականությունը անվերադարձ կերպով մեռավ Խորասանում, որը նրանց օրրանն էր: Մոնղոլների արշավանքից հետո Ֆարսը՝ Շիրազն է, որ դառնում է գրականության կենտրոն և Սպահանն է, որ նրա պետական վերածնման գահանիստն է դառնում:

Պարսկաստանը երկու անգամ է ենթարկվել Մոնղոլների արշավանքին: Առաջինը՝ Չինգիզ Խանի օրոք (1219-27 Ք. հ.) և երկրորդը՝ նրա թոռան որդի՝ Հուլաբուի օրոք (1255-65 Ք. հ.): Չինգիզ Խանը ոչնչացրեց Խորասանը և հասավ մինչև Ռեյ, Ղոմ, Քաշան և Համադան: Երկրորդ ալիքը խորտակեց Բաղդադի խալիֆաներին և միայն կանգ առավ Եգիպտոսի սահմանների մոտ: Մոնղոլների կայսրությունը հասավ իր գագաթնակետին Քարլահ Խանի օրոք (1260-94 Ք. հ.): Այդ կայսրության սահմաններում էին գտնվում Չինաստանը, Կորեան, Հնդկաստանը, Տիբեթը, Հյուսիսային Հնդկաստանը, Պարսկաստանը, Փոքր Ասիայի մեծ մասը, Ղրիմը և ամբողջ Ռուսաստանը մինչև Դենպր գետը:

Ինչ վերաբերում է Պարսկաստանին, այս երկիրը, ըստ իր ավանդական սովորության, պարսկացրեց իր նվաճողներին: Հուլաբու Խանի ամենամտերիմ և ազդեցիկ արքունականներից էր հայտնի աստղաբաշխ Նասեր-օղ-Դինն Թուսին և պատմագիր Ջովեյնին՝ «Թարիխե Ջահան Գոշա»-ի հեղինակը: Մոնղոլները չկարողացան նույնիսկ արյան մեջ խեղդել Իրանի գրականությունը, որը այս շրջանում աշխարհին տվեց Սաադիի, Ջալալեդդին Ռումիի և Աթթարի պես հանձարներ, չիչելով ավելի փոքր և տաղանդավոր քերթողների: Պիտի ասել, որ Պարսկաստանի լավագույն պատմիչներից, աշխարհագիրներից և մեծագույն սուֆիներից մի քանիսը նույնպես ապրել և գրել են այս շրջանում:

Աթթարը և Ջալալեդդինն Ռումին (հատկապես երկրորդը) Իրանի սուֆի-բանաստեղծների մեջ անմրցակից են, մինչդեռ Սաադիի, Հաֆեզի և Ֆերդուսու հետ, համարվում է պարսկական քերթողական հանձարի մի կատարելություն:

ՖԱՐԻԴ-ՕԴ-ԴԻՆ ԱԹԹԱՐ

Տարիդ օղ Դին Աթթար կամ Շեյխ Աթթարը, ինչպես նա ճանաչված է ժողովրդի մեջ, Իրանի սուֆի մեծագույն քերթողներից մեկն է համարվում, իրենից գերազանց ունենալով միայն Ջալալեդդին Ռումիին:

Նա ծնվել է Նեշաբուրում (Ք. հ. 1146 թ.), մանկության 13 տարիները ապրել է Էմամ Ռեզայի մզկիթի մոտ (այսօրվա Մաշադում), դրանից հետո երկար ճամփորդել է՝ Ռեյ, Քուֆա, Դամասկոս, Մաքքա, Հնդկաստան և Թուրքմենստան և վերջապես նորից վերադարձել է իր հայրենիք Նիշաբուրը, ուր մեռել կամ ըստ ոմանց, սպանվել է մի մոնղոլի ձեռքով: Նա մեռել է խորը ծերության մեջ, հարյուր տարեկանից անց, 1221 թվին Ք. հ.:

Ըստ որոշ կենսագիրների, նա գրել է 114 գիրք: Դա հավանաբար չափազանցված մի թիվ է: Բայց այսօր դեռ գոյություն ունեն նրա՝ մոտ 30 երկերը, որոնցից ամենածանոթներն են ՓԱՆԴ-ՆԱՄԵՆ (խրատների գիրքը), ՄԱՆԹԵՂ-ՕՂ ԹԵՅԲԸ (Թռչունների լեզուն) և «Սուրբերի պատմություն»-ը: Շեյխ Աթթարի երկերի մեծ մասը անտիպ է և միայն մի անգամ 1872 թվին լիտոգրաֆ տպագրվել է Լուկնովում:

Դժբախտաբար, պատեհություն չենք ունեցել կարդալու նրա քերթվածները, որոնք ընդհանրապես երկար մասնավի պոեմաներ են: Մեր տրամադրության տակ եղել է Շեյխ Աթթարի քառյակների ձեռագիր մի օրինակ, որը պարունակում է 50 քառյակ: Այդ քառյակները չափազանց միօրինակ են, և եթե այդ 50-ից միայն 3-ը թարգմանվի, կարելի է ընդհանուր գաղափար կազմել մնացորդ 47-ի մասին:

Նրա ամենահռչակավոր պոեման «ԹՈՂՈՒՆԵՐԻ ԼԵԶՈՒՆ» է, որը բաղկացած է 4600 տունից (երկտող): Դրա նյութը մի ալեգորիա (այլաբանություն) է, ցույց տալու համար սուֆիական հասկացողությունը մարդկային հոգու և Արարչի: Սուֆիական այս տեսությունը այնքան գեղեցիկ է, որ արժե գոնե մակերեսային ձևով ծանոթանալ նրան:

Շեյխ Աթթարը ներկայանում է, թե ինչպես թռչունները հավաքվում և վճռում են գտնել առասպելական Սիմորդ թռչունին: Թռչունները այստեղ ներկայացնում են մարդկանց, իսկ Սիմորդը՝ Արարչին «ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆԸ», ինչպես անվանում են Աստծուն սուֆիները: Որպես իրենց դեկավար՝ նրանք ընտրում են Հոպոպին, որը նույնպես Սողոմոնի սուրհանդակն էր ընտրվել Շերայի Թագուհու մոտ:

Բայց երբ սկսվում է փնտրտուքը, թռչուններից ամեն մեկը մի պատրվակ է բերում չմասնակցելու համար ճամփորդության: Սոխակը պատրվակում է իր սերը վարդի համար, բաղը չի կարող ջուրը թողնել, կաքավը չի կարող բաժանվել լեռներից, բուն սիրում է իր ավերակները: Վերջապես մնացորդ թռչունները շարունակում են ճամփորդությունը և հաջորդաբար անցնելով Փնտրտուքի, Սիրո, Գիտության, Անկախության, Շաղկապման, Զարմանքի, Զրկումների և Անէացման յոթը հովիտներից, գտնում են Սիմորդին և նրան գտնելով՝ գտնում են իրենց:

Սիմորդին գտնելու հատվածին հանդիպել ենք մի ժողովածուի մեջ և Բրատնը դրա արձակ թարգմանությունը տալիս է իր «Պարսկաստանի գրականության պատմության» երկրորդ հատորի 514 էջում: Չափազանց գեղեցիկ և պատկերավոր ձևով է տալիս Շեյխ Աթթարը Աստծո սուֆիական հասկացողությունը՝ այդ ալեգորիկ հանդիպման մեջ, բառախաղորեն ցույց տալով, որ ՍԻՄՈՐԴԸ (Արարիչը) նույնն է, ինչ նրան գտած երեսուն թռչունները (սի մորդ):

Աթթարը իր այս մեծ մասնավիներից բացի, ունի նաև փոքր քանաստեղծություններ: Բայց ընդհանրապես այս մեծ միստիկի քանաստեղծությունները անդադար պատում են սուֆիական հասկացողությունների շուրջ: Շեյխ Աթթարի լեզուն պարզ է, սահուն և մելոդիկ: Հետևյալ մի քանի քառյակները կարող են որոշ գաղափար տալ Աթթարի գրելակերպի և մտքերի մասին:

*Ոչ երևում եմ և ոչ թաքուն եմ սիրո անհունում,
Ոչ մարմին ունեմ և ոչ հոգի ես այս տիեզերքում,
Ոչ մուսուլման եմ, ոչ քրիստոնյա եմ և ոչ կռապաշտ,
Իմ շուքն եմ տեսնում՝ ինչի որ նայեմ իմ շրջապատում:*

در عشق نه پیدا و نه پنهانم من
محوى عجبم نه جسم نه جانم من
فى الجملة نه كافر نه مسلمانم من
در هر چه نگاه میکنم ، آنم من

* * *

*Երկնի անհունում մի բիթ եմ տեսնում,
Ամեն մի բիթում՝ երկինք եմ տեսնում,
Թե դու տեսնում ես մեկը՝ երկու հատ,
Ես հազար բիթով՝ մեկն եմ տեսնում:*

* * *

*Մի գոհար թաքուն կա քողերի տակ,
Նրան փնտրելու վազում են մարդիկ.
Իզուր ես փնտրում գաղտնիքը այլ տեղ,
Գոհարի վայրը սրտիդ է մտտիկ:*

* * *

*Գոյության ծովում կաթիլ էի ես,
Բայց կյանքս ամբողջ՝ փնտրեցի Նրան
Եվ երբ վերջապես դեմքը դարձրեց ինձ՝
Ո՞ղջ տիեզերքի դարձա հենարան:*

* * *

*Ով Դու, որիդ հրամանով տիեզերքն է պտտվում,
Դու կարդում ես ամեն տառ սրտիս արնոտ տետրակում,
Անքննելի՛ գորություն, շրթերս դեռ չբացած,
Արդեն գիտես ինչ որ կա հոգում ասված և չասված:*

* * *

*Քո փառքն են երգում ժողովուրդները երկու աշխարհի,
Եվ քո հրամանին հպատակվում է Անցյալ ու Ներկան,
Դո՛ւ, որիդ հասնել մարդը ճգնելով երբեք չի կարող
Ներկա ես դու միշտ, ու քեզ փնտրում են ռամիկ ու իշխան:*

* * *

*Ով Անձառ Էակ, մենակ դո՛ւ ունես նշան ինքնության,
Եվ քեզ ճանաչել չի կարող ոչ ոք, բացի դո՛ւ միայն,
Ողեղն հողածին չի կարող չափել մեծությունը քո,
Դու գիտես չափել Տիեզերքների անհունը համայն:*

Սուրբ Ղորանից հետո, Պարսկաստանում ամենահարգված և սիրված գիրքը Մոլանա Ջալալեդ-Դին Ռումիի «Մասնավին» է: «Մասնավին» ընդհանրապես կոչվում է «Ղորանը Փահլավի (պարսկերեն) լեզվով», որի մեջ գտնվում են «հավատքի արմատների արմատները, Միացման Խորհուրդի Հայտնագործությունը»:

Ջալալեդ-Դին Ռումին, առանց չափազանցության, Իրանի մեծագույն միստիկ բանաստեղծն է, որի քերթվածները բանաստեղծական մեծ արժեք են ներկայացնում, հակառակ այլ միստիկ բանաստեղծների, հոսուն են, երաժշտական, հետաքրքիր և լեզվական տեսակետից պարզ են: Բայց, ինչպես կտեսնենք հետագայում, այդ պարզ լեզվի մեջ մտքերի շմեցնող խճողում կա:

Ջալալեդ-Դինը ծնվել է Բալխ քաղաքում 1207 թվի աշնանը, բայց շուտով Ալա օդ-Դին Մոհամադ Խարազմշահի նախանձը ստիպեց նրա հորը գաղթել արևմուտք: 1212 թվին Բ. հ. հայր և որդի Նիշաբուրից անցնելիս այցելում են միստիկ բանաստեղծ Շեյխ Ֆարիդ օդ-Դին Աթթարին, որը, ըստ ավանդության, գրկում է Ջալալեդ-Դինին, օրհնում է նրան, նախատեսում է նրա մեծ ապագան և նվիրում է նրան իր «Էլահի նամե»-ի մի օրինակը: Նիշաբուրից գաղթականները շարունակում են իրենց ճանապարհը Բաղդադ և Մաքքե, այնտեղից Մալուֆին, ուր նրանք մնում են չորս տարի, հետո յոթ տարի ապրում են Լարինդայում (Փոքր Ասիա): Դրանից հետո նրանք հաստատվում են Կոնիայում (Ղունիեհ), որը այդ ժամանակ Սելջուկ թագավոր Քեյղոբադի գահանիստն էր: Այս վերջին քաղաքում է, որ Ջալալեդ-Դինի հայրը մահանում է 1231 թվին Բ. հ.:

Ջալալեդ-Դինը 21 տարեկան հասակում ամուսնանում է Գոհար անվամբ մի աղջկա հետ, որը նրան տալիս է երկու տղա, որոնցից մեկը սպանվում է Կոնիայում, մի ապստամբության ժամանակ, որի ընթացքում նույնպես սպանվում է Ջալալեդ-Դինի հոգևոր ուսուցիչ Շամսե Թարրիզին:

Հետագայում Ջալալեդ-Դինը, կորցնելով իր առաջին կնոջը, նորից է ամուսնանում և մահանում է 68 տարեկան հասակում 1275 թվին: Սուլթան Քեյղոբադե Սալջուզին նրան թաղում է մեծ շուքով հատուկ մի դամբարանում և Կոնիայում մարդիկ 40 օր սուգ են պահում:

Ջալալեդ-Դին Ռումին իր հոգևոր կրթությունը ստացել է նախ իր հոր՝ Բահադդ-Դին Վալադի մոտ մինչև նրա մահը: Դրանից հետո նա ճամփորդում է Հալեպ և Դամասկոս, ուսումը շարունակելու համար: Այդ շրջանում էր, որ նա ընկավ Շեյխ Բորհանոդ Դին Թերմենզի իր հոր նախկին աշակերտներից մեկի ազդեցության տակ: Թերմենզի մոտ նա երկար չաշակերտեց, քանի որ նա հանդիպել էր իր ժամանակի թերևս ամենատարօրինակ և խորհրդավոր անձնավորության՝ Շամսե Թարրիզին, որի անվամբ նա գրել է իր «Դիվանը», որը մինչև այսօր էլ կոչվում է «Դիվանն Շամսե Թարրիզի»: Nicholson-ը, որը անգլերենի է թարգմանել Մոլանա (Տեր) Ջալալեդ-Դին Ռումիի «Ընտրյալ գագեղներ»-ը, գրքի նախաբանում հետևյալ կերպով է նկարագրում Շամսե Թարրիզին.

«Նա համեմատաբար անգրագետ էր, բայց նրա աներևակայելի հոգեկան խանդավառությունը, որը հիմնված էր այն համոզման վրա, որ ինքը Աստծո ընտրյալ գործիքը և բերանն է, հրամայում էր բոլոր նրանց, որոնք մտնում էին նրա շրջապատի դուրսված օղակի մեջ: Այդ տեսակետից, ինչպես և իր ուժեղ կրքերի, իր աղքատության և իր սպանվելով՝ Շամսե Թարրիզին տարօրինակ կերպով հիշեցնում է Սոկրատին: Երկուսն էլ իշխում էին հանձարների վրա, որոնք գեղեցկորեն կերտում էին նրանց անտաշ հղացումները, երկուսն էլ հայտարարում են, որ արտաքին գիտությունը ունայն է, ներքին մի լուսավորում է պետք, պիտի հասկանալ սիրո արժեքը»:

Ջալալեդ-Դինը մտերմացավ Շամսե Թարրիզու հետ 1244 թվին և նրանց մտերմությունը տևեց միայն 15 ամիս, մինչև 1246 թվի մարտը, երբ կարճատև մի ապստամբության ժամանակ սպանվեց Շամսը:

Մի տաս տարի հետո էր, որ Ջալալեդ-Դինը մտերմացավ Ջավանմարդան կոչված ընտանիքից սերած Հեսամեդ Դին Քալավիի հետ և այդ սերտ մտերմությունը տևեց մինչև Ջալալեդ-Դինի մահը (Բ. հ. 1256): Այս վերջինի խնդրանք էր, որ նա գրեց 6 գրքից բաղկացած իր հոշակավոր «Մասնավին»-ն, որը պարունակում է 26 660 տուն (երկտող): Այս գրքի հեղինակությունը տևել է մոտ 10 տարի:

Այս հոշակավոր «Մասնավին» քաջի, Մոլանա Ջալալեդ-Դինը նույնպես թողել է քիչ վերև հիշված «Դիվան»-ը, որը նրա լիրիկ քերթվածների ժողովածուն է և ճանաչված է Շամսե Թարրիզի անվամբ, քանի որ դրանք ներկայացնում են կիսաանգրագետ Շամսի չիղված մտքերը, բարձր բանաստեղծական կաղապարի մեջ:

Պարսկաստանում «Դիվանը» ավելի քիչ ժողովրդականություն է վայելում, քան «Մասնավին», որը ինչպես ասեցինք, Իրանի երկրորդ Ղորանն է:

Թեհրանի համալսարանի պրոֆեսոր պրն. Բադիոզ Ջաման Ֆորուզանֆարը երեք հատորով խմբագրել է Ջավանմարդանի «Մասնավին» վեց գրքերը: Այդ աշխատանքը խորը ուսումնասիրության և համբերատար աշխատանքի գլուխգործոց է: Որոշ գաղափար տալու համար հայ ընթերցողին այս հոյակապ գործի բովանդակությունից, պարզ և սահուն ոճից և այդ պարզ լեզվի մեջ խճողված մտքերի առատությունից, օգտվելով պրն. Ֆորուզանֆարի վերջին հրատարակությունից, մի քանի օրինակներ կբերեմ ստորև:

«Մասնավին»-ն սկսում է առանց նախաբանի, գեղեցիկ մի հատվածով, որին կարելի է կոչել «Սրինգի երգը»: Այդ հատվածի առաջին ութ տողը (4 երկտողը) հետևյալն է.

*Սրինգը լսիր, թե ինչ է պատմում,
Օտարության մեջ ինչպես է լացում.
«Երբ բաժանեցին ինձ եղեգնուտից՝
Արցունք է լալիս երգս վշտալից,
Ուզում եմ պատռել կուրծքս ցավագար,
Պատմել ամենին ցավը սիրահար
Ով պոկվի ընդմիջտ արմատից սիրո՝
Պիտի տառապի որպես սիրո զոհ»:*

بشنو این نی چون شکایت می کند
از جدایی ها حکایت می کند
کز نیستان تا مرا بپریده اند
در نفیرم مرد و زن نالیده اند
سینه خواهم شرحه شرحه از فراق
تا بگویم شرح درد اشتیاق
هر کسی کو دور ماند از اصل خویش
باز جوید روزگار وصل خویش

Ահա թե ինչ է գրում պ. Ֆորուզանֆարը այս առաջին տողերի մասին.
««Մասնավոր» բացատրողների մեծամասնությունը այն կարծիքին է, թե Մովլավին այս տողերով ակնարկում է, որ մարդկությունը բաժանված է մի ճշմարտությունից և օր ու գիշեր աշխատում է իրեն մոտեցնել և միանալ այդ ճշմարտության: Ուրեմն սրինգը մարդկային ոգին է և եղեգնուտը այդ ընդհանուր ճշմարտությունն է, որից մարդը կտրվել և հեռացել է»:

Ահա մի այլ հատված.

*Մարմինն ամեն օր, մտքի ճնշման տակ,
Մտահոգությամբ, ցանկությամբ անհագ
Մաշվում, հալվում է և չունի աշխույժ,
Քայլել չի կարող ոտքերով անուժ:
Քնածը նա է, որ ամեն մտքից,
Ոգևորվում է, կառչում նրանից,
Թռչունը վերում սավառնում, իսկ նա
Գետնին է վազում, որսում շուքը նրա,
Նա չի հասկանում, դա շուքն է թռչնի,
Չի փնտրում երկնում աղբյուրը շուքի:*

Բացատրելով այս հատվածը այն գաղափարին ենք գալիս, որ Մովլավու կարծիքով աշխարհի բոլոր ցնծությունների և հաճույքների աղբյուրը ճշմարտությունը և սիրտն է, որի ստվերը ընկած է իրերի վրա և մարդը շուքը շփոթում է նրա աղբյուրի հետ:

*Մի մարդ՝ իմաստուն քերականությամբ
Մի օր նավ նստեց և հպարտությամբ՝
Դարձավ և հանկարծ հարցրեց. «Նավավար,
Գրականությունից գիտե՞ս դու մի բառ»:
«Ոչ», — պատասխանեց նավավարը կիրթ:
«Վատնե՞լ ես իզուր դու կեսը կյանքիդ»:
Շուտով մի ահեղ փոթորիկ եղավ,
Խառնվել էին երկինք, ջուր ու նավ,
Եվ իմաստունից հարցրեց նավապետ.
«Գիտե՞ս դու լողալ, ով գրականագետ»:
«Ոչ», — ասաց խեղճը, զուսատ և դողող:
«Կկորցնես իզուր քո կյանքը ամբողջ»:*

Պրն. Ֆորուզանֆարը գրում է. «Քանի որ ինքը աշխարհը անցողիկ և ժամանակը անհաստատ է գտնում, հետևաբար ինչ մեծ փառք կա աշխարհի մեջ իմաստունն լինել և ինչ արժեք ունի դա: Այսինքն չպիտի հպարտանալ գիտությամբ և սեփական խելքով, քանի որ աշխարհը ամբողջ իր մեծությամբ և կյանքը ամբողջ իր գորու-

թյամբ անցողիկ է և հավիտենական չէ, ինչ մնաց մենք, որ արարածներն ենք և ժամանակի բանտարկյալները»:

Այսպիսի օրինակներ Մովլավուց հարյուրներով կարելի է բերել, բայց այս աշխատության ծավալը թույլ չի տալիս կատարյալ մի պատկեր տալ պարսիկ մեծագույն Մուֆի-բանաստեղծից, որի բերնից բանաստեղծությունը թափում էր հեղեղի պես, և որը իր «Մասնավին» գրել է իր մտերիմ Հեսամեղդին Չելեբեի խնդրանք և միայն նրա համար, իսկ իր «Դիվանը» գրել է իր մի այլ մտերմի՝ Շամսե Թաբրիզի համար, որոնք երկուսն էլ համարյա թե անգրագետ են եղել:

Հանգուցյալ հորս «Զանազան»-ում Մովլավուց երկու կտորներ կան. Դրանցից երկրորդն է՝

*«Ինչո՞ւ» — ասաց ինձ — «աչքերդ իմ դեմքին
Պահում ես զամված»:
Թաց են և ահա ինչո՞ւ եմ պահում
Արևի դիմաց:*

«Զանազան»-ում գտնվող առաջին կտորը մի տողն է Մովլավու հայտնի մի գազելից, որին լրացնելու համար մենք թարգմանել ենք նրա նախորդող տողը և միացրել իրար:

*Երեկ Շեյխը ճրագով
Պտտում էր քաղաքում,
Դե ու չարքից կշտացած՝
ՄԱՐԴ էր փնտրում նա իզուր:*

دی شیخ با چراغ همی گشت گرد شهر
کز دیو و دد ملولم و انسانم آرزوست
گفتند یافت می نشود جسته ایم ما
گفت آن که یافت می نشود، آنم آرزوست

*«— Չի գտնվում» — ասացին,
«Փնտրում ենք մենք շարունակ»:
«— Բայց այն՝ որ չի գտնվում,
Այն է ուզածն իմ միակ»:*

Ահա մի քանի կտորներ ևս, վերջացնելու համար այս հատվածը:

*Տարբեր է կրոնը սիրահարների,
Բոցը այդ գինու՝ մի բոց է օտար.
Այն՝ ինչ դպրոցում սովորել ենք մենք,
Անպետք է սիրո դպրոցի համար:*

در مذهب عاشقان قرار دگر است
وین باده ی ناب را خماری دگر است
هر علم که در مدرسه حاصل گردید
کار دگر است و عشق کار دگر است

* * *

*Սիրո մեջ պիտի կենդանի լինել,
Թե ոչ՝ մեռածը սիրել չի կարող,
Եվ նա՛ է միայն կենդանի այսօր,
Ում որ ծնել է սերը բոցաշող:*

در عشق زنده باید کز مرده هیچ ناید
دائیکه کیست زنده آنکو ز عشق زاید

* * *

Լեզվով հազար մի գաղտնիք
Եւ կարող եմ բացատրել,
Բայց սիրո մեջ անլեզուն
Բացահայտ է առավել:
Ապացույցը արևի՝
Ինքն արևն է հրաշունջ,
Դեմք մի՛ դարձրու նրանից,
Թե ցանկանա ապացույց:

* * *

Երանելի է այն պահը, երբ մենք՝ փարված իրարու,
Երկու պատկեր, բայց թե հոգով մենք մեկ էինք – եւ ու դու:
Այգու բերքը, հավթի երգը անմահություն էր բերում,
Պարտեզի մեջ մենք էլ ասես մի երգ էինք – եւ ու դու:
Աստղերն ամեն մեր շուրջն էին, ու մենք՝ լուսին նրանց մեջ,
Աստղերի հետ աստղերի պես բերկրում էինք – եւ ու դու:
Առանց «եսի», առանց «դուի», ձուլված էինք, վերացած,
Հեռու, հեռու, ասես ուրիշ երկրում էինք – եւ ու դու:
Թռչունները ուրախության երգեր էին գեղգեղում,
Ու նրանց հետ ասես մենք էլ երգում էինք – եւ ու դու:
Բայց, ո՛վ զարմանք, երբ մենք իրար գրկում էինք այս պահին,
Եւ Իրաքում էի, իսկ դու՝ Խորասանում – եւ ու դու...²⁸
(Թարգմ. Սիրվա Կապուտիկյանի)

خنک ان دم که نشینیم در ایوان من و تو
به دو نقش و به دو صورت به یکی جان من و تو
داد باغ و دم مرغان بدهد آب حیات
آن زمانی که درآییم به بستان من و تو
اختران فلک آیند به نظاره ما
مه خود را بنماییم بدیشان من و تو
من و تو بی من و تو جمع شویم از سر ذوق
خوش و فارغ ز خرافات پریشان من و تو
طوطیان فلکی جمله شکر خوار شوند
در مقامی که بخندیم بدان سان من و تو
این عجبتر که من و تو به یکی کنج این جا
هم در این دم به عراقیم و خراسان من و تو
به یکی نقش بر این خاک و بر آن نقش دگر
در بهشت ابدی و شکرستان من و تو

²⁸ Միջնադարյան պարսից աշխարհի երկու հակադիր ծայրամասերն են (Էրազն Աջամ — Խորասան):

(«Պարսից պոեզիայի ընտրանի», պարսկերենից տողացի թարգմանեց, առաջարանը գրեց և ծանոթագրեց Արմանուշ Կոզմոյանը, Երևան, 2004.— Ն. Մ.)

* * *

Ո՛վ ուխտավոր մարդ արարած, ո՛ր ես, ո՛ր ես գնացել,
Չէ որ յարդ հենց այստեղ է, զուր ես, զուր ես հեռացել:

Սիրեցյալդ թո որկիցն է՝ հարևանդ մերձավոր,
Ինչ ես դու էլ զլիսամուրդը հանդ ու ձորում մնացել:

Եթե մի օր հայացք նետես անդեմ յարիդ երեսին,
Հաստատ կասես՝ տերն էլ ես դու, տունն էլ ես դու, տաճարն էլ:

Այդ կածանը քեզ քանիցս է հասցրել մինչև տուն,
Մեկ անգամ էլ նույն տանիքը փորձիր դու էլ մագլցել:

Դու լավ գիտես, Աստծո տունը նրբագեղ է՝ հիրավի,
Դու կարող ես սուրբ տաճարի տիրոջ գովքը տարածել:

Նվաճումդ փունջ ծաղիկ էր, որ քաղեցիր պարտեզից,
Կամ էլ գոհար, որ տիրոջդ օվկիանից ես վաստակել:

Քո վաստակած գանձը, սակայն, տառապանք էր՝ տանջալի,
Ակիսու է, որ գանձարանդ ինքնակամ ես, դու թաքցրել:
(Թարգմ. Գրիգոր Խ. Առաքելյանի, 2024 թ.— Ն. Մ.)

ای قوم به حج رفته کجایید کجایید
معشوق همین جاست بیایید بیایید
معشوق تو همسایه و دیوار به دیوار
در بادیه سرگشته شما در چه هوایید
گر صورت بی صورت معشوق ببینید
هم خواجه و هم خانه و هم کعبه شما
ده بار از آن راه بدان خانه برفتید
یک بار از این خانه بر این بام برآید
آن خانه لطیفست نشان هاش بگفتید
از خواجه آن خانه نشانی بنمایید
یک دسته گل کو اگر آن باغ بدیدید
یک گوهر جان کو اگر از بحر خدایید
با این همه آن رنج شما گنج شما باد
افسوس که بر گنج شما پرده شما

Մոշարաֆոդ-Դին էրնե Մուլեհոդ-Դին Արդուլաիր ծնվել է Շիրագում 1184 թվին Բ. հ. և մահացել է 117 տարեկան հասակում, 1291 թվին Բ. հ., ոմանք նրան 102, ոմանք 110 և ոմանք 120 տարեկան են համարում, բայց ամենաստույգ պատմական աղբյուրներից կարելի է եզրակացնել, որ վերի թիվը ամենից ավելի ճշգրիտն է և այդպիսով Սաադին ոչ միայն Իրանի մեծագույն, այլև ամենաերկարակյաց բանաստեղծներից է:

Նա մանուկ հասակում կորցնում է իր հորը և դրանից հետո Ֆարսի Աթաբեկ՝ Սադ էրնե Զանգին նրան վերցնում է իր հովանու տակ և ուղարկում է Բաղդադ, ուսանելու օրվա հռչակավոր Նեզամիե դպրոցում: Սաադին Բաղդադ է մնում մինչև 42 տարեկան հասակը, որի ընթացքում նա գլխավորապես ուսանում է: Բայց այդ ընթացքում նա մի անգամ ձամփորդում է Քաղշար, հավանաբար 1210 թվին: Արդեն այն ժամանակ, երբ նա դեռ 26 տարեկան էր միայն, նրա անունը և հռչակը հասել էին չինական սահմաններին:

Բաղդադում Սաադու ուսուցիչներից մեծ հռչակ էին վայելում հայտնի Սուֆի Շեյխ Շեհարոդդին Սուիրավարդին և Շամսոդդին Աբու Ֆարաջ էրնու Ջուզին, որոնց երկուսին էլ նա հիշում է իր «Բուստանում» և «Գոլեստանում»:

Սաադիի կյանքի այս առաջին շրջանին հետևում է նրա երկրորդ շրջանը, ձամփորդությունների և թափառումների երկար տարիները, որոնք տևում են մոտ 30 տարի մինչև 1256 թվականը: Իր այս թափառումների մեջ Սաադին այցելել է Փոքր Ասիան, Հաբեշստանը, Եգիպտոսը, Դամասկոսը, Պաղեստինը, Հայաստանը, Արաբիան, այժմյան Թուրքմենստանը, Հնդկաստանը, Դելլամը, Քաշգարը, Փանջաբը, Սոմենաթը, Գուջերաթը, Եմենը, Հյուսիսային Աֆրիկան և Բաալբեկը: Բացի այդ, նա պատել է ամբողջ Պարսկաստանը: Տասնչորս անգամ ձամփորդել է Մեքքա:

Շեյխ Սաադին իր այս բազմաթիվ թափառումների մեջ, ձամփորդել է առանց իրի և ունեցվածքի, դարմիշների պես, շատ հաճախ դժվարությունների և նեղությունների է հանդիպել, գերի է ընկել խաչակիրների ձեռքը՝ երկար ժամանակ Պաղեստինում ջրածախ է եղել (սաղա): Նա իր ձամփորդական տպավորությունները և արկածները շատ գեղեցիկ կերպով պատմել է «Բուստանի» և «Գոլեստանի» մեջ, որոնց գրել է իր կյանքի երրորդ շրջանում, թափառումներից Շիրազ վերադառնալուց հետո:

Սաադին վերադարձավ Շիրազ Դամասկոսի, Արաքի և Սպահանի ճանապարհով, 1256 թվին, 72 տարեկան հասակում: Մի տարուց հետո 1257 թվին լույս տեսավ նրա հռչակավոր «Բուստան»-ը և հաջորդ տարին՝ «Գոլեստան»-ը: Դրանից հետո Շեյխ Սաադին մինչև խորը ծերություն այլևս չհեռացավ Շիրազից և այդ շրջանը նրա գրական գործերի ամենաբեղուն շրջանն է, բայց աղքատ է դեպքերով և արկածներով:

Շեյխ Սաադիի թողած գրական գանձը, նրա մահվանից 43 տարի հետո հավաքեց և կազմեց Շեյխ Ալի էրնե Ահմադ էրնե Աբիբեբը: Նրա «Քոլլիաթ»-ի (երկերի ժողովածու) առաջին կազմությունը հետևյալ կերպով է արված.

- 1 — Խրատական և կրոնական հողվածներ, արձակ:
- 2 — Գոլեստան:
- 3 — Բուստան:
- 4 — Խրատների գիրքը (Փանդ-նամե):
- 5 — Պարսկերեն, պարսկ-արաբերեն, եռ-լեզու (պարսկերեն-արաբերեն և օրդու) ՂԱՍԻԴԱՆԵՐ:
- 6 — Արաբերեն գրված ՂԱՍԻԴԱՆԵՐ:
- 7 — Գազելների առաջին դիվանը (Թայյեբաթ):
- 8 — Գազելների երկրորդ դիվանը (Բադաե):
- 9 — Գազելների երրորդ դիվանը (Խավաթիմ):
- 10 — Հին գազելներ, որոնց բանաստեղծը գրել է երիտասարդ տարիքում:
- 11 — Սահեբիե, Սահեբ Դիվանին նվիրված բանաստեղծություններ, որոնց շարքումն են գտնվում հատվածները, քառյակները, մասնավիները և այլն:
- 12 — Հազվիաթ կամ խայտառակ և պոռնոգրաֆիկ բանաստեղծություններ:

Մենք երկար չենք կարող կանգ առնել պարսիկ այս հանձարի երկերի յուրաքանչյուր մասի վրա: Նրանցից ամեն մեկը մի հատոր պետք ունի կատարյալ ուսումնասիրության և վերլուծման համար:

Ավելորդ չէր լինի, նախքան երկերի վերլուծման անցնելուն, այստեղ տալ Բրաունի մի քանի քննորոշ և գեղեցիկ տողերը Սաադիի հանձարի մասին.

«Իրականում, Սաադիի իսկական հմայքը և նրա ժողովրդականության գաղտնիքը չի գտնվում նրա հաստատամտության, այլ իր ուղղափառության մեջ. նրա գրքերում ամեն ճաշակի համար նյութ կա, ամենաբարձրից վերցրած մինչև ամենալացածը, ամենանորբը և ամենակոպիտը... նրա գրվածքները Արևելքի միկրոկոսմոսն են կազմում, իր լավագույն և վատթարագույն կողմերով և իզուր չէ, որ ուր որ ուսանվում է պարսկերեն լեզուն 6 և կես դարերի ընթացքում, Սաադու երկերը առաջին գրքերն են, որ դրվում են ուսանողի ձեռքը»:

ԳՈՒԼԵՍՏԱՆԸ ԵՎ ԲՈՒՍՏԱՆԸ — Վեց դարվա ընթացքում չի եղել և չկա մի գիրք, որը ավելի կարդացված լինի, քան Գոլեստանը, Գոլեստան է դրվում պարսիկ երեխայի ձեռքը և նրանով է նա սկսում պարսկերենի ուսուցումը և մինչև մահ՝ այդ գիրքը մնում է պարսիկի ձեռքին: «Բուստանի» պես մասնավի պոեմաներ կարելի է գտնել պարսկական գրականության մեջ, բայց Գոլեստանի պես մի գիրք՝ գոյություն չունի: Պարսիկները չորս գիրք ունեն, որոնցով հպարտ են, և որոնք ամեն մի պարսիկի անբաժան ընկերն է. «ՇԱՀՆԱՄԵՆ», «ՄԱՍՆԱՎԻ ՄԱՆԱՎԻՆ», «ԳՈՒԼԵՍՏԱՆԸ» և Հաֆեզի «ԴԻՎԱՆԸ»:

«Գոլեստանը» թարգմանվել է բազմաթիվ լեզուներով, ինչպես՝ լատիներեն, ֆրանսերեն, գերմաներեն, անգլերեն, հոլանդերեն, ռուսերեն, իտալերեն, հայերեն²⁹, օրդու և այլն: Հայերենում մենք ունենք Թիրյաքյանի թարգմանությունը, որը արևմտահայերեն լինելով, չի կարողանում քնազրի հմայքը ներկայացնել, բայց որ-

²⁹ Գուրգեն Մելիքյան, «Սաադին հայերեն», Թեհրան, 2024: Բախտիար Հովակիմյան, «Սաադիի «Գոլեստանի» 700 ամյակը», «Կոմունիստ», 1958, թիվ 7:

պես թարգմանություն չափազանց խնամված և մաքուր է: Այս գործի ծավալը թույլ չի տալիս օրինակներ բերել «Բուստանից» և «Գոլեստանից», որոնք առանց այն էլ լավ ծանոթ են պարսկահայերին: Բավական է ասել, որ այնքան մեծ է Գոլեստանի ժողովրդականությունը, որ նրանից ավելի քան 150 առակներ և ասացվածքներ են մտել պարսկերեն լեզվի մեջ, որոնց նույնիսկ մենք՝ պարսկահայերս, հաճախ գործածում ենք:

Ահա մի քանի օրինակ, որոնք գուցե հայերեն թարգմանության մեջ անծանոթ հնչեն, բայց որոնց պարսկերենը մենք շատ հաճախ գործածում ենք: Միաժամանակ այս մի քանի ասացվածքները շատ հատուկ կերպով ցույց կտան «Գոլեստանի» հակամետ, բայց զուտ արևելյան և մաքիավելական ոգին: Այն, ինչ Բրաունը անվանում է «ոչ հաստատամիտ, բայց ուղղափառ»:

- Ինչ պակասություն որ թագավորը հավանի, առավելություն է:
- Ով ձեռքը կյանքից լվա, ինչ սրտում ունի՝ կասի:
- Օձին սպանել և ձագին պահելը իմաստունի գործ չի:
- Գայլի ձագը վերջը գայլ կդառնա:
- Զորությունը գիտության մեջ է և ոչ հարստության, և մեծությունը խելքի մեջ է, ոչ՝ տարիքի:
- Նրանք, որ ավելի հարուստ են, ավելի աղքատ են:
- Նա, որ հաշիվը մաքուր է, ինչո՞ւ վախենա հաշվետվությունից:
- Մինչև որ թրիաքը Արագից բերեն, օձից կծվածը մեռել է:
- Թե որ թագավորը ցերեկն ասի գիշեր է, պետք է ասել «ահա լուսինը և ահա փարվանան»:
- Աշխարհ տեսածը՝ սուտ շատ կասի:
- Բարեկամիդ դուռը ավելի ու թշնամուդ դուռը մի թակիր:
- Թե որ վատ լինես ու լավդ ասեն, ավելի լավ է, քան թե վատ լինես ու լավդ խոսեն:
- Ուր որ գիշերով դարվիշը հասնի՝ դա նրա տունն է:
- Մարդը պիտի ականջ անի խրատին, նույնիսկ թե որ դա պատին գրած լինեն:
- Վատ սովորությունը միայն մահվամբ կանցնի:
- Ուտելը ապրելու և աղոթելու համար է, ոչ թե ապրելը՝ ուտելու համար:
- Երբ մրջյունները միաբանվեն, առյուծի մորթին կքանդեն:
- Ժուժկալ մարդու վիզը երկար է:
- Ով ոլորապտույտ և անշնորհք աղիք, դու չես կարողանում սազվես աշխարհի հետ:
- Ես քո լավից վազ եմ անցել, ինձ մի վնասիր:
- Ինչ գիտես, թե դու երկնքում ինչ կա, դու որ չգիտես, ով է հարկիդ տակ:
- Այն մարդուն նագիր, որ նագդ առնի:
- Ավելի լավ է կինը իր կողքի մի նետ ունենա, քան ծերն ամուսին:
- Հիսուսի էշին թե Մաքքա տանեն, նույն ավանակը կվերադառնա:
- Թե քարով զարկես դու մի շան գլխին, ոսկորի հույսով՝ ցնծությամբ կելնի:

Արփիկ Մինասյան, Սաադիի «Գոլեստանը» և նրա հայերեն թարգմանությունները, Երևան, 1972: (Ն. Մ.):

- Հաշտեցնող սուտը ավելի լավ է կոիվ գցող ճշմարտությունից:

Այսպես շատ երկար կարելի է շարունակել, բայց նրանք, որ կարդացել և վայելել են այս հազվագյուտ գիրքը իր բնագրի մեջ, կարող են միայն հասկանալ, թե որպիսի հմայք կա նրա լեզվի, որպիսի միտք և որպիսի իմաստություն նրա ամեն մի պատմության մեջ: Դա հարազատ պատկերացումն է աշխարհիկ կյանքի, իր սուտերով, իր սխալներով, իր իմաստությամբ, իր հոգեկան խորքով, ժամանակի բարքերով (որոնք բոլորովին չեն փոխվել այս 6 դարվա ընթացքում): Սաադու հանձարը «Գոլեստան»-ում հասել է մի գագաթնակետի, որ նա տեսնում է կյանքը իր ամբողջ մերկ տզեղության մեջ, միաժամանակ ցույց տալով մարդկային հոգու բնածին ազնվությունը: Դա անգերագանցելի ռեալիստ մի պատկերացումն է համաշխարհային ֆեոդալիզմի ճնշման տակ տառապող մարդկության:

«Բուստանը» նույնպես ինքնակենսագրական դրվագներով հարուստ մի հատոր է, բայց նրա մեջ պակասում է «Գոլեստան»-ի բազմազան առավելությունները: «Բուստանը» գրված է մասնավոր պոեմայի նման և պարսկերեն լեզվում, իր կարգի մեջ, մեկն է չորս ամենասիրված մասնավորներից՝ «Շահնամն»-ն, «Էսքանդար նամն» (Նիզամի Գանջավու) և «Մասնավի Մոլավին»: «Բուստանի» և ընդհանրապես Շեյխ Սաադու քերթվածների աչքի ընկնող առավելություններից մեկն այն է, որ Սաադին խուսափում է պոռոտ ոճից, աշխատում է որքան կարելի է պարզ պատմել իր անեկդոտները և չի ընկնում չափազանցությունների, անհավատալի հեքիաթների, հրաշքների հետևից, մի քան, որ շատ ընդունված էր մյուս մասնավոր պոեմաներ գրողների կողմից:

Թողնելով Շեյխ Սաադու քերթվածների այս երկու հիմնաքարերը, հասնում ենք նրա «Գագեներին», որոնք որոշ գրականագետների կարծիքով, ոչ միայն հավասարվում, այլ նույնիսկ երբեմն գերազանցում են գագելի աստված Հաֆեզին: Շեյխ Սաադու «Դիվանը» կոչում են «Բանաստեղծների աղամանը»: Չնայած Սաադուց առաջ Անվարին, Խաղանին, Ջահիրն Ֆարյաբին գագելներ են գրել, բայց գագել գրելու արվեստը սկսվում է Սաադիով, որը այնպիսի նրբություն և վարպետություն մտցրեց նրանց մեջ, որ նրանից հետո պարսիկ բանաստեղծները թողեցին մասնավոր և դասիղե գրելը և գագելը իր առաջնագույն տեղը գրավեց պարսկական պոեզիայի մեջ:

Հանգուցյալ Մոհամադ Ալի Ֆորուդին 1318 թվին երկու հատորով տպագրել է Շեյխ Սաադու դիվանը, օգտագործելով հնագույն ձեռագիրները:

Նա իր այդ հրատարակության մեջ չի հետևել գագելների հին բաժանումներին և բոլորը տպագրել է տառային կարգով: Կարդալով սկզբից վերջ Շեյխի Դիվանը, այս խառն կարգով, տարօրինակ է, որ շատ հազվագյուտ դեպքերում կարելի է գանազանել նրա երիտասարդ, հասուն և ծեր հասակում գրած գագելները իրարից: Այդ տարօրինակությունը ավելի է շեշտվում, երբ աչքի ենք առնում, որ Սաադին գոնե 90 տարի բանաստեղծություն է գրել, գուցե նույնիսկ 100 տարի, մի ամբողջ դար, և ամբողջ այդ ընթացքում նա պահպանել է իր լեզվական սահունությունը, գեղեցիկ դիմը, բովանդակության ճոխությունը, մտքերի խորքը, սիրուց կրակոտ զգացումը: Մի խոսքով այն բոլորը, ինչ մի բանաստեղծի անմահացնում է: Սա ևս Սաադու եզակի գերազանցություններից մեկն է, որի վրա քչերն են անդրադարձել:

«Դիվանի» մասնավիները, հատվածները (դաթաաթ), քառյակները և այլն, կազմում են նրա «Երկերի ժողովածուի» վերջին մասը: Նրանց մասին առանձին անդրադառնալ ավելորդ է: Նրանց պիտի կարդալ: Բավական է ասել, որ Սաադին իր ամեն մի քառյակի, ամեն մի հողվածի, ամեն մի տողի մեջ պահպանում է իրեն հատուկ պարզությունը, երաժշտականությունը և մտքի խորքը:

Նրա «Գոլեստանից» և «Դիվանից» թարգմանել ենք բազմաթիվ կտորներ, որոնց կիրատարակենք մամուլում աստիճանաբար, այն հույսով, որ մի օր մեզ հաջողվի առանձին գրքույկներով հրատարակել Հաֆեզի և Շեյխ Սաադու հայերեն թարգմանված քերթվածները: Միաժամանակ զբաղված ենք հանգուցյալ հորս Սաադուց թարգմանած բազմաթիվ կտորները հավաքել զանազան թերթերից և ժողովածուներից, նրանց ձեռագրերը անհետ և անհույս կորած լինելու պատճառով:

Հովսեփ Միրզայանի թարգմանություններից («Վերածնունդ», 1930–1936.— Ն. Մ.).

Չեմ հանդգնում ես հող դառնալ
Նստել տակին կոշիկի նրա,
Որ իմ փոշին չերթա, նստե
Պարկեշտության փեշի վերա:

خاک پایش خواستم شد بازگفتم زینهار
من بر آن دامن نمی خواهم غبار خویش را

* * *

Ով որ հանդգնի սիրել քո նման եղնիկ գեղանի,
Պետք է վերջապես իր զլուխն առած անսպաստ ընկնի:

عاقبت سر به بیابان بنهد چون سعدی
هر که در سر هوس چون تو غزالی دارد

* * *

Այս բուրաստանում ցայտոր անփուշ վարդ չէ տեսել ոչ որ
Անփուշ վարդն այս չոր ու չար աշխարհի բարի մարդն է լոկ:
Սաադի ով բարի անուն է շահել մտած չէ բնավ,
Այն մարդն է մտած, որին հիշելիս բարին չստվեցավ:

گل بی خار میسر نشود در بستان
گل بی خار جهان مردم نیکوسیرند
سعدیا مرد نکو نام نمیرد هرگز
مرده آن است که نامش به نکویی نبرند

* * *

Դու քո խելքովն ես միայն
Գերընտրելի զազանից,
Իսկ բանն եթե ոյժի գա
Շատ բարձր է նա քեզանից:

* * *

Քո բարեկամին որքան էլ սիրես
Սիրող մի՛ բանս,
Քանզի բարեկամի այլ բարեկամներ
Անշուշտ կունենաս:

* * *

Սազվիր նրա հետ, որին չես կարող
Լինել թշնամի,
Համբուրիր մի ձեռք, որը կարող չես
Տանել ստամի:

* * *

Բարիք անել չարերին
Մի չար գործ է ըստինքյան,
Խորին իմաստն այս խոսքի
Խորիող մարդիկ կիմանան.
Եթե լինել ցանկանաս
Գայլի համար դու բարի,
Պիտի դառնաս չարագործ
Հոտի համար ոչխարի:

* * *

Ո՛վ դու, որ դրիր հրամանիդ ծայրում
Զրկանքի պար
Վախեցիր նետից, որ սրտիդ համար
Թռչում է արագ:
Քո նետը, եթե կարող է անցնել
Մի գրահից պողպատ,
Սրաքը նրա կանցնի լեռներից
Թե լինի երկաթ:

هان ای نهاده تیر جفا در کمان حکم
اندیشه کن ز ناوک دلدوز در کمین
گر تیر تو ز جوشن فولاد بگذرد
پیکان آه بگذرد از کوهر آهنین

* * *

Սաադին եմ ես բոցալեզու
Ցավովդ հավրում մումի պես,
Բայց քո վերա կրակ լեզվով,
Ազդեցություն չարի ես:

* * *

Եթե թշնամին բարեկամ դառնա
Մի քանի անգամ,
Խելացին նրան չի սազի բնավ
Սրտով բարեկամ:
Օձն յուր բնությանը հենց այն ոտխն է,
Որ կա ի ներքուստ,
Թեև իր կաշին նա հազար անգամ
Փոխե արտաքուստ:

* * *

Երբ չես կարող հիվանդ մարդու
Յավին ղնել մի վախճան,
Մի զլանար մի քանի քայլ
Գնալ նրա տեսության:
Հազար տեսակ քաղցր ընկելիք,
Հազար պտուղ բուրալի
Այնքան օգուտ չունի որքան
Խոսքն ու ինձանք սիրալի:

* * *

Ջարկում են քարով ծառին անդադար
Եվ ինչո՞ւ, քանզի քաղցր է մի արնավ,
Մինչ անապատում վատ ու վնասակար
Տատասկին չարիք չի հասնում բնավ:
Վանդակում երկար չեն պահում սոխակ,
Թե ոչ շնորհիվ իր անույշ ձայնի,
Այն ինչ բազեով որսալու համար
Յին կաշաղակին սեպում արժանի,
Սիրամարգն այնքան շքեղ է տեսքով
Որ փետուրներից քանդում են մարդիկ,
Երբ ես Աստուծո բարեկամներին
Տեսել, որ գլխին չգա մի չարիք:

چو رنج برتوانی گرفتن از رنجور
قدم ز رفتن و پرسیدنش دریغ مدار
هزار شربت شیرین و میوهی مسموم
چنان مفید نباشد که بوی صحبت یار

شجر مقل در بیابانها
نرسد هرگز آفتی به برش
رطب از شاهدی و شیرینی
سنگها میزنند بر شجرش
بلبل اندر قفس نمی ماند
سالها، جز به علت هنرش
زاغ ملعون از آن خسیس ترست
که فرستند باز بر اثرش
وز لطافت که هست در طاووس
کودکان می کنند بال و پرش
که شنیدی ز دوستان خدای
که نیامد مصیبتی به سرش؟
هر بهشتی که در جهان خداست
دوزخی کرده اند بر گذرش

ՀԱՏՎԱԾՆԵՐ ԳՈՒԵՍԱՆԻՅ

Ճշմարտության ճանապարհին խտորնակ և Իմաստության Վարպետների գա-
ղափարին հակառակ է դեղը կասկածելով գործածել և անծանոթ ճամփան
ատանց քարավանի անցնել:

Էմամ Մորշեղ Մոհամադ Ղազալիից (Աստծո ողորմությունը իջնի նրա հոգուն) հարցրեցին.

- Ինչպե՞ս դու հասար գիտության այս բարձունքին:
Պատասխանեց.
— Նրանով, որ չիմացածս ուրիշից հարցնելուց չամաչեցի:

Առողջանալու հույսը խելքին մոտ մի բան է միայն,
Երբ զարկերակդ հասկացող մարդու մատներին հանձնես,

Ինչ որ չգիտես՝ ուրիշից հարցրու, որ ամոթը այդ՝
Պատճառ կլինի, որ իմաստության բարձունքին հասնես:

* * *

Մի մեծավորից հարցրեցին.
— Այն բոլոր գերազանցություններով, որ այժ ձեռքն ունի, ինչո՞ւ մատանին ձախ
ձեռքի մատին են դնում:
Պատասխանեց.
— Մի՞թե չգիտես, որ գիտության տեր մարդը միշտ զրկված է լինում:

Նա, որ ստեղծել է տիեզերքն անհուն,
Կամ բախտ է շնորհում, կամ իմաստություն:

* * *

Իմաստուն մեկին մի հավաքություն անդադար գովում ու նրա բարձր առաքի-
նությունները չափազանցում էին:
Գլուխը բարձրացրեց և ասաց.
— Ես այն եմ, որ ինքս գիտեմ: Իմ դեմքիս գովում եք ինձ և իմ ցավը նրանումն է,
որ ներքինիս մասին գաղափար չունեք³⁰:

Իմ արտաքինը գովում են մարդիկ, չտեսների պես,
Այնինչ իմ ներքին կեղտոտությունից գլխիկոր եմ ես,
Այս գեղեցկությամբ, որ բնությունը սիրամարգ ստեղծեց՝
Այդ թռչունը գես աչքը չի պոկում իր ոտքից տգեղ:

* * *

Լողմանից հարցրեցին.
— Ումի՞ց սովորեցիր քաղաքավարությունը:
Պատասխանեց.
— Անբաղաքավարներից: Այն բոլորը, ինչ նրանք անում էին և ես չէի հավանում,
խոսափում էի կրկնելուց:

Ինչ որ տգեղը չհասկանալով ասի կամ անի,
Խելքը դրանից կարող է քաղել խրատ գեղանի:
Դու իմաստության թե հարյուր խրատ կարդաս տգետին,
Կմտածի, որ քամու բերածը քամին կտանի:

³⁰ Բնագրում արաբերեն է:

Թագավորներից մեկին չինացի ստրկուհի բերին, ցանկացավ հարթած ժամանակ նրան մոտենալ, ստրկուհին չթողեց: Թագավորը զայրացավ և նրան նվիրեց մի սևամորթի, որի վերի շուրթը անցնում էր քթից և վարի շուրթը կախվել էր պարանոցից: Մեկը, որից լեռնադևը կփախներ ու ծծումբը կհոտեր նրա գրկում:

Ասում են, որ այդ ժամանակ սևամորթի բնությունը անասնական էր և ցանկությունը հաղթական, կիրքը շարժվեց և ստրկուհու կնիքը կտորեց:

Երբ առավոտյան Թագավորը փնտրեց ստրկուհուն և չգտավ, պատմեցին նրան եղելությունը: Զայրացավ և հրամայեց, որ սևամորթին և ստրկուհուն կապեն իրար և աշտարակից վայր ձգեն:

Բարեմիտ վագիրներից մեկը բարեխոսության գլուխ խոնարհեց և ասաց.

— Խեղճ սևամորթը մեղավոր չէ, քանի որ քո ծառաները սովորել են իրենց Տիրոջ առատաձեռնության:

Արքան պատասխանեց.

— Թե որ մի գիշեր ստրկուհու հետ իր գործը ուշացներ՝ ինչ կլիներ, քանի որ ես նրան այդ ստրկուհու արժեքից շատ ավելի դրամ կպարգևեի:

Վագիրն ասաց.

— Ով Երկրի Տեր, մի՞թե չես լսել, որ ասված է.

Աղբյուր հասած ծարավին

Թե որ ծեծես անխնայ՝

Նույնն է անճար մի աղքատ

ՌԱՄԱԶԱՆԻՑ վախենա:

Թագավորը հավանեց այդ խոսքը և ասաց.

— Այժմ, սևամորթ, ներեցի քեզ, բայց ստրկուհուն ինչ անեմ:

Նա պատասխանեց.

— Ստրկուհուն էլ նվիրիր ինձ, որ իմ կերածի մնացորդը միայն ինձ է արժանի:

* * *

Լսեցի, որ մի վաճառական հարյուր հիսուն ուղտի բեռ ուներ և քառասուն ծառա: Մի գիշեր Քիշ կղզում ինձ իր օթյակը հրավիրեց և ամբողջ գիշեր չղաղարեց անմիտ խոսելուց, որ այսինչ ապրանքս Թուրքեստան և այնինչ հարստությունս Հնդկաստանումն է, և որ այս մուրհակը այսինչ գետնի և այնինչ բանին՝ այսինչը երաշխավոր է: Երբեմն ասում էր՝ մտադիր եմ Ալեքսանդրիա ճամփորդել, քանի որ այնտեղի օդը լավն է, բայց հետո ասում էր, որ Արևմտյան Ծովը փոթորկալից է:

— Ով Սաադի, մի ուրիշ ճամփա կա իմ առաջ, որ թե այն էլ երթամ, մնացորդ կյանքս մի անկյուն կքաշվեմ:

Հարցրեցի.

— Այդ ինչ ճանապարհ է:

Ասաց.

— Ֆարսի ծծումբը ուզում եմ տանել Չինաստան, որ ասում են այնտեղ մեծ արժևույթ ունի և այնտեղից հախճապակի տանեմ Հոմ և Հոմի բեհեզը՝ Հնդկաստան և Հնդկաստանի պողպատը՝ Հալեպ և Հալեպի ապակին՝ Եմեն և Եմենի հյուսվածքը՝ Ֆարս և դրանից հետո կթողնեմ առևտուրը և կնստեմ մի կրպակում:

Վերջապես այս խելառ զառանցանքներից այնքան ասեց, որ այլևս ավելին ասելու կարողություն չմնաց:

Ասաց.

— Սաադի, դու էլ տեսածներիցդ ու լսածներիցդ մի բան պատմիր:

Ասացի.

Արդյոք լսեցիր, Ղար անապատում

Ավագին ընկավ բեռը հարուստի,

Ասացին — աչքը աչքածակների

Հողով լեցնելն է միայն կշտացնում:

* * *

Հիշում եմ, որ մի գիշեր սիրուհիս դռնից ներս մտավ: Այնպես շփոթված տեղից ցատկեցի, որ թեղանիքս ճրագս մարեց.

ԽԱՎԱՐ ՊԱՏՌՈՂ ԸԱՌԱԳԱՅԹՆ

ԻՆՉ ԵՐԵՎԱՅ ԳԻՇԵՐՈՎՅ՝

Ու զարմացա իմ բախտից,

Ո՛վ ինձ պատվեց այդ գանձով:

Սիրուհիս ներեց ու սկսեց ինձ նախատել, ասելով.

— Դու որ ինձ տեսար՝ ճրագդ մարեցիր և ինչ էր պատճառը:

Ասացի.

— Պատճառը երկու էր: Նախ այն՝ որ կարծեցի արևն է ծագել և երկրորդ այն՝ որ այս ԲԵՅԹԸ հիշեցի.

Թե որ մի տգետ մոտենա լույսիդ՝

Ներիր նրան մարդկանց բազմության միջև,

Ու թե քաղցրաշուրթ մեկը մոտենա՝

Մոմերը մարիր շարժումով թերթ:

* * *

Իմաստուն մեկից հարցրեցին, թե որ մեկը լուսնադեմ գեղեցկուհու հետ առանձնացած լինի ու դռները փակած և մրցակիցները քնած, սիրտը ցանկությամբ լի ու կիրքը անսանձ, ինչպես որ ասում է արաբը. «Արմավը հասուն՝ և պարտիզպանը՝

³¹ Բնագրում արաբերեն է:

քուն», ոչ մի արգելք չլինի, և նա կարողանա ժուժկալությամբ անհպելի թողնել կույսին:

Պատասխանեց.

— Թե որ նույնիսկ լուսաղեմ գեղեցկուհին ճողոպրի, բամբասողների լեզվից չի ազատվել»

*Մարդը կարող է ինքն իրեն սանձել,
Չարախոս լեզվից չի կարող փախչել:*

* * *

*Նույնիսկ թե միշտ կախ գլուխդ
Գործիդ կքի՝
Անկարող ես կտրել լեզուն
Բամբասանքի:*

* * *

Մեկը գեղեցիկ և երիտասարդ մի կին ուներ, որը մեռավ և նրա զառամած զոքանչը, ըստ ամուսնական պայմանագրության, նրա տանը մնաց և ամուսինը զոքանչի հարևանությունից հոգեպես տանջվում և նրա մերձավորությունից ազատվելու ճար ու ճամփա չէր գտնում: Մի օր էլ մի խումբ ծանոթներ նրան այցի եկան: Նրանցից մեկը հարցրեց.

— Ինչպե՞ս ես ապրում քո սիրեցյալից հեռու:

Պատասխանեց.

— Կնոջս չտեսնելը ինձ համար այնքան ծանր չէ, որքան զոքանչիս տեսնելը:

*Վարդը զողացան ու ինձ խո՛ց մնաց,
Իմ զանձը տարան ու ինձ օձ մնաց,
Թե աչքս տեզի ծայրին տեսնեի՝
Դեմքն այս տեսնելուց լավ էր անկասկած:
Թող ինձ մոռանան ընկերներ քոյրո՛ր,
Բայց ես չտեսնեմ թշնամուս մի՛ օր:*

* * *

Մի ծերուկից հարցրեցին.

— Ինչո՞ւ չես ամուսնանում:

Պատասխանեց.

— Չեմ սիրում ծեր կանանց:

Ասացի.

— Երիտասարդ կին առ, քանի որ հարուստ ես:

Պատասխանեց.

— Ես որ ծեր եմ ու ծեր կանանց չեմ սիրում, ինչպե՞ս կարող է երիտասարդ կինը իմ ծերությունը սիրել:

*Մատաղ տարիք է կինը հավանում
Եվ ոչ թե ոսկի,
Գերադասում է մի կտոր կոճիկ
Տասը լիդր մսի:*

Սաադու «Գոլեստանից» մեջբերված իր հոչակավոր խոսույթ-բանաստեղծությունից (Ն. Մ.).

*Բոլոր մարդիկ անդամներն են մեկ մարմնի,
Արարչությանը մի էակից ու միատար,*

بنی آدم اعضای یک پیکرند
که در آفرینش ز یک گوهرند
چو عضوی به درد آورد روزگار
دگر عضوها را نماند قرار
تو کز محنت دیگران بی غمی
نشاید که نامت نهند آدمی.

*Անդամներից մեկին թե ցավ պատահի,
Մյուսներին էլ չիք հանգիստ ու դադար:*

*Անտարբեր ես այլոց ցավին եթե դու,
Արժանի չես վեհ կոչումին դու մարդու:
(Թարգմ.՝ Ազատ Մխարանի, 2024 թ.)*

*Հարյուր անգամ ասել եմ ամենքին,
Որ հայելի երբեք չտան քո ձեռքին,
Վախենում եմ տեսնես դեմքդ լուսեղեն
Ու հայացքիդ չարժանացնես ոչ մեկին:
(Թարգմ.՝ Ս. Կապուտիկյանի)
(«Մարգարտաշար».— Ն. Մ.)*

ՔԱՄԱԼ ՕԴ-ԴԻՆ ԷՍՄԱԻԼ

Իրենց ժամանակի այս երեք հսկաներին գուզնթաց ապրել և գրել են բազմաթիվ փոքր ու մեծ բանաստեղծներ, ամեն մեկը իր «Դիվանով» ու մասնավի պոեմաներով, բոլոր նրանց մեկ առ մեկ այստեղ հիշել չարժե: Նրանց մեջ աչքի են զարկում միայն երկու հոգի՝ Քամալ օդ-Դին Էսմաիլը և Ամիր Խոսրով Դեհլավին: Ամիր Խոսրով Դեհլավիով սկսել ենք այս գրքի հաջորդ գլուխը, իսկ այստեղ մի քանի բառով կխոսենք Սպահանի երգիչ՝ «Մտքերի ստեղծագործող», Քամալ Էսմաիլից:

Քամալը էապես «գովաբանող» բանաստեղծների շարքումն է: Նա հարուստ ու առատաձեռն էր և ապրում էր Սպահանում: Իր կյանքի վերջին տարիները նա թողնում է աշխարհիկ կյանքը և քաշվում է Սպահանի շրջակա լեռները, ապրելով աղքատ և դարվիշ մի կյանք: 1237 թվին Մոնղոլները մտնում են Սպահան և ըստ իրենց

սովորության կողոպտում, այրում, լլկում, տանջում և կոտորում են ժողովրդին: Նրանց զոհն է դառնում նաև Քամալ օդ-Դինը:

Քամալ Էսմաիլի բանաստեղծություններից երկու կտոր կա Հ. Զ. Միրզայանի «Զանազանում»:

Ամեն գիշեր գնալով
Աճում է դեմքը լուսնի,
Ճիգ է թափում, որ դառնա
Նա քո նման գեղանի.
Բայց տասնչորսին տեսնելով
Գրավիչ ոչ մի դիմագիծ,
Չունի քոնիդ հավասար՝
Հարվում է նա այդ ցավից:

هر شب مه تو سوی فزونی تازد
تا همچو جمال تو جمالی سازد
در چهاردهم شب جو بخود پردازد
ببند که چو تو نیست زغم بگدازد

* * *

Երկու սաթաբույր գեսիդ շարժումից
Վարդը կցավե այտիդ քնքուշիկ՝
Տեղը միգուցե մնա երեսիդ,
Երբ որ մատնացույց անեն քեզ մարդիկ:

Քամալ Էսմաիլից հանդիպել ենք հետևյալ մի քանի գեղեցիկ հատվածների և բառյակների, որոնց նա գրել է նախքան աշխարհիկ կյանքից մեկուսանալը:

Ինչո՞ւ ես կապել սիրտդ աշխարհին,
Ինչո՞ւ ես բանտել հոգիդ անբասիր,
Մնալու տեղ չէ աշխարհն անցողիկ,
Կարծիր քեզ ճամփորդ, գլխիկոր անցիր:

* * *

Հոգիս հասել է շրթիս,
Տուր բերանդ բոցաշիթ,
Որ խաբվելով համբույրից՝
Հոգիս դնեմ քո շրթիդ:

جانم بلب آمدست یکبوسه بیار
تا جان ببهانه در دهان تو نهم

* * *

Ասիր՝ «Նայիր լուսնին, կարծիր՝
Ինձ ես նայում ամբողջ գիշեր»,
Քո երեսին կարոտ եմ ես,
Պետք չէ լուսին ինձ լուսերես.
Լուսինը սուս, հարթ երկնքում,
Որ նայում է ինձ անտարբեր՝

گفتی که بمه نگاه کن انگار منم
روی توام آرزوست مه را چکنم
مه چون تو کجا بود که در هرماهی
یکشب چو رخت باشد و باقی چو کنم

Մի գիշեր է դեմքիդ նման
Ու մի ամիս՝ հարվում ինձ պես:

* * *

Գնացի մոտը ու լաց ու կոծով
Խնդրեցի նրան,
Հեն տա ինձ սիրտս, ես էլ սիրտ չունեմ
Սիրելու համար:
Մագերին նայեց և ասաց՝ փնտրիր
Քո սիրտը այստեղ,
Գուցե այդ խեղճին գողացած լինեն
Մագերս դալար:

* * *

Եկավ տղան, ճոկանն ձեռքին,
Քրտնած դեմքով, փոշոտ մագեր,
Հո՞ղ են տվել իրենց գլխին
Կարծես հազար կոտրած սրտեր:

میآمد و چهره از عرق تر کرده
چوگان بکف و رخش زجا بر کرده
اندر خم زلفهای گرد آلودش
دلهای شکسته خاک بر سر کرده

* * *

Թե որ ասեմ բարի ես դու, սո՛ւտ եմ ասել,
Թե որ խոսքդ խոսք է մարդու՝ սո՛ւտ եմ ասել,
Անբողջ քաղաքն ինձ թշնամի քո պատճառով՝
Թե որ ասեմ սիրում ես ինձ՝ սո՛ւտ եմ ասել:

* * *

Լեռան վրա որ ձյուն իջնի՝
Աղբյուրներ են փեշից հոսում,
Գլխիս ձյունը այս ծերության՝
Աղբյուր դարձավ իմ աչքերում:

هر قله یی که بر سر او برف جا گرفت
بر دامنش پدید شود چشمه و غدیر
بر قلّه سرم جو ز پیری نشست برف
نشگفت اگر پدید شد از چشمم آبگیر

**ՊԱՐՍԻԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԸ ՄՈՆՂՈՒ ԻԼ-ԽԱՆՆԵՐԻ ՕՐՈՔ
(1265-1337 թվականը — Հեջրի 663-737)
(ընդամենը 72-ից 74 տարի)**

ԱՄԻՐ ԽՈՍՐՈՎԵ ԴԵՀԼԱՎԻ

Ամիր Խոսրովը Դեհլավին (Դեհլի-ացին) ապրել, մեծացել և գրել է Հնդկաստանում, բայց դրանով հանդերձ ժողովրդականություն է վայելում Պարսկաստանում: Նա ծնվել է 1253-651 թվին, մահացել է 70 տարեկան հասակում, գրել է մոտ կես միլիոն Բեթթ, որոնցից միայն 120 հազարը կարողացել են հավաքել նրա ժամանակակիցները: Այդ 120 հազար բեյթից միայն հանդիպել ենք 10-15 բեյթի, բացի այն մի քանի տողից, որ է. Բրաունը տալիս է իր «Lit. Hist. of Persia»-ում, քաղված նրա «ԼԵՅԼԻ ԵՎ ՄԱՋՆՈՒՆ»-ից (այս դժբախտ սիրահարվածների մասին գրելը կարծես թե պարտականություն է բոլոր պարսիկ բանաստեղծների համար), ուր նա սգում է իր մոր մահը:

Մի բան, որ աչքի է զարկում և դուր է գալիս Ամիր Խոսրովի բանաստեղծությունների մեջ, դա նրա լեզվի պարզությունն է և բանաստեղծական սահունությունը: Բայց կարծեք թե «պղպեղի հատիկը», որ պարսկական բանաստեղծության հոտն ու համն է, պակասում է նրա մեջ, այդ հատուկ հմայքը և կծվությունը չկա, նրան կարդալիս մարդու սիրտը չի զարկում և աչքերը չեն փայլում, ինչպես դա պատահում է, երբ կարդում ես պարսիկ բնիկ, նույնիսկ գյուղացի և անտաշ մի բանաստեղծի: Համեմատությունը նույնն է, ինչ Հայաստանում երգող և Սպահանում երգող հայ աշուղի: Մեկի մեջ խորք կար և զգացում, մյուսի մեջ բառեր են և երաժշտություն:

Հ. Զ. Միրզայանի «Ջանազան»-ում կար մի հատիկ բանաստեղծություն Ամիր Խոսրովից, որի պարսկերեն բնագիրը մենք չենք կարդացել:

*Իմ խելքը տարավ ոչ թե բարեկամ
Եվ կամ ազգական,
Այլ այն հերարձակ և խոշորայն
Կանայքը տարան:
«Ինչո՞ւ, — ասաց ինձ, — քո սիրուն այն կնոջ
Տվիր դու բնավ»:
Աստված է վկա, որ ես չտվի,
Ինքը գողացավ:*

Մի գեղեցիկ երկտող, որ հանդիպել ենք Դեհլավուց, հետևյալն է.

*Յարս թրբախոս ու ես թրբերեն
Չգիտեմ, ով Տեր,
Ինչ լավ կլինեք, եթե այդ լեզուն
Բերնիս մեջ լինեք:*

زبان اوست ترکی گوی و من ترکی نمی دانم
چه خوش بودی، اگر بودی زبانتش در دهان من

* * *

*Դու ասեցիր, երբ հեռանամ՝
Այլևս ինձ դու մի՛ հիշիր:
Ինձ մի՛ ասա, հեռանալիս՝
Մի կենդանի մարդու գտիր:*

* * *

*Երբ կտրվի թելը սիրո,
Հեշտ է գցել կապը նրա,
Բայց այդ սիրող սրտերի մեջ
Հանգույցը կոշտ՝ մի՛շտ կմնա:*

* * *

*Թե որ ուզում ես՝ մնա՛ իմ մարմնում,
Չես էլ ցանկանում՝ հեռացիր, հոգիս,
Մի՛ննայնն է հիմա ես չեմ մեռնելու,
Ինձ այցի եկավ այսօր սիրուհիս:*

* * *

*Աչքերիս միջից թափում է ահա
Արյունը սրտիս, բայց ուրախ եմ ես,
Քանի որ բույրը իմ սրտի արյան՝
Կաթիլ առ կաթիլ հիշեցնում է քեզ:*

خوشم از گریه خود گرچه همه خون دل است
زانکه بوی تو زهر قطره ی خون میآید

* * *

*Ինչ օգուտ որ դու, գեղեցիկ աղջիկ,
Սրտունս լինես, ո՞ր է կարեկից,
Սիրոս տարաբախտ վաղուց է արդեն
Հազարներ մղոն հեռացել ինձնից:*

تو، ای صنم، که مرا در دلی چه سود از آن
که در میان من و دل هزار فرستگ است

* * *

*Սրտից իմ խելքս մի պահ համբերել
Պահանջում է նա,*

Նույնն է որ անանկ մարդուց պահանջեն
Պարտքերը իրա:

* * *

Գեղեցկուհուն հարց տվեցի, թե ինչպե՞ս
Սպանում ես մի հայացքով սիրածիդ,
Նայեց դեմքիս մեղմ ժպտով մի անգամ՝
Եվ անտարբեր դեմքը շրջեց դիակից:

ՓՈՒՐ ԲԱՀԱԵ ԶԱՄԻ

Փուր Բահան մեկն է այս շրջանի քիչ ճանաչված բանաստեղծներից, որի կյանքի մասին շատ քիչ տեղեկություններ կան և այդ քիչն էլ գտնվում է Դովլաթշահու «ԹԱՐԻԽԵ ԳՈԶԻԴԵ»-ում (ծն. Հեջրի 7-րդ դար, Թորքաթ Զամ — մահ. 699 Հեջրի, Թավրիզ. — Ն. Մ.): Այս բանաստեղծին մենք հատկապես հիշել ենք միմիայն նրա մի քառյակի համար, որը գտնվում է նաև է. Բրաունի «Պարսից գրակ. Պատմության» հատորում: Այդ քառյակը Փուր Բահան նվիրել է իր մի ընկերոջը, որը կորցրել է իր ատամներից մեկը: Եվ քանի որ շատեր կան, որ կորցրել են իրենց ատամներից մեկը կամ մի քանիսը, ուստի և չուզեցինք անտարբեր անցնել այդ քառյակի վրայով:

Եթե քո քաղցր բերնիդ միջից
Մի մարգարիտ է պակսել,
Չի երևում գեղեցկության
Հյուսվածքի մեջ ոսկեթել:
Հարյուր լուսին ցոյք է սիռել
Քո այտերիդ դեռատի,
Ինչ հոգ թե որ մի աստղ ընկնի
Բյուր աստղերից ծիր կաթի:

Փուր Բահայից մենք այլ բանաստեղծության չենք հանդիպել, բացի մի քանի գազելներից, որոնք բանաստեղծական հետաքրքրություն չեն ներկայացնում, բացի գուցե այս մի երկտողից, որը նրա գազելներից մեկումն է:

Աստված իմ, արյան այս կաթիլը փոքր,
Որ սիրտ են կոչում,
Որքան տառապի գեղեցիկ կանանց
Ձեռքերում անգութ:

ԷՄԱՄԻ ՀԱՐԱՎԻ

Էմամի Հարավու մասին նույնպես կենսագրական տվյալներ շատ քիչ են: Նա մեռել է 1268-69 թվականին և իր դասիդաները նվիրված են Քերմանի իշխան-

ներին և նահանգապետներին: Բրաունը գրում է, որ էմամու բանաստեղծությունների ձեռագրերը հազվագյուտ են և նրա գործերը չեն տպագրվել: Բրաունը քրիստոնական թանգարանում գտնվող մի ձեռագրից արտատպել է մի գազել, որը շատ գեղեցիկ է: Այդ գեղեցիկ գազելից մի քանի բեյթ մենք թարգմանել ենք, մեր կարողության սահմաններում:

Մի տարվա մեջ մի անգամ է լինում տոնը
Նոր Տարու,
Բայց ինձ համար ամեն օր տոն՝
Քո աչերիցը աղու,
Թուփը վարդի մեկ անգամ է
Բեռնավորվում ծաղիկով,
Բայց քո դեմքը վարդ է բացված,
Ու վարդերի մի կողով:
Մի օր միայն բուրաստանից
Մանուշակ են տանում տուն,
Գիսակները մանուշակ են
Դեմքի շուրջը գեղանու:

ՄԱԶԴ-ՕԴ-ԴԻՆ ՀԱՄԳԱՐ

Համգարը՝ Յազդի բնիկ էր և Ֆարսի նահանգապետ Բահա-օդ-Դին Ջովեյնու հովանավորյալն էր (ծն. 607 — մահ. 686 Հեջրի): Երբ Համգարը Յազդից ճամփորդում է Սպահան, նա իր հասակավոր կնոջը թողնում է Եզդում: Բայց կինը շուտով հետևում է ամուսնուն Սպահան: Համգարի աշակերտներից մեկը այդ լուրը բերում է բանաստեղծին, ասելով. «Բարի լուր. ձեր տիկինը եկել է տուն»:
— Բարի լուրը, — պատասխանում է նրան Համգարը, — այն կլինեք, որ տունը իջներ տիկնոջ վրա:

Ըստ ավանդության, Համգարը իրեն համարում էր Սասանյան թագավոր Անուշիրվանի սերնդից և այդ պատճառով հատուկ մի դիրք էր վայելում իր հաճախած պալատներում:

Է. Բրաունը գրում է, որ Համգարի երկերը շատ հազվագյուտ են և իր քաղվածքները տալիս է քրիստոնական թանգարանի մի ձեռագրից:

Բայց ուրիշ մի տեղում մենք հանդիպել ենք Համգարի այս գեղեցիկ երկտողին.

Անգութ դանակով սիրտ՝ զարկեցին
Հոգու երակին,
Մի կաթիլ արյուն կաթեց՝ ու նրան
ՄԻՐՏ անուն տվին:

Բրաունը 7 քառյակներ է տալիս Համգարից, որոնցից և ոչ մեկը գրական արժեք ունի: Դրանք մեծ մասամբ հայհոյանքներ են ուղղված իր պատահական թշնամիներին: Բայց այդ 7 քառյակներից գոնե մեկը արժեն թարգմանել:

*Ժամանակ կար, որ այս բերնից
Մարգարտի պես երգ էր թափում.
Ջահել, խելառ օրս անցավ,
Էլ չեմ տեսնի քեզ երագուն:*

**ԷՐԱՂԻ ՀԱՄԱԴԱՆԻ
(մահ. 686–8 Հեջրի)**

Էրաղի Համադանին տաղանդավոր բանաստեղծ և միաժամանակ չափազանց հետաքրքիր մի անձնավորություն է Պարսից գրականության մեջ: Ըստ իս, Էրաղին մեծապես նման է հոչակավոր դարվիշ և բանաստեղծ Բաբա Թահերին, որի քառյակներին ծանոթ ենք մենք շնորհիվ Հ. Միրզայանի գեղեցիկ թարգմանության: Բայց Էրաղու անունը անհայտ է ոչ միայն հայերին, այլև բոլոր այլ արևմտյան երկրներին, քանի որ նրա երկերը հազվադեպ են և չեն թարգմանվել: Նույնիսկ Պարսկական պատմական գրականության մեջ նրա անունը համեմատաբար քիչ է հիշվել: Է. Բրաունը իր քանիցս հիշած հոյակապ երկի երրորդ հատորում մանրամասն անդրադառնում է Էրաղու կյանքի վրա և մի քանի չափազանց գեղեցիկ օրինակներ է տալիս նրա բանաստեղծությունից:

Էրաղի Համադանին ՄԻՍՏԻԿ էր, բայց միաժամանակ նա իսկական ՂԱԼԱՆԴԱՐ էր, որը ոչ մի ուշադրություն չէր դարձնում իր դիրքի և անվան վրա և ամեն մի գեղեցիկ դեմքի կամ իրի մեջ արտացոլում էր տեսնում Հավիտենական Գեղեցկության: Սերը նրա կյանքում առաջնակարգ տեղն էր գրավում և դրա շնորհիվ է, որ նրա գագեղները ԷՐՈՏԻԿ են, մի բան, որ հաճախ դուր չի եկել եվրոպացի բանասերներին³²:

Էրաղին ծնվել է Համադանում և երիտասարդ հասակից նա անգիր էր արել ՂՈՐԱՆԸ, որը նա արտասանում էր թավ ու երգեցիկ տոնով: 17 տարեկան հասակում, ՂԱԼԱՆԴԱՐՆԵՐԻ մի խումբ, որոնց թվումն էր նաև գեղեցիկ մի պատանի, գալիս են Համադան, և երբ նրանք հեռանում էին Համադանից Էրաղին, հմայված պատանու գեղեցկությամբ՝ նրանց ընկերակցում է մինչև Հնդկաստան: Այստեղ, նա մյուս դարվիշների հետ, աշակերտն է դառնում հոչակավոր միստիկ ՇեՅԽ ԲԱՀԱ-ՕԴ-ԴԻՆ ԶԱՔԱՐԻԱՅԻ: Հասնելով Հնդկաստան, դարվիշներին ենթարկում են 10-օրյա մենակեցության և խորհողության (որը դարվիշների մոտ կոչվում է ՉԵԼԼԵ): Տասներորդ օրը մյուս դարվիշները գալիս են Շեյխի մոտ և գանգատվում են, որ Էրաղին փոխարեն խորհելու, սկսել է մի ԳԱԶԵԼ երգել, որը մի քանի օրվա ընթացքում ընկել է քաղաքի բոլոր քեֆչիների բերանը, և որը նրանք երգում են զինետներում քնարների և ՍԵԹԱՐՆԵՐԻ ընկերակցությամբ:

³² Բոլոր տեղեկությունները Էրաղի Համադանու մասին քաշված են Է. Բրաունից:

Այդ գագեղը հետևյալ կերպով է սկսվում.

*Գինու առաջին բաժակը լեցրին
Սաղու աչքերի հարբած հայացքով
Ու ընկերների հոգուն ձոնեցին
Ինքնամոռացման բաժակը գինով:*

*Շուրթը սիրուհու գինու թաս էր մեզ,
Ու թասը լեցուն՝ գինով անծանոթ,
Գեսերը խոխի, խավարի հուրին՝
Հանգիստ չավեց մեզ մինչ առավոտ:*

Էրաղի Համադանու այս և մի քանի ուրիշ գագեղները սահունության, մտքի, երաժշտության և խորքի զլուխգործոցներ են:

Երբ Շեյխ Բահա-օդ-Դինը լսեց այս գագեղը իր աշակերտների բերնից, կանչեց Էրաղուն իր խուցը և ասաց. «Դու քո աղոթքները զինետանն ես անում: Մոտ եկ»: Էրաղին մոտեցավ և Շեյխը նրա ուսերին ձգեց իր դարվիշական թիկնոցը (ԽԵՐՂԵ) և նրան անվանեց իր հաջորդը, չմոռանալով միաժամանակ իր աղջկան նրան կնության տալ:

25 տարի անցավ և Շեյխ Բահա-օդ-Դինը մահացավ և Էրաղին հաջորդեց նրան: Էրաղին թողեց Հնդկաստանը, ձամփորդեց Մաքքե և Մադինե, որտեղից նա անցավ Փոքր Ասիա: Կոնիայում նա գրեց իր հոչակավոր արձակ երկը՝ «ԼԱՄԱԹԸ»: Էրաղին մեռավ Դամասկոսում, 1289 թվի նոյեմբերի 23-ին:

Էրաղիի «Դիվանից» Է. Բրաունը մի քանի մեջբերումներ ունի, որոնցից մեկը իր երաժշտականությամբ անգերազանցելի է և լսելու համար այդ մեղեդին, նրան անպայման պիտի կարդալ բնագրում:

*Սիրուց բացի հոգում այլ բան
Ես չեմ տեսնում, ես չեմ տեսնում,
Քեզնից բացի այլ սիրելիան
Ես չեմ տեսնում, ես չեմ տեսնում,
Քուն ու հանգիստ հոգուս համար
Ես չեմ գտնում, ես չեմ գտնում
Մինչ քո ժպիտը դուրեկան
Ես չեմ տեսնում, ես չեմ տեսնում:
Խղձա դու ինձ ու գթառատ
Նայիր դեմքիս գեթ մի անգամ —
Որ քո դեմքից այլ մի դարման
Ես չեմ տեսնում, ես չեմ տեսնում:
Ինձ մոտեցիր, թե կենդանի
Ուզես տեսնել սիրահարիդ,*

*مرا جز عشق تو جانی نمی بینم نمی بینم
دلَم را جز تو جانانی نمی بینم نمی بینم
ز خود صبری و آرامی نمی یابم نمی یابم
ز تو لطفی و احسانی نمی بینم نمی بینم
ز روی لطف بنما رو، که دردی را که من دارم
بجز روی تو درمانی نمی بینم نمی بینم
بیا، گر خواهیم دیدن که دور از روی خوب تو
بقای خویش چندانی نمی بینم نمی بینم*

Որ այլ մի ճար այս բաժանման
Ես չեմ տեսնում, ես չեմ տեսնում:

ԱՌՒՀԱԴ-ՕԴ ԴԻՆ ՔԵՐՄԱՆԻ
(մահ. 635 Հեջրի)

Շեյխ Աբու Համիդ Աուհադ-օդ Դին Քերմանին նույնպես մեկն է յուրահատուկ Շարվիհ-միստիկ բանաստեղծ կերպարներից, որոնց մեջ գերազանցել է Պարսկաստանը, և որոնց գտնել ուրիշ ազգերի մեջ դժվար և երբեմն անկարելի է: Շեյխ Քերմանին Էրադու պես ՂԱԼԱՆԴԱՐ և գեղեցկության սիրահար էր և այդ իսկ պատճառով նրա ժամանակակից մեծ հոգևորականներից շատերը նրան «կրոնահերձ» էին համարում: Շեյխ Քերմանու մասին Ջամին գրում է, որ նա «տեսնում էր ճշմարտությունը ստեղծագործության Արտահայտությունների մեջ և Կատարյալ Գեղեցկությունը տեսնում էր մարմնավոր իրերի մեջ»: Երբ Պարսկաստանի մեծագույն միստիկ և խենթ Սուֆին՝ Շամսե Թաքրիզը, հարցնում է Շեյխ Քերմանուց, թե «Ի՞նչ ես դու անում», նա պատասխանում է. «Դիտում եմ Լուսինը ջրի սկավառակում» (դիտում եմ Գեղեցկության Արարչին նրա արարածի գեղեցկության մեջ), որին Շամսե Թաքրիզին պատասխանում է.

— Երևի դու խոց ունես վզիդ վրա, որ չես դիտում Լուսինը երկնքում:

Բացի մի քանի քառյակներից և հատվածներից, Շեյխե Քերմանին գրել է նույնպես ՄԱՍՆԱՎԻ մի պոեմա, որը կոչվում է «ՄԵՍԲԱՀՈՒ-ԱՐՎԱՀ» («Հոգիների ճրագը»): (Գրականագետ Ֆորուզան Ֆարը հերքել է Մեսրահոլ-Արվահի հեղինակի վարկածը և նրա հեղինակն է համարում Շամսադ-դին Մոհամադ Բարդսիրուն.— Ն. Մ.)

Նրա փիլիսոփայությունը ամենից ավելի ամփոփ և գեղեցիկ ձևով արտահայտված է հետևյալ քառյակի մեջ.

Մարմնի աչքերով նայում եմ դեմքին
Գեղեցիկների,
Քանի որ Միտքը կարող ես տեսնել
Ձևի տակ միայն,
Բազում Ձևերի աշխարհ է իմ շուրջ,
Մի Ձև եմ ես էլ,
Ու Միտքը առանց տեսողելու մի ձև՝
Երազ է ունայն:

زان می نگرم به چشم سر در صورت
کز عالم معنی است اثر در صورت
این عالم صورت است و ما در صوریم
معنی نتوان دید مگر در صورت

ՊԱՐՍԻԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԸ ԹԵՅՄՈՒՐ ԼԱՆԳԻ ՕՐՈՔ
(1335 թվից մինչև 1405 թիվը)

Այս 70 տարին, այսինքն՝ 1335-1405 թվականներ են Ք. հ., մեկն է պարսից գրականության ամենափայլուն շրջաններից, որի ընթացքում ապրեցին և գրեցին Հաֆեզը, Օրեյդե Ջաքանին, Խաջու Քերմանին, Սալմանե Սավեին, թվելու համար միայն մի քանի առաջնագույն բանաստեղծներ: Միաժամանակ սա Պարսկաստանի համար արյունահեղության, անիշխանության և եզակի աղետների մի շրջան էր, երբ Պարսկաստանը բաժանված էր փոքրիկ իշխանությունների, յուրաքանչյուրը իր սեփական ԴԵՍՊՈՏՆԵՐՈՎ, փոքրիկ ավազակ-բանակներով և մանրանկար արքունիքներով:

Այս տարիներին ավելի ճիշտ կարելի է անվանել Մոնղոլների հարստության անկման և Թեյմուր Լանգի գերիշխանության հասնելու միջանկյալ շրջանը:

Մեծ բանաստեղծների այս առատությունը Բրաունը բացատրում է նրանով, որ փոքր արքունիքների գոյությունը պարարտ հող է եղել թափառական բանաստեղծների համար: Փոքրիկ հարևան իշխանները աշխատել են մրցել միմյանց հետ ոչ միայն պատերազմի դաշտում, այլև իրենց արքունական փարթամությամբ, իրենց գովող բանաստեղծների տաղանդով և այդ իսկ պատճառով բանաստեղծները բավարարություն չստանալով մի իշխանից՝ գաղթել կամ փախել, կամ ճամփորդել են մի այլ «երկիր» (օրինակ՝ Քերմանից Յագդ կամ Շիրագից՝ Սֆահան) և աշխատել են ամեն կերպ գոհացնել իրենց նոր «բարերարին»: Այլ խոսքով՝ կյանքի պայքար է եղել և ով որ լավ էր գրում, լավ էր ուտում, և քանի որ բանաստեղծները ի ծնն շատակեր են և հեշտասեր, աշխատել են որքան կարելի լավ գրել:

Բրաունը այս շրջանի բանաստեղծներից հիշում է 10 հոգու, ժամանակագրական հետևյալ կարգով, սրանցից ես միայն 8-ին եմ ընտրել:

- 1.— ԷԲՆԵ ՅԱՄԻՆ, մահ. 1345 թվին:
- 2.— ԽԱՋՈՒ ՔԵՐՄԱՆԻ, մահ. 1352 թվին:
- 3.— ՕԲԵՅԴԵ ՋԱԲԱՆԻ, մահ. 1371 թվին:
- 4.— ԷՄԱԴԵ ՔԵՐՄԱՆԻ, մահ. 1372 թվին:
- 5.— ՍԱԼՄԱՆԵ ՍԱՎԵ, մահ. 1378 թվին:
- 6.— ՀԱՖԵԶԵ ՇԻՐԱԶԻ, մահ. 1389 թվին:
- 7.— ԿԱՄԱԼԵ ԽՈՋԱՆԴ, մահ. 1391 թվին:
- 8.— ՄԱՂԻԲԻ, մահ. 1407 թվին:

ԷԲՆԵ ՅԱՄԻՆ
(ԱՄԻՐ ՄԱՀՄԱՌԻԴ ԷԲՆ ԱՄԻՐ ՅԱՄԻՆՕԴԴԻՆ ԹՈՂՐԱԻ)

Էրնե Յամինի կյանքի մասին համարյա թե ոչ մի տեղեկություն չկա: Հայտնի է միայն, որ մի ինչ-որ պատերազմի և դրան հետևող կողոպուտի ժամանակ, Էրնե Յամինի «Դիվանը» (երկերի ժողովածուն) կորչում է և դրանից հետո նա մեծ ճիգ ու ջանք է թափում հավաքելու համար իր գրվածքները ձեռագրողների և արվեստագետների շրթերից: Նրա մահվան թվականը միայն ճշգրիտ կերպով մնացել է, այն էլ ուրիշի գրած մի բանաստեղծության շնորհիվ, ուր քառյակի ձևով հիշվում է, թե՛ «Էրնե Յամինը իր վրանը զարկեց դրախտի մարգագետնում» 1368 թվի հունվարի 30-ին (769 Հեջրի):

Դրան անմիջապես հետևում է մի այլ քառյակ, որը իբր թե Էրնե Յամինը մեռնելուց քիչ առաջ է արտասանել.

*Էրնե Յամինի արյունոտ սրտին
Մի նայիր՝ այսօր,
Տես թե նա ինչպես հրճվանքը թողեց
Աշխարհին անգոր,
Ձեռքին մի բաժակ, շրթերը ժպտուն
Եվ աչքը ճամփին՝
Նա ծիծաղելով ընդառաջ գնաց
Դեպի կյանքը նոր:*

*منگر که دل ابن یمن پر خون شد
بنگر که از این سرای فانی چون شد
مصحف بکف و چشم بره روی بدوست
با بیک اجل خنده زنان بیرون شد.*

Էրնե Յամինից մնացել է միայն «ՀԱՏՎԱԾՆԵՐԻ» (ՄՈՂԱԹԱԱԹ) մի հատոր, որի բովանդակությունը փիլիսոփայական է, քարոյագիտական և խորհրդապաշտական: Այդ հատվածներից մի օրինակ է բերում Է. Բրաունը, ուր Էրնե Յամինը նկարագրում է մարդկային էակի հոգու ծնունդը, զարգացումը և վերջնական անեացումը Աստվածային էության մեջ: Այս հատվածը մեկն է Էրնե Յամինի հայտնի քերթվածներից:

*Ոչնչությունից վրան զարկեցի
Գոյության դաշտում
Եվ անշունչ ՔԱՐԻՅ ԲՈՒՅՄԻ փոխվեցի.
Ու դա էլ անցավ,
Հետո իմ հոգին պայքարեց երկար
Գոյության բովում,
Եվ ԱՆԱՄՆԱԿԱՆ աշխարհը մտա.
Բայց դա էլ անցավ:
Հետո խեցու մեջ ՄԱՐԴԿԱՅԻՆ կրծքի
Նազանքով անհուն՝
Կյանքի կաթիլը գոհար դարձրեցի*

*Ու դա էլ անցավ:
Անանրմին ՈԳՈՒ երկնային հույլից
Շրջվելով տրտում՝
Ես իմ անցավոր կյանքը դիտեցի,
Ու դա էլ անցավ:
Հետո թողեցի Էրնե Յամինին
Ու ՆՐԱ գրկում
Ձուլվեցի ընդմիշտ ՆՐԱ էության
Ու դա էլ անցավ:*

Է. Բրաունը մի քանի որոշ հատվածներ է հիշում իր «Պարսկաստանի գրական պատմության» մեջ, որոնցից բավական է հիշել երկու կտոր, առաջինը չափազանց հոռետես է և երկրորդը բավականաչափ լավատես: Սա ցույց է տալիս, որ բանաստեղծը անպայման միայն խորհրդապաշտ չէ, կամ միայն հոռետես կամ միայն լավատես: Նրա տրամադրությունը կապված է վայրկյանին:

Օրինակ՝ նա հոռետես է, երբ գրում է.

*Նախատինքի պես իր հոր երեսին
Շարտում է միշտ զավակը անգութ.
«Դո՛ւ պատճառ եղար անհուն ցավերիս,
Ինձ նվիրելով մի կյանք անհագուրդ»:*

Եվ նա չափազանց ուրախ, լավատես և անհոգ է, երբ գրում է.

*Լինի մի անկյուն, ուր ոչ մի օտար
Մտնել չիմանա,
Ոչ դու՛ ուրիշից, և ոչ ուրիշը՝
Քեզնից ձանձրանա,
Գեղեցիկ կանայք, փանդիտ ու նվագ,
Մի քանի ընկեր,
Մեզ բավական է կյանքի խնջույքում,
Աստված է վկա:
Քնար ու գինի, գեղեցիկ սագի,
Ու գաղտագողի
Գողանում շրթից, լույսի պես անբիծ՝
Համբույրը նրա:
Հավիտենական դրախտի անգույն
Եվ հին խոստումին,
Ձեմ գոհի երբեք հաճույքը կյանքի
Այս երկու օրվա:*

ԽԱՋՈՒ ՔԵՐՄԱՆԻ

Խաջու Քերմանին մեռել է Հաֆեզից 37 տարի առաջ Շիրազ քաղաքում և այլ իսկ պատճառով Խաջուին կարելի է համարել Հաֆեզի ուսուցիչը ԳԱՋԵԼ գրելու արվեստում: Խաջու Քերմանիից առաջ գազելներ շատ են գրել Իրանի քանաստեղծները, բայց նրանց նյութը միշտ սահմանափակված է եղել սիրո և գիտու նեղ շրջանակում, այնինչ Խաջուն առաջինն էր (գուցե և ոչ առաջինը, բայց ԱՌԱՋԻՆ ԱԿՆԱՌՈՒՆ), որ ընդարձակեց գազելի սահմանները: Հաֆեզը բազմաթիվ գազելներ ունի, որոնք գրված են Խաջուի հետևողականությամբ և հաճախ նա վերցրել է ամբողջ մի տող կամ երկտող Խաջուից և հետո նույն մտքով և հանդգնությամբ շարունակել է գազելը: Բայց պարսկական գրականության մեջ ընդունված է վերցնել մի քանաստեղծից նրա քերթվածի մեկ կամ երկու տողը, միտքը, բովանդակությունը և չափաբանությունը և հետո դա կատարելագործել, առանց գրագողության ամբաստանության:

Խաջուն շատ լավ էր գրում և եթե Հաֆեզը չլիներ, գուցե նա համարվեր պարսիկ ամենամեծ գազելագիրը: Բայց Հաֆեզի անմահ վարպետությունը այնպես ստվերի տակ է առել Խաջուին, որ վերջինիս գազելները կարդալիս կարծես մարդ կարդում է Հաֆեզի մանկական փորձերը:

Օրինակները շատ են, բայց բավական է հիշել այս երկուսը միայն, որոնք համարյա թե նույն երկտողն են, բայց այնքան տարբեր են միմյանցից, որքան աստղը արեգակից:

Միայն պարսկերեն լեզվին և գրականության ծանոթ մեկը կարող է ըմբռնել Հաֆեզի հսկա գերազանցությունը Խաջուի վրա:

Սրանով հանդերձ Խաջուի արժեքը չի նսեմանում, և նա մեկն է պարսիկ մեծ քանաստեղծներից, որին դժբախտաբար նսեմացրել է Հաֆեզը:

Գազելներից բացի, Խաջուն գրել է հինգ պոեմաներ, (ԽԱՄՍԱ), ՄԱՍՆԱՎԻՆԵՐ, հատվածներ և մի քանի քառյակներ, որոնց թվումն է գտնվում (ըստ Բրաունի) «Ո՛ւր է, ո՛ւր» հոչակավոր քառյակը, որը սխալմամբ վերագրում են Օմար Խայյամին:

*Ապարանքն այն որ երկնի
Բարձունքի դեմ մրցում էր,
Հրի շեմքին թագակիր
Դրվում էին գլուխներ՝
Շրջեցի ես մտախոհ
Դահլիճներումն անկտուր,
Որմին տեսա սուկ մի բու,
Որ ասում էր. «Ո՛ւր է, ո՛ւր»:
(Թարգմ.՝ Հ. Միրզայանի)*

Հայրս «Ջանազանում» Խաջուից այս երկտողը ունի.

*Հարցումս ամոթ չլինի,
Տո՛ւր ինձ, խնդրեմ պատասխան.
Թե՛ն չես ուզում սիրահար,
Ինչո՞ն ես դու սիրարժան:*

Քանի որ այն բոլորը, ինչ գրել է Խաջուն, ավելի գեղեցիկ կերպով գրել է նաև Հաֆեզը, ես բավականանում եմ տալով այս վերջին հատվածը նրանից, որը քնագրում գրված է ՄՈՍԹ-ԱԶԱԴ չափով.

*Չկա մեկը որ իմ կողմից
Ասի այն թուրք գեղեցկուհուն,
Որ ինձ ների մեղքը սիրո,
Ու դուռ բացի՝ Աստո՛ւ սիրուն.
Շիկնած դեմքիդ կրակի վրա,
Խունկ ես ձգեղ, այրել հոգիս,
Ու ես խալիդ այդ հատիկի
Սև բախտիցն եմ դարձել անտուն³³:
Հոնքիդ նման մեջքս ծովեց
Ու կեռացավ՝ լուսնե-մահիկ,
Այն օրվանից երբ մի օտար
Դեմքիդ նայեց չնաշխարհիկ:
Վերադարձիր, որ ես հոգիս
Ոտքին զոհեմ քո նծույգի,
Մուրացիկը ինչ է կարող
Ջոհեղ ոտքիդ, թե ոչ հոգին:*

کس نیست که گوید ز من آن ترک ختارا
گر رفت خطائی
باز آیی که داریم توقع ز تو یارا
با وعده وفائی
منداز بنام من دل سوخته قلقل
بر آتش رخسار
کافتاده دل از دانه ی مشکین تو ما را
در دام بلائی
امروز منم چون خم ابروی تو در شهر
مانند هلالی
تا دیده ام آن صورت انگشت نما را
انگشت نمائی
باز آیی که سر در قدمت بازم و جان را
در پای سمندت
.....
لیکن چکنم چون نبود ملکیت دارا
در خورد گدائی

ՕՐԵՅԴԵ ԶԱՔԱՆԻ
(ՆԵՋԱՄՈՂԻ ԴԻՆ ՕՐԵՅԴՈՒԼԼԱՑ ԶԱՔԱՆԻ)

Օրեյդե Զաքանին Պարսկաստանի գրականության մեջ յուրահատուկ և անըրգակից մի դիրք է գրավում և նրա հմայքը շատ ավելի է արևմտյան ընթերցողի համար, քան իր սեփական հայրենակիցների: Որպես երգիծաբան, անառակաբան և հեզնաբան նա իր հավասարը չունի Իրանի պատմության մեջ: Բայց նրա երգիծանքը խորք ունի և նրա քանաստեղծությունները մեծ գրական արժանիք: Մենք չենք ուզում երկարորեն մեր սեփական կարծիքը հայտնել Օրեյդե Զաքանիի մասին, բայց առատ օրինակներ կբերենք նրա բազմաթիվ երկերից, որոնք պարզ կերպով

³³ Խաջուն նմանեցնում է գեղեցկուհու շիկնած դեմքը և թշի խալը շիկնած ածուխին և խունկին (Եսֆանդ): ԷՍՖԱՆԴԸ ընդհանրապես կրակի մեջ են ձգում և աղոթքներ են կարդում պահպանվելու համար ՉԱՐ ԱԶՔԻՑ:

կապացուցեն, որ երգիծանքի այդ հանճարը այնքան հզոր մտրակող և խորն է եղել, որ թվում է, թե ժամանակակից մեկն է գրել այս բոլորը և ոչ թե մեկը, որ մահացել է մի քանի հարյուր տարի առաջ:

Օրեյդե Ջաքանիի կյանքից քիչ բան է մեզ հասել: Նա ծնվել է Ղազվինի շրջանում, Ջաքան գյուղում և ուսանել է Շիրազում: Նա սկզբնական շրջանում լուրջ մի բանաստեղծ էր, բայց հոգնելով աղքատ և անոթի կյանքից, հանկարծ փոխվում է անառակաբանի, դուր գալու համար իր ժամանակի բարոյապես ընկած իշխաններին: Հուսահատվելով իր վիճակից, նա գրում է հետևյալ քառյակը.

*Արվեստի ու գիտության մեջ
Ինձ պես վարպետ պետք է դառնաս,
Որ մեր օրվա արքունիքում
Չհամարեն քեզ տոբադաս:
Թե որ ուզես քեզ հավանեն
Իշխանները մեր անառակ,
Սիրուն կանայք քեռ նրանց համար,
Մորա, մրիբ, ով խեղկատակ:*

Նրա ծանոթ բանաստեղծներից մեկը կարդալով այդ քառյակը, զարմանում է, որ Ջաքանիի պես նուրբ և տաղանդավոր մի բանաստեղծ կարող է այդպես փոխել իր գաղափարը կյանքի և արվեստի մասին: Այդ իր ծանոթին Ջաքանին ուղարկում է հետևյալ բանաստեղծությունը.

*Ով իմաստուն, թող արվեստը, ուսումը թող,
Թե ոչ կարոտ պիտի մնաս օրվադ հացին.
Խեղկատակի, պարմանուհու արվեստ է պետք.
Թե չէ ո՛վ է այսօր պատվում բանաստեղծին:*

Սալմանն Սավաջին, որ այդ օրվա մեծագույն բանաստեղծն էր համարվում և ապրում էր Բաղդադի արքունիքում կատարյալ շվայտության և հարստության մեջ, կարդալով Ջաքանիի մի քանի բանաստեղծությունը, ծաղրական մի քառյակ է գրում նրա հասցեին, նրան անվանելով «խսկական Ղազվինի» (Պարսկաստանի ամենահիմար մարդը): Հենց որ Օրեյդե Ջաքանին լսում է այդ բանաստեղծությունը, թողնում է Ղազվինը և ուղևորվում է Բաղդադ: Մեծ դժվարությամբ նրան հաջողում է մտնել Սալմանի ապարանքը, ուր մի խնջույքի ժամանակ, Սալմանի գրած բանաստեղծական մի տողը լրացնում է Ջաքանին: Այդ բանից շատ դուրն է գալիս Սալմանը և նա հարցնում է.

— Որտեղի՞ց ես դու գալիս, ով անծանոթ:
Օրեյդը պատասխանում է.
— Ղազվինից:

— Արդյո՞ք իմ անունը ճանաչված է Ղազվինում և ո՞րն է իմ բանաստեղծություններից, որ ամենից շատ են հավանում ղազվինցիները:

— Քո բանաստեղծություններից հետևյալ կտորն է, որ շատ լավ է ճանաչված Ղազվինում,— պատասխանում է Օրեյդը:

*Ես գինեպաշտ եմ, գերին գինետան
Ու սիրահարված՝ գինույի նման,
Ձգում եմ գրկից-գիրկ ինձ անդադրում
Ու բաժակի պես ձեռքից-ձեռք խլում:*

— Եվ չնայած, որ Սալմանը կատարյալ մի մարդ է,— շարունակում է իր խոսքը Ջաքանին,— և կարող է լինել, որ այդ քառյակը ինքը գրած լինի, բայց ղազվինցիների կարծիքով այս բանաստեղծությունը նրա կինն է գրել, նկարագրելով իր սեփական վիճակը:

Սալմանը այս սրամիտ խոսքից գլխի ընկավ, որ Օրեյդե Ջաքանին ինքն է, որ եկել է Բաղդադ վրիժառու լինելու համար: Սալմանը նրան շատ պատվեց և երկար ժամանակ Բաղդադում իր հյուրը պահեց նրան և այս հաշտությունը կայանալուց հետո էր, որ Ջաքանին վերադարձավ նորից Ղազվին:

ՕՐԵՅԴԵ ՋԱԶԱՆԻԻ ԵՐԿԵՐԸ

Օրեյդե Ջաքանին գրվածքներ շատ ունի, որոնցից ամենակարևորներն են.

- 1 - «ԱԽԼԱՂ ՕԼ-ԱՇՐԱՖ» (Ազնվականների բնավորությունը կամ բարոյական կյանքը), արձակ, որը նա գրել է 1340 թվին (740 Հեջրի):
- 2 - «ՌԻՇ-ՆԱՄԵ» (Միրուքի գիրքը), արձակ և չափածո խառն, առանց թվականի:
- 3 - «ՌԵՍԱԼԵԵ ՍԱԴ ՓԱՆԴ» (Հարյուր խրատների գիրքը), արձակ, գրված 1350 թվին (750 Հեջրի):
- 4 - «ԹԱՐԻՖԱԹ» (Բացատրություններ), արձակ, անթվական:
- 5 - Բանաստեղծություններ, մեծ մասը պոռնոգրաֆիկ:
- 6 - «ՌԵՍԱԼԵԵ ԴԵԼԳՈՇԱ» (Զվարճացնող պատմություններ կամ ճառք), որը արաբերեն և պարսկերեն գրված անեկդոտների ժողովածու է:
- 7 - «ՕՇՇԱՂ ՆԱՄԵ» (Սիրահարների գիրքը):
- 8 - «ՖԱՆԱՄԵ» (Գուշակությունների գիրքը):

Բացի այդ, Օրեյդե Ջաքանին բազմաթիվ լուրջ բանաստեղծություններ ունի, որոնց թվումն է նաև նրա հռչակավոր պոեման՝ «ՄՈՒՇ Օ ԳՈՐԲԵ» (Մուկն ու կատուն), որը այնքան թարմ և ժամանակակից բնույթ ունի, որ պարսկական սահմանադրական շարժումի օրոք տպագրվել և տարածվել էր ժողովրդի մեջ, մկները ներկայացնելով Մաջլեսը, իսկ կատուն՝ Մահմադ Շահ Ղաջարը, դրանից հետո, երբ Ռեզա Շահը ուզում էր թագավոր դառնալ, նորից այդ պոեման ժողովրդականացավ և բոլորի բերնին էր:

Օրեյդե Զաքանու բանաստեղծությունների մեծ մասը անթարգմանելի է, բայց Բրաունը իր գրքում մի քանի կտոր ունի, որոնցից հետևյալը արժանի է թարգմանության, ցույց տալու համար, թե Օրեյդե Զաքանին, հակառակ ձրիակերության իր ջանքերին, դրամական որպիսի նեղ պայմաններում էր ապրում:

Մարդկանց սիրտը հրճվանքով լի
 Ու ես լեցուն՝ պարտքի ցավով,
 Մարդկանց ձեռքը դրամ, ոսկի
 Ու ես տանջվում՝ պարտքի դաղով,
 Աստծուն էլ պարտք, մարդկանց էլ պարտք,
 Այս բոլորին ինչ վճարեմ,
 Ծախսերս շատ, մարդիկը վատ,
 Պարտքերս տամ՝ թե փող ճարեմ:
 Թե որ մուրհակ ցույց տան հանկարծ,
 Ծնկներիս թույլ՝ դող է ընկնում,
 Պարտատերիս դեմքից անգույթ
 Գաբրիելի հոտն է բուրում:
 Քաղաքում՝ պարտք, թաղում՝ մեր պարտք,
 Փողոցում՝ պարտք, տան մեջ՝ անձար՝
 Առավոտից մինչ երեկո
 Հայհոյում եմ այս կյանքը դառ:
 Մարդիկ բոլոր պարտքից փախչում,
 Իսկ ես համատ ու աննկուն՝
 Ամեն անգամ աղոթեցիս՝
 Իմ Աստծուց պարտք եմ ուզում:

مردم به عیش و شادی و من در بلای قرض
 هر یک به کار و باری و من مبتلای قرض
 قرض خدا و قرض خلایق به گردنم
 آیا ادای قرض کنم یا ادای قرض
 خرجم فزون ز غایت و قرضم برون ز حد
 فکر از برای خرج کنم یا برای قرض

 در شهر قرض دارم و اندر محله قرض
 در کوچه قرض دارم و اندر سرای قرض
 از صبح تا به شام در اندیشه مانده‌ام
 تا خود کجا بیابم ناگه رجای قرض
 مردم ز دست قرض گریزان و من به صدق
 خواهم پس از نماز و دعا از خدای قرض

Մի ուրիշ հատված նույն գրքի մեջ վերաբերում է բժիշկներին:

Այս խակ ու անփորձ բժիշկն իր կյանքում
 Հազար հիվանդ է սպանել անպատճառ,
 Հոգեատն ասաց նրան վերջապես.
 «Ինչ միշտ ծախում ես, մի օր էլ դու առ»:

Օրեյդե Զաքանիի ամենաարժեքավոր գործը նրա «ԱՆԼԱՂ ՕԼ ԱՇԲԱՖ»-ն է, որը կծու մի սատիր է ուղղված իր ժամանակի բարոյական արժեքների դեմ: Այս գիրքը կազմված է մի առաջաբանից և յոթ գլուխներից. (1) Իմաստություն, (2) Քաջություն, (3) Պարկեշտություն, (4) Արդարություն, (5) Առատաձեռնություն, (6) Խիղճ և հավատարմություն, (7) Համեստություն:

Յուրաքանչյուր գլխում Զաքանին ներկայացնում է այդ հատկությունների նախ իրական պատկերը և հետո դրա «ընդունած» հասկացողությունը: Այս գիրքը կարող էր գրել 20-րդ դարում ապրող մեկը, առանց նրանից մի ստորակետ փոխելու,

ցույց տալու համար մեր ներկա բարքերը: Դա մի ապացույց է, որ աշխարհը և մարդիկ չեն փոխվել վերջին հարյուրամյակների ընթացքում, կամ եթե փոխվել են, դեպի վատթարագույնն են գնացել:

Որպես օրինակ մի փոքրիկ հատված թարգմանել ենք նրա «Իմաստություն» գլխից, ուր նա ներկայացնում է իր օրվա իրապաշտ ըմբռնումները:

ԻՄԱՍՏՈՒԹՅԱՆ «ԸՆԴՈՒՆՎԱԾ» ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹՅՈՒՆԸ

«Երբ մեծ և իմաստուն մարդիկ, նուրբ հասկացողությամբ, որոնց արժանապատիվ գոյությամբ զարդարված է այսօր աշխարհը, մտածեցին մարդկային հոգու և նրա ապագա ճակատագրի մասին և երբ քննեցին հին ժամանակների հռչակավոր մարդկանց ըմբռնումները և կարծիքները, նրանք շուտով վճռական և վերջնական կերպով ժխտեցին ու հերքեցին այդ հասկացողությունները: Նրանք ասում են. «Մենք եզրակացնում ենք, որ ՀՈԳԻՆ գոյություն չունի, որ նրա գոյությունը վճռականորեն կապված է մարմնի գոյությանը և որ նա ոչնչանում է, երբ ոչնչանում է մարմինը»: Նրանք նույնպես ասում են. «Այն, ինչ ասել են Մարգարեները հոգու կատարելությունների և պակասությունների մասին, նրա գոյության և շարունակության մասին մարմնից անջատվելուց հետո, անկարելիություն է, ինչպես և անկարելիություն է Հարությունը: Կյանքը բաղկացած է մարմնական տարրերից և երբ այդ տարրերը լուծվում են, մարդը վերջանում և գերոյի է հավասարվում: Այն, ինչ ասված է Դրախտի հաճույքների և Դժոխքի տառապանքների մասին, վերաբերում է այս կյանքին, ինչպես ասում է բանաստեղծը.

ՆՐԱՆ ՈՐ ՏՎԻՆ՝ ՀԵՆՑ ԱՅՍՏԵՂ ՏՎԻՆ
 ԲՈՒՐԲ ՈՒ ՄԱՆԱՆԱ,
 ԻՍԿ ՆԱ ՈՐ ՉՈՒՆԻ՝ ՎԱՂՎԱ ԽՈՍՏՈՒՄՈՎ
 ՊԻՏԻ ԿՇՏԱՆԱ:

آن را که داده‌اند همین جاش داده‌اند
 و آن را که نیست؛ وعده به فرداش داده‌اند

Հետևաբար մեր Իմաստության Առաջնորդները բոլորովին հետաքրքրված չեն Հարությամբ, Ապագա Պատիժներով, Աստծո մերձավորությամբ կամ հեռավորությամբ, Աստվածային Գութով կամ Զայրույթով, Կատարելությամբ կամ Անկատարությամբ, և նման բաներով: Դրա արդյունքը այն է, որ նրանք սուզվում են շվայտ և րղջախտի կյանքի մեջ, ասելով.

ԴՈՒ ՈՐ ԶԱՎԱԿՆ ԵՍ ՉՈՐՍԻ ԵՎ ՅՈՒԹԻՅ՝
 ԵՎ ՄԻՇՏ ԿՇՏԱՅԱԾ ՅՈՒԹԻՅ ՈՒ ՉՈՐՍԻՅ,
 ՀԱՐԲԻՐ ԿԱՆԱՆՅՈՎ ՈՒ ԳԻՆՈՎ ՀԱՐԲԻՐ,
 ՉԵՍ ՎԵՐԱԴԱՌՆԱԼ, ԳՆԱՍ՝ ԳՆԱՅԻՐ:

ای آنکه نتیجه چهار و هفتی
 وز هفت و چهار دایم اندر تفتی
 می خور که هزار بار بیشتر گفتم
 باز آمدنت نیست، چو رفتی رفتی

³⁴ Յոթը մոլորակները և չորս տարրերը, որոնց նույնպես անվանում են «Յոթը երկնային հայրեր» և «Չորս երկրային մայրեր»: Այլ խոսքով՝ «դու, որիդ ոչ հայրն է հայտնի թե ով է և ոչ մայրը»:

Մինչ իրենց հայրերի տապանին հետևյալ քառյակն են քանդակում:

*Չկա ուրիշ ոչ մի տուն
Երբ հեռանաս այս տնից,
Չկա ուրիշ մի ընկեր,
Չկա ուրիշ կարեկից,
ՈՉԻՆՉԸ որ շատերին
ԱՄԵՆԱՅՆ ԻՆՉ երևաց՝
Անցիր նրանից ժպտալով
Պատրանք է դա անկասկած:*

Նույն ոգով Օրեյդե Ջաքանին նկարագրում է իր օրվա հասկացողությունների քաջության, պարկեշտության (որն անթարգմանելի է) և այլ առաքինությունների մասին:

Օրինակ՝ իր օրվա քաջերի բերանը նա հետևյալ քառյակն է դրել.

Նեոն և աղեղ ու կացին نبره و تبر و نیزه نمی یارم خورد
Չեն հարմարում ճաշակիս, اوت و می و مطربیم نگو می سازد
Տվնք զինի ու նվագ,
Կանայք են պետք սնարիս:

Օրեյդե Ջաքանու «ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» (թարիֆաթ կամ «ԴԱՀ ՖԱՍԼ»)-ը նույնպես հետաքրքիր է մեր այժմեական ըմբռնումով):

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ.— ԱՇԽԱՐՀԻ ԵՎ ՆՐԱ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԱՇԽԱՐՀԸ — Մի տեղ, ուր ոչ մի արարած չի կարող ուրախություն վայելել:
ԻՄԱՍՏՈՒՆ ՄԱՐԴԸ — Նա, որ չի հետաքրքրվում աշխարհով և նրա բնակիչներով:

ԿԱՏԱՐՅԱԼ ՄԱՐԴԸ — Նա, որին չի ազդում ուրախությունը կամ վիշտը:
ՀՈԳՍԸ — Այն, ինչ իզուր մաշում է մարդկանց:
ԳԻՏՈՒՆԸ — Նա, որ իր ապրուստը շահելու ընդունակությունից զուրկ է:
ՀԻՄԱՐԸ — Բախտի ընտրյալը:

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ.— ԹՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԳՈԳ ԵՎ ՄԱԳՈԳ — Թուրքերը՝ արշավանքի ժամանակ:
ԴԺՈՒՔԻ ՊԱՀԱՊԱՆՆԵՐ — Նրանց ղեկավարները:
ՍՈՎ — Նրանց արշավանքի արդյունքը:
ԹՈՒՐՔ ՈՍՏԻԿԱՆ — Նա, որ զիջերով գողանում և ցերեկով խանութպաններից կաշառք է պահանջում:

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ.— ԴԱՏԱՎՈՐՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՐԲԱՅԱԿՆԵՐԸ

ԴԱՏԱՎՈՐԸ — Նա, որին բոլորը անիծում են:
ՓԱՍՏԱԲԱՆԸ — Նա, որը սուտի է փոխում ճշմարտությունը:
ԿԱՇԱՌՔ — Այն, որ օգնում է անօգնականին:
ԵՐՋԱՆԻԿ ՄԱՐԴԸ — Նա, որ երբեք դատավորի երեսը չի տեսել:
ՔԱՐՈՋԻՉԸ — Մի ավանակ:
ՆՐԱ ՀԵՏԵՎՈՐԴԸ — Ավանակի պոչը:
ԲԱՆԱՍՏԵՂԾԸ — Ազահ իմաստակ:

ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍ.— ՇԵՅԽԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԵՏԵՎՈՐԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՇԵՅԽ — Իրլիսը (Սատանան):
ՍԱՏԱՆԱՆԵՐ — Նրա հետևորդները:
ՍՈՒՖԻՆ — Նա, որ ուտում է այն, ինչ չի աշխատել:
ՀԱՋԻՆ — Նա, որ ստորեն երգվում է Քաբայով:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍ.— ԱՋՆՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՈՒՈՐՏԱՆՔ ԵՎ ԱՆԱՄՈԹՈՒԹՅՈՒՆ — Ազնվականների առաքինությունը:
ՈՉԻՆՉ — Նրանց էությունը:
ՍՆԱՄՏՈՒԹՅՈՒՆ — Նրանց քաղաքավարությունը:
ԴԱՏԱՐԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԻՄԱՐՈՒԹՅՈՒՆ — Նրանց խոսակցությունը:
ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ, ԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ, ԺԼԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԱԽԱՆՁ — Նրանց հատկությունները:
ԱՊՈՒՇԸ — Նա, որ նրանցից բարիք է սպասում:

ՎԵՅԵՐՈՐԴ ՄԱՍ.— ԱՐՀԵՍՏԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԽԱՆՈՒԹՊԱՆԸ — Նա, որ Աստծուց չի վախենում:
ԴԵՂԱՎԱՃԱՌԸ — Նա, որ ուզում է բոլորին հիվանդացնել:
ԲԺԻՇԿԸ — Դահիճ:
ՍՏԱԽՈՍ — Աստղաբաշխը:
ՄԱՐՋԻԿ — Մի ծուլ խաբեբա:
ՄԻՋՆՈՐԴԸ — Շուկայի օրինական ավազակը:
ՀԱՐՅՈՒՐԻՅ ՄԵԿԸ — Այն, ինչ կալվածատիրոջը երբեք չի հասնում:
ԳԱՆԳԱՏ — Այն, ինչ ներկայացնում են կալվածատիրոջը:

ՅՈԹԵՐՈՐԴ ՄԱՍ.— ԳԻՆՈՒ ԵՎ ՆՐԱ ՍՏՈՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԳԻՆԻՆ — Աղմուկի աղբյուրը:

ՆԱՐԴԻՆ, ԳԵՂԵՑԿՈՒՀԻՆԵՐԸ, ԼՈՒՅՍԵՐԸ ԵՎ ՀԱՆԳԻՍՏ ԱՆԿՅՈՒՆԸ —
Նրա ընկերները:

ՔՆԱՐԸ, ՇՎԻՆ ԵՎ ՍԱՆԹՈՒՐԸ — Նրա նվագը:

ԹԱՆԸ ԵՎ ԽՈՐՈՏԻԿԸ — Նրա կերակուրը:

ՊԱՐՏԵԶՆ ՈՒ ՊԱՏՇԳԱՄԲԸ — Նրա հարմար տեղը:

ՈՒՐԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՅՔԱՅԻՉԸ — Ռամազան ամիսը:

«ԱՐԺԱՆԻ ԳԻՇԵՐԸ» — (Ռամազանի վերջին գիշերը) Խնջույքների նախօրյակը:

ՈՒԹԵՐՈՐԴ ՄԱՍ. — ԲԱՆԳԸ (ՀԱՇԻՇԸ) ԵՎ ՆՐԱ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԸ

ԲԱՆԳ — Այն, ինչ ոգևորում է Սուֆիին խանդավառությամբ:

ԳՈՀԱՐԱԶԱՐԴ, ԿԱՄՆԱ, ՈՐ ԱԶՆԻՎ Է ԵՐԿՈՒ ՄԱՅՐԻՅ — Նա, որ միաժամանակ ԲԱՆԳ է ծխում և գինի խմում:

ՀԻԱՍԹԱՓՎԱԾ — Նա, որ ոչ մեկը չի անում:

ԻՆՆԵՐՈՐԴ ՄԱՍ. — ԸՆՏԱՆԻՔԻ ՏԵՐԸ

ԱՄՈՒՐԻ — Նա, որ ծիծաղում է աշխարհի միրուքին:

ԴԺԲԱԽՏԸ — Ընտանիքի տերը:

ԵՐԿ-ԿՈՏՈՇԱՆԻ — Նա, որ երկու կին ունի:

ԴԺԲԱԽՏԱԳՈՒՅՆ — Նա, որ երկուսից ավելին ունի:

ԱՆՄԻՏ — Ամուսնացածի կյանքը:

ԿՈՐԱԾ — Նրա ժամանակը:

ՇՈՒՅԼՎԱԾ — Նրա հարստությունը:

ՄՈԼՈՐՎԱԾ — Նրա ուղեղը:

ԴԱՌՆ — Նրա կյանքը:

ՈՂԲԻ ԿԱՅԱՆ — Նրա տունը:

ՏԱՆ ԹՇՆԱՄԻ — Նրա զավակը:

ՎԱՏԱՍՏՂ — Նա, որ տառապում է աղջիկ ունենալով:

ՄՐՑԱԿԻՅ — Նրա եղբայրը:

ԱԶԳԱԿԱՆ — Նրա մահացու թշնամին:

ՑՆԾՈՒԹՅՈՒՆ՝ ՏԱՌԱՊԱՆՔԻՅ — Եոյակ ապահարզանը:

ՏԱՆԵՐՈՐԴ ՄԱՍ. — ՄԱՐԴԿԱՆՅ ԵՎ ԿԱՆԱՆՅ ՄԱՍԻՆ

ՏԻԿԻՆ — Նա, որ քազմաթիվ սիրելիաններ ունի:

ՏԱՆՏԻԿԻՆ — Նա, որ միայն մի քանի հատ սիրելիան ունի:

ՊԱՐԿԵՇՏ — Նա, որ գոհանում է միայն մի սիրելիանով:

ԿՈՒՅՍ — Այն, ինչ աշխարհում գոյություն չունի:

Հետևյալ մի քանի անեկդոտներն էլ մենք քաղել ենք Օրեյոն Զաքանիի «ՌԵՍԱԵ ԴԵԼԳՈՇԱ»-ից:

* * *

Մարդի մեկը իրեն Աստված էր հայտարարել: Նրան բերին խալիֆայի առաջ, որը նրան ասաց.

— Անցյալ տարի մեկը կար, որը ինքն իրեն մարգարե էր համարում և նրան մենք սպանեցինք:

— Շատ լավ արեցիք, — պատասխանեց մարդը, — քանի որ ես նրան չէի ուղարկել:

* * *

Մի դազվինցի հսկայական վահանով գնաց կովելու հերետիկոսների դեմ: Նրանց ամրոցից շարտված մի քար կպավ նրան ու կտորեց գլուխը: Նա շատ տխրեց և քացականչեց.

— Ո՛վ մարդ, միթե դու կույր ես, որ այդ հսկայական վահանը չես տեսնում և քարը գլխիս ես խփում:

* * *

Մի ինչ-որ դազվինցու տղա ընկավ մի հորի մեջ:

— Ով իմ սիրելի զավակ, — քացականչեց հայրը, — չշարժվես տեղիցդ մինչև ես գնամ մի թոկ գտնեմ և քաշեմ քեզ դուրս:

* * *

ՄՈՒԶՁՈՒ մեկը վազում էր և ԱԶԱՆ էր կանչում: Մարդիկ հարցրեցին նրանից, թե ինչն է վազում: Նա պատասխանեց.

— Ինձ ասում են, որ ձայնս հեռվից գեղեցիկ է լսվում, դրա համար ես փախում եմ նրանից, որպեսզի ստուգեմ նրանց ասածի ճշմարտությունը:

* * *

Մի մարդ ասաց իր ընկերոջը.

— Աչքս ցավում է: Ինչ պիտի անեմ:

— Անցյալ տարի, — պատասխանեց ընկերը, — ատամներիցս մեկը ցավում էր և ես նրան դուրս քաշեցի:

* * *

Ղազվինցի մեկը վերադարձել էր ամառը Բաղդադից: Նրանից հարցրին, թե նա ինչ էր անում Բաղդադում: Նա պատասխանեց.

— Քրտնում էի:

* * *

Ճաղատի մեկը բաղնիքից դուրս գալով տեսնում է, որ գլխարկը գողացել են: Խիստ բանավեճի է մտնում բաղնիսպանի հետ, որը նրան ասում է, որ բաղնիս գալուց առաջ նա գլխարկ չունեիր գլխին:

Ճաղատը բացականչում է.

— Ով մուսուլմաններ, արդյո՞ք այս գլուխը նման է մի գլխի, որին կարելի լինի փողոցում անգլխարկ պտտեցնել:

* * *

Ջահան ժամանակով գնաց ԱԼ—ՔԻՆԱՍԱ գնելու համար մի ավանակ: Մարդու մեկը հանդիպեց նրան և հարցրեց, թե ո՞ր է գնում: Նա պատասխանեց. «Ալ—քինասա եմ գնում, որ մի ավանակ գնեմ»: Մյուսը պատասխանեց. «Ասա Աստծո հավանությանը (ԻՆՇԱԼԼԱՀ)»: «Այստեղ ինչպիսի խնդիր չկա, — պատասխանեց Ջահան: — Ավանակը շուկայում է և դրամը իմ գրպանում»:

Երբ նա մտավ շուկան, գրպանահատները հարձակվեցին նրա վրա և գողացան նրա դրամը: Եվ երբ նա վերադառնում էր, նույն մարդը հանդիպեց նրան նորից և հարցրեց, թե ո՞ր տեղից է գալիս: Նա պատասխանեց. «Շուկայից՝ ինչպիսի, դրամս գողացվել է, ինչպիսի: Այնպես որ ես չգնեցի ավանակին, ինչպիսի: Եվ ես վերադառնում եմ տուն հուսախաբված և կողոպտված: Աստծո հավանությամբ»:

ԷՄԱՂԵ ՖԱՂԻՇԵ ՔԵՐՄԱՆԻ

Էմաղե Ֆաղիհե Քերմանի կյանքի մասին շատ քիչ տեղեկություններ գոյություն ունեն և այդ տեղեկությունների մեծ մասը դառնում է նրա և Հաֆեզի մրցակցության շուրջ: Այդ մրցակցությունը մեծ մասամբ ժամանակակից բանաստեղծների մի խնդիր էր, որոնցից մեկը՝ Էմաղե Քերմանին, վայելում էր Շիրազի իշխան Շահ Շոջա Մոզաֆարիի հովանավորությունը, մի բան, որից զուրկ էր Հաֆեզը: Շահ Շոջան ինքը բանաստեղծ էր և հավանաբար նախանձում էր Հաֆեզին, որին ոչ միայն հավասարվել, այլ նույնիսկ մոտենալ չէր կարող, մինչդեռ նրան ավելի հասկանալի էին Էմաղե Քերմանի միջակ որակի քերթվածները:

Էմաղե Քերմանին թողել է մի ԴԻՎԱՆ, մի քանի ՄԱՍՆԱՎԻ պոեմաներ և մեռել է Հեջրի 733 թվականին (1371—2 Ք. հ.):

Հաճախ մենք հանդիպել ենք նրա բանաստեղծություններին զանազան ժողովածուներում և կարդացել ենք նրա երկու գագեղները, բայց որևէ նորօրինակ, ինքնատիպ հատվածի չենք հանդիպել: Դա կարելի է բացատրել նրանով, որ Էմաղե Քերմանին, ինչպես և Խաջուն, Հաֆեզի ժամանակակիցներն են եղել և նրանք ստվերներն են Հաֆեզի հանձարի: Եթե նրանք ավելի ուշ, դարեր հետո ապրեին, կդասվեին Իրանի մեծ բանաստեղծների շարքում:

ՍԱԼՄԱՆԵ ՍԱՎԵ

Սալմանե Սավաջին (Սավեին) էպոս պալատական մի բանաստեղծ էր, որը իր օրոք մեծ հռչակ էր վայելում Իլ—Խանի Ջալաերի արքունիքում, ուր նա հատկապես պաշտպանյալն էր Շեյխ Հասանե Բոզորգի:

Նա երկու ՄԱՍՆԱՎԻ պոեմաներ է գրել, մի քանի ԳԱԶԵԼՆԵՐ, հատվածներ և քառյակներ, որոնք չնայած իրենց ձևի և հղկության: Դեռևս հաճելի են, բայց նրանց մեջ զգացումների նրբություն չկա:

Սալմանե Սավաջին իր հռչակը պարտական է իր ՂԱՍԻԴԱՆԵՐԻՆ, կամ գովաբանական բանաստեղծություններին, որոնց նա գրել է արքունական մեծավորների համար և նրանք իրենց կատարելության մեջ գերազանցում են նրա բոլոր նախորդ մեծ վարպետներին: Նա շատ մտերիմ էր Շեյխ Օվեյսի հետ, որը 20 տարի թագավորեց: Նրա թագավորության օրոք էր, որ Սալմանը հասավ իր փառքի գագաթնակետին, այնպես որ նույնիսկ Հաֆեզը նրան անվանում է «կատարյալների արքան և քերթողների թագավորը»: Սալմանը մեռավ 78 տարեկան հասակում, 1378 թվին (778 Հեջրի), փառքի և հարստության մեջ:

Սալմանը, որի կատարելությունը գտնվում էր ՂԱՍԻԴԱՆԵՐ գրելու մեջ, այսօր կորցրել է իր երբեմնի արժանիքը, բայց դեռևս համարվում է պարսիկ մեծ բանաստեղծներից մեկը, իր անգերազանցելի հղկության, լեզվի տիրապետման, բանաստեղծական ձկունության շնորհիվ: Նրա դասիդանների մեջ գտնվում են իսկապես կտորներ, որոնք բանաստեղծական հմտության գլուխգործոցներ են, բայց որոնց կյուրը և բովանդակությունը այսօր չի կարող որևէ ընթերցողի հետաքրքրել, նրան պակասում էր այն կիրքը և կրակը, որը մի բանաստեղծի դուրս է բերում իր ժամանակաշրջանի և երկրի նեղ սահմաններից:

Հետևաբար մենք Սալմանից շատ քիչ օրինակներ կարող ենք տալ, քանի որ նրան թարգմանելը ոչ միայն ժամանակին կարևոր և անարժեք կլիներ, այլև կարող ձանձրացուցիչ, մանավանդ որ նրա հատուկ նրբությունները անթարգմանելի են օտար լեզվով:

Ահա պատահական մի երկտող նրանից.

*Ջեփյուռը մեղմ լուսաբացին
Ծիծաղելիս տեսավ վարդին,
Այնպես զարկեց նրա բերնին,
Որ շրթերից արյուն կաթեց:*

غنچه را پیش دهان تو صبا خندان یافت
آن چنان بر دهنش زد که دهن پر خون کرد

Սալմանի գեղեցիկ քառյակներից մեկն է նաև հետևյալը, որը մենք թարգմանել ենք Օրբեյդե Ջաքանիին նվիրված գլխում:

*Ես գինեպաշտ եմ, գերին գինետան
Ու սիրահարված՝ գինովի նման,*

Ձգում են գրկից գիրկ ինձ անդադրում,
Ու բաժակի պես՝ ձեռքից-ձեռք խլում:

Այս հրաշալի քառյակը, որը վերագրվում է Օմար Խայյամին, և որը թարգմանել է հայրս՝ Հ. Միրզայանը իր «Օմար Խայյամ» ժողովածուի մեջ, նույնպես պատկանում է Սալմանե Սավաջուն:

Ձայն եկավ կանուխ մեր ՄԵՅԻՆԱՆԵԻՅ,
Թե ո՞վ խենթ, պաշտող դու գինանձավի,
Ելիր որ լեցնենք բաժակը գինով,
Նախքան մեր կյանքի բաժակը լեցվի:

آمد سحرى ندا ز میخانه ی ما
کای رند خراباتی دیوانه ی ما
پر خیز که پر کتیم پیمانه ز می
زان پیش که پر کنند پیمانه ی ما

Ահա մի ուրիշ քառյակ Սալմանից, որը նույնպես հիշեցնում է Օմար Խայյամին:

Ինձ հավատացող չկա աշխարհում,
Այնքան ուրացա, նորից երդվեցի,
Կոտրեցի երեկ բաժակս ուխտով՝
Այսօր բաժակով՝ ուխտս կոտրեցի:

Մի ուրիշ գեղեցիկ հատված Սալմանից.

Համրիչը քո թող մոզերի մազի
Կապերը լինեն
Եվ գեղեցկուհու կամարը հոնքի՝
Խորանդ լինի,
Եղիր այս կյանքում անհոգ պղպջակ
Գինու բոցաշող,
Ու մի՛ վատահիր՝ ծեր ու խարուսիկ
Գմբեթին երկնի:

چشمت به خنجرمژه عالم خراب کرد
کز خنجر کشیده به مستی چنان دهد.

Աչքդ դաշույնով արտևանունքի
Աշխարհ է քանդել,
Ո՞վ է մերկ դանակ մի գույգ հարբածի
Ձեռքի մեջ դրել:

Գիշեր կուզեմ, այնպես որ դու գիտես և ես,
Խնջույք լինի, այնպես որ դու լինես և ես,
Ես անկողնում քեզ քնացնեմ շոյանքներով,
Ու դու աչքիդ հարբած նազով ինձ քնացնես:

خواهم شبکی چنانکه تو دانی و من
بزمی و در آن بزم تو وامانی و من
من بر سر بسترت بخوابانم و تو
آن نرگس مست را بخوابانی و من

* * *

Մոտեցիր սաղի, յաղուք շրթերով,
Տուր Բաղախշանի գինին կարկեհան.
Մուսուլմաններին հարամ է գինին,
Դու հանգիստ խմիր, ո՞ր է մուսուլման:

ՀԱՖԵՋԵ ՇԻՐԱԶԻ
(ՇԱՄՍՈՂ-ԴԻՆ ՄՈՀԱՄՄԱԴ ՀԱՖԵՋ)

Ամահ և անհամեմատելի Հաֆեզին իր հայրենակիցները անվանում են ԱԼԵՄԱՆՈԼ-ՂԵՅԲ (անհայտի լեզուն) և ԹԱՐՋՈՄԱՆՈԼ-ԱՄՐԱՐ (գաղտնիքների թարգմանը) զավակն էր Բահադոլ-Դինի, որը Սպահանից գաղթեց Շիրազ, Ֆարսի Աթաբեկների իշխանության օրոք, հարստացավ առևտրով, քայքայ մեռնելուց հետո իր գործերը այնպիսի խառնակ դրության մեջ թողեց, որ նրա այրին և փոքր տղան դատապարտվեցին կատարյալ սնանկության: Հաֆեզը մանուկ հասակից ստիպվեց ինքն իր հացը աշխատել: Այնուհանդերձ նա ժամանակ գտավ հարևան մի դպրոցում սովորելու և շուտով «Ղորան»-ը անգիր արեց, որի հետևանքով և նա որդեգրեց իր «Հաֆեզ» ծածկանունը (հիշող պահպանող³⁵): Անսխալ կերպով արտասանելով Իսլամի Սուրբ գիրքը գլխից-ծայր, չխանգարեց Հաֆեզին ազատ ժամանակը քանաստեղծություններ գրել:

Հաֆեզի կյանքի մասին ճշգրիտ տեղեկություններ քիչ են: Ամենաճշգրիտ և ամենահետաքրքիր տողերը նրա ժամանակակից, ընկեր, և ներկա հասկացողությամբ նրա «հրատարակչի» Մոհամմադ Գոլանդամի նախաբանն է, Հաֆեզի առջին ժողովածուի սկզբում: Ահա թե ինչ է գրում Գոլանդամը Հաֆեզի մասին.

«Այնուհանդերձ ՂՈՐԱՆԻ Փութաջան ուսումնասիրությունը, թագավորի գործերի շարունակական ծառայությունը, ՔԱՇՇԱՖ և ՄԵՍԲԱՀ-ի ծանոթագրությունը, ՄԱՍԱԼԵԻ և ՄԵՖԹԱՀԻ ուսումնասիրությունը, գրական քննադատության օրենքների քննությունը և արաբական քանաստեղծությունների վերլուծումը արգելեց նրան հավաքել իր քերթվածները և գազելները կամ դասավորել և խմբագրել իր քանաստեղծությունները: Այս տողերի հեղինակը, մարդկանց փոքրագույնը, Մոհամմադ Գոլանդամ, երբ ներկա էր Մեծ Վարպետ Ղավամող Դին Արդոլլահի դասախոսություններին, հաճախ պնդում էր, խոսակցության ժամանակ, որ նա (Հաֆեզը) պիտի հավաքի այդ հազվագյուտ գոհարները մի շարահարության մեջ և թելի անցկացնի այդ փայլուն մարգարիտները, այնպես որ դրանք դառնան իր ժամանակակիցների համար թանկարժեք մանյակ և իր ժամանակի հարսերի համար մի գանձ անքանակ: Այնուհանդերձ նա չէր կարողանում համաձայնվել իր այս աղերսի

³⁵ Հաֆեզի այս կենսագրությունը մենք քաղել ենք Բրաունի «Պարսկական գրականության պատմությունից»: Բրաունը իր հերթին օգտվել է Շիրի Նոմանից, որն իր հերթին օգտվել է գոյություն ունեցող ամենավստահելի աղբյուրներից:

հետ, պատրվակելով, որ իր ժամանակակիցները չեն գնահատում նրա քերթվածները, մինչև որ նա հրաժեշտ տվեց կյանքին 791 թվին (1389 Ք. հ.)»:

* * *

Հաֆեզի առաջին իշխանն ու թևարկուն Շահ Աբու Էսհադն Ինջուն էր, որը Ֆարսի նահանգապետ էր կարգվել Ղազան Խանի օրոք: Աբու Էսհադը բանաստեղծ էր և բանաստեղծների բարեկամ, անհոգ, շվայտ և երբ նրա մոտիկներից մեկը նրան զգուշացրեց Մոզաֆարի թշնամիներից, որոնք սպառնում էին գրավել Շիրազը, նա միայն պատասխանում է, որ իր թշնամիները շատ հիմար պիտի լինեն, որ գարնան այսպիսի հրաշալի մի եղանակի՝ այլ բանով չեն կարողանում զբաղվել և որպես եգրափակություն՝ հետևյալ ԲԵՅԹԵՆ է արտասանում.

*Թող այս գիշեր անցնի ուրախ,
Վաղվա համար եղիր անվախ:*

Բայց Մոբարեզող Դին Մոզաֆարը, որը իշխում է Ֆարսում 1353–ից 1357 թվականը ճիշտ հակոտնյան էր իր նախորդի, որի ձեռքից նա խլել էր իշխանությունը: Կոշտ, կոպիտ, ճգնավոր բարքով, Շիրազը գրավելուց հետո նա փակել տվեց քաղաքի բոլոր գինետները, արգելելու գինին և գինեխումը:

Բոլոր նրանց համար, որ պնդում են, որ «գինին» և «գինետունը» Հաֆեզի համար մի ինչ–որ միստիկ նշանակություն է ունեցել, մենք թարգմանում ենք այս հրաշալի տողերը, որ Հաֆեզը գրել է գինետունների փակման առթիվ:

<i>Հոգեպարար է չնայած գինին</i>	اگر چه باده فَرَح بخش و باد گل بیز است
<i>Ու հովն է բերում բույրը դաշտերի,</i>	به بانگ چنگ مخور می که مُحْتَسِب تیز است
<i>Մեր ոստիկանից վախեցիր այսօր,</i>
<i>Փանդիտի ձայնով մի խմիր գինի:</i>	در آستین مَرَقَع پیاله پنهان کن
<i>Քո բաժակը թաքցրու թեզանիքիդ մեջ,</i>	که همچو چشمِ ضراحی زمانه خونریز است
<i>Արցունքով լվա արատը գինու,</i>	به آب دیده بشوییم خرقه‌ها از می
<i>Այսօր աղոթքի ու պասի օր է,</i>	که موسمِ وَرَع و روزگارِ پرهیز است
<i>Ու մեզ հսկում է Իշխանն ահարկու:</i>	

Նույն դեպքի առթիվ է, որ Հաֆեզը գրել է իր ամենահայտնի գազելներից մեկը, որը սկսում է.

<i>Արդյո՞ք մի օր կբացվեն դռները այս գինետան,</i>	بُود آیا که در میکده‌ها بگشایند
<i>Արդյո՞ք նորից կժպտա մեր երեսին ապագան,</i>	گره از کار فروبسته ما بگشایند
<i>Հյուսերն կտրենք բնարի, գինին մեռավ սափորում,</i>
<i>Ու մատովակն գանգրահեր՝ փնտրի թող այլ ապաստան:</i>	نامه تعزیتِ دختر رَزْ بنویسد
<i>Յավակցական գրեցեր որթի աղջկա համար,</i>	تا همه مُعَبِّجگان زلفِ دوتا بگشایند
<i>Արյուն–արցունք թող թափեն ընկերներս անբաժան:</i>	

<i>Դռնն կապեցին գինետան, Ով իմ Աստված, թույլ մի տուր,</i>	گیسوی چنگ بَبُزید به مرگِ می ناب
<i>Որ դռները կեղծիքի բացվեն դեմքիս անարժան:</i>	تا حریفان همه خون از مژه‌ها بگشایند
<i>Թե փակել են ինքնամոլ ճգնավորի խնդրանոք՝</i>	در میخانه بیستند خدایا میسند
<i>Աստճ՝ սիրուն կբացվեն այս դռները սրբազան:</i>	که در خانه تزویر و ریا بگشایند

Շահ Շոջան, որը հաջորդեց իր հորը, նույնպես խիստ մարդ չէր և թույլ տվեց, որ մարդիկ նորից զվարճանան, երգեն ու պարեն: Բացվեցին գինետան դռները և Հաֆեզը գրեց.

Լուսարացին մի ձայն անհայտ ինձ ՀՀնջաց.
«Անվախ խմիր, Շահ Շոջան է գահին նստած»:
Իմաստունը, որի բերնում խոսք կար հազար
Ու շրթերը կնքված էին՝ խոսեց հանկարծ:
Այժմ սագի անուշ ձայնով խոսենք պիտի,
Ու դատարկենք հանգիստ սրտով կուրծքը հոգնած:

Մի այլ գազելում նա գրում է.

ԹԱՍԸ ԾԻԾԱՂԵՑ. «ԱՐԳԵԼՈՂՆ Ո՞ՒՐ Է»:
ՔՆԱՐԸ ԸՉԱՑ. «Ո՞ՒՐ Է ԱՌԱՐԿԱՆ»:

Չնայած հաճախ Հաֆեզը գովաբանել է Շահ Շոջային, բայց վերջինս բանաստեղծի դեմ մի ինչ–որ գաղտնի քեն ուներ և նախընտրում էր Էմադե Ֆադլիին, որը շատ ավելի թույլ և երկրորդական մի բանաստեղծ էր: Դա նույնպես բացատրում են նրանով, որ Շահ Շոջան ինքը բանաստեղծական մեծ հավակնություններ ուներ և նախանձում էր Հաֆեզին: Շահ Շոջան, քննադատելով Հաֆեզի քերթվածները, ասում էր. այդ քերթվածները ներշնչված չեն որևէ մի նյութով. նրանք երբեմն միստիկ են, երբեմն բողջախոհ և շվայտասեր, երբեմն կրոնական և երբեմն լուրջ և հանկարծ փոխվում են շաղակրատանքի:

— Ճշմարիտ են քո խոսքերը,— պատասխանում է նրան Հաֆեզը,— բայց այդ բոլորով հանդերձ ամեն ոք գիտե, հիանում է և կրկնում է իմ քերթվածները, մինչդեռ կան բազմաթիվ բանաստեղծներ, նրանց անունը կարող էի տալ, և նրանց քերթվածները այս քաղաքի դարպասներից դուրս չեն գնում:

Շահ Շոջան չափազանց գայրանում է այդ խոսքերի վրա և մի առժամանակից հետո նրա ձեռքն է ընկնում Հաֆեզի մի երկտողը, որի հիման վրա Շահ Շոջան կարող էր Հաֆեզին որպես հերետիկոս մեջտեղից տանել:

Այդ երկտողը հետևյալն է.

<i>ԹԵ ԱՅՍ Է ԻՍԼԱՄՆ ՈՐ ՀԱՖԵԶՆ ՈՒՆԻ՝</i>	گر مسلمانی ازین است که حافظ دارد
<i>ՎԱ՛Յ ԹԵ ԱՅՍՕՐԸ՝ ԷԳՈՒՑ ՈՒՆԵՆԱ:</i>	آه اگر از بی امروز بود فردایی .

Հաֆեզին տեղեկացնում են եղելությունը և նա շփոթված գնում է օրվա մեծ հոգևորական Մոլանա Թայբարդի մոտ և նրա խորհուրդն է հարցնում: Հոգևորականը նրան խորհուրդ է տալիս մի երկտող ևս դրան ավելացնել և այդ խոսքերը օտարի բերանը դնել, քանի որ «հայհոյանքը ուրիշի բերնից պատմելը՝ հայհոյել չէ»: Այս խորհրդին հետևելով, Հաֆեզը հետևյալ երկտողը ավելացրեց.

*Մի օր լսեցի գինետան սեմին
Ասում էր այսպես մի խենթ քրիստոնյա.
«Թե այս է իսլամն որ Հաֆեզն ունի՝
Վա՛յ թե այսօրը՝ էգուց ունենա»:*

Երբ նրան մեղադրեցին դավանահերձության մեջ, նա առարկեց, որ պատասխանատու չէ քրիստանյա մեկի գաղափարների համար:

Շահ Շոջան մեռավ 1383–4 թվին և նրան հաջորդեց Ջեյնոլ Աբեդինը, որի իշխանության օրոք էր, որ Թեյմուր Լանգը, 1387 թվին մուսուլման գործեց Շիրազ, խնայելով այդ քաղաքի ժողովուրդին:

Հավանաբար այդ թվականին է, որ տեղի է ունենում Թեյմուր Լանգի և Հաֆեզի հոչակավոր հանդիպումը, որի մասին գրել են Հաֆեզի համարյա թե բոլոր կենսագիրները:

Թեյմուր Լանգը, ժամանելով Շիրազ, հրամայում է Հաֆեզին բերեն իր առաջ և նախատում է նրան հետևյալ երկտողի համար.

*ԹԵ ՈՐ ՄԻՐՏՍ ՄԻ ՕՐ ԳԵՐԻ
ՇԻՐԱԶԻ ԹՈՒՐԲԸ ԱՆՆՄԱՆ՝
ՆՐԱ ԽԱԼԻՆ ԵՍ ԿՂՈՇԵՄ
ՍԱՄԱՐՂԱՆ ԴԸ ԵՎ ԲՈՒՆԱՐԱՆ:*

*اگر آن ترک شیرازی بدست ارد دل مارا
به خال هندویش بخشم سمرقند و بخارا.*

Բացականչում է Թեյմուր Լանգը.

— Իմ փայլուն թրի հարվածներով ես նվաճել եմ երկրագունդը և ավերել եմ հազարավոր քաղաքներ ու կործանել եմ հազարավոր երկրներ, պճնելու համար Սամարղանդը և Բուխարան, իմ հայրենի և գահանիստ քաղաքները: Եվ դու, թշվառ ողորմելիդ, այդ քաղաքները նվիրում ես մի ինչ—որ Շիրազի թուրքի մի խալին:

— Տեր,— պատասխանում է Հաֆեզը,— այսպիսի առատաձեռնությունն էր, որ այս սև օրին նստեցրեց ինձ:

Թեյմուր Լանգը այնքան հավանում է Հաֆեզի այս սրամիտ պատասխանը, որ ոչ միայն նրան չի պատժում, այլև պարգևներով ուղարկում է տուն:

Հակառակ Գոլանդամի վկայության, որ իբր թե Հաֆեզը իրեն համարում էր «ժամանակակիցներից չգնահատված» մեկը, նա իր կյանքի ընթացքում արդեն հսկայական հոչակ էր վայելում: Նրա ժամանակակից հեռավոր երկրների թագավորները քանի անգամներ նրան խնդրել ու հրավիրել են իրենց արքունիքը, բայց Հաֆեզը չի կարողացել հեռանալ իր սիրած Շիրազից, բաժանվել «ՄՈՍԱԼԱՅԻ

ՍՅՈՒՔԻՑ ՈՒ ՌՈՒՆԱԲԱԴԴԻ ՋՈՒՐԻՑ: «Բաղդադի իշխան Սուլթան Ահմադն Ջալայերը, որը ինքը բանաստեղծ, երաժիշտ և նկարիչ էր, քանի անգամներ հրավիրեց Հաֆեզին իր մոտ, բայց Հաֆեզը մերժեց հեռանալ Շիրազից: Հնդկաստանի թագավորները նույնպես ուզեցին իրենց մոտ տանել Հաֆեզին: Դեքանի թագավոր Մահմուդ Շահ Բահմանին Հաֆեզին հրավիրեց իր արքունիքը և նախապես ճամփորդության դրամը ուղարկեց նրան: Հաֆեզը այդ դրամի մեծ մասը ծախսեց և հետևաբար ստիպված եղավ հրավերը ընդունել, ապերախտ չգտնվելու համար: Երբ նա հասավ Լար, իր չքավոր ծանոթներից մեկին հանդիպեց այդտեղ և դրամի մնացորդն էլ նվիրեց նրան: Բայց երկու պարսիկ հարուստ վաճառականներ, որոնք նույնպես ճամփորդում էին Հնդկաստան (Խաջա Ջեյնոլ դին Համադանին և Խաջա Մոհամմադ Քազերունին), նրանք խնդրեցին Հաֆեզին ընկերակցել իրենց և խոտացան նրա բոլոր ծախսերը վճարել:

Հաֆեզը ընկերակցեց այդ վաճառականներին մինչև Հորմոզ նավահանգիստը, որ մի նավ սպասում էր նրանց Հնդկաստան տանելու համար, բայց հագիվ նրանք նստել էին, երբ սուկալի մի փոթորիկ սկսվեց և Հաֆեզը, որ մինչ այդ նավի ու ծովի երես չէր տեսել, այնպես վախեցավ, որ անմիջապես նավը թողեց, վերադարձավ Շիրազ և հետևյալ հրաշալի գազելը ուղարկեց Մահմադ Շահին.

*Այս աշխարհի օրն անցողիկ մի շունչ ցավով ապրել չարժե,
Ծախի՛ր գինուն թիկնոցը այս, որ դրանից ավել չարժե,
Արքայական թագը անգին, մահվան վախով գոհարազարդ՝
Ցանկալի է, բայց այդ թագին գլուխը այս գոհել չարժե:
Գինետանը թե աղոթես, չեն նվիրի մի թաս գինի,
Կեցցե՛ հավատքն ճգնավորի, մի թաս գինի թափել չարժե:
Ցավը ծովի ինձ հեշտ թվաց, թե որ նրանից օգուտ քաղեմ,
Հինւր՛ եմ ես, հազար մի մեղք՝ մի ալիքով քավել չարժե:*

Հաֆեզի շուրջ բազմաթիվ այլ առասպելներ և ավանդություններ են հյուսվել, որոնց մեծագույն մասը հեքիաթային բնույթ է կրում: Նրա իրական կյանքից որևէ տեղեկություն չի մնացել, կամ ավելի ճիշտ՝ նրա կյանքը այնքան բնական հունի մեջ է ընթացել, որ ասելիք չի եղել ասելու համար: Հաֆեզը մի հանձար էր, որը տեսնում էր տիեզերքի համայնապատկերը իր պարտեզի մի անկյունից, որ երգում էր գինին, քնարը, կինը, սոխակը, իրական կյանքի հաճույքները և միաժամանակ խորապես թախանցում էր Կատարյալ Գեղեցկության մեջ և պարզ լեզվով բացատրում էր Դավանանքներից ամենախորը և ամենաայծմեականը, սուֆիզմը՝ Արարչական այն հասկացողությունը, որը քարոզում են այսօր մեծագույն թվաքանակներ և աստղագետներ, Այնժալանը, Sir James jeans-ը և ուրիշները:

Որպես գազելագիր, Հաֆեզը իր նմանը չունի պարսիկ գրականության մեջ: Նրա գազելների համար կարելի է բազմաթիվ ածականներ գործածել, ասել, որ նրանք խորք ունեն, իմաստուն են, երաժշտական են, սահուն են և այլն, և այլն: Բայց այդ բոլորը չի կարող բնորոշել Հաֆեզին: Հաֆեզը արտահայտության այնպիսի մի

հմայք ունի, այնպիսի կախարդական մի գեղեցկություն կա նրա քերթվածներում, որ միմիայն բնագորին ծանոթը, պարսկերեն լեզվով նրա ճաշակողը կարող է հասկանալ նրան և նույնիսկ չհասկանալու դեպքում՝ նրանով սքանչանալ:

Հաճախ որոշ հատվածներ Հաֆեզից անցյալում տպագրվել են «քառյակ» անվան տակ, որը ճիշտ չէ, քանի որ դրանք երկտողներ են եղել Հաֆեզի զանազան զագելներից քաղված և նրանց «քառյակ» կարելի է անվանել միմիայն ՀԱՅԵՐԵՆՆԻ իմաստով, քանի որ նրանք բաղկացած են եղել չորս տողից:

Հաֆեզի ամբողջական երկերը բաղկացած են 573 ԳԱԶԵԼԻՑ, 42 հատվածներից (ՄՈՂԱԹԱԱԹ), 69 քառյակից (ՌՌԲԱՅԱԹ), 6 ՄԱՍՆԱՎՈՒՑ, 2 ՂԱՍԻԴԱՅԻՑ և մի ՄՈՒՍԱՄԱՍԻՑ:

Հաֆեզի Դիվանը թարգմանվել է արձակ կամ չափածո կերպով անգլերենի, ռուսերենի, գերմաներենի, լատիներենի, ֆրանսերենի և այլն: Հայերենում, որը չափազանց աղքատ է թարգմանական գրականությամբ, Հաֆեզից մենք չենք հանդիպել որևէ թարգմանության, բացի հանգուցյալ հորս թարգմանած հատվածներից, որոնք դժբախտաբար ցրված են 1900 թվականների Կովկասյան մամուլի մեջ և ավելի հազվագյուտ դեպքերում նրանց կարելի է գտնել իրանահայ մամուլում: Այդ հատվածներից շատ քիչ ունենք, քանի որ նրանց ձեռագրերը գոյություն չունեն: Նրանք տրվել են «բարեխնամ» մի հրատարակչի և անհայտացել են: Հանգուցյալ Հ. Միրզայանի հուշերի մեջ այդ առթիվ կա մի ակնարկ, բայց այդ «բարեբարի» անունը չի հիշված:

ԳԱԶԵԼՆԵՐ ԵՎ ՔԱՌ-ՅԱԿՆԵՐ

Սուֆիի դառն գինու բոցը
Ինձ կապանի վերջիվերջո
Շուրթդ շրթին դիր, ով Սադի
Ու առ հոգիս այս խենթացած
Հարբածներին — շուրթդ շաքար
Ու գինույին — գինի տվեց
Ես եմ մենակ այս աշխարհում
Որ ոչ այն եմ և ոչ էլ այս:

* * *

Լավ հանդես է այն հանդեսը
Ուր իմ յարը ինձ յար լինի,
Ոչ թե վատվեմ ես մոմի պես
Ու նա լույս տա կարկեհանի:

* * *

Ծեր տարիքից խելքը այս իմ
Երբ է արդյոք ամաչելու:

Սիրոս ծարավ դեռ մի կույսի
Ու դեռ գրավ հոգիս՝ գինում:

* * *

Այրվիր ու սազվիր քո ցավերի հետ
Ու մի գանգատվիր մարդկանց քեզ ծանոթ,
Տանջվիր համրորեն ու գաղտնի պահիր
Գաղտնիքը սիրո — խելքների մոտ:

* * *

Խեղդվում եմ աչքիս արտասուքի մեջ,
Ափսոս որ լողալ չգիտեմ քո պես,
Այրվում եմ սրտիս հրդեհում անշեջ,
Ու դեռ ասում ես, — «Թարթիչս չայրեա»:

* * *

Կոտրած սիրտ եմ առնում մեր թաղում
Եվ ուրիշ — ոչինչ
Անձնավաճառի շուկան հեռու է
Այստեղից մի քիչ:

* * *

Այս խենթ խնջոյքում մի-երկու բաժակ
Խմիր ու գնա,
Չկարծես մեկը մինչև հավիտյան
Այստեղ կմնա:

* * *

Սիրեկաններից, շուրջդ հավաքված,
Փոքրիկ գեղանիս, դու մի նեղանար,
Շատ բնական է, ճանձեր կը խմբվեն,
Այստեղ, ուր գտնեն մի կոտոր շաքար:

* * *

Արի՛, ծաղիկ թափենք մեր շուրջ,
Գավաթները լեցնենք գինով,
Տիեզերքը քանդենք հիմքից,
Մի նոր աշխարհ հիմնենք սիրով:

بیا تا گل برافشانیم و می در ساغر اندازیم
فلک را سقف بشکافیم و طرحی نو دراندازیم

* * *

Շիրազը հասնք է, կարկեհան շրթի,
Եվ ես մասնագետ՝ գոհար ընտրելու,
Սիրո մեջ բոցից փախչել չի լինի,
Ես մոմ եմ վառած, ինձ մի վախեցրու:

در عاشقی گزیر نباشد ز ساز و سوز
استادام چو شمع، مَتَرَسَان ز آتشم
شیراز معدن لب لعل است و کانِ حُسن
من جوهری مُفَلِّسَم، ایرا مَشَوَشَم

* * *

Համբուրի միայն հարբած սիրուհուդ
Շուրթը սիրակեզ,
Համբուրել ձեռքը կեղծ կրոնավորի,
Անոթ է, Հաֆեզ:

مبوس جز لب ساقی و جام می حافظ
که دست زهدفروشان خطاست بوسیدن

* * *

Սերը՝ մարգարիտ, ծովը՝ գինետուն,
Եվ ես գինեպաշտ որսորդ եմ սիրո,
Կը սուզվեմ այստեղ և Աստված գիտե
Թե ո՞ր կը հասնեմ գլուխս հետո...

چل سال رنج و غصه کشیدیم و عاقبت
تدبیر ما به دست شرابِ دوساله بود

* * *

Քառասուն տարի տառապել եմ ես
Ու գիտության մեջ դարձել մկնաբիս,
Բոլորից հետո՝ ուշքն ու միտքը իմ
Երկու տարեկան գինուն եմ տալիս:

* * *

Մի սիրուհի մանկամարդ ու հին գինու մի սափոր,
Ազատություն ու մի գիրք, սիրո անկյուն մի անդրոր,
Քո դրախտի ձանձրությին ես չեմ փոխել հեշտալից,
Թե որ հազար փերիններ ինձ ուղարկես կենակից:
(Թարգմ. Զորայր Միզաբանի.— Ն. Մ.)

* * *

Հի մեռնելու, ում որ հոգին կենդանացավ սիրո բոցով, զոր
Մեր անունն է գրված էջին հավերժության լույս մատյանի: ٺبت است بر جریده عالم دوام ما.

* * *

Ծառա եմ ես նրա կամքին, ով այս կապույտ գմբեթի տակ
Հի դարձնի սիրտն իր ազատ՝ իմ ու քո-ի ձորտ ու գերին: ٺلام همت انم که زیر چرخ کبود
ز هر چه رنگ تعلق پذیرد آزاد است.

* * *

Յնձու՛, սիրո իմ, նայիր մի տես, հիստասունչ ո՞վ է գալիս, ٺزده ای دل ! که مسیحا نفسی می آید
Նրա անուշ շնչից, ասես, դրախտային հով է գալիս: ٺکه زانفاس خوشش بوی کسی می آید.

* * *

Քարոզիչները, որ այդպես մեզ խրատում են խորանում,
Մենության մեջ իրենց՝ թաքուն, ինչեր ասես, որ չեն անում:
(Հաֆեզ, Գազելներ, բնագրից թարգմանեց
Ազատ Մարթանը, Սպահան, 2007.— Ն. Մ.)

واعظان کاین جلوه در محراب و منبر می کنند
چون به خلوت می روند آن کار دیگر می کنند.

* * *

Հրճվալի գինին վերցրո՛ւ և արի՛,
Ուրիշից թաքուն՝ ջանք թափիր արի,
Չլես այլոց, թե պետք չէ փութալ,
Լսիր միայն ինձ՝ ելիր ու արի՛:

* * *

Առ խնդարեր գինու սափորն ու արի՛,
Փախիր մարդու դավից առոր ու արի՛,
Ականջ մի՛ դիր ասողներին «մի գնա»,
Լսիր միայն սրտին իմ խոր ու արի՛:
(Թարգմ.՝ Ս. Կապուտիկյանի)
(«Մարգարտաշար».— Ն. Մ.)

* * *

Այս աշխարհում ձեռք բերածից բան չմնաց՝ դարդից բացի,
Սիրո լավից, սիրո վատից — բան չմնաց՝ դարդից բացի,
Սիրտ ափովող մի սիրած ու ջան չմնաց՝ դարդից բացի
Գոնե անկեղծ մի ընկերոջ «ջան» չմնաց՝ դարդից բացի:
(Թարգմ.՝ Գևորգ Էմինի)
(«Մարգարտաշար».— Ն. Մ.)

* * *

Սիրտս ամեն օր վշտի ու ցավի նոր բեռ է կրում,
Աչքս կարտոի ցավոտ սուր փուշն է ամեն օր կրում,
Ես ջանք եմ թափում, նեղություն կրում, երկինքն ասում է՝
Հասանելի չէ գաղտնիքը խորունկ, իզուր ես կրում:
(Հաֆեզ, Գազելներ-քաղցաններ, թարգմ.
Ճորժ Արքախանյանի, «Ջանգալ» հրատ., 2023.— Ն. Մ.)

Ո՛վ զով զեփյուտ, եթե անցնես Արաքս գետի ափերով,
Համբույրս տար նրա հովտին բուրումնավետ, հոգեթով.

Այստեղ Սարմի իջևանում — մեզնից նրան բյուր ողջոյն —
Դու կը տեսնես Կարավանը զանգակների դողանջով.

Համբույրս տար իմ հոգյակի պատգարակին և ասա՝
Հասիր շուտով ինձ օգնության, վառվում եմ քո կարոտով.

Ես, որ բարի խորհուրդներին ուշք չդարձրի, շատ իզո՛ր,
Պատժվեցի անջատումի դառնաթախիժ կակիծով.

Գիշերային խրախճանքում գինի խմիր աներկյուղ —
Գիշերասպահն անձանոթ չէ, տեղ կը հասնես ապահով.

Սիրտ իմ, սերը անմիտ խաղ չէ. անսուտ սիրո խաղի մեջ
Չի կարելի խաղազունդը զարկել կրթի չովզանով.

Սիրտդ սիրով ձոնիր գինուն, հոգիդ՝ չքնաղ աչքերին,
Բայց, իմացիր, ուշիմ մարդիկ չեն նվաճվում ոչ մեկով.

Թութակները վայելում են շաքարեղեգ քաղցրահամ,
Իսկ տխրամած պղճուկ ճանճը գլխին խփում է թաթով.

Թե վեհասիտ արքան հաճի մտաբերել Հաֆեզին՝
Արդեն իղձս կը կատարվի այդ գերագանց շնորհով:
(Հաֆեզ, կազմեց և թարգմանեց
Աշոտ Գ. Մինասյանը, Թեհրան, 1995.— Ն. Մ.)

ՔԱՄԱԼԵ ԽՈՋԱՆԴ

Քամալը ծնվել է այժմյան Թուրքմենստանի Խոջանդ քաղաքում, բայց պատանի հասակում գաղթել է Թավրիզ, ուր և անց է կացրել իր կյանքի մեծ մասը: Քամալն Խոջանդն իր օրվա մեծ միստիկներից էր և սուրբի հոջակ էր վայելում: Ջամին նրա մասին գրելիս՝ ասում է, որ Քամալը բանաստեղծություն էր գրում միմիայն իր հոգեկան փոթորիկն հանգստացնելու համար և չձուլվելու համար Աստծուն: Սուֆիզմի մեջ սրբության վերջին աստիճանը այն ժամանակ է, երբ սուֆին ձուլվում է հոգեպես Աստվածության հետ, բայց նման դեպքերում, երբ խանդավառության մեջ մի սուֆի բացական չի «Ես և Աստված մեկ ենք», դա մեծ մեղք է համարվում: Դրանից խուսափելու համար է, որ Քամալը Խոջանդն երբեմն բանաստեղծություն էր

գրում, որպեսզի իր հոգեկան կյանքը վերջնականապես չոչնչացնի իր մարմնականին:

Ասում են, երբ Մոհամմադ Մարգարեն, իր Աստվածային Հայտնություններից բոլորովին սպառված ուշքի է գալիս, կանչում էր իր կին Աիշային իր մոտ և խնդրում էր նրանից իր հետ խոսել, ասելով. «Խոսիր ինձ հետ, ո՛վ փոքրիկ կարմրահեր» (ՔԱԼԵՄԵ — ՆԵ ՅԱ ՀՈՄԵՅՐԵ):

Քամալն Խոջանդն նույնպես մի բեյթ ունի, որ ասում է.

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԱՅՍ ԻՄ ՓՈՐՁԵՐԸ — ԴԱ ԵՄ՝ «ԽՈՍԻՐ ԻՆՁ ՀԵՏ ՀՈՄԵՅՐԵ»-Ն Է:

Թավրիզում Սուլթան Հոսեյնն Ջալայերը Քամալի համար հատուկ մի վանք կառուցեց, ուր և ապրեց ու մեռավ մեծ միստիկ բանաստեղծը 1391 թվին (792 Հեջրի):

Քամալ Խոջանդի «Դիվանը» շատ հազվագյուտ է, բայց նրա բանաստեղծությունները առատ են զանազան ժողովածուների մեջ: Բրաունը նույնպես բազմաթիվ հատվածներ ունի իր գրքում, որոնց մեծ մասը ժամանակագրական հետաքրքրություն են ներկայացնում, բացի այս մի գագեղը, որը չնայած պիտի սուֆիական այլաբանությամբ հասկանալ, այնուհանդերձ չափազանց գեղեցիկ է:

Ինչ խումբ է սա, ինչ տեղ է սա,
Ինչ դրախտ է այստեղ բացված,
Կյանքը աղու կուրծքը սաղու,
Շուրթն է թասի այստեղ օրինած,
Ուրիշներին արհամարհող
Բախտը մուրալ եկավ մեզ մոտ,
Երջանկությունն ծառան է մեր
Ուրիշների դոնից փախած:
Մեր գինետուն թե որ մոտես,
Խոցված սրտով սիրահարի՝
Մարդիկ կասեն մեղք է այստեղ
Ցավով սնել հոգիդ սոված,
Տիեզերքի կտրի եզրին
Նստել ենք մենք, մի խումբ հարբած,
Երբ հեռանաս՝ զգուշացիր
Չսայթաքի ոտքդ հանկարծ:

این چه مجلس چه بهشت این چه مقام است اینجا
عمر باقی رخ ساقی لب جام است اینجا
دولتی کز همه بگذشت ازین در نگذشت
شادئی کز همه بگریخت غلام است اینجا
چون در آیی به طربخانه ما با غم دل
همه گویند مخور غم که حرام است اینجا
ما ورای فلکیم از بر ما گر بروی
برو آهسته که جام و لب بام است اینجا

Այս գագեղից բացի, հանդիպել ենք զանազան ժողովածուների մեջ գեղեցիկ հատվածների, որոնցից ընտրել ենք մի քանի օրինակ:

Թե աչքն այս է և հոնքը այս,
Թե նազն այս է ու խալը այս՝

Բարի՛ եկաք, խեղք և կրոն,
Համբերություն՝ բարի՛ գնաս:

* * *

Թե որ ուզես մորթել տանջվող
Սիրելիանին — սիրո համար՝
Ոչ մի հիմար դու չես գտնիլ
Այս աշխարհում — ինձնից հարմար:

* * *

Որքան՝ եղբայր, ինձ խրատես,
Որ ձեռք քաշեմ գինուց անգին,
Հոր խրատը օգուտ չունի
Մորից ծնված խայտառակին:

* * *

Գիտես թե ինչու այսպես կլկլաց
Շիշում այս գինին.
Նա ծիծաղում է մեր ոստիկանի
Ներկած միրուքին:

* * *

Բախտիցն է մեր, որ լացելով
Դուռ ենք թակում մենք ուժասպառ:
Թե չէ անգութ աղջիկը այս
Ուրիշ մեկին սիրող չունի,
Դու ասացիր մութին դաժան
Հաջորդում է մի լույս պայծառ,
Ինչպես եղավ, գիշերս իմ
Լուսաբացի մի շող չունի:

* * *

Անգութ սիրուհիս թե որ ինձ հիշի
Ժպտով կարեկից՝
Իմ գոյությունը ես կմոռանամ
Ուրախությունից:

**ՇԱՄՍ ՄԱՂՐԵԲԻ
(ՄՈՎԱՄԱԴ ՇԱՐԻՖ ՄԱՂՐԵԲԻ ԹԱԲՐԻԶԻ)**

Մաղրեբին մեկն է Իրանի մեծագույն միստիկ բանաստեղծներից և դասվում է Աթթարի և Մոլանա Ջալալդ Դին Ռումիի շարքում:

Նա կատարելապես ՊԱՆԹԵԻՍՏ է և նրա բանաստեղծությունները, որոնք հավաքված են փոքրիկ մի «Դիվանի» մեջ, համարյա թե բոլորը համաստվածության և սուֆիզմի մասին են: Մաղրեբին մեծ ժողովրդականություն է վայելում Իրանում, հատկապես սուֆիների և սուֆիական վարդապետությամբ տարված շրջաններում, չնայած որ նրա քերթվածները երբեք չեն հասնում Ջալալդ Դին Ռումիի կամ Աթթարի նրբության և խորության:

Մաղրեբին ծնվել է Նահնում, քայց ապրել և մեռել է Թավրիզում, ուր նա ժամանակակիցն է եղել Քամալե խոջանդի, որը նույնպես իր ժամանակի ՍՈՒՐԲ դարվիշներիցն էր համարվում: Մաղրեբին մեռել է 1407 թվականին (809 Հեջրի) 60 տարեկան հասակում: Նրա դիվանը բաղկացած է մեծ մասամբ ԳԱԶԵԼՆԵՐԻՑ և նույնպես մի քանի քառյակներից, որոնք բանաստեղծական արժեք չեն ներկայացնում: Բայց նրա գագեղների մեջ հաճախ գեղեցիկ հատվածներ կան, որոնք բոլորն էլ Միակի Աստծո, համաստվածության (ըստ որի միայն մի հատիկ էակ կա, որ գոյություն ունի և ամեն այլ բան նրա արտացոլումն է, որով և Մարդը Աստծո մի ստեղծագործությունն է և Աստված ամեն մարդու մեջ է) և պանթեիզմի մասին է: Չնայած որպես բանաստեղծություն՝ Մաղրեբիի քերթվածները մեծ արժեք չունեն, քայց քանի որ սուֆիական հասկացողությունները և ըմբռնումները, որոնք այսօր այլ տեսքի և այլ անունների տակ համարյա թե քաղաքակիրթ մարդկանց միակ հավատքն են ներկայացնում, նրանց մեջ հատուկ և գեղեցիկ կերպով են արտացոլված, թերևս գտնվեն ընթերցողներ, որոնց հետաքրքրի այս մի քանի հատվածները: Քանի որ Մաղրեբիի բանաստեղծությունների միտքն է, որ հետաքրքրի է և եթե ուզենայինք չափածո թարգմանել, ստիպված պիտի լինեինք կրճատումներ և աղավաղումներ մտցնել նրա բանաստեղծության մեջ, հետևաբար ավելի հարմար համարեցինք թարգմանել այս մի քանի հատվածներ արձակ կերպով:

Երբ Դեմքիդ արեգակը երևաց,
Երկու աշխարհների հյույները հայտնվեցին,
Ու երբ ստվեր ձգեց Արևը դեմքիդ,
Այդ ստվերով էր, որ Իրերը Ձև առան:
Յուրաքանչյուր հյույն ճաճանչեց ինչպես Արև,
Քո արեգակնադեմ ճառագայթումից,
Հյույնն պարտական է իր գոյությունը Արեգակին
Եվ Արեգակն էլ իր գոյությունը առել է Հյույնից:

خورشید رخت چو گشت پیدا
ذرات دو کون شد هویدا
مهر رخ تو چو سایه انداخت
زان سایه پدید گشت اشیا
هر ذره ز نور مهر رویت
خورشید صفت شد آشکارا
هم ذره به مهر گشت موجود
هم مهر به ذره گشت پیدا

(Պիտի ի նկատի ունենալ, որ ՀՅՈՒԼԵՆ բառացի թարգմանությունն է ՋԱՐԵ-ի, որը հոմանիշն է ԱՏՈՄԻ):

Է. Բրաունը Քրիստոնեական ոգի է գտնում հետևյալ տողերի մեջ, որոնցով սկսում է Մաղրեբիի մի այլ գագեղը:

Այն Մեկը, որ թաքուն էր մեզնից,
Եկավ և մեզնից մեկը դարձավ,

Եվ Նա, որ մեզնից և ձեզնից էր,
 Եկավ ու մենք և դուք դարձավ,
 Բարձրագույն Գահի Արքան իջավ իր բարձունքից,
 Եվ չնայած որ նրանից բացի այլ Արքա չկա,
 Եկավ ու մուրացկան դարձավ,
 Նա՝ որ գերծ է չքավորությունից ու հարստությունից,
 Մուրացկանի հագուստով եկավ ցույց տալու համար
 Ճշմարտության գանձը:

Սա մի ուրիշն է նրա հայտնի գազելներից, որ սկսվում է.

Դու կաթիլ ես, անհուն ծովից մի խոսիր,
 Դու հյուլե ես, արեգակից մի խոսիր,
 Դու «այսօրվա» մեջ մի ապրող էակ ես,
 Երեկվանից ու վաղվանից մի խոսիր,
 Ապացույցից ու դրժելուց, ով տղաս,
 «ԵԹԵ ՈՉ»-ից և «ԶԿԱՅԻՑ» մի խոսիր³⁶:

قطره ائی از قعر دریا دم مزن
 ذرهئی از مهر والا دم مزن
 مرد امروزی هم از امروز گوی
 از پری و دی و فردا دم مزن

 درگذر از نفی و اثبات ای پسر
 هیچ از آلا و از لا دم مزن

**ԹԵՅՄՈՒՐ ԼԱՆԳԻ ՄԱՀՎԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՍԱՖԱՎԻ
 ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄԸ
 (1405-1502)**

Այս շրջանը, Հեջրի 9-րդ, 10-րդ դարը հայտնի է դարձել իր փքուն և պճնագարդ ճոճով, ինչպես արձակի, նույնպես և չափածո գրականության մեջ, բայց այդուհանդերձ ունեցել է իր մի քանի մեծ բանաստեղծները, որոնցից մեկն է Իրանի մեծագույն քերթողներից փիլիսոփա-բանաստեղծ-միստիկ Ջամին:

Թեյմուրական թագավորների իշխանության վերջին հարյուրամյակն է սա, որին հետևում է Սաֆավիների ազգայնական և ՇԻԱ հարստությունը, որոնց սկզբնական նպատակն էր ազատել Իրանը թուրքական հարստությունների ազդեցությունից:

Գաղափար կազմելու համար, թե որպիսի նրբացած անկում էր տիրում թեյմուրական այս մարող արքունիքներում, արվեստի, ոճիների, ցուփության և գեղեցկության, որպիսի հազվագյուտ մի խառնուրդ, բավական է մի քանի հատված կարդալ Դովլաթշահից:

Օրինակ, նկարագրելով Սուլթան Բայսանդորի արքունիքը, նա պատմում է, թե ինչպես նրա գրադարանում 40 հատ գեղագրողներ գրադված էին գրքերի ձեռագրությամբ:

«Նա բարեհաճ էր տաղանդի տեր մարդկանց հանդեպ, սիրում էր բանաստեղծներին, տենչում էր նրբություն և շվայտություն, խոսակցում էր սրամիտ պալատականների և զվարճության իր ընկերակիցների հետ»:

Եվ այսպես է շարունակում Դովլաթշահը.

«Բայց հասարակ ճակատագիրը և անգութ գմբեթը իրենց ձեռքը դրեցին այն զվարճասեր իշխանի վրա նրա երիտասարդության օրոք: Մի գիշեր, տերերի Տիրոջ հրամանով, գինու առատությունից նա մխրճվեց մահվան խորը Քունի մեջ, մինչդեռ Հարաթի ժողովուրդը կարծում էր, որ նա կաթվածահար է եղել:

Ասում են մահը ծանր մի քուն է,

Այդ քունը իջավ թարթիչիս վրա»:

Սա մի թոուցիկ պատկերն է ժամանակվա բարքերի և տարօրինակ չէ, որ նման մի շրջանում արձակ և չափածո բանաստեղծությունը, թողնելով իր պարզ, հստակ և ռեալիստ լեզուն, փնտրի ճոռոմաբանություններ, արտահայտության ծայրահեղ փքունություն և մակերեսային զարդարանքներ, զարմացնելու համար դիմացինին և ցնցելու համար չափազանց նուրբ ճաշակները: Արևի, հողի և բոքիկ ոտքերի ավիշը չկա: Բեհեզների մեջ պառկած, սրամիտ, խելոք, բարոյականին՝ իմաստության

³⁶ ԶԿԱ ԱՍՏՎԱԾ ԵԹԵ ՈՉ ԱՍՏՎԱԾ, ուր առաջ դրժումն է (Լա) և որին հետևում է «եթև ոչ» (էլլա) Լա-էլլա-էլ-Ալլահ:

կծու և մերկացնող աչքով նայող, շվայտության և կյանքի արժեքը ճանաչած մեկի գրականությունն է սա, որը մինչև այսօր էլ Սաֆավիների, Ղաջարների և ժամանակակից չափածո գրականության մեջ չի վերադարձել իր նախնական ուժին և պարզության և մնացել է նույն այդ անկումային կաղապարի մեջ:

Հարաթի արքունիքի շուրջ հավաքված բանաստեղծներից միայն Ջամին է, որ հատուկ ուշադրության արժանի է: Բայց Ջամուց առաջ չի կարելի չհիշել այդ շրջանի երկու ուրիշ բանաստեղծներին՝ ՇԱՀ ՆԵՄԱԹՈԼԼԱՀ ՔԵՐՄԱՆԻՆ և ՂԱՍԵՄԵ ԱՆՎԱՐԻՆ, որոնք երկուսն էլ համարվում են Իրանի մեծագույն միստիկ բանաստեղծներից: Հակառակ այն բոլորին, որ վերևը գրել ենք, սրանցից և ոչ մեկը փքուն և պճնագարդ ոճ չունեն: Սրանցից առաջինը ՍՈՒՐԲԻ հոջակ է վայելում նույնիսկ մինչև այսօր և հեռու է ապրել ժամանակի արքունական շվայտ կյանքից:

ՇԱՀ ՆԵՄԱԹՈԼԼԱՀ ՎԱԼԻ (ՔԵՐՄԱՆԻ)

Շահ Նեմաթոլլան, որի հոջակը ավելի շատ հիմնված է նրա սրբության և դարվիշության, քան բանաստեղծական ձիրքի վրա, ծնվել է Հալեպում Հեջրի 730 թվին, ապրել է Սամարղանդ, Հարաթ և Յագդ և վերջապես իր կյանքի վերջին 25 տարիները անց է կացրել Քերմանի մոտ գտնվող Մահան գյուղում, ուր և մեռել է 100 տարեկանից անց տարիքում: Նրա գերեզմանի վրա կառուցել են գեղեցիկ մի մզկիթ, ուր դեռ մինչև այսօր ապրում են դարվիշներ, որոնք երկրպագում են Դարվիշների Թագավորին: Նեմաթոլլան դարվիշների թագավորը և թագավորների ընկերակիցն էր: Նրա թոռները հետագայում ամուսնացան Սաֆավի հարստության շառավիղների հետ և մի քանի հարյուրամյակ թագավորական դիրք և պատիվ էին վայելում Պարսկաստանում: Շահ Նեմաթոլլան իր ԴԻՎԱՆԻՑ բացի, մոտ 500 սուֆիական հատվածներ ունի: Մենք Շահ Նեմաթոլլայի դիվանին չենք հանդիպել, չնայած որ Է. Բրաունը հիշատակում է, որ այդ դիվանը տպագրվել է Թեհրանում 1860 թվին: Այն, ինչ մենք կարդացել ենք Շահ Նեմաթոլլայից զանազան ժողովածուներում (Բրաունը իր «Պարսկական գրականության պատմության» մեջ ունի 4 երկար կտորներ, որոնք հետաքրքիր են միայն որպես ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆՆԵՐ ապագայի մասին) պարզ, անպաճույճ, սուֆիզմի շուրջ պոտովող ՄԱՍՆԱՎԻՆԵՐ են, որոնք բանաստեղծական արժեք չեն ներկայացնում: Դրանով հանդերձ Պարսկական Չափածո Գրականության այս ակնարկը թերի կլինեք, եթե մենք մանրամասնաբար կանգ չառնեինք Շահ Նեմաթոլլայի վրա, որն Իրանի մեծագույն միստիկներից մեկն է: Նրա բանաստեղծությունները բոլորը պոտում են պանթեիզմի, միաստվածության (ՎԱՀԴԱԹ-ՕԼ-ՎՈՋՈՒԴ) Միակ Կեստի շուրջ և նրա մարգարեական բանաստեղծությունները մինչև այսօր էլ մեծ հոջակ են վայելում Միջին Արևելքում:

Շահ Նեմաթոլլայի ԴԻՎԱՆՈՒՄ գտնվում են մի քանի քառյակներ, որոնցից երկուսը ընտրել ենք որպես նմուշ նրա բանաստեղծության:

*Մեր հայացքով ճամփի փոշին
Գոհար դարձավ.*

ما خاک راه را به نظر کیمیا کنیم
صد درد دل به گوشه چشمی دوا کنیم

*Հազար մի ցավ մեր արցունքով
Անդարձ անցավ,
Անհոգ ու խենթ հարբածներ ենք
Այս աշխարհում,
Մեր խնջույքից Շեյխը հարբած
Վերադարձավ:*

* * *

*Ամեն մարդու վիճակված չէ
Փառքը սիրո,
Մտրացկանին անվայել է
Թագը հարգո,
Թագավորից տուրք պահանջել
Դու չես կարող,
Գնա, ով խելք, ու մի՛ դիպչիր
Փեշին Սիրո:*

ՂԱՍԵՄ ԱՆՎԱՐ

Ղասեմ Անվարը ծնվել է Թավրիզի շրջակայքում՝ Սարաբ քաղաքում, 1356 թվին (757 Հեջրի) և որոշ շրջան Գիլանում ապրելուց հետո մեկնում է Հարաթ, ուր և նա ապրում է Թեյմուրի և Շահրոխի թագավորության օրերին: Նա հսկայական հոջակ էր վայելում ամբողջ Իրանում որպես մեծ միստիկ և Ասիայի բոլոր անկյուններից նշանավոր մարդիկ նրա մոտ ուսանելու էին գալիս: Նա միաժամանակ մոտ հարաբերությունների մեջ էր գտնվում Սաֆավի հարստության հայրերի, հոջակավոր հոգևորականներ Սադր-օղ-Դին Արդաբիլիի և նրա հոր Շեյխ Սաֆիի հետ: Ղասեմ Անվարը իր կյանքի վերջին տարիները անցկացրեց Խորասանի Խարզեղ փոքրիկ ավանում, ուր և մահացավ 1433 թվին (837 Հեջրի):

Ղասեմ Անվարը մի ԴԻՎԱՆ է թողել և մի քանի ՄԱՍՆԱՎԻ-ներ: Բանաստեղծական տեսակետից նրա քերթվածները թույլ են և չեն կարող համեմատվել ՄԱՂԲԵՔՈՒՆ, ՇԱՄՍԵ ԹԱԲԻԶՈՒՆ կամ նույնիսկ ՇԱՀ ՆԵՄԱԹՈԼԼԱԻՆ: Նա նույնպես գրել է թուրքերեն և ԳԻԼԱԹ քարբառով գազելներ, որոնք նույնպես (ըստ Բրաունի) մեծ արժեք չեն ներկայացնում:

Նրա գազելներում երբեմն գտնվում են գեղեցիկ տաղեր, միստիկ բովանդակությամբ, բայց որոնք կարճ են հայերեն ամբողջ մի տուն կազմելու համար: Այդպիսի մի օրինակ.

*ՑԱՎ ՉԷ ՈՐ ՀԱՐԲԱԾ ԳԱՍ ՄԵՐ ՃԱՄՓԱՅՈՎ,
ՄԵՐ ՏԻԵՋԵՐ-ՔՈՒՄ ՀԱՐԲԱԾ Է ՀՅՈՒԼԵՆ:*

Կամ՝

زندانی لایالی و مستان سرخوشیم
هشیار را به مجلس خود کی رها کنیم

برو ای عقل و مگو عشق چنان کرد و چنین
پادشاه است و بر او چون و چرایی نرسد
دولت عشق بهر بی سرو پایی نرسد
پادشاهی دو عالم بگدایی نرسد

ԴՈՒ ԻՆՁ ԱՍԱՑԻՐ՝ ԿՈՐՑՆԵՍ ԻՆՁ ՈՐ ՔԵՁ
ԳՏՆԵՄ ԱՆՀՈՒՆՈՒՄ,
ԱՅԴ ՀԱՆԵԼՈՒԿԸ ՈՉ ՈՔ ԲԱՅԱՏՐԵԼ
ԻՆՁ ՉՑԱՆԿԱՅԱՎ:

Բայց «Գոլչինն Ջահանբանի»-ում մենք հանդիպել ենք մի փոքրիկ հատվածի, որը գեղեցիկ է իր ՖԱՏԱԼԻՍՏ վճռականությամբ:

Ճակատագիրը մեկն է, որ ունի
Հինգ մատ իր ձեռքին,
Երբ ցանկանում է աշխարհի բարիքն
Պարզել մեկին՝
Դեպ բարեբախտը պարզում է ձեռքը
Եվ հետո դնում
Երկու մատ աչքին, երկու ականջին
Եվ մեկը շրթին:

قضا شخصی است پنج انگشت دارد
چو خواهد از کسی کامی برآرد
دو بر چشمش نهد وآنکه دو بر گوش
یکی بر لب نهد گوید که خاموش

Նույն ժողովածուի մեջ կա մի այլ ԲԵՅԹ, որ նույնպես մի օրինակն է Ղասեմ Անվարի գրելակերպից.

Սիրո աշխարհը նա մտավ միայն՝
Որ ձեռքը լվաց իր գլխից ունայն:

Թողնելով այդ շրջանի բազմաթիվ փոքր բանաստեղծներին, մենք հասնում ենք վերջապես ՋԱՄՈՒՆ:

ՋԱՄԻ

Նուր-օդ-Դին Արդոլաահման Ջամին մեկն է այն հազվագյուտ հանճարներից, որոնցով փայլում է Իրանի պատմությունը: Նա մեծ բանաստեղծ էր, հմուտ պատմաբան էր, գիտնական էր և միաժամանակ Իրանի մեծագույն ՄԻՍՏԻԿՆԵՐԻՑՆ էր: Նրա երկերի թիվը հասնում և թերևս անցնում է 48 հատոր, որոնց թվում են 3 հատ ԴԻՎԱՆ, յոթը ՄԱՍՆԱՎԻ պոեմաներ, ՂՈՐԱՆԻ բացատրությունը, Սուրբերի կյանքը, արաբերեն քերականություն, ուսումնասիրություններ միստիցիզմի, երաժշտության, հանգաբանության, բանաստեղծության և առողջանության մասին:

Ժամանակակիցների աչքում նա այնքան բարձր և անհասանելի ձիրքերի տեր էր նկատվում, որ նրան գովելը ավելորդ էին համարում: Նույնիսկ Թուրքիայի սուլթանը, գերված նրա հմայքով, երկու անգամ նրան նամակ է գրում և խնդրում է այցելել իր արքունիքը, Օթոման կայսրության գրականությունը 1460 թվից մինչև 1600 ամբողջապես գտնվում էր Ջամիի գերագանց ազդեցության տակ:

Ջամին ինքը իր ծննդյան թվականը հիշատակել է: Նա ծնվել է Խորասանի փոքրիկ Ջամ քաղաքում 817 թվի Շաբան 23-ին (1414 թվի նոյեմբերի 7-ին) և նույնպես հիշատակել է իր գրվածքների մեծ մասի ավարտման թվականները: Հետաքրքիր է, որ Ջամին իր գրքերի մեծ մասը գրել է իր նրկար կյանքի վերջին 10-15 տարիներում (նա մեռել է 1492 թվի նոյեմբերի 9-ին, 78 տարեկան հասակում):

Ջամիի մի այլ հետաքրքիր և հազվագյուտ քննադատն այն էր, որ նա ոչ մի թագավորի չէր բծնում և չէր գովում և այդ իսկ պատճառով իր կյանքի ընթացքում չափազանց հարգված էր իր անկախ ոգու և անխնա լեզվի համար:

Ջամիի արձակ գրվածքները մեծ հարգ են վայելում մինչև այսօր իսկ, բայց մեր նպատակը չէ արձակ գրականության մասին գրել և բացի այդ՝ Ջամու հոչակը հիմնված է նրա չափածո քերթվածների վրա: Նրա պոեմաների մեծ մասը թարգմանվել են գերմաներենի, ռուսերենի, անգլերենի և ֆրանսերենի: Հետաքրքիր է այստեղ տալ է. Բրաունի անձնական կարծիքը Ջամու մասին.

«Ջամին, կարելի է ասել, որ Իրանի միստիկ և համաստվածային (պանթեիստիկ) փիլիսոփայության գերագույն և ամենակատարյալ արտահայտիչն է և չնայած որ ուրիշ բանաստեղծներ նրան հաճախ գերազանցել են բանաստեղծական զանազան ճյուղերում, այնուհանդերձ ոչ մի պարսիկ բանաստեղծ Ջամու չափի հաջող չի եղել այնքան բազմապիսի մարգերում և նրա ժամանակակիցների խանդավառ հիացմունքը նրա հանդեպ՝ արդարանում է նրա բեղուն և բազմակողմանի հանճարով»:

ՋԱՄՈՒ ՅՈՒԹԸ ՊՈԵՄԱՆԵՐԸ

Նեզամի Գանջավիի «ԽԱՄՍԱ»-ի հետևողականությամբ Ջամին գրել է յոթը ՄԱՍՆԱՎԻ պոեմաներ, որոնք ձևաչափված են «ՍԱԲԵ» (ՅՈՒԹՆԱԿ) կամ «ՀԱՖԹ ՕՐԱՆԳ» (ՅՈՒԹը Գահ) անվամբ, որոնցից ամենամեծ հոչակն ու ժողովրդականությունն են վայելում «ՅՈՒՍԵՖ ԵՎ ՋՈԼԵՅԻՍԱՆ»: Հովսեփ Գեղեցիկի և Ջոլեյխայի սիրավեպի շուրջ բազմաթիվ պարսիկ բանաստեղծներ պոեմաներ են գրել, որոնցից մեկն է եղել Ֆերդովսին: Բայց բոլոր այդ պոեմաներից ամենագեղեցիկը Ջամիինն է: Յոթը պոեմաներից մի ուրիշը վերաբերում է նույնպես հաճախ կրկնված «ԼԵՅԼԻ ԵՎ ՄԱՋՆՈՒՆ» սիրավեպին:

Մնացորդ հինգ պոեմաները, որ ավելի քիչ ձևաչափված և միստիկ բնույթ են կրում, «ՈՍԿԵ ՇՂԹԱՆ» Է՝ «ՍԱԼԱՄԱՆ ԵՎ ԱԲՍԱԼ»-ը, «ԱՋՆԻՎՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԸ», «ՃԳՆԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՄՐԻՉԸ» և «ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ԻՄԱՍՏՈՒԹՅԱՆ ԳԻՐՔԸ»:

Այս պոեմաները թարգմանելն ավելորդ մի աշխատանք է, որ ոչ հաճույք կպատճառի թարգմանչին և ոչ էլ ընթերցողին և միմիայն հետաքրքիր է պարսկական գրականությունը ուսումնասիրողի համար:

Ջամին այս յոթը պոեմաներից բացի նաև երեք հատոր ԴԻՎԱՆ ունի, որոնք լեցուն են չափազանց գեղեցիկ ԳԱՋԵԼՆԵՐՈՎ և խորը ուսումնասիրության կարիքն ունեն: Այս կարճ ակնարկի մեջ, նվիրված պարսիկ ամենամեծ բանաստեղծներից

մեկին, դժբախտաբար մենք ստիպված ենք միմիայն բավականանալ մի քանի գեղեցիկ հատվածներով:

Հանգուցյալ Հ. Միրզայանի «Ջանազան»-ի մեջ միայն երկու հատված կա Ջամիից և որքան մենք տեղյակ ենք, նա ուրիշ ոչինչ չի թարգմանել այս մեծ բանաստեղծից, հավանաբար թողնելով դա մի այլ պատեհության, քանի որ Ջամին, պարսիկ հանճարեղ այլ բանաստեղծների պես, գեղեցկության մի ծով է, որի մեջ մխրձվողը դեռ երկար ժամանակ դուրս չի գա:

Հետևյալ երկու հատվածները հանգուցյալ հորս թարգմանածներն են:

ԱՅՅԵԼՈՒԹՅԱՆ ԵՍ ԵԿԵԼ
ՔՈ ՄԱՀԱՄԵՐԸ ՀԻՎԱՆ ԴԻՆ.
ՀԵՆՑ ԱՅԴ ԻՂՁՆ ԷՐ, ՄԻՐՈՒՀԻՍ,
ՈՐ ԻՆՁ ՁԳԵՑ ԱՆԿՈՂԻՆ:

عيادات می کنی بیمار خود را
مرا این آرزو بیمار کرده ست

ԳԻՇԵՐՆԵՐԸ ՋՈՒՐԿ ՔՈ ԴԵՄՔԻ ԼՈՒՍՆԻՑ
ԻՄ ԹԱՐԹԻՉՆԵՐԻՑ ԹԱՓՈՒՄ ԵՄ ԱՍՏՂԵՐ,
ԲԱՅՑ ԱՅՍ ԻՄ ՓԱՅԼՈՒՆ ԱՍՏՂԵՐՈՎ ՀԱՆ ԴԵՐԸ,
ՄՈՒԹՆ Է ԻՆՁ ՀԱՄԱՐ ԱՄԵՆ ՄԻ ԳԻՇԵՐ:

ريزم ز مژه كوكب، بی ماه رُخت شبها
تاریک شبی دارم ، با این همه كوكبها

Ջամու բանաստեղծություններից մենք ստիպված ենք միայն մի քանի օրինակով բավականանալ, այն հույսով, որ կկարողանանք մի օր ավելի մանրամասն նրան անդրադառնալ: Նրա բանաստեղծական հանճարը բնագրում կարելի է համեմել:

Մի գեղեցիկ և հազվագյուտ հատված է նրա հետևյալ քառյակը, որը հյուսված է «Լացի» (ՋԱՐ-ի) երաժշտական կրկնության շուրջ.

Դու որ սրտի լացին երբեք չես հավատում,
Ականջդ դիր կրծքիս, լսիր լացը սրտի,
Լացում եմ ես, մարդիկ անքուն այս իմ լացից՝
Իսկ ես լսում մինչ առավոտ՝ լսեցը սրտիս:

ای که بر زاری دل می کنی انکار بیا
گوش بر سینته من نه بشنو زاری دل
من و دل زار چنانیم که شبها نکتند
مردم از زاری من خواب و من از زاری دل

Հեռավոր մի գաղափար տալու համար Ջամու մասին, մենք թարգմանել ենք հետևյալ մի քանի կտորները.

Վառիր մումերը սիրո,
Այրիր հոգիդ սիրակեզ,
Որ բոցավառ սրտիդ մոտ՝
Փարվանայի պես հանգչես:

Տեսա կուրծքը շապկի ծալքից,
Ու խնդրեցի սրտիս՝ նայել,
Ինչպես նձուց դալարագեղ,
Որպես պտուղ՝ Նոն է կախվել:

Գիտե՞ս ինչ են այդ չքացված
Կոկոնները վառ ու հասուն,
Բլբուլները վարդի թուփին
Սիրտ են կախել, արնով լեցուն:

چيست دانی غنچه های ناشکفت اندر چمن
ببلان در شاخ گل دلهای پرخون بسته اند

Իմ սիրուհուն ես ասացի.
«Մի՛ հեռացիր, ով գեղանի,
Դու կյանքն ես իմ», բայց կյանքը միշտ
Հեռանալու տազնապ ունի:

Անկարելի է շուրթդ համբուրել,
Բայց բավական է երազն այն անմիտ,
Որ կհամբուրեմ շուրթն այն բաժակի,
Որը դիպչում է երբեմն շրթիդ:

تتوان بوسه زد آن لب کنم اما هوس آن
که ببوسم لب جامی که رسد گاه به آن لب

Երանի որ գինով հարբած
Դու անկողին ընկնես անհուշ,
Քեզնից գաղտնի ես մոտենամ
Ու համբուրեմ ոտքդ անուշ:

خوش آنکه ز می مست شوی بی خبر افتی
پنهان ز تو من بوسه زنم آن کف پا را

Սիրո գինու հատկությունը
Ինձ մի՛ հարցրու, հարբած եմ ես,
Հաճույքը այդ կհասկանաս,
Երբ բաժակը շրթիդ դնես:

Որքան ուզում եմ մարդկանցից գաղտնի
Հատաչս բանտել,
Կուրծքս ասում է. «Ես նեղ եմ, ճչա՛,
Թե ոչ կպայթեմ»:

* * *

Որքան ցանկես իմ հոգում
Խրատների գեղանի,
Քո խրատից այս հոգում
Սիրո ծաղիկ կրունի:

* * *

Ոչ գինետան և ոչ մզկիթ ներս չեն թողնում,
Ինձ բշում են իրենց միջից մարդիկ ամեն,
Ղարիք եմ ես, օտար եմ ես ու սիրահար,
Ցույց տվեք ինձ սիրահարի մոլոր ճամփեն:
(Թարգմ. Զորայր Միրզայանի)

* * *

Կյանքիս կեսը՝ պարս՝ պ խոսքի մեջ անցավ,
Կեսն էլ՝ ցավի ու խոսքի մեջ անցավ,
Կյանքս, որի մի պահն արժեր մի աշխարհ —
Տես ի՛նչ ձևով, ի՛նչ ցնորքի մեջ անցավ...

* * *

Գրքի պես լավ յար — աշխարհում չկա՛,
Վիշտն ավոտիող ճար — աշխարհում չկա՛.
Գրքից խաղաղված, անդորր իմ հոգում,
Այլևս ցավ ու խավարում չկա՛...
(Թարգմ. Գևորգ Էմին)
(«Մարգարտաշար».— Ն. Մ.)

ՊԱՐՍԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (1500–1900 ԹՎԱԿԱՆՆԵՐ)

Մեզ՝ հայերիս, քիչ թե շատ ծանոթ են Իրանի դասական մեծագույն բանաստեղծները, ինչպիսին են Ֆիրդոսին, Խայյամը, Հաֆեզը, Սաադին, Մովլավին, Բարա Թահերը, շնորհիվ բազմաթիվ թարգմանությունների սփյուռքում և Հայաստանում, որոնց մեջ առաջնագույն տեղն է գրավում — թարգմանական հարազատության, ինչպես և բանաստեղծական արտահայտության մեջ — հանգուցյալ հորս Հովսեփ Միրզայանի թարգմանությունները:

Դժբախտաբար պարսից գրականության վերջին շրջանները հայերի մեծամասնությանը անծանոթ են: Հազիվ հազարից մեկը լսած լինի Օրֆիի, Քալիմի, Սաերի, Հաթեֆի, Աշեղի կամ Յաղմայե Ջանդադիի անունները:

Լցնելու համար այս բացը, ես փորձել եմ հավաքել 1500 թվականից մինչև մեր օրերը ապրող բանաստեղծների համառոտ կենսագրությունը և ամեն մեկից որպես նմուշ թարգմանաբար ներկայացնել հատվածներ:

Այս աշխատանքի համար ես օգտվել եմ E. Braun-ի «A. Literary History of Persia»-ից, որից որդեգրել եմ ժամանակագրական կարգը: Ռեզա Ղուլի Խան Հեղայաթի «Մաջմա-օլ-Ֆոսահա»-ից՝ որոշ բանաստեղծական հատվածներ և կենսագրական նյութերի համար: Արդու Ղադեր Բդաունիի (1532–1609) «ՄՈՆԹԱՆԱԲԱԹ ԹԱՎԱԲԻՍ»-ից՝ Հնդկաստանում ապրող պարսիկ բանաստեղծների վերաբերմամբ:

Շիրլի Նոմանի «Շեր-Օլ-Աջամից»³⁷, որը դժբախտաբար միայն կարճ մի ժամանակ ձեռքի տակ ունեի: Բանաստեղծական հատվածներ ընտրելու համար ամեն միջոցի դիմել եմ: Ծանոթներից «դիվաններ» եմ պարտք առել, ժողովածուներից արտագրել եմ, պարսիկ ընկերներից լսել և իմ համեստ հիշողությամբ աշխատել եմ անգիր անել: Այդ բոլորից հետո կարողացել եմ փոքրիկ մի ժողովածու կազմել և ըստ Prof. Braun-ի ժամանակագրական կարգի, այս ակնարկը հետևյալ պատկերն է ներկայացնում:

- 1500–1600 թվականները (Հեջրի 906–1008),
- 1600–1700 թվականները (Հեջրի 1008–1111),
- 1700–1800 թվականները (Հեջրի 1111–1215),
- 1800–1900 թվականները (Ղաջարական շրջան),
- 1900–1960 (հրատարակվել է 2-րդ հատորում.— Ն. Մ.):

³⁷ Շիրլի Նոման (1857–1914), հնդիկ ճանաչված իսլամագետ, իր «Շեր-օլ-Աջամ» հեղինակած գիրքը ներկայացնում է պարսիկ գրականության պատմությունը: (Ն. Մ.)

Բանաստեղծությունը անձնական ճաշակի խնդիր է: Բանաստեղծությունն թարգմանելը անձնական հասկացողության խնդիր է: Հանգուցյալ հայրս թարգմանում էր այն՝ ինչ սիրում էր և այնպես՝ ինչպես հասկանում էր: Թարգմանել պարսկերենից մի ամբողջ գագել կամ դասիդա դժվար չէ, բայց դա միայն ակադեմիկ հետաքրքրություն կարող է ունենալ, և դա է պատճառը, որ Արևմուտքը պարսիկ բանաստեղծներից ծանոթ է մեծ մասամբ քառյակագիրներին, քանի որ միայն քառյակն է, որ լրիվ կերպով կարելի է թարգմանել, միաժամանակ պահպանելով նրա բանաստեղծական արժեքը:

1500-1600 թվականների շրջանում ապրող բանաստեղծները մեծ հոչակ չեն վայելում: Նրանց մեջ միայն Օրֆին և Քալիմն է, որ ճանաչված են և ավելի ժողովրդականություն են վայելում Հնդկաստանում և Թուրքիայում, քան Իրանում:

Այս հարյուրամյակի բանաստեղծների մեջ աչքի են զարկում հետևյալ ութ հոգին: Բաբա Ֆաղանի Շիրազի, Օմիդի Թեհրանի, Ահլի Թորշիզի, Ահլի Շիրազի, Հալալի Ջողաթայի, Լեսանի Շիրազի, Վահշի Բաֆդի և Օրֆի Շիրազի:

**ԲԱԲԱ ՖԱՂԱՆԻ ՇԻՐԱԶԻ
(մահացել է 1519 թ.)**

Բաբա Ֆաղանի Շիրազին մեկն է պարսիկ այն բանաստեղծներից, որոնք ավելի հարգված են Հնդկաստանում, քան իրենց հայրենիքում:

Բաբա Ֆաղանին ցածր ընտանիքից էր և նրա ապրելակերպը դարվիշական էր: Նա Շիրազից ճամփորդեց Մաշհատ և հետո Թարբիզ, ուր նա Սուլթան Յաղուր, «Ճերմակ ոչխարներ» ցեղի իշխանի պալատում ընդունելություն գտավ: Բաբա Ֆաղանիի բանաստեղծությունները մեծամասնաբար կրոնական բնույթ ունեն և նրա դասիդաների մեծ մասը գրված է Ալլիի գովաբանության համար:

Բայց ասում են, որ Բաբա Ֆաղանին միայն կյանքի վերջին տարիներին էր, որ կրոնավախ դարձավ: Մինչ այդ ըստ բանաստեղծների քմահաճ և անպատասխանատու սովորության, նրան ոգևորում էր և գինին, և կինը, և նույնիսկ խալը մի շրթի եզրին:

Իր վերջին գագելներից մեկումն է, որ նա վախեցած աշխատում է հաշտվել Աստծո հետ և ասում է.

*Ժամանակ է գինին լեցնենք սափորի մեջ
Ու ցավագար,— հանգրվանը գնանք սիրո,
Այս բախտը տես, նախանձում են մարդիկ նրանց,
Ով դառնում է սիրո անգութ դաշույնի զոհ:*

*Կաթի առուն ու պալատը զոհել ենք մենք,
Սաղի ասա՛ մարբեն գառը այդ գինետան,*

*ما جوی شیر و قصر زبرجد گذاشتم
ساقی بگو که میکده را رفت و رو کنند*

*Գինով թրծված հողը մտավ խեղճ Ֆաղանին,
Վայ թե հրեշտակը հոտոտի նրա պատյան:*

*آوده ی شراب فغانی به خاک رفت
آه ار ملایکش کفن تازه بو کنند*

Մի քանի Բեյթ Ֆաղանուց.

*Թե որ մեռնեմ ու սիրուիս
Դեմքը դարձնի գերեզմանիս,
Թիթեռի պես այդ մումի շուրջ
Տասը հազար կյանք կվառեմ:*

* * *

*Կյանքս սեմիդ զոհեցի
Մի համբույրի խոստումով,
Թե որ համբույր ինձ տայիր՝
Վճարեի ինչ գնով:*

* * *

*Սիրոս կորցրեցի գինարբու շրթի,
Խեղոքը ասաց. «Տես հարբած խենթին»,
Իմ կուտքը անգութ նայեց հայելուն,
Նա իրեն պաշտեց ու ես՝ — այդ կուտքին:*

* * *

*Բժիշկը պիտի ճար անի ցավին,
Բայց ես ինչ անեմ
Որ այս բժիշկն է որ հազար ցավիս
Պատճառ է դարձել:*

**ՕՄԻԴԻ ԹԵՀՐԱՆԻ
(մահացել է 1519 թ.)**

Օմիդի Թեհրանի կյանքի շուրջ շատ քիչ տեղեկություններ կան և նրա բանաստեղծությունները հազվագյուտ են: Հայտնի է միայն, որ նա անվանի էր իր դասիդաներով, որոնց մեծամասնությունը գովաբանական բնույթ է ունեցել, որ նա վատ հարաբերությունների մեջ էր եղել քաղաքացիների հետ և որ նա վերջապես մի ինչ-որ հողային վեճի պատճառով սպանվել է Թեհրանում: Նա նույնպես գրել է մի «Սաղի Նամե»: Բրիտանական թանգարանում գտնվում է նրա բանաստեղծությունների մի ժողովածուն, բաղկացած միայն 17 էջից, և նույնիսկ այս մի քանի բանաստեղծությունները հավաքել են նրա մահից տարիներ հետո, Շահ Սաֆիի հրահանգով:

«Մաջմա-օլ-Ֆոսահան» 24 կտոր բանաստեղծություն է հիշում Օմիդիից, որոնցից մի քանիսը չափազանց գեղեցիկ են, մանավանդ գազելը, որ սկսվում է.

Դու կես հարթած մի թուրք ես
Ես կես մորթված մի թռչուն,
Քո գործը հեշտ է ինձ հետ
Իմ ցանկությունը — անհուն:

تو ترک نیم مستی، من مرغ نیم بسمل
کار تو از من آسان، کام من از تو مشکل
تو پا نهی به میدان، من دست شویم از جان
تو خون چکانی از رخ، من خون فشامم از دل

Ըմբռնելու համար այս գազելի եզակի երաժշտությունը, նրան պիտի կարդալ քնագրի մեջ:

Երկրորդ բեյթն է.

تو پا نهی به میدان من دست شویم از جان
نو خون چکانی از رخ من خون فشامم از دل

Օմիդու գեղեցիկ բեյթներից մեկն էլ հետևյալն է.

Տեսության օրը չեմ տեսնում մեկին իմ շրջապատում
Բացի իմ շվաքից, որ դեմք է դարձնում, երբ նրան եմ նայում:

Մի ուրիշը.

Ցանկության սերմը մի ցանիր այս սին, անցուկ պարտեզում,
Նրա պտուղը ոչինչ կլինի, եթե ոչ զղջում:

ԱՎԼԻ ԹՈՐՇԻԶԻ, ԱՎԼԻ ՇԻՐԱԶԻ

Երկու Ահլիները, մեկը Թորշիզից (մահ. 1527 թ.) և մյուսը Շիրազից (մահ. 1535 թ.) ժամանակակիցներ էին և պատկանում էին Հերաթի դպրոցին, որոնք հավաքվել էին Սոլթան Հոսեյնի շուրջ: Այս դպրոցը շատ ավելի մեծ ժողովրդականություն է վայելում Հնդկաստանում, քան Իրանում: «Մաջմա-օլ-Ֆոսահան» չի հիշում նրանց անունը, իսկ պրոֆ. Բրաունը միայն մի երկու տող է նվիրել այս երկու բանաստեղծներին:

Ինձ հաջողվել է բանաստեղծական ժողովածուների և հատկապես պ. Հոսեյն Մաքիի Գոլզարե Աղաբից, մի քանի կտորներ գրել: Բայց նախքան այդ՝ Հովսեփ Միրզայանը «Օմար Խայյամ»-ի վերջին բաժին «Զանազանում», մի քառյակ ունի Ահլուց, սակայն դժբախտաբար ես չկարողացա գտնել, թե դա Ահլի Շիրազցի է, թե Ահլի Թորշիզուց: Քառյակը (մի բեյթ, թարգմանված քառյակի ձևով) հետևյալն է.

Շանթն իմ կիզող հառաչի
Գիշերն երկինք կուղարկեմ,

Որ ասողն այրե չարաբաստ
Ճակատագրիս այս դժխեմ:

Այս մեկը «Գոլզարե Ատաբից» է և պատկանում է Ահլի Շիրազուն:

Դու նայում ես հայելուն
Ու հիանում ժպտագին.
Կյանքը այդ է, մեր դարում
Մենք ենք — ու մեր հայելին:

Մի ուրիշ կտոր.

Ես ու շվաքս սիրո աղբատ ենք
Այս ճամփի վրա,
Երբեմն ես եմ մուրում նրանից —
Եվ երբեմն նա:

Բնագրի բառացի թարգմանությունն է.

«Երբեմն ես եմ շուքիս հետևում —
Եվ երբեմն նա»:

دو ضعیفیم من و سایه در آنراه شدن
گه منم باز پس از سایه و گه سایه ز من

(Ահլին Թորշիզու դիվանը խմբագրել և հրատարակել է «Սեյդ Վահիդե Սեմնանի»-ն.— Ն. Մ.):

ՀԱԼԱԼԻ ԶՈՂԱԹԱԻ (սպանվել է 1528-9)

Հալալին, չնայած որ ծնվել է Ասթարաբադում, պատկանում էր թուրքական Զոդաթա ցեղին և պարսկական գրականության մեջ ճանաչված է Հալալիե Զոդաթայի անվամբ: Նրա ամենահռչակավոր պոեման «Շահ վա Դարվիշ» կամ «Շահ վա Գեդա»-ն է, բայց դրանից բացի նա ունի նաև մի այլ պոեմա՝ «Սեֆաթ-օլ-Աշեղին» (Միրահարվածների Հատկությունները) և մի «Դիվան»: Խորասանում նրան համարում էին շիա, բայց Միջագետքում նա հայտնի էր որպես սոննի: Դժբախտաբար ուզեցի ֆանատիկ Օրեյդոլլահ-Խանը, Հազարուն սոննի լինելու պատճառով սպանել սովեց:

Հովսեփ Միրզայանը «Զանազան»-ում հետևյալ կտորը ունի Հալալուց:

Ոչ թե նետով, այլ սրով
Կուզեմ որ ինձ սպանեն,
Որ իմ մահվան բուսեին
Գոնե մոտիկ լինեմ քեզ:

Հալալու ինքնաստիպ և գեղեցիկ հատվածներից մեկն է.

Յերեկս եղավ գիշեր ու Լուսին
Չտեսա ճամփիս,
Այս ինչ կյանք է, որ մի ամբողջ տարում
Չանցավ մի ամիս:

(Լուսինը և ամիսը երկուսն էլ պարսկերենում մահ է նշանակում):

روز من شب شد و آن ماه براهی نگذشت
این چه عمریست که سالی شد و ماهی نگذشت؟

Մի ուրիշը որ ավելի թույլ է:

Բժիշկը եկավ սնարիս կողին
Ու իմ հատաչից — լաց կոծը ընկավ,
Խեղճը եկել էր որ ինձ բժշկի,
Բայց սիրո ցավից ինքը մահացավ:

Հալալին մի չափազանց գեղեցիկ գագել ունի, որն ինձ չի հաջողվել թարգմանել, նրա հատուկ և նուրբ երաժշտականության պատճառով, որը միայն կարելի է բնագրի մեջ ճաշակել: Գագելը այսպես է սկսվում:

يار گفت: از ما مکن قطع نظر ، گفتم: به چشم
گفت: قطعاً هم مبین سوی دگر، گفتم: به چشم
گفت: اگر خواهد دلت زین لعل میگون خنده‌ای
گریه‌ها می‌کن به صد خون جگر، گفتم: به چشم

Այն, ինչ ես թարգմանել եմ, հեռու մի գաղափար է տալիս բնագրի գեղեցկության:

Յարս ասաց. «Դու ինձ նայիր»,
Ես ասացի. «Աչքիս վրա»,
«Աչքդ ուրիշ տեղ մի հառիր»,
Ես ասացի. «Աչքիս վրա»:

Ասաց. «Եթե այս շրթունքից
Դու ժպիտ ես ուզում գինով,
Սրտի արյուն պիտի թափես»:
Ես ասացի. «Աչքիս վրա»:

ԼԵՍԱՆԻ ՇԻՐԱԶԻ (մահ. 1533–34)

Չնայած որ ավանդությունը 100 հազար քայքայ է նվիրել Լեսանու գրչին, նրա բանաստեղծությունները չափազանց հազվագյուտ են և նրա դիվանը չափազանց դժվար է գտնել³⁸:

Նա իր կյանքի մեծ մասը անց է կացրել Բաղդադում, Թավրիզում և մահացել է այդ վերջին քաղաքում: Լեսանին համարվում էր չափազանց կրոնավախ և առաջնակարգ շեա. նա իր գլխից երբեք չէր վերցնում 12 ծալքանի կարմիր Ղուրանը, որով հոշակավոր էին դարձել «Դեզել քաշները» կամ «Սորխ Սարները» (Կարմիր գլուխները) Աղբրեյջանում:

Ասում են, որ նա մեռավ գլխարկը գլխին և աղոթքը վերջացրած, երբ լսեց որ տաճիկ Սուլթան Սոլեյմանը մոտեցել է Թավրիզի դարպասներին:

Լեսանիի բանաստեղծությունները չափազանց հազվագյուտ լինելով, ես կարողացել եմ գտնել միայն հետևել երկու քայքայեր, որոնց աղբյուրը նույնպես կասկածելի է և շատերի կողմից վերագրվում են Լեսանի Շիրազուն: Պրոֆ. Բրաունը իր գրքում մի քառյակ է հիշում, որը զուտ կրոնական բնույթ կրելով, դրական հետաքրքրություն չի ներկայացնում:

Իմ գտած թերթերից մեկն է.

* * *

Եկ, որ արցունքից եմ շրջապատում
Չոր տեղ չմնաց,
Որ կարողանամ հող տալ այս գլխիս,
Երբ դու հեռանաս:

* * *

Սև խալդ ասա ո՛ւմ ախի մուրն է,
Ո՛ւմ չարաբաստիկ բախտի մուրն է:

خال سیاهت از اثر دوده آه کیست
این نور دیده کویک بخت سیاه کیست

³⁸ 2014 թ. Լեսանին Շիրազու «Դիվանը» խմբագրեց Շիրազի համալսարանի դասախոս Մոհամադ Հոսեյն Քարամին (Ն. Մ.):

ՎԱՀՇԻ ԲԱՖՆԻ
(մահ. 1583 թ.)

Վահշին ծնվել է Քերմանի փոքրիկ քաղաք, Բաֆղում, բայց կյանքի մեծ մասը անց է կացրել Յազդում: Նրա գազելները և «Ֆարհադ Շիրին» պոեման մեծ ժողովրդականություն են վայելում: Նա իր այս պոեման չի վերջացրել, միայն մոտ 250 տարուց հետո էր որ բանաստեղծ Վասալ Շիրազին ավարտեց պոեման: Նա նույնպես գրել է երկու ուրիշ մասնավի պոեմաներ. «Խորլե Բարին»-ը և «Նասեր օ Մանսուր»-ը, բացի բազմաթիվ **գազելներից, դեթաներից**: Նրա չափազանց գեղեցիկ մի **մորաբբան** կարելի է գտնել **Մաջմա-օլ-Ֆոսահայում**, ինչպես և պրոֆ. Բրաունի ժողովածուի մեջ: Այս «**մորաբբա**»-ը ժողովրդական մի եղանակ է դարձել պարսիկների մեջ և չափազանց նման է հայկական երգին, որը սկսում է «Հեյ ժողովուրդ, լսեցեք» տողով:

Գրելու ձևը չափազանց նոր և ինքնատիպ է, լեզուն պարզ է և բովանդակությունը պատվական է պարսկական բանաստեղծական գրականության մեջ: Ես փորձել եմ թարգմանել այս **մորաբբա**-ը, բայց երկրորդ իսկ տանից նույնքան տարօրինակ բան դուրս եկավ, որ հուսահատված թողեցի:

Բաֆղին, հակառակ պարսիկ սիրահարված բանաստեղծների մեծամասնության, սիրո մեջ անկախ առնական և դեպի գեղանիները, աններող է եղել: Նա իր բանաստեղծությունների մեջ չի աղերսում, այլ զգուշացնում է:

Միրտն աղավնի չէ, որ երբ բարձրանա՝
Նորից իջնի ցած,
Մեկի կտորի անկյունից թռնենք՝
Թռել ենք անդարձ:

«ل نیست کبوتر که چو برخاست نشیند
از گوشه بامی که پریدیم ، پریدیم

* * *

Համբերությամբ կը բուժեմ
Թե որ սիրտս խենթանա:
Կշղթայեմ մի շաբաթ,
Նորից խելոք կդառնա:

«ل اگر دیوانه شد دارالشفای صبر هست
می کنم یک هفته اش زنجیر و عاقل می شود

* * *

Մի հպարտանա քո գեղեցկությամբ
Եվ ինձ մի ծաղրիր,
Իմ մաքուր սիրո ցուրն է որ դարձավ
Աչքերիդ հարիր:

* * *

Լուր տվեցեք որսորդին,
Որ գնացինք մենք խաղի.

«بر دهید به صیاد ما که ما رفتیم
به فکر صید دگر باشد و شکار دگر

Ուրիշ մի որս թող փնտրի
Մեր որսորդը գեղանի:

ՕՐՖԻՆ ՇԻՐԱԶԻ
(ծնվ. 1555 — մահ. 1590-1)

Բանաստեղծությունը ճաշակի խնդիր է: Օրֆին Շիրազին իմ կարծիքով իր դարու լավագույն բանաստեղծն է եղել: Այդ կարծիքի մեջ ես մենակ չեմ: Պրոֆ. Բրաունը սխալմամբ դիտել է տալիս, որ Օրֆին սիրված չէ Իրանում և ժողովրդականություն է վայելում միայն Հնդկաստանում և Թուրքիայում, պարսից բանաստեղծների բազմաթիվ ժողովածուներում Օրֆին առաջնագույն տեղ է գրավում:

Օրֆին, որի անունը Ջամալ-օղ-դին Մոհամմադ է, ծնվել է Շիրազում, բայց մանուկ հասակից ապրել է Հնդկաստան, որ նրան թունավորեցին 36 տարեկան հասակում: Օրֆին նույնիսկ իր այդ երիտասարդ հասակում մեծ դիրք էր վայելում Աքբար Կայսրի պալատում: Շնորհիվ իր հպարտ, ինքնահավան բնավորության, նա մեծ թվով թշնամիներ ուներ և համարյա թե բոլոր ժամանակակից բանաստեղծները նրան ատում էին, շողոքորթում էին, և վերջապես նրան թունավորեցին:

Օրֆին իր «Դիվանից» բացի, որը հավաքվեց 1588 թ., իր մահվանից միայն երեք տարի առաջ, և պարունակում է 26 դասիդա, 270 գազել և 700 հատվածներ ու քառյակներ, ունի նաև երկու **մասնավի** պոեմաներ:

Օրֆիի գազելները շատ գեղեցիկ են: Նրանք հատկապես աչքի են խփում իրենց պարզ լեզվով, հատուկ արտահայտությամբ և երաժշտականությամբ: Որպես մի օրինակ, ես չեմ կարողանում չիիշել նրա հրաշալի գազելը, որի մի տողը թարգմանել է Հովսեփ Միրզայանը, բայց սխալմամբ «Ջանազանում» վերնագրել է Վահշիին: Այդ գազելը, որը ըստ իմ լսողության պարսկական գրականության մեջ երաժշտության տեսակետից հազվագյուտ մի գլուխգործոց է, այդպես է սկսվում բնագրում:

چه شب است یارب امشب که ز بی سحر ندارد
من و همه این دعا ها که یکی اثر ندارد
غلط است انک گویند بدل ره است دل را
دل من زغصه خون شد، دل تو خبر ندارد

Պահպանելու համար այդ գազելի յուրահատուկ երաժշտությունը, հայերենում, լավ թե վատ, ես կարողացել եմ միայն այսպես թարգմանել:

Ինչ գիշեր է այս գիշերը,
Յար, որ այգի հուր չունի,
Ինչ աղոթք է այս աղոթքը,
Որ զորության սուր չունի,
Սուտ են ասում, որ սրտից սիրտ

Ճանապարհ կա մի գաղտնի,
Միրտու ցավից արյուն դարձավ,
Ու քո սիրտը լուր չունի:

Գազելի երկրորդ տողը Հ. Զ. Միրզայանը ազատորեն թարգմանել և հետևյալ գեղեցիկ քառյակն է տվել հայերենում:

Միայ խոսք է այն, թե սրտից առ սիրտ
Հաղորդակցության մի լուր կա գաղտնի,
Միրտու քո սիրտով արյան ծով դարձավ
Եվ քո սիրտը դեռ ոչ մի լուր չունի:

Վերևի քառյակը փայլուն և պերճ ապացույցն է այն տեսության, որ բանաստեղծությունը թարգմանելու համար ճաշակ է պետք և ոչ թե ճշգրիտ հետևողականություն (թե ես ինչո՞ւ պիտի այնպիսի արտառոց արտահայտություններ գործածեմ քնագիրը հարազատորեն տալու համար, ինչպիսին են «այգի հուր»-ը և «գորության սուր»...):

Հ. Միրզայանը երեք ուրիշ հատվածներ ևս ունի Օրֆիից իր «Ջանազանում», որոնք հետևյալներն են.

* * *

Միրուհուս առաջ, ո՞վ մահ, մի՛ թողնի
Ինձ անթալից,
Մի՛ կտրիր հույսս, այն իմ որոնած
Անգին զոհարից:

* * *

Եկավ սիրուհիս, ու կյանքս է գնում
Աստված իմ արդար.
Մեկ շունչ կյանք տուր այժմ, և վերջին օրն ինձ
Հարություն մի տար:

* * *

Տեսավ թարմ օդ ու մարմանդ
Փորձեց բանալ նա թևեր,
Թե մի արծիվ կար մոտիկ,
Խղճուկ կաքավն ինչ գիտեր:

* * *

Օտարի հետ գնում ես,
Եվ ինձ ասում «եկ, դու էլ»,

Ընտրիակալ եմ, գնա՛ դու
Ոտքը կարող չէ քայլել:

* * *

Քամի դառնամ — ինձ չեն թողնի դեմքդ շոյեմ,
Փերի դառնամ — ինձ չեն թողնի, որ սիրեմ քեզ,
Հին օրենք է, որ պարտեզում նպատակի,
Աշունն իջնի ու թույլ չտան մի վարդ քաղես:

گر باد شوم بر تو وزیدن نگذارند
ور حسن شوم روی تو دیدن نگذارند
این رسم قدیم است که در گلشن مقصود
بر خاک بریزد گل و چیدن نگذارند

Դժբախտաբար Օրֆիի դիվանը, ես չունեմ և այն, ինչ նրանից գրել և կարդացել եմ, եղել է «Գուլչենն Ջհանբանի»-ից և «Գուլզարե Ադաբ»-ից: Եթե մի օր Օրֆիի դիվանը իմ ձեռքը ընկնի, նրանից մի ամբողջ հատոր կթարգմանեմ:



چمنی دید و هوای خوش و پروازی کرد
کبک بیچاره ندانست که شهبازی هست

میروی با غیر و میگوی بی عرفی تو هم
لطف فرمودی برو کاین پایرا رفتار نیست

1600-1700 ԹՎԱԿԱՆՆԵՐ

Շիրլին իր «Շեր-օլ-Աջամ»-ում այս շրջանին պատկանող բանաստեղծների մեջ հիշում է Նազիրիին, Թալեբե Ամոլիին, Աբու Թալեբ Քարիմին և Սաեբին: Ռեզա-Նուլի խանը այս շրջանում միայն հիշում է Ջոհուրիին և Շաֆահին: Բրատներ այս վեցի թիվը հասցնում է 17-ի, որոնց միջից ես ընտրել եմ հետևյալ անունները, այս անգամ ոչ թե հետևելով անձնական ճաշակիս, այլ ստիպված լինելով գրել միայն նրանց մասին, որոնց բանաստեղծությունները պատեհություն եմ ունեցել կարդալու:

ՆԱԶԻՐԻ ՆԵՇԱԲՈՒՐԻ

Ինչպես ցույց է տալիս անունը, Նազիրին ծնվել է Նեշաբուրում, բայց կյանքի վերջին 30 տարին ապրել է Հնդկաստանի Ահմադաբադ քաղաքում, Արդ-օլ-Ռահիմ Խանխանանի հովանավորության ներքո:

Նազիրիի կրոնական հասկացողությունները շատ էլ օրթոդոկս չէին և նա մեկն է այն բանաստեղծներից, որ գինուց բացի նույնպես գովել է ծխախոտը: Առաջադիմության մի քայլ, բայց բնականաբար շեշտը գինու և կնոջ վրա է: Մահացել է 1606 թ. Հնդկաստանի Ագրա քաղաքում (Ն. Մ):

*Թե որ գինեռտան հատակը քանդես
մինչև հավիտյան
Կոտրված խոստում ու կուժի փշուր
կգտնես միայն:*

* * *

*Առանց էության հրաշագործ քարի
Դժվար է վիշտը փոխել ցնծության,
Տեր իմ, կամ գինին թույլ տուր մեզ խմենք,
Կամ վշտից հեռու պահիր այս ծառան:*

* * *

*Այս քախտը չար ինձ արգիլեց
Խմել գինու խինդը անհագ,*

*Ու փոխարեն շրթիս դրեց
Իզուր վշտի դառը բաժակ:*

* * *

*Այնքան թուլացա քո սպասումի
Օրերում անխինդ,
Որ հայացքը իմ, դժգույն ու վտխ
Չի հասնում դեմքիդ:*

* * *

*Եթե հարյուր անգամ այրես,
Նորից գլխիդ պտույտ կգամ,
Ես թիթեռ չեմ, որ մի մումի
Թեթև բոցից մոխիր դառնամ:*

* * *

*Պարտիզպանը հազար նագով
Դուռը բացեց պարտիզի,
Ու մի բլբուլ տեսա հարբած
Ու մի կոկոն՝ գինով լի:*

ز بس که گشته‌ام از درد انتظار ضعیف
نگاه را به رخت قوت رسیدن نیست

سزد گر باغبان درهای باغ از ناز بگشاید
که بلبل گشت مست و غنچه اش گل در گلو دارد

ԶՈՒԱԼԻ ԽՈՆՍԱՐԻ (մահ. 1618 թ.)

Զուլի Խոնսարին (կամ Հարավին) յոթը մասնավի պոեմաներ է գրել, որոնցից մեկը Մահմուդի և Այազի վերաբերյալ պոեմը, շատ ժողովրդական է: Դրանցից երկու ուրիշներն են «Գինեռտունը» (մեյխանե) և «Փշուրն ու արևը» (Ջարե վա Խորշիդ):

«Ջանազան»-ի մեջ Հ. Միրզայանը այս բեյթը ունի Զուլուց:

*Չես գիջանի հիշել բնավ
Սրտիս փուշ, փուշ այս կսկիծ,
Մինչև որ իմ հողից բուսած
Մի փուշ բռնե քո փեշից:*

Դրա բնագիրը շատ մոտ է թարգմանության:

نخواهی کرد یاد از خارخار سینہ چاکم
مگر روزی که گیرد دامنت خار سر خاکم .

ՋՈՏՈՒՐԻ ԹՈՐՇԻՋԻ
(մահ. 1618 թ.)

Չոհուրի Թորշիզին ճանաչված չի Պարսկաստանում, բայց մեծ ժողովրդականություն է վայելում Հնդկաստանում, հատկապես իր արձակ գրվածքների համար: Այս բանաստեղծը գրել է մի «Սադի Նամե», որը մեծ հոշակ է վայելում Հնդկաստանում: Նա մի ընտանեկան կովի ժամանակ սպանվել է իր աներ և բանաստեղծ Մալեքե Ղոմու հետ միասին:

Իմ հանդիպած գեղեցիկ երկու բեյթերը հետևյալներն են.

*Աստված միայն պահպանե
Խրատներից կարեկից
Սիրեկանին անկեզու՝
Ականջների այդ ցավից:*

بند ناصح سلامت ایمن باد
عاشق بی زبان ز آفت گوشت

* * *

*Կրոնապետի դեմքը չորցրե՛ր
Փեշուվս թաց
Այդ չոր մարդուն գինի է պետք,
Մեկն ասաց:*

برای خرقة شویی زاهد خشک
فشردی کاش دامان تر من

ԹԱԼԵԲԵ ԱՄՈՒԻ (ՄԱԼԱՔ-ՕԼ-ՇՈՒԱՐԱ)
(մահ. 1626-7)

Թալեբե Ամոլին, որ վաղ հասակից գաղթել էր Հնդկաստան, այնպիսի մեծ հարգ էր վայելում այնտեղ, որ դարձավ Ջահանգիր Կայսրի Պալատական բանաստեղծը: Նա համեստ մարդ չէր, քանի որ ինքը գրում է, որ դեռ 20 տարեկան հասակում արդեն տիրապետել էր յոթը գիտությունների և որ «ամեն մի կետը նրա գրչի գիտուն մարդկանց սրտի կեղևն է»:

Թալեբե Ամոլի առանձնապես հետաքրքիր կյանք չի ունեցել և մեռել է երիտասարդ հասակում: Բրաունը իր «Պարսկաստանի գրական պատմության» մեջ Ամոլիից հիշում է մի բանաստեղծություն, որը նվիրված է նրա ծեր քրոջը: Սիրային բանաստեղծություններ շատ կան պարսկերենում, բայց ծեր քրոջը նվիրված բանաստեղծությունները չափազանց հազվագյուտ են: Պարսիկ մեծ գրականագետ Մալեք-Օլ-Շոարան Բահարը իր «Ոճաբանություն» գրքի մեջ շատ մեծ է գնահատում Ամոլու դերը ժամանակի պարսից բանաստեղծությունը դեգեներացիայից փրկելու մեջ: (Ն. Մ.):

Մեկ-երկու բեյթ Ամոլուց:

* * *

*Մեռա նախանձից տեսնելով շրթիդ
Շուրթը բաժակի,*

مردم ز رشک چند ببینم که جام می
آب بر لبست گذارد و قالب تهی کنی

**Հոգի է տալիս նա համբուրելով
Աղբյուրը կյանքի:**

* * *

*Պաս ու աղոթքից փրկություն խնդրի
Թող կրոնավորը,
Ես ունեմ Մեկին, որ ինձ պաշտպանի
Հարության օրը:*

زهد و تقوی را تو ای زاهد شفیع خویش ساز
من کسی دارم که در محشر بفریادم رسد

ՄԻՐ ԱԲՈՒՆ ՂԱՍԵՄ ՖԵՆԴԵՐԵՍԿԻ
(մահ. 1640-1)

Միր Աբու Ղասեմ Ֆենդերեսկին և փիլիսոփա էր, և դարվիշ, և բանաստեղծ: Նրա կյանքի մասին շատ քիչ տեղեկություններ են մնացել, երևի այն պատճառով, որ լինելով ավելի շուտ փիլիսոփա, քան բանաստեղծ և ավելի դարվիշ, քան փիլիսոփա, պարսիկ կենսագիրները չեն կարողացել նրան որևէ դասի մեջ դնել:

Է. Բրաունը հետաքրքիր մի անեկդոտ է պատմում նրա մասին, քաղելով այդ հին պարսկական աղբյուրներից:

Աբու Ղասեմը չափազանց անտարբեր էր դեպի իր արտաքինը, հագնվում էր դարվիշի պես, խուսափում էր հարուստների և ազնվականների ընկերակցությունից և խառնվում էր վատահամբավ և տմարդի դատարկապորտներին: Մի օր, Շահ Աբբասը, ցանկանալով նրան նախատել իր այդ ցածր միջավայրի համար, ասում է նրան.

— Ես լսել եմ, որ որոշ ուսանողներ ընկել են դատարկապորտների շրջանը և մասնակցում են նրանց ստոր հաճույքներին:

— Ես միշտ այդ շրջաններումն եմ,— պատասխանում է Աբու Ղասեմը,— բայց ոչ մի ազնիվ ուսանող նրանց մեջ չեմ տեսել:

Միր Ֆենդերեսկին հոշակավոր մի պոեմա ունի, որը հիշվում է համարյա թե սուֆիական բոլոր ժողովածուներում:

Այդ պոեմայի առաջին վեց տողը ես թարգմանել էի չափածո, բայց չստանալով նրա ճշգրիտ միտքը, ստորև տալիս եմ նրա արձակ թարգմանությունը, որը շատ ավելի մոտ գաղափար կտա միստիկ այս բանաստեղծության (այս վեց տողը գտնվում է Է. Բրաունի «Litt. Hist. of Persia»-ում):

*Այս կամարը գեղեցիկ է հազարավոր աստղերով,
Ունի մի դեմք ցածի մասում, որը նույնն է ինչ վերում,
Թե բարձրանա ցածի դեմքը իմաստության սանդուղով,
Նա կգտնի, որ միևնույնն է իր իրական դեմքի հետ:
Ձի համախառն այս իմ խոսքը արտաքնատես ոչ մի խեղճ,
Լինի թե դա Աբու Նասրը (Ֆարաբին) կամ Աբու Ալի Սինան:*

چرخ با این اختران نغز و خوش و زیباستی
صورتی در زیر دارد آنچه در بالاستی
صورت زیرین اگر با نردبان معرفت
بر رود بالا همان با اصل خودیکتاستی

ԱՐՈՒ ԹԱԼԵԲԵ ՔԱԼԻՄ (ՔԱՇԻ)
(մահ. 1651)

Արու Թալեբե Քալիմը ծնվել է Համադանում և նախքան Հնդկաստան գաղթելը, ապրել է Քաշանում: Այդ իսկ պատճառով նրան երբեմն անվանում են Քալիմն Համադանի և երբեմն Քալիմն Քաշանի:

Հնդկաստան գաղթելուց հետո, նա արժանացավ Շահ Ջահանի պալատական քանաստեղծի տիտղոսին: Նա ընկերակցեց Շահ Ջահանին՝ Քաշմիր, և այնպես սիրահարվեց այդ երկրի վրա, որ այդտեղ ապրեց մինչև իր մահը: Նա իր բարի, զվարթ և աննախանձ բնավորության շնորհիվ մեծ ժողովրդականություն էր վայելում իր գործակից-քանաստեղծների շրջանում:

Քալիմը մեկն է այն քանաստեղծներից, որի գեղեցիկ և ինքնուրույն նմանությունները, մտքի խորությունը և միաժամանակ արտահայտության պարզությունը նրա բեյթերը նմանեցնում են ժողովրդական պարզ և խորիմաց ասացվածքների:

Օրինակները չափազանց շատ են: Բայց նախքան այդ՝ Հ. Միրզայանի թարգմանած երկու հատվածները «Ջանազան»-ից:

Հանգիստ եմ սրտով, քանզի չդարձա
Բախտի սիրելին,
Ինչպես է կարող — երբ որ վեր չառավ —
Զարկել ինձ գետին:

Քեզանից անջատ՝ բախտի տառապանքն
Այլևս չունի ինձ համար կակիծ,
Ինչպես որ կրակից ոչ մի վախ չունի
Մի ձուկ, երբ նրան դուրս բերեն ջրից:

س از درد جدائی محنت ایام ننماید
ز آتش هیچ پروا نیست دوزاخ آب ماهی را

Հետագա հատվածները ես ընտրել եմ «Գոլջինն Ջհանբանից» — «Գոլզարև Աղաբից», ձեռագիր մի ժողովածուից և Է. Բրաունի «Պարսկաստանի գրական պատմություն»-ից:

Նա սիրում է ինձ ինչպես ալիքը
Ծովափին սիրեր,
Երբեմն ընկնում է գիրկս և հեռո
Փախչում անտարբեր:

Թե հարմարվես դու բախտին,
Կգոհանաս դու քիչով,

گر بقسمت قانعی بیش و کم دنیا یکیست
لشنه چون یک جرعه خواهد کوزه و دریا یکیست

Մի կուժ է պետք ծարավին,
Լինի դա կուժ — թե մի ծով:

Սկիզբ ու վերջից անլուր ենք
Այս աշխարհի բնածին,
Այս հին գրքից ընկել են
Էջն առաջին ու վերջին:

«Ո՛ր» և «ինչո՞ն» չի հարցնում
Նա, որ հասավ մուրազին,
Զանգը ուղտի չի ձայնում,
Երբ հասնում է դարպասին:

Յածրից բարձրացած մարդը նման է
Եղեգին հեծած մի երեխայի,
Նա միշտ կարծում է, որ ձի է հեծել,
Մինչ հետևակ է նա ծիծաղելի:

Ատում են կույրը, չտեսնող աչքով,
Չի կարող քայլել այս ճամփով արտում,
Ապա դու ինչո՞ն կարող ես անցնել
Այս փուշ աշխարհից — երբ աչք ես փակում:

Յածրոգի մարդը ազնիվ շրջանում
Չի ազնվանա,
Ինչպես որ թելը մարգարտից անցնի՝
Ոսկի չի դառնա:

Երկու օրից ավելի չէ
Այս աշխարհի բուրբ ու բարիք,
Այն էլ ասեմ քեզ խեղձ Քալիմ,
Թե ինչ ունես ստանալիք:
Մի օր պիտի սիրող կապես
Այս սիրուհուն ու այն մեկին,
Երկրորդ օրը պիտի պոկես
Ու հեռանաս դու վերադին:

ما ز آغاز و ز انجام جهان بی خبریم
اول و اخر این کهنه کتاب افتادست

افسانه ی حیات دو روزی نبود بیش
آن هم کلیم با تو بگوید چه سان گذشت
یک روز صرف بستن دل شد به این و آن
روز دگر به کندن دل ، ز این و آن گذشت

* * *

Ծեր աշխարհը տեսնելու
Էլ ախորժակ չմնաց,
Դեմք չդարձրեց, ով հողե
Այս տնակից դուրս գնաց:

* * *

Սիրող սիրտը մի՛ խորովիր անդադար,
Մի՛ խենթացրու քո ժպիտով ականաթով,
Տես անեծքից լացակումած բլբուլի,
Վարդը մնաց կիսածիծաղ բերանով:

* * *

Երկուտակվել եմ մահվան հանգիստը
Որսալու համար,
Մարդիկ կարծում են ծերությունից է
Այս մեջքը ծովել:

* * *

Ինչո՞ւ ես այսքան արտի վրա լացում
Դժբախտ Քալիմի,
Շատ մի արտասովոր — այս խորովածը
Աղի կլիներ:

* * *

Արցունքիս ճամփով փնտրում եմ սիրտս
Աշխարհում անել,
Նեոսահար որսը իր արյան հետքով
Կարող ես գտնել:

* * *

Ինձ մի խրատիր որ աչքս փակեմ
Դեմքիցը նրա,
Ինչպե՞ս եմ կարող փակել այդ դուռը
Տանտիրոջ վրա:

* * *

Ալիքներ ենք մենք ու մեր հանգիստը
Շարժումն է անդեկ,
Կենդանի ենք մենք միայն նրանով,
Որ հանգիստ չունենք:

* * *

Այնքան իմ կյանքի գինու մեջ
Լեցրեց թույնը բաժանման,
Որ մահը հիմա փախչում է
Ինձնից խածվածի:

* * *

Ո՞ւմ խնայեց բախտը սև,
Որ խնայի ինձ ու քեզ,
Երբ հատիկի ցանկությանը
Ջրադացը պտտեց:

* * *

Մահը միայն կփրկի
Սիրտս փառող ցավերից,
Քամին է միշտ, որ մումին
Փրկում է իր բոցերից:

* * *

Թե՛ն բողբոջի գիրքը կյանքի
Ձեռքը գրեց Կարողի՝
Ինչո՞ւ այդքան տարբերություն
Ձեռագրի մեջ գրողի:

* * *

Վանդակի մեջ՝ վերև ու ցած
Չկա Քալիմ, եղիր տոկուն,
Այս աշխարհի ինչք ու դիրքը
Միևնույնն է խելոք մարդուն:

* * *

Որ նստեցինք՝ մեզ բշեցին,
Հանգիստ քնել մեզ չեն թողնում,
Բու ենք կարծես մի քաղաքում,
Որ ավերակ չի գտնվում:

* * *

Համբերությունը թե երկար տևի՝
Չի կարող օգնել թույլ և անուժին,
Դեղի նման է, երբ որ հնանա՝
Բժիշկի ձեռքին, հիվանդ չի բուժի:

در کمین راحت مرگیم و پندارند خلق
بهد پیری قامت فرسوده را خم می کند

گرچه بحال دل کلیم اینهمه از چه می کنی
اشک مریز اینقدر شور مکن کباب را

دبال اشک افتاده ام جویم دل آزرده را
از خون توان برداشت پی نخجیر پیکان خورده را

«گو ناصح که بتوان از رخ جانان نظر بستن
بسی مشکل بود بر روی صاحبخانه در بستن

«جویم که آسودگی ما عدم ماست
ما زنده به آنیم که آرام نگیریم

* * *

Աշխարհի օրենքն անապատների
Ոլորապտույտ քամուն է նման.
Վեր է բարձրացնում ավազի միջից
Ինչ փուշ ու տատասկ գունի անարժան:

قانون گردباد بود روزگار را
جز خار و خس زمانه به بالا نمی‌برد

* * *

Մի՛ սպասիր երբեք այս փուշ աշխարհում
Հարուստից՝ դրամ, պոռնիկից՝ ամոթ.
Երեխաներ են երկուսն էլ միայն,
Ու ձեռքը իրենց բերնին է ծանոթ:

* * *

Չարանենգ մարդը իր բռնությանը ինքն է գոհ գնում.
Ջրհեղեղը միշտ՝ ինքն իր գլխին է տունը ավերում:

می شود اول ستمگر کشته بیداد خویش
سیل دایم بر سر خود خانه ویران کرده است

* * *

Ճակատագրի տված բարիքն առևտուր է.
Երբ մի պատատ հաց է տալիս — ատամն ուր է...

کامبخشی‌های گردون نیست جز داد و ستد
تا لب نانی عطا فرمود دندان را گرفت

* * *

Մեկը որ սիրտը կապի աշխարհի կիրք ու ցանկության՝
Նույնն է, որ ոսկե թասով դուրս ելնի մուրացկանության:

* * *

Երեկոյան երկնքի թասը գինով են լցնում,
Որպեսզի դու հասկանաս, որ ցերեկով չեն խմում:

* * *

Այնքան տեսա չարիքներ
Այս աշխարհի մարդկանցից,
Որ հասկացա, թե ինչու
Կույրն երջանիկ է մեզնից:

بسکه نادیدنی از مردم دنیا دیدم
روشتم گشت که آسایش نابینا چیست

ՇՈՔԱԹԵ ԲՈՒՆԱՐԱԻ
(մահ. 1695-6)

Է. Բրաունը այս բանաստեղծի մասին գրում է, որ նրա ժամանակակից Շեյխ Մի-
համադ Լահիջին գրել է, որ մի ձմեռ օր տեսել է Շոքաթին գլխաբաց, ոտարո-
րիկ, մի պատռված նամադ ուսերին ձգած, գլուխը ծածկված ձյունով, փողոցներում
քայլելիս:

Նրա կյանքից ուրիշ մանրամասնություններ գոյություն չունեն, բայց դա էլ բա-
վական է մի գաղափար կազմելու համար:

Շոքաթը քիչ է ճանաչված Իրանում, բայց նրա ազդեցությունը տաճկական գրա-
կանության վրա հսկայական է եղել (տաճիկները միշտ ընտրել են պարսիկ անհա-
ջող բանաստեղծներին, նրանց հասկանալու և նրանց ազդեցության տակ ընկնելու
համար):

Ես որևէ բան չեմ կարդացել Շոքաթից, որը շարուն և սովորական չլիներ:
Հ. Միրզայանը այս մի հատվածն է թարգմանել նրանից «Ջանազանում».

Շրթունքդ կարմիր նման է գինու,
Իսկ սիրտս կարծես խորոված լինի,
Ապա եկ նստենք բարեկամաբար
Ինձնից՝ խորոված ու քեզնից՝ գինի:

ԲԱՀԱ-ՕԴ-ԴԻՆ ԱՄՈՒԼԻ կամ ՇԵՅԽԸ ԲԱՀԱԻ
(մահ. 1620)

Շեյխ Բահաին Պարսկաստանի Լեոնարդո դա Վինչին է: Սպահանը երկու հո-
գու է հիշում և դրանցից մեկը Շահ Աբբաս Մեծն է, և մյուսը Շեյխ Բահաին:

Շեյխ Բահաին աստվածաբան էր, ճարտարապետ էր, թվաբանագետ էր, բա-
նաստեղծ էր և փիլիսոփա: Այդ բոլորի շուրջ, իրականությունից բացի Սպահանի
ժողովուրդը բազմաթիվ առասպելներ է հյուսել: Ինչ-որ տարօրինակ, գեղեցիկ, ան-
հասկանալի կամ խորհրդավոր լինի, դա կապված է Շեյխ Բահաի անվան հետ:
Սպահանի «Շարժվող աշտարակը» շինել է Շեյխը, մզկիթներից ամենագեղեցիկնե-
րը շինել է Շեյխը, մի հատիկ մոմով տաքացող բաղնիքը շինել է Շեյխը:

Անցնելով առասպելներից, Շեյխ Բահաին, բացի իր փիլիսոփայական և թվա-
բանական կարևոր աշխատություններից, գրականության մեջ թողել է երկու մաս-
նավի պոեմաներ, որոնցից մեկն է «Նան-օ-հավվա»-ն (հացը և հավվան) և մյուսը
«Շիր-օ-շաբար»-ը (կաթ և շաբար): Բացի այդ, նա ունի մի քանի գագելներ, քա-
ղյակներ և դաթաներ:

Թվաբանական և աստղաբաշխական հայտնի ուսումնասիրություններից հետո,
նրա ամենից հայտնի արձակ գրվածքներից մեկն է «Բաշքուլ»-ը, որը նա գրել է
արաբերեն լեզվով: Նա նույնպես հայտնի լեզվագետ էր և աստղաբաշխ:

Շեյխը գեղեցիկ գագելներ ունի:

Սիրտ ու կրոն մի հայացքով
Տարվել եմ ես ակամես,
Սիրտ խաղում երբ ես տեսել
Սիրտ, որ տարվածը գղջա:

دین و دل به یک دیدن، باختیم و خرسندیم
در قمار عشق ای دل، کی بود پشیمانی؟

Սա երկրորդ տողն է Շեյխ Բահաի ամենագեղեցիկ գագելներից: Գագելի երկ-
րորդ տողը:

Կրոնավորին գինետունը
Կարմիր թուշերով տեսան
Ու ասացին. «Շնորհավոր է,
Ով հայադեմ մուսուլման»:

زاهدی به میخانه، سرخ رو می دیدم
گفتمش: مبارک باد بر تو این مسلمانی

Մի ուրիշ բեյթ՝ մի ուրիշ գազելից սկսում է այսպես.

Մարդիկ կանխիկ իրենց հոգին
Դրին ափիդ,
Գլխիդ մեռնեմ,
Ինչ է արժեքը համբույրիդ:

ՍԱԵՐԲ ԹԱԲԻՆԻՉԻ (մահ. 1677–8)

17–րդ դարի մեծագույն բանաստեղծ և Շահ Աբբաս Երկրորդի արքունական բանաստեղծ Սաեբը մեկն է Իրանի ամենասիրված և ժողովրդական բանաստեղծներից: Նրա ազդեցությունը իր ժամանակի և հետագա բանաստեղծների վրա այնքան մեծ է եղել, որ նույնիսկ բանաստեղծական մի հատուկ դպրոց կոչվում է նրա անունով, մի բան, որ շատ հազվագյուտ երևույթ է Իրանի կլասիկ գրականության մեջ: Այդ դպրոցը ձևանալիս է «Շնդկական Գրելակերպ» անվան տակ, բայց իրականում ներկայացնում է Սաեբին և նրա հետևորդությամբ գրող բանաստեղծներին:

Իրանի արդի բանաստեղծները, որոնք եթե ոչ արհամարհոտ՝ գոնե պաղ մոտեցում ունեն իրենց կլասիկ ավանդների վերաբերմամբ, Սաեբին դասում են այն մի քանի հատընտիր տաղանդների շարքում, որի «նորաձևությունը» օգտակար և ընդօրինակելի են համարում: Այդ մի քանի հատընտիր բանաստեղծները սահմանափակված են **Մանուչեհրի**-ով, **Նասեր Խոսրով**-ով, **Հաֆեզ**-ով, **Սաադի**-ով, **Սաեբ**-ով: Այս ցանկը բնականաբար տարբեր բանաստեղծների մոտ՝ տարբեր հավելումների և կրճատումների է ենթարկվում, բայց ընդհանուր շրջանակը մնում է համարյա թե նույնը:

Սաեբի «Դիվան»-ը, որ պարունակում է մոտ 24 հազար երկտող և բաղկացած է մեծամասնաբար գազել-ներից (սիրերգ), քանիցս տպագրվել է Իրանում և դրանից բազմաթիվ հատվածներ թարգմանվել են օտար լեզուների:

Հռչակավոր իրանագետ Էդ. Բրաունը այն կարծիքին է, որ Սաեբը Իրանում երևան եկած վերջին մեծ բանաստեղծն է: Նա նույնպես շեշտում է Սաեբի «նորախոսության», վրա (թագե-գուի), որը հիմք է դրել մի նոր դպրոցի և գրելակերպի:

Ըստ Գիրբի³⁹ Սաեբը շատ խորը ազդեցություն է թողել օսմանական բանաստեղծության վրա և թուրքերեն լեզվով բազմաթիվ քննադատական հատորներ են գրվել նրա արվեստի մասին:

Մոհամմադ Ալի Սաեբը ծնվել է Թավրիզում, բայց մեծացել, ապրել և մեռել է Սպահանում: Նրա հայրը Սպահանի հայտնի վաճառականներից էր, և կարողացավ լավ կրթություն տալ որդուն: Նա երիտասարդ հասակից ձամփորդում է Միջին և Մերձավոր Արևելքի զանազան երկրները, և վերջապես, 1657 թ–ին թողնում է Սպահանը և ուղևորվում Քարոլ: Քարոլը այն ժամանակ հնդկական Գուրբանի ամիրաների իշխանության տակ էր: Նավաբ Ջաֆար Խանը, որ Քարոլի նահանգապետն էր, պատվով ու շուքով ընդունում է Սաեբին և ամբողջ երեք տարի նրան պահում է իր մոտ:

1660 թ. Հնդկաստանի գահը բարձրացավ հայտնի Շահ Ջահանը, և Քարոլի նահանգապետը, շնորհավորելու համար նոր գահակալին, ձամփորդեց Հնդկաստան և իր հետ տարավ Սաեբին: Հասնելով Հնդկաստան, Սաեբը գեղեցիկ մի ներքողական գրեց Շահ Ջահանի համար, որը, հիացած այդ տաղանդով, նրան «Մոսթալեխ Խան» տիտղոսը պարգևեց և հրամայեց նրան մնալ իր արքունիքում:

Սաեբը երեք տարի փառավոր կյանք վարեց Շահ Ջահանի պալատում: Բայց շուտով հայրենի Սպահանի կարոտը սկսում է կրծել Սաեբի սիրտը և երկարատև ու համառ թախանձանքներից հետո՝ նրան թույլատրվում է վերադառնալ Իրան:

Վերադառնալով Սպահան, Սաեբը, որի հոչակը արդեն տարածվել էր ամբողջ Արևելքում, կարգվում է Շահ Աբբաս Երկրորդի արքունիքի «Բանաստեղծների Արքան»: 1642–ից մինչև 67 թ. նա պահպանում է իր այդ գերագույն դիրքը և այդ շրջանում գրում է նաև իր հերոսական պոեման՝ «Նանդահար Նամե»–ն:

Սաեբը մեռնում է 63 տարեկան հասակում և թաղվում է Սպահանում:

Մինչև վերջերս Սաեբի գերեզմանի վայրը անհայտ էր: Հայտնի բանասեր Վահիդն Դասթգերդին էր, որ վերջերս հայտնագործեց նրա գերեզմանը, որը գտնվում է Սպահանի «Թեքին» կոչված պարտեզում, Ջայանդեռու գետի ափին, ծառաշատ և սաղարթախիտ մի վայրում: Նրա կողքին թաղված են նրա երկու որդիները: Սաեբի գերեզմանաքարը մեջտեղից ձեղքված է և նրա գեղեցիկ գազելներից մեկը փորագրված է գերեզմանաքարի եզերքին:

Իրանի կառավարությունը շքեղ մի դամբարան է կառուցել նրա այդ համեստ շիրմի վրա: (Ն. Մ.)

Ստորև տալիս ենք մի քանի նմուշ Սաեբի բանաստեղծություններից, որոնք թաղված են նրա գազելներից:

* * *

Տեղ իմ, հիմքից քանդիր երկնի
Անիվն ազահ և անտթի.
Մարդկանց սրտի արյամբ որքան
Ջրադացը այս պտտի:

³⁹ «Օթունան Բանաստեղծության Պատմություն», Երրորդ հատոր, էջ 247–248:

* * *

Թե որ փաթթոցի մեծությամբ խելքը
Չափեր ամեն որ,
Մզկիթի հսկա գմբեթն կլիներ
Ամենից խելքը:

* * *

Հարգում են մարդիկ փորը ճարպաշատ
Ու փաթթոցը մեծ.
Այս մեր օրերում կարասը փորեղ՝
Գիտուն է կասես:

* * *

Երբեք մի հենվիր թշնամուղ խոսքին,
Որքան էլ լինի նա մեղմ ու բարի.
Հեղեղի ջուրը, նվաստ, ոտնալիզ՝
Քանդում է հիմքը քարե պատերի:

* * *

Անցյալը կյանքի հիշում ենք այսօր
Հուշերով անվիշտ.
Դեմքը այսօրվա՝ վաղվա հայելում
Ժպտում է մեզ միշտ:

* * *

Բերանը բաց պիտտակն եթե
Դատարկ լինի — շատ կերևա,
Բերանդ միշտ փակած պահիր,
Թե գլխումդ մի քան չկա:

* * *

Պակասությունը ազնիվ մի մարդու
Բամբասում են զուր.
Շուտ է երևում մի մազ՝ որ ընկնի
Կարծի մեջ մաքուր:

* * *

Համետությունից՝ ցողը հասնում է
Հուր արեգակին.
Տես, համետությամբ որտեղից որտեղ
Կարող ես հասնել:

گنبد مسجد شهر از همه فاضلتر بود
گر به عمامه کسی کوس فضیلت می زد

شبنم از سعی به سرچشمه خورشید رسید
فشاره ماست که زندانی گوهر شده است

* * *

Այս ծեր հասակում ըմբռնացել եմ
Մեղքերիս ընդդեմ.
Շուրթս եմ խածում հիմա — որ ատամ
Այլևս չունեմ:

* * *

Մարդը, մեր ծնված, կովի է իջել
Գոյության շուկան
Որ մահվան ժամին աշխարհից տանի
Փռած մի պատան:

* * *

Այնքան տանջանք կար կյանքում մեր այս սին՝
Որ տոն ենք բռնում, երբ անցնի տարին:

* * *

Բարիքն աշխարհի թող բռնը լինի,
Քո կյանքը լինի ցնծություն հավետ,
Յողի պես մի պահ իջել ես վարդին
Եվ կչքանաս առավոտն անհետ:

* * *

Մի՛ հետաձգիր ժամը տեսության,
Ելիր և արի՛,
Կյանքը անցնում է, ասպանդակին է
Ռոբը աշխարհի:

* * *

Կուժրս երբեմն զարկում եմ քարին,
Երբեմն փարվում գինու տակառին,
Դու մի՛ զայրանա, գեղեցիկ աղջիկ,
Երիտասարդ եմ, ներիր խելառին:

* * *

Մի ծիծաղիր, երիտասարդ,
Այս իմ ձերմակ մազիս վրա.
Սա մի ձյուն է, որը կիջնի
Քո տանիքին — բայց ոչ հիմա:

از پشیمانی سخن در عهد پیری می‌زنم
لب به دندان می‌گزم اکنون که دندانم نماند

مختد ای نوجوان زنهار بر موی سفید ما
که این برف پریشان سیر بر هر بام می بارد

* * *

Սիրոս այրվում է և աչքս լացում
Կոկոնի աննեղ կուսության համար,
Սոխակներն բոլոր հարբել են այսօր
Ու պարտիզպանը մնացել է մենակ:

* * *

Անցյալը կյանքի հիշում ենք այսօր հուշերով անվիշտ,
Դեմքը այսօրվա՝ վաղվա հայելում ժպտում է մեզ միշտ:

* * *

Բախտավոր է, ով երկնքից շանթի նման
Գլուխ հանեց ու ծիծաղեց ու չքացավ:

* * *

Ամեն մի մեղք՝ մի քավություն,
Ամեն սխալ՝ զղջում ունի,
Բայց մեր գալու սխալն անմիտ
Շուտ գնալով քավենք պիտի:

* * *

Նենգությունից և դավերից
Խոնարհ մարդու զգուշացիր,
Որ բաժակը կամաց-կամաց
Ծծեց արյունը կարասի:

* * *

Երբ է կյանքում կշտացել
Աչքածակը բարիքից,
Երբ է մաղը կշտացել
Յորենների հատիկից:

* * *

Ես չնայած հողն եմ լիզել մեր գինետան,
Բայց դեռ գինուն զուլալ՝ ծարավ է իմ հոգին,
Կրոնավորին գինի խմել դու մի՛ խնդիր,
Թափելու չէ սև հողի վեա՝ կարմիր գինին:

* * *

Տեր իմ, հիմքից քանդիր երկնի
Անիվն ազահ և անոթի,

دلَم به پاکی دامان غنچه می لرزد
که بلبان، همه مَسْت اند و؛ باغبان، تنها

Մարդկանց սրտի արյամբ որքան
Ջրադացը այս պտտի:

* * *

Ճակատագրից աղերսում եմ
Մի ցանկություն օտարոտի,
Որ համբույրով լցնեմ մի օր,
Այդ փոսիկը քո ծնոտի:

* * *

Հատիկ համբույր քո շրթերից,
— Ով դու ապիտր անուշ սիրո,—
(Մենք ենթադրենք, որ չենք ուզում),
Ապա ո՞ր է նվերը քո:

* * *

Ով քարասիրտ, համբույրներից
Այն, ինչ տվիր դու ինձ բաժին,
Ոչ մի ազահ, անխիղճ հարուստ
Չէր տա ճամփի խելճ աղքատին:

* * *

Մեր գինեխումի խորտիկն միակ
Համբույրն է նրա,
Մոտ բերեք նրան և այս խնջույքը
Լրացրեք հիմա:

* * *

Համբույրի գալը, շրթերով ազահ
Նույնիսկ սև խալը դեմքիդ կտանի,
Դու ծածուկ պահիր շրթերդ հյութեղ,
Նման են նրանք կարկեհանների:

* * *

Համբույր եմ խնդրում կոկոնաբերան
Շրթից կարկեհան,
Դա մի ամբողջ է ազնվականի,
Իսկ ես՝ մուրացկան:

آنقدر هم‌رهی از طالع خود می‌خواهم
که پر از بوسه کنم چاه زرخندان ترا

* * *

Յարս դրեց շուրթը շրթիս
Ու ես հոգիս հանգիստ տվի.
Ոչ որ չկա այս աշխարհում,
Որ այս անուշ մահվամբ մեռնի:

* * *

Ով իր ձեռքում բռնած ունի
Յարիս երկար գեղը այսօր,
Ինչո՞ւ անճար նա կախ ընկնի
Այս կարճ կյանքի փեշից անզոր:

* * *

Գեղեցկությամբ իր գանգրահեր
Մագդ տարավ սիրուն աշխարհի.
Ո՞վ էր տեսել, որ փշրված
Զորքով մեկը աշխարհ տիրի:

* * *

Ես չգիտեմ քո մազերում
Ինչ է անում սիրտս հիմա:
Մութ սենյակում ո՞վ է տեսել,
Որ մի գոհար փայլ ունենա:

* * *

Ինչո՞ւ ես փնտրում հեռու տեղերում
Զուրն անմահական,
Դո՞ւ, որ ամեն ժամ ծծել ես կարող
Շուրթդ սեփական:

* * *

Արյուն է կաթում աչքիդ դանակից,
Նայվածքդ պաանեց — աման սև աչքից:

* * *

Երբ թույնը դառնա մի սովորություն,
Չի ազդի մարմնին աստիճանաբար.
Հոգիդ սովորի թող մահվան մտքին՝
Մահվան սարսափը վանելու համար:

چو شد زهر، عادت، مَضْرُوت نبخشد
به مرگ آشنا کن، به تدریج، جان را

* * *

Սերը մարդկային դեպի այս կյանքը
Ավելանում է, որքան ծերանա,
Ինչպես արմատը մի արմավենու,
Որ խորանում է որքան մեծանա:

* * *

Սիրտս լեցուն է մեղքի ցանկությամբ
Ու շրթիս զղջման անմեղ աղոթք կա,
Կարծես թե մեղքը ինքը ժպտում է
Զղջալու անմիտ փորձերի վրա:

* * *

Քունն է ճար մեր կարճ կյանքի
Ցավին անհուն.
Ով քնած է այս աշխարհում՝
Նա է արթուն:

* * *

Մոտ ենք Աստծուն մենք այսքան
Ու չենք նրան գիտակից,
Զուկը ջրում է ապրում
Ու անտեղյակ է ծովից:

* * *

Թագավորում է իր տան մեջ ամեն
Աղքատ անխտիր.
Ոտքդ դուրս մի դիր քո սահմաններից
Ու թագավորիր:

* * *

Գերեզմանի ամեն մի քար,
Որ տեսնում ես այս աշխարհում,
Մոռացության հողի միջից
Ձեռք է պարզել, քեզ է փնտրում:

* * *

Ձեռքը մուրացկան որ պարզում ես
Մեկին կարեկից,
Դա մի կամուրջ է, որով անցնում ես
Պատվիդ վրայից:

ریشه‌ی نخلِ کهن‌سال، از جوان، افزون‌تر است
بیش‌تر دل‌بستگی باشد به دنیا، پیر را

* * *

Բարիք ուտելով այս առամները
Կթափեն անշուշտ,
Բայց օրվա հոգսը դեռ չի պակասի
Քո արտից անկուշտ:

* * *

Աստծու աչքին նույն է թե մոծակ,
Թե փիղ վիթխարի.
Արևին մեկ է շուքը աղքատի,
Թե թագավորի:

* * *

Գողությունը համբույրի
Շահավետ է այլ գործից,
Կրկնապատիկ կղաճնա,
Թե հեռ խլեն քեզանից:

* * *

Խմիր, խմցրու, ծիծաղիր, կուշտ կաց,
Աղոթքի տեղ չէ այս աշխարհին հարբած,
Ճերմակ մազերը, որոնք իմ դեմքին
Տեսնում ես ահա,
Կյանքի ճամփեքից փոշի է՝ թափած
Այս դեմքի վրա:

* * *

Ամոթ չունի օտարի մոտ
Սերը մաքուր, սերը անգին,
Օտարների ներկայությամբ
Մումը գրկեց իր թիթեռին:

* * *

Պակասությունը ազնիվ մի մարդու
Բամբաստում են գուր.
Շուտ է երևում՝ եթե մազ ընկնի
Կաթի մեջ մաքուր:

دندان ما ز خوردن نعمت تمام ریخت
اندوه روزی از دل ما کم نمی شود

دزدی بوسه عجب دزدی خوش عاقبتی است
که اگر بازستانند ، دو چندان گردد

حسن و عشق پاک را شرم و حیا در کار نیست
پیش مردم شمع در بر می کشد پروانه را

* * *

Մահվան ժամին ինձ կոսանջի
Միտքն այն դաժան,
Որ պիտ տեսնեմ դեմքը մարդկանց
Օրն Հարություն:

* * *

Երբ գնում ես դու իմ մոտից,
Այս իմ սիրտը կասկածանքից
Հարյուր ուրիշ տեղ է գնում,
Որ քեզ գտնի գուցե նորից:

* * *

Մի կարծիր արտի կոտրած ապակին
Ձայն չունի այնքան,
Դու նրա ձայնը հատակ կլսես
Օրը Հարություն:

* * *

Ես մի մարդ չեմ, որ սիրոս տամ
Հեշտուկ ձեռքից.
Երկնային էր պատուհասը
Կապույտ աչքիդ:

* * *

Ծերուկները ջահելներից ավելի են
Դրամ փնտրում.
Մորացկանը երեկոյան առավել է
Ազահանում:

* * *

Նայիր թե ինչպես վառ արեգակի
Փարթամ արշալույսն
Երկինքը անգութ նույն երեկոյան
Արյամբ է խեղդում:
Ճակատագիրը գետին կզարկի
Գիշերը նրան՝
Ում որ բարձրացնի երկինքը փառքի
Նույն առավոտյան:

* * *

Ամեն մի վտակ կհասնի մի օր
Իր ծովին անեզր,
Բայց նպատակը այս մեր կարճ կյանքի՝
Անհայտ է դեռ մեզ:

* * *

Գոհարդ ամեն անարժանի
Փորձաքարին մի՛ զարկիր,
Արժանավոր, գոհարազետ
Կգտնվի համբերիր:
(Այս երկտողի թարգմ.՝ Ազատ Մաթոսյանի)

ՄՆԱՅՈՐԴԱՅ

Այս դարու բանաստեղծների մեջ կան նաև բազմաթիվ փոքր բանաստեղծներ (ինչպես Իրանի բոլոր շրջաններում), որոնցից հանկարծ լսում կամ կարդում ես մի բեյթ, ու սիրահարվում ես այդ բեյթի վրա, առանց մտածելու, թե գրողը մեծ է եղել, թե փոքր:

Այդպիսի բանաստեղծներ շատ են եղել Սաֆայի թագավորների օրոք, ընդհանրապես բարեբեր և առատ մի շրջան է եղել դա, բարոյապես **դեքադան** (որը քաղաքակիրթ լինելու առաջին նշանն է) գինեշատ, հերոսական արարքներով լեցուն (հերոսությունը նման շրջաններում բնագրական է և գեղեցիկ) և վերջապես Իրան նոր գաղթած հայերի ազնվացնող և հոգեպես խայթիչ ազդեցության տակ:

Օրինակ, միթե դա Նոր Զուղայի ազդեցությունը չի, իր նոր և ազատ բարքերով, իր գինեխումի խնջույքներով (որոնց Քրիստոս մոռացել էր արգելել, որ քանդում է ԲԻԴԵԼԵ ԴԵՎԼԱՎԻԻ (1639-1718.— Ն. Մ.) սրտից այս մսի կտորը):

Վերջը կթափեմ այս փոփոխական,
Չար բախտի ձեռքից պատիվ և անուն.
Փորձությամբ լեցուն մի բաժակ եմ ես
Վտիտ ծերուկի դողացող ձեռքում:

Կամ միթե դժվար է երևակայել Հ. Միրզայանի «Զանազան»-ում թարգմանված ԶԱԼԱ ԱՍԻՐԻՆ (ԱՍԻՐ ՇԱՀՐԵՍԹԱՆԻ, ծնվ. 1614 թ., Սպահան, մահ. 1634.— Ն. Մ.) գրկած իր սիրուհուն, Սպահանի խորհրդավոր պարտեզներից մեկում, ազա-հորեն երգելիս.

Ես եմ և դու այս գիշեր
Իմ կարոտյալ սիրուհին,
Տալիս ես ինձ անխնա
Շրթունքը քո վարդային:

Դու, ո՛վ գիշեր, մի՛ շտապիր
Եթե սպաննա բյուր վտանգ.
Եվ դու, ո՛վ Այգ, մի՛ ժպտա
Եթե ունես բյուր հրճվանք:

Ջալալ Ասիրը այնքան էր իրեն կորցրել գեղեցկուհիների մեջ, որ նույնիսկ վատա-հուություն չունեի իր սեփական սրտի վրա:

Մի օր նա դառնացած ասում է.

Սիրտ իմ, թաղը իմ սիրուհու
Ինչո՞ւ մենակ դու գնացիր.
Աստված անի արյուն դառնաս,
Սիրտ իմ, դու՛ էլ ինձ խաբեցիր:

دلا بی من چه میگردی تو در کوی حبیب من
الهی خون شوی ای دل تو هم گشتی رقیب من

Ով որ գնացել է Սպահան, գիտե որ այնտեղ կա նշանավոր մի կամուրջ, որ կոչ-վում է «Երեսուներեք կամուրջ» (սի.օ.սե.փոյ): Այդ կամուրջի վրա գույգ շարքով և երկհարկանի, փոքրիկ նկուղներ կան, որ երեք կողմից փակ և միայն դեպի գետի տեսարանն են բաց: Այդտեղ էր, որ Շահ Աբբաս Մեծը, Շահ Աբբաս Փոքրը ու մի շարք ուրիշ մեծեր ու փոքրեր նշանակված մի ժամի առանձնանում և զբաղվում էին ոչ քաղաքական գործերով: Սենյակների պատերը ծածկված էին ամենագեղեցիկ և լպիրշ նկարներով (որոնցից մի քանիսը նկարիչ Խաչատրյանին⁴⁰ հաջողվեց ար-տատպել և մոռացությունից փրկել), գետը հոսում էր, գինին նույնպես, փանդիռնե-րը նվազում էին, պարում էին գեղեցկուհիները իրենց բնական զգեստներով: Ժա-մանակը ընդհանրապես վատ չէր անցնում և դժգոհողներ քիչ կային: Բայց բանաս-տեղծը ազա է, որովհետև նա շատ հեռուն է տեսնում և միշտ ափսոսում է, կամ աշխատում է ուրիշներին համոզել, որ չափսոսան:

Եվ հանկարծ նման մի դրության մեջ է, որ շրջապատված Աստծո բուրք ու բարի-քով, ՂՈՒՄՍ ՀԱՄԱԴԱՆԻՆ բացականչում է.

Շուտով կտեսնես որ մեզնից ոչինչ
Այստեղ չի մնա,
Մի կտորած բաժակ, թափած մի գինի
Ու սաղին չկա:

Բայց բնականաբար շարունակում է օգտվել եղածով: Թե չէ բանաստեղծ չէր լի-նի: Իսկ մի ուրիշ բանաստեղծ, նույն շրջանից, որի անունը կորցրել եմ, խանդի ազահությունը հասցրել է չափազանցության և մռայլորեն նկատում է.

⁴⁰ Սարգիս Խաչատրյան, նկարիչ (1886-1947), Նոր Զուղայում իրեն աշակերտել են հռչակա-վոր իրանահայ նկարիչներ Սմբատ Տեր-Կյուրեղյանը և Երվանդ Նահապետյանը: (Ն. Մ.)

Աղոթքիդ պահին նախանձում եմ քեզ,
Չնայած գիտեմ որ Աստծու հետ ես:

Բայց ավելի գործնական բանաստեղծներ կային, որոնք անորոշ մի անհանգստություն էին զգում **կանխիկը** ծախսելուց հետո: Դրանցից էր ՄԻՐ ՄՈԶԱՖՅԱՐԸ, որը երկար կերտվածից հետո հարցնում է.

Կանխիկը այս մեր կյանքի,
Ծախսել ենք զինու վրա,
Այժմ տկլոր գնում ենք,
Ապառիկից ինչ լուր կա:

ՄԻՐ ԷԼԱՇԻ ԱՍԱԴԱԲԱԴԻՆ (մահ. 1620 թ., Քեշմիր.— Ն. Մ.), որը Շահ Աբբաս Մեծի ժամանակակիցն էր, պատկառելի մի ծերուկ էր, բայց հանկարծ թոցնում է բերնից նման մի բեյթ.

Խորովվում ենք ջահել հուշով
Ու չենք տեսնում ճամփան դարձի.
Մազերը այս սպիտակած՝
Աղն է կարծես խորովածի:

دل خود به روزگار جوانی کباب بود
موی سفید شد نمکی بر کباب من

* * *

Արտասվում եմ ես ինչպես լեցուն մի բաժակ
Հարբած մարդու ափի մեջ,
Հառաչում եմ ինչպես դատարկ մի ապիոր
Քամու ճամփին ես անվերջ:

Շատ երկար կարելի է այսպես շարունակել, քանի որ սա իրանյան բանաստեղծության ոսկեդարի վերջին պոռթկումն էր ու դրանից հետո պարսկական բանաստեղծությունը անասելի մի վայրէջք է ստանում և հետագա հարյուրամյակը մնկն է Պարսկաստանի ամենաշատ և անբեղուն շրջաններից:

ՄԻ ՔԱՆԻ ՆՄՈՒՇ ՍԱՖԱՎԻ ՇՐՋԱՆԻ ԶԱՆԱԶԱՆ ԲԱՆԱՍԵՂԾՆԵՐԻՑ

ՄՈԼԼԱ ՕՋԻ ՆԱԹԱՆԶԻ

Քաղաքից քաղաք պտտում եմ ես,
Ու հանգիստ չունեմ այս բախտից իմ չար,
Ինչպես խաղի մեջ «վատ բերող» մեկը,
Որը փոխում է տեղն անդադար:

زدست طالع بد میرویم شهر شهر
چو بد قمار که تغییر میدهد جا را

ՂԱՆԻ ՔԵՇՄԻՐԻ

Թե որ չեն խնում զինիդ, մի՛ տխրիր,
Ով զինելիս ճան,
Սա մի ապրանք է, որ թանկ է, որքան
Հին լինի ու դառ:

Գետին ընկնել ու ելնել՝
Խմողների հավատքի
Ծեսերիցն է անհրաժեշտ.
Տեղն է բռնում աղոթքի:

ՂԱԶԻ ԱԹԱՍԼԼԱՏ

Այս աշխարհի փեշակներից
Ես «սիրելու» գործն եմ սիրում,
Թե չէ շատ կան ուրիշ գործեր
Այս բազմամարդ գործարանում:

ز کارهای جهان عاشقی خوشست مرا
وگر نه کار در این کارخانه بسیار است

ՄԻՐ ԵԱՏՅԱ ՂՕՄԻ

Եթե ուզում ես այս կյանքը դիտել,
Նստի՛ր մի անկյուն.
Ինչպես է կարող մի լողորդ դիտել
Օվկիանը անհուն:

رو کناری گیر اگر سیر جهان آرزوست
کسی در اتنای شنا کی سیر دریا می کند

ՍԱԲՐԻ ԱՐԱՔԻ

Յերեկ ու զիշեր հող տվի գլխիս
Քո ցավից այնքան,
Որ հագիվ դուրս գա զլուխս հողից
Օրը Հավիտյան:

ز بسکه خاک بسر کردم از غمت, مشکل
که روز حشر سر از خاک بر توأم کرد

ՄԻՐ ԱԹԱ ԹԵՏՐԱՆԻ

Ոտք չի դրել յարս նազլու
Իմ տան սեմին իր կարճ կյանքում,
Նույնիսկ հաճախ երազիս մեջ
Հրելով եմ ես ներս մոցնում:

ՂՈՂՍԻ ՄԱՇՇԱԴԻ

Մինչև ջուրը սև աչերիդ
Սիրո ցավից կկարմրի,
Բիրիդ շիշում պահիր նրան,
Դրան կասեն տհաս գինի:

تا آب دیده خون نشود بر زمین مریز
در شیشه واگذار می نارسیده را

ՄՈՒԼԱ ՀԱԼԱԼԻ

Ո՛վ անծանոթ, հարցնում ես
Գեղեցկուհու տունը ո՞ր է,
Նրա տունը իմ սրտումն է,
Բայց չգիտեմ սիրտս ուր է:

ایکه می پرسی زمن کان ماه را منزل کجاست
منزل او در دلست اما ندانم دل کجاست

ՄԻՐԶԱ ՍԱԴԵՂ ՄՈՆՇԻ (Շահ Սաֆիի գրադարանապետը)

Ով որ եկավ, մի վարդ քաղեց
Այս պարտեզից ծաղիկների
Ու ծիծաղեց այս անցողիկ
Կյանքի վրա հիմարների:

هرکه آمد گل زباغ زندگانی چید و رفت
آمد و بر سستی اهل جهان خنید و رفت

ՎԱՇԻԴ (ՄԻՐԶԱ ԹԱՇԵՐ ՂԱԶՎԻՆԻ)

Թույլերը երբեք արհավիրանքից
Չեն տուժում կյանքի,
Որսորդի տունը զրոսանքի վայրն է
Նիհար եղնիկի:

ناتوانان فارغند از انقلاب روزگار
خانه صیاد عشرت گاه صید لاغر است

ՆՈՒՐ ԶԱՀԱՆ ԲԵԳՈՒՄԸ (մահ. 1645), ոչ միայն ազնվական ծագում ուներ, այլև արքայական ընտանիքից էր, ԲԵԳՈՒՄ էր, թագավորական հարձերից էր: Եվ երևակայեցեք, որ դուք գալիս եք տուն, բարկանում եք ձեր կնոջ վրա ու հանկարծ ձեր զլխի մազերը պոկված գտնելու փոխարեն, այդ չքնաղ էակը ասում է.

Ինչպես մեկին սպանելուց
Թե որ հոգիդ ուրախանաս,
Ա՛ն այս կյանքը, բայց զգույշ կաց
Սուրիդ շեղբը չսևանաս:

1700-1800 ԹՎԱԿԱՆՆԵՐ

Սաֆավի հարստության անկման և Ղաջարների թագավորության հասնելու միջանկյալ շրջանը, Իրանի գրականության, արվեստի, մշակույթի և ընդհանուր քարեկեցության Մութ Դարն է եղել: Դրա պատճառները պատմականորեն շատ պարզ են: Մի խումբ աֆղաններ, օգտվելով Սաֆավի վերջին թագավոր Շահ Սուլթան Հոսեյնի արտառոց թուլությունից, արշավեցին Իրան և այս հսկա երկիրը արյան մեջ խեղդեցին: Ժամանակակից մի պատմաբան այս շրջանի գրական և գեղարվեստական անկումը շատ պարզ բառերով բացատրում է, ասելով, որ օրվա քառասային դրությունը և ընդհանուր թշվառությունը մի աստիճանի է հասել, որ.

«Մարդ նույնիսկ բանաստեղծություն կարդալու տրամադրություն չունի, ինչ մնաց գրելու»:

Այդ բոլորով հանդերձ, այս հարյուրամյակում էր, որ ապրեց և գրեց **Սեյդ Ահմադե Հաթեֆե Էսֆահանին**, որը մեկն է Իրանի մեծ բանաստեղծներից (մահ. 1783 թ.— Ն. Մ.):

Հաթեֆը բանաստեղծություններ շատ է գրել, որոնց թվում կան շատ գեղեցիկ գազելներ, բայց նա անմահացել է իր հոչակավոր մի Թարջի-բանդով, որը իրանյան գրականության գլուխգործոցներից կարող է համարվել: Թարջի-բանդ (ինչպես և թարթիր-բանդը) բանաստեղծական ավելի քիչ տարածված ձևեր են: Թարջի-բանդը բաժանված է համարյա թե հավասար կուպլետներ ունեցող տունների (բանդ-երի), որոնք բոլորը վերջանում են նույն հանգով, և մի երկտող բաժանում է այդ բանդերը տարբեր հանգավորումով:

Հաթեֆի այս հոչակավոր թարջի-բանդը կազմված է հինգ տունից կամ **բանդից**, ընդհանուրը լինելով 92 կուպլետ կամ երկտող: Նման մի երկար բանաստեղծությունը թարգմանել ոչ միայն դժվար, այլև նրա կարդալը այսօրվա ընթերցողի համար ձանձրալի կլինի: Բայց սուֆիզմի հիմնական հասկացողությանը ծանոթանալու և այդ հոգեկան խորը դավանանքը գնահատելու համար անհրաժեշտ է գոնե մի տուն նրանից կարդալ:

Ես հատկապես թարգմանել եմ միայն չորրորդ տունը, ուր Հաթեֆը անգերագանցելի կերպով եզրափակում է սուֆիզմի տիեզերական հասկացողությունը:

Բայց ցույց տալու համար այս թարջի-բանդի ընդհանուր պատկերը, ես կպատմեմ, թե ինչ է նա ասում իր մյուս չորս տունների մեջ:

Սոաջին բանդում Հաթեֆը, բոցավառված Մեկի սիրով, հանկարծ հասնում է կրակապաշտների և մոզերի մի տաճար: Այստեղ նստած է Մոզը, նրա շուրջ երկր-

պագուներ, գինի, նվագ, խնձոյք: Հաթեֆը, ամաչելով իր մուսուլման լինելուց, թաքնվում է մի անկյունում: Բայց նրան տեսնում են, և Մոզը պատվիրում է, որ անկոչ հյուրին գինի տան: Երբ խմում է գինին, «ոչ խելք է մնում նրան և ոչ հուշ», և հանկարծ այդ հարբած վիճակում նա լսում է, որ իր մարմինը, սիրտը և երակները ճշում են:

*Որ Մեկ է, չկա նրանից ի բաց
Եվ չկա Աստված՝ եթե ոչ Աստված*

Երկրորդ բանդում նա նկարագրում է, թե ինչպես մի եկեղեցում հանդիպել է քրիստոնյա մի գեղեցկուհու և նրանից հարցրել է, թե ինչպես կարելի է Մեկին երեք անունով ճանաչել: Հայր, Որդի և Հոգին Սուրբ: Հայ գեղեցկուհին նրան պատասխանում է, որ Միտքը «երեք հայելու մեջ է ձգել իր ճառագայթը», որ մետաքսը երբեք չի դառնա, թե որ նրան «մետաքս, արրիշում կամ քեհեզ անվանես»: Այդ իսկ րոպեին եկեղեցու զանգերը սկսում են դողանջել և Հաթեֆը լսում է, որ նրանք աղաղակում են.

*Որ Մեկ է, չկա նրանից ի բաց
Եվ չկա Աստված՝ եթե ոչ Աստված:*

Երրորդ բանդում Հաթեֆը հասնում է մի գինետուն, ուր «մարդկանց սիրտը առանց քինախնդրության ու հոգին մաքուր, սիրտը լիքը ասելիքով ու շրթերը համր» էին, «ականջները փանդեղի ձայնին ու աչքերը հառած մատովակին, ու երկու աշխարհի մուրագները իրենց գրկում»: Գինետան Ծերը կանչում է Հաթեֆին առաջ ու նրան տալիս է մի բաժակ գինի: Հաթեֆը խմելով այդ բաժակը, ուշաթափվում է, և երբ ուշքի է գալիս, տեսնում է Մեկին միայն ու մնացորդը «պատկերներ ու գծեր» և հանկարծ «հրեշտակների այդ աշխարհում» Գարրիել հրեշտակապետը մրմնջում է նրա ականջին.

*Որ Մեկ է, չկա նրանից ի բաց
Եվ չկա Աստված՝ եթե ոչ Աստված:*

Չորրորդ բանդի մեջ Հաթեֆը տալիս է սուֆիզմի ամենահաջող պատկերավորումներից մեկը⁴¹:

⁴¹ Ես պահպանել եմ թարգմանի-բանդի հանգավորումը, տալու համար ճիշտ ձևը այդ բանաստեղծության:

*Մրտիդ աչքը բաց որ նրան տեսնես,
Անտեսանելին անսահման տեսնես,
Դեմքդ Գեղեցկի Պարտեզին դարձրու,
Որ հորիզոնը բուրաստան տեսնես:
Երկնականարի հոլովոյթը մեղմ՝
Ամեն մուրազի համաձայն տեսնես,
Ինչ տեսնի աչքդ — նույնը ցանկանաս
Եվ ինչ ցանկանաս — միայն այն տեսնես:
Այնտեղի խղճուկ աղքատին անտուն
Աշխարհի հպարտ մի իշխան տեսնես,
Բևեռի աստղին կրունկը դրած —
Մի ոտարորիկ գերդաստան տեսնես:
Գլխաբաց դարվիշ ու նրա գլխին՝
Միակի Գահը — ամպհովան տեսնես:
Խանդավառության ու երգի պահին
Երկու աշխարհից անցական տեսնես:
Չնչին հյուլեի թե սիրտը պատռես —
Բյուր արեգակներ գրավական տեսնես⁴²:
Թե ինչ որ ունես, նախքան սիրո՝
Անկարելի է, որ վնաս տեսնես:
Հոգիդ պիտ այրես սիրո խարույկում,
Որ Սերը կյանքում հաղթական տեսնես:
Պիտի ազատվես նեղ ճամփաներից,
Որ Անսահմանի Անճամփան տեսնես:
Այն, ինչ ականջը չի լսել — լսես
Եվ այն, ինչ աչքը չի տեսել — տեսնես:
Մինչև աշխարհից ու մարդկությունից
Հասնես դու մի տեղ — որ Նրան տեսնես
Եվ Նրան սիրես հոգով ու սրտով
Եվ ճշմարտության աչքով այն տեսնես:—*

*Որ Մեկ է, չկա նրանից ի բաց
Եվ չկա Աստված, — եթե ոչ Աստված*

⁴² Ատոմական տեսությունը, 17-րդ դարում:

چشم دل باز کن که جان بینی
آنچه نادیدنی است آن بینی
گر به اقلیم عشق روی آری
همه آفاق گلستان بینی
بر همه اهل آن زمین به مراد
گردش دور آسمان بینی
آنچه بینی دلت همان خواهد
و آنچه خواهد دلت همان بینی
بی سر و پا گدای آن جا را
سر به ملک جهان گران بینی
هم در آن پا برهنه قومی را
پای بر فرق فرقدان بینی
هم در آن سر برهنه جمعی را
بر سر از عرش سایبان بینی
گاه وجد و سماع هر یک را
بر دو کون آستین فشان بینی
دل هر ذره را که بشکافی
آفتابش در میان بینی
هر چه داری اگر به عشق دهی
کافرم گر جوی زیان بینی
جان گدازی اگر به آتش عشق
عشق را کیمیای جان بینی
از مضیق جهات درگذری
وسعت ملک لامکان بینی
آنچه نشنیده گوش آن شنوی
و آنچه نادیده چشم آن بینی
تا به جایی رساندت که یکی
از جهان و جهانیان بینی
با یکی عشق ورز از دل و جان
تا به عین‌الیقین عیان بینی
که یکی هست و هیچ نیست جز او
وحده لاله الا هو

Հինգերորդ բանդում Հաթեֆը նույն ոգով շարունակում է բացատրել սուֆիզմի հիմնական հասկացողությունները:

Այս թարգմանության բացի, Հաթեֆը բազմաթիվ գազելներ և այլ բանաստեղծություններ ունի, որոնք աչքի են գարկում իրենց հանգավորման ինքնուրույնությամբ:

Օրինակի համար, նա ունի մի գազել, որի հանգավորումը տարօրինակ կերպով հիշեցնում է Էդգար Ալլան Պոյի «Ազոավ»-ի հանգավորումը:

*Դու աղեղ բաշել, իջել ես պարտեզ,
Ուզում ես զարկել սիրտս սիրակեզ
Ու հոգսս միայն այն է դեպի քեզ,
Որ Աստված չանի՝ վրիպես հանկարծ:*

Հաթեֆը մի ուրիշ շատ գեղեցիկ գազել ունի, որի երաժշտությունը ճաշակելու համար պիտի անպայման բնագիրը կարդալ: Բնագրի մի բեյթի թույլ թարգմանությունն է հետևյալը.

*Ասացի — «Տեսնեմ դեմքդ քո» — ասաց
«Օրը հավիտյան»:
Ասացի — «Կերթամ թաղից քո»,
Ասաց «Բարի տեսության»:
Հարցրեցի — «Ինչ է հաճույքը կյանքի»,
Ասաց — «Միրո վիշտ»:
Հարցրեցի — «Ինչ է արդյունքը դրա»,
Ասաց — «Ցավը միշտ»:*

گفتم نگرم روی تو گفتا به قیامت
گفتم روم از کوی تو گفتا به سلامت
گفتم چه خوش از کار جهان گفت غم عشق
گفتم چه بود حاصل آن گفت ندامت

Հաթեֆն Էսֆահանին մի տղա ուներ Սեհաբ անունով, որը նույնպես հայտնի բանաստեղծ էր: Դրանով խնդիրը չի վերջանում: Հաթեֆը նույնպես մի աղջիկ ուներ, Ռաշեն անվամբ, որն իր եղբորից ավելի լավ բանաստեղծ էր և այս բանաստեղծական գերդաստանի վարակիչ ընդունակությունը նույնիսկ ազդել էր փեսայի, Միրզա Ալի Աքբար Նաթանգի կոչեցյալի վրա, որն իր հերթին բանաստեղծական փորձեր էր անում: Նրանց տղան, Միրզա Ահմադն էլ բանաստեղծ էր:

Սեհաբի Դիվանը չի տպագրվել և շատ հազվագյուտ է: Պ. Հոսեյն Մաքին իր «Գոլզար Ադաբում» մի քանի հատվածներ նրանից տպել է, որոնք քաղել է պ. Շոջաօղլին Շաֆաի ունեցած ձեռագիր դիվանից: Այդ դիվանը, ըստ պ. Մաքիի 6600 բեյթ է պարունակում:

Ինչ վերաբերում է Հաթեֆի աղջկան՝ Ռաշեհին (Բեյգում, մահ. 1800 ?), նրա դիվանն էլ պարունակում է 3000 բեյթ, բայց շատ ավելի հազվագյուտ է, քան նրա եղբոր դիվանը: Հաթեֆի սերունդը դեռ Սպահանում գոյություն ունի և Ռաշեհի դիվանը գտնվում է այդ գերդաստանում:

Քանի որ Հաթեֆի տղան՝ Սեհաբը, Ղաջար թագավոր Ֆաթալիշահի ժամանակակիցն էր, նրա մասին առանձնապես կանդրադառնամ Ղաջար շրջանի բանաստեղծների մասին գրելիս:

Ինչ վերաբերում է Հաթեֆի աղջկան՝ Ռաշեհին, նրա մասին կենսագրական տվյալներ չեմ կարողացել գտնել: Ամուսնացած մի կին է եղել զավակներով, և հավանաբար բանաստեղծություն էր գրում ամուսնուց ոգևորելու համար:

Ռաշեհն շատ ավելի գեղեցիկ կտորներ ունի, որոնք ավելի ևս ազդում են, երբ հիշում ենք, որ գրողը կին է եղել, այն էլ 18-րդ դարում:

Թույնով լեցրեցին իմ ուրախության تهی نگشت ز زهر غم تو ساغر عیشم
Բաժակը վերջին, از آن زمان که شراب محبت تو چشیدم
Այն օրից, որ իր շրթին դրեցին
Քո սիրո գինին:

Կամ որքան կանացիություն կա այս երկտողի մեջ, ուր նա ասում է.

Այս բաժանումից արյան ծով դարձավ ز دوری تو دو چشمم چو رود جیحون است
Աչքս քեզ համար, شوم فدای تو، احوال چشم تو چون است
Քեզ մատաղ լինեմ, ինչ վիճակում է,
Աչքդ ցավագար:

ՇԵՅՆ ԱԼԻ ՀԱԶԻՆ (1689-1765)

ՔԱՆՅԱԿ

*Այն կոկոնը, որ պարտեզում դեռ չի բացվել՝ շրթերն է մեր,
Այն երազը, որ մեր կյանքում չիրագործվեց՝ հուշն է մեր,
Միրողներիս՝ երկու բան կա, որ անվերջ է և անհատնում,
Մեկ սիրուհու գեար խոփ և մյուսն էլ՝ զհշերն է մեր:*

ՂԱԶԱՐ ՇՐՋԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԸ (1860-1896)

Ղաջարական շրջանի բանաստեղծների մասին կենսագրական մատչելի աղբյուրներ շատ կան, ինչպիսիքն են «Նեգարեսթանե Դարա»-ն, «Անջոմանե-խաղան», «Գոլջանե Մահմուդ», թվելու համար միայն մի քանիսը: Այդ կենսագրական աղբյուրներից միայն երկուսն են ես պատեհություն ունեցել կարդալու: Բայց կարծում եմ մեկն էլ կարդալ բավական կլիներ, քանի որ նրանց բովանդակությունը համարյա թե միանման է և նրանց մեջ հիշված են հարյուրավոր բանաստեղծներ, որոնցից միայն մի քանիսը հիշատակության արժանի են: Օրինակի համար, «Գոլջանե Մահմուդում», ըստ Բրաունի, հիշված են Ֆաթի Ալի Շահի 48 գավակները, որոնք բոլորն էլ բանաստեղծություն էին գրում: Նույնիսկ ինքը՝ Ֆաթի

Այի Շահը, **Խաղան** ծածկանվան տակ, իր ժամանակակիցներից և քեղուն սերնդից հետ չի ընկել: Ֆաթի Այի Շահին հետևել է Նասերեդդին Շահի 51-ամյա թագավորությունը, որի ընթացքում նույնպես հարյուրավոր բանաստեղծներ բլրուլների պես դայլայլել են Իրանի անհոգ բուրաստանում, իրենց դեկավար ունենալով Արքայից Արքային, որը նույնպես դայլայլում էր:

Իմ ծրագիրն է այս մասը վերջացնել 1896 թվի մայիս 1-ով, այն օրը, երբ սպանվեց Նասերեդդին Շահը և հիմնաքարը դրվեց ներկա Սահմանադրության:

Այդ շրջանում էր, որ սկսվեց Իրանի Հեղափոխական գրականությունը, որն ունի իր ցայտուն ներկայացուցիչները հանձինս հայ Մելքում-խանի, Դեհխոդայի, Արեֆե Ղազվինու, Սեյդ Աշրաֆե Գիլանու, Միրզա Ջահանգիր Շիրազու, Մալեք-օլ-Շոարայե Բահարի, Ֆարրուխի Յազդու, Ադիբ-օլ-Մամալեքի և ուրիշների:

Այս հեղափոխական և նորագույն շրջանը ես չեմ ներփակել այս թողուցիկ տեսության մեջ, նյութի առատության, ամփոփ աղբյուրների չգոյության և վերջապես իմ սեփական անկարողության պատճառով: Հույս ունեմ, որ մի օր կկարողանամ այս շրջանի մասին ընդարձակ կերպով գրել և մինչ այդ՝ սկսում եմ Ղաջարների նախնական օրերից⁴³:

ՍԵՀԱԲԵ ԷՍՖԱՀԱՆԻ
(մահ. 1807-8)

Ինչպես գրել եմ նախորդ գլխի մեջ, Սեյեդ Մոհամմադ Սեհաբ Էսֆեհանին, հայտնի բանաստեղծ Հաթեֆի տղան էր և նրա դիվանը պարունակում է մոտ 6000 բեյթ: Սեհաբը մեծ դիրք էր վայելում Ֆաթի Այի Շահի արքունիքում և իր դիվանից և գովաբանական դասիդաններից բացի, նա Ֆաթի Այի Շահի համար հուշերի մի գիրք է գրել:

Պ. Հոսեյն Մաքին, օգտվելով պ. Շաֆային պատկանող ձեռագիր դիվանից, «Գուզարե Աղաբում» Սեհաբից 31 հատված է տվել որպես նմուշ, որոնցից 4-ը ամբողջ **գազելներ** են: Սեհաբի գազելները ընդհանրապես շատ երաժշտական և սահուն են և թառի նվագի պես նրանց մեջ կրկնություններ ու կիսաձայներ կան:

«Աղաբի» գազելներից մեկում է գտնվում այս գեղեցիկ հատվածը:

*Պայծառ ու վառ լուսնի նման երկնքում,
Դեմքիդ լույսը մոմ էր կարծես բոցավառ,
Բայց ափսոս որ մի կարճ վայրկյան չշողաց,
Մթության մեջ՝ գիշերներին խելագար:*

*ماه روی تو بود شمع فروزنده و حیف
که نشد روشن از آن شمع شب تار کسی*

Մի այլ գազելում նա գեղեցիկ մի բառախաղ ունի, որը հայերենում ճիշտ դուրս չի գալիս:

⁴³ Այս շրջանի բանաստեղծների դասավորման համար հետևել եմ պրոֆ. Բրաունի բաժանումներին, երբեմն ավելացնելով այնպիսի բանաստեղծների, որոնց նա աչքաթող է արել:

*Գինի տվեք, այս աշխարհում անցողիկ
Խմեմ պիտի, որ վիշտ չուտեմ օտարի,
Ինչ է արել ուրիշներին կյանքը այս
Որ հիմա գա՝ հարբեցողին ինչ անի:*

Բնագրում երկու պարագայում էլ, ըստ պարսկերեն լեզվի ոճաբանության, **ուտել** բառն է գործածվում. «Կուտեմ գինի, որ վիշտ չուտեմ»:

Մի վերջին հատված էլ Սեհաբից.

*Որքան տառապի աչքերին ջրից
Այս բիրս անգին՝
Մեղքը իրենն է, ինչո՞ւ տուն շինեց
Հեղեղի ճամփին:*

*ز آب چشم آنچه کشد مردمک دیده سزاست
ز آنکه در رهگذر سیل چرا منزل کرد*

ՄԵՋՄԱՐ ԷՍՖԱՀԱՆԻ
(մահ. 1810-11)

Մեջմարը, որը ծնվել է Սպահան նահանգի Ջավարե քաղաքում, շահում է «Մոջ-թահեդ-օլ-Շոարա»-ի տիտղոսը: Ըստ Բրաունի, Մեջմարը մեռել է երիտասարդ հասակում, հիմնվելով «Մաջմա-օլ-Ֆոսահա»-ի վրա՝ ուր Ռեզա Դոլի Խան Հեղայաթը, Մոզաֆարադդին Շահի «Լալե-Բաշին» (դայակը) նրա մասին գրում է, որ «Եթե նա ավելի երկար ապրեր, հավանաբար կհասներ ծայրահեղ մեծության»: Մեջմարի բանաստեղծությունների ժողովածուն շատ հավազյուտ է և ես նրա հատվածներին հանդիպել եմ զանազան ժողովածուներում միայն:

Այս գազելներից մեկը հիշված է «Գուզարե Աղաբում»:

*Ո՞րը համբուրեմ այդ անդամներից
Մարմնիդ գեղանի,
Աղքատի պես եմ, որ արքայական
Մի սեղան տեսնի:*

*بچه عضو تو زخم بوسه نداند چه کند
بر سر سفره سلطان چو نشیند درویش*

Մի այլ գազելում Մեջմարը հետևյալ հատվածն ունի.

*Սիրոս ճամփան չի կորցնի
Քո փողոցում, ո՞վ անգին,
Խենթերը միշտ գտնում են
Ավերակի այդ ուղին:*

*در کوی تو دل گم نکند خانه خود را
دیوانه شناسد ره ویرانه خود را*

Գեղեցիկ բառախաղ կա նույնպես այս բեյթի մեջ.

Սադին մահիկը լեցուն բաժակի
Գինու մեջ տեսավ,
Միակ անգամն էր, որ լուսնի դեմքը
Արևին ընկավ:

ՍԱԲԱ ՔԱՇԱՆԻ (ՖԱԹՇ ԱԼԻ ԽԱՆ)
(մահ. 1812–13)

Ֆաթի Ալի Խանը Սաբան Քաշանին Ֆաթի Ալի Շահի պալատական բանաստեղծ
և «Մալեք–Օլ–Շոարան» էր (Բանաստեղծների Արքան): Դրանով հանդերձ,
քանի որ նա միմիայն գովաբանական դասիդաներ էր գրում իր արքայից արքայի
համար, նրա արժեքը շատ սահմանափակ է: Սաբանին երբեմն հաճելի է կարդալ
քնագրի մեջ, նրա ձկուն լեզվի և վարպետ դարձվածքների համար, բայց ընդհանուր
գեղարվեստական տեսակետից նա մեծ արժեք չի ներկայացնում: Բավական է
ասել, որ նա գրել է մի ամբողջ «Շահնամե», մի ամբողջ «Խոդավանդ–նամե», մի
ամբողջ «Էբրաթ–նամե», որոնք բոլորն էլ նվիրված են եղել իր Բարերարի փառքը
գովելուն: Նա իր օրոք մեծ հոշակ էր վայելում և նույնիսկ Ռեզա Ղուլի Խանը (կոչու-
մով՝ Լալե Բաշին) իր հաճախ հիշված «Մաջմա–օլ–Ֆոսահա»-ում գրում է, որ «Վեր-
ջին յոթ հարյուր տարիների ընթացքում նրա պես մեծ բանաստեղծ չի ծնվել»: Երևի
պայմաններն են պարտադրել:

Բայց մենք կանցնենք այս «բաժակից», քանի որ Սաբան օտարազգի ընթերցող-
ների համար որևէ հմայք չունի:

ԱԳԱՇԵ ՂԱԶԱՐ ԵՎ ՆԵՇԱԹԵ ԷՍՖԱՀԱՆԻ
(մահ. 1828–9)

Ագահե Ղազարը և Նեշաթե Էսֆահանին ժամանակակիցներ են եղել և մեռել են
միևնույն թվականին:

Աղա Ալի Աշրաֆե Ագահը Շիրազի, ինչպես ցույց է տալիս նրա անունը, ներքի-
նի⁴⁴ է եղել և դա ինքնըստինքյան հազվագյուտ մի երևույթ է, քանի որ ներքինի բա-
նաստեղծ, քանի ես գիտեմ, ուրիշ չի եղել Իրանում: Ըստ երևույթին, դա չի խանգա-
րում բանաստեղծ լինելու, քանի որ Ագահը գեղեցիկ հաստվածներ ունի:

Հ. Միրզայանը իր «Զանազանում» հետևյալ գեղեցիկ բեյթը ունի Ագահից.

*Ոչ քեզ ծարավից կարող եմ տեսնել
Տանջվելիս լռին,
Եվ ոչ էլ տեսնել շրթունքդ դրած
Կուժի շրթունքին:*

⁴⁴ Մեծահարուստների տան այն ներքին մասը, որը միայն պատկանում էր կանանց, երեխա-
ներին, և մատուցողներին, անծանոթ տղամարդկանց մուտքը արգելված էր: «Աղա» — Արևել-
քի մի շարք երկրներում ավագներին դիմելու կարգ, որը ցույց է տալիս ավագի կոչումը և
հոշակը: (Ն. Մ.)

Մի ուրիշ գեղեցիկ բեյթ, որին ես հանդիպել եմ, հետևյալն էմ.

*Միրտղ եմ հիշում
Ու տալիս համբույր,
Ինչ քար որ տեսնեմ,
Սև է և ամուր:*

چون هست شبیه دل تو گيرم و بوسم
هر سنگ که بینم بزمین سخت و سیا هست

Մի ուրիշ բեյթում Ագահը օգտվել է պարսկական այն ասացվածքից, ըստ որի
«Սև գույնից վերև ուրիշ գույն չկա», որի միտքն այն է, որ «Ներկա դրությունից ավե-
լի վատ ինչ կարող է լինել» և դա հարմարեցրել է իր աչքի բիրի սև գույնին:

*Արյուն արցունքից բիրս ձերմակեց
Ու ես կուրորեն ճանապարհ ընկա,
Իզուր են ասում մարդիկ տախտու,
Որ սևից վերև ուրիշ գույն չկա:*

Ինչ վերաբերում է Միրզա Աբդու Վահաբ Նեշաթե Էսֆահանին, որը Ֆաթի Ալի
Շահի Արտաքին Գործոց նախարարն էր և կրում էր Մոթամեդ–օղ–Դովլե տիտղոսը,
նա նույնքան հոշակ էր վայելում որպես գեղագետ, որքան բանաստեղծ և հաճախ
ևս չափածո արձակով նախարաններ էր գրում իր Արքայի, ինչպես և նրա «Բանաս-
տեղծների Արքա» — Սաբայի բանաստեղծական ժողովածուների համար: Հե-
տաքրքիր են նմանապես նրա քաղաքական նամակները և ուղերձները, որոնց նա,
որպես արտաքին գործոց նախարար, ուղղում էր Անգլիային, Ֆրանսիային և Ռու-
սաստանին, որոնք այդ շրջանում մրցում էին Իրանում գերիշխանություն ձեռք բե-
րելու համար: Հակառակ նրանց այդ ուղերձները չափազանց բանաստեղծական և
երկիմաստ ոճով էին գրվում, այնուհանդերձ չօգնեցին Ֆաթի Ալի Շահին: Խեղճ Նե-
շաթը բարբարոսների հետ գործ ուներ, որոնք չէին կարողանում գնահատել նրա
բանաստեղծական ձիրքը: Նեշաթը տիրապետում էր արաբերենի, պարսկերենի և
թուրքերենի: Նա չափազանց հյուրասեր և առատաձեռն էր և հաճախ հասնում էր
սնանկության սեմին, որտեղից նրան միշտ փրկում էր համբերաշատ Ֆաթի Ալի Շա-
հը: Նեշաթը հաջող գազելներ ունի և նրա հայտնի գիրքը կոչվում է «Գանջինե»
(գանձարան):

Շատ հեռավոր անցյալում չէր ապրում Նեշաթը, մի բան, որ երևում է նրա
հետևյալ բեյթից, որը գրել է բժիշկների ամենակարող գիտության մասին:

*Բժիշկը ինձնից իմ ցավն է հարցնում,
Ու ես բժշկից իմ ցավի դարման,
Բայց ոչ նա գիտե, թե ցավս ինչ է,
Ոչ էլ ես գիտեմ, որ ասեմ նրան:*

طبيب از درد می پرسد من از درمان درد اما
نه من آگاه از دردم نه او آگه ز درمانم

Իսկ ինչ վերաբերում է կանանց ճաշակին, նորից գտնում ենք, որ Նեշաթը մեզ շատ մոտ շրջանում է ապրել:

*Սրտով եղիր ու հավատքով,
Ո՛վ ճգնավոր, այս կյանքում,
Միտունները մեզ անհավատ
Ու անսիրտ են հավանում:*

**ՎԵՍԱԼԵ ՇԻՐԱԶԻ
(մահ. 1846)**

Վեսալը մեկն է նորագույն ամենասիրված բանաստեղծներից: Նրա գագելները շատ գեղեցիկ, սահուն, պարզ և երաժշտական են և երբեմն, ամենահաջող դեպքերում, հիշեցնում են «ոսկեբերան» Հաֆեզին:

Վեսալի Շիրազու անունը Միրզա Մոհամադ Շաֆի էր, և նա ճանաչված էր «Միրզա Քուչեք» անվամբ. երևի իր փոքր հասակի պատճառով: Վեսալը 18 հազար բեյթ է գրել, որոնց թվում կան բազմաթիվ գագելներ և դասիդաներ: Դրանցից բացի նա գրել է բանաստեղծությունների ժողովածու «Բազմե Վեսալը» և վերջացրել է Վահշիե Բաֆղու «Ֆարհադ և Շիրինը»:

Վեսալի բանաստեղծական տաղանդը ըստ երևույթին ժառանգական է եղել, քանի որ նրա 5 տղաները բոլորն էլ իրենց օրոք հայտնի բանաստեղծներ էին և այդ ընտանիքը իր շուքի տակ էր առել 19-րդ դարի Իրանի բանաստեղծական ասպարեզը:

Վեսալի տղաների մեջ ամենահայտնի բանաստեղծը Վեղարն էր, որը 1857 թվին ներկայացավ Նասերեդդին Շահի արքունիքին և գրավեց այդ թագավորի հատուկ ուշադրությունը: Նրա մի ուրիշ որդին էր Միրզա Մահմուդը (մահ. 1851-ին), որը բժիշկ էր և ճանաչված էր Հաքիմ բանաստեղծական ծածկանվամբ: Այս երկուսից բացի, հայտնի բանաստեղծներ էին Վեսալի տղաներ Ֆարհանգը, Դավարին, Թոհիդն և Յազդանին:

Վեսալե Շիրազին շատ քաղցր է, բայց խորք չունի և այդ իսկ պատճառով նա բնագրի մեջ է, որ շատ հրապուրիչ է:

Թարգմանությունը չի տալիս նրա իրական պատկերը և նրա ամենագեղեցիկ բեյթը թարգմանելուց հետո, արդյունքը հիասթափեցնող է:

Որպես նմուշ Վեսալի բանաստեղծությունների, ես թարգմանել եմ նրա հետևյալ մի քանի բեյթերը:

*Պահարակում ես դու խաղացողին,
Որը տարվում է արծաթ ու ոսկի,
Չես նստել սիրո դոմարի ոտքին,
Որ տանեն քեզնից և՛ սիրտ, և՛ հոգի:*

کنی ملامت رندی که سیم و زر باز
قمار عشق ندیدی که خویشتن بازی

* * *

*Նրան ասացի. «Քո շրթերից
Բաժին ունեմ մի համբույրի»,
Պատասխանեց. «Կետը փոքրիկ
Բաժանելու ինչ տեղ ունի»:*

گفتمش بوسی از آن تنگ شکر قسمت ماست
گفت این نقطه دگر قابل قسمت نبود

* * *

*Ողբում է բլբուլն մի պարտիզպանից,
Որ ծաղիկների բուրաստան ունի,
Ինչպես չլացեմ, որ միակ վարդս
Հարյուր հատ գլխին պարտիզպան ունի:*

بنالد بلبل از یک باغبان با صد هزاران گل
ننالم چون که یک گل دارم و صد باغبان دارد

* * *

*Երջանիկ է թիթեռը այն,
Որ այրվում է մումի բոցում:
Ես ինչ անեմ սրտիս ձեռքից,
Որ այրվելով — չի վերջանում:*

پروانه بیک سوختن آزاد شد از شمع
بیچاره دل ما ست که درسوز و گداز است

* * *

*Գիտեմ, որ լացը սիրուհուս վրա
Չի ազդի բնավ,
Ժանգ է, որ սրտիս հայելու վրայից
Լվանում եմ ես:*

* * *

*Գիտեմ, զանգատս նրա քար-սրտի
Չի ճարի ճամփան,
Մխիթարանք է՝ որ սրտիս համար
Մյունջում ես:*

* * *

*Ջրի նման առվից անցավ
Կյանքը անզոր,
Ո՛ր է Սադին որ թարմացնի
Առուն այս չոր:*

عمر گذشته آب زجو رفته شد، کجاست
ساقی که بار دگرش آرد بجوی ما

* * *

*Որքան սիրտս նորոգեմ,
Սերը նորից քանդում է.
Դո՛ւ հրամայիր այս անգամ,
Նորոգելը արժ՛ն է:*

* * *

Դեմքդ գեղեցիկ երագում տեսա
Բայց դժգոհ եմ դեռ,
Այս առևտուրը արթուն ժամանակ
Պիտի պատահեր:

* * *

Ձեռքս տարա, որ սրտից
Նետը հանեմ արյունոտ,
Մի նոր նետով նա կարեց
Սիրտս — ձեռքիս անամոթ:

دست بردم که کشم تیر غمش را از دل
تیر دیگری زد و بردوخت دل و دست به هم

ԶԱՐԳԱՐ ԷՍՖԱՀԱՆՆԻ ԵՎ ԱՇԵՂ ԷՍՖԵՀԱՆՆԻ

Նախքան Ղաանուն հասնելը, որը համարվում է Ղաջար շրջանի մեծագույն բանաստեղծը (ըստ ոմանց) պիտի յիշել մի քանի երկրորդական բանաստեղծներ: Այս բանաստեղծների գրական արժանիքի վերաբերյալ կարծիքները հակասական են: Օրինակի համար «Մաջմա-օլ-Ֆոսահու»-ի 11 էջը նվիրված է Միրզա Մոհամադ Ալի Սորուշե Սեղեհուն, որը «Բանաստեղծների Արեգակ» տիտղոսն էր կրում, բայց որի բանաստեղծությունները այսօր շատ քիչ են հիշվում (մահացել է 1868-9 թվին): Նույն գրքում միայն մի էջ է նվիրված Աղա Մոհամադ Հասան Զարգարին (ոսկերիչ), որը շատ ավելի մեծ ժողովրդականություն է վայելում, քան Սորուշը և միայն չորս էջ Աղա Մոհամադ Աշեղեն, որը նույնպես համեմատաբար ավելի մեծ ժողովրդականություն է վայելում, քան երկու նախորդները:

E. Brown-ը միայն թողնի կերպով է յիշում այս բանաստեղծներին, առանց կանգ առնելու նրանցից որևէ մեկի վրա:

Այս շրջանի բանաստեղծների շարքումն պիտի նույնպես յիշել Ջեյհուն Յագդուն, Ռեզա Ղուլի Խան Հեղայաթին, որը հեղինակն է այստեղ հաճախ հիշված «Մաջմա-օլ-Ֆոսահու»-ի (ծնվել է 1800 թվին և մահացել 1871-ին), Մոհամադ Թադի Սեփեհըրը Քաշանուն, որը կոչվում էր «ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԼԵԶՈՒՆ» և ավելի պատմաբան էր, քան բանաստեղծ և վերջապես փիլիսոփա Մոլլա Հադի Սաբզվարուն, որը գրում էր Ասրար ծածկանվան տակ և մահացավ 1878 թվին:

Այս խմբի մեջ, բանաստեղծական տեսակետից, աչքի են զարկում միայն Զարգարը և Աշեղը, չնայած որ պատմաբանական-փիլիսոփայական տեսակետից անհամեմատ ավելի արժեքավոր դեմքեր են Հեղայաթը, Սեփեհըրը և Մոլլա Հադին:

Քանի որ առայժմ ստիպված եմ պահպանել այս ակնարկի նեղ շրջանակը և չհեռանալ բանաստեղծությունից, այստեղ նմուշի համար մի քանի օրինակ կրերեմ ՋԱՐԳԱՐ ԷՍՖԱՀԱՆՆԻՑ և ԱՇԵՂ ԷՍՖԱՀԱՆՆԻՑ, որոնցից երկրորդը փեշակով դերձակ էր և մահացել է 1864 թվին:

Զարգար Էսֆահանուց (մահ. 1854) ես հանդիպել եմ մի շատ գեղեցիկ զագելի, որը հետևյալ չորս տողով է սկսվում.

Թափեց արյունս այն պատրվակով
Յարը գինարբու,
Որ հարբել է նա, զարկելով շրթին
Բաժակը գինու:

* * *

Յարի մազերից հարցրի «Անհավան,
Ո՞ւմ ես դու պաշտում»,
«Երկրպագու եմ», — ասաց, — արևի»,
«Մուսուլման ես դու»:

به زلف یاربگفتم که کامزک ! بچه دینی...?
جواب داد مسلمان! من آفتاب پرستم.

Աշեղը Էսֆահանուց ես շատ եմ կարդացել և շատ հաճախ պատեհություն եմ ունեցել նրա բանաստեղծություններին հանդիպելու: Բայց նրա բանաստեղծությունները միալար և միանման են և զուրկ են ինքնուրույնությունից: Օրինակ, նա ունի բազմաթիվ զագելներ, որոնք գրված են Հաֆեզի, Սաադու, Ջամիի այսինչ կամ այնինչ զագելի հետևողականությամբ, կրկնելով նույն նյութը, նույն հանգավորմամբ, բայց տարբեր ձևի տակ: Այնուհանդերձ նրա զագելների մեջ հաճախ կարելի է հանդիպել գեղեցիկ բեյթերի, որոնցից մի քանի հատ ես թարգմանել եմ:

Յարիս բաց դռանը, տխուր ու տրտում
Նստել եմ սես,
Եվ մրցակիցս գուցե մտածի
Տունը չէ հիմա:

کس در نیسته است و بر آن در نشسته ام
شاید گمان کنند رقیبان که یار نیست

Սիրտս քեզնից երբ նեղացավ,
Ձեռքս փեշիցը բաշեցի,
Տեսնենք ինչպե՞ս փեշն կազատի
Կապանքներից սիրո ցանցի:

Իմ առևտուրը սեր է և ափիս
Դրամագլուխը իմ,
Օգուտը միայն հավատարմության
Մի խոստում է սին,
Աչքս փողոցին, լավ հաճախորդի
Կարոտ եմ քաշում,
Տանի՛, վայելի՛, բայց լավ արժեքով
Անի այս հոգին:

تاجر عشقم بکف مایه و سودم وفا
تا که شود مشتری تا چه دهد در بها
ما و دل بی نصیب هر دو فقیر و غریب
تا که شود آشنا تا که شود مهربان

Կարել էի աչքս նրան
Թիթեռի պես,

Բայց երբ եկա ուշքի տեսա՝

– Վառվել եմ ես:

Ինձ մի հիշեցրու հայրենիքը իմ
Եվ իմ սիրուհին,
Սերը նավակ չէ, որ մի օր հասնի
Ցանկության ափին:

یادم از یار و دیار ای دل آواره میار
گشتی نیست محبت که بساحل رود

«Ջանազան»-ում երեք հատված կա, որ Հ. Միրզայանը թարգմանել է Աշեղից:
Հայրս թարգմանչական մեծ հմտությամբ գեղեցկություն է սրսկել այդ բեյթերի մեջ:

Թե քեզ համար չէ շինված
Սրտիս օթյակն այս շքեղ,
Ապա ինչո՞ւ պատերին
Կա քո նկարն ամեն տեղ:

گر خانه دلم نه برای تو ساختند
نقش رخ تو بر در و دیوار خانه چیست

Անապատում բուռն սիրո
Որոտ կորզեց գայրալից,
Ծարավն իմ լուռ շրթունքի,
Նորհատատ ամպերից:

Ողորմիր Աստված, սոխակի ցավին,
Որ բուն է շինել վարդենու վրա,
Ինքը կաշկանդված միշտ վարդի սիրով
Եվ փշից ազատ չէ վարդը նորս:

ՂԱՆՆԻ (մահ. 1883-4)

Ղաանին ծնվել է Շիրագում 1807-8 թվին (1222 Հեջրի): Նրա անունը Միրզա Հաբիբ էր և այդ ծածկանվան տակ է, որ նա գրել է իր առաջին բանաստեղծությունները, մինչև որ Խորասանի և Քերմանի նահանգապետ, Շոջա-օլ-Սոլթանը փոխել տվեց նրա ծածկանունը ի պատիվ իր տղայի Աբա Ղաանի, դրանից հետո նա ճանաչվեց Ղաանի ծածկանվամբ:

Ղաանու կյանքը ընթացել է հանդարտ մի հունի մեջ: Նա իր կյանքի մեծ մասը անց է կացրել Շիրագում և հետո որոշ մի շրջան ապրել է Քերմանում: Նա իր կյանքի վերջին տարիները ապրեց Թեհրանում, որպես պալատական բանաստեղծ, ուր և մահացավ 1883-4 թվին (1270 Հեջրի): (Նա պարսիկ առաջին բանաստեղծներից է, որ տիրապետում էր ֆրանսերենին. — Ն. Մ.):

Ղաանու երկերի ժողովածուները առատ են և մատչելի: Թեհրանում տպագրվել է մի օրինակ 1884 թվին և Թավրիզում մի ուրիշը, 1837 թվին: Բացի այդ, վերջին տարիներում ևս Ղաանու գործերի մասնակի հրատարակություններ լույս են տեսել Թեհրանում, ինչպես և Հնդկաստանում:

Ղաանու գրական արժեքը վերջին քառորդ դարու ընթացքում անտեղի կերպով աչքաթող է արված: Դրա ամենակարևոր պատճառը բարոյական է: Ղաանին, որպես պալատական բանաստեղծ, ստիպված էր իր օրոք գովել և փառաբանել բոլոր նրանց, որոնցից կախված էր իր ապրուստը և դիրքը: Ղաանին չէր խնայում իր գրիչը նման դեմքերի համար: Բայց պալատական ինտրիգների շնորհիվ՝ այսօրվա Բարեբարը վաղը ընկնում էր իր դիրքից և նրա տեղը գրավում էր մի այլ մրցակից: Այդտեղ էր, որ Ղաանին ստիպված էր լինում փառաբանել Նոր Բարեբարին և սևացնել նրա նախորդի անունը, մի բան, որ նա անում էր խղճի ամենայն հանգստությամբ: Այդպիսի մի դեպքում էր, որ նա տարիներ փառաբանելուց հետո Մոհամմադ Շահի վարչապետ Հաջի Միրզա Աղասուն, նրա անկումից հետո, ստիպեց սևացնել նրա անունը և փառաբանել նրա հաջորդ՝ Միրզա Թաղի Խանը Ամիր-Քաբիրին: Այդ շրջանի, ժամանակի և մթնոլորտի պայմանները ի նկատի առնելով, չի կարելի խստորեն քննադատել Ղաանու բարոյական արժանիքները, քանի որ նա ապրում էր Ղաջար հարստության բարոյական սնանկության և անկման ժամանակ: Բայց պարսիկ ժողովուրդը, հատկապես գրականագետները, «անհավատարմությունը ամենամեծ հանցանքը և բարոյական խարան են համարում և Ղաանու վերաբերմամբ ցուցաբերված անուշադրության գլխավոր պատճառը դա պիտի լինի: Քանի որ վերջին հարյուրամյակում ապրող բանաստեղծների մեջ, Ղաանին իր նրաժշտության, լեզվի տիրապետման, պատկերների առատության, ոճի հարստության և բանաստեղծական վարպետությամբ առաջնագույն տեղն է գրավում: Ղաանու վերևում հիշված ձիրքերը իսկապես ըմբռնելու և գնահատելու համար անհրաժեշտ է նրան կարդալ բնագրում: Բացի այդ, Ղաանուն թարգմանելը շատ դժվար է, նախ այն տեսակետից, որ նրա բանաստեղծությունները մեծամասնաբար դասիդաներ են և բացի այդ՝ նրա դարձվածքները, հանգավորումները և բառախաղերը օտար լեզվով անմիտ և անարժեք կդառնան:

Հովսեփ Միրզայանի «Ջանազան»-ում երկու հատված կա Ղաանուց, որոնցից առաջինը կարող է գեղեցիկ օրինակ ծառայել Ղաանու փարթամ գրելակերպին:

Ինչ հոգ է թե ես գուրկ եմ գլխարկից
Քանզի ակնակուռ երկինքն է ինձ թագ,
Երկրագունդն ամբողջ պետությունն է իմ,
Եվ դաշտ ու լեռներ՝ պալատ ընդարձակ:
Միրյալիս առաջ մի խեղճ մուրացկան՝
Արքան եմ ազատ իմ ժամանակի,
Կարիք, հեծություն, ցավեր ու վշտեր,
Ահա գորքն անթիվ իմ մեծ բանակի,
Որպես դալանդար՝ ես մեղք եմ գործում,
Եվ հեռուանքից վախ չունեմ բնավ,
Քանզի սիրահարն է իմ մեղքերի
Ամենաողորմի գթությունն անբավ,
Թե քո շրթունքից խնդրեցի համբույր,
Երբ որ իմ գլխիս անցել էր զհնի,
Բաժակի շրթունքն իմ ներման համար

چه غم ز بی کلهی کآسمان کلاه من است
زمین بساط و در و دشت بارگاه من است
گدای عشقم و سلطان وقت خویشتم
نیاز و مسکنت و عجز و غم سپاه من است
قلندرانه گنه می کنم ندارم باک
از آنکه رحمت حق ضامن گناه من است
به مستی ار ز لبت بوسه ای طلب کردم
لب پیاله درین جرم عذرخواه من است
به روز حشر که اعمال خویش عرضه دهند
سواد زلف بتان نامه ی سپاه من است
زند طعنه که اندر جهان پناهت نیست
به جان دوست همان نیستی پناه من است

Թող գութիդ առաջ բարեխոս լինի:
Դատաստանի օրն, երբ որ ամեն ոք
Իր արածների հաշիվն է տալիս,
Գեղանիների գետի գույնը մութ
Յույց կտա կշիռն իմ սև տետրակիս:
Բարեկամներս պարսավում են միշտ
Թե այս աշխարհում չկա քեզ պաշտպան,
Բարեկամներիս արևն է վկա,
Որ պաշտպանն է իմ հենց ինքն այդ «Չկան»:

Այս վերևի հատվածից բացի, որը համեմատելով բնագրին, թարգմանական մի գոհար է: Հ. Միրզայանը նույնպես տվել է այս փոքրիկ երկտողը Ղաանուց:

Ես քեզ հետ դիտմամբ կուվել եմ ուզում
Ի սեր հաշտության,
Որպեսզի գուցե գործս համբույրով
Ստանա վախճան:

Ղաանին հետաքրքիր նորություններ է մտցրել պարսիկ բանաստեղծության մեջ, որոնցից ամենաարժեքավորը և որը դժբախտաբար հաճախ անտեսվում է, բանաստեղծության մեջ մտցրած նրա ժողովրդական բառերը, հասկացողությունները և նմանություններն են:

Դրա գեղեցիկ մի օրինակը կա է. Բրաունի գրքում, որը իրանյան Նոր Տարու սփորությանն է կապված: Պարսկական «Նո-Րուզ»-ին սեղանի վրա անպայման պիտի Ս-ով սկսվող յոթը ուտելիք լինի և դա կոչվում է «հաֆթ-սին»⁴⁵ Ղաանին հրաշալի մի բանաստեղծություն է գրել, որ ավանդական յոթ Ս-իներին հակադրում է իր յարի յոթը տարբեր գեղեցկությունները: Որպես հեռավոր պատկեր այդ սքանչելի բանաստեղծության, ես թարգմանել եմ նրա վեց երկտողը:

Տարին նորոգեց, ձեռքս տուր Սադի
Բաժակը անգին՝
Եվ անուշադիր — թափիր այսօրվա
Դառնության գինին:
Ս-ն իմ Սիրուհու ինձ բավական է
Սիրո այս ծովում,
Ասա բոլորին, մենք՝ հարբածներս
«Հաֆթ-սին» չենք ուզում:

عید شد ساقی بیا درگرددش آور جام را
پشت پا زن دور چرخ وگردش ایام را
سین ساغر بس بود ای ترک ما را روز عید
گو نباشد هفت سین رندان درداشام را
خلق را بر لب حدیث جامه نو هست و من
از شراب کهنه می خواهم لیال جام را
هر کسی شکر نهد بر خوان و بر خواند دعا
من ز لعل شکرینت طالبم دشنام را

⁴⁵ ՀԱՖԹ-ՍԻՆԸ կազմված է հետևյալ յոթը Ս-ով սկսվող իրերից. սոմբուլ (սմբուլ), սիբ (խնձոր, սուսան (շուշան), սիմ (արծաթ), սիր (սխտոր), սերքե (քացախ) և սեփանդ (մեզ մոտ «էսֆանդ» անվամբ ճանաչված ծխաբույրը, որը բոլոր բառարաններում ասում են հայերենում փեզենա է կոչվում:

Խոսում են մարդիկ նոր մետաքսակար
Կտորից շորի,
Իսկ ես շրթունքս հին գինու անուշ
Սափորին դրի:
Բոլորի ձեռքից արծաթ է թափում
Ու հազար համեմ,
Թող ես արծաթե յարիս սև խալի
Հատիկին մեռնեմ:
Սխտոր են դրել մարդիկ սեղանին
Բայց ես՝ կյանքից կուշտ⁴⁶
Գիտեմ, մի օտար համբուրեց, հիմա
Սիրուհուս անուշ:
Տես խունկ են վառել, իսկ ես լացում եմ
Յավից անասհեման,
Առանց այն կուտքի, որ իմ խալամին
Ջարկեց քարավան:

* * *

Թե քո շրթերից, հարբած ժամանակ,
Գողացա մի պահ համբույրը նրա՝
Բաժակի՛ շուրթն է, որ հանցանքը իմ
Իր սրտի արյամբ պիտ քալի հիմա:

* * *

Ընկա ես երեկ ոտքի մոտ յարիս
Հարբած և անհուշ,
Բայց ոչ թե գինով, այլ սիրտս նրա
Սիրով էր հորդել,
Գիտեր նա, որ ես սիրահարված եմ,
Բայց հարցնում էր ինձ.
«Ո՞վ ես դու, ասա, որտեղից եկար,
Ինչո՞ւ ես հարբել»:

* * *

Ինչ հոգ թե ես գլխարկ չունեմ,
Իմ գլխարկն է երկինքը լայն,
Լեռները սեզ, դաշտ ու արոտ,
Իմ պալատն է աշխարհն համայն:
Ասում են ինձ՝ ոչինչ չունես,
Ոչ կարեկից և ոչ պաշտպան,

⁴⁶ Պարսկերենում «սխտորը» սիր է և «կուշտ»-ն էլ սիր է:

هر تنی را هست سیم و دانۀ گندم به دست
مایلم من دانۀ خال تو سیم اندام را
سیر برخوانست مردم را و من از عمر سیر
بی دل آرامی که برده است از دلم آرام را
پیسته و بادام نقل روز نوروز است و من
با لب و چشمت نخواهم پیسته و بادام را
عود اندر عید می سوزند و من نالان چو عود
بی بتی کز خال هندو ره زند اسلام را

Աստված վկա, այդ «ՈՉԻՆՉԸ»
Իմ նեցունկն է ու պահապան:

* * *

Գարուն է սիրո և պահն է գինու,
Աղջիկ եմ ալ-վարդ,
Դու՝ երիտասարդ, գինին՝ հնամյա,
Աստված՝ գթառատ:

* * *

Դրախտ բացել և ստում է. «Նայեք, մարդիկ,
Սա դեմքն է իմ»,
Դժոխք վառել՝ զանգատվում է. «Ես մեղք
Չունեմ, բնույթն է իմ»,
Գեղեցկուհին թուրն գողացել աշխարհակալ
Բահարորի՝
Ու ժպտալով պարծենում է, թե՛ «Դա կամարն է
Իմ հոնքի»:

* * *

Այժմ հասկացա, գիշերը քո հետ
Ինչո՞ւ է այդքան կարճ ու փաղանցուկ.
Դու ինքդ այգի աստղիկն ես փայլուն,
Երբ դեմքիդ քողը վերցնում ես ծածուկ:

* * *

Երկյոթամյա իմ կոնք անուշ,
Ինձ երկամյա գինի՛ ձոնիր,
Քո շրթերի բաժակը տուր,
Քո աչերի փայլով ցողիր,
Դեմքիս կարմիր շուշանը տես՝
Կարմրաշուշան գինի՛ տուր ինձ
Եվ փոխարեն կարկանդակի՝
Համբույր նետիր քո շրթերից:

Ղաանին իր քանաստեղծություններից բացի նույնպես ունի Սաադու «Գոլեստան»-ի նմանությամբ գրված մի երկ, «Քեթաբե-փարիշան», որի մեջ 113 հատ հեքիաթ կա և 33 խորհուրդներ ուղղված թագավորներին և իշխաններին, որոնք հիշեցնում են Մաքիավելի հոչակավոր «II Prince»-ը:

Հավատարիմ իր շրջանի և մթնոլորտի պահանջներին, Ղաանին ունի նաև բազմաթիվ պոռնոգրաֆիկ քանաստեղծություններ, որոնցից եթե հանվեն որոշ տգեղ և

գոնեիկ բառեր, որպես քանաստեղծություն — շատ գեղեցիկ են, հատկապես այս մեկը.

Ծիծաղելով գիրկս թռավ
Ու մի համբույր նա պահանջեց,
Անաչեցի այս իմ շրթից,
Որ համբուրեմ շուրթը բեհեզ:
Ինչպե՞ս դնեմ շուրթը այս իմ,
Որ նման է մի տգրուկի՝
Մի շրթունքի, որ կարմիր է
Արյունից այս իմ երակի:
«Հարյուր համբույր քաղած հաշվիր
Այս շրթունքից իմ խաբուսիկ,
Որ կարկեհան տեսքը շրթիդ
Ինձ հերիք է, ո՛վ Գեղեցիկ»:
Դեմքը թթվեց ու ինձ ասաց.
«Ինքնահավան, անգութ ես դու,
Որ մերժում ես, մանկան նման
Ձերմ համբույրը գեղեցկուհու»:

خندان خندان دوید و پیش من آمد
دوخت دو لب بر لبم که بوسه بزنها
الحق شرم آدمم بدین لب منکر
بوسه زدن بر لیبی چو لالهه حمرا
کاین لب همچون ز لوی من نه سزا بود
بر لیبکی سرخ تر ز خون مصفا
گفتمش ای ترک داده گیرد و صد بوس
کز لب لعل تو قانعم به تماشا
روی ترش کرد و گفت کبر فروهل
کز تو تولا نکو بود نه تبرا
شاعر و آنگاه رد بوسه شیرین
کودک و آنگاه ترک جوز منقا

Սրանից հետո քանաստեղծությունը պոռնոգրաֆիկ է դառնում, բայց դրանով հանդերձ չափազանց գեղեցիկ է, և ես անկեղծորեն ցավում եմ, որ չեմ կարող շարունակել հրատարակությունը, բայց ընկերներիս համար մնացյալ թարգմանությունը միշտ պատրաստ եմ կարդալ:

ՖՈՐՈՒՂԻ ԲԱՍԹԱՄԻ (մահ. 1858)

Ֆորուղի Բասթամին Ղաանի ժամանակակից և մոտ ընկերն էր: Նա մեկն է վերջին հարյուրամյակի լավագույն քանաստեղծներից և շատերի կարծիքով ավելի բարձր ձիրքերի տեր էր, քան Ղաանին: Ֆորուղին սուֆի էր, և նրա սուֆիզմը այնքան նախնական և զուտ էր, որ նրան կապում են Բայազիդե Բասթամու և Մանսուր-Ալ-Հալլաջի վարդապետության, որոնցից առաջինը մի օր աղաղակել էր որ՝ «Աստված իր արայի տակն է»:

Ֆորուղի Բասթամին 20 հազար բեյթ է գրել, որից 5 հազարը տպագրվել է Ղաանու ընդհանուր երկերի ժողովածուի վերջում, տպագրված Թեհրանում 1885 թվին: Ֆորուղին, հակառակ Ղաանիի, մեծ մասամբ գազելներ էր գրում, որոնցից մեծ մասը սուֆիական վարդապետության շուրջ է, բայց որոնց մեջ շատ գեղեցիկ հատվածներ կան, որ նա ավանդական ձևով խոսում է գինուց, հարբելուց և սիրելուց, այդ բոլորը իր սուֆիական հասկացողությունները պատկերազարդելու համար:

Է. Բրաունը հետևյալ հատվածն է բերում Ֆորուղուց, որը զուտ սուֆիական քնույթ է կրում:

Երբ հեռացար իմ սրտից,
Որ վերադարձդ խնդրեմ,
Երբ ես եղել դու թաքուն,
Որ թաքատողդ փնտրեմ:
Դու բացակա չես եղել,
Որ ես փնտրեմ դեմքը քո,
Տեսել եմ միշտ տեսքը քո
Հազար աչքով իմ սիրո:

Մի այլ շատ գեղեցիկ գազելի մեջ Ֆորուլին այս երկհանգն ունի.

Թե որ թագ ես ցանկանում,
Հնդր ոտքի համբուրիր,
Որ այդ դիրքին կհասնի,
Ով որ իջնի մինչ գետին:
Գուցե Սադին մեզ օգնի,
Որ մենք հարբենք այս գիշեր,
Թե ոչ սիրո այս գինուց
Չի հազենում հոգին մեր:

Մարդկային մտքի կամ գիտակցական աշխարհի սահմանափակությունը և անգիտակցականի, հավատքի (որը Սուֆիների մոտ հումանիզն է Սիրո) անսահմանությունը Ֆորուլին այս երկտողով է արտահայտում.

Նժույզդ մի քայլ միայն կդնի
Մտքի ծառուղուն,
Ու հետո պիտի Սիրո անսահման
Անսպասուն անցնի:

Նման մի միտք է, որ նա կրկնում է իր հետևյալ երկտողով.

Այցելիր մի օր թաղը խենթերի,
Որպեսզի տեսնես
Միտքը շփարած՝ Սիրո շուկայի
Աղմուկին ի տես:

Ֆորուլի Բասթամին այնքան քաղցր լեզու և զգացումների անկեղծություն ունի, որ նման մեջբերումներով կարելի է նրա ամբողջ դիվանը սպառել, բայց այստեղ ես թարգմանաբար միայն մի քանի հատվածներ կտամ նրանից, որոնց ընտրությունը պատահական է եղել և անպայման չի ներկայացնում նրա ամենագեղեցիկ տողերը.

گی رفته‌ای ز دل که تمنا کنم تو را
گی بوده‌ای نهفته که پیدا کنم تو را
شوم نکرده‌ای که شوم طالب حضور
پنهان نگشته‌ای که هویدا کنم تو را
با صد هزار جلوه برون آمدی که من
با صد هزار دیده تماشا کنم تو را

Դժվարահաճ սիրուիս է,
Որ իմ հոգին չի հավանում,
Թե ոչ — զոհել անգին հոգին՝
Հեշտ է նրա շրթին քրքում:

* * *

Սիրտս գերվեց գեղեցկուհու
Խոպուպների հուր-հմայքին,
Ուրախացնեք, ով խելոքներ,
Շղթայել են խելագարին,
Սիրտս պոկվեց այդ վարսերից
Ու հոնքերը սիրեց կամավ,
Տեսեք խենթին շղթայագերծ,
Որ սարերի գիրկը ընկավ:

* * *

Որքան շուրթս համբուրեց
Խալիդ ցորենը անգին՝
Մի գարուն չափ չպակսեց
Յանկությունը իմ նախկին:

* * *

Երբ դեմքը ցույց իմ հուր-սիրուհու,
Գինու բաժակի բոցերում անշեջ,
Կարծես թե փերին թաքնված լինեք
Մի հայելազարդ սպարանքի մեջ:

* * *

Թույլ էր հառաչս ու անօգնական,
Որ սիրող պատռեր,
Թե չէ քո սրտում քարի պես ամուր՝
Ոչ մի ճեղք չունես.
Եթե չեմ մեռել ես քո բաժանման
Յավից այս գիշեր՝
Մեռնելն է դժվար — թե ոչ դու ինքդ
Ոչ մի մեղք չունես:

* * *

Այնպես պիտ հարբել,
Որ օրն Հարություն

دل در اندیشه آن زلف گره گیر افتاد
عاقلان مژده که دیوانه به زنجیر افتاد
دل ز گیسوی تو بگسست و به ابرو پیوست
کار زنجیری عشق تو به شمشیر افتاد

هر چه لبم بوسه زد گندم خال تو را
یک جو کمتر نشد خواهش بسیار من

Հարցնես. «Ո՞վ եմ ես,
Ի՞նչ տեղ է այստեղ»:

* * *

Գինի տուր Սաղի, ճակատագիրը
Խաբել չենք կարող,
Չենք կարող ջնջել այն, ինչ մեր գրքում
Կա միշտ անփոփոխ:

* * *

Չարած մեղքից նեղացավ
Իմ սիրուհին կամակոր,
Հազար չարած մեղքերիս
Ցավն եմ քաշում ես այսօր:

ՅԱՂՄԱՅԵ ԶԱՆԴԱՂԻ
(մահ. 1859 թ.)

Յաղմայե Զանդաղին հետաքրքիր ծայրահեղությունների մի ժողովածու է: Նա մեծ հոջակ է վայելում Իրանում, որպես այդ երկրի ամենաանառակ և պոռնոգրաֆ բանաստեղծը: Ղաանին, ինքը ոչ պակաս մի պոռնոգրաֆ, դողում էր Զանդաղու անունը լսելիս: Նա ամբողջ Պարսկաստանում հայտնի էր իր ամենաթույլ հայհոյանքի «գանդահբա» (նշանակում է կինը անբարոյական է) անվամբ, որի առթիվ զլուխգործոց մի բանաստեղծություն է գրել Ղաանին ու նվիրել Զանդաղուն:

Մյուս կողմից նա «բարեսիրտ, բարեհամբույր և պերճախոս մի երիտասարդ է, որը ուշադրություն չի դարձնում իր բանաստեղծությունները ժողովելու վրա»: Սա նրա հեռու ծանոթներից մեկի վկայությունն է:

Պարսկերեն ամենախայտառակ բանաստեղծությունների հեղինակը մյուս կողմից հայտնի է իր «մարսիե»-ներով, որոնք կրոնական ծիսակատարությունների վերաբերող հողվածներ են և հատկապես գրված են Մոհարամ ամսի սուգերի համար: Այդ բանաստեղծությունները, որոնց նա անվանում է «Նոհե-սինե-գանի», որը նշանակում է «Կուրծք ծեծելու ողբեր», բոլորովին նոր մի բան են պարսիկ գրականության մեջ իրենց ոճով, չափաբանությամբ և երաժշտությամբ:

Պարսկահայերս, որ հաճախ ակնատես ենք եղել Մոհարամի սուգերի ծեսերին և լսել ենք «կուրծք ծեծելու» ռիթմիկ և ազդու ձայնը, լավ կարող ենք ըմբռնել Զանդաղու «ողբերի» ռիթմը, որի առաջին երկար ողբը աղաղակում է մի հոգի և երկրորդ կարճ տողը արձագանքում է ամբողջ խումբը, ավեր զարկելով մերկ կրծքին:

Յաղմայե Զանդաղու երկերի ժողովածուն տպագրվել է Թեհրանում 1867 թվականին, որը պարունակում է հետևյալ մասերը:

Ա.— ԱՐԶԱԿ ԳՐՎԱԾՔՆԵՐ, որոնք կազմված են նրա բազմաթիվ նամակներից գրված իր ծանոթներին և ընկերներին: Այս նամակների մեջ հետաքրքիր երևույթ միայն ներկայացնում է այն հանգամանքը, որ Զանդաղին երբեմն գրում է մաքուր

պարսկերենով, առանց գործածելու որևէ արաբական բառ: Հակառակ այդ շրջանի չափազանց պոռոտ և արվեստական ոճին, Զանդաղիի արձակը շատ հաճելի, պարզ և գեղեցիկ է:

Բ.— ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԲԱԺԻՆ.— Այս բաժինը կազմված է 11 մասերից, որոնցից միայն 3 մասերն են, որ պոռնոգրաֆիկ չեն: Դրանք իր գազելներն են, առաջին և երկրորդ մասը և Է-մամների համար գրված ողբերը: Մնացորդը, որը բաղկացած է «Սարդարիե», «Ղասսարիե» և մի բանի այլ մասերից, որոնց մասին է դուարդ Բրաունը, իր անգլիական բնածին ամոթխածությամբ՝ հետևյալն է գրում. «Բանաստեղծի սիրած հայհոյանքը՝ «գանդահբան», որով նա ինքը սովորաբար ճանաչված է, բոլորովին գեղեցիկ արտահայտություն չէ, բայց դա ինքնըստինքյան մի քնքուշ բառ է այն բառերի մեծամասնության կողքին, որ նա ազատորեն գործածում է: Մյուս կողմից, նրա լուրջ գազելները և դասիդաները ցույց են տալիս, որ նա կարող է գեղեցիկ գրել, մինչդեռ նրա լեզվական տիրապետությունը նույնիսկ գերազանցում է Ղաանուն, չնայած որ նրա բանաստեղծական երաժշտականությունը ավելի պակաս է:

Այդ բոլորով հանդերձ, Զանդաղին իր լուրջ գազելների մեջ այնպիսի քաղցր և գողտրիկ տողեր ունի, որոնց չենք կարող գտնել այդ շրջանի որևէ այլ բանաստեղծի երգերում և միմիայն երբեմն Ղաանու մոտ: Ինչպես օրինակ այս գազելի առաջին երեք բեյթերը:

Բաժակը գինու այնպես դիր ափիս,
Ինչպես դնեիր արցունքդ աղի,
Ուշադիր եղիր ու ինձ հետևիր,
Աչքերիդ մեռնեմ, հարբած եմ Սաղի:
Ես կնվիրեմ կրոնապաշտներիդ
Դրախտի կաթը, մեղրը անարժեք,
Պայմանով միայն, որ բաժակը այս
Գոնե այս գիշեր ձեռքիցս չստնեք:

نگاه کن که نریزد دهی چو باد به دستم
فدای چشم تو ساقی به هوش باش که مستم
کنم مصالحه یکسر به صالحان می کوثر
به شرط آنکه نگیزند این پیاله ز دستم

* * *

Ծերը գինետան գինի չի տալիս,
Լացս չի լսում Շեխը բանիմաց,
Ես շատ երդվեցի, որ էլ չխամեմ,
Բայց երդումներս այս գինին լվաց:

Շատ գեղեցիկ է նույնպես նրա այն գազելը, որը սկսում է հետևյալ տողով, ուր պարսկերեն բառախաղ է արված «խարաբ»-ի և «արաղի» մեջ: «Խարաբ»-ը միաժամանակ հարբած և ավերված միտք է տալիս:

Այդ բառախաղը հայերենով չի կարելի նույնությամբ արտահայտել, բայց իմ թարգմանության մեջ միտքը նույնն է:

Հարբել եմ այսօր աշխարհի վշտից,
Բայց դեռ աղմուկ է գինետան սեմին:
Խոսենք ընկերներ լեցուն բաժակից
Խորհուրդները ձեր դատարկ են ու սին:

* * *

Հորդել է արդեն կարասը գինու,
Հիմքը հեղեղել բաղաբը այս հին,
Մաքրված հոգով ցնծում են մարդիկ,
Վայ կրոնապաշտի խղճուկ հյուղակին:

Մի ուրիշ գազելի այս երկու բեյթերի մեջ էլ գեղեցիկ նմանություններ կան.

Ով որ իմ նիհար մարմինը տեսնի
Արցունքի լճում,
Կասի ջրի մեջ եղեզ է բուսել,
Թույլ և երեքուն:

* * *

Աչքիս այս բիրը տնաբանդ եղավ
Ցավից սիրակեզ:
Երկար չի ապրի մի տուն, որ հիմքը
Ջրի մեջ դնես:

Այսպիսի գեղեցիկ հաստվածներ շատ կան, որոնց կարելի է անդադար կրկնել: Ես պատահական կերպով, առանց ուշադիր ընտրության, թարգմանել եմ հետևյալ մի քանի բեյթերը:

Սերը կրակ է ու սիրտը այս իմ
Խունկ է ծխացող:
Սա ծոփսն է սրտիս, որ բարձրանում է
Շունչիս հետ այրող.
Սիրտս չգիտեմ ո՞ւմ նետից ընկավ
Արյան մեջ անհուն,
Տեսնում եմ միայն, որ թո թարթիչից
Արյուն է կաթում:

* * *

Աշխարհը մոլոր ու գինու ծարավ,
Մարդիկն աշխարհի հարբած են բոլոր,

ما خراب غم و خمخانه ز می آباد است
ناصر از باده سخن کن که نصیحت باد است

سیل کهسار خم از میکده در شهر افتاد
وای بر خانه پرهیز که بی بنیاد است

ببندم هر که این تن لاغر میان آه و اشک
رفته گوید مو در آتش رسته گوید نی در آب

سینهام مجمر و عشق آتش و دل چون عود است
این نفس نیست که برمی کشم از دل ، دود است
دل ندانم ز خدنگ که به خون خفت ولی
اینقدر هست که مژگان تو خون آلود است

Կարծես թե գինու կարասի տիղմից
Ընտրել է Աստված մարդկության խմոր:

* * *

Քարայից շեղվել, ընկել ենք սխալմամբ
Ճանհան գինետան,
Այս փոքրիկ սխալը արժի Քարայի
Հազար ցնծության:

* * *

Այնժամ երբ տեսա ցորենը խալիդ,
Մտքում ասացի.
«Գանձերը դիզված մեր համբերության
Եվ ունեցվածքի՝
Այս հատիկի վրա — մեջտեղից կերթա»:

* * *

Թե ականջը քեզնից լինի
Ու հատաչը իմ կրծքից՝
Բնական է, որ չի անցնի
Ճիշտ սրտիդ դարպասից:

ՄՆԱՅՈՐԴԱՑ

Ղաջար շրջանում, ինչպես այդ հիշել ենք սկզբում, բանաստեղծների թիվը անհամար է եղել: Համարյա թե ամբողջ արքունիքը գրում էր Ֆաթի-Ալի Շահի, ինչպես և Նասերեդդին Շահի օրոք: Արքունիքից բացի, գրում էին նույնպես «գրչի մարդիկ», այսինքն բոլոր նրանք, որ գրել-կարդալ գիտեին: Նույնիսկ արձակը գրվում էր բանաստեղծական ոճով: Այս շրջանի անվանի բանաստեղծները այն 10 հոգին են, որոնց մասին առանձին բաժիններում հիշել ենք: Գուցե այդ թվի վրա կարելի լինի դեռևս ավելացնել 3 կամ 4 անուններ, որոնք խուսափած լինեն մեր գրչից:

Մեծ ու փոքր ժողովածուների մեջ, ինչպիսիքն են «ԳՈՒԶԱՐԵ ԲԵՆԵԶՄԱՆԻՆ», «ԳՈՒԶԱՐԵ ԱԴԱԲԸ» և մի քանի ուրիշները, հանկարծ հանդիպում եք գեղեցիկ, ինքնուրույն և գողտրիկ մի բանաստեղծության, որի տակ բոլորովին անծանոթ մի անուն է գրված և հիշված է, որ այդ բանաստեղծը «ժամանակակիցն է եղել Ղաջարների»: Իսկ թե այդ բանաստեղծը որտեղ էր, ինչ էր անում, ինչպես է հանկարծ այդպիսի մի գեղեցիկ ԲԵՅԹ գրել, այդ բոլորը անհայտ է և անհասկանալի: Բայց բանաստեղծությունը այդտեղ է, ամբողջ իր գեղեցկության մեջ, և անպայման այդ բանաստեղծը ունեցել է իր սեփական «ԴԻՎԱՆԸ», 20 կամ 60 հազար բեյթից, որ հանկարծ արտագրել է նման մի գոհար: Հարգելու համար այդ անհայտ և բազմահազար բանաստեղծների հիշատակը, մենք խոնարհորեն, բաժակաճառի փոխարեն, թարգմանել ենք նրանցից մի քանիսի հատուկտոր բեյթերը:

Օրինակ որքան գեղեցիկ է Ղաջար շրջանի անհայտ մի բանաստեղծ՝ ՄԻՐՋԱ ՄՈՒՎԱՄԱԴ ԼԱԲԻ ԽԱՆ ԴԱԲԻՐԻ (ծնվ. 1829 — մահ. 1894, Քարոլ, ՀԱՅԵՁԻ ոճով էր ստեղծագործում.— Ն. Մ.) մի գագելի այս չորս բեյթերը, որոնք պարսիկ առաջնակարգ բանաստեղծներին պատիվ կբերեն:

Ծաղիկների ժամանակ է,
Սաղի, կյանքի ջուրն ո՛ր է,
Բոցդ, գինիդ, բույրդ, սերդ,
Սև աչքերիդ հուրն ո՛ր է:

Թե որ մեռնեմ, ասել էիր,
Կգաս մի օր իմ շիրիմին,
Խոսքդ, գիրդ, թուղթդ կնքած,
Նամակներիդ լուրը ո՛ր է:

Բուրաստանում խմողների
Գործը միմիայն գինարբուք է,
Գործդ, տեղդ, թասդ, շիշդ,
Բաժակիդ փրփուրն ո՛ր է:

Թե որ ուզես իմ հոշոտած
Մարմնի վրա աղոթքի գալ,
Կրոն, հավատք, իսլամը քո,
Սիրոս ձեռքած թուրդ ո՛ր է:

ՀԱԶ-ՄԻՐՋԱ ՀԱԲԻԲ ԽՈՐԱՍԱՆՈՒՑ
(1851-1912)

Եկեք մարդիկ, լույսեր բերեք, վառեցե՛ք
Զուլյալ գինով այս կանթեղը սրբազան,
Կեսգիշերին դուրս եմ եկել մզկիթից
Ու կորցրել եմ ճանապարհը գինետան:

برفرور از می چراغی، من ز مسجد نیمه شب
آمدم بیرون و گم کردم ره میخانه را

ՄՈՆՍԵՖԵ ՂԱԶԱՐԻՑ (ՇԻՐԱԶԻ)
(1812-1849, Թեհրան)

Լեցուր բաժակս գինու սափորից,
Նույնն է, մենք գիտենք, ոչ քեզ և ոչ ինձ
Մուսուլմանների բազմության շնորհիվ
Կաթիլ չի հասնի դրախտի ջրից:

بیار باده که بر ما ز کثرت زهاد
نمی رسد کف آبی زجویار بهشت!...

ՄՈՒՎԱՄԱԴ ՔԱԶԵՄԵ ՂՈՄԻԻՑ
(մահ. 1864 թ.)

Ամբողջ գիշերը ականջիս չեկավ
Հարբածի մի ձայն: Ատուված է վկա:
Քանդվի մի քաղաք, ամբողջ իր փառքով,
Որի մեջ մի հատ գինետուն չկա:

یک ناله مستانه زجایی نشنیددم
ویران شود این شهر که میخانه ندارد

ՍԱՄ ՄԻՐՋԱՅԻՑ

Չեն գտնի մեկին մեր այս քաղաքում,
Որը չիմի ու չհարբենա,
Դիվանապետից ու ինձնից բացի,
Որ մենք էլ թաքուն խմում ենք հիմա:

Նույն այս բանաստեղծությունը կարելի է նույնպես թարգմանել հետևյալ ձևով, գերադասելը թողնում ենք ընթերցողին:

Չկա մեկը այս քաղաքում,
Որ չհարբի ամեն գիշեր,
Ինձնից բացի ու մեր Շեյխից —
(Երկու հայտնի հարբեցողներ):

ԹԱՇԵՐԵ ԷՍՖԱՀԱՆԻ (ՂՈՐՐԱԹ-ՕԼ-ԷՅՆ)
(1820-1852)

ԱՆԲԻՇ Թահերեն, որի իսկական անունը ՂՈՐՐԱԹ-ՕԼ-ԷՅՆ էր, որ քառացի-Պորեն նշանակում է «Աչքի լույս» կամ «ԼՈՒՍԱԶՅԱ», Իրանի ժամանակակից պատմության ամենատարօրինակ, խելացի և Բահաի աղանդի ամենապանծացված կինն է: Ապրելով 19-րդ դարում, երբ Իրանը Ղաջարների բռնապետական ամենախավար շրջանն էր ապրում, այդ կինը, արտաքինով հմայիչ, ճարտասանության մեջ անմրցակից, հմուտ աստվածաբան-փիլիսոփա և միաժամանակ բանաստեղծ՝ առաջինն էր ամբողջ արևելքում, որ պաշտպանեց կանանց իրավունքները, քարոզեց նրանց ազատագրությունը և հավասարությունը և որ ամենից ավելի զարմանալի և կարևորն է — անձնական օրինակ տվեց իր քարոզած ազատության, գլխաբաց ներկայանալով տղամարդկանց հավաքություններին և անձամբ մասնակցելով աստվածաբանական վիճաբանություններին: Թահերեն հմուտ արաբագետ էր և աստվածաբան, բայց ինչպես ասացինք, նա միաժամանակ և առաջին կարգի բանաստեղծ էր, որի հոգու մեջ վառվում էր նախնագույն քրիստոնյաների խանդավառ հավատքը: Ավելի ևս շեշտելով այդ նմանությունը, արևմուտքի որոշ պատմագետներ, չկարողանալով այլ կերպ բացատրել այս երևույթը, Թահերենին նմանեցրել են Մարիամ Մագդաղենացուն...

Թահերեն ծնվել է 1819 կամ 1820 թվին, Ղազվինի հոգևորական և մոլեռանդ մի ընտանիքի մեջ: Դեռ մանկամարդ հասակում, նա այնպիսի հազվագյուտ ընդունակություններ ցուցաբերեց, որ հայրը, Իրանի կրթված հոգևորականներից մեկը, իր աղջկա կրթությունը իր ձեռքն առավ, դա արդեն հազվագյուտ մի երևույթ էր 19-րդ դարի Պարսկաստանի համար: Թահերեն լրիվ կերպով ուսումնասիրեց Ղուրանը, աստվածաբանությունը և իսլամական օրենսդրությունը և չկար Ղազվինում մի մոլ-լա, որ կարողանար նրա հետ վիճել այդ խնդիրների շուրջ:

Նրա հոր անունը Հաջի Մոլլա Սալեհ էր: Նա երկու եղբայր ուներ, որոնք նույնպես հայտնի հոգևորականներ էին: Թահերեն 13 տարեկան էր, երբ նրան ամուսնացրին իր հորեղբոր որդու, Մոլլա Մոհամմադի հետ: Ժամանակի այդ հետամնաց հասկացողությանը, որը մինչև այսօր էլ դեռ տևում է, որևէ կրթություն կամ ներհու-նություն օգնել չէր կարող:

Բայց գեղեցիկ Թահերեն այլ բոցով էր վառվում: Նրան չէր հետաքրքրում ամուսնական կյանքը կամ զավակներ, որոնցից ուներ երկու տղա և մի աղջիկ: Նա իր հորեղբոր տանը գտել էր գրքեր, որոնք գրված էին աստվածաբանական նոր խնդիրների շուրջ. այդ գրքերում հիշատակված էր, որ Մարգարեի կանայք ճամփորդում էին բողազերծ, որ Մարգարեն հաճախ խորհուրդ էր տալիս իր աշակերտներին գնալ և խորհրդակցել իրենց կանանց հետ: Այդ գրքերում խոսվում էր, թե ինչպես մահմեդական համայնքը պիտի ազատագրվի իր սնտիհապաշտություններից, աշխարհում պիտի արձագանքի խղճի ազատությունը, պիտի վերացվի մոլեռանդությունը, պիտի իշխի կատարյալ հավասարություն սեռերի, հավատքների և դասակարգերի մեջ: Դրանք նորություններ էին, որոնք գերեցին գեղեցիկ Թահերենի հոգին:

Այդպիսի ներշնչմամբ է, որ Թահերեն, տարիներ հետո, գրել է իր հայտնի բանաստեղծություններից մեկը.

*Շեյխը չի բազմի գահին ստության
Մզկիթն չի դառնա սրբության շուկա,
Աշխարհն մաքրված սուտից սնտի
Ազգերն կփշրեն կապանք ու շղթա:
Եվ ամենուրեք, հավասար մարդիկ,
Գորգն արդարության կփռեն ուրախ,
Աշխարհում կիշխի, անասան ու վեհ,
Համամարդկային հավատքը անխախտ:*

Թահերեն, խորապես ազդված այդ հատորներում արտահայտված մտքերից, որոշում է իր թրոջ ընկերակցությամբ, ճամփորդել Միջագետք, Քարբալա և Նաջաֆ և այնտեղ մոտից ծանոթանալ այդ գրքերի հեղինակներից մեկին, Սեյյեդ Քազեմն Ռաշտիին: Հայրը, որը արդեն անհանգստանում էր իր աղջկա անուղղափառ գաղափարներից, մտածում է, որ Քարբալայի ճամփորդությունը կարող է բարեհա-

ջող ազդեցություն ունենալ Թահերենի վրա և անմիջապես տալիս է իր համաձայնու-թյունը: Թահերեն և քույրը ճանապարհվում են Քարբալա: Այդ ճամփորդությունը տեղի է ունենում 1843 թվին, երբ Թահերեն միայն 23 տարեկան էր:

Հասնելով Քարբալա, Թահերեն անմիջապես այցելում է Սեյյեդ Քազեմ Ռաշտի-ին, բայց այդտեղ նրան լուր են տալիս, որ ծերունի Սեյյեդը վախճանվել է 10 օր առաջ: Թահերեն, այդուհանդերձ, կարծես ավելի մոտ լինելու համար իր անձանոթ ուսուցչի հոգուն, քնակություն է հաստատում նրա տանը և ժամանակի ընթացքում կարողանում է մոտից ծանոթանալ Սեյյեդի անտիպ գրվածքների հետ:

Թահերեն երեք տարի մնաց Քարբալայում: Իսլամական այս սրբավայրում պատմության մեջ առաջին անգամ լինելով մի կին, Անբիծ Թահերեն, սկսում է դասավանդել: Նրա շուրջ հավաքվում են բազմաթիվ ունկնդիրներ, բոլորը տղամարդիկ և Թահերեն, չընդվզեցնելու համար կղերականներին, դասավանդում է մի վարագույրի հետևից, առանց իրեն ցույց տալու իր աշակերտներին: Դա արդեն անսխալ ընթաց մի հանդգնություն էր, քանի որ նույնիսկ կնոջ ձայնը չպիտի լսվեր հարեմից դուրս մի շրջանում:

19-րդ դարի առաջին հիսնամյակի ընթացքում Արևելքի և հատկապես Իրանի հոգևորականության մեջ ուժեղ հոսանքներ էին առաջացել բարեփոխելու կղերականությունը և մաքրելու կրոնը կուտակված նախապաշարումներից: Հակառակ ժամանակվա երթևեկության դանդաղ միջոցների և հոգևորական կենտրոնները իրարից բաժանող մեծ տարածության, Իրանի և Միջագետքի զանազան շրջաններում, հատկապես Քարբալայում, Շիրազում, Ղազվինում, Սպահանում և Թեհրանում այդ շարժումները միաժամանակ էին սկսվել: Հետևաբար զարմանալի չէր, երբ երիտասարդ մի հոգևորական, Սեյյեդ Ալի Մոհամմադ անվամբ, 1844 թվի մայիսի 23-ին ինքն իրեն հայտարարեց Մահմեդական աշխարհի սպասված Փրկիչը, ՂԱԵՄԸ, իսլամի անհայտացած 12-րդ էմամը: Նա իրեն կոչեց ԲԱԲ (ԴՈՒՌ) և Իրանի առաջադեմ հոգևորականների սովոր մի խմբակ անմիջապես ճանաչեց նրան որպես նա՝ «ՈՐ ՊԻՏԻ ԲԱՐՁՐԱՆԱ ՄԱՐԳԱՐԵԻ ՏՆԻՑ»:

Բաբի հետևորդներից մեկն էր նաև Անբիծ Թահերեն, որը երբևիցե չէր հանդիպել Բաբին և մինչև վերջ էլ չտեսավ նրան:

Թահերեն, իրեն հատուկ հանդգնությամբ, սկսեց բացահայտ կերպով քարոզել Բաբի վարդապետությունը: Երբ բարձր հոգևորականները տեղեկացան, որ մի կին, այն էլ Քարբալայում և Նաջաֆում, որը կենտրոնն էր կղերականության և ուղղափառ վարդապետության, հետևում և քարոզում է հերձվածային մի նոր աղանդ, նրանք խստորեն բողոքեցին օրվա կառավարության: Քաղաքապետը անմիջապես շրջապատել տվեց Թահերենի քնակարանը և արգելեց որևէ մեկի տեսակցել նրա հետ: Հետո նա պաշտոնական զեկույց ներկայացրեց կենտրոնական կառավարու-թյանը Բաղդադում, հարցնելով, թե ինչպես պիտի արդյոք վարվի այդ հերետիկոսի հետ: Բայց պատասխանը կենտրոնից ուշանում էր և քաղաքապետը, պաշտպանելու համար Թահերենի կյանքը, ստիպված եղավ նրան փոխադրել Բաղդադ:

Բաղդադումն էլ Թահերեն հանգիստ չմնաց և շարունակում էր քարոզել, մեծ բազմություն հավաքելով իր շուրջ: Նա քարոզում էր համամարդկային սեր, նախա-

պաշարումների վերացում, կանանց իրավունքների հավասարություն, կրոնական արգելքների վերացում: Նա նույնիսկ վիճարանական մենամարտի էր հրավիրում Բաղդադի մեծ հոգևորականներին, և չտեսնված տրամաբանական ճարտասանությամբ և իրեն հատուկ խանդավառությամբ պարտության էր մատնում նրանց: Խնդիրը հասավ մի տեղ, որ այդ հանդուգն և անվեհեր կինը անձամբ գնաց Բաղդադի Մեծ Մուֆտիի մոտ և նրան էլ փորձեց դարձի բերել: Բաղդադի Մեծ Մուֆտին այդ ժամանակ Շեյխ Օլուսին էր, որի տանը Թահերեն մնաց չորս ամիս, որպես պատանդ: Շեյխ Օլուսին հետագայում վկայել է, որ Թահերենի պես խելոք և կրթված մեկին ոչ միայն կանանց, այլև տղամարդկանց մեջ էլ չէր հանդիպել:

Այդ ժամանակ էր, որ Իրանի Ղաջար թագավոր Նասերեդդին Շահը ճամփորդեց Միջագետք, այցելելու համար սրբազան վայրերը: Նրան ընկերակցում էր նաև նրա պալատական բժիշկ Հաքիմ Մասիհը, որը ծագումով հրեա էր: Հաքիմ Մասիհը մի քանի անգամ հետաքրքրության համար այցելեց Թահերենին և ներկա գտնվեց նրա քարոզներին: Լսելով վարագույրի հետևից խոսող կնոջը, նա այնքան ոգևորվեց, որ լսած չլինելով Բաբի անունը, կարծեց, որ հենց այս կինն է Խոստացված Փրկիչը: Թեհրան վերադառնալուց հետո էր միայն, որ նա հասկացավ իր սխալը, բայց դա չարգելեց, որ նա դառնա օրվա ամենախանդավառ **բաբիներից** մեկը:

Վերջապես, երկար ժամանակից հետո Տաճիկ Սուլթանից հրահանգ հասավ Բաղդադ ազատ արձակել Թահերենին, պայմանով, որ նա անմիջապես հեռանա Տաճկական հողերից: Թահերեն, 30 ուրիշ համախոհների հետ ճանապարհվեց Իրան: Նրան մեծ ոգևորությամբ ընդունեցին Քերմանշահում և Համադանում, քանկանաբար տիաճելի միջադեպեր էլ պակաս չէին: Համադանում նահանգապետը այցելեց Թահերենին, իշխանուհիները եկան նրան տեսության, բահախները, որոնց մեջ մեծ թվով հրեաներ կային, ընդառաջ եկան նրան: Թահերենի համբավը օրեցօր աճում և ծավալվում էր Արևելքում: Եվ դա տարօրինակ չէր: Ինչպես Էդ. Բրաունն է գրում՝ «Նման մի կնոջ հայտնությունը որևէ երկրում և որևէ ժամանակ՝ հազվագյուտ մի երևույթ է, բայց Իրանի պես մի երկրում դա կատարյալ հրաշք էր: Իր սքանչելի գեղեցկությամբ, իր իմացական հազվագյուտ ընդունակություններով, իր անսասան հավատքով և իր փառավոր մարտիրոսացմամբ, նա կանգնած է աշխարհի կանանց առաջին շարքերում:

Համադանից Թահերեն մտադիր էր ուղղակի գալ Թեհրան և ներկայանալ թագավորին: Բայց հայրը կանխելով նրան, ուղարկում է մի խումբ մարդկանց նրան ընդառաջ և խնդրում է նրանից նախ գալ Ղազվին և տեսակցել իր հետ: Թահերեն ուղևորվում է Ղազվին: Բայց նրա հայրենի քաղաքում կրոնական հակամարտությունը շատ վտանգավոր սահմանների էր հասել: Թահերենի ամուսինը, ուղղափառ մի **մուլլա**, շտապեց կնոջը ապահարզան տալ և մի կողմ քաշվել: Հորը ստիպեցին բանադրել աղջկան և հերետիկոս հայտարարել նրան: Թահերենի հորեղբայրը, որը միաժամանակ նրա ամուսնու հայրն էր, կատաղի հակառակորդն էր **բաբիների**: Տաք մի վիճարանության ժամանակ հորեղբայրը լկտիորեն հայիոյում է Բաբին և հարվածում է հարսին մի քանի անգամ: Թահերեն չի կորցնում իր սառնարյունությունը և միայն ասում է.

— Օհ, հորեղբայր, ես տեսնում եմ, թե ինչպես բերանդ լցված է արյամբ:

Նույն օրը հորեղբայրը, որը Ղազվինի բարձրագույն հոգևորականը և Էմամ Ջոմեն էր, գտնում են մզկիթում սպանված: Դանակով հարվածել էին նրա բերնին և նրա բերանը լցվել էր արյամբ:

Բնական էր, որ բոլորի աչքերը դարձան դեպի Թահերեն: Ղազվինի ուղղափառ ժողովուրդը սուկալիորեն վրդովված էր և Թահերեն վտանգի մեջ էր: Փրկելու համար նրան խուժանի վրիժառությունից, Ղազվինի նահանգապետը ստիպված եղավ նրան արգելափակել, բայց քիչ հետո, շրջապատի ճնշման տակ, հանձնեց նրան կղերականներին, դատելու համար: Հարցաքննությունները որևէ արդյունք չտվեցին և սպանության խոստովանությունը կորզելու համար Թահերենի բերնից, որոշեցին նրան ենթարկել չարչարանքների: Արդեն պատրաստել էին թե՛ երկաթները խարանելու համար Թահերենին, երբ Էմամ Ջոմեի սպանողը ինքնակամ անձնատուր եղավ: Դա մի երիտասարդ հոգևորական էր, Մոլլա Սալեհ Շիրազի անվամբ: Մինչև այսօր էլ դեռ անհայտ է, թե Թահերեն որքան խառն է եղել այդ սպանության մեջ, բայց նրա հսկայական ազդեցությունը **բաբիների** վրա անպայման վճռական դեր է խաղացել այս սպանության դեպքում:

Այդ ժամանակ էր արդեն, որ Բահաուլլան, ազնվական ընտանիքից սերած մի հոգևորական, Թեհրանում իր շուրջն հավաքելով բաբիներին, նրանց պարագլուխի դերն էր ստանձնել: Նա դեռ չէր հայտարարել իր սեփական **Հայտնությունը**, որը նա արեց Բաղդադում, 1863 թվին:

Թահերեն՝ ծպտված ուղևորվեց Թեհրան և իջավ Բահաուլլայի տանը: Բահաուլլան գեղեցիկ մի տուն ուներ Թեհրանում և ընդարձակ մի պարտեզ ամառանոցում: Նա նույնպես չէր տեսել Բաբին և ծանոթ էր նրա հետ նամակագրությամբ միայն: Բաբը այդ ժամանակ բանտարկված էր Մաբուի ամրոցներից մեկում և սպասում էր մահվան, նրան գնդակահարեցին Թավրիզում: 1850 թվի հուլիսի 9-ին:

Բաբիների առաջին մեծ հանդիպումը տեղի ունեցավ Բաղաշտ կոչվող վայրում: Այստեղ էր, որ Թահերեն առաջին անգամ իսլամական ավանդության մեջ, դուրս եկավ տղամարդկանց մեջ քողազերծ և հասկանալու համար, թե որպիսի խիզախություն էր նրա արածը, բավական է հիշել, որ ըստ ավանդության, մի քանի հոգի իր իսկ համախոհներից, տեսնելով այդ՝ փորձել էին ինքնասպանություն գործել:

Շրջապատի գյուղերի կատաղած և մոլեռանդ քնակիչները հարձակվում են համախմբված բաբիների վրա և ցրում են նրանց: Վերադարձի ճանապարհին Թահերենին ձերբակալում են կառավարական ուժերը և բերելով Թեհրան, արգելափակում են նրան Մահմուդ Խան Քալանթարի տանը:

Նասրեդդին Շահը հետաքրքրվում է Թահերենով և հրամայում է ներկայացնեն իրեն այդ տարօրինակ կնոջը: Թահերեն ներկայանում է թագավորին: Նասրեդդին Շահը հավանում է նրա արտաքինը և հիանում է նրա խելացիությամբ: Նա հայտարարում.

— Ես հավանեցի այս կնոջը: Ազատեցեք նրան և թող նա հեռանա խաղաղությամբ:

Բայց այդպես չէին մտածում կղերականները, որոնց անհանգստացնում էր Թահերեի ներկայությունը մայրաքաղաքում: Նրան նորից տանում են Քալանթարի տունը և արգելափակում: Մի քանի օրից հետո Շահը, որին անհանգստացրել էր Թահերեի գեղեցկությունը, նամակով դիմում է նրան և առաջարկում է հրաժարվել իր աղանդից և դառնալ իր հարեմի վերահսկիչը: Նույնիսկ խոստանում է ամուսնանալ նրա հետ:

Թահերեն նույն այդ նամակի հետևի էջի վրա գրում է հետևյալ բանաստեղծությունը և ուղարկում է թագավորին.

*Թող քեզ մնա իշխանություն և բարիք,
Կյանքը թող ինձ դարմիշների աղքատիկ,
Թե դա լավն է, թող քեզ մնա հավիտյան,
Թե սա վատն է, թող ինձ լինի արժանի:*

Ավանդությունը պատմում է, որ Նասրեդդին Շահը, կարդալով այդ տողերը, հիանում է Թահերեի բարձր արժանիքների վրա և բացականչում.

— Մենք դեռ այս կյանքում չէինք տեսել այսպիսի մի կին:

Այս միջադեպից քիչ հետո էր, 1852 թվի օգոստոսին, որ թագավորից գաղտնի և կղերականների սադրանքով՝ սպանեցին Անբիծ Թահերեին: Նա այդ ժամանակ 32 տարեկան էր միայն:

Տարբեր փոփոխակներ կան Թահերեի սպանության վերաբերմամբ: Ամենավատահելին Քալանթարի անդրանիկ որդու պատմությունը պիտի լինի: Թահերեն բանտարկված էր նույն այդ Քալանթարի տանը և նրա որդին ականատես է եղել նրա մահվան:

Ահա թե ինչ է պատմում Քալանթարի որդին.

«Այն գիշեր, երբ Թահերեին սպանեցին, նա առավոտից կարծես նախագգում էր իր մահը: Այդ օրը նա լողացավ, փոխեց բոլոր իր հագուստները և իջնելով իր փորիկ սենյակից, մտավ հորս հարեմը և ճամփորդ մեկի պես՝ բոլոր կանանցից մեկ-մեկ հրաժեշտ առավ:

Վերջալույսին, ըստ իր սովորության, նա քայլում էր պատշգամբում: Ոչ ոքի հետ չէր խոսում, բայց ինքն իրեն ինչ-որ բաներ էր մրմնջում: Այդպես շարունակվեց մինչև երեք ժամ վերջալույսից հետո:

Այդ գիշեր էր, որ հայրս եկավ սենյակս և ասաց.

— Ես բոլոր պետք եղած նախագգությունները ձեռք եմ առել և պահակներ եմ նշանակել քառուղիների վրա: Դու պիտի այս գիշեր տանես այս կնոջը Իլխանի պարտեզը և հանձնես նրան Ազիզ Խան Սարդար-Քոլլին: Կմնաս այնտեղ մինչև գործը վերջանա և կգաս ինձ լուր կտաս, որպեսզի ես թագավորին տեղեկացնեմ:

Երբ հորս հետ բարձրացանք աստիճանները և մոտեցանք Թահերեի սենյակին, տեսանք, որ նա պատրաստ է:

Հայրս ասաց.

— Ելի՛ր, կին, քեզ մի ուրիշ վայր պիտի տանենք:

Առանց տատանվելու Թահերեն ոտքի ելավ և մեզ հետ եկավ: Երբ հասանք փողոցի դռան, ես տեսա, որ հորս ձին թամբած և մեզ է սպասում: Թահերեն հեծավ ձին և հայրս իր սեփական աքբան ձգեց նրա ուսերին, որպեսզի նա չճանաչվի: Մի խումբ ծառաների հետ մենք ճամփա ընկանք և կողմնակի փողոցներով հասանք Իլխանի պարտեզը:

Ես բարձրացա աստիճանները և ներկայացա Սարդարին: Նա մենակ էր և սպասում էր մեզ: Ես հաղորդեցի նրան հորս ողջույնը:

— Ոչ ոք ձեզ ճանապարհին չճանաչեց:

— Ոչ ոք:

Հետո Սարդարը ներս կանչեց զինված մի սպասավորի, ողջունեց նրան բարեկամորեն, հարցրեց նրա առողջությունը և հետո ասաց.

— Քո ճամփորդության համար դու նվեր ստացել ես, թե ոչ:

— Ոչ, Տեր,— պատասխանեց սպասավորը:

Սարդարը նրան մի բուռ ոսկի տվեց և ասաց.

— Առա՛ջմս սա ունեցիր, հետո ավելին կստանաս...

Հետո ավելացրեց.

— Ահա քեզ այս մետաքս թաշկինակը: Գնա և վերջ տուր անհավատ կնոջը, որը սպասում է իր ճակատագրին:

Ծառան դուրս եկավ սենյակից և ես հետևեցի նրան: Նա մտավ այն սենյակը, ուր սպասում էր Թահերեն և ես կանգնեցի դռան հետև: Երբ ծառան մոտեցավ Թահերեին, Թահերեն նայեց նրա դեմքին և ինչ-որ մի բան մրմնջաց, որ ես չլսեցի: Ծառան դանդաղորեն դուրս եկավ սենյակից, գլուխը կախ, ինչ-որ բաներ մոմոտլով: Ես վերադարձա Սարդարի մոտ և պատմեցի նրան եղելությունը: Ես տեսել էի, թե ինչպես ծառան չէր համարձակվել կատարել իր առաքելությունը և շժմած դրության մեջ հեռացել էր:

Սարդարը մտահոգվեց և գլուխը կախեց: Ապա հրամայեց սուրճ բերել: Մի քիչ մտածելուց հետո, նա կանչեց իր անձնական Ֆարրաշին և ասաց.

— Մի քանի օր առաջ ես վնդեցի մի խափշիկի իր անվայել արարքների պատճառով: Ո՛ւր է նա հիմա:

Ֆարրաշը պատասխանեց, որ խափշիկը այժմ գործում է խոհանոցում:

— Բեր նրան այստեղ,— հրամայեց Սարդարը:

Քիչ հետո, կեղտոտ մի խափշիկ, ահռելի տեսքով, մտավ սենյակը:

— Ահա տեսնում ես, թե որպիսի թշվառ վիճակի ես մատնվել քո անվայել արարքներից համար: Եթե այժմ զղջաս և ներում խնդրես, ես քեզ կվերադարձնեմ քո նախկին պաշտոնը:

Խափշիկը խոնարհվեց և ասաց.

— Տեր, ես այլևս միշտ կպատկանեմ քեզ ու կկատարեմ քո հրամանները:

— Շատ լավ: Գնա մյուս սենյակը և մի գավաթ օձի թույն լակիր (խոսքը գինու մասին էր) և երբ վերադարձար՝ անելիքդ կասեմ քեզ:

Նա գնաց և քիչ հետո վերադարձավ:

Սարդարը ասաց.

- Դու քաջ մարդ ես և անվախ: Կարող ես արդյոք մի կին խեղդել:
- Այո, Տեր, եթե նույնիսկ նա հազար հոգի ունենա իր մարմնին մեջ:

Խափշիկը դուրս գնաց և ես հետևեցի նրան, քանի որ պիտի հավաստի լուր տաների հորս համար:

Ես տեսա, թե ինչպես խափշիկը մոտեցավ Թահերեհին, արագորեն փաթաթեց մետաքսյա թաշկինակը նրա պարանոցին և այնպիսի ուժով սեղմեց, որ կինը ուշաթափ փովեց գետին: Հետո նա քացով զարկեց նրա կողքերին և կրծքին և մի ուրիշ ֆարրաշի օգնությամբ նրան տարավ պարտեզի հարավային կողմը և նետեց չորացած մի ջրհորի մեջ և հետո մեծ քանակությամբ հող և քար լցրեց հորի մեջ:

Ես վերադարձա տուն և եղելությունը պատմեցի հորս»:

ԹԱՀԵՐԵԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անգլիացի հայտնի իրավագետ Էդուարդ Բրաունը հետևյալն է գրում Թահերեհի մասին. «Բաբի շարժման մեջ մեծ դեր է խաղում Թահերեհի տիպարը: Գեղեցիկ և հղկված Ղորբաթ էլ էլնը (Լուսաչյա) հերոս էր, բանաստեղծ և մտածող: Չնայած ես մեծ ցանկություն ունեի ձեռք ձգել նրա բանաստեղծությունները, իմ ջանքերը շատ սահմանափակ արդյունք տվեցին: Շիրազի բաբինների մոտ չկարողացա գտնել նրա քերթվածները և լսեցի, որ Ղազվինում, Համադանում և Թեհրանում ավելի հեշտ կլինի ձեռք բերել այդ բանաստեղծությունները: Յազդում ես տեսա նրա երկու գազելների օրինակները:

Սա արդեն ցույց է տալիս, թե որպիսի բժախնդրությամբ էին պահպանվում Թահերեհի բանաստեղծությունները, բահաի շարժման նախնական շրջանում: Դրանից հետո, զանազան կենսագրական աշխատությունների մեջ հրատարակվել են Թահերեհի բանաստեղծությունները, ինչպես և նրա նամակները և ուղերձները, հղված օրվա մեծ հոգևորականներին: Հատկապես ազդեցիկ է Թահերեհի արձակագրական ոճը, որը կուռ, իմաստալից և գրված է հազվագյուտ գեղեցկությամբ, հաճախ հիշեցնելով Իրանի 10-րդ և 11-րդ Ոսկեդարի անպաճույճ, հղկված և մեծարժեք պատմագրությունների ոճաբանությունը: Դժբախտաբար այդ արձակ գրվածքների բովանդակությունը բացառորեն հոգևոր և փիլիսոփայական բնույթ ունի և դրա թարգմանությունը մեզ համար հետաքրքրություն չի կարող ունենալ:

Բանաստեղծությունների տեսակետից մենք մեծ ընտրություն չունենք: Թահերեհի գազելների մի մասը արաբերեն է և այն փոքրիկ թվով հատվածները, որ նա գրել է պարսկերեն լեզվով, մեծամասնաբար նույնպես փիլիսոփայական բովանդակություն ունեն: Պարսիկ գրականության մեջ մեծ ժողովրդականություն է վայելում նրա մի գազելը, նվիրված Բահաուլային, որը սկսվում է հետևյալ տողերով.

*Թե տեսնեմ քեզ մի օր պատահմամբ, դեմ առ դեմ,
Յալի իմ կեռ առ կեռ, մազ առ մազ կպատմեմ,
Փնտրում եմ սիրածիս, ասացեք, ո՞ր է, ո՞ր,
Ընկել եմ թաղեթաղ, տնետուն, դռնեղուս:*

گر به تو افتدم نظر چه به چه ره رو به رو
شرح دهم غم تو را نکته به نکته مو به مو
از بی دیدن رخت همچو صبا فتاده ام
خانه به خانه در به در کوجه به کوجه کو به کو

Ընդհանրապես Թահերեհի գազելները ուրույն չափականություն և հանգավորում ունեն, որը չափազանց քաղցր է հնչում բնագրում:

Մարթա Լ. Ռութը իր «Անթիծ Թահերեն, Պարսկաստանի Մեծագույն Կինը» գրքի մեջ հաջողել է հավաքել Թահերեհից յոթ գազել, որոնցից մեկը վերագրվում է Նաբի-լին, որը Բահտինների պատմագիրն է:

Ահա մի ուրիշ հատված Թահերեհի գեղեցիկ գազելներից, ուր աշխատել եմ պահպանել բնագրի հանգավորումը:

*Այս առավոտյան դաժան սիրուհիս
Եկավ մոտեցավ մեղմիկ սնարիս,
Ու նրա դեմքի փառքում իմ հոգիս
Լուսաշող դեմքը տեսավ աշխարհի:
Խոթանի մուշկը նրա գետերի
Բույրովն էր հարբել ու նրա վայրի
Հայացքն աչքերի թրով երկասյրի
Տապալեց հավատքս երկհազարամյա:*

Վերի գազելը նույնպես նվիրված է Բաբին: Մի ուրիշ հավաքածուի մեջ հանդիպել ենք այս մի տուն բանաստեղծության, ուր սուֆիական խորհրդապաշտ շունչ կա:

*Միննույն կարասից, մեր կյանքի Սաղին
Ինձ կաթիլ տվեց, իսկ քեզ՝ հազեցում.
Դժվար է մտնել Սիրո ասպարեզ,
Որ հազար հոգուց մեկն է դիմանում:*

Թահերեն, պարսիկ առաջին մարտիրոսը կանանց ազատագրության ճանապարհին, որի անունը այդուհանդերձ, նրա Բահաի լինելու հանգամանքով, համարյա թե անձանթ է պարսիկ հասարակության, անվեհեր կերպով մտել է Սիրո այդ ասպարեզը, ուր և զոհվեց, բայց իր առաքելությունը լիովին կատարելուց և իր անունը անմահացնելուց հետո միայն:

ՂՈՒՄԱՐ ՀԱՄԱԴԱՆԻ (ծնվ. 1850 — մահ. 1907, Համադան)

*Տան անկյունից բարձրանում է
Փոթորիկը իմ հոգուերի,
Փրկիր Սաղի, բաժակը տուր,
Որ դա նավն է իմ հույսերի:*

بیا ساقی بیاور کشتی می
که طوفان غم از کاشانه برخاست

ՍԱՐԽՈՇ ԹԱՖՐԵՇԻ
Հատված՝ մի գազելից

Առավոտ է, անուշ Սաղի,
Տուր ինձ շուրթդ քաղցր ու աղի,
Ճամփա մի տուր ցավ ու դաղի,
Լեցրո՛ւ բաժակը մոզական:

Սեր ու զինուց, այնքան վաղուց,
Խորհուրդներ եմ լսել սաղուց,
Որ կկտրեմ նորից էգուց
Երդումները իմ երեկվա:

Անտեղյակ եմ սրտիս բոցից,
Չեմ վախենում սիրո խոցից,
Օտար հաճույք է հեշտալից
Կրակ նետվելն փարվանայի:

Այս աշխարհը փուչ է և զուր,
Միրտդ ցավի երբեք մի տուր,
Ինչ միտք ունի, սրտով թափուր՝
Վրան զարկես ավերակում:

Ամբողջ մի տարի կարող ենք այսպես շարունակել: Բայց այնքան հարուստ է պարսկական բանաստեղծությունը, որ նույնիսկ Ղաջար թագավորների ՀԱՐԵՄԻ բանաստեղծուհիների սիրո և հուսահատության, խորամանկության և դավաճանության, հավատարմության և լավ ուտելիքների մասին քերթվածների մի հազարերորդը թարգմանելու համար մի քանի հատոր է պետք:

Սրանով մենք մի ՄԻՋԱԿԵՏ ենք դնում 1500 թվից մինչև 1900 թիվ ապրած բանաստեղծների վրա, տալով միայն թոուցիկ մի ակնարկ Պարսկաստանի վերջին 400 տարիների բանաստեղծության գրականության:

ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԱՂԱՆԴՆԵՐԸ ԻՐԱՆՈՒՄ

«ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎՈՐ ԴՆԵՐԻ» ԱՂԱՆԴԱՅԻՆ ՊԱՇՏԱՍՈՒՆՔԸ

Պարսկաստանում դեռևս շատ տարածված է «Ալի ալլահի» կամ «Աիլն հադ» աղանդը, որի հետևորդները Ալի էքնե Աբու Թալեբին, Մարգարեի հորեղբորորդուն և փեսային պաշտում են որպես աստվածություն: Նրանք իրենց հատուկ սովորություններն ունեն, շատ տարածված են Պարսկաստանի թափառական ցեղերի մեջ և նրանց պաշտամունքի արարողությունը հատուկ հետաքրքրություն է ներկայացնում, բայց իր գաղտնի հանգամանքի պատճառով, անհայտ է շատերին: Հատկապես Շիա ուղղափառները, որոնք կազմում են քաղաքաբնակ Պարսիկների մեծամասնությունը, անձանոթ են Ալի Ալլահիների աղանդին և նրանց ծիսակատարություններին և նրանց վերագրում են այնպիսի առասպելական տարօրինակություններ, որոնք հիմնված են միայն անորոշ ասմունքների վրա:

Այս տողերը գրողը, 8 տարեկան հասակում հազվագյուտ պատեհությունն է ունեցել ներկա գտնվել այդ աղանդի պաշտամունքին. այդ այցելությունը մեծ դժվարությամբ հաջողեցրել էր հանգուցյալ հայրս, Հովսեփ Միրզայանը, ի պատիվ Իրան այցելած Պրոֆ. Մառի: Յ. Ն. Մառը մանրամասնորեն նկարագրել է իր այցելությունը և տպավորությունները, որը հրատարակվել է նրա անվան նվիրած մի ժողովածուում, 1939 թվին (Յ. Ն. Մառ, «ՀՈՂՎԱԾՆԵՐ ԵՎ ԶԵԿՈՒՅՑՆԵՐ», Երկրորդ Հատոր, Հրատ. ՍՍՈՒՄ-ի Գիտական Ակադեմիայի, 1939, էջ 248-254 — Ռուսերեն լեզվով):

Այդ պաշտամունքի նկարագրությունը թողնում ենք Պրոֆ. Մառին, ստորև տալով նրա «Զեկույց»-ի ամբողջական թարգմանությունը:

* * *

«Մի Ուրբաթամուտ գիշեր, 1925 թվի Ապրիլ 23-ին, մենք արժանացանք ներկա գտնվել Թեհրանում «Ճշմարտության Հետևորդների» պաշտամունքի արարողությանը: Մեզ հրավիրել էր Բախտիարցի մի ցեղապետ, Հովսեփ Խան Միրզայանի⁴⁷ միջոցով:

⁴⁷ Ծնված Սպահանի Ջուլֆայում (?): Հովսեփ Խանը Պարսից կառավարության պաշտոնյա է և մեծ կապեր ունի ժողովրդի ամենատարբեր խավերի ներկայացուցիչների հետ: Նա շատ

Երևկոյան մենք հավաքվեցինք Ս. Սիմոնյանի տանը և ուղևորվեցինք դեպի քաղաքի հարավային կողմը, Սեփահ պողոտայից ցած: ԴՈՐՈՇԿԱՆ (երկձի կառք) մեզ տարավ մինչև մի ինչ-որ նեղ փողոց: Փողոցի ծայրին մեզ սպասում էր մի մարդ, լապտերը ձեռքին: Շրջապատը լուռ էր և հանդարտ և միայն հեռվից լսվում էր մի դարվիշի պարզ և հստակ երգը: Լապտերավոր մարդը մեզ առաջնորդեց նեղ և ծուռ ու մուռ փողոցներով: Մենք երկար քայլեցինք: Վերջապես, բարձրանալով մի քանի աստիճան, մենք անցանք ոլորապտույտ մի նրբանցք, մտանք մի բակ և մեզ գտանք մի մեծ լուսավոր սենյակի առաջ:

Բոլոր **օրոսիները** (ցածից դեպի վեր քաշվող պատուհաններ) բարձրացված էին և մենք տեսնում էինք սենյակի ներքը, որը լեցուն էր գետին նստած Պարսիկներով: Անցնելով բակը այդ սենյակի մոտով, և բարձրանալով մի քանի աստիճան, մենք տեսանք մի ուրիշ փոքրիկ սենյակ, ծածկված գորգերով, որի պատերի տակ և մեջտեղում լուռ նստած էին մի քանի մարդիկ: Այդ սենյակի միջով մենք գտանք մի առանձնասենյակ, որը պատրաստված էր մեզ համար:

Այս փոքրիկ սենյակի հատակը մուռ մի արշին ավելի բարձր էր այն սենյակի հատակից, ուր պաշտամունքը պիտի կատարվեր և որը մենք տեսել էինք դրսից: Մեր առանձնասենյակը հաղորդվում էր այդ սրահի հետ երկու դռներով, որոնք փեղկերից հանված էին: Երբ մենք ներս մտանք, սենյակում արդեն ներկա էին մյուս հրավիրյալները: Բոլորը տեղավորվեցինք, ոմանք գետնի վրա, հառաջամասում և ոմանք աթոռների վրա, սենյակի խորքում: Հրավիրյալները քիչ էին և ինձ էական է թվում հիշել թե ովքեր կային այնտեղ և ինչ էր մեր մոտավոր թիվը: Այդտեղ էր մեր հյուրընկալ Բախտիարցի Խանը, Սարդար Ասադը, հետո Շահ-Նեմաթլահի դարվիշների պարագլուխներից մեկը՝ Օլով-էլ-Մուլը, հետո մի պարսիկ բժիշկ և մի քանի այլ պարսիկներ: Ոչ-Պարսիկներից ներկա էին Հ. Միրզայանը, Ս. Սիմոնյանը, և ռուս մի պաշտոնյա և ես: Բոլորը եկել էին իրենց կանանցով, իսկ Միրզայանը բերել էր նաև իր որդուն, 8 տարեկան մի տղայի⁴⁵: Մեզնից խնդրեցին չծխել: Մեր առաջ գտնվող մեծ սրահը, որքան հիշում եմ, լուսավորված էր ապակե կակաչների (լալե) մեջ վառվող մոմերով: Զգեստավորված **դաքաններով** և բարձր գլխարկներով, բոլորը երկար և ցածից խուզված բեղերով, խիստ կարգապահությամբ նստել էին **նիսգի** (պաշտամունքի) մասնակիցները, ծալապատիկ, պատերի տակ և սենյակի մեջտեղում:

Մեր աջ կողմը, սրահի անկյունի մոտ, կախված էր ձերմակ սավանով ծածկված մի հայելի կամ մի նկար: Դրա տակ նստած էր շալմայավոր **մորշեղը**:

Մենք հասել էինք ձիշտ հացկերույթի ժամանակ, որը ընդհանրապես նախորդում էր պաշտամունքին:

Պաշտամունքը կատարվում է շաբաթը մեկ անգամ: Ընթրիքը սովորաբար համեստ է, բաղկացած **սանգակ** հացից և պանիրից: Բայց այս անգամ հյուրասիրում էր

զարգացած մի անձնավորություն է, քանաստեղծ, հեղինակը հայերեն մի շարք թարգմանական գրքերի: Նրա գրչին է պատկանում Խայրամի քաղաքի թարգմանությունը, հրատարակված Թեհրանում:

⁴⁵ Դա նվաստս էր: — Ջ. Մ.

պաշտամունքի այցելուներից մեկը, շատ հարուստ և ազդեցիկ Բախտիարցի Խանը, Սարդար Ասադը, որը հրավիրել էր մեզ: Ընթրիքը տեղի ունեցավ շատ հանդիսավոր ձևով, կատարյալ լռության մեջ: Սպասարկում և ընթրիքը բաժանում էին իրենք՝ մասնակիցները: Հսկա մետաղե պողնոցների վրա, **սինի**, մի քանի անգամ ներս բերեցին բրինձ, հետո՝ միս: Ամեն մասնակից ուներ իր պնակը: Պողնոցները մոտեցնում էին երկու Պարսիկների, որոնք նստած էին միջին խմբակի մեջ, դեմքերը մեզ դարձրած: Նրանցից մեկը պնակը լեցնում էր կերակրով, մյուսը վերցնում էր մի քանի կտրտած հացի կտոր, որի կույտերը դրված էին նրա առաջ, և դնում էր կերակրի վրա: Սպասավորներից մեկը, ցածր խոնարհվելով, վերցնում էր լիքը պնակները և հերթով բաժանում էր ներկաների մեջ: Ստացողը երկու ձեռքով էր առնում պնակը և ինչ-որ մի բան էր մրմնջում: Հետո աջ ձեռքը հպում էր ձակատին և շրթունքներին: Բիշ էին ուտում: Պնակը, ուտելիքի մնացորդով, երբեմն ձեռք չսված՝ փաթաթում էին թաշկինակի մեջ, որպեսզի հետո տանեն տուն: Լռությունը երբեմն խզվում էր «Ալի, Ալի» բացականչություններով կամ աղոթքի պատառիկներով, որի ժամանակ բոլոր ներկաները խոնարհվում և երկրպագում էին: Պնակով բրինձը մսի և հացի հետ բերեցին նաև հյուրերի համար և բաժանեցին մեր մեջ կատարյալ լռությամբ⁴⁹: Ընթրողները ամբողջ ժամանակ օրորվում էին, առաջ և հետ:

Ընթրիքից հետո **դուղ**⁵⁰ բաժանեցին հսկայական հախճապակյա բաժակների մեջ: Այդպիսի մի բաժակ մոտեցնում էին սրահում նստած յուրաքանչյուր մարդու, և նրանք ուղղակի խմում էին միևնույն բաժակից: Մեզ համար դուղը բերեցին բարձր, երկար սափորների մեջ, լցրեցին երկար կապույտ բաժակների մեջ և բաժանեցին: Վերջապես բոլորին — ինչպես և մեզ — մոտեցրին մի թաս, տաք ջրի կուժ և սրբիչ, ձեռքերը լվալու համար: Այդ բոլորը արվում էր երկար ընդմիջումներով և շատ դանդաղ: Երբ այդ էլ վերջացավ, մեր առանձնասենյակից վերցին մի **չոնգուռ** (պարսկ. չողուր): Մորշեղը վերցրեց նվազարանը և երկու ակկորդ զարկելուց հետո, սկսեց հստակ և հասկանալի ձևերով ինչ-որ ոտանավորներ երգել, **Ռաջազի** չափով⁵¹:

Մի տուն նա երգում էր մենակ և հետո նրան մյուսները ձայնակցում էին: Նա հազիվ էր երգել տաս տող, երբ ներկաները սկսեցին ավելի ուժգնորեն օրորվել, ավելի բարձր աղաղակելով «Ալի» և «Հաղ» բառերը, այլ խոսքով՝ խանդավառությամբ սկսվում էր:

Նախ մեկ, հետո երկու հոգի հեկեկացին, մի ուրիշը սկսեց բարձրաձայն լացել և սկսվեց իսկական պաշտամունքը: Մարմինների և գլուխների թափահարությունը գնալով ավելի մոլեգին էր դառնում, շարժումները և աղաղակները զսպված և ինքնակամ չէին այլևս: Մորշեղը շարունակում էր հանդարտորեն նվագել չոնգուրը և

⁴⁹ Պրոֆ. Մառի հիշած «միսը» հատուկ պարսկական մի խորտիկ է, որ կոչվում է «Ղեյմն լափփե»: — Ջ. Մ.:

⁵⁰ Դուղը դա Պարսկաստանում շատ ընդունված թանաջրի ըմպելիքն է, որը հատկապես ամառն է գործածվում որպես զովացուցիչ: — Ջ. Մ.:

⁵¹ Չողուրը լարավոր մի նվագարան է, որի վրա ընդհանրապես նվագում են ոսկորով (մեղիատոր): Բայց տվյալ դեպքում Մորշեղը կամ նվագում էր մատներով, կամ եթե գործածում էր հատուկ ոսկորը, միայն միակողմանի հարվածներով էր նվագում: Չողուրը նույնպես կոչվում էր «սագ»:

երգում էր նույն ոտանավորները, առանց ձայնը բարձրացնելու, նույն չափով, բայց հիմա նրան քչերն էին ձայնակցում, քանի որ ամբողջ սրահը փոխվել էր մարդկային գլուխների և մարմինների փոթորկոտ մի ծովի. խանդավառության մեջ ընկած մարդիկ, չնայած ջղաձգական աներևակայելի ցնցումներին և կարկամած շարժումներին, դուրս չէին գալիս հիմնական ռիթմի սահմաններից: Ներկաների ապշահար շարժումները ամբողջապես կապված էին Մորշեղի չոնգուրի և երգի չափին և հատկորոշ զարկերին:

Մեկը նրանցից այնքան արագ էր գլուխը հետ ու առաջ ցնցում, որ ես միայն նրա ուները և գլխի կատարն էի տեսնում, ուր նրա մազերը, ծոպի պես ծածանվում էին: Մարմնի և գլխի կատարի մեջ կարծես դատարկություն էր տիրում: Մի ուրիշը, ձեռքերը ծափին տալով պարում էր իր շուրջ պտույտներ գործելով. ամբողջ այդ ընթացքում նա իր մի կողմ թեքված մարմնի հավասարակշռությունը պահպանում էր միայն երբեմն ափերը հատակին զարկելով. այդ բանը նա անում էր շատ արագ և այնպիսի շարժումներով, որոնց համար պետք էր անսովոր ուժ ու ձարակություն: Մի կրկնում էր «հադ» բառը: Մի ուրիշը, լեզուն հանած, անդադար աղաղակում էր և նրա իրանը, գլուխը, ձեռքերը և ոտքերը պտտվում էին զանազան ուղղություններով: Մեկը ընկնափորի պես բոռում էր: «Ալի» և «հադ» գոչյունները արդեն սկսել էին փոխվել խոխոցի և համարյա հաչոցների: Մի քանի հոգի ջղաձգական ցնցումներով զարկվում էին հատակին, ուրիշները երկու ձեռքով բամփում էին գլուխներին: Մի քանիսը այնպիսի կատաղությամբ էին զարկվում հատակին ու պատերին, որ նրանց պետք էր լինում հանգստացնել. այդ ժամանակ, երկու հաղթանդամ մարդիկ բռնում էին նրանց պարանոցը:

Եվ ահա, երբ հասարակության խանդավառությունը հասել էր իր կատաղության գագաթնակետին, ներս բերեցին կրակարաններ, մանդալ, հրաշեկ ածուխներով: Պաշտամունքի մասնակիցները սկսեցին ձեռքով խլել այդ հրաշեկ ածուխները, խոթել իրենց բերանը և այդպես քայլել սենյակում: Հետո նրանք թքում էին հանգած ածուխը և նորն էին դնում իրենց բերանը: Ծխացող ածուխը մնում էր նրանց բերանում երևի մոտ մեկ րոպե: Այդ ածխախաղը ընկերակցված էր վայնասունով և ցնցումներով: «Ճշմարտության Հետևորդները» գալարվում էին հատակի վրա մթազնած դեմքերով և բոցավառ բերաններով: Այդ ընթացքում մեկը հափշտակեց վառ մի մոմ, դրեց դրա վառվող ծայրը բերնի մեջ և թեքված դեպի առաջ՝ շարունակեց պարել: Հետո կրակարանները տարան և կամաց-կամաց մարդիկ սկսեցին հանդարտել: Մի քանիսին դուրս քաշեցին բակը, մեկի վրա ջուր սրսկեցին, և մի ուրիշի — ինչպես այդ ասացին մեզ, բայց մենք չտեսանք — քարշ տվեցին Մորշեղի մոտ, որը ձեռքը դրեց նրա վրա և նա հանգստացավ:

Հասավ հակազդեցության շրջանը: Հոգնած, ուժաթափ, ոմանք հենվել էին պատերին, ոմանք նստել էին, գլուխները և ուտերը կախ և անշարժ: Վերջապես բոլորը հանգստացան: Լուսությունը երբեմն խզվում էր «Ալի, Ալի, Ալի, Ալի» բացականչությամբ, հառաչներով, հեկեկանքներով: Դեմքը ինձ դարձրած նիհար մի ծերուկ հանկարծ սկսեց բարձրաձայն լացել: Բայց ահա նորից սկսվեց երաժշտությունը: Մորշեղը վերսկսեց իր չոնգուրի նվագն ու երգը, բայց ժողովուրդը, նրան ձայնակ-

ցելու փոխարեն՝ ծափին էր տալիս և անդադար կրկնում էր. «Ալի, Ալի, Ալի, Ալի»: Կրկնվեց վերում նկարագրած պատկերը, բայց ոչ նույն կատաղությամբ: Այդ ժամանակ մեր սենյակը մտավ 10-12 տարեկան մի աղջիկ: Նա էլ էր ծափ տալիս և մյուսների պես գիլ և հստակ ձայնով կրկնում էր՝ «Ալի, Ալի, Ալի, Ալի»:

Սպասարկուներից մեկը դուրս գնաց և վերադարձավ հսկա մի պողոնոցով, որի վրա կուտակված էին շաքարե փոքրիկ քաղցրեղեններ և նաբաթ⁵²: Այդ քաղցրեղենով հյուրասիրվեցին բոլոր ներկաները: Պաշտամունքը վերջացել էր: Ներկաները, իրար համբուրելով, դանդաղորեն սկսեցին ցրվել: Գնալիս՝ իրենց հետ տանում էին ուտելիքով լեցուն պնակները, փաթաթած խայտաբղետ թաշկինակների մեջ: Բոլորը մոտենում էին Մորշեղին և համբուրում էին նրա ձեռքը: Դրանից հետո, Մորշեղը, մի քանի հոգու ընկերակցությամբ մտավ մեր սենյակը, ձեռք-ձեռքի տվեց և խոսեց մեզ հետ: Նա միջառասակ մի ծերունի էր, ձեռմակ շալմայով, ձեռմակ մորուքով, բոլորովին սև հոնքերով և փայլուն, փոքրիկ, խորը ընկած աչքերով:

Սիրալիությունների փոխանակությունից հետո, նա դարձավ դեպի ինձ և հրավիրեց ինձ այցելել իրեն: Իսկ այն նիհար ծերուկը, որը լացում էր պաշտամունքի ժամանակ, խոստացավ այցելել ինձ, բերել իր հետ ոտանավորի բնագիրը և բացատրել ինձ այն ամենը՝ ինչ ես չէի հասկացել: Բայց, դժբախտաբար ինձ չհաջողվեց նրանց այլևս հանդիպել:

ՀՈԳՈՒ «ՀԱՄԲԱՐՁՄԱՆ» ԳԱՂԱՓԱՐԸ ԵՎ ԴՐԱ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

«Հայ էրեն Յաղզանը» բովանդակությամբ և կառուցվածքով իր նախորինակն «ունի փահլավի գրականության «Արտա Վիրապ նամակի» մեջ: Դա նույնպես իր կառուցվածքային զուգահեռն ունի Պլատոնի ԷՐ ՀԱՅԿԱԶՆԻ մեջ, որին անպայման էրեն Սինան ծանոթ է եղել: Նույն այդ բանը կրկնվում է ԿՂԵՄԵՍ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՅՈՒ մոտ, ուր Զրադաշտը կոչվում է ԷՐԻ որդին և հետևաբար՝ Հայկազն ցեղից: Հայ բանասերներից շատերը, ուշադիր քննության առնելով այս առասպելները, դրանց կապակցել են ԱՐԱ ԳԵՂԵՅԿԻ (Ա-Րա, եգիպտացիների ՐԱ = Արևի աստվածը) առասպելի հետ: Էր Հայկազնի և Արա Գեղեցկի առասպելների առնչությունը քննության են առնել Ն. Ադոնցը, Մ. Էմինը, Մ. Արեղյանը, Դր. Ա. Մատիկյանը և հատկապես Գ. Ղափանցյանը, վերջինս իր «Արա Գեղեցկի Պաշտամունքը» հատորում (Երևան, 1945): Այդ քննությունների համեմատական սինտեզից, որոշ հավանական եզրակացությունների է հանգել Ավ. Շահումյարյանը, «Ալիսեննան և հայ մատենագրությունը» հատորում:

Այս առնչությամբ հետաքրքիր է հիշատակել այստեղ Դր. Ս. Գ. Կյուլպենկյանի «Նպաստ Միջին Արևելքի նախապատմության, Սումերո — Հայկական Լեզվական

⁵² Շաքարե քաղցրավենիքը կոչվում է «շեքար փանիր» կամ «պանրաշաքար»: Այդ քաղցրեղենը ծիսական նշանակություն ունի: Դա բաժանում են Աշուրայի առավոտը, իրենք-իրենց դաշունահարողներին: Դա բաժանում են նաև հարսանիքներին և Նոր Տարուն: Բացի այդ դա գործածվում է «Կարմիր Չորեքշաբաթ»-ի գուշակությունների և հմայքների մեջ: (Որքան ես հիշում եմ, այդ քաղցրավենիքը սովորական «նոլլ»-ն էր. — Զ. Մ.):

Լույսի տակ» հատորում բերված նոր տեղեկությունները (Ֆրանսա, Փարիզ, 1960): Արա Գեղեցկի առասպելի արմատները ավելի ևս հեռուն փնտրելով, նա ներկայացնում է մի քաղվածք Սումերո-Ակկադյան հնագույն դյուցազնավեպից, «ԳԻԼԳԱՄԵՇԻ» 6-րդ երգից, ուր գրված է.

«Գիլգամեշը Սումերի էրեկ քաղաքի թագավորն էր, նա իր գեղեցկության գերագույն փառքի մեջ է գտնվում: Իշթարը սիրահարվում է նրա վրա: Նրան խոստանում է պատիվներ և հարստություն, բայց հերոսը արհամարհում է նրա հեղհեղուկ սերը: Կատաղած Իշթարը իր վրեժն է պահանջում իր հայր՝ Ան աստծուց: Անը Գիլգամեշի դեմ է ուղարկում երկնային Ցուլին, բայց Ցուլին սպանում է հերոսի ընկերը, Էնկիդուն: Իշթարը, շրջապատված իր մեհենասպասներով, ողորմ է գոհին»:

ա.— Իշթարի նույնությունը Շամիրամի հետ քաջ ծանոթ է. Իշթարը՝ դա Վենուս մոլորակն է:

բ.— ԱՐԱ = «ծագող Արև» (ԱՀ): Դա մանկամարդ ԲԱ-ն է, որը ծնվում է ջրշուշանից (լոտոս) կամ եղեգից: Արան անկասկած պաշտվում էր Հայաստանի ԱՐԱ-ՆԱ շրջանում, կամ այլուր, ամեն դեպքում Ուրարտացիների գերիշխանության տակ գտնվող մի գավառում, քանի որ նրա անունը տեսնում ենք այդ կայսրության աստվածների Պանթեոնում ԱՐԱ անվան տակ:

գ.— ԲԱ կամ ԲԷ Արևի աստվածը Եգիպտոսում կոչվում էր նաև «ԻՐ ՄՈՐ ՑՈՒԼԸ», այն է նա ծնվում էր ամեն առավոտ Երկնքի աստվածուհուց, որին նա ինքը արգասավորել էր նախորդ երեկոյան: Հետաքրքիր է, որ այդ հեթանոս հասկացողությունը արտահայտվել է հայկական վիպական բանաստեղծության մեջ. «Երկներ Երկին և Երկիր...», որը հավանաբար պանծացնում է Արևի աստծո ԲԵ-ի ծնունդը, որը Իրանյան ազդեցության տակ վերածվել էր Վերնթրագնա (Վահագն) աստվածության:

Արա Գեղեցկի, Արտա Վիրապի, Գրիգոր Լուսավորչի և Խորը Վիրապի, Հայ Էրնե Յաղզանի և վերջապես Դանտեի «Աստվածային Կատակերգության» կապակցությունը չափազանց բացահայտ է և կարոտ չէ մանրամասն համեմատությունների: Վերջինիս կապակցությունը Էրնե Սինայի և Իսլամական ավանդությունների հետ ստուգաբանության նյութ է ծառայել Իսպանացի Ասին Պալակիոսի և Խտալացի Էնրիկո Սերուլլիին, որոնց հաջողվել է ապացուցել, որ Դանտեն ժամանակին կարող էր քաջատեղյակ լինել մահմեդական անդր-շիրիմյան գրականության և հատկապես Էրնե Սինայի և նրան վերագրված «ՄԵԲԱՋ ՆԱՄԵԻ» (Գիրք Համբարձման), ինչպես և Հայ Էրնե Յաղզանի հետ:

«Համբարձման» — «Հոգու ազատագրման» — «Դեպի Արևելք համբառնալու» գաղափարը իր կատարելության հասավ Սուֆիների մեջ, ուր խանդավառ հոգին կարողանում էր հասնել Միակ Էակի Գահին: Սուֆին կամ Արեֆը (գիտակը, գնուտիկը) դառնում է այն հերոսի տիպարը, որը իր հոգեկան խանդավառության մեջ բարձրանում է խոհական կյանքի և տեսլային երանության բարձրագույն գագաթը: Նույնն է կատարվում Էրնե Սինայի վիպակում, ուր Հոգին, թոչունի տեսքով, անցնում է երկնքից երկինք, հասնելու համար Արքայի խորանը: Նա — Իսլամական Իրանում, Մանիական սաղմոսարաններում մենք արդեն հանդիպում ենք արդեն

այդ գրության զուգահեռներին: Վերցնենք օրինակ այն սաղմոսը, ուր յուրաքանչյուր տունից հետո կրկնվում է հետևյալ կրկներգը.

«Ո՛վ Հոգի, որտեղից ես դու գալիս: Դու գալիս ես բարձունքներից, դու մի օտարական ես այս երկրում, դու տարանցիկ ես մարդկանց հողի վրա... Դու ունես քո ճշմարիտ Հայրը, քո ճշմարիտ Մայրը... Ով Հոգի, մի մոռացիր քեզ, քանզի ամենքը հետապնդում են քեզ, մահվան որսորդները դարանել են քեզ համար: Նրանք վանդակում են թոչուններին... փշրում են նրանց թևերը... որպեսզի նրանք չկարողանան այլևս հասնել իրենց աղավնետունը: Ով Հոգի, բարձրացրու գլուխդ, վերադարձիր տուն...»⁵³:

Սբ. Թովմասի սաղմոսներից մեկում նույնպես կարդում ենք. «Դեռատի պարմանին հառաչում և լացում էր փոսորակի մեջ, որը գտնվում էր Հաղեսի խորքում: Չլեսցի՛ր արոյոք, Ով Մեծ Փառք, որ Հաղեսը ըմբոստացել և ապստամբել է... Գարշահոտ և զագիր դները պատրաստվում են պատերազմել ինձ հետ: Երբ Հզորը լսեց... նա կանչեց իր Պատվիրակին, ԱԴԱՄԱՍ-ԼՈՒՅՍԻՆ, անողորմ սպանողին, ըմբոստներ նվաճողին: Նրան ասաց. «Գնա, իջիր, ով Ադամաս, օգնիր պարմանուն որը փոսորակի մեջ է, Հաղեսի խորքում...»⁵⁴:

Էրնե Սինայի Թոչունն էլ մենակ չի վերադառնում ուխտագնացությունից: Նրան ընկերակցում է Արքայի Պատվիրակը:

Խոսելով գրական-հոգեբանական նման երևույթների մասին, հիշենք այստեղ նաև ֆրանսացի ջլախտավոր բանաստեղծ Ժերար տը Ներվալին, որը հետևյալն է գրում իր ինքնակենսագրության մեջ, մի երագի վերաբերյալ.

«Տարաչափ մեծությամբ մի էակ — մարդ թե կին, չգիտեմ — դժվարությամբ թևածում էր տարածության մեջ և թվում էր մաքառում էր ամպերի կուտակված դեզերի հետ: Շունչը և զորությունը կորցնելով, նա վերջապես ընկավ մութ բակի մեջ, մինչդեռ նրա թևերը, մագիլների պես քերում և չափչափում էին շրջապատի տանիքները և պատերը: Ես կարողացա նրան տեսնել միայն մի երկվայրկյան: Նա գունավորված էր ծիրանի հույլերով և նրա թևերը փայլում էին հազարավոր ծիածանվող ցուլքերով...»:

Այս երագի հաջորդ գիշերը, Ներվալը մերժում է տուն վերադառնալ: Իր ընկերոջը, որ նրանից հարցնում էր, թե ո՞ր է ցանկանում գնալ, նա պատասխանում է. «Դեպի Արևելք...»: Նույն ուղղությամբ, որով ուզում էր գնալ Հայ Էրնե Յաղզանը: Էմմանուել Սվենդենբորգի «Նոր Երուսաղեմը», որը խորը ազդեցություն է թողել Եվրոպայի միստիկ մտածողության վրա, անգլիացի բանաստեղծ Վիլյամ Բլեյկը, որը ծագող արեգակի սկավառակի մեջ հրեշտակների պարն էր տեսնում, վերում հիշած Մանիական սաղմոսները, Ժերար տը Ներվալի երագը, Պլատոնի Ֆեդրը և նման հարյուրավոր օրինակներ — պարզ շեղաբանություն չեն ընդհանուր նյութից: Էրնե Սինայի տեսլական վիպակները պատեհություն տվեցին մեզ այստեղ շատ հակիրճ կանգ առնել հոգեկան մի փորձառության վրա, որը դարերի ընթացքում անդադար կրկնվել է, սեղմ և հանճարեղ մի շրջանակում: **Սեփական էության** այս տեսիլքը,

⁵³ A. Manichian Psalm Book — C. R. C. Allberry Stuttgart, 1930.

⁵⁴ Սբ. Թովմասի Սաղմոսները — Նույն:

որը թռչող էակի կերպարանք է ստանում, նորից կրկնվում է պարսկական գրականության մեջ, ինչպես Սոհրավերդու, նույնպես և Ղազալիի և Աթթարի մոտ:

ԷԲՆ ՍԻՆԱՅԻ ԱՋԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ԵՎ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Տասներկրորդ դարուց սկսած, երբ Եվրոպայում թարգմանել սկսեցին մահմեդական Արևմուտքում «արաբ» ճանաչված գիտնականների գործերը, **Ժերարտուս Գրամոնենսիս** (1114–1187) առաջինն էր որ լատիներեն թարգմանեց Էրեն Սինայի «ԱԼ–ՂԱՆՈՒՆ» մատյանը. այդ գիրքը Եվրոպայի Վերածնության շրջանում 36 անգամ վերհրատարակվեց (16 անգամ 15–րդ դարու վերջերում և 20 անգամ 16–րդ դարում):

Էրեն Սինայի մյուս գործերից արված թարգմանությունները զանազան լեզուներով այնքան շատ են, որ այստեղ դրանք թվել անկարելի է:

Ինչպես ասել ենք, Արու Ալի Սինայի «Ալ–Ղանուն» գիրքը դասավանդվում էր Եվրոպայի բժշկական համալսարաններում մինչև 17–րդ դարու կեսերը և մինչև երկու դար առաջ նա ամբողջ գիտական աշխարհում ընդունված էր որպես մեկը մարդկության մեծագույն փիլիսոփաներից և բժիշկներից: Արևմուտքի միջնադարյան հազվագյուտ հանձարներից մեկը Ռոջեր Բեյքընը իր **Օբյուս Մաճյուս** մատյանում խորը հարգանքով է խոսում Էրեն Սինայի մասին: Նույնիսկ մեր օրերում, 19–րդ դարի 30–ական թվականներին հայտնի փիլիսոփա Հեգելը հիացմունք է արտահայտում Էրեն Սինայի վերաբերյալ իր «Փիլիսոփայության Պատմության» մեջ, նրան վերագրելով մի շարք փիլիսոփայական կարևոր տեսություններ և համարելով նրան այն հանձարեղ մտածողը, որը զարգացրել է, հավերժացրել է Արիստոտելի փիլիսոփայական հայացքները:

Վերադառնալով Եվրոպայի վերածնության շրջանին, հիշենք այստեղ անցողակի կերպով, որ Դանտե Ալիգիերին, ըստ վերջին ստույգ քննությունների, շատ քան է պարտական Էրեն Սինային իր «Աստվածային Կատակերգության» կառուցվածքի մեջ. այս կետի վրա ավելի մանրամասն կարտահայտվենք Էրեն Սինայի գեղարվեստական վեպերի քննության բաժնում: Այստեղ հիշենք միայն, որ Դանտեն լավագույն կերպով կարողացել է ներկայացնել Էրեն Սինայի դիրքը և նշանակությունը միջնադարյան Եվրոպայի մտավոր աշխարհում, նկարագրելով իր հանդիպումը «Աստվածային Կատակերգության» մեջ աշխարհի մեծագույն գիտունների հետ: Նա պատմում է, թե ինչպես կանաչավետ մի պուրակում «Իմաստունների Վարպետ» Արիստոտելի շուրջ համախմբվել էին աշխարհի իմաստունները և փիլիսոփաները. Սոկրատ, Պլատոն, Եվկլիդ, Պտղոմե, և այլն, և այլն, և այդ անունների մեջ հիշում է երկու մահմեդականների՝ Արու Ալի Սինային և Էրեն Ռոջին:

Էրեն Սինան նմանապես շատ խորը ազդեցություն է թողել միջնադարյան քրիստոնեական սխոլաստիկայի վրա: Ինչպես դա ապացուցել են միջնադարյան քրիստոնեական փիլիսոփայության մասնագետներ Ջիլբընը, Հայր Ջ. Ս. Անվաթթին, Մ. Ա. Ֆորեստը և ուրիշներ: Սուրբ Թովմաս Աքինասը իր աստվածագիտական կառուցվածքի մեջ շատ հաճախ է օգտվել Էրեն Սինայի վարդապետությունից: Նույն

քանը կարելի է ասել նաև Սուրբ Ագուստինի աստվածաբանական վարդապետության մասին: Այդ առթիվ Մ. Ֆորեստը, մանրակրկիտ ուսումնասիրությամբ, գտել է որ Սուրբ Թովմասը իր երկերում ոչ պակաս քան 250 անգամ բացահայտ կերպով վկայություններ է բերել Էրեն Սինայից:

«Պատմական Իրանի հարևան ժողովուրդներից, հայերին է պատկանում Ավիցեննային ճանաչելու և արժանի գնահատական տալու առաջնությունը: Մխիթար Հերացին էր, որ առաջին անգամ զբաղվեց մեծ Բուխարացու բժշկական գործերի մեկնաբանությամբ և բարձր գնահատեց նրան»⁵⁵:

12–րդ դարում ապրող, Ներսես Շնորհալու մոտ ընկեր, բժիշկ Մխիթարը Էրեն Սինային հիշում է իր գրվածքներում որպես «Սինայի Որդի» որը Էրեն Սինայի պարսկացված անվան, «ՓՈՒՐ ՍԻՆԱ» բառացի թարգմանությունն է: Այդ անվան տակ է, որ Պրոֆ. Սահղ Նաֆիսին գրել է Էրեն Սինայի կենսագրությունը, նրա ծննդյան Հազարամյա Տոնակատարությունների առթիվ:

Մխիթար Հերացին եղել է Հեր (այժմյան Խոյ) քաղաքից և մեզ թողել է «ՋԵՐՄԱՆՅ ՄԵՆԻԹԱՐՈՒԹՅՈՒՆ» անվամբ բժշկական մի մատյան, ուր նա բացատրել է համեստորեն վերնագիրը, ասելով՝ «զի սա մխիթարե գրծիշկն ուսմամբ, իսկ զհիվանդն առողջությամբ»⁵⁶: Նա իր գիրքը գրել է 1184 թվին, Շնորհալու հաջորդ Գրիգոր Պահլավունի Տղա կաթողիկոսի հորդորանոք: Նա այս գրքում լայնորեն օգտվել է Էրեն Սինայի «Ալ–Ղանուն»–ից և հաճախ մեկնաբանելով գրքի խրթին բաժինները, այդ դյուրըմբռնելի է դարձրել իր ժամանակակիցների համար. ժողովրդի լայն խավերը ի նկատի ունենալով, Հերացին իր գիրքը գրել է ժամանակի խոսակցական լեզվով, գրաբար գործածելով միայն առաջաբանի մեջ: Նա ունեցել է ուրիշ երկեր ևս, ինչպես «Վասն Քարանց և հատկությանց նոցա և բժշկություն նոցա», որից միայն հաստատված են մեզ հասել այլ բժշկական գրվածքների մեջ:

Նույնպես Էրեն Սինայից լայնորեն օգտվել է 15–րդ դարու հայ բժշկապետ ԱՄԻՐԴՈՎԼԱԹ ԱՄԱՍԻԱՑԻՆ: Նա իր «Օգուտ Բժշկության» երկի մեջ հաճախ կրկնում է «Սինային որդին ասէ...»:

«Հասկանալով Ավիցեննայի գիտնականի դերը միջնադարյան բազմապիսի հիվանդություններին վերջ տալու գործում, նրա ստեղծագործությունների խոշոր նշանակությունը հասարակական կյանքի վերափոխման ասպարեզում, Ամիրդովլաթը բազմիցս դիմել է նրա օգնության»⁵⁷:

Մխիթար Հերացուց հետո, 13–րդ դարում ապրող ԱՀԱՐՈՆ ԲԺԻՇԿ ԵԴԵՍԱՑԻՆ և նրա որդի Ստեփանոսը մեծ հռչակ էին վայելում բժշկական ասպարեզում: Նրանց գիտությունը ևս հիմնված է եղել առավելապես պարսկական և արաբական, մասամբ հունական բժշկության վրա: Բժիշկների այս գերդաստանի մասին ահա թե ինչ է գրում Ամիրդովլաթը «Անգիտաց Անպետի» առաջաբանում. «Եվ ի այս քանիցս առին առաջին բժշկապետքն մեր, մեծն Մխիթար բժիշկն Հերացի և Ահարոն բժիշկն

⁵⁵ Ավ. Շահումվարյան «Ավեսեննան և Հայ Մատենագրությունը» Երևան, 1960: Այս և հետագա տեղեկությունները Էրեն Սինայի ազդեցության մասին հայ գիտական մտքի վրա՝ մասամբ բաղված են վերոհիշյալ հետաաքրքիր աշխատանքից:

⁵⁶ Մխիթար Բժշկապետի Հերացվո Ջերմանց Մխիթարություն, Վենետիկ, 1832:

⁵⁷ Ավ. Շահումվարյան, նույն տեղը:

և որդին նորա Ստեփաննոս բժիշկն, և տոհմն նոցա ճոշլին բժիշկն, և Սարգիս բժիշկն, և Հակոբ բժիշկն, և Դեղին բժիշկն, և Սիմավոն բժիշկն, և Վահրամ բժիշկն, որ շատ գրյանք շիներ էին վասն դեղերուն գորությանն և օգտությանն»:

Ինչ վերաբերում է Ամիրդովլաթ Ամասիացուն, նա ծնվել է շուրջ 1415–25 թթ. Ամասիայում: Պալատական բժիշկն է եղել Մոհամմադ Երկրորդ Սուլթանի 1451–1481 և մեռել է 1496 թվին: Նրա բազմաթիվ երկերից միայն երկուսն են տպագրվել. «Օգուտ Բժշկության» հրատ. Ստ. Մալխասյանի, Երևան 1940 և «Անգիտաց Անպետը» Ամիրդովլաթի Ամասիացու դեղերի այբբենական բառարան Բժշկական նյութոց, հրատ. Կ. Հ. Բասմաջյան, Վիեննա 1926:

Անտիպ են դեռ նրա հետևյալ երկերը.

1. Ախրապատին կամ «Բժշկական Մինհաճ Գիրք», որը թարգմանությունն է արաբերեն «Մենհաջ ալ-Դոքքան»-ի:

2. Ախրապատին ինքնուրույն, որը դեղերի այբբենական բառարան է, սկսվում է «Այուրիճ» բառով և վերջանում է «Ֆավզայ» բառով: Երևանի Պետական մատենադարանում:

3. Վասն նշանաց հիվանդին, գլենաց և գմահվան, որի միակ օրինակը գտնվում է Փարիզի Ազգային Գրադարանում:

4. Բառ, ի վերա ամենայն բժշկական վարդապետացն. Պատմություն վասն դեղերուն: Երևանի Պետ. Մատ.:

5. Բառ Այբուբենական, ի վերա ցավոց: Վիեննայի Մխիթարյան և Երևանի Պետ. Մատենադարաններում⁵⁸:

ԱԲՈՒ ԱԼԻ ՍԻՆԱՆ ՈՐՊԵՍ ԲԱՆԱՍՏԵՂԾ

Աբու Ալի Սինան — արևմուտքի Ավիսեննան — պատկանում է այն մի տասնյակ հանրահայտ հանճարների շարքին, որ պատմությունը տվել է ամբողջ մարդկության: Այսպիսի բազմակողմանի հանճարները ինչպիսիք էին, օրինակ, Միքել Անջելոն, Լեոնարդո դա Վինչին, Ռոջեր Բեյքընը — բնության բացառիկ երևույթներ են: Նրանք հավասարապես հետաքրքրվել են իրենց օրվա արվեստներով և գիտություններով և հավասար հաջողությամբ տիրապետել են ապա ստեղծագործել են իրենց հետաքրքրող բոլոր ճյուղերում: Արիստոտելը, որը իրավամբ համարվում է ներկա գիտությունների մեծ մասի հիմնադիրը, առաջինն էր այդ հանրահայտներից: Միջնադարյան արևելքը մի քանի այդպիսի դեմքեր է տվել համաշխարհային մշակույթին. դրանցից են **ալ-Ֆարաբին**, որը — Արիստոտելից հետո — արևելքում ճանաչված է որպես «Երկրորդ Վարպետ», **ալ-Բիրունին** և հատկապես՝ **Աբու Ալի Սինան**:

Էրեն Սինայի «Կանոնք Բժշկական Գիտությանց» (Ալ-Ղանուն Ֆեթ-Թեր) բազմահատոր աշխատանքը դարեր շարունակ ծառայել է որպես արևմուտքի բժշկության դասագիրքը: Դրա լատիներեն թարգմանությունը առաջին անգամ լույս է տեսել Նեապոլում, 1491 թվին, արաբերեն բնագիրը՝ Հռոմում 1953 թվին: Գրքի լատի-

ներեն թարգմանությունը վերահրատարակվել է ավելի քան 30 անգամներ: Մինչև 1650 թվականը բժշկական այդ հանրագիտակը դասավանդվում էր Լուվենի և Մոնփելիեի բժշկական համալսարաններում: Ինքը Աբու Ալի Սինան բժշկությունը համարում էր իր երկրորդական գբաղմունքներից մեկը, ապրուստի մի միջոց, որը թույլ է տալիս նրան ազատ ժամանակ շահել, խորանալու համար փիլիսոփայական տեսությունների մեջ:

Որքան մեծ է էրեն Սինան գիտությունների մեջ, նույնքան արժեքավոր են նրա գրական-գեղարվեստական ավանդները: Նրա արժեքը որպես բանաստեղծ և արձակագիր, միայն վերջերս է ըստ արժանվույն ուսումնասիրվել և գնահատվել: Նրա քառյակները, որոնց մեծ մասը մինչև վերջերս վերագրվում էին Օմար Խայյամին կամ այլ քառյակագիրների, չնայած թվով քիչ՝ բայց բովանդակությամբ և արվեստով ուրույն տեղ են գրավում Իրանի չափածո գրականության մեջ: Նրա փիլիսոփայական վիպակները հիմք են ծառայել հետագա սովոր գրականության և իրենց տեսակի մեջ հատուկ տեղ են գրավում Արևելքի Միջնադարյան գրականության մարզում: Միաժամանակ չափի մոռանալ, որ էրեն Սինան, ալ-Ֆարաբին համընթաց, Արևելյան երաժշտության մեծագույն **տեսաբանն** է:

Աբու Ալի Սինայի կյանքը ուսումնասիրելիս, երեք բան է, որ ամենից ավելի է հրապուրում արդի իմաստասերներին. նախ՝ դա նրա գիտական-գեղարվեստական աշխատանքների լայնածավալ և ամենապարփակ բնույթն է: Երկրորդ՝ դա նրա հանճարի տարօրինակ վաղահասությունն է (նա 5 տարեկանից սկսել է սովորել. տաս տարեկանում համարյա թե լրացրել է ուսումը, սկսել է ուղղել իր ուսուցիչներին և պաշտպանել իր տեսակետները գիտունների հավաքույթներում. 16 տարեկանում նա արդեն հոշակավոր բժիշկ էր, որին հրավիրում էին արքունիք խորհրդակցության համար. 17 տարեկանում նա տիրապետում էր օրվա բոլոր գիտություններին): Երրորդ՝ դա նրա տրամաբանելու ունակության խորությունը և անկախությունն էր: Նա օժտված էր գիտական ուղեղով, որը կարգապահ էր, ճշգրիտ, հետախույզ, խորաբափանց և աներկյուղ:

Անգլիացի անվանի բնագետ Ջուլիան Հրքսլին (Julian Huxlev) հետևյալ հետաքրքիր դիտողությունն է արել էրեն Սինայի վերաբերմամբ.

«Ավիսեննայի վերաբերյալ առաջին կարևոր փաստը պիտի ընդունել այն՝ որ նա հանճար էր. այլ խոսքով, նա արդյունքն էր ժառանգական տվյալների չափազանց բացառիկ մի բաղադրման, որը — հակազդվելով շրջապատի պայմաններից՝ ստեղծում է մի անհատ, շատ ավելի բարձր մակարդակի վրա, քան սովորական տաղանդներն են: Վիճակագրական տեսակետից դա չափազանց անհավանական մի երևույթ է. հետևաբար Ավիսեննային պիտի համարել մարդկային ցեղի անհավանական կարելիություններից մեկի իրականացումը: Նրա այդ հատուկ հանճարը արդյունքն է մի քանի տարբեր ազդակների միաձուլման. զարմանալի հիշողություն, սովորելու անխոնջ ցանկություն և իր մտքերը դասավորելու ունակություն, որի շնորհիվ նա կարողանում էր եղած գիտություններից տրամաբանական և հասկանալի մի ամբողջություն կազմել... Ավիսեննան մի օրինակ է, որին մենք պիտի հետևենք, համադրելու համար մեր ձեռք բերած գիտական հսկա պաշարը, գտնենք

⁵⁸ Հ. Ս. Անասյան, «Հայկական Մատենագիտություն», Հատոր Ա.— Երևան, 1959:

դրանց դասավորելու և ձուլելու ճանապարհը և հիմնենք այդ կորիզի շուրջ մեր լայնածավալ գիտությունը: Եթե կարողանանք ձեռք բերել նման կենտրոնական մի **հասկացողություն** և հետո տրամաբանորեն այդ զարգացնենք, մենք կը հասնենք իմացականորեն լուսաբանված մի եզրակացության, որի շուրջ կը կարողանանք համախմբել մեր այսօրվա ցրիվ և անկապակից հասկացողությունները»⁵⁹:

Աբու Ալի Սինան, իր ազատ ժամերին, առավելապես խնջույքների ժամանակ, որոնց նա հաճախ էր մասնակցում, — բանաստեղծում էր: Արաբերեն լեզվով նրա գրած մի քանի դասիդաները մինչև այսօր էլ մեծ հռչակ են վայելում գրական-փիլիսոփայական տեսակետից և թարգմանվել են մի քանի եվրոպական լեզուների: Տարբեր է եղել նրա գրած պարսկերեն բանաստեղծությունների ճակատագիրը: Ինչպես Օմար Խայյամը, որը իր օրոք ճանաչված էր միայն որպես աստղաբաշխ և հանրահաշվագետ և որի հարազատ քայակների թիվը դեռ մինչև այսօր էլ վերջնականապես ճշտված չէ — Էրեն Սինան ևս թողել է գրական կասկածելի ավանդ, դա հետևանքն է հավանաբար այն երևույթին, որ Էրեն Սինան իր ոտանավորները հորինում էր մտերիմների սեղմ շրջանակում, ուղղափառների աչքից ու ականջից հեռու: Նրա քայակներից մի քանիսը ցրված են այլ բանաստեղծների ժողովածուների մեջ և հատկապես գոյություն ունեն մի քանի հայտնի քայակներ, որոնց հեղինակությունը դեռևս վերջնականապես չի ճշտվել և արևելագետների կարծիքը տատանվում է Օմար Խայյամի և Աբու Ալի Սինայի միջև:

Ռուս արևելագետ Պրոֆ. Ժուկովսկին ուսումնասիրել է Խայյամի այս **«Թափառող քայակները»**, որին նվիրել է հետաքրքիր մի հոդված **«Մոզաֆարին»** արևելագիտական ժողովածուի մեջ:

Առաջին արևելագետը, որը ի մի հավաքեց Էրեն Սինային վերագրվող բանաստեղծական հատվածները և հրատարակեց նրանց *Gottinger Nachrichten*-ում «Ավիսեննան որպես պարսիկ քնարերգու» խորագրի տակ, դա գերմանացի Դր. Հ. Էթեն էր: Այդ հատվածները բաղկացած էին 15 կտոր բանաստեղծությունից, որոնցից 12-ը քայակներ են, մեկը մի հատված է բաղկացած երկու տուններից և երկուսը գազելներ են:

Վերջերս էր միայն որ Ստամբուլի Վալիեդ-Դին գրադարանում գտնվեց ձեռագիր մի ժողովածու, գրված Հեջրի 994 թվին (1585): Այդ ժողովածուն պարունակում է 22 հատված (դաթե) և քայակ (ոռբաի), որոնց ընդհանուր գումարը հասնում է 65 երկտողի:

Բացի այդ, Պրոֆ. Սաիդ Նաֆիսին հավաքել է զանազան ծաղկաբաղներից և սկզբնաղբյուրներից բոլոր այն հատվածները, որոնք վերագրվում են Էրեն Սինային և դրանք ենթարկելով ստուգաբանական քննության հրատարակել է «Մեիր» պարբերականի 4-րդ տարվա 12-րդ համարում, «Աբու Ալի Սինայի Պարսկերեն Քերթվածները» խորագրի տակ:

Պրոֆ. Զ. Սաֆան Էրեն Սինայի «Տոնամատյանի» առաջին հատորում տպագրել է չորս հատված և 7 քայակ, դրանց ավելացնելով երեք քայակ ևս, որոնք

⁵⁹ Some Reflections from an Evolutionary Biologist on Avicenna (Le Livre du Millénaire d'Avicenne, vol. IV) Tehran, 1956.

գտնվում են Օմար Խայյամի ձեռագիր ժողովածուների մեջ, բայց զանազան սկզբնաղբյուրներում արձանագրված են Աբու Ալի Սինայի անվան տակ («Մաջմա օլ Ֆոսահա», «Ռիազ օլ Արեֆին» և Շեյխ Բահաի «Բաշքուլ»-ում):

Թե ինչո՞ւ Օմար Խայյամի որոշ քայակներ վերագրվում են Էրեն Սինային և հակառակը, թերևս կարելի լինի բացատրել այն երևույթով, որ այդ երկու փիլիսոփա-գիտունները նույնությամբ արտահայտել են իրենց ժամանակի — Իրանի Վերածնության — ընդվզման գաղափարները կղերական նեղմտության և կրոնական սահմանափակումների դեմ:

Գաղափարական այդ միասնականությունը շեշտել է Օմար Խայյամի քայակների թարգմանիչ անգլիացի Վինֆիլդը, որը հետևյալն է գրում իր առաջաբանում (էջ 17).

«...Օմարին վերագրված քայակներից շատերը նույնպես վերագրվում են ուրիշ բանաստեղծների: Ես դրանցից մի քանիսը նշանակել եմ ծանոթագրությունների մեջ և անշուշտ, ուշադիր քննությունը շատ ուրիշ քայակներ ևս երևան կը բերի: Թվում է, որ գործածված լեզվի առանձնահատկությունները բավական կը լինեին զանազանելու Օմարի քերթվածները զոնե նրանից երկու կամ երեք դար հետո պարող գրողների ոճաբանությունից... Բայց 800 տարի առաջ գործածվող պարսկերեն գրական լեզուն շատ քիչ է զանազանվում այսօրվա գրական լեզվից: Նույնպես ենթադրվում էր, որ քայակների շոշափած բացառիկ նյութը մեզ թույլ կը տար զանազանել Օմարի ստեղծագործությունը ուրիշներից: Բայց փաստը այն է, որ պարսիկ չափածո գրականությունը ընթանում է սահմանափակ ածուներով և Օմարի քայակներն էլ բացառություն չեն կազմում: **Ուղղափառ գաղափարների դեմ ընդվզելու երևույթը, որը շատերը կարծում են հատուկ է Օմարին, կարելի է նույնպես գտնել նրա նախորդի, Ավիսեննայի քերթվածների մեջ...**»:

Օրինակ, Դր. Էթեի ուսումնասիրության մեջ հիշված երրորդ քայակը, մեծ ժողովրդականություն և հռչակ է վայելում, որպես Խայյամի ամենագեղեցիկ քայակներից մեկը.

*Անցա ես երկրից մինչ յոթը երկինք.
Հասա Սատուրնի գահին երկնազան.
Ճամփին լուծեցի ամեն հանելուկ,
Բացի հանելուկն կյանքի և մահվան:*

Այս քայակը Աբու Ալի Սինային են վերագրում նաև Պրոֆ. Սաիդ Նաֆիսին և Զ. Սաֆան:

Նման հայտնի քայակներ են նաև հետևյալ չորսը, որոնց կարելի է հանդիպել Խայյամի բոլոր ժողովածուների մեջ.

*Ա. Դու, որ լավ չարած մեղք շատ ես գործել
Ու քեզ հույս ունես, որ ներե Աստված.*

Մի հենվիր ներման, քանզի չի լինի
Արածը չարած և չարածն արած:

Բ. Աշխարհի զաղտնիքն, ինչպես կա դա մեր տետրակում գրված,
Չեմ կարող ասել, քանզի դա գինն է գուցե իմ կենաց:
Այնինչ այս տգետ մարդկանց մեջ չկա մեկը հասկացող,
Ինչ որ կա թաքուն իմ սրտի խորքում՝ ասել չեմ կարող:

Գ. Ապարանքն այն, որ երկնի բարձունքի դեմ մրցում էր,
Որի շեմքին թագակիր դրվում էին գլուխներ
Շրջեցի ես մտախոհ դահլիճներումն անկտուր,
Որմին տեսա սուկ մի բու. որ ասում էր. «Ո՛ր է, ո՛ր»...

Դ. Այս երկու-երեք տգետ արարածն աշխարհի մեջ են,
Հիմարությունից՝ իրենց հաշվում են միակ խելոքներ:
Ուրախ կաց, քանզի այնքան ուրախ են և այնքան տխմար
Որ մարդկանց միջից ով չէ ավանակ՝ սեպում են քաֆար⁶⁰:

Աբու Ալի Սինային են վերագրվում նույնպես հետևյալ մի քանի քառյակները.

* * *

Սիրտս ծարաված այս անապատում դաժան մրցության,
Ոչինչ իմացավ, չնայած ձեռքեց սիրտը գիտության.
Կյանքիս օրերում կրծքում իմ հազար արև ճառագեց,
Բայց դեռ չհասավ չնչին հյուլեի կատարելության:

* * *

Անհավատ եմ ես, — ասում են ահա —
Այնինչ իմ հավատն չունի մի արքա.
Թե անհավատ եմ այս իմ հանձարով՝
Ապա աշխարհում մուսուլման չկա:

* * *

Չմնաց մի խոսք՝ որ մնա քողված,
Չմնաց զաղտնիք՝ որ լինի չասված.
Երբ գիտության մեջ խոր թափանցեցի
Չտեսա ոչինչ՝ — բացի լոկ կասկած:

⁶⁰ Վերևի չորս քառյակները վերցված են հանգուցյալ հորս, Հովսեփ Միրզայանի «Օմար Խայյամի ֆառյակները» թարգմանական հատորից, որը լույս է տեսել 1924 թվին Թեհրանում և այժմ սպառված է:

* * *

Ձեռքից տվինք կյանքի զոհարն թանկագին,
Ժամանակը փշրեց կամարն մեր կյանքի.
Ճերմակ մագիցս տես թե ինչպես սևացավ
Հույսի ստինքը անգութ կենաց դայակի:

Վերոհիշյալ քառյակներից բացի, 29 երկտող բանաստեղծություն է բերված Ջ. Սաֆայի «Աբու Ալի Սինայի Տոնամատյանի» մեջ, որոնցից մեկը (9 երկտող) նվիրված է գինուն և երեք ուրիշ փոքր հատվածներ, որոնց նյութը բարոյագիտական և խրատական է: Դրանց բանաստեղծական արժեքը ցածր է և բովանդակությունը անհետաքրքիր. հազիվ թե էրեն Սինայի պես նրբաձաշակ մի հանձար թույլ տար իրեն նման թույլ տողեր ստեղծագործել:

Խնդիրը տարբեր է երբ մենք քննության ենք առնում էրեն Սինայի արաբերեն քերթվածները: Նա ունի արաբերեն լեզվով 6 դասիդաներ, որոնց մեջ մեծ հոչակ է վայելում «Մարդկային հոգուն» նվիրված դասիդան, որը թարգմանվել է ֆրանսերենի և անգլերենի: Դրա պարսկերեն և տաճկերեն թարգմանությունները, ծանոթագրություններով և մեկնաբանությամբ, քանիցս անգամներ հրատարակվել են, տարբեր ժամանակներում: Էրեն Սինայի նորակառայոց դամբարանի գմբեթի ներսի պատերին շատ գեղեցիկ ձեռագրով քանդակված է այս դասիդան:

ԱԲՈՒԼ ԱԼԱ ԱԼ-ՄԱՍՐԻ. ԱՐԱԲ ՔԵՐԹՈՂՈՒԹՅԱՆ ՕՄԱՐ ԽԱՅՅԱՄԸ⁶¹

Արաբ քերթողության թերևս մեծագույն դեմքը կարելի է համարել կույր բանաստեղծ-փիլիսոփա ԱԲՈՒԼ ԱԼԱԻՆ, որը վաղուց հայտնի է հայ ընթերցողներին իր հայացված անվան տակ, որպես արաբ հոչակավոր պոետ ԱԲՈՒԼ ԱԼԱ ՄԱՀԱՐԻ, Ավ. Իսահակյանի ժողովրդականացած պոեմայի հերոսը:

Բայց Աբուլ Ալան ավելի ևս մեծ նշանակություն է ստանում միջազգային առումով, երբ — համեմատելով նրա փիլիսոփայությունը, աշխարհայացքը և բանաստեղծական տաղանդը Օմար Խայյամի հետ — տարօրինակ զուգահեռներ և նմանություններ ենք գտնում այդ երկու արևելյան մեծ քերթողների մեջ: Այդ նմանությունը ավելի ևս նշանակալից է դառնում, երբ նկատում ենք որ այդ երկու ինքնուրույն փիլիսոփա-բանաստեղծները համարյա թե ժամանակակից են եղել: 1049 թվին Ք. հ. Աբուլ Ալան 75 տարեկան էր, երբ Նեշարուրում ծնվում է Օմար Խայյամը. և որ գլխավորն է՝ Օմար Խայյամին անծանոթ չեն եղել Աբուլ Ալայի բանաստեղծությունները, որոնցից մեկը նա իբր թե արտասանել է իր աշակերտների մոտ⁶²:

⁶¹ Ծանոթ.— Այս աշխատանքում կատարված բոլոր թարգմանությունները, ուր հիշված չէ Հովսեփ Միրզայանի անունը՝ կատարել եմ ինքս, մեծամասնաբար Նիկոլսոնից, Բերլենից և Ամին Ռիհանիի անգլերեն թարգմանություններից: Օգտվել եմ նույնպես Մասսիկոնի և Հ. Լաուսթի ֆրանսերեն արձակ թարգմանություններից (Ջ. Մ.):

⁶² A. J. Arberry «Omar Khayyam» London 1959, page 34.

Դեռևս քննության չի առնվել այն խորը ազդեցությունը որ Աբուլ Ալան կարող է թողած լինել պարսիկ մտքի վրա: Բայց ինչպես իրաւամբ դիտում է Էդ. Ջ. Բրաունը⁶³, «... Հետագա քննությունները կարող են հավանաբար ցույց տալ, որ նա առանց ազդեցության չի եղել Իրանի հոռետես և սկեպտիկ բանաստեղծների վրա: Իր յուրահատուկ մտածելակերպի մեջ, նա մեզ հիշեցնում է Օմար Խայյամին, քայց անհամեմատ ավելի մեծ և ավելի սխառեմատիկ է քան Օմարը, և որպէս բանաստեղծ և գնոստիկ»:

Օմար Խայյամի գրական, գիտական և փիլիսոփայական ավանդը մեզ լավ ծանոթ է: Նրա քառյակները քանիցս թարգմանվել են հայերենի⁶⁴: Բայց Աբուլ Ալան դեռ անծանոթ է մեզ և նա դժբախտաբար չի գտել մի թարգմանիչ արաբագետ հայերի մեջ: Մեզ համար, որ անծանոթ ենք այդ ճոխ լեզվի նրբություններին, քայց որոնց հմայքը այսուհանդերձ դյուրում է մեզ, մնում է կատարել այդ քերթվածների թարգմանությունը արևմտյան լեզուներից, որոնց մեջ մեր հանդիպած ամենահաջող թարգմանություններն են Ռ. Ա. Նիկոլսոնի և Հենրի Բերլեյնի կատարած անգլերեն փոխադրությունները, ինչպես և Ամին Ռիհանիի «Լազամիաթ»-ի կատարած թարգմանությունը:

ԱԲՈՒԼ ԱԼԱՅԻ ԿՅԱՆ-ՔԸ (973–1057 Ք. հ.)

Աբուլ Ալա ծնվել է Հեջրի 363/973 թվին Հալեպի շրջակայքում գտնվող Մաարբա ան-Նոման ավանում: Ծնվել է Ուրբաթ մի օր, Բահրեյնից գաղթած մի ընտանիքում: Չորս տարեկան հասակում ծաղկախտի պատճառով երկու աչքից կուրանում է, մի աղետ՝ որը հավանաբար խորը ազդեցություն է թողնում նրա ներաշխարհի վրա: 15 տարեկան հասակում կորցնում է հորը և տեղափոխվում Հալեպ, ուր ուսանում է մինչև 21 տարեկանը (Հեջրի 384/994) և տիրապետում է օրվա բանասիրական, լեզվագիտական, փիլիսոփայական և աստվածաբանական գիտություններին: Աբուլ Ալան դեռ 11 տարեկան հասակից սկսել էր բանաստեղծել: Հետևաբար տարօրինակ չէ, որ վերադառնալով իր հայրենի ավանը, նա կազմում է իր քերթվածների առաջին ժողովածուն, որը անվանում է «ԿԱՅԾ-ՔԱՐԻ ՀՐԱՅԱՅՏ»: Այս ժողովածուն պարունակում է ներբողականներ, եղերերգություններ, քնարերգական հատվածներ: Բայց այս առաջին հատորում դեռ բացակայում է նրա հասուն տարիքի փիլիսոփայական խորքը: Իր կյանքի այս քեղուն շրջանում, որը տևում է մինչև նրա 35 տարիների լրումը, Աբուլ Ալան ստվար նամակագրություն է պահպանում իր ժամանակի հայտնի բանասերների, իրավաբանների, բանաստեղծների և քերականագետների հետ: Այդ նամակները, որոնք գրված են երբեմն հանգավորված արձակով, ճարտասանության և լեզվական հղկվածության օրինակներ են, որոնց մեջ նա ցուցաբերում է արտակարգ վարպետություն⁶⁵:

⁶³ A literary History of Persia, Ed. G. Browne, vol. II.

⁶⁴ Նրանց համար, որոնք ծանոթ են պարսկերեն քնագրին, միակ ճշգրիտ, հարազատ և գեղարվեստական թարգմանությունը Հովսեփ Միրզայանինն է, որը առաջին անգամ հրատարակվել է 1924 թվին Թեհրանում և որի լրիվ վերահրատարակությունը մամուլի տակ է:

⁶⁵ Margoliouth, Letters Abu-l-'Ala, Oxford 1898.

Կատարելագործելու համար իր գրական և բանասիրական կրթությունը, Հեջրի 398 թվին (1007) Աբուլ Ալան ճամփորդում է Բաղդադ, որը դեռևս իսլամական աշխարհի մտավորական և գեղարվեստական կենտրոնն էր, և ուր կարելի էր հանդիպիլ օրվա մեծագույն մտավորականներին և, միաժամանակ, օգտվել այնտեղի հարուստ գրադարաններից: Աբուլ Ալայի անունը արդեն ծանոթ էր մայրաքաղաքի իմաստասերներին և գրականագետներին, նրան գրկաբաց ընդունում են իրենց ժողովներում և հավաքություններում և նա պատեհություն է ունենում այնտեղ ծանոթանալ օրվա տաղանդների մեծամասնության հետ: Նա մնում է Բաղդադ մեկ տարի և 7 ամիս և մեծ հոշակ է ստանում որպես կատարելագործված քերթող և հմուտ քննադատ:

Աբուլ Ալան, որը պատանի հասակից հակված էր ճգնավոր և մեկուսի կյանքի, շուտով հոգնում է Արբայան խալիֆաների մայրաքաղաքից և 401 թվին (1010) վերադառնում է իր ծննդավայրը, ուր մնում է մինչև կյանքի վերջը և ուր վախճանվում է և թաղվում, Հեջրի 449, Ք. հ. 1057 թվին:

Մեկուսացած և ճգնավոր կյանքը ամբողջ այդ 47 տարիների ընթացքում նրան դարձնում է առասպելական մի տիպար: Նա ինքն իրեն կոչում է «ԵՐԿՈՒ ԲԱՆՏԵՐԻ ԱՎԱՆԴԸ» որով նա ակնարկում է նախ իր կուրության և ապա իր ինքնակամ արգելափակմանը:

Այդ երկար տարիների ընթացքում նրա գրադմունքը կայանում էր միմիայն ստեղծագործության և դասավանդության մեջ: Այդ շրջանին են պատկանում նրա գեղարվեստական և փիլիսոփայական մեծագույն երկերը, որոնք տարածեցին նրա հոշակը ամբողջ մահմեդական աշխարհում, Պամիրից մինչև Անդալուցիա: Աբուլ Ալայի մասին քանկագին մի վկայություն է մեզ հասել Իրանի գրականությունից: Դա պարսիկ մեծ բանաստեղծ-փիլիսոփա և էսմայիլյան աղանդի պարագլուխներից՝ ՆԱՍԵՐ ԽՈՍՐՈՎԻ (Ք. հ. 1003–1088) հիշատակությունն է իր «ՍԱՖԱՐ ՆԱՄԵ»-ում (Գիրք ճանապարհի): Իրանի ծայրագույն արևելքից, ՄԱՐՎ քաղաքից ճամփորդելով դեպի Գահիրե, 1047 թվի Հունվար 12-ից 15-ը Նասեր Խոսրովը կանգ է առել Մաարբա ան-Նոմանում: Չնայած նրան չի հաջողվել անձամբ հանդիպել Աբուլ Ալային, այսուհանդերձ նա իր տեսածն ու լսածը հետևյալ կերպով է ավանդել.

«Այնտեղ ապրում էր մի մարդ, որ կոչվում էր Աբուլ Ալա ալ-Մաարբի, քաղաքի մեծագույն անձնավորությունը, որը կույր էր: Նա շատ հարուստ էր և ուներ բազում ծառաներ և սպասարկուներ. իրականում՝ քաղաքի բոլոր քնակիչները կարծես նրա սպասավորները լինեին: Բայց նա որդեգրել էր մենակյաց և քաշված կյանք, հազին ուներ կոպիտ մի պատմուճան և փակված իր տան մեջ՝ օրվա մեջ միայն կես հաց էր ուտում և ուրիշ ոչինչ: Ես լսեցի, որ նրա տան դռները միշտ բաց էին և որ նրա ծառաները և սպասարկուները կառավարում էին քաղաքի ընթացիկ կյանքը. միայն բացառիկ դեպքում էր, որ նրան խնդրում էին միջամտել: Նա իր բարեգործությունը ոչ ոքի չէր խնայում, քայց ինքը մշտապես ծոմապահության մեջ էր, գիշերները արթուն էր մնում և որևէ աշխարհիկ գործով չէր զբաղվում: Եվ բանաստեղծության ու գրականության մեջ նա տիրացել էր այնպիսի բարձր մի դիրքի, որ Սուրիայի, Մադ-

րեքի (Մավրիտանական երկիրները և Իսպանիան) և Միջագետքի մեծագույն զիտունները խոստովանում էին, որ դարը դեռ նրան հավասար ոչ ոքի չի ստեղծել: Նա գրել էր մի գիրք, որ կոչվում է «Ալ-Ֆոսուլ վալ-Ղայաթ» ուր նա ներկայացրել էր, պերճորեն և հրաշալիորեն, հանելուկներ և այլաբանություններ, որոնց մարդիկ հասկանալ չէին կարող լիովին, նույնիսկ նրանք՝ որ ուսումնասիրել էին գիրքը իր իսկ օգնությամբ: Եվ այդ գրքի շարադրության համար պախարակում էին նրան ոմանք, հայտարարելով, որ նա ցանկացել է երգիծորեն ընդօրինակել Ղորանը (այս երգիծական Ղորանի օրինակները հասել են մեզ և թարգմանվել են գերմաներենի և անգլերենի Ծ. Թ.): Նրա ներկայության մշտապես գտնվում էին շուրջ երկու հարյուր հոգի, եկած աշխարհի չորս անկյուններից և որոնք ցանկանում էին ուսանել նրա մոտ և սովորել քերթողական և գրական արվեստը: Ես լսեցի որ նա հորինել է ավելի քան 100 հազար տուն բանաստեղծություն: Մեկը հարցրել էր նրանից թե ինչո՞ւ նա ինքը չի օգտվում Աստծո շնորհած բոլոր այդ բուրբ ու բարիքից և ամեն ինչ բաժանում է այլոց և նա պատասխանել էր. «Ես չեմ կարող ունենալ ավելին քան այն՝ ինչ կարող եմ ուտել»: Եվ երբ ես հասա այնտեղ, այդ մարդը դեռ կենդանի էր (Աբու Ալան մեռնում է դրանից 10 տարի հետո միայն: Ծ. Թ.):»:

Աբու Ալան մեռնում է 1057 թվին, 85 տարեկան հասակում, 3 օրվա կարճ հիվանդությունից հետո և թաղվում է իր հայրենի ավանում: Նրա գերեզմանաքարի վրա հետևյալ տողն է փորագրված.

**ԱՀԱ ԱՅՆ ՈՃԻՐԸ ՈՐ ԳՈՐԾԵԼ Է ՀԱՅՐՍ ԻՄ ՀԱՆԴԵՊ. ԵՍ ԱՅԴ ՈՃԻՐԸ
ՈՉ ՈՔԻ ՀԱՆԴԵՊ ՉԳՈՐԾԵՑԻ**

Աբու Ալան իր երկար կյանքի ընթացքում բազմաթիվ երկեր է հորինել, որոնց մեծ մասը այսօր չկան և կամ դեռ գտնվում են ձեռագիր վիճակում, զանազան գրադարաններում: Նրանցից մի քանիսն էլ հրատարակվել են աղճատված վիճակում: Աբու Ալային այսօր մենք ճանաչում ենք մի քանի հիմնական աշխատանքներով:

Դրանցից առաջինը նրա երիտասարդական շրջանի բանաստեղծությունների ժողովածուն է, «ԿԱՅԾՔԱՐԻ ՀՐԱՅԱՅՏԸ» անվամբ: Նրա քերթվածների երկրորդ և ամենակարևոր ժողովածուն «ԼՈՋՈՒՄԻԱԹ» կամ լրիվ անվամբ՝ «ԼՈՋՈՒՄ-ՄԱԼԱ-ՅԱԼՁԱՄ» կամ «ՊԻՏԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆՆ ԱՆ ՊԻՏԱՆԱՅ» որը կարելի է համարել նրա փիլիսոփայական հասկացողությունների լրիվ պատկերացումը:

Նրա մի այլ գրվածքն է «ՌԵՍԱԼԱԹ ԱԼ-ՂՈՖՐԱՆԸ» կամ «ՆԵՐՄԱՆ ՊԱՏԳԱՄԸ» որը կշռավոր արձակով գրված «Աստվածային Կատակերգություն» է, շատ մոտ Դանտեի մտահղացման: Այս երկում Աբու Ալան նկարագրում է իր երևակայական ճամփորդությունը Սովբերների Աշխարհը, ուր նա հանդիպում է զանազան արաբ հեթանոս և հավատացյալ բանաստեղծների: Այս երկը մասնակի կերպով թարգմանվել է անգլերենի, ֆրանսերենի, գերմաներենի և իտալերենի⁶⁶:

⁶⁶ G. Brackenburt, Cairo 1943. Nicholson, in JRAS 1900 & 1902 MEISSA, «Le Message de Pardon» Paris 1932.

Գրվածքի ազդեցությունը Դանտեի «Աստվածային կատակերգության» վրա նյութ է ծառայել բազմաթիվ ուսումնասիրությունները⁶⁷:

Աբու Ալայի ամենահանդուգն երկը, իսլամի տեսակետից, դա «ՖՈՍՈՒԼ ՎԱՂԱՅԱԹ»-ն է, որը երգիծական ընդօրինակությունն է Ղորանի և որի մի մասն է միայն փրկվել կորուստից:

ԱԲՈՒԼ ԱԼԱՅԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՀԱՅԱՑՔԸ

Աբու Ալայի կրոնական հասկացողությունները մեզ առանձնապես չեն հետաքրքրում այստեղ, քանի որ դավանանքների ազդեցությունը նրա գրականության մեջ անուղղակի կերպով է արտացոլվել միայն: Բավական է հիշել որ Աբու Ալան իր ժամանակակիցների և հետագա կենսագիրների մոտ ճանաչված է որպես ՋԵՆԴԻՂ, կամ «հերետիկոս»: Ուղղափառ մահմեդականները այդպես էին կոչում բոլոր նրանց, որոնք դիրքը հավատքի վերաբերմամբ պայմանավորված էր տրամաբանական հետևություններով, որը կասկածանքով է մոտենում վերացական ըմբռնումներին, իրապաշտ է, արհամարհում է կրոնական ծիսակատարությունները և սնտիպապաշտությունները:

Նույն այս ժամանակաշրջանում էր, որ Օմար Խայյամին հալածում էին պարսիկ կղերականները միննույն պատճառով, նրան անվանելով «դժբախտ մի փիլիսոփա, անկրոն և նյութապաշտ» որի քառյակները ապացույցն են նրա «մտքերի շփոթության և ծայրահեղ սխալականության»: Օմարին նույնպես մեղադրում էին կրոնական պարտականությունների թերացման մեջ, և նա ինքն իրեն արդարացնելու համար ստիպված եղավ նույնիսկ պաշտոնական մի «չքմեղական» գրել («Հաղագս Գոյության և Կրոնական Պարտականությունների»):

Արևելյան արևելագետները նույնպես շատ են զբաղվել Աբու Ալայի փիլիսոփայության բացատրությամբ: Առաջին անգամ Բարոն Ա. Ֆոն Կրեմերն էր, որ ծանոթացրեց Աբու Ալային արևմուտքի հետ, բայց անգլիացի արաբագետ ՆԻԿՈԼՍՈՆՆ էր որ խորապես ուսումնասիրեց նրա քերթվածները և թարգմանեց նրա բանաստեղծությունները անգլերենի: Նա իր մի հոդվածում Աբու Ալային անվանում է ազատամիտ և անհավատ մի մտավորական, որը կասկածամտությունը մի աստիճանի էր հասցրել՝ որ նույնիսկ կասկածում էր իր սեփական կասկածի վրա⁶⁸: Հ. Մասսիյնինը, որը արևելյան փիլիսոփայության մեծագույն մասնագետներից մեկն է, Աբու Ալայի այդ ծայրահեղ սկեպտիցիզմը հետևանքն է համարում Իրանի ազատամիտ փիլիսոփաների և հատկապես ԷՍՄԱՅԻԼՅԱՆ ԱՂԱՆԴԻ ազդեցության: Նա իրավամբ գտնում է, որ այդ դարաշրջանը եղել է տրամաբանական կասկածամտության և ապստամբ երգիծանքի մի շրջան, որը վարակել էր օրվա մեծագույն իմաստասերներին, փիլիսոփաներին և գրականագետներին⁶⁹:

⁶⁷ Blochet — Les Sources orientales de la Divine Comedie, Paris 1901 with bibliography on the subject.

⁶⁸ Nicholson — Abu-l-'Ale al-Ma.arri, in EI, vol. I, page 77.

⁶⁹ Massignon, Mutannabi devant le siecle ismaelien de L'Ialam (Memoires de l'institut Francais de Damas, tome III, 1936.

Հասկանալու և արժեքավորելու համար Աբուլ Ալայի գրական խոշոր ավանդը, քննաբանները նրան մոտեցել են երկու տեսանկյունից. փիլիսոփայական և քարո-
յական: Այդպես են վարվել Նիկոլսոնը, Ալի Ադհամը, Հանրի Լաուստը, Ամին Ֆ. Ռի-
հանին, Մասսինիոնը, և այլք:

Աբուլ Ալայի փիլիսոփայական աշխարհայացքը կարելի է երեք ընդհանուր
հայտարարների տակ դնել. ՀՈՌԵՏԵՍՈՒԹՅՈՒՆ (պեսիմիզմ),
ԿԱՍԿԱԾԱՄՏՈՒԹՅՈՒՆ (սկեպտիցիզմ) և ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (ոացիոնալիզմ):

ՀՈՌԵՏԵՍՈՒԹՅՈՒՆ (ՊԵՍԻՄԻԶՄ)

Աբուլ Ալայի փիլիսոփայությունը հիմնված է դառն, անողոք, անհաշտ մի հոռու-
տեսության վրա, որով թրծված են նրա բոլոր մտքերը:

Մարդը, ընկճված անողոք մի ճակատագրի բեռան տակ, հոգով ապականված,
անարգված գժուձ կրքերով, իր մեջ կրում է ողբերգական մի հակասություն. նա
ձգտում է հարատևել և անմահանալ, մինչդեռ կարճատև մի գոյությունից հետո, որը
լեցուն է տառապանքներով, հուսախաբություններով և փորձություններով՝ անփա-
ռունակ կերպով ջնջվում և ոչնչանում է: Այդ գորշ հուսահատությունը հնչում է նրա
բոլոր քերթվածներում, մի չընդհատվող, տանջալի, հոգեխարշ մեղեդու պես:

*Կյանքը լռության մի աշտարակ է:
Պղնձե մի զանգ դողանջում է արդ
Եվ լռության մեջ ծնվում է մի մարդ:
Եվ երբ դողանջի հնչյունն է լռում՝
Մի մարդ է մեռնում:*

Կամ՝ երբ այդ դառնությունը նա ձուլում է թաքուն երգիծանքի, ասելով.

*Ջարմանք չէ՛ այս, որ հողեղեն մեր կազմը թույլ,
Լինի անոթը երկնային բոցի անշեջ
Եվ ցանկության ու կրքերի մոլուցքն անհագ,
Աստված դնի այս հողաշեն վանդակի մեջ:*

Կամ՝

*Ոչ մի սուր հատու փշրել չի կարող
Պողպատե փահանն այս մղձավանջի:
Մենք այլանդակված տառերն ենք Աստծո,
Նա մեզ կը կարդա՝ հետո կը ջնջի:*

Բայց այդ դառը հուսախաբությունը չի սահմանափակվում հոգեկան և քնազան-
ցական (մետաֆիզիկ) գավառներով, այլ և անդրադառնում է նրա ընկերային, քա-
ղաքական և համայնական հասկացողությունների վրա: Նա անհանդուրժելի երգի-

ծանքով և ծաղրով է խոսում իր օրվա մարդկանց, հասարակական գործիչների և
հոգևորականների մասին: Ամենին նա նայում է անգութ հեզնանքով: Նա չի խնա-
յում որևէ դասակարգի: Մտրակում է իշխանների զեղծությունները, էմիրների խար-
դավանանքը և կաշառակերությունը, որոնց նա համեմատում է ավազակ Բեդվին-
ների հետ: Նա չի վախենում հարվածել ամենակարող «ՕԼԱՄԱՆԵՐԻՆ» կղերա-
կաններին, որոնց նա պատասխանատու է համարում համայնքի նեխվածության
համար: Իրավաբանները, քարոզիչները, կրոնական մեկնաբանիչները, բոլորը
նրա համար շահադետ, կեղծավոր և անուս ցուցամուլներ են: Նա չի խնայում նույն-
պես զանգվածներին, որոնց պախարակում է իրենց անկրթության, ստորաքարշու-
թյան, կույր սնտիապաշտության համար:

Մահարի իր տանջալի զգվանքն է արտահայտում այն կեղծիքի դեմ, որը գոյու-
թյուն ունի մարդու և նրա հոգու միջև կամ մարդու և իր դիմացինի միջև: Այդ կեղծի-
քը նա սկզբնաղբյուր է համարում մարդկային հոգու նեխվածության:

*Ինչ ես դու սպասում մի բնակարանից, որի տերը չեմ:
Դու հյուր ես այստեղ, պիտ հեռանայիս ամեն ինչ թողնեմ:
Դու կը հեռանաս դժգոհ, ակամս, օտարին հյու,
Մինչդեռ քո հոգում կը զգաս դու ագահ մի կիրք ապրելու:*

*Հոգիդ հագուստ է. կյանքը կը մաշի հագուստը հագիդ,
Նույնիսկ թե լինի պողպատից կոփված դա մի վերտ կոպիտ:
Մութ գիշերները մաշում են նրան ընթացքով դանդաղ
Եվ ստությունը օրենքն է կյանքի, քեզանից անկախ:*

*Տարբեր են մարդիկ: Անկեղծը՝ ատված համայնքի կողմից,
Խաբեբանները պտուղն են քաղում փառքի կողովից:
Նա, որ աղքատ է ոսկով, քայլում է դեպի ստություն,
Թույլերի համար սուտը ոսկի է և մեծ գորություն:*

Ուժեղ պեսիմիզմ է արտահայտված նաև նրա հետևյալ քերթվածի մեջ.

*Թող ինձ, եղբայր, խնդրեմ Աստծուն որ ինձ ների,
Մտում է ինձ կծկումն վերջին հոգեվարքի.
Դեռ խոսվում է ազնիվ մարդուց. խոսք է ունայն,
Մարդիկ այսօր ճանաչված են դիրքով միայն:*

*Հեքիաթներ են մեզ մնացել խելամուրր
Որ հյուսել են մեր նախնիքը արժանավոր:
Մի թակարդ է երկնակամարն աստեղավառ,
Դա մի ցանց է, ճակատագրի թաթը համառ:*

Դեռ սկզբից սուտն է իշխել այս աշխարհում,
Մինչ ազնիվը գրկանքներով է ծերանում:
Ճակատագիրն կույր գազան է մի վայրենի,
Անդարման է վերքը նրա ճիրանների:

Այս աշխարհը մի շարան է լույս ու մութի,
Սա մի օձ է, խայտաբղետ, օտարտոխ:

Մեր անօգնական էության ոչնչությունը դերով է պատկերացրել. այս դաժան կյանքում նա հետևյալ տողերով է պատկերացրել.

Եթե բացեա մագաղաթը այն հույժ գաղտնի,
Որի վրա հունն է գծված մեր կարճ կյանքի,
Մեզ կը տեսնես որպես փտակ մի ոսկեցույ
Որ կորել է ավազներում անապատի:

Երբեմն նա դառը հեզնանքով է ներկայացնում կյանքի ունայնության գաղափարը և երբեմն փիլիսոփայական հուսալքմամբ, ինչպես հետևյալ երկու հատվածներում.

Մի կախարդված պարտեզում, ծաղկած տեսնեք թե մի թուփ
Արքայական վարդենու, որը երբեք չի թոշնում՝
Տվեք ինձ բահ ու բրիչ, որ ձեռքերով սրբապիղծ
Գերեզմանը իմ փորեմ այդ կախարդված պարտեզում:

Կամ՝

Յերեկն ճերմակ պատան հագցրեց մեզ բոլորիս
Որ մեզ շարքով իրար կողքին մի օր թաղի.
Արեգակն է միայն աննահ այս աշխարհում,
Իսկ դարերը փշրանքներն են գիշերների:

Նրա արհամարհանքը դեպի մարդկությունը արտահայտվում է հետևյալ տողերի մեջ.

Աբու Ալա, որդիդ օրհնյալ Սուլեյմանի,
Կուրությունը քեզ տրվել է որպես բարիք,
Քանզի եթե մարդկությունը դու տեսնեիր՝
Այս աշխարհում չէիր տեսնի ՄԱՐԴ մի հատիկ:

Աբու Ալան իր հոռետեսությամբ ծառանում է այն ՀԻՆԳ ԲՈՒՆԱՊԵՏՆԵՐԻ դեմ, որոնք ճորտության են մատնել մարդկային հոգին. այդ հինգն են **Երկինքը, Բնությունը, Օրենքը, Պետությունը** և **Կարիքը**: Նա ընդվզում է այդ հինգի դեմ, գայրա-նում է, քարոզում է պայքարել և ազատագրվել այդ կապանքներից, բայց երբեք չի հանգում հուսալքման, տրտմության, թուլամորթ ինքնախաբեության կամ մի անձնատվության՝ որի մխիթարությունը լիներ սուֆիական անէացումը: Նա իր հոգու խորքում դեռ հավատում է մարդկային ուժին, սլացքին. ահա թե ինչպես է նա արտահայտում իր այդ հավատը.

Ակամայից ծնվել ենք մենք: Ծատ ուշ: Հիմա:
Գնում ենք մենք, թողած աշխարհը ակամա:
Բայց մենք, սերունդ դժգոհների ըմբոստածին՝
Տեսչում ենք միշտ ու ձգտում ենք դեպի լուսին:

Նա մարդկությանը տաժանքի է հրավիրում, փնտրտուքի, գտնելու համար հավերժական ճշմարտությունը, եթե նույնիսկ դա լոկ մի պատրանք լինի.

Վազիր, շտապիր, գտիր ու բռնիր ճշմարտությունը,
Այդ պատրանք-կույսին, որի ծիծաղը ձայնն է ջրվեժի:
Կանչիր, աղերսիր: Եվ երբ չգտնես՝ հիշիր դառնորեն
Գոնե տեսչացել, գոնե փնտրել ես շուքը հավերժի:

Մահարի ըմբոստության է հրավիրում մարդուն ճակատագրի դեմ, բայց և միաժամանակ հորդորում է տոկալ տառապանքներին, որոնք անխուսափելի են կյանքում.

Ըմբոստացիր ցավերիդ դեմ, դեն շարտիր
Այն՝ ինչ տանել անկարող է մահկանացուն.
Բայց մի մերժիր այն բաժինը նվազագույն
Որ Արարիչն է շնորհել խղճուկ մարդուն:

Աբու Ալան տառապանքի մեջ տեսնում է մարդկային քաջության, տոկունության և սիրո հիմքը, առանց որի մարդկային հոգին կը կորցնի իր արժեքը.

Մենք տառապում ենք: Միակ բանն է դա որ գիտենք վստահ:
Անկյունաքարն է դա մեր էության: Եվ եթե մի օր
Խենթությամբ անհոգ շարտենք մի կողմ ժայռը մեր ցավի՝
Այնժամ քաջության և սիրո գմբեթն կը փլի անգոր:

Միաժամանակ իր հեզնանքով և երգիծանքով նա ցանկանում է արթնացնել թշվառության, տգիտության և նախապաշարումների մեջ մխրձված մարդկության:

Նա մարդկային փրկությունը գտնում է իրականության ըմբռնման, կյանքի ռեալիստ մոտեցման, անողորմ ճշմարտության մեջ: Այդ մոտեցմամբ է որ նա գրում է.

*Թե առաջնորդը դառնայի մի օր այս քարավանի
Ես չեի խաբի անասուններին այս երկրոտանի:
Ես կը գոչեի՝ — Ահա՛ մի աշխարհ, բույսերը որի
Ցավ են, ու ջուրը թույն է անբարի:
Կյանքը տանջանք է, աշխատենք գաղթել մի ուրիշ աշխարհ,
Փախչենք այստեղից և կյանքը այս նենգ մոռանանք ի սպաս:
Ոչ մի օր — ոչ մի մասնիկ օրվա — գերծ չէ այս կեղտից,
Քայլեցնք արագ դեպի այլ մի վայր, հեռու այստեղից:
Ձեզ ճշմարտորեն զգուշացնում եմ, փախնք անվարան,
Ձեզ չեմ ցանկանում թակարդել սուտի ցանցում դյութական:*

ԿԱՍԿԱԾ ԵՎ ԵՐԿԿԱՅՈՒԹՅՈՒՆ (ՍԿԵՊՏԻՑԻՉՄ)

Աբուլ Ալան, հակառակ Արևելքի քերթողների ճնշիչ մեծամասնության, մարդկային հոգու փրկությունը և կյանքի առեղծվածի լուծումը չի փնտրում որևէ աղանդի, հավատալիքի, խորհրդապաշտության կամ նույնիսկ պանթեիզմի մեջ: Այդ տեսակետից էլ նրա միակ զուգահեռը Արևելքում Օմար Խայյամն է, որը նույնպես չի խոնարհվում աստվածային բռնության առաջ, այլ աշխատում է պարտադրել Նրան իր անթերի տրամաբանությունը: Ինչպես Խայյամը, Աբուլ Ալան ևս կրոնական բոլոր վարդապետությունների հանդեպ արհամարհական դիրք է բռնում և իր արտահայտությունների մեջ չափազանց անսքող և հաճախ հայոյական է: Նրա որոշ արտահայտություններից կարելի է եզրակացնել, որ նա կրոնը համարում է առասպելների և հեքիաթների արտառոց մի հավաքածու, ԶԱՆԳՎԱԾՆԵՐԻ ԱՖԻՈՆԸ — ինչպես կասեինք այսօր — իրականությունից փախչելու մարդկային բնազդական մի պահանջ:

*Այսօր ընդունված մի աղանդ է սա,
Մինչև այլ աղանդ այս մեկն տապալի.
Մարդիկ չեն կարող մարդկանց հետ ապրել,
Առանք հեքիաթի, սին ու տաղտկալի:*

Նրա մտքի թռիչքներում հանդիպում ենք երբեմն այն հազվագյուտ հանդգնության, որը նկատվում է միմիայն պարսիկ մեծ իմաստասեր Զաքարիա Ռազվի գրվածքներում և Խայյամի քառյակներում, որոնք մտրակում են օրվա նախապաշարումները, դավանանքները և դրանից ծնունդ առնող մարդկային հիմարությունը: Խայյամը գրում է.

*Մեկ եզ կա վերում կոչված բազմաստեղ
Եվ մեկ եզ էլ կա թաքուն գետնի տակ.*

*Խելքիդ աչքը բաց, եզների մեջտեղ
Տես իրար ընկած մի բուռ ավանակ:
(Թարգմ.՝ Հովսեփ Միրզայանի)*

Կամ՝

*Տոնն եկավ և այժմ մեր բանը լավ է,
Սաղին հին գինով կուծը կը լեցնի,
Ծունը ցոկակապ և նամազը — սանձ՝
Տոնն այս էջերի գլխից կը հանի:
(Թարգմ.՝ Հովսեփ Միրզայանի)*

Նույն բանը, բայց դառնորեն, առանց Խայյամին հատուկ գաղտնի զվարճամտության գտնում ենք Աբուլ Ալայի քերթվածների մեջ.

*Արթնացնք, մարդիկ, ով մոլորվածներ, արթնացնք հիմա,
Սրբազան կարծված կրոնները այս հերյուրանք են լոկ:
Շեյխերն ուզեցին տիրանալ ոսկու, դիրքի և անվան,
Բայց չկան հիմա. իրենց հետ մեռավ օրենքն անողորմ:*

Կամ մի այլ հատվածում՝

*Հեթանոսություն, կրոն և ավանդ, Սուրբ Գիրք և Թորաթ,
Կամ Կոսակարան, որի վրա հենվում, սնվում ենք որով,
Տարբեր ազգերի առասպելներն են հին ու սնամիտ:
Ո՞ր է այն սերունդն որը կը քայլի ճշմարիտ ճամփով:*

Մասսինիոնը, վերլուծելով Աբուլ Ալայի անաստվածությունը, դա բնական մի այդուցանք է գտնում այդ ժամանակաշրջանի ԲԱՆԱԿԱՆ ԱԶԱՏԱՄՏՈՒԹՅԱՆ: Աբուլ Ալան աթեիստ չէր այժմեական հասկացողությամբ, քանի որ ներկա չափանիշերով մենք չենք կարող կշռել 11-րդ դարու պարկեշտ, անկաշառ, ճգնակյաց և ԲԱՐՈՅԱՊԵՍ բարեպաշտ մի իմաստասերի, ինչպիսին էր Աբուլ Ալան: Նա ավելի շուտ պայքարում էր օրվա կրոնական նեղմտության, կուրության, անհանդուրժողության դեմ, աշխատում էր փշրել աղանդային հասկացողությունները, վերացնել սնտիապաշտությունը և այդ բոլորը փոխարինել ԱԶԱՏ ՀԱՎԱՏՔՈՎ, ուրույն միաստվածությամբ, որը ծնունդ էր առել Իրանում և իր բանական լուծումն էր գտել Կարմատյանների և Էսմաիլների ազատամիտ վարդապետության մեջ: Աբուլ Ալայի համար բոլոր կրոնների արժեքը համեմատական է, բայց նրանցից և ոչ մեկը մարդկության ցույց չի տալիս ճշմարիտ ուղին, որը պիտի հիմնված լինի բանականության, մտքի և դատողության վրա:

*Մխավում են մարդիկ. հրեա, քրիստոնյա թե մահմեդական,
Աշխարհում այս լայն՝ երկու խմբակի մարդիկ կան միայն.
Բանական մարդիկ, ազատ, անկաշկանդ և հավատազուրկ,
Եվ մի խումբ մարդիկ, խեղճ՝ ու մոլեռանդ՝ գրաստներ անբան:*

Սակայն, Միակ Արարչի հանդեպ տարբեր է Աբուլ Ալայի դիրքը և համապատասխանում է օրվա ընդունված Միապաշտության: Այդ բանը ցայտուն ձևով չի արտահայտվում որևէ տեղ, բայց կան բազմաթիվ հատվածներ, որոնց մեջ զգացվում է ակնածանքը, կամ ավելի շուտ՝ ԱՆՆՈՒՍԱՓԵԼԻ ԳՈՅՈՒԹՅԱՆ հասկացողությունը, առանց որի նույնիսկ բանականությունը բացատրել չէր կարելի:

*Վեր է շատ Աստված: Նա մեզ չի կարող
Ազատությունը նվիրել վերից:
Մինչ մենք կառչել ենք Նրա Գթության
Ինչպես մի ստրուկ՝ իր շղթաներից:*

Կամ՝

*Չկա Աստված թե ոչ Աստված: Ճիշտ խոսք է դա:
Իսկ Մարգարեն Նրա՝ միտքն է այն խելառի
Որ խավարում լույս է փնտրում ու մի դրախտ,
Որն հոգումն է ինձ և քո պես մի թշվառի:*

Աստվածային գոյության գաղափարը չի ժխտում նաև Խայյամը, որը իր հավատքը դեպի Միաստվածությունը ամփոփում է հետևյալ քառյակում.

*Եթե չեմ հղկել հնազանդությանդ գոհարը երբեք,
Եթե չեմ մաքրել փոշին մեղքերի երեսից իմ հեզ,
Բոլորից հեռո, գիտեմ կը գթաս ու ինձ կը ներես,
Քանզի ես երբեք ԵՐԿՈՒ չեմ կոչել էությունդ ՄԵԿ:*

ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (ՌԱՅԻՈՆԱԼԻԶՄ)

Աբուլ Ալայի բանականությունը հիմքն է համայնական արդարության, ուղղատվության և ճշմարտակեցության: Նա հորդորում է մարդկանց հետևել միայն բանականության թելադրանքներին և պահպանել «ԱՆՀԱՏԻ ԲԱՆԱԿԱՆ ԱԶՏԱՏՈՒԹՅՈՒՆԸ» ու դրանով պայքարել բոլոր խավարամիտ ավանդությունների, սովորությունների, նախապաշարումների և աղանդների դեմ: Բանականությունը նրա համար հավասար է «ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅԱՆ» երբ նա ասում է.

*Մի հանգրու Լույսը, որ տվել է քեզ Էական Գերագույն,
Դա բոց է անշեջ և աստվածային,*

*Դու խորհրդակցիր մտքիդ հետ միայն և եղիր ներհուն,
Ապավենդ է դա, հանգրվանդ վերջին:*

Բայց բանականությունը գրավականը չէ անսահման և կատարյալ իմաստության. կան բազում հարցեր, որոնց ըմբռնել կամ բացատրել բանականությամբ անհնարին է: Այդ այն անլուծելի հանելուկն է, որ ռացիոնալիզմի մեծագույն ներկայացուցիչը, Արևելքի Փիլիսոփայության Վարպետ՝ Աբու Ալի Սինան հետևյալ բառերով է նկարագրում.

*Անցա ես երկրից մինչ յոթ երկինք
Հասա Սատուրնի գահին երկնագան,
Ճամփին լուծեցի ամեն հանելուկ,
Բացի հանելուկն կյանքի և մահվան:*

Նույն մղձավանջային միտքը գեղեցկությամբ արտահայտում է Աբուլ Ալան բազմաթիվ քերթվածների մեջ. ինչպես, օրինակ՝

*Եթե ամեն ինչ պիտի լուռ մեռնի իր միջօրեին
Որպես մտածին ու սին մի պատրանք ճակատագրական՝
Ապա ինչո՞ւ է սոխակն երազում մի վարդի մասին,
Ապա ինչո՞ւ է աղոթում լուսնին մի ջրաշուշան:*

Բանականությունը, որը քարոզում է Աբուլ Ալան, նախ և առաջ քննադատական, վերլուծական բնույթ ունի. դրանով է նա ուզում մոտենալ բոլոր վարդապետություններին, լինեն դրանք հոգևոր թե փիլիսոփայական: Բայց ինչպես ասացինք, բանականությամբ նա ամեն ինչ բացատրել չի կարողանում և կանգ է առնում այնտեղ՝ ուր կանգ առան պարսիկ միատիկները: Բոլոր կրոններից բարձր, մերկացված որևէ ձևական կառուցվածքից, նա որդեգրում է «խորհրդապաշտ մի ռացիոնալիզմ» որի հիմքերի վրա կառուցում է իր աշխարհահայացքը համամարդկային և տիեզերական խնդիրների շուրջ: Դրա ուղղակի արդյունքը անաչառ մի հումանիզմ է, մարդասիրություն՝ ուր բացակայում է քնքշությունը, զգվանքը և որը արդարացնում է նրա անողոք դիրքը դեպի այդ մարդկությունը ստորացնող, նրա հոգեկան մեծությունը ապականող երևույթները:

Աբուլ Ալան հավատում է Ստեղծագործ մի Արարչի գոյության, բայց պահանջում է ԻՄԱՑԱԿԱՆ, ԳԻՏԱԿԻՅ ՀԱՎԱՏՔ դեպի այդ Գերագույն Էակը, գտնելով որ բանականորեն նրան ճանաչել, հասկանալ կամ վերլուծել չի կարելի: Ստեղծագործությունը և տիեզերական ներդաշնակությունը՝ ապացույց են այդպիսի Արարչի գոյության, չնայած այդ ստեղծագործության նպատակը անհայտ է մարդուն և անձանաչելի և Չարիքի գոյությունը այդ ընդհանուր ներդաշնակության մեջ ստիպում է մարդուն կասկածել Նրա Գերագույն Իմաստության վրա:

Ատված ինձ ստեղծեց: Չգիտեմ ինչո՞ւ:

Բայց փառք Արարչին:

Այս տիեզերքի հրաշալիքները թե չլինեին

(Որ ապացույց են Նրա գիտության ամենապարփակ)

Աշխարհն այս համակ խենթանոց էր սուկ,

Դատարկ, անմեկին:

Բանական էակը չի կարողանում Արարչին պատկերացնել ժամանակից և տարածությունից դուրս: Տարածությունը և ժամանակը միակ շրջանակն է, որի սահմաններում մարդ աշխատում է կաղապարել տիեզերական իրադարձությունները, իր գոյության իմաստը և արարչության գաղտնիքը: Այդ սահմաններից դուրս՝ ամեն ինչ անհասկանալի է նրա համար:

Դուք ասում եք ինձ, ամենագետ է Արարիչը մեր:

Դա ճշմարիտ է: Նույնն եմ ես պնդում միշտ և անդադրում:

Եվ դուք ասում եք. Նա չի պարփակվում տարածության մեջ

Եվ ժամանակի: Ես տես այդ է, որ չեմ հասկանում:

Այլ խոսքով՝ 11-րդ դարու այս մտածողը, Իրանի «խորհրդապաշտ ուսուցիչների» հետքերի վրա, հասել էր մի տեղ, ուր սրանից հազիվ 150 տարի առաջ հասավ Կանտը, որը աշխատում էր ապացուցել, որ բանականությունը ունի իր անանցանելի սահմանները: Եվ մերօրյա գիտությունը, հանձինս տիեզերագետ-ֆիզիկոս Հայզենբերգի և թվաբանագետ Գոդելի, ցույց են տալիս մարդուն նրա բանականության սահմանները, առաջինը մեզ ներկայացնելով տիեզերքի քառային և հակա-բանական կառուցվածքը և երկրորդը խորտակելով թվաբանագիտության ուսուցիչախոս հիմքերը, որոնց վրա, Պիթագորասի օրերից ի վեր, հիմնված են եղել այդ գիտության բացարձակորեն ճշմարիտ հավաստիացումները:

ՃԱԿԱՏԱԳԻՐԸ ԵՎ ՄԱՀՎԱՆ ՀԱՆԵԼՈՒԿԸ

Ահա այս կենսական խնդրի լուծման ապարդյուն ջանքերի մեջ է, որ Արար մեծ սկեպտիկ-հոռետեսը և Նիշաբուրի փիլիսոփա-քառյակագիրը այնքան են մոտենում իրար, որ հաճախ կրկնում են միմյանց մտքերը, համարյա միօրինակ մոտիվներով: Արույ Ալայի համար ճակատագիրը անողորմ և անբացատրելի մի ուժ է, որի ստրուկներն ենք մենք բոլորս անխտորրեն, չհասկացող, անօգնական և հլու: Աստծո ցանկությամբ և ճակատագրի տնօրինությամբ է (քանզի Աստծուն է պատկանում ճակատագիրը), որ մարդիկ ծնվում են անկախ իրենց կյանքից և մեռնում են՝ հակառակ իրենց կամքի: Եվ չնայած «չի կարելի կասկածել Արդարության վրա այն էակի, որը ստեղծել է անարդարությունը», այնուհանդերձ այդ էակն է պատասխանատու մարդկային բոլոր մեղքերի համար:

Աստղերն գիշերվա փնտրումն են լուծումն այս մեծ գաղտնիքի

Եվ մենք ակնապիշ հասել ենք նրանց մեր աչքը տես:

Ես այս աշխարհը եկա հակառակ իմ ազատ կամքի,

Եվ, Ատված գիտե, հակառակ կամքիս՝ գնում եմ հիմա:

Կամ՝

Ես չընտրեցի ծնունդը իմ, ոչ կյանք, ոչ մահ,

Ինչ ընտրություն տրվեց արդյոք ինձ այս կյանքում:

Ես եկել եմ կանխորոշմամբ աստվածային

Եվ կամքովն են ճակատագրի վերադառնում:

Կամ՝

Այս անջրպետում, որ տարածվում է ծնունդից մինչ մահ՝

Ճո՞րտ ենք մենք արդյոք կույր ճակատագրի, թե մարդ ենք ազատ:

Երանի ջնջի մոգական մի ձեռք կասկածները այս,

Փրկվենք խավարից և ապրենք որպես գիտակից մի մարդ:

Նույն այս միտքը, որը արտահայտել է Արույ Ալան արաբական կտրուկ և վճռական ոգով, շատ ավելի մեղմորեն, բայց նույնքան կուռ տրամաբանությամբ առաջադրել է Խայյամը տասնյակ քառյակների մեջ, որոնցից, պատահական ընտրությամբ, տալիս ենք երկուսը.

Դողողալով սկզբում հրավիրվեցա ես ի կյանք,

Չավեցալ այս կյանքից թե ոչ միայն իմ զարմանք:

Գնում եմ այժմ ակամա, և չիմացա ես բնավ,

Ինչ այս գալուց, մնալուց և գնալուց դուրս եկալ:

(Թարգմ.՝ Հովսեփ Միրզայանի)

* * *

Չնայած որ պճնված ենք գույն ու բույրով հրաշակերտ,

Մեր հասակը նոճենման ու մեր դեմքը ծաղկավետ,

Չհասկացանք, գինանձալի գինով թրծված այս հողից

Ինչո՞ւ կերբեց պատկերը մեր ճակատագիրն անհեթեթ:

ՀԱՆԴԵՐՁՅԱԼ ԿՅԱՆՔ — Հանդերձյալ կյանքի վերաբերմամբ Արույ Ալան տանվող մի դիրք է բռնում: Որպես բանական մի էակ, նա չի կարողանում հավատալ հանդերձյալ կյանքին կամ Հարության: Բայց որպես իմաստասեր և խորհրդապաշտ՝ նա նույնպես չի կարողանում հաշտվել իր վերջնական անէացման, ոչնչացման հետ: Այդ տատանումը, որը տրամաբանական հակաճառության ձև է ստանում նրա գրչի տակ, բնորոշ կերպով արտահայտվում է նրա քերթվածներում: Հետևյալ

բանաստեղծության մեջ, օրինակ, յուրաքանչյուր տող կարծես հակասում է նախորդող տողին և ցայտուն կերպով ցուցադրում է բանական էակի տազնապալից մղձավանջը և անօգնական պայքարը վերջնական ոչնչացման և անեացման դեմ.

*Մեր հոգիները մեզ հետ են: Մինչ մենք նրանց՝ չենք ճանաչում:
Ապա ինչպե՞ս այդ ճանաչենք, երբ մեզ թաղեն գերեզմանում:
Հոգին գիտե գոյությունը մի այլ կյանքի, մինչ կյանքն ներկա
Կամուրջ է լուկ դեպի մի լույս, կամուրջ վշտի, ցավի անհուն:
Ո՞վ կարող է վստահեցնել շփոթ, շվար այս էակին
Որ կը բացվի գերեզմանը և փոշեպատ՝ նա դուրս կը գա.
Ժամանակը սահում է մեղմ, սերունդները մեռնում են լուռ,
Մինչ հուսահատ մենք փարվել ենք մի տեսիլքի՝ որը չկա:*

Ավելի խորանալով Արույ Ալայի փիլիսոփայության մեջ, մենք աստիճանաբար գտնում ենք միստիցիզմի և հատկապես պարսիկ խորհրդապաշտության և պանթեիզմի գաղափարներ.

*Եթե քեզ ասեն, որ ժամանակը ոչնչացնում է, ջնջում ամեն ինչ,
Դու մի հավատա՛, ժամանակն չէ այդ, այլ ժամանակի անգութ Արարիչն:
Ժամերն անցնում են, չեն վերադառնում
Եվ հաջորդում են իրար անդադար,
Անցյալ կա միայն և մի ապագա
Ներկան չի եղել և չկա ի սպառ:
Այն՝ ինչ եղել է, չի լինի նորից
Եվ ժամանակից դուրս ոչինչ չկա.
Մինչ ժամանակը կրկնվում է միշտ,
Հավերժական է ընթացքը նրա:*

Նույն փիլիսոփայությունը, իր աննման անհոգությամբ, որի տակ թաքնված է դառը մի հոռետեսություն, կրկնում է Խայրամը քանիցս անգամներ իր քառյակների մեջ:

*Ինչո՞ւ վախենալ եկող կյանքից, լինել մռայլ ու մտախոհ,
Հավերժական ու մշտական ոչինչ չկա երկնի ներքո:
Կարճ մի շունչ է կյանքը ունայն, քեզ այդ շունչն են տվել միայն,
Մի վախենա՛ս ապագայից ու մի ողբա անցյալը քո:*

Խայրամի նմանօրինակ մտքերը այնքան շատ են, որ նրանցից մեջբերումներ անելն միայն կը ծանրաբեռնի այս աշխատանքը: Այդուհանդերձ կուզեինք նշել գոնե մի օրինակ այն ՄԻԱՆՄԱՆ տողերից, որ հաճախ կարելի է հանդիպել այս երկու մեծ բանաստեղծների քերթվածների մեջ: Այսպիսի մի օրինակ է հետևյալ հատվա-

ծը, որը իր համարյա ՆՈՒՅՆ մտքով և բառերով հեռու է զուգադիպություն լինելուց: Արույ Ալան գրել է.

*Մեր հոգիները մեզ հետ են: Մինչ մենք նրանց չենք ճանաչում:
Ապա ինչպե՞ս այդ ճանաչենք, երբ մեզ թաղեն գերեզմանում:
Այսօր քանի դեռ ինքդ քեզ հետ ես՝ ոչինչ չիմացար,
Ինչ կը հասկանաս վաղը, որ քեզնից գնացիր ի սպառ:
(Թարգմ.՝ Տոխտեհ Միրզայանի)*

Միտքը և այն արտահայտելու ձևը, բառերը, պատկերը — բոլորը նույնն են: Այն փոքրիկ տարբերությունը որ կը նկատվի՝ անպայման արդյունքն է տարբեր թարգմանությունների...

ՄԱՐԴԸ ԵՎ ԱՇԽԱՐՀԸ

Մինչդեռ Արույ Ալան ընդունելով Գերագույն մի էակի գոյությունը, ուրիշ ամեն ինչ համարում է լուկ խաբեություն՝ նա իր բարոյական հասկացողությունների մեջ, որոնցով սահմանորոշում է իր և իր նմանների (այն է՝ **գիտակցորեն պարկեշտ** մարդկության) կենցաղը՝ նա հետևում է շոշափելի, կոնկրետ չափանիշների: Մարդկությունը պիտի լինի արդար և բարոյապես՝ անխոցելի: Ուրիշ որևէ չափանիշ նրա համար գոյություն չունի: Ուխտագնացությունը, մահմեդականների գերագույն նպատակը, ՀԱԶԶ-ը, — նրա ծաղրի առարկան է, նա այդ համարում է սնոտիապաշտություն, հեթանոս օրերից մնացած մի հնամենի սովորություն և դեռ ավելին՝ այդ ուխտագնացությունը նրա համար պատկերացումն է **տգիտության, բարոյական սնանկության** (Նիկոլսոն, էջ 191–193):

Եթե Արույ Ալան, հակառակ Խայրամի, մերժում է խմել և հարբել, դա ոչ թե գրկանք է հանուն Մարգարեի պատվիրանների, այլ հետևանքն է այն համոզման, որ վայրկենական հաճույքի վայելքը պիտի բթացնի նրա մեծագույն գենքը, բանականությունը: Խմիչքը թշնամին է բանականության և դրա համար է որ նա չի խմում:

Արույ Ալայի համար մահը՝ ճակատագրի անխուսափելի մի հատվածն է. հետևաբար մարդ պիտի չվախենա մահվանից: Մարդը պիտի համակերպվի մահվան մտքի հետ քայց այդ համակերպությունը պիտի ստորաբարձ բնույթ չունենա այլ պիտի հպարտ լինի և արհամարհական, դա իր մեջ պիտի պարփակի մարդկային ոգու ազատության տենչի ամբողջ մեծությունը:

*Ես չեմ վախենում: Թող մահն մոտենա:
Ով անցնի սեմից մահվան՝ առավել դեռ հպարտ է նա:
Ում որ գտել է մահը, նա այլևս պետք չէ կասկածի,
Ո՛չ էլ վախենա: Ես չեմ վախենում:
Թող մահն մոտենա:*

Ինչո՞ւ վախենալ մահվանից, երբ դա վերջակետն է մեր բոլոր տառապանքների, ցավերի, հիվանդությունների, անկարության:

*Աստված իմ, արդյոք ես երբ կը թողնեմ աշխարհը այս սին:
Արդեն հոգնել եմ երկար ապրելուց:
Ո՞րն է իմ աստղը: Ո՞ր է տարաբախտ ու չարագուշակ
Իմ ճակատագրի այդ աստղն անզննին:
Կյանքը մի ցավ է, մի հիվանդություն, անձար, անդարման,
Եվ մահն է միակ դարմանը նրա, երազված մի նինջ
Հավիտենական:*

Մահը համարում է նա փոխարժեք այն բոլոր տառապանքների, որոնց մենք պիտի հանդուրժենք, կյանքի այս մտածին «խնջույքին» կարճ մի պահ գտնվելու համար: Այստեղ ևս հեզանքն ու դառնությունը խառնվում են միմյանց:

*Հրավիրված ես, ասենք, կյանքի մեծ խնջույքին
Եվ պատրաստ ես դրա փոխարժեքը վճարել
Արցունքներով, տատապանքով կամ խենթությամբ
Եվ կամ մահվամբ: Մի՞թե մահը չարժե ավել:*

Եւոյն արհամարհական մոտեցումն է որդեգրում նաև Խայյամը մահվան հանդեպ, երբ գրում է.

*Մեկ անգամից ավելի քանի որ մահ չէ գալու,
Մեռիր ապա մեկ անգամ, անձարությունն էլ ինչո՞ւ:
Մի բոտ կաշի ու ոսկոր, մի քիչ արյուն և ապավ,
Ինչո՞ւ այդքան տառապանք — մի բան չարժե դա բնավ:
(Թարգմ.՝ Հովսեփ Միրզաբանի)*

Եթե մենք ուզեինք Աբու Ալայի կենցաղային բարոյագիտությունը չորս տողի մեջ ամփոփել, գուցե չգտնեինք Խայյամի հետևյալ քառյակից ավելի լավ, ամփոփ և արտահայտիչ մի օրինակ.

*Եթե ցանկանաս հասնել սրբության մի աստիճանի,
Քեզանից զրկանք որևէ մարդու մի թողնիր հասնի:
Մի վախիր մահից և մի մտածիր ապրուստի մասին,
Քանզի անպայման կը հասնեն դրանք՝ հասնելու ժամին:
(Թարգմ.՝ Հովսեփ Միրզաբանի)*

Մահը Աբու Ալայի համար ճակատագրի վերջին և գերագույն ծաղրն է, «դանակի ծիծաղը»:

*Գաղտնի մի ձեռք թաքնվել է այս խավարում,
Որ պատառի կյանքիդ բողբ անլուր քեզնից.
Ոճրագործ չէ՛: Այլ դա ցուքն է մի նոր օրվա,
Որ կը շողա, ինչպես ծիծաղը՝ դանակից:*

Օրերը անցնում են անողոք, գիշերը կլանում է ցերեկվա լույսը և այդ խայտաբղետ երկօրյակները լափում են մեր կյանքը անտարբեր և համառ միօրինակությամբ.

*Խավարի մեջ կլանվում է
Արշալույսի աչքը բոտոր.
Գազանները այս երկօրյակ
Լափում են կյանքն մեր ամեն օր:*

Կյանքը նա նմանեցնում է ժայռածուտ մի ծովեզրի, որի վրա փշրվում են մարդկային ալիքները, կատաղի և անօգնական մոլուցքով.

*Կանգնել ենք ծովի ժայռածուտ ափին,
Որ ալիքները երգում են ահա.
Զարկվում են, ճչում ձայնով մոլեզին
Բառեր կրկնված, խոսքեր հնօրյա:
«Մենք, որ մեր երգով պատրանք ենք սնում»
«Ծնվում ենք ափին կախարդված լույսի»
«Լիզում ենք հինա ափն այս ժայռածուտ»
«Որպես կայանը մեր վերջին հույսի»:*

Այս հոռետես հուսալքումը վերջապես նրան առաջնորդում է դեպի **Մանիական** այն հասկացողությունը, որ մարդկության գոյությունը ինքնըստինքյան մի չարիք է, որը պիտի վերացնել ջնջելով մարդկային գոյությունը և այդպիսով վերագտնել տիեզերքի հավասարակշռությունը, որի մեջ գերագույն էակն է ինքը ՄԱՐԴԸ, ձերբազատված ճակատագրից և նախախնամությունից: Մարդիկ, եթե բնական լինեին, երբեք չէին բազմանա և պատճառ չէին դառնա նոր ծնունդների, որոնց սահմանված է միայն բազմապատկել աշխարհի տառապանքը: Հետևելով իր իսկ փիլիսոփայության, Աբու Ալան իր դամբանի վրա փորագրել տվեց այն հատիկ տողը, որը մարմնացումն է նրա հոռետես հուսալքման:

Այդ բոլոր դառնությամբ հանդերձ, Աբու Ալան չի կարողանում չտեսնել արարչագործության գեղեցկությունը, տիեզերքի անբացատրելի ներդաշնակությունը և զալիս է այն եզրակացության, որ ՄԱՐԴԸ է որ ապականում է այդ գեղեցկությունը: Այդ միտքը նա արտահայտում է շատ գեղեցիկ մի այլաբանությամբ.

Վարդի բոսոր բաժակի մեջ ապրում էին հանդարտ ու հեզ
Երկու ճարպոտ, թխլիկ որդեր, մահիճի մեջ նրբաբեկեզ:
Մեկը դարձավ մյուսին ասաց. «Որքան հանգիստ իշխանական,
Կյանք է շնորհե՛լ Արարիչը մեզ փափկասուն և պատվական»:
Մյուսը դարձավ ու դժգոհած՝ իր ճարպակուշտ եղբորն ասաց.
«Ինչ կյանք է սա, բանտ է դաժան տիեզերքում լայնատարած»:
«— Անուշ է ինձ բանտն այս տաքուկ» — ասաց մյուսը — Ե՛վ ես կերգեմ»
«Փառքը հիմա այս իմ բանտի, որը դրախտ է ու եղեմ»:

Ե՛վ ձայնեցին որդերը կուշտ՝ փառքի մի երգ լիահագագ
Ու երգեցին օրեր ամբողջ իրենց բախտը այդ երկնառաք:
Ու թնդում էր մինչդեռ երգը այդ որդերի սրտաճմլիկ՝
ԳԵՂԵՅԿՈՒԹՅԱՆ ԻՐ ՓԱՌՔԻ ՄԵՋ ԼՈՒՌ Ե՛Ր ՎԱՐԴԸ ԵՎ — ԳԵՂԵՑԻԿ:

Մարդկային ցեղի համար նրա արգահատանքը անսահման է:

Երբ մի կույր տեսնես, մի խղճա՛ նրան,
Ե՛վ վստահ եղիր, որ բոլորս մենք,
Տեսնող աչքերով, բիրերով լուսնե՛լ՝
Մութում խարխափող լոկ կույրեր ենք հեղգ:

Մարդը, հակառակ իր կարծեցյալ մեծության, չի կարողացել և երբևիցե չի կարողանալու ձերբազատվել իր կենդանական սկզբունքից, որը նրան մեխում է հողի գաղջ ստինքին, որքան էլ որ բարձր լինի նրա գագաթը:

Ես նայում եմ մարդուն ինչպես կը նայեի բարձր ծառին,
Որ գրում է սև մատներով բառեր՝ կարմիր հորիզոնին,
Մինչդեռ արմատը այդ ծառի մխրճվել է գաղջ հողի մեջ
Ե՛վ նրա բունը հաստաբետ շուրթ է հպել խոտի շուրթին:

Նույնքան հեզնականորեն է նայում նա «Աստվածային այն էակին», որը իր հոգու «սրբազան կրակով» խանձել ու ոչնչացնել չի կարողանում նույնիսկ օրվա փոքր ու ձղձիմ իր հոգսերը:

Տեղը ստեղծեց իր արբազան Բոցի համար
Կուրծքը մարդու — Աստվածային մի Կրակարան —
Մինչ այդ բոցը անկարող է խանձել նույնիսկ
Թիթեռների՝ որ մեր հոգսերն են աննշան:

Մարդկային տհաս մտքի, բարոյագուրկ նկարագրի և արյունառուշտ քնավորության խառնուրդը նա ցույց է տալիս հետևյալ հատվածը:

Հասուն մարդիկ մանուկներ են հեղգ ու թոթով,
Նրանց աննեղ օրորոցն է թամբը ուղտի:
Եթե խոսես՝ չեն հասկանա: Իսկ թե խոսեն՝
Խոսքը նրանց բարբաջանք է օտարոտի:

ԱՐԳԱՀԱՏԱՆՔ ԴԵՊԻ ՄԱՐԴԸ

Արույ Ալան հսկայական մի արգահատանք է զգում դեպի բոլոր կենդանի էակները, որոնք ակամա զոհերն են անողոք ճակատագրի: Այդ խորը խղճահարությունը զգալի է նույնիսկ նրա ամենադառն երգիծանքի մեջ: Նա խղճում է բոլոր գրկվածներին, թշվառներին, ծերունիներին, թույլներին, ստրուկներին: Նրա համար բոլոր ազգերը և բոլոր կրոնները հավասար են և նա կատարյալ արդարություն և հավասարություն է պահանջում: Նրա համար ընտրյալ մի ցեղ գոյություն չունի, ինչպես գոյություն չունի ընտրյալ մի կրոն կամ վարդապետություն: Նրա համար Մարդը, լինի դա ձորտ թե իշխան, հավասար իրավունքների տեր է:

Տես այս գավաթը որը փշրվեց ճորտիդ ոտքի տակ:
Ամեն մի գավաթ կարող ենք փշրել շարժմանք քնահաճ.
Բայց ճորտդ, հիշիր, ապրում է քեզնով, գերին քո կամքի,
Մինչդեռ նրա մեջ մենք խոնարհվում ենք Արարչի առաջ:

Նա միաժամանակ ջատագովն է խաղաղության. պատերազմը և արյունահեղությունը նա համարում է մարդկային քնածին ինքնապանծացման և գոնիկ ուժի արգասիք: Պատերազմը գերագույն ապացույցն է մարդկային գժուձ հոգու և նեղմտության:

Ո՛վ գորավար, կիրքդ զսպիր,
Ինչի՞դ է պետք զոհ ու նախճիր,
Ճակատագիրն ծաղրում է քեզ,
Դեմքը թրջած արյամբ կարմիր:
Խնայիր մեզ: Բավական են
Հարվածները ճակատագրի
Թե կարող ես՝ արտասովաթոր
Ու ցավազար մարդուն օգնիր:

Բայց նա նույնքան արգահատանքով է նայում նաև բոլոր այն աշխարհակալներին, որոնք իրենց կյանքը վատնում են սին փառքի հետևից ընկած:

Չքավոր է թագավորը, որ ռազմից-ռազմ
Թափառում է և չգիտե ո՞ր պիտ քնի:

Որի թագը, արքայական գլխի վրա,
Կայուն է լոկ սին քնայքով մի մերկ սրի:

Մարդկային հակադարձ անգթությանը նա հակադրում է արդարության, իրար-
հասկացողության և հոգեկան ներդաշնակության մի աշխարհ, ուր մարդիկ, գի-
տակցելով իրենց ընդհանուր թշվառությունը և անօգնական վիճակը, բանականու-
թյան և սիրո ընդհանուր մի ճակատ կը կազմեն կյանքի անարդարության դեմ: Ահա
թե ինչպես է պատկերացնում Աբուլ Ալան մարդկային ցեղի միասնականությունը,
անբաժանելիությունը.

Երբ մի հոգի հեռանում է, թե՛լ է պակսում մեր թիկնոցից
Երբ զարկում է բախտը դեմքիդ՝ ժպտա՛ նրան դու անկակիճ.
Տես թե ինչպես, վերջին անգամ, իր չխամրած հոգեվարքում,
Խավարի դեմ համառորեն մաքառում է բոցը նորից:

Այս քառյակը տարօրինակ կերպով հիշեցնում է անգլիացի միջնադարյան մեծ
բանաստեղծ Ջոն Դոնի հետևյալ տողերը.

Յուրաքանչյուր մարդու մահվանը մի բան պակսում է ինձնից:
Քանզի ես մասնիկն եմ մարդկության:
Երբեք մի հարցրու թե ո՞ւմ համար է դողանջում մահազանգը.
Դա դողանջում է քեզ համար:

ԿՅԱՆՔԻ ՈՒՆԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Չնայած Աբուլ Ալան իր քերթվածների մեջ անդադար անդրադառնում է կյանքի
անցողիկ ունայնության, բայց այդ զգայնությունը նրա մոտ միշտ կապված է դատր
մի հոռետեսության հետ, և մենք չենք հանդիպում այստեղ Խայյամի հանդարտ, փի-
լիսոփայական մոտեցմանը, որը կազմում է վերջինիս հմայքի ամբողջ գաղտնիքը:
Մինչդեռ Խայյամը աննման թախիժով և միաժամանակ խորը հասկացողությամբ է
խոսում կյանքի անցողիկ բնույթի մասին, Աբուլ Ալայի մոտ չենք գտնում այդ էական
անձնատվության, հաշտության և վերջնական ներման զգացումը, որը Խայյամին
ասել է տալիս.

Քանի որ ոչ ոք վաղը չգիտե,
Ուրախ պահիր այժմ սիրտդ վշտակեզ.
Խմիր, ով Լուսին, քանզի լուսինը
Շատ պիտի դառնա ու չգտնե մեզ:
(Թարգմ.՝ Հովսեփ Միրզայանի)

Կամ՝

Տես, փեշը վարդի ճեղքվել է հովից,
Սոխակը վարդով դարձել խնդագին.
Նստիր վարդի տակ, որ շատ վարդ այսպես
Բուսնել է գետնից ու թափել գետին:
(Թարգմ.՝ Հովսեփ Միրզայանի)

Դրա փոխարեն, համարյա նույն շնչով, բայց փիլիսոփայական **ավելի** խորու-
թյամբ (ծնունդը և մահը կապելով իրար) և բանաստեղծական **պակաս** նրբությամբ,
հետևյալն է ասում Աբուլ Ալան.

Խոսիր միայն այգեբացի այուքի հետ այն
Որ քշում է թերթիկները վարդի խելառ.
Նա գրկել է ոսկե՛ խինդը անծին սերմի
Ու վարդենու վերջին հատաչը ցավագար:

Ինչպես գիտենք, Խայյամը կուժին ու բրուտին նվիրված քառյակների մի ամ-
բողջ շարք է գրել, որոնք հայտնի են «ԲՈՒՋԵ-ՆԱՄԵ» (Սափորագիրք) անվան
տակ: Հետաքրքիր է նկատել, որ նույն ոգով գրել է նույնպես Աբուլ Ալան, դեռ
Խայյամից առաջ.

Մի օր գիտեմ, այս բրուտը հող կը դառնա,
Ուրիշ բրուտ, նրա հողից կուժ կը շինի.
Հարբածները կուժի գինին կը դատարկեն
Ու կը զարկեն դատարկ կուժը մի այլ քարի:

Եվ վերջապես խայյամական կարելի է կոչել հետևյալ հատվածը, ուր Աբուլ Ալան,
հակառակ իր համոզումների, գուցե անհոգ և երջանիկ մի րոպեի, հորդորել է ուրա-
խությամբ անց կացնել անցավոր այս կյանքը:

Տես այս շքերթը, որը անցնում է քաղաքի միջով.
Դա սև ու ձերմակ օրերիդ համառ շքերթն է ահա,
Ու դու փոխարեն նրան հետևես ողբ ու կակիժով՝
Ծնծղա ու ծափով, անհոգ ընթացիր հոսանքով նրա:

* * *

Ծանոթանալով Աբուլ Ալա ալ-Մաարրիի ստեղծագործության և դրա մեջ արտա-
հայտված նրա մտքերի ու փիլիսոփայության հետ, չենք կարող գապել մեր հիաց-
մունքը և միաժամանակ զարմանք դեպի նրա ազատամիտ, հակա-սնտիապաշ-
տական, մարդասիրական և համամարդկային զգացումները, որոնք ակամայից
մեզ ստիպում են նրան համեմատել Իրանի 11-րդ դարու կրոնական-ազատագրա-
կան մեծագույն շարժումների հետ, որոնք լայն արձագանք են գտել պարսիկ ար-
ձակ և չափածո գրականության մեջ: Նրա հանճարի ամենամոտ զուգահեռը մենք

գտնում ենք, քանաստեղծության մեջ, Օմար Խայյամի գիտական, փիլիսոփայական և քանաստեղծական տիպարում: Ավելի սեղմ և ընդարձակ համեմատություն այս երկու արևելյան հանճարների մեջ երևան կը հանի ինչպես նրանց միօրինակ, նույնպես և ազգային խառնվածքով տարբերվող բնութագծերը, որոնց ուսումնասիրությունը իսկապես հետաքրքիր մի դրվագ կարող է կազմել արաբ և պարսիկ գրականությունների համեմատական քանասիրության քննազավառում:



ՊԱՐՍԿԵՐԵՆ ԱՌԱՋԻՆ ԲԱՌԱՐԱՆԸ

Մեր ձեռքն հասած պարսկերեն առաջին բառարանը, «ԼՈՂԱԹԵ ՖՈՐՍ»-ն է, որը կազմել է պարսիկ մեծ քանաստեղծ ՀԱԲԻՄ ԱԲՈՒ ՆԱՍԻ ԷՐԵՆ ԱՇՄԱԴ ԱՍԱԴԻ ԹՈՒՍԻՆ, Հեջրի 458-465 թվականների միջև (Ք. հ. 1065-1072):

Այս բառարանի մեծ կարևորությունը կայանում է նրանում, որ պահպանելով հանդերձ պարսկերեն լեզվի ամենանախնական բառերի մի մասը, Ասադին միաժամանակ կորուստից փրկել է հոչակավոր, բայց ժամանակին ոչնչացած մի քանի պոեմաների պատահիկներ և այժմ անհետ կորած բազմաթիվ քանաստեղծություններից փոքրիկ, բայց արժեքավոր նմուշներ:

Նախքան այս բառարանի մասին խոսելը, հիշատակենք այն մի քանի հազվագյուտ տեղեկությունները, որ մեզ հասել են նրա հեղինակի կյանքից:

Ասադի Թուսին մեկն է Իրանի 11-րդ դարի առաջին կեսի մեծագույն դյուցազներգուներից, որի գրչին է պատկանում «ՇԱՀՆԱՄԵ»-ից անմիջապես հետո գրված մեծարժեք «ԳԱՐՇԱՍՊ ՆԱՄԵ» դյուցազներգությունը և հինգ «վիճաբանական» պոեմաներ, որոնք իրենց ձևի և տեսակի մեջ նորություն էին պարսիկ ետ-իսլամական գրականության համար⁷⁰: Նրա անվան և ծննդավայրի մասին որևէ կասկած գոյություն չունի, բայց ծննդյան թվականը անհայտ է և ըստ քանասերների քննական տեսության, նա պիտի ծնված լինի շուրջ 1010 թվին (Ք. հ.):

Այս քերթողի անձնավորության շուրջ մինչև վերջերս մի թյուրիմասություն գոյություն ուներ, որի աղբյուրը պիտի փնտրել Դովլաթշահ Սամարղանդիի «Թագվարաթոլ — Շոարայի» (Հիշատակությունը Բանաստեղծների) մեջ արված կենսագրական սխալ տեղեկություններում: Այդ տեղեկությունները հետագայում թյուրիմացության մեջ են ձգել այնպիսի մեծ արևելագետների, ինչպիսիքն էին Դր. Հ. Էթեն և Էդ. Բրաունը, որոնք, համաձայնեցնելու համար Դովլաթշահի ավանդած պատմությունը Ասադու կյանքի ժամանակագրության հետ, ստիպված են եղել ենթադրել, որ գոյություն են ունեցել երկու Ասադիներ, հայր և որդի, և ապա եղած գրական ավանդը բաժանել են այդ երկուսի մեջ: Իրանի հնագույն կենսագիրներից՝ Արուզի Սամարղանդին և Աուֆին չեն հիշատակում Ասադու անունը: Մինչդեռ Դովլաթշահը, նրա մասին գրելիս ասում է, որ Ասադին Ֆերդովսու ուսուցիչն է եղել և նրա քրոջ

⁷⁰ Նախ-Իսլամական Իրանի գրականության մեջ այդպիսի «վիճաբանական» պոեմա գրվել է պարթև-արշակունյան լեզվով, որը հայտնի է «Իրախտ Ասուրիկ» անվան տակ և ներկայացնում է մի այժի և արմավենու վիճաբանությունը:

որդին և իր պատմությունը հիմնավորելու համար՝ մտացածին մանրամասնությունների մեջ է մտնում:

Պարսիկ հայտնի բանասեր ՖՈՐՈՒԶԱՆ ՖԱՐԸ իր «ՍՈՒՆԱՆ ՎԱՍՈՒՆԱՆ ՎԱՐԱՆ» («Գիր և Գրողներ») աշխատանքում առաջին անգամ ապացուցեց «երկու Ասադիների» վարկածի անհերքելիությունը: Նրանից հետո սովետական արևելագետ Կ. Ի. Չայկովսկին և Ե. Է. Բերտելսը վերջնականապես ապացուցեցին, որ «Գարշասպ Նամե» դյուցազներգության, հինգ վիճարանական պոեմաների և «Լողաթև Ֆորս» բառարանի հեղինակը միևնույն անձն է եղել, որը ապրել է Ֆերդովսուց հետո և որևէ կապ չի ունեցել Ղազնավիների արքունիքի հետ: Այդ առթիվ Ե. Է. Բերտելսը գրում է. «Ասադուց մեզ հասած ստեղծագործությունների ուսումնասիրությունը մեզ այն եզրակացության է բերում, որ երբևիցե «երկու Ասադիներ» գոյություն չեն ունեցել... Ասադին ծնվել է Ֆերդովսու ծննդավայր Թուս քաղաքում, 1010 թվին: Հետևաբար նա չէր կարող գտնվել Մահմուդ Ղազնավիի արքունիքում: Թե ինչպես է սկսվել նրա բանաստեղծական գործունեությունը՝ չգիտենք: Մի բան վստահ է — նրա նախնական քերթվածների շարքում եղել են մի քանի վիճարանական ԳԱԶԵԼՆԵՐ՝ որոնց շնորհիվ նա մեծ հռչակ էր շահել»⁷¹:

Ասադու ժամանակ, 11-րդ դարի 30-ական թվականներին, Խորասանը և Արևելյան Իրանի մեծ մասը ապրում էր շփոթ և խառնակ մի շրջան: Սելջուկ ցեղը ապստամբվել էր Ղազնավյան հարստության դեմ, ասպատակում էր անպաշտպան երկիրը և Խորասանում աննախընթաց սով էր սկսվել: Ասադին, որ նման պայմաններում ոչ թե բանաստեղծել, այլև գլուխը պահել դժվարանում էր, թողնում է Խորասանը և հյուսիսային Իրանի ճանապարհով ուղևորվում է Ադրբեջան և Հայաստան: Հայաստանում ապրելու բարենպաստ պայմաններ է գտնում և հաստատվում է Նախիջևանում, ուր իշխում էր ԱՌՈՒ ԴՈԼԱՑ ԴԵՅՐԱՆԻՆ, որին Ասադին անվանում է,

Արմենների Թագավոր, Իրանցիների թիկունք,

Արարների մեծն ու Շեյբանիների թագը,

Արքա ԲՈՒ ԴՈԼԱՑ, երկրի Շահրխարը:

Նախիջևանում նա մտում է երեք տարի, որի ընթացքում գրում է իր «Գարշասպ Նամե»-ն: Ըստ երևույթին, նա չի կարողանում հաստատվել Նախիջևանում և այնտեղից ձամբորդում է Անի, ուր իշխում էր Շոջա՝ Էդ-Դովլե Աբու Շոջա՝ Մանուչեհր Էրնե Շավուրը, Շադդադյան իշխանական տոհմից: Անիում Ասադին գրում է իր հայտնի վիճարանական «Տեգ և աղեղ» պոեման: Այդ ժամանակ է նաև, որ Ասադին արտագրում է Մովաֆադ Հարավիի «Դեղագիտական Մատյանը», որը այժմ գտնվում է Վիեննայի գրադարանում: Այդ մատյանը Ասադին արտագրել է 1055-56 թվականին, հավանաբար գրագրի վարձատրություն ստանալու համար, մի բան, որ ցույց է տալիս նրա չքավորությունը: Անիում նրա գրած քերթվածներից երևում է, որ

⁷¹ Ե. Է. Բերտելս, «Պատմություն-Տաղջիկյան Գրականության», Մոսկվա, 1960, էջ 242 (ոուսերեն):

նա արդեն ծերացած և ձերմակահեր է եղել: Ասադին մեռել է Հեջրի 465 թվին (Ք. հ. 1072-73-ին):

«ԼՈՂԱԹԵ ՖՈՐՍ» ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆԸ

Ասադին «Գարշասպ Նամե» դյուցազներգությունը վերջացրել է Հեջրի 458 (Ք. հ. 1065-66) թվականին: Դրանից անմիջապես հետո է, որ հավանաբար նա կազմում է իր Բառարանը, իր աշակերտ և բանաստեղծ Ալ-Ղոթրիի խնդրանքը: Ասադին, ինչպես դա աչքի է զարկում նրա դյուցազներգության մեջ, կատարելապես տիրապետում էր Արևելյան Պարսկաստանի գրական ԴԱՐԻ բարբառին, որը իր մայրենի բարբառն էր: Ըստ երևույթին, նրա նպատակն էր մոտից ծանոթացնել Ադրբեջանի և Արրանի (Աղվանաց երկրի) բանաստեղծներին ժամանակի ընդունված կլասիկ գրական լեզվի հետ: Այդ նպատակով էլ նա հավաքում է բանաստեղծական հատվածների մեջ հիշատակված խրթին, անհասկանալի կամ հազվագյուտ բառերը, տալիս է դրանց իմաստի բացատրությունը, գործածության ձևը, յուրաքանչյուր բառի համար բերելով բանաստեղծական մի օրինակ Արևելյան Իրանի մեծ քերթողներից: Այսպիսի մտային պրոցեսի շնորհիվ է, որ այսօր մենք ունենք հազարամյա բացատրական մի բառարան, որը, բացի իր լեզվագիտական արժեքից, մի գանձարան է պարսիկ հնագույն բանաստեղծների գործերից, որոնցից շատերի քերթվածները անհետ կորել են: Այդ բանաստեղծներից մեծ մասի համար այսօր իրանագետները գաղափար իսկ չէին ունենա, եթե չլինեին այս բառարանի մեջքերումները: Որպես ցայտուն օրինակ, բավական է հիշել, որ պարսիկ առաջին կլասիկ՝ ՌՈՒԴԱԲՈՒ գրած երկու պոեմաներից, «ԲԱԼԻԼԵ ՎԱ ԴԵՄՆԵ» և «ՍԻՆԴԲԱԴ ՆԱՄԵ»-ից միայն այս հատորում են պատահիկներ մնացել: Նրա շնորհիվ է պահպանվել նաև ՕՆՍՈՐԻ-ի «ՎԱՄԱՂ ՎԱ ՕԶՐԱ» պոեմայի մի մասը, ինչպես և 10-րդ դարի իրանյան երգիծական գրականության նմուշները, որոնց դժվար է հանդիպել ժամանակակից այլ հատորներում: Այդ լպիրշ երգիծանքները այսօր մեծ նշանակություն ունեն բանասերների համար, ճշտելու համար օրվա գործածական ոամիկ բառերը, անարձանագրելի արտահայտությունները, որոնք իրենց հերթին լուսաբանում են այդ շրջանի կենցաղային պայմանների և կարգերի մի շարք հետաքրքիր երևույթներ:

Առաջին անգամ Արևմուտքում գերմանացի արևելագետ ՓՈԼ ՀՈՐՆ էր, որ 1897 թվին հրատարակեց այս բառարանը, օգտվելով Վատիկանի գրադարանում գոյություն ունեցող միակ ձեռագրից, որը գրվել է Հեջրի 733 թվին: Հետագայում Իրանում գտնվեցին չորս նոր ձեռագիր օրինակներ, որոնց հիման վրա լույս տեսան Թեհրանում նախ 1940 թվին Արքա Էգրալի և ապա 1958 թվին Դաբիր Սիադիի քննական հրատարակությունները:

Այս բառարանը կազմված է ըստ բառերի վերջին տառի հետևողականության և պարունակում է 1196 հիմնական և 118 հոմանիշ բառեր: Յուրաքանչյուր բառի համար բերված է վկայություն որևէ մի բանաստեղծից: Այդպիսով բառարանում հիշված են 77 տարբեր բանաստեղծներ, որոնք պատկանում են 10-րդ դարին և 11-րդ դարի սկզբնական շրջանին: Ժամանակագրական տեսակետից հիշված վերջին բանաստեղծներն են Բահրամին, Մոեզգին և Մասուդ Ղազնավին: Գրչագիրների

անփութության պատճառով եղած ձեռագիր օրինակների մեջ շատ մեծ տարբերություններ կան, ինչպես բառերի ուղղագրության, նույնպես և նրանց արտասանության մեջ: Բանասերները դեռևս սպասում են այս բառարանի ավելի հին մի օրինակի հայտնագործմանը, ճշտելու համար թե եղած օրինակներից ո՞ր մեկն է բնագրին ամենից ավելի մոտ:

Այն՝ ինչ մեզ առավելապես հետաքրքրում է այս բառարանում, դա նրա մեջ եղած հայերեն հոմանիշ կամ նույնարմատ բառերի գոյությունն է: Մի բան, որ աչքի է զարկում, դա բառերի հայերեն արտասանության հարազատ պահպանումն է վերջին հազարամյակում: Օրինակ, բառեր, որ հետագայում այլ տեսք են ստացել պարսկերենում, հայերենում պահպանվել են իրենց նախնական ձևով:

- براک **ԲԱՐԱԿ**, այսօր պարսկերենում գրվում և հնչվում է **ԲԱՐԻԲ**, باریک
- بون **ԲՈՒՆ**, այսօր պարսկերենում գրվում և հնչվում է **ԲՈՆ**, بن
- کوز **ԿՈՒԶ**, գործածվում է միայն **ԳՈՒԺ**, **ԳՈՒԺՓՈՇՏ** ձևի տակ, کوز
- چکاد **ՃԱԿԱՏ**, չի գործածվում:
- سوک **ՍՈՒԳ**, չի գործածվում: Գործածվում է **ՍՈՂՈՒՐ** ձևի տակ:
- هنگ **ՀԱՆԳ** գործածվում է միայն **ԱՀԱՆԳ** ձևի տակ, آهنگ
- یاکند **ՀԱԿԻՆԹ**, գործածվում է **ՅԱՂՈՒԹ** ձևի տակ միայն, یاقوت
- بساک **ԴՍԱԿ**, չի գործածվում:
- چک **ՔԻՉ**, չի գործածվում:

Մենք ստորև կաշխատենք տալ բոլոր այն բառերը, որ կարողացել ենք գտնել այս բառարանում հայերեն հոմանիշներով: Մի լեզվաբան անպայման կգտնի դրանից բացի այլ բառեր ևս, որոնց ստուգաբանությունը անհայտ է մեզ:

ԲԱՌԵՐ, ՈՐՈՆՑ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՏՆԻ Է

- آگیش **ԱԿԻՇ**: Բաց որպես **ԿԱՍԱՐԱՆ**, **ԿԱՍԱՂԱՆ**: Հայերենում ունի <թոնիթ խառնելու երկաթե ձողի> նշանակություն:
- امیغ **ԱՄԻՃ**: Բաց. **ԽԱՌՆՈՒՐԴ**: Հայերեն՝ <մսից շինված համադամ>, <մազգա>: Միտքը նույնն է:
- اندام **ԱՆԴԱՄ**: Նույնիմաստ:
- آبکینه **ԱՊԱԿԻ**: Նույնիմաստ:
- اسپریر - اسپریر **ԱՍՊՐԵՐ**: Նույնիմաստ:
- ارج **ԱՐԺԱՆԻՔ**: Նույնիմաստ:
- باز - باژ **ԲԱԺ-ԻՆ**: Այժմ պարսկ. գործ. **ԲԱՋ** = տուրք մտքով:
- براک **ԲԱՐԱԿ**: Այժմ պարսկ. գործ. **ԲԱՐԻԿ** ձևի տակ:
- بون **ԲՈՒՆ**: Ծառի արմատ: Ներկա պարսկ. **ԲՈՆ**: بن
- بوب **ԲՈՒԲ** (գորգ): Չի գործածվում ոչ հայր. և ոչ պարսկ.:
- گاه **ԳԱԸ**: Տրված է <Գահոյկի> **ՄՍՏՈՒՄ** մտքով:
- گرمز **ԳԵՐԵՋՄԱՆ**: Բաց. <Փարսիները ասում են Դրախտն է և քանաստեղծները ասում են երկինքն է>:

- گیج **ԳԻԺ**: Բաց. <Հիմար և ապշած և ինքնագոհ>:
- گور - گور **ԳՈՒՌ**: Բաց. <Փոքրիկ հորի նմանող փորվածք>:
- گوازه **ԳՎԱԶԱՆ**: <Փայտ է որով բշում են կովերին>:
- گوز **ԳՈՒՐԶ**: Նույնիմաստ:
- نژن **ԴԱԺԱՆ**: Նույնիմաստ:
- دایه **ԴԱՅԱԿ**: Նույնիմաստ:
- دسته **ԴԱՍՏԱԿ**: Նույնիմաստ:
- دیو **ԴԵՎ**: Նույնիմաստ:
- دژخیم **ԴԺԽԵՄ**: Նույնիմաստ:
- دژند **ԴԺՆԴԱԿ**: Նույնիմաստ:
- دژم **ԴԺՆՅԱ**: Նույնիմաստ:
- درفش **ԴՐՈՇ** (**ԴՐԱՎՇ**) Նույնիմաստ:
- ارغوانی **ԵՂՐԵՎԱՆԻ**: Հայր. գործածվում է **ՇԵՓՈՐՈՒԿԻ** համար միայն:
- رنگ **ԵՐԱՆԳ**: Նույնիմաստ:
- زنگ **ՋԱՆԳ**: Նույնիմաստ:
- تنیک **ԹՆԲՈՒԿ**: Նույնիմաստ:
- تندور **ԹՈՆԴԻՐ** Նույնիմաստ:
- ترنج **ԹՈՒՐԻՆԶ**: Նույնիմաստ:
- لادن **ԼԱՏԱՆ**: Գործ. նույն հոտավետ խեժի, կնտրուկի մտքով:
- غنچ **ԽՈՒՆՃ**, **ԽՆՃԻԿ**: Նույնիմաստ:
- خله **ԽԼԻՆ-Ք**: Բաց. <թանձր ջուր է, որ ծորում է քթից>:
- کوز **ԿՈՒԶ**: Բաց. <Երկուտակված, ծոված>: Արդի պարսկերեն **ԳՈՒԺ**: کوز
- کوپال **ԿՈՊԱԼ**: Երկաթե գավազան, լախտի մտքով է:
- چکاد **ՃԱԿԱՏ**: Երկու մտքով է բերված: **ԳԼԽԻ** կապակցությամբ, որպես <**ՃԱԿԱՏ**> նույնպես **ԼԵՌՆԱԿԱՏԱՐԻ** մտքով:
- چنگ **ՃԱՆԿ**: Նույնիմաստ:
- چاک **ՃԱՔ**: Նույնիմաստ:
- چترنگ - شترنگ **ՃԱՏՐԱԿ**: Նույնիմաստ:
- مرزبان **ՄԱՐԶ**: Սահման մտքով: Նույնպես **ՄԱՐԶՊԱՆ**:
- مغ **ՄՈԳ**: Նույնիմաստ:
- ماری **ՄԵՌԱՄ**: Գործածվել է <Սպանված, մեռած> մտքով:
- میغ **ՄԵԳ**: Նույնիմաստ:
- (میز - مین) **ՄԻՋԵԼ**: <Ջուր բշել նշանակի>:
- هنگ **ՀԱՆԳ**: Նույնիմաստ:
- اندمه **ԱՆԴՄԱՆԵԼ**: <Հիշեցնել անցյալի վիշտը>:
- یاکند **ՀԱԿԻՆԹ**: Պարսկ. այժմ: یاقوت

ناوه **ՆԱՎԱԿ:** <Տաշտակ է փայտաշեն>:

نرد **ՆԱՐՏ:**

نارنج **ՆԱՐՆՆՋ:**

نوا **ՆՎԱԳ:** Տված է հայերեն գործածական մտքով:

شيب **ՇԵՊ:** <Զառիվայրի> համար գեղեցիկ հայերեն բառ է, որը իզուր չենք գործածում:

پادفراه **ՊԱՏՈՒՀԱՆ:** (Ստուգաբանությունը ըստ Հ. Աճառյանի):

پساک **ՊՍԱԿ:** <Թագ է, որ բուրումնավետ բույսերից են հյուսում>:

رام **ՌԱՄ-ԻԿ:** Բաց. <Հրաման կրող, ընտելացած>:

سامان **ՍԱՎՄԱՆ:** Նույնիմաստ:

سوگ-سوگ **ՍՈՒԳ:** Պարսկերենում այժմ չի գործածվում: Գործածական ձևն է **ՍՈԳԱՎԱՐԻ** سوگوارى (Սզվորություն):

سیاسه **ՍՊԱՍ:** <Ի սպաս> մտքով: Պարսկերեն չի գործածվում:

سان **ՍԱՆ:** Բաց <Փափուկ քար, որի վրա դանակ կամ շեղք են սրում>: Հայերենում <պղնձն կաթսայի> միտքն ունի:

تنج **ՏԱՆՋ-ԵԼ:** <Իրար սեղմել, հուպ տալ>:

تاب **ՏԱՊ:** <Շողշողուն ինչպես արևի և լուսնի և նման իրերի ճառագայթները>:

تیغ **ՏԵԳ:** Նույնիմաստ:

تفته **ՏՈԹ:** **ՏԱԹ:** <Տաք նշանակել>:

کام **ԲԻՄՔ:** <Բերան նշանակել>:

کچ **ԲԻՉ:** Նույնպես և **ԲԻՉ ԲԻՉ** کچ-کچ : Պարսկ. անգործածելի:

کیسه **ԲՍԱԿ:** Նույնիմաստ:

پوشک **ՓԻՍԻԿ:** <Կատու նշանակել>:

پوک **ՓՈՒՔ-Ս:** Նույնիմաստ:

ԲԱՌԵՐ, ՈՐՈՆՑ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԻՃԵԼԻ Է

Ստորև տալիս ենք մի քանի բառեր, որոնք չնայած անստույգ և թերևս սխալ լինեն, բայց նրանց և՛ հնչյունաբանությունը, և՛ միտքը նույնն է, ինչ հայերենում:

آزخ-آزخ **ԱԶՈՒՑ:** Հայերենում նշանակում է ՏՀԱՍ, **ԽԱԿ ՊՏՈՒՂ:** Այստեղ բացատրություն է տրված որպես **ՈՒՌՈՒՑՔ, ԶԻԳԻԼ:**

أسغد **ԱՇՈՒՒՍ:** Միտքը <կես այրված փայտ է>: Հետևյալ վկայությունն է տալիս,

*Կանգնել է ահա բաղանիքի մեջ
Ինչպես մի ԱՇՈՒՒՍ թոնիքի միջում:
(Մարուֆի)*

Հ. Թիրյաքյանը կապում է <ազոխ> — ՏՀԱՍ բառի հետ և նույնպես **أسوخ** փոխակի հետ: **أسوخ** Չկարողացանք գտնել պարսկերեն բացատրական որևէ բարանի մեջ, մինչդեռ <ազոխը> այլ բան է նշանակում պարսկերենում:

بز **ԲԱՐՁՐ:** Միտքն է. <Բարձրություն նշանակել>: Վկայություն է բերում հետևյալ հատվածը.

*Փշրեցին գուրգով կուռքերը բոլոր
Ոչ գույն նրանց մնաց, ոչ փառք, ոչ ԲԱՐՁՐՈՒՔ:
(Օւսորի)*

دژگاه **ԴԺԳՈՇ:** Բերված է **دژ (1)** տեսքի տակ:
انبودن **ՀԱՄԲՈՒՐԵԼ:** Ավելի շուտ՝ **بوییدن** -ից պիտի լինի մեր <Համբուրելը>:
خو **ԽՈՏ:** <Խոտ նշանակել անպետք որ ծլում է ցանքսերի մեջ և նրան պոկում են հողից ուր որ ծլի, որպեսզի հացահատիկի և բանջարեղենի ուժը չառնի>: Բերված է նույնպես պատաստուկի մտքով:

کچ **ԲԱՅԻ:** <Ապտակ նշանակել>: Բերած վկայությունը պարզ չէ, ապտակ է թե քացի:

*Գլուխը մարդու, մեջքն ու վիզը
Փշրեց ԲԱՅՈՎ ու բռունցքով:
(Օւսորի)*

سترگ **ՍՏԱՀԱԿ:** <Կովարար, անամոթ և անբարեհամբույր նշանակել>:

* * *

Այս բառարանում կան նաև մի քանի հետաքրքիր բառեր, որոնք մտել են գործածության մեջ արևմտյան լեզուներում: Դրանցից վստահորեն կարելի է հիշատակել.

Jacod **Հակիմք:** **یاکند**

Ladanum **Լատան:** **لادن**

Balcon **Բալկոն:** **بادخون** - **بالاخانه**: Չնայած այս բառը **بالاخانه** են համարում, բայց պետք է նկատել, որ **ԲԱԼԱՆԻՍԱՆԵ**-ն ուուսերենում փոխվել է՝ **بالاگان**-ի, որը փայտաշեն բն է, **بادخن** զովասուն վայր է նշանակում, շենք ձակատամասում նշանակում:

Cheque **Չեք:** <Գիր և կապալ նշանակել>:

Carouse **Կարուշ:** <Ուրախություն նշանակել>:

Yoke **Յոգ:** <Այն փայտն է, որ դնում են կովի վզին վարելու ժամանակ>:

Stalk **Տակ:** <Նորածիլ ոստ է, որ ծլում է ծառից>: Այս բառի անգլերեն արմատը անհայտ է, ըստ Վերստերի բառարանի: Տալիս է իսլանդական ծագում:

Dandy دنر <Անվախ և ինքնահաճ հիմարին են ասում> Վերստերում <Ցուցա-
մոլի. ունայնամտի պես հագնված>:

نس (ՆՈՍ) = Нос (ոս.) <Պինչ և դունչ և շրթեր>:

Кафтан خفتان (ոս.) նույնիմաստ:

Péle-mêle پالاپال նշել է Horn-ը:

(«Ալիք» ամսագիր, 1963, թիվ 11.— Ն. Մ.)



ՇԱՀՆԱՄԵԻ ՁԵՎԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՎՐԱ

«Շահնամեն» մտել է մեր միջնադարյան քերթողության մեջ «Ռոստամ Զայ» հայ-իրանական վեպով, որը մի փոփոխակն է Ռոստամի դյուցազներգու-թյան: Բայց դրանից դեռ առաջ, 13-րդ դարու վերջերում և 14-րդ դարու սկզբնա-կան տարիներում ապրող Կոստանդին Երզնկացին իր «Բանք հաղագս անցավոր մեծության...» քերթվածի ծանոթագրության մեջ, հիշում է.

«Այր մին նստել կայր ու Շահնամա ասեր ձայնով. նա եղբայրք խնդրեցին, թե ի Շահնամայի ձայն մեզ ոտանավոր ասա. ես շինեցի գ'րանք այս. ի Շահնամայի ձայն կարդացեք»:

Ակադեմիկոս Մ. Աբեղյանը «Հայոց հին գրականության պատմության» երկ-րորդ հատորի 346 էջում հետևյալն է գրում այս առթիվ.

«Այս հետաքրքիր ծանոթությունից իմանում ենք, որ իրանական աշխարհիկ բա-նաստեղծությունը 13–14-րդ դարերում թափանցած է եղել անգամ մեր վանքերը, և «եղբայրները», այսինքն Կոստանդինի կրոնակից վանականները, սիրով լսելիս են եղել Շահնամա և նույնիսկ ցանկացել են դրա «ձայնով» ոտանավոր լսել հայերեն: Շահնաման, հարկավ, միայն Երզնկայի վանքերում չի ասվել, և ավելի ևս սիրով մեր աշխարհականներն են այն դարերում լսել Պարսից այդ մեծ դյուցազներգությունը: Պետք է կարծել, որ Հայաստանում Շահնաման «ձայնով ասել են» պարսկերեն լեզ-վով: Այս մեծ քերթվածից հայերեն հին թարգմանություն, այն էլ ոտանավորով, հայտնի չէ. հատվածները անշուշտ կը պատմեին հայերեն, ինչպես դեռևս մեր օրե-րում էլ պատմում են հայերեն («ՖԻՐԴՈՒՍԻ», Բանաստեղծի ծննդյան հազարա-մյակի նվիրված ժողովածու, Երևան, 1934, էջ 152–222. «ՌՈՍՏԱՄ ԶԱԼ» հայ-իրա-նական վեպ, գրի առավ Արտաշես Բարսեղյան): Կոստանդինի հաղորդածը «ասել ձայնով» — «ի ձայն ասել» վերաբերում է ոտանավորին, քանի որ նրանից խնդրում են հորինել ոտանավոր «ի Շահնամայի ձայն», այսինքն՝ այնպիսի չափով, որ կարելի լինի Շահնամայի պես առոգանել: Եվ նա հարմարում է մի քերթված 11 վանկանի տողերով, ինչպես Շահնաման է, անապետայան ոտքերով, սկզբից ունե-նալով մի յամբ: Այսպիսի մի չափ, որը գործադրել է նաև Գրիգոր Նարեկացին, շատ հեռու է Շահնամայի չափից, բայց կարելի է «ձայնով ասել» «ի ձայն կարդալ» ինչ-պես Շահնաման... Ուրեմն պարսկական մեծ դյուցազներգության նմանողությունը եղել է լոկ ըստ ձևի»:

Շահնամնի մեծագույն հեղինակություններից՝ պրոֆ. Թ. Նոլդեկեն, այդ առթիվ հետևյալ կարծիքն է հայտնում.

«Իմ կարծիքով, Շահնամն նույնքան քիչ էր հարմարեցված երգեցողության կամ որևէ ձևի երգասացության (cantillation) համար, որքան, օրինակ, Էնեականը: Այս դյուցազներգությունը, անշուշտ, հիմնված է ազգային ասմունքների վրա, բայց դա միաժամանակ արվեստական ստեղծագործություն է տարբեր մի իմաստով, քան Հոմերոսի պոեմաները: Ավանդությունը ունեցել է իր ընդմիջումները և պետք է զգացվել նրանց վերադասավորել: Մեծ պոեման, որի հիմքերը մասամբ կանգուն են հնամյա ավանդությունների վրա, այնուհանդերձ, որոշ չափով, արդիական մի ստեղծագործություն է»⁷²:

Պրոֆ. Նոլդեկեյի այս կարծիքը, որքան էլ որ աղբյուրը հեղինակավոր լինի, մեզ համար, որ ապրում ենք Արևելքում և լսել ենք Շահնամն ժողովրդի բերնից, անընդունելի է: Մ. Աբեղյանի հայտնած կարծիքը շատ ավելի ամուր և իրական հիմքերի վրա է դրված:

Ինչպես գիտենք, պարսկական բանաստեղծությունը հիմնված է վանկերի երկարության ու կարճության վրա և ենթակա է ԱՐՈՒԶԻ օրենքներին: Բայց Շահնամնի վերաբերմամբ որոշ կարծիքներ գոյություն ունեն, որոնց մեջ պիտի հիշել Բենվենիստի և Բերտելսի պես մեծ հեղինակությունների կարծիքը, ըստ որի, Ֆերդուսու ընտրած 11 վանկյա չափը ոչ-արաբական բնույթ ունի և դրա գործածությունը կարելի է գտնել պահլավերեն հնագույն չափածո քերթվածների մեջ: Այդ 11 վանկյա զուտ իրանական տողը Ֆերդուսին բերել և համաձայնեցրել է արաբական ԱՐՈՒԶԻՆ, դրա «մոթաղարեր» չափաձևին: Այդպիսով, Շահնամնի ոտքերը կազմված են եռավանկերից, որոնցից առաջինը կարճ է և երկրորդն ու երրորդը երկար, բանաստեղծության արտասանական շեշտը ընկնում է երկրորդ վանկի վրա: Այդպիսի շեշտ և վանկավորում հայերենում գոյություն չունի: Խոսքը նորից տանք Մ. Աբեղյանին, որը շատ հմտորեն կարողացել է բացատրել այդ դժվարությունը հայերենում.

«Վանականները Կոստանդինին խնդրել են հայերեն լեզվով այնպիսի ոտանավոր հորինել, որ կարելի լինի «Շահնամայի ձայնով ասել»: Այսպիսի չափով հայերենում **խկապես հնարավոր չէ** ոտանավոր գրել, զի հայոց լեզուն չունի երկար և կարճ ձայնավորներ⁷³: Մեր բանաստեղծը հայերեն ոտանավորի ոտքերն էլ կազմում է երեք վանկից, բայց յուրաքանչյուր ոտքի միջին երկար և զորեղ շեշտված վանկի փոխարեն, ելնելով հայերեն պրոսոդիայից — առոգանությունից, դնում է շեշտված վանկ, որ հայերենում համեմատաբար երկար է արտասանվում, քան մյուսները և հարկավոր ժամանակ կարելի է ավելի ևս երկարել: Այսպիսի կազմությամբ ոտանավորը կարելի է ազատ կերպով «ի Շահնամայի ձայն ասել»... Գրիգոր

Նարեկացին արդեն ունի այդ չափով մի տաղ «**Եկեղեցվո**» որ Շահնամայի ձայնով կարդալիս, ստանում է նույն բարձրացող-ընկնող դիմը.

*Երկինքն ի երկինս և
երկիրս ի երկինքն,
Վայրէջք ի խոնարհ և
վերելք ի բարձունս...*

Ձայնով ասելիս

*Երկինքնի երկիրս
երկիրսի երկինքն,
Վայրէջքի խոնարհև
վերելքի բարձունս...*

«Այսպես ուրեմն, 10-րդ դարուց, Ֆերդուսու ապրած ժամանակից, **արդեն մեր բանաստեղծության մեջ գործածված կա Շահնամնի ոտանավորի չափը**» (ընդգծում մերն է):

Մի քիչ մանրամասնացանք վերի մեջբերումների մեջ, մի անգամ ևս շեշտելու համար պարսկերեն բանաստեղծության «ՀԱՐԱԶԱՏ» չափաբանությամբ թարգմանելու հասկացողության անհեթեթության վրա, որի արդյունքը հաճախ եթե ոչ անընթեռնելի՝ գոնե չափազանց խորթ կը հնչի հայ ականջին:

(«Ալիք» ամսագիր, 1963, թիվ 7.— Ն. Մ.)

⁷² The Iranian National Epics, Prof. T. Noldeke, էջ 108, 109:

⁷³ Մի բան՝ որ աշխատել են անել հայ թարգմանիչներից ոմանք, կարծելով որ 11 վանկանոց տող տալով հայերենում, նրանց կը հաջողվի հայերենի փոխանցել Շահնամնի չափը: (Օրինակ՝ Ա. Թիրյաքյանի թարգմանությունը Ֆերդուսիից):

ՕՄԱՐ ԽԱՅՅԱՄԻ ԱՇԽԱՐՀԱՀԱՅԱՅՔԸ
(հոգեբանական վերլուծություն)

Խայյամի շոշափած փիլիսոփայությունը նորություն չէ: Նրանից առաջ, և մանավանդ նրանից հետո, աշխարհային հանգամանքների անկայուն բնավորությունը, կյանքի անարժեք և վաղանց հատկությունը պարսիկ հեղինակները բազմապիսի ձևերով ու ոճերով երգել են, բայց նրանց մեծ մասը, եթե չասեմ ամբողջը, այդ մասին խոսել են որպես գիտնականներ կամ քննադատներ, սակայն Խայյամն այդ նյութի համար մի ինքնահատուկ, զգայուն, մելամաղձոտ և պատկերավոր լեզու ունի: Նա մի քանի կարճ բառով այնպես տիրապետում է ընթերցողի մտքին, որ նրան կատարելապես համոզելով՝ իր տրամաբանության իշխանության տակ է առնում: Հաճախ նրա տրամաբանության ձևը այնքան գողտրիկ, և այդ քննաբանությունից առաջ բերած եզրակացումը այնքան հաճելիորեն անակնկալ է, որ, կարծես թե այդ հայտնության առաջ մարդ անձնատուր է լինում, և եթե կարողանա էլ՝ չի ցանկանում հակասել — մի գուցե դրանով բեկանի այն դուրեկան հմայքը, որ բնափոխել է ընթերցողի զգացմունքն ընտիր բառերի վարպետ հյուսվածքի ազդեցության տակ:

Խայյամը հաճախ է պատճառաբանում, և տրամաբանությունը, թեև զուտ մտքի ծնունդ է, և խոսում է մտքի հետ, բայց այս հազվագյուտ տաղանդի գրչի տակ կարծես հրաշքով դարձել է զգացումներ հեղաշրջելու մի գործիք, և ընթերցողը փոխանակ մտավոր հագուրդ ստանալու, համակվում է կարծես ինչ-որ արբեցուցիչ նյութի ազդեցությամբ:

Խայյամի միտքը վերին աստիճանի ազատ է և հանդուգն: Նա իր փիլիսոփայության ճշմարտությունն ապացուցելու համար մի քանի բառով փշրում է կրոնական շատ սկզբունքներ և սրբազանացած ավանդություններ:

Կրոնապետները նրա համար վարձկան կեղծավորներ են և արյունոտ մարդահալածներ:

Մի կրոնապետ մի կնոջ ասաց.— «Հարբած ես, ո՞վ կին.

Ամեն բուպե դու անարգ հյուր ես մեկի հաճույքին»:

Իսկ կինն ասաց.— «Ո՞վ սուրբ մարդ, ինչ ասացիր, այդ կամ ես,

Բայց ինչ որ ցույց ես տալիս, արդյոք դու էլ կամ այնպես:

* * *

Ո՞վքեր քաղաքի արդար դատավոր,

Չես կարող լինել դու մեզ չափ աննենգ.

Եվ մենք անդադար հարբելով հանդերձ,

Քեզնից ավելի զգաստ և լուրջ ենք,

Խմում ենք մենք միշտ արյունը որթի,

Մինչ մարդկանց արյամբ հարբում ես միշտ դու:

Անաչառ դատիր, արդյոք մեզանից

Ո՞րն է ավելի վատ արյունարբու:

Իսկ կրոնքի արտաքինը ուրիշ բան չէ, եթե ոչ՝ մի սանձ՝ հիմարների և վայրենիների համար:

Տոնն եկավ, և այժմ մեր բանը լավ է,

Սաղին հին գինով կուծը կը լեցնի.

Ծումը՝ դնչակալ և աղոթքը՝ սանձ՝

Տոնն այս էշերի գլխից կը հանի:

Նա նույնիսկ չի քաշվում բանակրվի և վիճաբանության մեջ մտնել գերագույն էակի հետ, և ավանդությունն ասում է, որ մինչև անգամ Աստված ընդունեց նրա տրամաբանության ճշմարտությունը և նրա երեսի կեսը, որ սևացրել էր, նրան պատժելու համար, նորից սպիտակեցրեց:

Ահա այդ նշանավոր քառյակը, որի պատճառով Խայյամի կես երեսը սևացավ:

Անոթն իմ գինու, Տեր իմ, կոտրեցիր,

Դուրը ցնծության զոցեցիր դեմքիս,

Թափեցիր գինիս՝ վարդի պես կարմիր,

Հարբած ես, Տեր իմ, հո՞ղը զա բերնիս:

Եվ ահա այն տողերը, որոնցով որպես թե նա ներում է խնդրում Աստվածանից, և որոնց պատճառով դարձյալ նրա երեսը սպիտակում է և դառնում է առաջվա նման:

Ասա՛ ինձ խնդրեմ, ո՞վ է աշխարհում որ մեղք չունենա.

Այն մահկանացուն, որ մեղք չը գործեց, ինչպե՞ս ապրեց նա:

Ես վատ եմ անում, և դու ինձ վատով պատժում ես, ո՞վ Տեր,

Ասա՛ ինձ խնդրեմ, ապա ես և Դու ինչո՞վ ենք տարբեր:

Այս բառերով, ինչպես տեսնում եք, Խայյամը ստորաբարձ ներողություն չի խնդրում Աստվածանից, այլ հանդես է գալիս ընդդիմախոսության հզորությամբ և արդարադատության պահանջի միամարձակությամբ:

Եվ սակայն չի կարելի ասել, որ Խայրամի անվախ վերաբերմունքը դեպի գերագույն Էակը առաջ է գալիս նրանից, որ նա անհավատ է կամ թերահավատ: Խայրամի անպայման նրանցից է, որոնք մեծ արժեք չեն տալիս կրոնական կեղևային սկզբունքներին և ծեսերին, բայց ինչ վերաբերում է Աստծուն, նա խորապես երկրորդած է, և վստահորեն կարելի է ասել, որ նրա հանդուգն ուճը Աստուծո հետ խոսելիս ավելի շատ հիմնված է անխախտ հավատի վրա, քան անհավատության:

Նա Աստուծո առաջ ներկայանում է և իր դատը փաստաբանում ինչպես սահմանադրական երկրի մի քաղաքացի կը ներկայանար իր Վեհապետի առաջ, իր իրավունքներին գիտակից մարդու նման, որ պաշտպանված է անսասան օրենքների անխորտակելի պատենշներով:

Նա հպատակը չէ մի ինքնակալ բռնապետի, որ չգիտե որպիսի քմահաճ և անակնկալ պատիժների կարող է դատապարտվել թագավորի կողմից:

Ուրիշ ինչ ձևով կարելի է ըմբռնել այս տողերը.

*Եթե ես մեղք չը գործեմ, Աստծո գութին ինչ կարիք.
Շնորհիս մեղքիս է միայն, որ գութն ունի արժանիք:*

* * *

*Աստված, որպես մի վարդի, պճնեց ու մեզ հոգ տարավ,
Գիտեք թե մեր գործերից ինչ դուրս կը գայ — վատ ու լավ:
Կա՞ մի հանցանք որ գործենք առանց Նրա հրամանի,
Ապա ուրկից դուրս եկավ հուրն ու տանջանք գեհենի:
Հարյուր տարի իբրև փորձ, մեղք կը գործեմ ես ազատ,
Կան, գութդ է շատ իմ մեղքից, կանք քո գութից մեղքս է շատ:*

Ինչպես պարզ երևում է այս տողերից, նա մի անդրդվելի հավատք ունի դեպի Աստուծո ամենաողորմությունը, և հենց այդ պատճառով նա չի կարողանում մի բույն ենթադրել, որ այդ անհուն գութը կարող է ընկճվել կամ պարտվել բանաստեղծի հարյուր տարվա սահմանափակ մեղսագործությունից, թեկուզ դիտմամբ էլ արված լինեն նրա հանցանքները, և նրան հանձնել հավիտենական գեհենի հուրին: Մանավանդ, որ Ամենախմաստունը, — որին նա դարձյալ խորապես հավատացած է, — գիտն թե բանաստեղծը մեղք է գործելու:

*Ամենագետն սկզբից գիտեք կը խմեմ գինի,
Եթե չը խմեմ Նրա գիտությունն անճիշտ կը լինի:*

Նա ավելի առաջ է գնում, ընդունելով Աստծուն իբրև իր Արարիչը և ասում.

*Ես ինչ անեմ, շաղախեղ ես Դո՛ւ կալն իմ.
Ես ինչ անեմ, Դո՛ւ ես գործել կտալն իմ.*

*Ինչ լավ ու վատ, որ ինձանից է գալիս,
Ես ինչ անեմ, դու ես դրել ճակատիս:*

Պաշտպանելով իր իրավունքը գթառատության գահի առաջ պատժագերձ մնալու համար, նրա մտքի տրամադրությունը դեպի այդ հավիտենական ողորմությունը, և սակայն, չէ անպատկառ կամ ըմբոստ: Ո՛չ, նրա մտքի գերագանգ ճկունությունը կայանում է նրա մեջ, որ իր տկարությունը հզոր զենք դարձրած՝ դատավարության մեջ է մտնում իր Ստեղծողի հետ:

Նա թեև ինքն իրեն արդարացնում է, բայց և այնպես նրա հաղթությունը զուրկ է փառքից և պարծանքից: Ընթերցողը գուցե կարողանա սքանչանալ նրա հանճարի վրա, որ նա մեղքը և թուլությունը — երկուսն էլ դատապարտելի և պարտելի թերություններ — միջոց է դարձնում իր ձեռքում փայլուն կերպով իր իրավացիությունը ապացուցելու համար, երբ ներկայանում է հաշվետվության օրը: Բայց ինքը, բանաստեղծը ամաչում է իր տարած հաղթանակից:

*Ասենք թե Դու ներեցիր՝ ասածս ամեն Բեզ ընդդեմ,
Այն ամոթից, որ գիտես ինչ եմ արել՝ ինչ անեմ:*

Թեև ինչպես վերն ասացինք Խայրամը թերահավատությամբ է վերաբերվում դեպի մահամեղականության ուղղափառ դոգմաները և ոչ միայն հարգանք չունի դեպի կրոնքի ընչաքաղց ու մարդահալած վարդապետները, բայց ինքն ունի մի հաստատուն դավանանք և ահա՛ նրա հավատամքը.

*Աստված է հոգին համայն տիեզերի,
Տիեզերքը համայն՝ մարմինը Նրա.
Դասերն ու կարգերն հրեշտակների
Զգայարանն են այդ կազմի հսկա:
Երկինքը տարերք, և անդամներն էլ
Թագավորությունն են այդ բնության:
Միաստվածությունն հենց այս է որ կա,
Եվ խաբեություն՝ ամեն ուրիշ բան:*

Այստեղ թեև Խայրամը դավանում է, որ Աստված հոգին է համայն տիեզերքի, և տիեզերքը Նրա մարմինն է, բայց չպիտի շփոթվել ու կարծել թե նա ընդունում է մի բնություն, որի մեջ կա ինչ որ մի անորոշ, անանձնավոր, գուցե աննպատակ գորություն, կամ ինչպես փիլիսոփաներն են ասում «Կյանքի սկզբունք»: Ո՛չ, նա ընդունում է, որ մի խիստ շեշտված անձնավորության Տեր, Ամենաստեղծ, Ամենակարող, Ամենախմաստուն, Ամենաողորմ Աստված գոյություն ունի, այլապես նա հաճախ չէր դառնա դեպի այդ Էակը իր գանգատներով, իր փառաբանությամբ, իր աղերսներով և վերջապես իր պաշտամունքով:

Որպիսի սեր է արտահայտում նա դեպի Անիմանալին հենց այս տողերի մեջ, որով նա միաժամանակ ճարպիկ ռազմավարի պես մեկ հարվածով թե՛ փշրում է խոսքի հավատալիքը, — այսինքն մարդ պատժապարտ է, — թե՛ փրկում է իր հոգին որևէ ապագա պատժի հավանականությունից, և թե՛ հայտնում իր կատարյալ նվիրվածությունը դեպի Արարիչը և Նրա կամքը:

Ասացիր թե ինձ պիտի պատժես Դու,

Զարմանք է, թե այդ ո՛ր է լինելու:

Ուր դու կաս այնտեղ չը կա պատուհաս,

Իսկ ո՛րն է այնտեղ, որտեղ Դու չը կաս:

Այս գերազանցապես հանճարեղ տողերի մեջ նա իր մի քանի սկզբունքը մեկ անգամից է երևան բերում: Նախ ընդունում է, որ Աստված ամեն տեղ կա և ոչ մի տեղ չի կարելի գտնել, անհունների անհունության մեջ, ուր նա ներկա չը լինի: Եվ ապա նա հայտնում է իր անսահման սերը դեպի աստվածային Էակը: Ընդունելով Աստծուն որպես իր Սիրեցյալը միայն, կարող էր նա և կը հանդգներ ասել «այնտեղ ուր Դու կաս, չը կա պատուհաս»:

Այլ խոսքով նա պարզապես Աստծուն ասպարեզ է հրավիրում, որ իր ամենակարողությամբ հանդերձ, չի կարող պատժել բանաստեղծին, որովհետև ամբողջ անհունությունների մեջ մի պատժավայր չի կարող գտնել, այն պարզ պատճառով, որ ուր Աստված կա, այնտեղ՝ բանաստեղծը — իր Սիրեցյալի ներկայությամբ — իրեն կատարելապես երջանիկ կզգա, և Աստուծո ներկայության բարօրանքը ի դերն կը հանն աստվածային պատժարարության ամեն փորձ: Խայրամը պաշտամունք մատուցանում է առ Աստված, և ահա նրա աղոթքը:

Դու ես տալիս բարին բոլոր, Դու ես առնում չարիքն իսպառ.

Ողորմությամբ Քո անմեկին, ո՛վ Աստված իմ, այժմ տո՛ր և ան:

Խայրամը ո՛չ միայն ունի Աստված, ամուր հավատք առ անքննելի Էակը և կրոնքը, այլ ունի նաև կրոնական բարոյագիտություն: Նրա վարդապետության մեջ առաջին և ամենածանրակշիռ տեղը բռնում է Սերը:

Ինչ սիրտ՝ որի մեջ կա լույսը սիրտ,

Լինի նա իսլամ, լինի անհավատ:

Սիրտ տունարում թե անունը կա,—

Անկախ է դրախտից, դժոխքից՝ ազատ:

Արդյոք այս տողերը չեն հիշեցնում մեր Պողոս առաքյալի նամակը կորնթացիներին, ուր ասում է, որ «Եթե մարգարեություններ ունենամ, ամբողջ ունեցածս տամ աղքատներին և մարմինս էլ նույնիսկ այրելու տամ և սեր չունենամ՝ ոչինչ եմ»:

Թեև Պողոս առաքյալի գրածը Սիրո մասին, ցարդ համարվում է ամենից պերճ ներբողը, որ մարդկային միտքը կարողացել է շարադրել իբրև դրվատանք սիրո, և սակայն Խայրամը չորս տողով ավելի բան է ասում: Պողոս առաքյալի զեղուն արտահայտությունից այնպես է երևում, որ եթե սեր չունենաս՝ Երկնից Թագավորությունը չես կարող մտնել, բայց Խայրամն այնքան բարձր տեղ է հատկացնում սիրո համար, որ ասում է, թե ով որ սեր ունի — լինի նա նույնիսկ անհավատ — ո՛չ միայն ազատ է դժոխքից, այլ կարիքը չունի նաև դրախտի, որը մուսուլմանական լեզվով կարող է Երկնից Թագավորություն նշանակել:

Նա ով սեր ունի դրախտ է ինքնին և պետք չունի նույնիսկ Աստուծո խոստացած այդ երանավետ բնակավայրին:

Խայրամն այստեղ քարոզում է ինչ որ Ավետարանի վարդապետության գերագույն խորհուրդ խորինն ու գետննալիքն է՝ «Աստված Սեր է»:

Մենք տեսանք ինչ է Խայրամի կրոնքի հոգևոր խորհուրդը: Նա ունի նաև աշխարհիկ բարոյագիտություն և դա կատարելապես համապատասխանում է նրա դավանանքի հոգևոր մասին:

Հոգևորապես նա գերագույն տեղը հատկացնում է Սիրո գաղափարին: Մարմնավորապես նա ուրիշ բան չէր կարող ասել, եթե ոչ հրահանգել այդ սիրո կիրառումը ամենօրյա կյանքի մեջ և այդպես էլ անում է նա.

Բյուր հողի Քարան մեկ սրտի չարժե.

Ինչ պետք է Քարան, զնա՛ սիրտ շահիր:

* * *

Երկյուղածությամբ թե օր ու գիշեր կրես դու տանջանք,

Լավ չէ նրանից, որ մեկ հաստ սրտի բաշխես սիրտիանք:

Մեկ ազատ մարդու թե գերի շինես քո սրտով բարի,

Լավ է նրանից, որ ազատ թողնես հազար հաստ գերի:

Ուշադրության արժանի են այս վերջին տողերը, որոնցով Խայրամը բացարձակ կերպով գերադասում է բարեսրտությունը բարեգործությունից: Շատ ճիշտ է նկատում Խայրամը, որ բարիք գործելը միշտ բարի սրտի նշան չէ: Ինչ որ Խայրամի համար կարևոր է, ո՛չ թե արված գործն է կամ դրա արդյունքը, այլ այդ գործի դրդապատճառը:

Եթե քո բարերարությանդ առիթը բարի սիրտդ է, որքան էլ քիչ արդյունք ցույց տաս, դա գնահատելի է շատ ավելի՝ քան մի այլ երախտագործություն, որի մղիչ ուժը սրտի գթառատությունը չէ: Որքան էլ մեծ լինի այդ երկրորդ տեսակի բարեգործության հետևանքը, Խայրամը նրան արժեք չի դնում բնավ, և ես հավատացած եմ, ոչ մի ազնիվ հոգի չկա, որ համաձայն չլինի բանաստեղծ-բարոյագետի հետ:

Նա չի բավականանում նրանով, որ ընդհանուր սեր է քարոզում դեպի ամեն ոք, այլ նա պահանջում է սեր՝ դեպի թշնամին:

*Ես քո բարիքն եմ ուզում, իսկ ինձ համար, դու՝ չարիք,
Չարիք բնավ չի գա ինձ, և չեմ տեսնի դու բարիք:*

Հոգեկան վերամբարձման մի րուպեում, Խայյամն այնպիսի մի նորաշունչ գովեստ է կարդում Աստծու հասցեին, որ պարզապես հայտնում է, թե Խայյամի աստվածասիրությունը բոլորովին ազատ է եղել եսասիրական ամեն անմաքուր միտումներից: Այդ գաղափարը, իր վեհությանը հանդերձ, արտահայտում է մի հանգամանք, բոլորովին անծանոթ ցարդ գոյություն ունեցած կրոնուսույց հավատամքներին, որ հարանվանության էլ պատկանում լինեն դրանք:

*Սուդի, տուր ինձ մի բաժակ, Աստված մեծ է ու գթած,
Եվ կը ներե յուր տկար ծառաներին անկասկած,
Մի՛ ձևանար բարեպաշտ, գինի խմիր դու գարնան,
Քանզի կարոտ չէ Աստված պաշտամունքին մարդկության:*

* * *

Բոլոր այն կրոնական վարդապետությունները, որոնց հետ մենք ծանոթ ենք, ճիշտ է, մեզ սովորեցնում են, որ մենք պաշտելով Արարչին և հնազանդվելով Նրա հրահանգներին՝ մեզ ենք փրկում չարիքներից և արժանացնում բարիքների, թե՛ երկրավոր և թե՛ մանավանդ երկնավոր, բայց մյուս կողմից նրանք մեզ ենթադրել են տալիս, և հաճախ պարզապես ասում են, թե Աստված էլ ցանկանում է, որ մենք պաշտենք Իրեն: Ուրեմն եթե ցանկանում է, նշանակում է մի պետք, մի կարիք է զգում այդ բանին, և եթե կարիք է զգում, նշանակում է մի բան պակաս կա Նրա մոտ, և այդ պակասը լրացնում է մեր պաշտամունքը:

Արդ, այդպիսի կարիքի կամ պակասի ենթադրությունն իսկ մի էակի վերաբերմամբ, որին մարդկությունը պաշտում է որպես Ամենաբարավի և Ամենակարողի, ուրիշ բան չէ, եթե ոչ տրամաբանության տեսակետից՝ արսուրդ, և հավատքի տեսակետից՝ հայհոյանք:

Հարցը շատ բարդ չի երևում, բայց դարերի այսքան մեծ մարդկանց մեջ Խայյամն է եղել այն հազվագյուտ դեմքերից մեկը, որ համարձակություն է ունեցել խորհելու և գոչելու:

Քանզի կարոտ չէ Աստված պաշտամունքին մարդկության:

Նախքան վերջակետ դնենք մեր նյութի այս մասին, անհրաժեշտ եմ համարում հիշել, ոչ թե այն՝ որ Խայյամը կատարելապես հավատացած է հոգու գոյության, որովհետև այդ երևում է նրա ամբողջ բանաստեղծությունից զանազան ձևերով, այլ այն, որ հոգու և մարմնի հարաբերությունների մասին ոչ մի տեղ չեմ կարդացել ու չեմ լսել այնպիսի կենդանի և լրիվ մի նմանություն, ինչպիսին Խայյամն է տալիս հետևյալ չորս տողերի մեջ:

*Մի ձայն է հոգին, ու կազմը՝ եղեգ.
Մեր հոգին՝ գինի, մարմինն է սրվակ:
Ինչ քան է, Խայյամ, մարդը հողեղեն.
Մտածին լապտեր՝ մեջը մի ճրագ:*

Այս նյութը, որի մասին հատորներ կարելի է գրել, Խայյամը մի քանի բառով այնպես է բացատրում, որ դրանից վճիտ ու դյուրըմբռնելի բան դժվար է երևակայել: Այդ պատճառով էլ փոխանակ որ ես իմ խոսքերով աղոտեմ խնդիրը, այն թողնում եմ իր վսեմ պարզության մեջ:

Այնուամենայնիվ, ինձ չի թվում, որ մենք կարողացանք սպառել Խայյամի կրոնական և կրոնա-բարոյագիտական ամբողջ դավանանքն ու հավատալիքը:

Ինչպես գրեթե ամեն ուրիշ մեծ բանաստեղծ ու գիտնական Պարսկաստանում, Խայյամն ևս անշուշտ ունեցել է այնպիսի ուսումնասիրություններ և գուցե նաև մարզանքներ, որոնք այժմ Եվրոպայում կոչվում են «Սպիրիտիզմ» և Պարսկաստանում ու Հնդկաստանում հայտնի են որպես «Ֆադր» և «Դարվիշություն», և որի ամենախոշոր սկզբունքը այն է՝ հոգին, միտքը և մարմինը կատարելապես ազատագրել աշխարհային և մարմնավոր բոլոր կապերից ու հոգսերից: Դա գեղեցիկ կերպով ամփոփված է այս տողերի մեջ:

*Որպես տղամարդ՝ հանգույցը խզիր կին ու զավակի,
Արձակիր ի բաց ինչքի և արյան կապերն հոգնակի:
Ինչ որ ունենաս՝ արգելք կը դառնա ճամփին քեզ համար.
Կապերդ կտրիր, — կապված չեմ կարող կտրել ճանապարհ:*

Մենք կարիք չունենք ասելու, որ գինուն ձոնած նրա բանաստեղծությունները հոգևոր իմաստ ունեն, որովհետև հետևյալ տողերը, ավելանալով նախընթացների վրա, մեր մեջ կասկած չեն թողնում, որ Խայյամը հետևելիս է եղել ինչ-որ մի խորհրդավոր դարոցի, որի մասին ազատ խոսել արտոնված չի եղել նրան:

*Աշխարհի գաղտնիքն՝ ինչպես կա դա մեր տեսրակում գրված,
Չեմ կարող ասել, քանզի դա գինն է գուցե իմ կենաց:
Այնինչ այս տգետ մարդկանց մեջ չը կա մեկը հասկացող,
Ինչ որ կա թաքուն իմ սրտի խորքում, ասել չեմ կարող:*

Այս տողերով, Խայյամը վարագույրը վճռականապես ձգում է և իր ներքին համոզումների մի մասը — գուցե ամենից հետաքրքրականը և ամենից կարևորը — ընդմիշտ ծածկում մեր հետախուզությունից:

Բայց այն նոտան, որ ամենից շատ հատկանշական է այս երգչի համար, որի պատճառով միայն նա անմահ է դարձել և անմահ էլ կը մնա քանի մարդկային սիրտը բարախում է աշխարհի վրա, այն երգը, որը նվազելիս դառնում է անգերագանցելի — դա աշխարհի և կյանքի ունայնության նյութն է:

Այս հարցում Խայրամի արտահայտության ձևն ինքնաստեղծ է և ինքնադրոշմ: Ոչ ոք, ո՛չ արևելքում և ո՛չ արևմուտքում այս նյութի վերաբերմամբ նման չէ Խայրամին:

Նա այնքան նուրբ և անկեղծ կերպով զգացվում է, և իր զգացմունքն այնքան բնական, դուրին, պարզ և անօրինակելի ոճով է ձևակերպում, որ ընթերցողը հանկարծ գտնում է, թե բանաստեղծը փոխանակ նվագելու քնարի վրա, նվագում է իր սրտի լարերի վրա:

Սուգ ու ողբ չկա նրա երեմիականի մեջ. չկա փոթորիկ ու զայրույթ և ըմբոստացում, այլ մի փափուկ հիշեցում և մի ազնիվ ափսոսանք: Նրա տողերը կարդալիս, մարդու պատում է այն զգացումը, ինչ որ կարելի է ունենալ մի փառավոր անցյալի հոյակապ պալատների ավերակների առաջ: Ով որ այցելել է այդպիսի պատմական վայր, և երեկոյան, հանգստության ժամին, փլատակների միջից լսել է զեփյուտի խորհրդավոր ու անմեկին հառաչը, կարող է ասել, որ լսել է Խայրամի ձայնը: Նրա յուրաքանչյուր քառյակի ետևը կարծես թաքնված կա հազար ու մեկ գիշերների կախարդական առասպելաբանություններից մեկը:

Խայրամի գրիչը կարծես լինի մոգական գավազան, որ քարացրել է անցյալ դարերի կյանքը և արձանացման ռուպեի վիճակում՝ պահպանել է այդ, մեր այսօրվա հետաքրքրությունը բավարարելու համար: Նրա տողերի մասին խորհելիս՝ մարդու մտքի առաջից կարծես անցնում է Պոմպեի տեսարանը, ուր հրաբխի մոխիրը ամեն ոքի գամել է իր տեղում, որպեսզի երկու հազար տարուց հետո մարդիկ պեղումներ անելով՝ տեսնեն թե ով՝ ինչ է անելիս եղել այդ արհավիրացի օրը: Նա չի նկարում հայտնի և որոշ գույներով ու գծերով, այլ մութի մեջ անցկացնել է տալիս հազիվ նշմարելի սիլվետներ: Նա չի պատմում, այլ ակնարկներ է անում, և այնքան ճարպիկ կերպով, որ մարդ ստիպվում է երևակայել շատ ավելի քան նա ասում է, քայց երբեք չի կարողանում սպասել նրա տված նյութը:

Խորհրդավորության այս հանգամանքն է, որ Խայրամին տալիս է այդքան մեծ թուլություն: Եթե նա խոսեր մի քիչ ավելի կամ մի քիչ պակաս որոշակի, երբեք չէր կարող թողնել նույն տպավորությունը: Նա բանաստեղծ չէ, այլ մի կախարդ, որ գերում ու բեռնում է մտքերը՝ ուր ցանկանում է, և ընդմիշտ:

Նրա գծագրած պատկերը անցյալի կամ ապագայի մասին այնքան կենդանի է ու հմայիչ, որ ներկան իր քյուր ցավերով, տենչերով և հույզերով, իր անժխտելի և անբացասելի իրականությամբ, ջնջվում է ընթերցողի մտքից և սրտից:

Չորս տողով կարողանալ այսքան խորին և անբացատրելի ազդեցություն գործել, դա գրչի հրաշք է, և այդ ձիրքը միայն նիշարուրցի բանաստեղծին է շնորհվել:

Օրինակները բազմաթիվ են.

Այս կուժն էլ ինձ պես սիրող է եղած,

Կապված ու գերի մի կույսի մագին.

Կանթը, որ նրա վզին տեսնում ես,

Մի թև է եղած սիրուհու վզին:

* * *

Անպն եկավ նորից ու մարզը ցողեց,

Եվ ինչպես հիմա ապրել անգինի.

Այս մարզն է այսօր մեր զբոսավայր,

Մեր հողից բուսածն ո՛ւմը կը լինի:

* * *

Ապարանքն այն, որ երկնի բարձունքի դեմ մրցում էր,

Որի շեմքին թագակիր դրվում էին գլուխներ,

Շրջեցի ես մտախոհ դահլիճներումն անկտուր,—

Որմին տեսա սուկ մի բու, որ ասում էր. «Ո՛ւր է, ո՛ւր»:

* * *

Երեկ գիշեր զարկեցի քարին քաշի մի ափոր.

Հարբած էի, երբ այդ գործն արեցի ես հանցավոր,

Իր անկեզու բարբառով ափորն ասաց ինձ լռին.

«Քեզ պես էի ես մի օր, դու էլ կընկնես իմ օրին»:

Որպիսի դուրեկան տխրությամբ են համակում մարդու սիրտը այս տողերը. ինչ հաճելի թախիծ է բուրում նրանցից. ինչ երազուն խորհրդածություններ են արթնացնում այդ դյութական բառերը ընթերցողի մտքում. ինչքան կախարդված աշխարհների գաղտնիքներ են բացում մարդու առաջ. ինչ առեղծվածներ կան լուծված նրանց մեջ, և սակայն մնացած հավիտյան անլուծելի:

Եվ վերջապես, որպիսի հարցեր են ծագում մարդու մտքի մեջ, հարցեր, որ փայփայելի են միշտ, թեև ընդմիշտ անպատասխանելի:

Ո՛վ է եղել այն երիտասարդը, որ մի օր թևը ձգել է իր սիրածի վզին. ինչպիսի չքնաղ էակ է եղել այդ սիրուհին: Արդյոք նրանց հոգին այժմ սավառնում է այդ կուժի շուրջ, ուր նրանց նախկին մարմնից կա կավացած մի բեկոր, թե նրանք էլ լքել են խեղճ հոգին, և այդ պատճառով ավելի արգահատելի է նրա վիճակը այժմ:

Ինչպիսի մարդիկ պիտի զբոսնեն մեր հողից բուսած մարգերի վրա. պիտի հիշեն նրանք մեզ արդյոք, անգիտակից պիտի լինի մեր դրությունը այդ ժամանակ: Արդյոք անգիտակից պիտի լինենք մենք, թե,— ինչպես Խայրամի ստեղծագործող հանձարի շնորհիվ կենդանացած սափորը,— մենք նրանց վերաբերմունքը կը սեպենք հանցավոր և անարգական, և կանիծենք նրանց, որ վայելում են աշխարհը, այնինչ մենք անշարժ ենք, իրացած ու ոտնակոխ: Շրջապատված իրենց շուրջով, հրամայելիս կամ զվարճանալիս իրենց հրաշակերտ ու ոսկեսար պալատներում, աշխարհակալները ոչ մեկ ռուպե մտածեցին որ կը գա մի օր, երբ ավերակ կը դառնա այդ բոլորը, և մի բու կը լինի նրանց հաջորդը, որ բազմած իրենց խորտակված գահի վրա, պիտի երգե. «ո՛ւր էր, ո՛ւր», ո՛վ անցյալի հզորներ:

Ահա ձեզ մի այլ օրինակ.

*Այսօր մի բրուտի գործարան գնալ ծագեց իմ մտքիս.
Գնացի, տեսա վարպետին կանգնած և աշխատելիս.
Շինում էր, կերտում կուժերի համար պարանոց ու կանթ,
Գլուխն արքայի՝ տնանկի ձեռքում դնելով ավանդ:*

Այս տողերի մեջ Խայյամը ո՛չ միայն ցայտուն կերպով երևան է հանում աշխարհի ունայնությունը, այլ մի սոսկալի բարոյական ապտակ է իջեցնում նրանց երեսին, որոնք մոռացած անցյալն ու ապագան՝ այն աստիճան մանրացել ու լճացել են իրենց ներկա ազահության ու փառամոլության մեջ, որ շարունակ զրկելով իրենց նմաններին, հասնում են, որպես թե, իրենց ցանկացած երջանկության:

Բոլոր այս մարդկանց, իրենց մեծ ու փոքր աստիճաններով, Խայյամը բարձրաձայն ասում է. «Ձեր վախճանն այն է, որ ես տեսա բրուտի գործարանում»: Ահա, այսպիսի հեզնանք է պահել բնությունը ձեզ համար. վերջը ձեր գլուխն ավանդ է դրվելու նրանց ձեռքի մեջ, որոնց դուք կյանքում շահագործեցիք ու արհամարհեցիք:

Ինչքան զեղեցիկ և ազնվացուցիչ ազդարարություններ են այսպիսի ձայները մեզ համար, մեր կյանքի ընդվզումների մեջ, երբ ամեն խիղճ քամուն ձգելով՝ սանձարձակ ասպարեզ ենք տալիս մեր ստոր հակումներին: Հիշեցնելով մեզ անընդհատ մեր նախորդների այժմյան ողորմելի վիճակը, նա սովորեցնում է մեզ ապագան կանխատեսելով նայել մեր այժմյան դրության վրա, և ամբողջովին չստրկանալ ներկային ու չընկճվել նրա բռնակալ ձիրաններում՝ կեղեքելու և ինչք դիզելու համար:

Ես չեմ կարող ավելի երկար կանգ առնել Խայյամի այն լարի վրա, որով նա երգում է աշխարհի վաղանցիկ բնույթը, որովհետև ինչպես վերն ասացի, դա այն մոտիվն է, որ Խայյամին Խայյամ է դարձրել:

Նրա երգած բոլոր այլ նյութերը, լինեն դրանք սեր, գինի, բարարություն, բարոյականություն, Աստված, կրոն և կամ ազատամիտ գաղափարներ, սովորական են պարսիկ այլ բանաստեղծների համար, և նրանք այդ նյութերը շոշափել են Խայյամից ավելի կամ պակաս հաջողությամբ: Բայց աշխարհի ունայնությունը երգել Խայյամի ժանրով և նրա հմայքով՝ անկարելի է ուրիշի համար, որովհետև դա նրա երկնատուր մենաշնորհն է և նրա կատարելագործած թեման:

Կարիք չկա բնավ, որ մենք մի ճիգ գործ դնենք հետևելու համար Խայյամի իմաստին: Ո՛չ, նա ինքն այնպես տիրապետում է մեր մտքերին, որ նրա երգի եղանակը մեզ համար գրեթե մի դուրեկան մտասևեռում է դառնում, և դրանցից ազատվելու համար պետք է մեծ ճիգ գործ դնել:

Խիստ հատկանշական է այն, ինչ իմ մի բարեկամն ասաց ինձ, երբ նրա հետ խոսում էինք Խայյամի մասին: Նա պատմեց, որ իր յոթը տարեկան տղան, լսած լինելով Խայյամի քառյակներից մի քանիսը, պարտեզում խաղալու ժամանակ, մի բուռ հող է վերցրել և հորը ցույց տալով հարցրել է. «Հայրիկ, այս հողն էլ աշխարհակալների դիակներից է փոշիացել»:

Հայրը պատասխանում է. «Այո, զավակս, այդ հողն էլ հենց այն է, որ փոշիացել է աշխարհակալների և մուրացկանների գլուխներից և այժմ դրանք խառնվել են քո բուռի մեջ: Դրանց զատել չի կարելի»:

* * *

Խայյամը խիստ հետևողական է իր կյանքի փիլիսոփայության մեջ: Ուրեմն, եթե աշխարհը այնքան անհավատարիմ է, որ աշխարհակալների անվան հետքն անգամ չկա նրանց հիմնահատակ դարպասների մեջ, եթե չենք կարող ընդգրկել անցյալ ու ապագա անհունությունը, եթե այդ անսահմանության մեջ մեզ համար վիճակված է մի քիչ սահմանափակ կյանք, եթե ինչքան էլ մեծանանք ու հզորանանք ու ստացվածք շահենք, վերջապես ստիպված ենք մեր սրտին ասել.

*Միրտ իմ, սեպիր թե աշխարհից առար դու ամեն բարիք,
Թե զարդարեցին պարտեզն հաճույքիդ կանաչն ու ծաղիկ.
Եվ սեպիր թե այդ կանաչի վրա, որպես ցող պայծառ,
Նստար մի գիշեր, և առավոտյան չքացար խալառ:*

Ապա ինչ է մնում անել, եթե ոչ զգալ որ պարտավոր են գոհ մնալ այս կյանքով և ունեցածով: Ստիպված ենք համբերել: Բայց Խայյամի հասկացած համբերությունը սանձ կրծող հանդուրժանքը չէ մի մարդու, որ վիրապն է ընկել և դատապարված է սպասել մինչև պարան բերեն ու նրան հանեն: Այլ մի համբերատարություն է, որ ինքն իր մեջ բավարարություն է գտնում, որ անհետացնում է ամեն ջղայնություն, և ապրում է ո՛չ թե առ երևույթ, այլ ներքուստ՝ բարեբաստ: Նա նույնպես ջատագովը չէ հիմարի երջանկության, որ ոչինչ չգիտե, և իր չնչին իմացածը, — ինչպես ջրհորի մեջ ծնված ու մեծացած գորտը, — համարելով ամեն բան՝ ուրախ ու բախտավոր է դրանով:

Բանաստեղծի երգած ու երգած բավարարությունը իմաստունի գոհունակությունն է, որ գիտե ինչ է անցյալը և ինչ է լինելու ապագան, և որպես այդ գիտությունից ձեռք բերած գործնական արդյունք իր բարեկեցության համար, դառնում է իր քանի օրվա կարճ կյանքից ձեռք բերելու այն հաճույքը, որ այն ընդունակ է տալու:

*Քանի ոչ որ վաղը չը գիտե,
Ուրախ պահիր այժմ սիրտդ վշտակեզ.
Խմիր, ո՛վ Լուսին, քանզի լուսինը
Շատ պետք է դառնա ու չը գտնե մեզ:*

* * *

*Մեկ-երկու օրում կյանքն անցավ-գնաց
Ինչպես դաշտի մեջ քամին սրընթաց:
Թող երկու օրվա հոգ չանենք բնավ,
Այն որ եկած չէ, և այն՝ որ անցավ:*

Եվ սակայն չպիտի շփոթվել: Խայրամը ծուլության և անհոգության երկրպագու չէ: Նրա փայփայած բավարարությունը մի մտավոր կացություն է, որ պիտի յուրացնել, և ոչ թե ֆիզիկական կամ ուղեղային անգործություն: Նա չի հրավիրում մարդուն դառնալ մի անպետք կենդանի, որպեսզի գերծ լինի մտատանջությունից, — այլ ընդհակառակն, նա սովորեցնում է մարդուն դառնալ **ինքնաբավարար**, որպեսզի նա չդառնա, — ասենք հենց իր քառերով, —

*Թե խելք ունես՝ մի՛ լինիր ազահության դու գերի,
Ամենքի մոտ գլխակոր՝ շնորհիվ անմարս իղձերի,*

այլ լինի խրոխտ, անկախ, ինքնասեր և տոկուն:
Մեծապես սխալված կը լինեն նրանք, որոնք մտածեն, թե Խայրամի դպրոցը մի կրթարան է, ուր մարդ ուսանում է լինել անփույթ, ծույլ, թուլամորթ և գործնական կյանքի համար բոլորովին անպետքացած մի էակ:
Թող ինքը խոսե իր մասին.

*Վիզդ մի՛ ծոիր թշնամուդ առաջ
Եթե լինի նա նույնիսկ մի Ռոստամ,
Շնորհ մի՛ խնդրիր մի բարեկամից,
Թե Հաթան-Թայր լինի նա անգամ:*

* * *

*Թե երկու օրում ձեռքդ գա մեկ հաց,
Եվ մեկ ունկ պաղ ջուր մի կժից կոտրած,
Ինչո՞ւ կատարել որևէ հրաման,
Եվ ինչո՞ւ լինել նմանիդ ծառան:*

* * *

*Բարի է մարդ աշխարհում, թե լավ հոչակ առանա.
Նույնչափ ամոթ՝ որ բախտի հարվածներից բեկվի նա:*

Ինչպես տեսնում ենք այս տողերից, Խայրամի դասը այն չէ, որ մենք ոչնչություն դառնանք, այլ որ «վիզ չճոենք թշնամու առաջ», «բարեկամից շնորհ չխնդրենք», «մեր նմանի ծառան չը դառնանք», «բարի հոչակ ստանանք աշխարհում», ինչ որ գլխավորն է՝ «բախտի հարվածներից բնավ չընկճվենք»:

Հիմա գուզեցեք խնդրի այսպիսի ըմբռնումը այն գոհունակության հետ, որի մասին խոսեցինք, և դուք կստանաք այն մտավիճակը, որ մեր արևելյան բանաստեղծի անուրջների ցանկալի առարկան է:

Գուցե այս բոլորից հետո ոմանք հակված լինեն մտածելու, որ մեր փիլիսոփան երես թեքած աշխարհի անդարմանելի տառապանքներից՝ ապրում է իր ստեղծած

դուրեկան երազանքների մեջ: Բարեբախտաբար այդպես չէ: Ուսումնասիրելով նրա մտքերը՝ մենք համարձակ կարող ենք ասել, որ նա մարդկային ցավերի դժվարին հարցը չի լուծում փախչելով նրանցից, կամ անտես առնելով նրանց, այլ ընդհակառակը, նա սպեղանի է որոնում և գտնում այդ վերքերի համար:

Նրա փափուկ սիրտը խորապես զգացված է այլոց ցավերով: Այլոց ցավերով եմ ասում, որովհետև գիտենք, որ ինքը իր ժամանակում խիստ հարգված մի մարդ լինելով, վայելել է — շնորհիվ իր ընկերոջ Նեզամ-օլ-Մոլքի — կյանքի կատարյալ ապահովություն: Ուրեմն այն տողերը, որ մենք հիմա պիտի կարդանք որպես նմուշ հավանաբար զրված են իբրև արձագանք նրա սրտում, քան սեփական կսկիծներից առաջ եկած մի ճիչ:

«Ո՛վ ծիծաղեց մեկ գիշեր, որ լաց չեղավ մեկ տարի»...

* * *

*Թե ժամանակը հանկարծ մեղրից շնորհե քեզ պատուտ,
Զգո՛յշ եղիր, կուլ չը տաս, որ թույն կա մեջն անպատճառ:*

* * *

*Մեկ շունչ բերկրանք չը ծնեց այս վատ աշխարհն ինձ համար,
Որ նույն ժամին բյուր ցավի դուռն իմ առաջ չը բանար:*

Ոչ միայն աշխարհի վշտերն ուժգին կերպով անդրադառնում են բանաստեղծի զգայուն սրտի վրա, այլ նաև այն անարդարությունները, որոնք ընդհանրապես տեղի են ունենում ամեն ժամանակվա և ամեն դասակարգի մարդկանց մեջ, ցավագնորեն խոցում են նրա հոգին և դառնացնում նրա կյանքը:

Ինչ որ մենք մեր ամենօրյա կյանքում տեսնում ենք, թե ինչպես անարժանները, բախտի բերմամբ, համարվում են արժանավոր, թե անազնիվները վայելում են այն պատկառանքը և հեղինակությունը, որ ազնիվ մարդկանց համար միայն պիտի վերապահված լիներ, թե հայտնապես գող, կաշառակեր ու կաշառող մարդիկ հարգվում են իբրև հասարակական ակնածելի դեմքեր, և մյուս կողմից, նկատում ենք, թե ինչպես ազնիվ ու անձնուրաց մարդիկ թողնվում են անուշադիր, ընդունակները լքվում են անգործ, և ըստ ամենայնի արժանիքներով օժտված մարդիկ ստիպված են հաճախ առաջնությունը զիջել ինտրիգաներին, գող-հարուստ ազդեցիկներին և մեծերի շողոքորթ պնակալեզուներին, — ինչ որ այս տեսակի բաներ մենք ամեն օր մեր շուրջը տեսնում ենք, և չկարողանալով մի բացատրություն գտնել այս հանելուկի համար, շժմած՝ անունը դնում ենք բախտ, և կամաց կամաց, հաշտվելով դրության հետ՝ անցնում ենք անտարբեր. այո՛, այն ինչ Խայրամն սքանչելի կերպով ներկայացնում է այս տողերի մեջ.

*Ո՛վ կապտագույն դու անհիվ ո՛չ ազնիվ ես, ո՛չ կարող.
Գործին ազնիվ մի մարդու երբեք չեղար նպաստող:*

*Տմարդներին տալիս ես գանձ ու գոհար ու սեղան,
Կեցցես, անիվդ բախտի, սրիկաների՛ դու պաշտպան:*

Այս բոլորը, կրկնում եմ, որ մարդկային արժանապատվությունը նվաստացնում և տղմոտում է, սաստիկ վրդովում է բանաստեղծի ըմբռնումը իրերի դրության մասին և նրա մեջ արթնացնում է հրեղեն գայրոյթ: Նա բնավ չի կարողանում հաշտվել այդ դրության հետ:

Նա զանազան տեղեր ամենակծու լեզվով ծանակում է այդ սովորական երևույթը, և այդ ծաղրանքների ցայտուն նմուշներից մեկն է հետևյալը, որ թեև գրված ութ հարյուր տարի առաջ, կարծես գրված լինի այսօրվա համար:

*Պետք են մարդուն, լսեցինք, արժանիքներ սեփական,
Կամ, մեծություն խոստացող, արժեքը մեծ մի ծագման.
Դժբախտաբար աշխարհի կարգերն այնպես են այսօր,
Որ այս բոլորը՝ ոչինչ, փո՛ղ է միայն հարկավոր:*

Այս հանգամանքներում նա մեզ երևան չի գալիս — ինչպես օրինակ աշխարհի ունայնությունը երգելիս — մեղմ, մեղամաղձիկ, զանգատավոր և կոմպրոմիսներ որոնող: Նրա արդար ցասումի բռնկումը հիմնահատակ է անում նրա ամբողջ բնավորությունը: Նա սպառազինվում է ամբողջ բնության դեմ: Նա դառնում է մերթ հեզնող ու կծու, մերթ սանձը կրծող, մերթ սանձակոտոր, մերթ խելահեղորեն կատաղի և ընդմիշտ անհաշտ:

Այլ անհաճելի երևույթների առաջ, անկարելիի դեմ նա պատերազմ չի հայտարարում, բայց այս դեպքում հայրամյն անձանաչելի է: Աղավնին հանկարծ առյուծ է դառնում: Անարդարությունից նողկացող նրա մաքուր հոգին ուժգնորեն տենչում է դեպի անկարելիների անկարելին, որպեսզի կատարված անարդարությունը, որ բանաստեղծի համար ամենասուկալի ոճիրն է, ջնջե աշխարհի երեսից, և ավելի իրավացի կարգերի հիմքը դնե կյանքում:

*Թե ես Աստված լինեի անվին բախտի և երկնից,
Ես այդ անիվն անիրավ կը ջնջեի մեջտեղից.
Եվ այնպիսի նորաձև կստեղծեի մի անիվ,
Որ յուր իղձին դյուրությամբ հասներ ազատն ու ազնիվ:*

Մասնավոր ուշադրության արժանի է, որ հայրամյն բաղձանք չունի Աստված դառնալու, որպեսզի իր կյանքը հավերժացնի: Ո՛չ, նա տեսնելով որ կյանքը կարճ է, իսկույն վճռում է օգտվել պատեհությունից քանի կա, և հայտնում է իր անմիջական իղձը:

*Մեկ զավաթ գինի բեր անուշ անենք,
Նախքան մեր կավից շինեն զավաթներ:*

հայրամյն չի ուզում Աստված դառնալ, որպեսզի կյանքի ստեղծվածը լուծե: Նա նայում է հանելուկին, չի հասկանում և անպաճույճ կերպով խոստովանում, թե — չհասկացա:

*Վայելիր գինի, քանզի չը գիտես ո՛րկից եկար դու.
Եվ ուրախ ապրիր, քանզի հայտնի չէ ո՛ր ես զնայու:*

հայրամյն չի ուզում Աստված դառնալ, որ իր ցավերը դարմանի կամ անլուր բարիքներ դիզի: Նա տառապում է և մեղմորեն ավիստում, որ կյանքը իր ցանկացած ձևով չի անցել:

*Հազար ավիսու, որ ընդմիշտ մթնեց ցերեկն իմ կենաց,
Դեռ իմ կյանքում, իմ սրտով, մեկ հատ ցերեկ չը մթնած:*

Բայց երբ խնդիրը գալիս է աշխարհի անիրավ իրադարձություններին, երբ նա տեսնում է հայտնի սրիկաներ առատորեն վայելում են ամեն բարիք և հլու հարգանքն ու գովեստը շահակնկալ, պնակալեզ, քծնող ու վախկոտ ոհմակի, և այդ էլ դեռ քիչ համարելով, ուզում են բոլորին կուրացնել և պճնվել ազնիվ փետուրներով, երբ նա տեսնում է, որ այս բաները կատարվում են օրը ցերեկով, բոլորի աչքի առաջ և դատողության սահմանում, և այս գիտակցորեն կեղծ ու երկչուտ ամբոխի մեջ մեկ հատ արի և անշահասեր հոգի չկա, որ գոչե՝ «Ո՛վ նենգ, կանգ ա՛ռ, և ո՛վ ազնիվ, առաջ անցիր», այն ժամանակ հայրամյն կերպարանափոխվում է, նրա կաշին կարծես ուզում է պայթել արդար կատաղության ուժգնության ճնշման տակ: Նա ուզում է ջարդ ու փշուր անել ամբողջ տիեզերքը և ստեղծագործել մի նոր երկինք ու մի նոր երկիր, ուր «ազնիվ ու ազատ մարդը դյուրությամբ պիտի հասնի իր իղձերին», և ուր կեղծիքը միշտ դատապարտված և արժանիքը վարձատրված կը լինի:

Մարգարե լինելու կարիք չկա կռահելու համար, որ հայրամյն շատ ուրիշ արդար հոգիների նման, չհասավ իր փափագին, և նույն անիրավ անիվը այսօր էլ դառնում է իր սովորական ձևով, բարիներին փշրելով իր տակ և խարդախներին բարձրացնելով մինչև ուր նրանք երբեք չպիտի հասնեին:

* * *

Ընկերական հարաբերությունների հարցում հայրամյն խիստ հոռետես է: Նրա ցավերից փոքրիկ չէ և՛ այն, որ նա մարդկությունը գտնում է ընդհանրապես դատարկամեջ ու բարոյական արժեքի կողմից՝ սնանկ: Նա ավելի առաջ է գնում: Ոչ թե մարդը, անխտիր կերպով ասած՝ կեղծ է, այլ երբ որ բոլոր մարդկանց մեջ ուզես որոնել մեկ հոգի, և նրան ընդունելով որպես հավատարիմ բարեկամ՝ ամբողջ քո վստահությունը նրա վրա դնես, հենց այդ մարդուն մի օր կը գտնես քո դեմ դավադիր ու դավաճան: Ուրեմն, եթե ընտրյալներն այդքան բացասական լինեն, ի՞նչ պիտի լինի ընդհանրության վիճակը:

Լավ է որ այս աշխարհում շատ բարեկամ չը բռնես.
Այս աշխարհի մարդկանցից լավ է հեռու պահես թեզ:
Նա, որ դարձավ թեզ համար վստահելի հենարան,
Խելքիդ աչքը թե բանաս՝ թո ոտիսն է նա իսկական:

Անշուշտ, այս պատճառով է, որ բանաստեղծի սրտի մեջ գոյանում է մի խորին արհամարհանք դեպի մարդկությունը, և նա գոչում է.

Մեկ եզ կա վերում, կոչված Բագմաստեղ
Եվ մեկ եզ էլ կա թաքուն գետնի տակ.
Խելքիդ աչքը բաց, եզների մեջտեղ՝
Տես իրար ընկած՝ մի բուռ ավանակ:

Նկատելու արժանի է այն կետը, որ մարդկության դավաճան բնավորությունը բանաստեղծի մեջ չի ծնեցնում ոխի թույնը, ինչ որ բնական հակազդեցությունը պիտի լիներ այդպիսի ստոր վերաբերմունքի: Նրա գերազանցապես անապակ հոգին, այն աստիճան վիրավորված է զգում իրեն, այնքան հեռու է տեսնում իր ներքին աշխարհն ընչաքաղցությամբ վարակված չնչին արարածների ճահճանման ներքին աշխարհից, որ մեկ անգամ ընդմիջտ հրաժարվում է փոխադարձ մերձեցման և հասկացողության ամեն փորձից: Անջրպետը այդ երկսի միջև այնքան մեծ է, որ նա անկարող է զգում տարրալուծել ապերախտության և դավաճանության դրդապատճառները: Նա անկարող է ըմբռնել, թե ինչպես նույնիսկ հասարակ խելքի տեր մարդը այն աստիճան ընդունակ է իջնելու ապականության մեջ, որ ի չարը գործ դնե իր բարեկամի իր վրա դրած վստահությունը: Նույնիսկ անասունը կամաչեր այդպիսի ստորությամբ ներկելու իր պատկերը: Հետևաբար, նա խորին քամահրանքով գտնում է անասունների ամենից անարգվածը, և «էջ» կոչումով է խարանում բոլոր դավաճանների սև ճակատը:

* * *

Կյանքի գաղտնիքը, ինչպես պատմության բոլոր ուրիշ մեծությունների համար, Խայրամի համար էլ մնում է անթափանցելի և անլուծելի:

Դողդողալով ես կյանքի հրավիրվեցի սկզբում.
Կյանքը միայն պարզեց ինձ հավելյալ զարմացում:
Գնում եմ այժմ ակամա, և չիմացա ես բնավ.
Ինչ այս գալուց, մնալուց և գնալուց դուրս եկալ:

* * *

Նա, որ բնության պատկերը գծեց,
Ինչո՞ւ է ջնջում դրան ամեն օր:

Եթե լավ է դա, ինչո՞ւ կործանել,
Իսկ եթե վատ է, ո՞վ է հանցավոր:

Այդ հարցի մասին որոճալիս, Խայրամը բոլորովին մի նոր բան է ասում, և մի ձևով՝ որ շատ քչերն են արտահայտվել:

Մարդիկ ընդհանրապես այն տպավորության տակ են, որ աշխարհ գալով՝ մենք շատ բան ենք հասկանում համեմատած նրան, որ գիտեինք նախքան ծնվելը, բայց Խայրամը պարզապես ասում է, որ այս աշխարհը միայն նրա զարմանքն է ավելացրել:

Նա չի ժխտում թե մեր իմացածը բազմապատկվեց աշխարհում, այլ պնդում է, որ մեր զարմանքը շատացավ: Քանի որ զարմանքը տգիտության նշան է, ուրեմն, ինչ արտուրդ է սա: Որովհետև եթե մեր գիտությունն ավելացել է, նշանակում է, որ մեր զարմանքը պիտի պակասեր, և եթե զարմանքն ավելացել է, նշանակում է մեր տեղեկությունները պիտի պակասեին:

Ըստ իս, Խայրամի միտքն այն է, թե մեր գիտությունն ավելացել է և դրա հետ միասին մեր զարմանքն էլ է ավելացել: Թեև առաջին հայացքից այս մեկնարանությունն անհասկանալի և անկարելի թվա մեզ, և սակայն մի քիչ խորհելուց հետո կը գտնենք, որ բանաստեղծը չի սխալվել:

Իմաստության և իմանալիքների քանակն ու թիվն ու սահմանը անհուն է: Այդ անսահմանության մեջ մի փոքրիկ շրջան կա միայն, որին մենք ծանոթ ենք, և այդ շրջանի եզերքը ամբողջովին շարված է զարմացական և հարցական նշաններով, որովհետև դրանից դուրս ամեն բան մեզ համար անհայտ է:

Եթե այս լույսի տակ նայելու լինենք խնդրին, այն ժամանակ պարզ է, որ որքան լայնանա մեր տեղեկությունների շրջագիծը — որովհետև անհունին տիրապետել և վախճանին հասնել երբեք չենք կարող — բնականաբար պիտի բազմանա մեր զարգացման նշանների թիվը: Ավելի լայն շրջագծի վրա ավելի բազմաթիվ նշաններ կարելի է շարել, քան ավելի նեղի վրա:

«Ուրեմն ինչ», պիտի գոչե խեղճ մարդկությունը. «Ես որքան շատ բան սովորեմ, այնքան ավելի խոր պիտի զգամ որ տգետ եմ»: Ես հավատացած եմ, որ ճիշտ այդպես է, պատասխանում է Խայրամը, և մեր գիտության բազմապատկումը կարող է միայն ստեղծել մեզ համար զարմանքի և հարցերի բազմապիսի բազմացում, և այդպես շարունակաբար, մինչև ժամանակն անվախճան:

* * *

Ինչ տարօրինակ բան է, ապա, որ կանգնած այսպիսի անլուծելի հարցերի և անբուժելի ցավերի առաջ, որպիսիք են. —

Աշխարհի ունայնությունը և նրա անցավոր հատկությունը, որը ոչ մի կերպ կայուն ու տևական դարձնել չի կարելի.

Աշխարհի վշտերն ու հոգսերը, որ ոչ մի միջոցով դարմանել կամ ամոքել չի կարելի.
Բնության ու մարդկանց վատթար ու անարդար վերաբերմունքը դեպի ազնիվն ու անազնիվը, արժանավորն և անարժանը, որ ոչ մի չափով շտկել չի կարելի.

Մարդկության սնանկ բարոյականությունը և ընչապաշտ, կեղծավոր ու դավաճան քնավորությունը, որ ոչ մի աստիճան հեղաշրջել չի կարելի:

Եվ վերջապես, կյանքի առեղծվածը, որ ինչքան աշխատում ենք լուծել, այնքան ավելի թանձրանում և բարդանում է, փոխարեն համեմատաբար ավելի լուսաբանվելու:

Բանաստեղծը գինի՝ է պահանջում, որպեսզի մի րուպե հանգիստ տա իր լարված ջղերին, իր հոգնած ուղեղին, իր խոցված սրտին և իր տառապող հոգուն:

Թե սիրատանջ ես, տարին մինչև վերջ

Եղի՛ր խենթ, անհոգ, ու խմիր գինի:

Քանի որ լուրջ ենք՝ հոգս է ամեն բան,

Երբ հարբած՝ ինչ որ լինում է լինի:

* * *

Ես կյանք վարել չեմ կարող, եթե չը տան ինձ գինի:

Առանց գինու չեմ կարող կրել ես բեռն այս մարմնի,

Ծառան եմ ես այն ժամվա, երբ որ, սաղի, ինձ ասես,

Թե ա՛ն այս մեկ բաժակն էլ, և անկարող լինեմ ես:

Գուցե ոմանք կը մտածեն, թե այդ հանգամանքները հատուկ չէին հայրամի դարին, և սահմանափակված չէին միայն նրա ըմբռնողության շրջանում, այլ գոյություն են ունեցել ամեն ժամանակ և ամեն մարդու համար: Ուրիշները կարիք չեն զգացել և չեն զգում այդ ցավերի ձեռքից անձնատուր լինել գինուն, ինչո՞ւ պիտի հայրամի պես մի գիտնական, բանաստեղծ և իմաստուն մարդ անհետադարձ կերպով նվիրվեր արբեցության:

Նախ, կարևորն այն չէ, որ վերոհիշյալ շփոթեցուցիչ և ցավագին հարցերը գոյություն են ունեցել շարունակ, և մարդիկ էլ անտեղյակ չեն եղել նրանց վերաբերմամբ, այլ այն, թե ինչ մարդ ինչ չափով խորն է թափանցում հարցերի անլուծելության մեջ և ինչ չափով սուր զգայնություն ունի գիտակցելու իրերի վատթար դրությունը և աշխարհի հոռի երևույթները:

Իսկ եթե չափը լինի դատանիչ, ինչպես մենք ենք գրել այստեղ, հազվագյուտ անհատներ միայն մարդկության մեջ իրավունք ունեն հայրամի հետ մրցակցության մեջ մտնելու, որովհետև կարիք չկա շեշտելու, որ մեր բանաստեղծն ունեցել է ամենալայնածավալ ըմբռնողությունը և ամենազգայուն սրտերից մեկը, որ երբևիցե շնորհվել է մարդու զավակին:

Երկրորդ, ես հավատացած չեմ, որ հայրամը, ինչպես շատերը կարող են ենթադրել նրա գրվածներից, շարունակաբար հարբած դրության մեջ է եղել:

Այս բոլոր գովեստները գինու հասցեին, ավելի շատ նվերներ են գինու հատկությանը, քան նրա էությանը: Նա գինին սիրում է ինչպես խոցերի կսկծից տազնապող հիվանդը սիրում է սպեղանին, որի գործածությամբ մի րուպե թմրեցնում է իր տանջանքները: Նա պարզ ասում է. «Առանց գինու՝ այս կյանքի ծանր բեռը տանել չեմ կարող»:

Եթե նա մշտապես հարբեցող լիներ, բոլորովին անպետք մարդ կը դառնար, այնինչ նա ժամանակի առաջնակարգ գիտնականներից է եղել, և մասնագետ մաթեմատիկոս ու տիեզերագետ, որ աշխատակցել է մի նոր ճիշտ տոմարի կազմության, մի գործ, որ ոչ ոք եթե չունի մտավոր ամենակորովի առույգություն, չի կարող անել:

Շենք նրա բանաստեղծությունները ցույց են տալիս, որ մենք գործ չունենք մի «մշտահարբ» մարդու հետ, որն ի հարկ է, կիսացնոր մեկը պիտի լիներ, այլ ընդհակառակն, մենք գործ ունենք մեկի հետ, որ մեզ ներկայանում է բոլոր ժամանակների մի մեծահանճար ուղեղ և վսեմ սիրտ: Այսպիսի մի մարդու մասին երևակայել, որ գինու կարասի մեջ ընկղմած մի մուկ է եղել, ըստ իս, սրբապղծություն է:

Ուրեմն, մեկ անգամ ընդմիշտ արտաքսելով մեր գլխից այն միտքը (որ դժբախտաբար շատերի մեջ կա), թե հայրամը շարունակաբար հարբեցողի տիպ է եղել, անմիջապես կանգնում ենք երես առ երես այն հարցի հետ, թե ինչո՞ւ ապա այդ բոլոր շոռայլ և չափազանցված դրվատանքը գինու հասցեին, օրինակ՝

Քանի որ դեռ երկնքում ծագում են աստղ ու լուսին,

Ոչ որ ոչինչ չի տեսել ավելի լավ քան գինին:

Հասկանալի չէ քնավ, նա որ ծախում է գինի,

Ինչ է արդյոք գնելու, որ ավելի լավ լինի:

Այդ հարցին ես ավելի քան մեկ պատասխան ունեմ տալու: Նախ և առաջ, գինին ընդհանրապես ամեն տեղ, և մասնավորապես պարսիկ բանաստեղծների համար, մի բանաստեղծական առարկա է: Պարսիկ բանաստեղծները — լինեն նրանք խմող կամ ոչ — իրենց համար մի սրբազան պարտականություն են համարում գովեստի ձևեր նվիրել գինուն: Մերք նրա գույնի գեղեցկությունն է, որ գրավում է, մերք նրա տված ավյունը, մերք նրա անուշությունը, և մերք էլ, ինչպես մասնավորապես հայրամի դեպքում, նրա շնորհած մոռացությունն է, որ հմայում է մեր արևելյան քերթողներին:

Այս հանգամանքը այնքան հայտնի է պարսկական գեղարվեստական գրականության ուսանողին, և այս հարցը այնքան հաճախ ցցվել է նրանց մտքի առաջ, որ շատ քննադատներ, այնքան առաջ են գնացել, որ գինուն տվել են ինչ որ գերբնական տուրքի փոխաբերական իմաստը, որը շատ բանաստեղծների վերաբերմամբ ճշմարիտ է:

Այս տեսակետից ելնելով՝ քնավ զարմանալի չէ, որ հայրամն ևս հետևել է պարսից բանաստեղծության ավանդական թեմաներին և փառաբանել է գինին իր երգերի մեջ:

Անուրանալի է սակայն, որ հենց այս համեմատությամբ էլ եթե դատելու լինենք, կը գտնենք, հայրամը մեծ չափազանցություններ է անում ի նպաստ գինու: Առանց քաշվելու կարելի է ասել, որ բոլոր պարսիկ բանաստեղծների մեջ, հայրամը քացառապես և գերազանցապես գինու երգիչն է:

Կնոջ սերը, որ այնքան խոշոր տեղ է գրավում ամեն ժողովրդի և ամեն դարի բանաստեղծների մեջ, հայրամի գրքում հազվագյուտ նյութ է:

Ինչպես վերև ասացի, ես տրամադիր չեմ քացատրել, թե գինին, ո՞չ թե խաղողի հեղուկ է նշանակում, այլ փոխաբերաբար մի ինչ-որ հոգևոր բարիք: Գուցե այդպես էլ նղած լինի հայրամի միտքը, բայց ինձ համար մի այլ քացատրություն ավելի

պարզ է: Գինին մահմեդականների մեջ համարվում է պիղծ, և որովհետև բանաստեղծը գինի սիրում էր ու գործածում, բնականաբար ամեն կողմից ենթարկվում էր պարսավանքի, բամբասանքի և հանդիպում էր արգելառիթ խոչընդոտների, որոնց պատասխանը երևում է նրա երկերի մեջ, որպես չափազանցված ներքող գինու հասցեին: Եվ որքան ուժգին են եղել հարձակումները Խայյամի դեմ իր հանցագործության պատճառով, գուցե ավելի ուժգին է եղել Խայյամի պատասխանը.

Գինի եմ խմում և աջ ու ձախից

Նախատում են ինձ հակառակորդներ.

«Մեղք է», ասում են, «քանզի ուտիսն է

Գինին մեր կրոնի աստվածասկեր»:

Երբ ճանաչեցի ես գինուն որպես

Մեր դավանության անհաշտ թշնամի,

Աստված է վկա, կը խմեմ արդ միշտ.

Արյունը խմել, վարձք է, ռիսերմի:

Ահա այսպիսի նախատինքներին պատասխանելու համար է, որ Խայյամը գտնում է գերադրական արժանիքներ գինու մեջ, գողտրիկ պատրվակներ, սուր պատճառաբանություններ իր խմելը արդարացնելու համար: Եվ նրա հանձարը այնքան հմայիչ ու համոզիչ կերպով է բանաձևում այդ բոլորը, որ դարերի ընթացքում, միմյանց հաջորդող, գինին պիղծ սեպող սերունդներ զմոսել ու պահել են նրա պատասխանները որպես մարդկային հանձարի գեղեցկագույն արգասիքը:

Այլ խոսքով, եթե Խայյամը քրիստոնյա լիներ, և գինին նրա համար չլիներ արգիլված պտուղը, գինու այդքան չափազանցված սեր չէր երևա նրա երկերի մեջ:

Կա և մի այլ խորհրդածություն: Ամեն ոք գիտե, որ գինու շարունակական գործածությունը որպիսի կործանիչ հետևանքներ է թողնում մարդու վրա, թե՛ ֆիզիկապես, թե՛ մտավորապես և թե՛ հոգեպես: Ֆիզիկապես՝ տալիս է անբուժելի հիվանդություններ. մտավորապես՝ մարդուն դարձնում է ապուշ և հոգեպես՝ խիստ մոայլ ու ճնշված: Եվ, որպես ամեն ուրիշ մոլություն՝ մարդուն կատարելապես զրկում է կամքի ուժից:

Արդ, Խայյամի պես, բառի բուն նշանակությամբ իմաստուն մարդը, եթե գինի էր խմում, խմում էր միայն ազատվելու համար հոգսերից ու տանջանքներից: Նա չէր կարող իր սեփական անխոհեմությամբ գինեմոլ դառնալով բազմապատկել այդ նույն վշտերն ու տառապանքները, որոնց հակաթույնն էր որոնում գինու մեջ:

Այլապես կը նմաներ մի մարդու, որ մի հիվանդությունից ազատվելու համար, չափավոր թույնը իբրև դեղ ընդունելու փոխարեն, կրկնակի կամ եռակի դոզա խմելով՝ իր նախկին ցավի վրա ավելացներ մի այլ անբուժելի ախտ, գուցե և՛ մահ: Սա մի հիմար մարդու գործ էր, և Խայյամը հիմար չէր:

Բացի սրանցից, ամեն ոք գիտե, մոլությունը թեև ստեղծում է մարդու մեջ օրգանական մի անդիմադրելի պահանջ ոգելից ըմպելիքների համար, բայց ինչպես ամեն մի ստրուկ ենթարկվելով իր բռնակալին, երբեք չի կարող սիրել նրան, նույն-

պես և մոլի մարդը, թեև կարիք զգա խմելու, չի կարող փայփայել այն առարկան, որ նրան դարձնելով գերի, զրկում է խելքից, գործից, ինչքից, հարգանքից, կամքից և նույնիսկ արժանապատվությունից: Ուրեմն, եթե Խայյամը հարբեցող մարդ լիներ, նա գուցե առավտից մինչև գիշեր կը խմեր գինի, բայց երբեք գինուն չէր նվիրի այնպիսի տողեր, որոնց փոքրաթիվ սիրուհիներ են արժանացել իրենց պաշտող բանաստեղծների կողմից: Ընդհակառակն, եթե Խայյամը լիներ անբուժելի կերպով նվիրված ոգելից ըմպելիքների, նրա մեջ կստեղծվեր մի ատելություն դեպի գինին, և այդպիսի հանգամանքում, եթե նա երբևիցե ընդունակ լիներ բանաստեղծություն գրելու, նա մեզ հիշատակ կը թողներ այնպիսի երկեր, որոնց մեջ խայթիչ երգիծանք պիտի գտնեինք գինու մասին, և ոչ գովեստ:

Այս գաղափարն ապացուցելու համար ես ավելի լավ փաստ չեմ կարող բերել քան Խայյամի մի քառյակը, որը իր մեջ պարունակում է այն տեսակետը, որ բանաստեղծը գործադրում էր գինու գործածության վերաբերմամբ.

Գինի ես խմում, միայն խնատուն մարդկանց հետ խմիր,

Կամ մի ծիծաղկոտ ու վարդանման կնոջ հետ ընտիր:

Մի՛ խմիր շատ-շատ, մի՛ խմիր անդուլ, մի՛ խմիր հայտնի,

Այլ խմիր քիչ-քիչ, երբեմն խմիր, և խմիր գաղտնի:

Այս նյութի վերջաբանով ես ավարտած եմ համարում իմ ուսումնասիրությունը Խայյամի մասին, և կարիք չեմ զգում անդրադառնալու նրա հոգեբանական ավելի մասնավոր հատկություններին, որոնք ինչպես պարզ երևում են նրա բանաստեղծական խոստովանություններից, այլ քան չեն կարող լինել եթե ոչ արժանի մի մարդու, որ ունեցել է ամենազգայուն, լայն, փափուկ ու մաքուր սիրտ, բազմակողմանի և ընդարձակ կերպով զարգացած միտք, գերազանցապես պերճաբան լեզու, հուժկու և բազմամիտ ուղեղ, լայն ու բարձր ըմբռնողություն, վեմամթոյն և արարչագործ երևակայություն, անօրինակելիորեն ինքնատիպ մտածելակերպ, անկաշկանդ և անթեքելի համոզմունքներ, ազնիվ ու մելամաղձիկ խառնվածք, կախարդական ոճ ու մոգական գրիչ, համարձակ ու աննախապաշար ոգի, և հանդգնում եմ ավելացնել, միստիկ կրթությամբ հզորապես մարզված հոգի. վերջապես, մեկը՝ որ քանի պարսկերեն լեզուն հասկացող լինի երկրագնդի երեսին, կա և կը մնա իր և հետագա դարերի, որպես իր և այլ ազգերի ամենամեծ մարդկանց առաջնակարգ շարքերում:

Տոմսեղի 2. Միրզայան

(Օմար Խայյամ, Քառյակներ,

տպարան «Մոդերն», Թեհրան, 1963.— Ն. Մ.)

«ԱՇՆՈՒՂ» ԲԱՌԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ

«Աշուղական» անվան տակ ճանաչված առաջին երգերը մեզ հասել են 17-րդ դարու երկրորդ կեսից, ինչպես դա գրում է այդ գրականության քաջածանոթ Գ. Լևոնյանը, իր «Աշուղները և նրանց Արվեստը» (Երևան, 1944) գրքում: Այդ տեսակետին մասամբ հակասում է պարսկահայ բանասեր Ա. Երեմյանը, իր «Պարսկահայ Աշուղներ» (Նոր Ջուղա, 1921 և Թիֆլիս, 1930) գրքում և իր մի շարք այլ ուսումնասիրությունների մեջ, որոնք լույս են տեսել զանազան հանդեսներում:

Այսպիսով՝ Նոր Ջուղայի տապանաքարերի վրա Ա. Երեմյանը հայտ է բերել մի քանի հայ աշուղների անուններ, որոնք ապրել են 16-րդ դարում. դրանք են Պետրոս Ջուղայեցին, Աշուղ Մարգարը, Աշուղ Աղալենը, Աշուղ Սամտին, և այլն:

Հետևաբար «աշուղական» կոչման տակ ճանաչված գրականության սկիզբը պիտի փնտրել Իրանում, Նոր Ջուղայի հայ գաղութում, ուր առաջին անգամ երևան են եկել աշուղները, այդ բառի բուն հասկացողությամբ: Այդ «բուն» հասկացողությունը կարելի է հետևյալ կերպով բնորոշել. «ԱՇՆՈՒՂ» և «ԱՇՆՈՒՂԱԿԱՆ ԵՐԳԵՐ» անվան տակ հայ բանասիրությունը հասկանում է այն թափառաշրջիկ երգիչներին, որոնք ավանդորեն կապվում են հայ գուսաններին, բայց արաբ-պարսկական քերթողության ազդեցության տակ մշակել են ուրույն մի արվեստ և առաջին անգամ ժողովրդի մեջ ճանաչվել են «աշուղ» անվամբ⁷⁴:

Գ. Լևոնյանը, ինչպես և Մ. Աբեղյանը («Ժողովրդական Խաղիկներ», Երևան, 1940) փաստել են, որ աշուղական արվեստի տաղաչափական ձևերը ծագում են առել արաբ-պարսկական տաղաչափական օրենքներից: Այդ կապակցությամբ Մ. Աբեղյանը, իր վերոհիշյալ ուսումնասիրության մեջ գրում է.

«Աշուղական տաղաչափությունը ուրույն տաղաչափություն է. նրա սկզբնական ձևերը, իրենց կանոններով արաբական և պարսկական ծագում ունեն. այդ ձևերը հետագա դարերում անցնելով մերձարևելյան մյուս ազգերի մեջ, — թուրք, ուզբեկ, ադրբեջանցի և հայ աշուղներն ընդունել են նրանց չափերն ու կանոնները, ենթարկելով այդ որոշ փոփոխությունների...»:

⁷⁴ Անդրկովկասի թրքալեզու ադրբեջանցիք և ունեին իրենց «աշուղները», որոնք երևան են գալիս գերագանցապես 17-րդ դարում: Դրանցից պիտի հիշել ՍԱԲԸ ԱՇԸՂ-ին, ԱՇԸՂ ԱԲԲԱՍ ԹՈՒՖԱԲԱՆԼԸ-ին և այլն, որոնք մեծ մասամբ «բայաթի» հորինողներ էին: Դրանց ծագումը առնչվում է Անդրկովկասյան այլ ազգերի և հատկապես հայ աշուղների հետ, որոնցից առաջ արդեն «աշուղ» կոչումը գործածական է եղել պարսկահայերի մեջ: Թերևս տարօրինակ զուգադիպություն լինի հանրաձանոթ ժողովրդական պոեմայի «Աշուղ-Ղարիբ»-ի անունը, ուր «աշուղ» բառը գործածված է իր բացատրության «Ղարիբ»-ի հետ միատեղ:

Այս շատ կարճ նախաբանը պետք էր մեզ, ճշտելու համար նախ «աշուղական» կոչված քերթողության դիրքը մերձարևելյան գրականության մեջ և ապա ցույց տալու համար, որ «Աշուղ» բառի իսկական իմաստը պիտի փնտրել դրա Պարսկաստանում գործածված ձևի տակ և ոչ թե Փոքր Ասիայի թրքերենում «աշըղ» կամ «աշէղ» արաբերեն բառի ընդունված իմաստով:

«Աշուղ» բառի ստուգաբանությունը մեր մեջ ընդունված է հիմնել «աշէղ» արաբերեն բառի վրա, որի բուն նշանակությունն է «սիրահար»:

Արդ, «ԱՇԸՂ» عاشق բառը պարսկերենում որպես «Երգիչ» կամ «Բանաստեղծ» — որքան դա մեզ հայտնի է — երբևիցե չի գործածվել: «Աշէղ-Խելագարը» չափազանց ընդունված մի այլաբանություն է Իրանական և հատկապես սուֆի-միստիկների մոտ. բայց այդ ուղղությամբ մեզ հասած բազմաազար ոտանավորներից և ոչ մեկում մենք չենք հանդիպել «աշէղ-Երգիչ-Բանաստեղծ» հասկացողության: «ԱՇԸՔ» արաբերեն բառը միայն թուրքերի մեջ, այն էլ առավելապես Փոքր Ասիայում է, որ «երգիչ-բանաստեղծ» այլաբանական միտքն է ստացել: Այսպես օրինակ, «Բառգիրք յաշխարհաբառէ ի Գրաբառ» (Վենետիկ, 1869) հանդիպում ենք.

ԱՇԸԽ = մեկի մը հետ չար սեր ունող: Տես՝ «Սիրահար» = չար սէր ունեցող՝ կնիկ մարդու կամ էրիկ մարդու:

ԱՇԸԽ = ՇԱՅԻՐ = Տես՝ Բանաստեղծ:

(Ապա «Բանաստեղծ» բառի դիմաց ունի թրքերեն «աշըք» և «շայըք» բառերը):

Ստ. Մալխասյանի «ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆՈՒՄ» կարդում ենք.

ԱՇՆՈՒՂ — (արաբ. asek սիրահար, տանկ.-ից):

Ժողովրդական բանաստեղծ — երգիչ — նվագիչ, ժողովրդական գուսան: Աշուղները շրջում են գյուղից գյուղ, քաղաքից քաղաք, օղաներում, սրճարաններում երգում ու նվագում են թե իրենց շարադրած և թե ուրիշ աշուղների երգերը... և այլն: (Ընդգծումները մերն են):

Այսպիսով՝ հանգում ենք այն եզրակացության, որ ԱՇՆՈՒՂ բառը մենք փոխառել ենք տաճկերենից և որ դա ծագում է արաբական ԱՇԸՂ — «սիրահար» արմատից:

Այժմ քննենք պարսկական աղբյուրները այդ բառի տարբեր մի ստուգաբանության համար, որը շատ ավելի հարազատ և ավելի ճշգրիտ է թվում և մտքի և հնչյունաբանության տեսակետից:

Պարսիկ բացատրական բառարաններում, որոնց մեջ բացառիկ հեղինակություն են վայելում «ԲՈՐՀԱՆԵ ՂԱԹԵ»-ը և «ԱՆՋՈՄԱՆԵ ԱՐԱ»-ն, ինչպես և Դեհխողայի անավարտ՝ մեծածավալ և համայնապարփակ «Բացատրական Բառարանում»՝ մենք հանդիպում ենք հետևյալ բառին, որը տրված է երկու փոփոխակներով.

ա : اشوغ = ԱՇՆՈՒՂ՝ (արտասանվում է ինչպես اروغ)

բ : اشوغ = ՕՇՆՈՒՂ՝ (ինչպես دروغ)

«Բորհանն Ղաթն»՝ — Անհայտ ծագմամբ և անհայրենիք անձին են ասում»

«Անջոմանն Արա»՝ — «Անհայրենիք անձին են ասում» Դեհիսոդայի «Բացատրական Բառարան»-ը տալով այդ երկու փոփոխակաները, և հիշելով երկու նախորդ բառարանների տված բացատրությունը, հետևյալ կերպով է մեկնաբանում այդ բառը:

أشوغ = ԱՇՈՒՂ՝ (ած.) նշանակում է **անհայտ, անհամբավ, անծանոթ, անճանաչ, նույնպես՝ անանուն:** (Որպես վկայություն, բերված է հետևյալ ոտանավորը)।

Ինչ անեմ արդյոք անգթությունից այս սին աշխարհի,

Ես մի աշուղ եմ ձեր ժողովրդի մեջ:

(ԹՈՐԹՈՐԻ)

أشوغ = ՕՇՈՒՂ՝ (ած.)

Ըստ «Բորհանն Ղաթն»-ի և «Անջոմանն Արա»-ի ԱՆՀԱՅՏ ԾԱԳՄԱՄԲ ԵՎ ԱՆՀԱՅՐԵՆԻՔ ԱՆՁԻՆ ԵՆ ԱՍՈՒՄ: Այսօրվա մտքով՝ Անհայրենիք sans patrie:

Եթե այժմ ուզենք այս բառը փոխադրել հարազատ հայերենի, դա պիտի թարգմանենք՝

«ՎՏԱՐԱՆԴԻ» կամ «ՊԱՆԴՈՒԽՏ», որի հարազատ իմաստը հայերենում, ըստ Ստ. Մայիսայանի, հետևյալն է.

«ԻՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ ՀԵՌԱՑԱԾ և ՕՏԱՐ ԵՐԿՐՈՒՄ ԲՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՍՏԱՏԱԾ ՄԱՐԴ, ՆԺԴԵՀ, ՕՏԱՐԱԿԱՆ, ՂԱՐԻԲ»:

Վերոհիշյալ أشوغ (ԱՇՈՒՂ) բառի **հայացված** ձևը գտնում ենք նաև Հ. Աճառյանի «ԱՐՄԱՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆՈՒՄ» հետևյալ ձևի տակ.

«ԱՇՈՒԳԻ» — «Առանձին, հատուկ, մասնավոր» — նորագյուտ բառ: Բառի երկրորդ ձևն է ՈՇՈԳԻ. նույնից ԱՌ նախդիրով ունինք ԱՌՈՇՈԳԻ — առանձին, հատուկ, իրեն միայն սեփական: Այս ՈՇՈԳԻ բառն է, որ ՈՒՇՈԳԻ գրչությամբ պահված է երեք տեղ: Այսպիսով բառը ներկայանում է երեք ձևով՝ ԱՇՈԳԻ, ՈՇՈԳԻ, ԱՌՈՇՈԳԻ»:

= ԹՎԻ թե իրանական փոխառություն է. պարսկերեն أشوغ կամ اشوغ «անգիտացյալ իր, թե մարդ իցե և թե այլ» (տես ԳԴ. աշուղ և յուշուղ ձևերով). իմաստի զանազանության համար, համեմատել լատ. secreto «գաղտնի, ծածուկ, մասնավոր, հատուկ». secretus «բաժանված, անջատված, հեռացած, զուրկ, մեկուսի, առանձնացյալ, մասնավոր, մենավոր, գաղտնի, անտեսանելի, անտիպ, հազվագյուտ»:

Ինչպես տեսնում ենք, Աճառյանի բացատրության վերջին մասը (որը ընդգծել ենք) չափազանց մոտենում և համարյա թե համընկնում է պարսիկ բացատրական բառարանների տված մեկնաբանությանը:

Թվում է, վերոհիշյալ ստուգաբանությունը շատ ավելի հարազատ և մոտ է բառի ոգուն, ինչպես հնչյունաբանական, նույնպես և մտքի և բացատրության տեսակետից, քան տաճիկների արաբերենից փոխառված «աշըխ» բառը, որը արևելյան այլ լեզուներում և հատկապես պարսկերենում «երգիչ — բանաստեղծի» նշանակություն չունի և չի ունեցել և այդ մտքով գործածվել է թերևս միմիայն տաճիկ աղավաղված ժողովրդական լեզվի մեջ: Մեր առաջարկած ստուգաբանությունը ճշգրիտ

կերպով ներկայացնում է մեր միջնադարյան աշուղների թափառական, վտարանդի, պանդուխտ, դարիր և անհայրենիք, անհայտ և անանուն ժողովրդական երգչին, որի երգերի հիմնական մոտիվը, սիրուց ավելի՝ դարիրության երբերն են եղել⁷⁵:

Այս առնչությամբ հետաքրքիր է նշել, որ Ակնի ժողովրդական երգերը մեզ ծանոթ են «ԱՆՏՈՒՆԻ» անվան տակ: Ինչ է նշանակում «անտունի»-ն: Ահա թե ինչպես է բացատրում այդ բառը Մ. Աբեղյանը իր «Հայոց հին գրականության պատմության» երկրորդ հատորում, էջ 566 և այլն:

— «Անտուն բառը նշանակում է նաև «պանդուխտ»: Ինչպես եղել են «հարսի հայրեն» այսինքն հարսանեկան հայրեն, ուրախության հայրեն, սիրո հայրեն այլ և օրորոցի հայրեն, «լացի հայրեն» նույնպես եղել է և պանդխտի հայրեն, որ Ակնում, հավանորեն վերջին դարում, կոչվել է «անտունի հայրեն»... և վերջապես, ավելի ուշ ժամանակներում, երբ «հայրեն» բառը նշանակության ընդարձակումով ստացել է «երգ» բառի իմաստը, ապա «անտունի» բառի նշանակությունն էլ ընդարձակվել է, և այդպես կոչվել են ամեն տեսակի հայրեններ, հայրենի չափով հորինված ամեն մի բանաստեղծություն...»:

«... Պանդխտի անտունիները, որոնք էապես դարձյալ սիրո երգեր են, համեմատաբար ավելի շատ են և ավելի զարգացած են, քան պանդխտի հայրենները... պանդխտության անտունիները սիրված են եղել և ընդարձակված են, կազմված լինելով մի շարք տաղերի միակցումով, լինեն սրանք սիրո երգեր, մահերգ թե այլ երգ... Հետաքրքիր է այն, որ մի քանի պանդխտական անտունիների երգիչները մեջ-մեջ պատմում և երգում են... ճիշտ այդպես են վարվում մեր օրերում և վեպեր հորինող ԱՇՈՒՂՆԵՐԸ»:

Վերոհիշյալ քննորոշումները Ակնի «անտունիների» համար, ճշգրիտ պատկերն են տալիս պարսկական հողի վրա և պարսկահայերի մեջ սկիզբ առած «ԱՇՈՒՂԱԿԱՆ» քերթվածության, որը գերազանցորեն կազմված է եղել պանդուխտական, «ՂԱՐԻԲՈՒԹՅԱՆ» և սիրո երգերից:

(«Ալիք» ամսագիր, 1963, № 9.— Ն. Մ.)

⁷⁵ Պարսկահայ աշուղները ճանաչված են եղել նաև «ՂՈՒԼ» անվամբ, որը բառացիորեն նշանակում է «Դե, Անապատի չար ոգի», որը զանազան ձևափոխություններ ստանալով՝ խաբում էր մոլորված ճամփորդներին և սպանում նրանց: Այդ նախնական հասկացողությունից ելնելով, պարսիկ քերթողության նեջ «ղուլ» բառը այլաբանորեն «հուշկապարիկ» sirene նշանակություն է ստացել, որը կարող է իր երգերով և հրապուրիչ բառերով հմայել մարդկանց: Հայ աշուղները, Պարսկաստանում որդեգրելով այդ անունը, երկու միտք են դրանով արտահայտել. նախ՝ իրենց թափառական, «անապատաբնակ» վտարանդի երևույթը, և ապա իրենց բանաստեղծական և երգեցիկ հմայքը, որը «հրապուրում» և «մոլորեցնում» էր սովորական մահկանացուներին:

ՆԱԽՆԱԳՈՒՅՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ ՊԱՐՄԻՑ ՉԱՓԱԾՈ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ

1957 թվին, Մյունխիսում կայացած արևելագիտական 24-րդ Համագումարում, գերմանացի արվեստագետ Վ. Բ. Հեննինգը (W. B. Henning) առաջին անգամն էր որ կարդաց պարսկերեն լեզվով գրված քանաստեղծական ձեռագիր մի հատված, որը մնացորդն էր «ԲԵԼՈՀԱՐ ԵՎ ԲՈՒԴԻՍԱՖ» պոեմայի: Դր. Յարշաթերը դա վերարտադրել է Գրականության Համալսարանի Հանդեսի 5-րդ հատորի 4-րդ համարում, «Պարսիկ Գրականության հնագույն նմուշը» խորագրի տակ:

Դրանից մի քանի տարի հետո, Դր. Հեննինգը հայտնագործեց մի այլ ձեռագիր, որը մասնիկն է մի ՂԱՍԻԴԱՅԻ. այդ նմուշը նա գտել էր Բեռլինի Ակադեմիայի Մանիական ձեռագիրների մեջ: Այդ երկու ձեռագրերը, որոնք մագաղաթի պատառիկներ են միայն, գրված են ոչ-պարսկերեն տառերով և վերագրվում են 10-րդ դարու առաջին կեսին: Ձեռագիրները գրված են Մանիական պարսկերենի ուղղագրությամբ: Գրչագիրները, որոնք սովոր էին գրել Միջին Պարսկերենով (Արշակունյաց և Սողդիական լեզուներով) նույն այդ ուղղագրությունը աշխատել են հարմարեցնել պարսկերեն բառերին, առանց ի նկատի առնելու բառերի հնչյունական տարբերությունը:

Ձեռագիրներից առաջինը, «Բիլոհար և Բուդիսաֆը» կազմված է մի հատիկ թերթիկից, ուր նկարագրվում է սիրահարների անջատումը և Բուդիսաֆի վերադարձը, հաջորդ երեկոյան: Դր. Հեննինգը նախապես ենթադրել էր, որ այդ պոեման ներկայացնում է Սամանյան քանաստեղծ ՌՈՒԴԱՔԻԻ կորած երկերից մեկը, բայց հետագայում, ուշադրության առնելով քերթվածի թույլ արվեստը, փոխել է իր կարծիքը և այդ քանաստեղծական հատվածը վերագրում է երկրորդական մի քանաստեղծի:

Ինչ վերաբերում է նրա գտած ՂԱՍԻԴԱՅԻՆ, դա ավելի ևս ուշադրության արժանի է, քանի որ դա պարսկերեն ամենաառաջին չափածո երկն է, որ գտնվել է մինչև այսօր: Այս դասիդան տողաբաժանման չի ենթարկվել, այլ գրված է արձակ քերթվածի պես, շարունակական և հարակից տողերով: Սրանից էլ միայն շատ վնասված մի թերթիկ է մնացել: Ընդհանուր 13 երկտողից մասնիկներ միայն ընթեռնելի են: Այդ պատառիկներից հայտնվում է, որ դա մի եղերերգ է, գրված մի մարդու կողմից, որը արդեն իրեն գերեզմանի մեջ է գտնում: Նրա ոգին գանգատվում է ժամանակի

վարքերից ու բարքերից (գանգատ մշտահողով և անվախճան) և իր ընկերներից, որ իրեն մենակ են թողել, ճակատագրի հետ մենակ, հեռացել են ու մոռացել իրեն:

Բանաստեղծության մեջ հաճախ կրկնվում են մահմեդական անուններ (Հարուն, Նուհ, Յուսուֆ, Ջոլֆադար), դարձվածքներ և արտահայտություններ: Բայց չափտի մոռանալ, որ սա Մանիական մի քերթված է և որ սովորական արտահայտությունների տակ թաքնված են դավանական և հերձվածային գաղտնի մտքեր: Իր յուրահատկությամբ, այս դասիդան հիշեցնում է Էսմաիլի աղանդի առաջնորդներից հոշակավոր քանաստեղծ-փիլիսոփա ՆԱՍԵՐԵ ԽՈՍՐՈՎԻ Դիվանի դասիդաները:

Այս դասիդայի հերոսը վերածվում է ԳՐԻՎ ՋԻՆԴԱԳԻ, «Կենդանի Դիակի» կամ «Հոգու» որը հավիտենապես տառապում է ուրիշների չարության, մեղքերի և մոռացության պատճառով, որը տապալվել ու ոտնատակ է արվել, օտարական է այս չար և դաժան աշխարհում: Սրանով մենք մի նոր օրինակի ենք հանդիպում, որը ապացուցում է Մանիական աղանդի ճկունությունը, որը ըստ օրվա պայմանների՝ իր վարդապետությունը թաքցնում էր նոր դիմակների տակ: Այստեղ չի կարելի չհիշել որպես օրինակ՝ Պավլիկյանների շարժումը Փոքր Ասիայում, որը Մանիական աղանդի խիստ ազդեցության տակ էր գտնվում և անցնելով Բալկանյան թերակղզին, Բուլղարիայում ստացավ ԲՈԳՈՄՈՆԵՅՆԵՐԻ աղանդային ձևակերպությունը և տարածվեց մինչև Ֆրանսիայի և Արևելքից՝ մինչև Ռուսաստանի խորքերը:

Ճիշտ այնպես, ինչպես քրիստոնյա ուղղափառներն էին գանգատվում Մանիականների այդ անբարեխիղճ վերաբերմունքից, նույնպես և մահմեդականները շատ հաճախ խաբվում էին նրանցից և միշտ զգուշանում էին կեղծ-մանիականների լարած ծուղակներից, որոնք թաքցնում էին իրենց վարդապետությունը սովորական և ժամանակի կղերական արտահայտությունների տակ:

Վերոհիշյալ երկու հատվածների լրիվ թարգմանությունը, որը իր պատառոտում և ցանցառ վիճակի մեջ միայն պատմա-լեզվագիտական հետաքրքրություն է ներկայացնում, կատարել է Դր. Հեննինգը իր մի հողվածում, որը լույս է տեսել «Պարսիկ քանաստեղծական ձեռագիրներ Ռուդաբու ժամանակվանից» խորագրի տակ, 1962 թվին, «A Locust's Leg» — Studies in honour of S. H. Taghizadeh ժողովածուի մեջ:

(«Ալիք» ամսագիր, 1963, № 9.— Ն. Մ.)

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. «Բագին», 1963 N(9-10), 1964 N(5-6-7):
2. «Ալիք» ամսագիր, 1963 N(6-7-9-11):
3. «Սփյուռք», 1962 N(48-52), 1963 N(49-52), 1964 N(23-25-26-29-31-34-35):
4. «Վերածնունդ», 1951-1952, մեծամասամբ բոլոր համարները:
5. «Գոլջին Ջահանբանի», գերդավարանդե, սարհանգ Մոհամադիոսեյն Ջահանբանի, Ֆարվարդին 1321:
6. «Գոլզար աղար», գերդավարանդե, Հոսեյն Մաքի, Էսֆանդմահ 1329:
7. «Գանջուր» կայքէջ, <https://ganjoor.net>:

ՀՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ



**ՀԱՄԱՇԵԱՐՀԱՅԻՆ ԱՐԵՎԵԼԱԳԵՏՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՆԻ
ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԸ ՖԻՐԴՈՒՍՈՒ ԿՈՆԳՐԵՍՈՒՄ
(Ֆիրդուսու 1000-մյակի առթիվ, 1934 թ., Թեհրան)**

Առաջին շարք նստած (աջից). պարոնայք՝ Քամալի (Թուրքիա), Մոհամադ Թադի Բահար, Հանրի Մասն (Ֆրանսիա), Արբաս Էդրալ, Իսա Սեդիդ (կոնգրեսի գլխավոր քարտուղար), Մոհամադ Օդլու (ԱՄՆ), Ֆրանքլին Գոնթեր (ԱՄՆ), Սեբաստյան քեկ (Գերմանիա):

Երկրորդ շարք. Ջան Դրինքվաթր (անգլիացի պոետ), Արդուվահաբ Էզամ (Եգիպտոս), Ջ. Քոնթենո (Ֆրանսիա), Էբրահիմ Հաքիմի, պրոֆեսոր Բերթելս (Խորհրդային Միություն), Խորհրդային Միության դեսպան՝ Փասթոխոֆ, Հասան Էսֆանդիարի (կոնգրեսի նախագահ), Ֆորուդի (վարչապետ), Մադան Գոդար, Դոսթուր Նոշիրվան (Հնդկաստան), Քրիստիան Սեն (Դենմարք), պրոֆ. Ֆրեդրիկ Սարն (Գերմանիա), Արդու-Հոսեյն Շեյբանի, Հոսեյն Փիրնիա:

Երրորդ շարք: Մոջթաբա Մինովի, Վալիուլահ Նասր, Մեհդի Դիբա, Վահիդ Դասդգերդի, Հովսեփ Միրզայան, Բադիոլ Ջաման Ֆրուզանֆար, Սաիդ Նաֆիսի, Ջամիլ Սեդդի Ջահալի (Իրաք), Ռեզազադեհ Շաֆադ, Ֆուադբեյգ Քեփրիլիզադեհ (Թուրքիա), Էթեսամզադեհ, Նեզամելդին (Հնդկաստան), Սեր Դենիս Ռաս (Անգլիա), Աթուջի Աշիբազա (Ճապոնիա), Ռահնեմա, Բոլոթնիբով (Խորհրդային Միություն), պրոֆ. Մոհամադ Թահեր Ռազավի (Հնդկաստան), Ռաշիդ Եասամի:

Չորրորդ շարք. Մայել Թույսերքանի, Ահմադ Համեդ Սարաֆ (Իրաք), Ալի Ասխար Հեքմաթ (գիտության և մշակույթի նախարար), Յան Ռիբկա (Չեխոսլովակիա), Մոհամադ Էսհադ և Հոսեյնի (Հնդկաստան), Ալի Նահադբեյգ (Թուրքիա), Արդու Ազիմ Ղարիբ, Օրանգ, Բահմանիար, Ռահիմզադեհ Սաֆավի:

Հինգերորդ շարք. Ջ. Հաքն (Ֆրանսիա), Ջալալ Հոմայի — պրոֆ. Մար (Խորհրդային Միություն), Ղավիմ, Ռոմակովիչ (Խորհրդային Միություն), Օրբելի (Խորհրդային Միություն), Ջ. Մ. Ունվալա (Հնդկաստան):

Վեցերորդ շարք. Բ. Թ. Անքլեսարյա (Հնդկաստան), Սեյդ Ահմադ Քասրավի, Սեյդ Նասրուլահ Թաղավի, Մինորսկի (Խորհրդային Միություն), Արդու Մաջիդ Էբադի (Եգիպտոս), Անտոնինա Փազլիարո (Իտալիա), Ֆրանսուվա Մալեքբարամ, Էրնեստ Քոհնել (Գերմանիա), Արբաս Խալիլի, Ջավահեր Քալամ:





Ձախից աջ. Ռաբինդրանաթ Թագոր, Հովսեփ Միրզայան, կանգնած է պատանի Ջորայր Միրզայանը: Թեհրան, 1932 թ.



Էդվարդ Բրաուն, քրիստանացի գրող և արևելագետ (1862–1926)



Ֆիրդուսու 1000–ամյակին նվիրված մեդալիոն



Սաադու դամբարանը Շիրազում

Անրե Դոդիեի թարգմանած հատվածները «Գոլեստան» գրքից (ֆրանսերենով 1634 թ.)



Խայյամի դամբարանը Նեյշարուրում



Հաֆեզի նամականիշը, Ծննդյան 650–ամյակին նվիրված (1971 թ.)



Հաֆեզի դամբարանը Շիրազում



Հաֆեզի և Գյոթեի հիշատակին նվիրված հուշարձան Բեթհովեն հրապարակում (2000 թ.)



Քոմալ Էդին Իսմայիլի կիսանդրին Իսպահանում



Քոմալ Էդին Իսմայիլի դամբարանը Իսպահանում



Խաղանու հուշարձանը Թավրիզում



Նասեր Խոսրոյի նամականիշ (Տաջիկստան, 2003 թ.)



Ջամիի դամբարանը Հարաթ քաղաքում



Խաջոյի դամբարանը Շիրազում



Ռաբեհ Բալխու դամբարանը Բալխ քաղաքում՝ Կանաչ մզկիթի մոտ



Մոլավու թանգարանը Ղունին քաղաքում



Սամա շուրջապարը




Նեզամի Գանջավիի դամբարանը Գանձակում




Նեզամ օլ Մոլթիի դամբարանը
Սպահանում




Նեզամ օլ Մոլթիի
կիսանդրին Մաշհադում



Գուլչին Ջահանբանու գիրքը



Գուլգար Աղաթ, Հոսեյն Մաքու գիրքը



Լեթաթ օլ Ալթաթ,
Մոհամադ Աուֆի գիրքը



Ջոհուրի Թորշիգու դիվանը

ԶՈՐԱՅԻ ՄԻՐԶԱՅԱՆ
ՊԱՐՄԻՑ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
IX-XX ԴԴ.

Հավաքեց և աշխատասիրեց Նիկիտ Միրզայանը
Հեղինակային հրատարակություն, Երևան, 2024

E-mail: n.mirzayans@gmail.com

ISBN 978-9939-0-5008-9



9 789939 050089

Տեխնիկական խմբագիր՝ Նվարդ Փարսադանյան
Շապիկի ձևավորումը՝ Ջոզեֆ Միրզայանի
Մուտքագրումը՝ Սուսաննա Ավետիսյանի
Պարսկերենի օժանդակությունը՝ Ժագ Թոփալազյանի
Ձևավորումը՝ Գրիգորի Հարությունյանի

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 70x100/16: Թուղթը՝ օֆսեթ
Ծավալը՝ 23 տպ. մամ.: Տառատեսակը՝ GHEA Mashtots

Տպագրվել է «Զանգակ-97» ՍՊԸ-ի տպարանում

ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+ 37410) 23 25 28
info@zangak.am, www.zangak.am, www.book.am, www.facebook.com/zangak



زورایر میرزایان

ادبیات فارسی

سده های IX-XX م.

تهیه و تدوین: نیکد میرزایان



ایروان ۲۰۲۴

زورایر میرزایان

ادبیات فارسی

سده های IX-XX م.

